

Հարուժյուն Մինասյան

**ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ,
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ
ԲՈՒԱՃՆՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿՎԱԾ ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐ**

Համառոտ կենսագրական բառարան



**Երևան
«Լուսաբաց հրատարակչատուն»
2014**

ՀՏԴ 614.23:93/99(038)
ԳՄԴ 51.1+63.3g2
Մ 710

ՀԱՄԱՌՈՏ

Հրատարակված է պետական պատվերով

Մինասյան Հ.

Օսմանյան կայսրությունում, Թուրքիայի Հանրապետությունում և հարակից տարածքներում բռնաճնշումների և ցեղասպանության ենթարկված հայ բժիշկներ: Համառոտ կենսագրական բառարան/Հ.Մինասյան.-:

Եր.: Լուսաբաց, 2014, 519էջ:

Գրքում այբբենական կարգով ներկայացված են հիմնականում 19-20-րդ դդ. Օսմանյան կայսրությունում, Թուրքիայի Հանրապետությունում և հարակից տարածքներում ազգային պատկանելիության սկզբունքով բռնաճնշումների և ցեղասպանության ենթարկված հայ բժիշկների և բուժաշխատողների համառոտ կենսագրականները:

Գիրքը, նվիրված լինելով բժշկության ոլորտի աշխատողների կյանքին ու գործունեությանը, հարուստ փաստագրական նյութ է պարունակում Թուրքիայում դարեր շարունակ իրականացված հայասպան քաղաքակա-նության մասին:

Գիրքը իրենից ներկայացնում է նաև կենսագրական տեղեկատու Թուրքիայում երբևէ ապրած և աշխատած շուրջ 500 հայ բժիշկների և բուժաշխատողների մասին:

Հավելվածների ձևով ներկայացված են հայ և օտար գործիչների թեմատիկ հուշերը Մեծ Եղեռնի մասին:



**Ձոն
Աշխատությունս նվիրում եմ
1915 թվականի Հայոց Մեծ
Եղեռնի
Ժամանակ նահատակված
հայ բժիշկների
հիշատակին**

ՀՏԴ 614.23:93/99(038)
ԳՄԴ 51.1+63.3g2

ISBN 978-9939-69-112-1

Նախաբան

Գրքում “բուժաշխատող” հասկացության տակ ընդգրկված են ամենատարբեր մասնագիտության բժիշկները, ատամնաբույժները, բուժակները, դեղագործները, անասնաբույժները և բժշկական ուսումնական հաստատությունների ուսանողները, անգամ ժողովրդական բժիշկները:

Ընդգրկված են 19-20-րդ դարերում Օսմանյան կայսրության տարածքում (Արևմտյան Հայաստան, Անատոլիա, Կոստանդնուպոլիս [այսուհետ՝ Կ. Պոլիս], արաբական Արևելք և այլն) և գաղութներում ազգային պատկանելիության սկզբունքով, հասարակական կամ քաղաքական հայացքների համար բռնաճնշումների (հետապնդում, ձերբակալություն, բանտարկություն, արտաքսում, արքայազատագրման վայրում մահ, խոշտանգում, մահապատիժ) ու ցեղասպանության ենթարկված, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ռազմաճակատի վտանգավոր հատվածները դիտավորյալ ուղարկվելու հետևանքով զոհված, սուր վարակիչ հիվանդությունների օջախներում աշխատանքի պարտադրվելու հետևանքով վտանգավոր ինֆեկցիաներով վարակված ու մահացած, քաղաքացիական կամ զինվորական հիվանդանոցներում աշխատելու ընթացքում հիվանդացած և դիտավորյալ առանց բուժման ու խնամքի թողնելու հետևանքով մահացած, թուրք բժիշկների բժշկական փորձարկումներին ենթարկվելու հետևանքով մահացած հայ բժիշկների ու բուժաշխատողների համառոտ կենսագրականները:

Գրքում ընդգրկված են նաև 20-րդ դարասկզբին Արևելյան Հայաստանում ու հարակից տարածքներում

(Գանձակ, Նախիջևան, Շուշի, Բաքու) մահմեդական տարրերի հետ կռիվների ու բախումների հետևանքով զոհված հայ բուժաշխատողների համառոտ կենսագրականները:

Գրքում չեն ընդգրկվել այն հարյուրավոր հայ բժիշկները, որոնք պատերազմի, տեղահանության ու ցեղասպանության պատճառով կորցրել են իրենց ընտանիքի անդամներին ու հարազատներին, պայենական կալվածքներն ու տները, ինչքն ու հարստությունը, և մազապուրծ փախչելով, ապաստան գտել հարևան երկրներում՝ հետագայում աշխարհով մեկ սփռվելու և այսօրվա տխուր իրողությունը հանդիսացող Սփյուռքը ձևավորելու համար: Նրանց մեծ մասը, կսկիծը սրտում, իրենց վախճանը գտան օտար ափերում կամ, ձուլվելով տեղաբնակների հետ, վերացան որպես հայ:

Աղբյուրներում երբեմն հանդիպող հակասական տվյալների (վայր, թվական ևն.) պարագաներում, երբ ինձ համար անհնար է եղել պարզել ճիշտ տվյալը, ներկայացրել եմ բոլոր տարբերակները՝ դրանք իրարից բաժանելով թեք գծով՝ /:

Հեռու եմ այն մտքից, թե կարողացել եմ կամ ի վիճակի կլինեի հավաքել Օսմանյան կայսրությունում, Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում բռնաճնշումների ու ցեղասպանության ենթարկված բժիշկների լիակատար անվանացանկը: Կարծում եմ, որ երբեք էլ հնարավոր չի լինի հաշվել այն անհամար կորուստները, որ եղան 1915 թվականի Մեծ Եղեռնի, ինչպես նաև դրանից առաջ և հետո իրականացված հայերի անթիվ ու անհամար կոտորածների ընթացքում:

Անհրաժեշտ անունը գտնելը հեշտացնելու նպատակով առաջնորդվել եմ հանրագիտարանային սկզբունքով և ազգանունները դասավորել այբբենա-

ԱՐԱԿՅԱՆ ԱՆՏՈՆ

Ծնվել է 1857թ., Կոստանդնուպոլսում:

1857թ. Նախնական կրթությունն ստացել է Կ. Պոլսի Բերա թաղամասում գտնվող Վենետիկի Մխիթարյանների դպրոցում:

1871-80/81թ թ. սովորել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանում և ստացել բժիշկ-վիրաբույժի վայրական:

Որոշ ժամանակ բժիշկ չուսուցի Լուրիճանի օգնական բժիշկ է աշխատել Կ. Պոլսի հայ կաթոլիկների սբ. Հակոբ հիվանդանոցում:

Աղքատներին մշտապես ձրի բուժելու համար ժողովուրդը նրան կոչել է “Անարձաթ բժիշկ”:

1881/82թ. Իյնե գետլ է ուղարկվել՝ Գիթլի հանքային ջրի գտիչ աշխատելու:

1902թ. սեպտեմբերի 30-ին, մի այլազգի եղերական ձևով սպանել է նրան՝ 45 տարեկանում: Թաղվել է մոտակա Բրուսայի (Բուրսա) կաթողիկե հայոց գերեզմանոցում:

Ենթադրվում է, որ սուլթան Աբդուլ Համիդ II-ի հայատյաց քաղաքականության բազում հայ զոհերից մեկն է դարձել:

Նրա մասին

1. «Հանդես Ամսօրեայ», 1903:

2. Պոտոլրեան Սկրտիչ, Հայ հանրագիտակ, Պուլքրեշ,

1938:

3. Կարոյեան Գ., Մեծ Եղեռնի Նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

ԱՐԻԿՅԱՆ ՄԱԳՍՈՐԴ (ՄԱՔՍՈՒՏ) ՀԱԿՈՐ

Ծնվել է 1883/88թ., Սեբաստիայի (Սվազի) Նահանգի Ամասիայի գավառի Մարգվանի (Մերգիֆոնի) գավառակի կենտրոն Մարգվան (կամ Թոքատ) քաղաքում, հայ առաքելական ընտանիքում:

Ավարտել է Անատոլիա քոլեջը և ստացել «պսակավոր արվեստից» վկայական:

1914թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1914-15թթ. բժիշկ է աշխատել Սեբաստիայի Անատոլիա կոլեջի հիվանդանոցում:

1915թ. Առաջին աշխարհամարտի ընթացքում զորակոչվել է Օսմանյան բանակ և ծառայել որպես զինվորական բժիշկ:

1915թ. ապրիլին ձերբակալվել է Իթթիհատի ղեկավարներից դոկտոր Բեհա-Էդրին Շաքիրի կազմած 58 ականավոր հայ բժիշկների ցուցակով:

Սպանվել է 1915թ., Սե-

բաստիայում՝ 32 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուճած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Գուժկան Սեբաստիոյ (Կարապետ Գաբիկեան), Եղեռնապատում Փոքուն Հայոց եւ Նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն, 1924:

3. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

4. Թէոդիկ, Յուշարձան Նահատակ մտաւորակաւնութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

5. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

6. Զէստենեան Հրաչ, Պէյրուքի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ եւ Մեծ Եղեռնին Նահատակուած Հայ Բժիշկներ, “Ազդակ”, 01-11-2012

ԱՐԱԿՅԱՅԱՆ ԳԵՎՈՐԳ

Բժշկական կրթություն է ունեցել և եղեսիայում (Ուրֆա) բժիշկ է աշխատել:

1895թ. Նահատակվել է Եղեսիայում:

Նրա մասին.

Սահակեան Արամ, Դիւցազնական Ուրֆան եւ իր հաւոտոռնետո. Պէտոուք, 19



ԱՐԱԿՅԱՅԱՆ ՀԱԿՈՐ Թ.

Ծնվել է 1885թ., Բրուսայի Նահանգի Կուտինա (Զեոթահիա) քաղաքում:

Նախնական և երկրորդական կրթությունն ստացել է ծննդավայրի սբ. Էջմիածին ազգային վարժարանում, որն ավարտել է 1901թ.:

Մի քանի տարի ուսանել է Եսկիշեհիրի Ֆրերների դպրոցում:

1913թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական համալսարանը:

1913թ. Նշանակվել է Արաբկիրի թաղապետական բժիշկ:

Եղել է երիտասարդ, խոստումնալից, քաղաքի հայ և թուրք բնակչությունից սիրված ու հարգված բժիշկ:

1914թ. Առաջին աշխարհամարտի սկսվելուց հետո, նրան էլ շատերի պես շղթա-

յակապ տարել են անանուն սպանդանոց...

Նրա մասին.

Բախտիկեան Սարգիս (խմբագիր), Ոսկեգետակ, տարեգիրք, Ա. տարի, ՊԷյ-րուբ, 1945:

ԱՐԲԱՀԱՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Դեղագործական կրթություն է ունեցել և եղեսիայում դեղագործ աշխատել:

1915թ. նահատակվել է Եդեսիայում:

Նրա մասին.

Սահակեան Արամ, Դիւ-ցագնական Ուրֆան եւ իր հայորդիները, ՊԷյրուբ, 1955:

ԱՐԱՍՅԱՆ (ՏԵՐ-ՄԱՏԹԵ-ՈՍՅԱՆ) ԳՐԻԳՈՐ

Ծնվել է Խարբերդի նահանգի Խարբերդի գավառի Խոխ գյուղում:

Սափրիչ է աշխատել և զբաղվել հեքիմությամբ:

Եղել է նաև ջութակահար:

Սպանվել է 1915թ.:

Նրա մասին

Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի նահանգ, Երևան, 2004:

ԱՐԱՍՈՎ

1920թ. հոկտեմբերի 30-ին թուրքական զորքը, չհանդիպելով հայկական բանակի դիմադրությանը, գրավեց Հայաստանի Հանրապետության Կարսի նահանգի կենտրոն Կարս բերդաքաղաքը:

Անմիջապես սկսվեց քաղաքի բացառապես հայ խաղաղ բնակչության արյունալի ջարդը: Սպանել են տղամարդկանց ու կանանց, ծերերին ու երեխաներին: Եղել է դեպք, երբ մի տան մեջ հայտնաբերվել է տղամարդկանց, կանանց ու երեխաների 30 դիակ: Հաջորդ օրերին սպանվածների դիակները սայլերով դուրս են բերվել քաղաքից: Հայերի տները և ողջ ունեցվածքը կողոպտել են: Կոտորածից հետո սկսվել է փրկված հայ տղամարդկանց բանտարկությունը: Չեն խնայվել նույնիսկ 80-85 տարեկան ծերունիները:

Ընդամենը 5 օրվա ընթացքում Կարսում սպանվել է շուրջ 4000 խաղաղ հայ բնակիչ և ձերբակալվել շուրջ 7000 հայ տղամարդ: Բանտարկյալների մի մասին մերկացրել են մինչև ազատագրվումը, մյուս մասին՝ կալանավարում: Մի քանի օր անց, մերկ կալանավորների մի մասին ծանր աշխատանքի են ուղարկել Սարիղամիշ, մյուս մասին՝ Կարին (Էրզրում): Հետագայում

Նրանց մեծ մասը մահացել է: Աղամուկը եղել է բժշկական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող:

Թուրքերը նրան ձերբակալել են, բանտարկել և բոլորի պես ամբողջովին մերկացրել:

Մի քանի օրից նրան հաջողվել է ազատվել բանտից: **Նրա մասին.**

1. ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 33, թ. 67 և գ. 43, թ. 33:

2. Ներսիսյան Սկրտիչ, Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան, 2005:



ԱՍՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՓԱՆՈՍԻ (ՓԱՆՈՍԻ ՈՐԴԻ ՍԱՐԳԻՍ)

Ծնվել է 1884թ. փետրվարի 15-ին, Հալեպի նահանգի Մարաշի գավառի Ալպուստան գավառակում:

Նախնական կրթությունն ստացել է սբ. Ստեփանոս թաղային վարժարանում:

Ուսումը շարունակել է Մա-

րաշի Ազգային Կեդրոնական վարժարանում:

1907թ. ավարտել է ամերիկացի միսիոներների Տարսու-նի (Տարսուս) Սեյնթ Պոլ ըն-լեջը (St. Paul's Institute):

1907-10թթ. ուսուցչություն է արել Մարաշում:

1909թ. օգոստոսի 31-ին ամուսնացել է մանկավարժ, հնչակյան գործիչ Սարգիս Սամվելյանի դստեր՝ սբ. Ստեփանոս թաղային վարժարանի ուսուցչուհի Հրա-նուշի հետ:

1910-12թթ. ընտանիքով բնակվել է Դամասկոսում և ուսանել տեղի Օսմանյան բժշկական վարժարանում:

1912-16թթ. ուսումը շարու-նակել է Կ. Պոլսի Հայդար-փաշա թաղամասի բժշկա-կան համալսարանում:

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից, ուս-մանը զուգահեռ, օգնական բժիշկ է աշխատել Յըլդըզի և Կ. Պոլսի հիվանդանոցնե-րում:

1915թ. աշնանը զորակոչ-վել է օսմանյան բանակ և հարյուրապետի աստիճա-նով ծառայել Դամասկոսի զինվորական հիվանդանո-ցում:

Այնուհետև ուղարկվել է Պաղեստինի Նազարեթ քա-ղաքը՝ որպես թնփանոթա-ծիզների վաշտի 27-րդ ծանր հրետանավորների գնդի բժշկապետ:

Հիվանդ գինվորներին բուժելու ընթացքում վարակվել է ժանտախտով (բժավոր տիֆով) և 9 օր հետո՝ 1916թ. դեկտեմբերի 14/31-ին մահացել Լազարեթում / Երուսաղեմի առաջին կարգի հիվանդանոցում՝ 32 տարեկանում: Թաղվել է Լազարեթի սբ. Ավետման լատինական եկեղեցուն կից գերեզմանոցում գինվորական մեծ պատիվներով ու նվագախմբի հնչեցրած երաժշտությամբ:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:
2. Գալուստեան Գրիգոր Հ., Մարաշ, Նիւ Եորք, 1934:
3. Պոտուրեան Մկրտիչ, Հայ հանրագիտակ, Պուքրէշ, 1940:
4. Գալուստեան Գրիգոր Հ., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Չէյթուն, Նիւ Եորք, 1988:
5. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահութեան ծառայութեան մեջ և պատմութիւնը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերէն), Ստամբուլ, 1988:
6. Սամուէլեան Վահէ, Հայ անցեալը՝ լուսանկարներով, Ե., 2007:

ԱԶԱՐԻԿ

Դեղագործական կրթութիւնը և ունեցել և դեղագործ աշխատել:

1915թ. ապրիլին բանտարկվել է Կ. Պոլիսի կենտրոնական բանտում, որտեղից աքսորվել է Չանղորը՝ հայ մտավորականների խմբի հետ:

Անունը փորագրվել է Չանղորի բանտում հավաքված թգբեհի (համրիչի) 99 հատիկներից մեկի վրա:

1915թ. նահատակվել է Դեյր-էլ-Չորի կողմերը:

Նրա մասին.

1. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգորթան, Երևան, 1991:
2. Ավագյան Կարինէ, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողք և վկայք խաչի, Երևան, 2002:
3. Ավագեան Կարինէ, «Չանղորի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդէս Ամսօրեայ», 2008, հ. 1-12

ԹԶԲԵՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1915 թ. ապրիլի 11(24)-ին Թուրքական կառավարութեան որոշումով Ստամբուլի ոստիկանութեան նախապէս կազմած ցուցակով ձերբակալվել են շուրջ 220 հայ մտավորականներ՝ բժիշկներ, ուսուցիչներ, լրագրողներ, գրողներ, դեղագործներ, առևտրականներ, փաստաբաններ, հոգևորականներ, քաղաքական գործիչներ, որոնց բանտարկել են Կոստանդնուպոլիսի մերձակա Այազ գյուղաքաղաքի բանտում: Այստեղ նրանցից 45-ին սպանել են, իսկ մնացածին մի քանի օրից տեղափոխել Չանղոր քաղաքի աքսորավայրի բանտը: Այստեղ սպանել են մոտավորապէս ևս 80-ին: Չանղորում աքսորյալներից մեկը՝ թաղապետ Վարդերես Աթանասյանը (նահատակվել է), ձեռքին եղած համրիչի (տերողորմյա, թգբեհ) 99 հատիկների վրա փորագրել է իր և բանտում գտնվող մյուս մտավորականների մի մասի անունների սկզբնատառերը, սակայն քանի որ համրիչի հատիկները սահմանափակ էին, նա մի հատիկի վրա փորագրում է 2, ևս մեկի վրա 4 անուն: Արդյունքում համրիչը հավերժացնում է 103 անուններ: Համրիչի հատիկների շարքը կապող քարի վրա գրված է. «Չանղոր, 1915, ապրիլի 11, Յիշատակ»:

Ձերբակալվելուց մի քանի օր անց Վարդերես Աթանասյանի տուն է գալիս մի թուրք կառապան ու կնոջը՝ Սրբուհուն ասում. - «Ձեր ամուսինն ինձ ժամացույց նվիրեց ու խնդրեց, որ այս մասունքը հանձնեմ ձեզ»: Ու

տալիս է այս համրիչը:

Համրիչը 1965 թ. Հայաստանի Պատմութեան թանգարանին է նվիրել Վարդերես Աթանասյանի՝ 1946 թ. ֆրանսիայից ներգաղթած դուստրը՝ Էժենի Աթանասյան-Գուլբոյանը (մահ. 1993 թ.):

Հայաստանի պատմութեան թանգարանի գիտաշխատող Կարինէ Ավագյանը համրիչին նվիրված գիրք է հրատարակել «Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողք և վկայք խաչի» (Ե., 2002), որում հրապարակված են համրիչի քարերի վրա մակագրված անունները և մի առանձին ցանկ (Վահան Աթունյան, Կարապետ Թաշճյան, Կոմիտաս, Միսաք Ճևահիրճյան, Գասպար Չերազ, Սիամանթո, Ռուբեն Սևակ, Դանիել Վարուժան և մյուսներ), որտեղ յուրաքանչյուր անվան դիմաց ներկայացված են տեղեկություններ տվյալ անձի վերաբերյալ: Ցանկում ընդգրկված 35 հոգուն սպանել են, 61-ը ողջ են մնացել: 7 հոգու վերաբերյալ չի հաջողվել տեղեկություն գտնել:

ԱԶԱՐՅԱՆ ԿԻՐԱԿՈՍ

Ծնվել է 1878թ., Խարբերդի նահանգի Խարբերդի գավառի Հյուսեյնիկ գյուղում՝ Ֆերմանյան ընտանիքում:

Մանկական տարիքում կորցրել է հորը: Մայրը 2-րդ անգամ ամուսնացել է Խարբերդի նահանգի Մեզիրե (Մեզրե) քաղաքի ավետարանականների հոգևոր հովիվ վերապատվելի Ազարյանի եղբոր հետ:

Նախնական կրթությունն ստացել է Խարբերդում, ապա ավարտել ամերիկացի միսիոներների՝ քաղաքում հիմնած Եփրատ քոլեջը:

1897թ. մեկնել է ԱՄՆ՝ կրթությունն ստանալու: Սկզբում աշխատել է գործարաններում, այնուհետև սովորել Չիկագոյի, ապա՝ Սենթ Լուիզի բժշկական համալսարաններում:

Բժշկական կրթությունն ավարտելուց հետո կարճ ժամանակ սովորել է նաև Թենեսի նահանգի Նեշուիլ քաղաքի աստվածաբանական ճեմարանում:

1911թ. վերադարձել է Մեզիրե, ամուսնացել Չապել Ազարյանի հետ: Մեզիրեում բացել է սեփական բժշկական կլինիկա:

Հետագայում կրկին մեկնել է ԱՄՆ և Սենթ Լուիզի բժշկական համալսարանում մասնագիտացել ակնաբուժության գծով:

1913թ. վերադառնալով Մեզիրե՝ զբաղվել է համաքաղաքացիների բուժմամբ և վայելել բոլորի հարգանքը: Առաջին համաշխարհա-

յին պատերազմն սկսվելուն պես, 1914թ. աշնանը զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայելու ուղարկվել Կարինի ռազմաճակատը:

Վեց ամիս ծառայելուց հետո, դեռևս նախքան Կարինի հայերի տարագրությունը, ձերբակալվել է և բանտարկվել Կարինի բանտում:

1915թ. գարնանը իր բախտակից 250 մտավորականների (բժիշկներ, դեղագործներ, այլ մասնագետներ) հետ աքսորվել է Մուշ:

Հասնելով Կարին / Խոփ (Քոփ) լեռան մոտ, բոլորը, այդ թվում՝ 37 տարեկան Կիրակոս Ազարյանը, գնդակահարվել են:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:
2. Կարոյեան Գ., Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:
3. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորակաւորեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:



ԱԶԻՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

Ծնվել է 1890թ.՝ Ադանայի նահանգի Կոզանի գավառի Սիս քաղաքում:

1908թ. ավարտել է նախնական կրթությունը և նույն տարին ընդունվել Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուց հետո, ուսումը թերավարտ թողնելով, զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական օգնական բժիշկ ծառայել:

1917թ. Դամասկոսում վարակվել է ժանտախտով և մահացել:

Հայրենասիրական ստեղծագործություններ է ունեցել, որոնք կորել են:

Նրա մասին.

Քէլէշեան Միսաք, Սիս-Մատեան, Պէյրութ, 1949:

ԱԶՈՑԱՆ ՍԱՐԳԻՍ Գ.

Ծնվել է 1855թ., Ադանայի նահանգի կենտրոն Ադանա քաղաքում:

1887թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը: Մանկաբույժ է աշխատել:

Աշխատանքային գործունեության 35 տարվա ընթացքում հարյուրավոր հայ, թուրք և քուրդ երեխաների է բուժել:

Սպանվել է 1915թ., Հալեպի կողմերում՝ 66 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:
2. Կարոյեան Գ., Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:
3. Յուշարձան նահատակ Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրութ, 1965:
4. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորակաւորեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:
5. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:
6. Քեստենեան Հրաչ, Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ եւ Մեծ Եղեռնին նահատակուած Հայ Բժիշկներ, “Ազդակ”, 01-11-2012



**ԱԹԱՔԵԿՅԱՆ ԼԵՎՈՆ
ՆԻԿՈՂԱՑՈՍԻ**

“Ամեն ծրագիր ես դէն կը շարտեմ, եթէ նա գերեզմաններով միայն պիտի ծածկէ իմ հայրենի երկիրը”

ԼԵՆՈՆ ԱԹԱՔԵԿԵԱՆ

Բժիշկ, բանաստեղծ, գրական, հասարակական-քաղաքական գործիչ

Ծնվել է 1875/77թ. սեպտեմբերի 3(15)-ին, Շուշի քաղաքում՝ Արցախի Զրաբերդի շրջանի՝ Կոստապատ գյուղում բնակվող մելիքական տոհմում:

1893թ. ավատել է Շուշիի ռեալական գիմնազիան:

Սովորել է Գերմանիայի Լայպցիգ և Թյուրինգեն քաղաքների համալսարաններում՝ ուսումնասիրելով սոցիալական գիտություններ:

Բժշկական կրթությունն ստացել է Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինի և Շվեյցարիայի Ցյուրիխ քաղաքի համալսարաններում:

1903թ.-ից բժշկական և հասարակական-քաղաքական գործունեություն է ծավալել Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Գանձակում, Շուշիում և այլուր:

Բաքվում նրա ջանքերով հիմնադրվել է թոքախտավորների առաջին հիվանդանոցը:

Սկզբում եղել է ՀՅԴ անդամ և դրա երիտասարդական-ձախակողմյան թևի պարագլուխը: Հետո ընդունվել է սոցիալիստ-հեղափոխականների (Էսեռների) շարքերը, գլխավորել հայ Էսեռների կազմակերպությունը: Դառնալով Էսեռ, այնուհանդերձ պահպանել է ընկերական կապերը նախկին կոսակիցների հետ:

1909-12թթ. ընդհատակյա կոսակցական գործունեության համար ցարական ժանդարմերիան ձերբակալել է նրան: Արգելափակվել է Դոնի Ռոստովի, Գանձակի, Նովոչերկասկի և Սանկտ Պետերբուրգի բանտերում:

1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո ընտրվել է Անդրկովկասյան կոմիսարիատի, ապա՝ Անդրկովկասյան Սեյմի անդամ, սակայն ժխտական վե-

րաբերմունք ունենալով այդ մարմինների նկատմամբ, չի մասնակցել դրանց աշխատանքներին:

1900-ական թվականների սկզբներից գրել է խոհական, քաղաքական քառյակներ, բանաստեղծություններ և ժողովրդական մոտիվներով զրույցներ, որոնք լույս են տեսել պարբերական մամուլում (“Բանբեր գրականութեան եւ արուեստի”, “Գեղարուեստ” և այլ պարբերականներ):

Գործածել է “Արևուղ” “Էլվենտ”, “Էրազմոս”, “Լ. Ա.”, “Սմբատյան Ս. (Սմբ.)”, “Սմբատյան Սմբատ”, “Բի.” և “Բի-խարդ” ծածկանունները:

Նրա Ապստամբությունը պոեմը հրատարակվել է մի քանի անգամ, զետեղվել դասագրքերում:

Հայրենակիցների հետ նախընտրել է խոսել Ղարաբաղի բարբառով:

1917թ. դեկտեմբերին եղել է Հայոց Ազգային խորհրդի Բաքվի մասնաճյուղի փոխնախագահը, այնուհետև՝ շարքային անդամը:

1918թ. մարտին որպես Հայոց Ազգային խորհրդի Բաքվի մասնաճյուղի անդամ մտել է Հաշտարար պատգամավորական խմբի (Աթաբեկյան, ռուս Դենեժկին, թաթար Աղաև) մեջ, որը նպատակ է ունեցել դադարեցնել Բաքվում և համայն

Ադրբեջանում ծայր առած ազգամիջյան արյունահեղությունը: Խմբով շրջել են Բաքվի փողոցներով և հակամարտող կողմերին հորդորել խաղաղությունը վերականգնել:

Երեք ընկերներով զոհվել է 1918թ. մարտի 24-ին Բաքվում, հայկական ջարդերի ժամանակ՝ սպիտակ դրոշը ձեռքին հաշտարար բանախոսի առաքելություն կատարելիս՝ 43 տարեկանում:

Աշխատությունները.

1. Ղարաբաղը նախաշխարհում, “Առողջ կեանք”, Բաքու, 1917:

2. Բանաստեղծություններ, Երևան, 1970: “Մոր նամակը”, “Լաց մի՛ ինիլ”, “Զոբանն ու Կարաբաշը” պատմվածքներում պատկերում է Ղարաբաղի հայության դառը կյանքը, աշխատավոր մարդկանց առաքինությունները:

Նրա մասին.

1. Բժ. ԼԵՆՈՆ ԱԹԱՔԵԿԵԱՆ, «Տարագ», Թիֆլիս, 1918թ., թ. 3-6:

2. Աթաբեկյան ԼԵՆՈՆ, Բանաստեղծություններ, Երևան, 1970:

3. Հայկական հարց, հանրագիտարան, Երևան, 1996:

4. Մելիքյան Ս. Հ., Սոցիալիստ-հեղափոխականները Հայաստանում և Անդրկովկասի հայաշատ քաղաքներում 1900-1920 թվականներ

րին, Երևան, 1997:

5. Վիրաբյան Արշակ, Գիրք դարերի խորքից, Երևան, 1998:

6. Գևորգյան Ռիմա, Հայոց կեղծանունների, ծածկանունների բառարան, Երևան, 2001:

7. Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ալբոմ-ատլաս, Բ. հատոր, 1914-1925, Լոս Անձելոս, 2001:

8. Հովակիմյան Բախտիար, Հայոց ցեղասպանության նահատակ գործիչների ծածկանունները, Երևան, 2002:

9. Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում, 1918-1920թթ., պատասխանատու խմբագիր՝ Ամատունի Վիրաբյան, Երևան, 2003:

10. Ինտերնետային հոդված «Աթաբեկյան Լևոն Նիկոլայի», 4 փետրվարի 2005թ.:

11. Հայկական Համառոտ Հանրագիտարան, հ. 1, Երևան, 1990

12. Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 1, Երևան, 1974.

13. Ով ով է, Հայեր, Կենսագրական հանրագիտարան, հ. 1, Ե., 2005

ԱԹԹԱՐՑԱՆ ԱՐԲԱՀԱՍ

Դեղագործական կրթություն է ունեցել:

1915թ. դրությամբ Եդեսիայում դեղագործ է աշխատել:

1915թ. Եդեսիայում թուրքական ոստիկանությունը ձերբակալել է Նրան: Նույն տարում նահատակվել է Եդեսիայում:

Նրա մասին.

Սահակեան Արամ, Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, Պէյրուս, 1955:



ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍԻ

Ծնվել է 1897թ. Ռուսաստանի կայսրության Կարսի մարզի կենտրոն Կարս քաղաքում՝ փոստ-հեռագրատան աշխատողի ընտանիքում:

1910-14թթ. սովորել է Կարսի ռուսական ռեալական դպրոցում: Եղել է Եղիշե Չարենցի դասընկերը, որի հետ պահպանել է մտերմությունը հետագայում:

1918թ. ապրիլին, թուրքերի՝ Կարսը գրավելուց հետո, ընտանիքով գաղթել է Թիֆլիս:

1918-19թթ. սովորել է Թիֆլիսի առևտրական ուսումնարանում, միաժամանակ սովորել ու ավարտել է նաև Թիֆլիսի երեկոյան բժշկական ուսումնարանը:

1919թ. գարնանը, երբ թուրքերը թողել են Կարսը, ընտանիքով վերադարձել է հայրենի տուն: Հայրը Կարսի նահանգի գյուղերից մեկի, ապա նահանգի հունաբնակ Մերդենեկ գյուղի փոստ-հեռագրատանն է աշխատել:

1919թ. Կարսի հիվանդանոցում բուժակ է աշխատել:

1919թ. հուլիսին զորակոչվել է Հայաստանի Հանրապետության բանակ և նշանակվել Կարսի ամրոցի բուժակ:

1920թ. հոկտեմբերի 30-ին թուրքերը կրկին գրավեցին Կարսը և սկսեցին հաշվեհարդարը, որի ընթացքում հայրն սպանվել է, մայրն ու քույրը հրաշքով փրկվելով փախչել են Ալեքսանդրապոլ, իսկ ինքը գերի է ընկել:

1921թ. փախել է գերությունից և Ալեքսանդրապոլում գտել հարազատներին:

1924թ. զորակոչվել է Կարմիր բանակ: Չինվորական ծառայության ժամանակ անցել է վերապատրաստում և նշանակվել Երևանում տե-

ղակայված Հայկական դիվիզիայի 1-ին գնդի սանհրահանգիչ:

1930-35թթ., գինվորական ծառայությանը զուգահեռ, սովորել է Երևանի պետական բժշկական ինստիտուտում:

1931թ.-ից զբաղվել է ռազմական բժշկության մեջ կիրառվող գյուտարարական և ռացիոնալիզատորական աշխատանքներով, որոնք վերաբերել են թունավոր նյութերով վնասված և վիրավոր մարտիկին օգնություն ցույց տալուն, հակազգազի պայուսակի փոկին, պաշտպանական գուլպաներին և այլն:

1933թ., որպես լավագույն գյուտարար, մասնակցել է գյուտարարների համաբանակային կոնֆերանսին:

1934թ. եղել է Հայկական դիվիզիայի կապի վաշտի ավագ բուժակը և գյուտարարների ու ռացիոնալիզատորների բյուրոյի նախագահը:

Չբաղվել է նաև գրական գործունեությամբ: Նրա «Նորեկ Օնիկը» պիեսը հավանության է արժանացել Հայաստանի գրողների միությունում և Դերենիկ Դեմիրճյանի օժանդակությամբ վերցվել վերամշակման: Գրել է նաև մանկական երկեր:

1935-37թթ., բժշկի դիպլոմ ստանալուց հետո, ծառայել է Հայկական դիվի-

զիայի կապի գումարտակի սանիտարական ծառայության պետ:

«2ինվորական հարվածային գյուտարար» և «Վորոշիլովյան հրաձիգ» կրծքանշանների է արժանացել:

1936թ. մեկնել է Թիֆլիս և հորաքրոջ աղջկանից վերցրել իր հոր՝ ցարական բանակի զինվորական համազգեստով լուսանկարը, որը երևանում մեծացնելուց հետո կախել է իր սենյակի պատին:

1936թ. դեկտեմբերի 23-ին Կրեմլում կայացած Կարմիր բանակի հրամանատարական կազմի կանանց համաբանակային խորհրդակցությանը մասնակցել է նաև բժշկի կինը՝ Սոֆյան, որը Մոսկվայում լուսանկարվել էր Լադեժդա Կրուպսկայայի հետ ու նկարը բերել էրևան:

1937թ. հունվարին բժշկի տուն է եկել ոմն Հրանուշ և Սոֆիայի հետ զրուցել մոսկովյան ուղևորության մասին: Մի քանի օր հետո «Հայաստանի աշխատավորուհի» հանդեսում լույս է տեսել Հրանուշի հոդվածը, որն սկսվել է հետևյալ տողով. «Բժիշկ Ալեքսանդրյանի տունը մտնողի աչքը ծակում է ինչ-որ ուսադիրներով պաշտոնյայի լուսանկարը...»:

Այդ խառնակ օրերին, հոդվածից սարսափահար եղած բժիշկը հոր լուսանկարը

ը շտապ ուղարկել է Լենինական՝ մորը, որը դա վառել է հետագայում:

1937թ. Հայկական դիվիզիայի բազմաթիվ սպաներ ու քաղաշխատողներ արդեն բանտարկվել էին:

1937թ. ամռան մի օր Հայկական դիվիզիայի պետը է մեկնել Կիրովական՝ ճամբար: Բժիշկը ևս, կնոջ և երեխաների հետ մեկնել է Կիրովական:

Մի քանի օր հետո Հայկական դիվիզիայի կապի գումարտակի հրամանատարը նրան անսպասելի կերպով հայտնել է, որ պաշտպանության ժողկոմի թ. 2953 հրամանով զորացրված է գործող բանակից: Երկու օր անց Ա. Ալեքսանդրյանը վերադարձել է Երևան:

Շուտով ընտանիքը արտաքսել են բնակարանից, պատճառաբանելով, որ դա մի այլ զինվորականի է հատկացված:

1937-39թթ. բժիշկ է աշխատել Երևանի մի բուժ-հիմնարկում և շարունակ տանջվել այն մտքից, թե ինչո՞ւ հեռացվեց բանակից:

1939թ. հեռագիր է հղել ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմ Կլիմենտ Վորոշիլովին՝ իրեն առանց որևէ պատճառի զորացրելու դեմ բողոքով: Շուտով Մոսկվայից ստացել է ժողկոմին ներկայանալու առաջարկ: Նրան

ընդունել է անձամբ Վորոշիլովը և իր ներկայությամբ կարդացել անձնական գործում գրված մեղադրանքները՝ ազգայնամոլ գրողների, մասնավորապես Եղիշե Չարենցի, Դերենիկ Դեմիրճյանի ու Ավետիք Իսահակյանի հետ կապեր ունենալու, սպեկուլյացիայով զբաղվելու, օտար լեզուներ ուսումնասիրելու, Կարմիր բանակից զորացրվել ցանկանալու մասին:

Իրականում, Ալեքսանդրյանը հաճախակի հանդիպել էր իր դասընկեր Չարենցի հետ, երկու անգամ եղել Դեմիրճյանի մոտ՝ իր պիեսները նրան ներկայացնելու և կարծիքը իմանալու նպատակով, մեկ անգամ եղել Իսահակյանի տանը՝ իր ոտանավորները նրան ցույց տալու նպատակով: Սպեկուլյացիայով երբեք չէր զբաղվել: Տիրապետել է հայերեն, ռուսերեն, թուրքերեն, հունարեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, վրացերեն, քրդերեն լեզուներին, բազմաթիվ լեզուների իմացությունը համարել Կարմիր բանակի հրամանատարի համար կարևոր արժանիք, ինչի հետ համաձայնել է նաև ժողկոմը:

2րույցի ավարտին Վորոշիլովը հրամայել է իր օգնականին՝ բժշկին վճարել չաշխատած բոլոր ամիս-

ների աշխատավարձն ու փափուկ վագոնով ճանապարհածախսը, ապահովել բնակարանով, վերականգնել զինվորական ծառայության մեջ և նշանակում տալ երևանում:

1939-41թթ. շարունակել է զինվորական ծառայությունը Երևանում:

1941թ. Հայրենական մեծ պատերազմն սկսվելուն պես մեկնել է ռազմաճակատ և նշանակվել Կուբանի կազակների հեծյալ կորպուսի թիվ 200 հոսպիտալի պետ:

Այնուհետև տեղափոխվել է 3-րդ Մերձբալթյան ռազմաճակատի թիվ 2547 Էվակուացիոն հոսպիտալ (2-րդ հարվածային բանակ):

Հայրենական մեծ պատերազմի տարիներին եղել է նաև Հյուսիսային Կովկասի, Կալինինյան, 2-րդ Լենինգրադյան, 2-րդ Բելոռուսական ռազմաճակատներում:

1945թ. կեսերին նշանակվել է բանակի սանիտարահամաճարակաբանական բաժնի բժիշկ, ապա՝ սանիտարական բաժանմունքի պետի օգնական:

Հետագայում նշանակվել է գվարդիական բանակի սանիտարական կետի պետ, ապա՝ կայազորային հիվանդանոցի վարակիչ հիվանդությունների բաժնի պետ:

1955թ. զորացրվել է բանակից՝ բժշկական ծառայու-

թյան փոխգնդապետի կոչումով:

1956-58թթ. Երևանի պետական բժշկական ինստիտուտի համաճարակաբանության ամբիոնի դասախոս և աշխատել:

1958-78թթ. Երևանի պետական համալսարանի քաղաքացիական պաշտպանության ամբիոնի դասախոս և աշխատել:

Հետագա տարիներին աշխույժ մասնակցություն է ունեցել հասարակական կյանքին: Սերտ կապեր է պահպանել Ե. Չարենցի տուն-թանգարանի հետ, որտեղ բազմիցս հանդիպումների է հրավիրվել: Հաճախակի հրավիրվել է նաև Երևանի հիմնարկ-ձեռնարկությունները, ուսումնական հաստատություններն ու դպրոցները և ունկնդիրների համար հետաքրքիր հոլշեր պատմել Չարենցի, Դեմիրճյանի, Իսահակյանի և այլոց մասին:

Հարուստ անձնական արխիվը «Մղձավանջ» արժեքավոր հոլշապատումը գրելու հիմք է հանդիսացել հետազայում:

Պարգևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի, Կարմիր աստղի շքանշաններով, մեդալներով ու պատվոգրերով: Մահացել է 1992թ. հոկտեմբերի 15-ին, Երևանում 96 տարեկանում:

Որդին՝ Մաթևոս Ալեքսանդրյանը անվանի բժիշկարյունաբան է, դուստրը՝ Էմմա Ալեքսանդրյանը՝ հոգեբանական գիտությունների դոկտոր:

Աշխատությունները.

1. Կարս. 1920-21, Երևան, 1986 (հոլշեր Կարսի անկման մասին և գերության ամիսներից):

2. Մղձավանջ (պատմավեպ), Երևան, 2001:

Նրա մասին.

1. Գրիգորյան Ահարոն և Մելքումյան Բագրատ, Հայաստանի բժիշկները Մեծ Հայրենականում, գիրք 1, Երևան, 1983:

2. Ալեքսանդրյան Արտաշես, Կարս. 1920-21, Երևան, 1986:

3. Ալեքսանդրյան Արտաշես, Մղձավանջ, Երևան, 2001:

ԱԼԹՈՒՆՑԱՆ ՀԱԿՈՐ

Բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել:

Նահատակվել է 1915թ.

Մեծ Եղեռնի ժամանակ:

Նրա մասին. Թեոդիկ, Գողգոթայ հայ հոգեւորականութեան, Նիւ Եորք, 1985:



Ծնվել է 1892թ. հունվարին, Սեբաստիա Նահանգի Նույնանուն գավառի (Նաև՝ Նույն Նահանգի) կենտրոն Սեբաստիա քաղաքում՝ ատամնաբույժի ընտանիքում:

1902թ. հայրը մահացել է և մնացել է ավագ եղբոր՝ 1915թ. թուրքերի ձեռքով սպանված ատամնաբույժ Միհրանի խնամքին:

Նախնական կրթություն ստացել է Սեբաստիայի թուրքական գիմնազիայում:

Եղբոր աջակցությամբ գնացել է Սեբաստիա և սովորել երկրորդական վարժարանում:

1907-08թթ. սովորել է ֆրանսիական վարժարանում:

1908-11թթ. ատամնաբույժ եղբոր մոտ օգնական է աշխատել:

1911-14թթ. սովորել է Կ. Պոլսի բարձրագույն ատամնաբուժական վարժարանում:

1914թ. վերադարձել է հայրենի քաղաք:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուն պես զորակոչվել է

օսմանյան բանակ և ուղարկվել սովորելու զինվորական 6-ամսյա դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո ստացել է պահեստի բժիշկ-սպայի կոչում:

1915թ. հունիսի 4-ին Սեբաստիայի շուրջ 80 000 հայերին, հարցաքննության պատրվակով հավաքել են մի տեղ ու ձերբակալել: Այդ ժամանակ քաղաքի շուկայում գտնված Հովհաննեսը խուսափել է ձերբակալությունից և եկել տուն, որտեղ տեղեկանալով ավագ եղբոր՝ Միհրանի ձերբակալության մասին, ինքը ևս գնացել է ոստիկանություն: Ձերբակալված հայերին հայտնել են, թե նրանց արքային են այլ բնակավայր, իսկ քաղաքում թողնում են միայն մասնագետներին, բացի դաշնակցականներից: Ընդամենը 10 մասնագետների ցուցակում եղել է նաև Հովհաննես Ալթունյանի անունը:

Նրանց առաջարկվել է իլամությունն ընդունել, սակայն բոլորը հրաժարվել են, պատճառաբանելով, որ դրան դեմ կլինեն հարազատները:

Հետագայում, երբ Սեբաստիայում մնացած հայերը իմացել են 80 000 արքայված ու սպանված հայրենակիցների ողբերգական ճակատագրի մասին, ինչպես նաև տեղի տալով թուրք ոստիկանների հաճախակի ու

բիրտ ճնշումներին, ստիպված համաձայնել են իսլամությունն ընդունել:

Հովհաննեսը եւս, ստիպողաբար, իր կամքին հակառակ մուսուլման է դառնում և թողնվում Սեբաստիայում ատամնաբույժ աշխատելու:

1916թ., երբ իր տարիքի զինապարտների զորահավաք է հայտարարվել, դիմել է քաղաքի ոստիկանապետին, որը պատասխանել է, թե այդ հարցով կհորհրդակցի զինվորական շտաբի պետի հետ: Նրան պատասխանել են, որ չնայած հայերն իրավունք չունեն ծառայելու օսմանյան բանակում, սակայն, բացառության կարգով, նրան կվերցնեն ծառայության որպես շարքային զինվոր: Ոստիկանապետն այնուհետև խոստացել է, թե կմիջնորդի, որ նրան թողնեն քաղաքում ծառայելու որպես քաղաքի և զորանոցի ատամնաբույժ: Այդպես էլ նա ծառայել է 1916-18թթ.:

1918-24թթ. Սեբաստիայի քաղաքային ատամնաբույժ է աշխատել:

1924թ. Խորհրդային Հայաստան ներգաղթելու նպատակով տեղափոխվել է Կ. Պոլիս:

1925թ. կրտսեր եղբոր հետ միացել է Խորհրդային Հայաստան ներգաղթողների քարավանին:

1928թ., Երևանում, մաս-

նագիտության բերումով ծանոթ և մտերիմ է եղել Խորհրդային Հայաստանում Թուրքիայի հյուպատոս և ամուսնական Մեհմեդ բեյ Ինջիլի հետ:

1931թ. տնտեսական բնույթի դատական քաջջուկի մեջ է եղել օրիգինալ ժանրի նկարիչ Քաջունու և հիշյալ հյուպատոսի հետ:

1933թ. դրությամբ Երևանում մասնավոր պրակտիկայի ատամնաբույժ-ատամնատեխնիկ է աշխատել:

1933թ. մարտի 15/16-ին ձերբակալվել է և նախնական կալանքի վերցվել:

Մեղադրվել է ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 16-րդ և 63-րդ հոդվածներով՝ թուրքական հետախուզության կողմից հավաքագրված լինելու համար, քանի որ Երևանում գտնվող թուրքական հյուպատոսարանի միջնորդությամբ 1928-29թթ. ընթացքում 15-16 անգամ նրա մոտ բուժման է եկել Մեհմեդ բեյ Ինջիլը, որը Պետական քաղաքական վարչության (ՊԶՎ) մարմիններին հայտնի է եղել որպես թուրքական լրտես:

Նախնական կալանքի մեջ եղած ժամանակ քննությամբ պարզվել է, որ նրանց հանդիպումները կրել են զուտ բժշկական բնույթ և լրտեսական ու հակապետական

երանգ չեն ունեցել:

1933թ. մայիսի 20-ին հարցաքննվել է և կազմվել արձանագրություն:

1933թ. մայիսի 30-ին ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով դատապարտվել է 3 տարվա ազատազրկման և պահվել «Էրիսպարավդում»-ում (Էրիվանի ուղղիչ տանը, իմա՝ Երևանի բանտում):

1933թ. հուլիսի 9/28-ին, բավարարվելով 4-ամսյա նախնական կալանքով, Հովհաննես Այթունյանին ազատ են արձակել:

1934թ. հունիսի 25-ին ձերբակալվել է ատամնաբուժական նպատակներով ապօրինաբար ոսկի գնելու մեղադրանքով, որը նա ժխտել է: Բնակարանի խուզարկությամբ ոսկի չի հայտնաբերվել և նա ազատ է արձակվել:

1937թ. Մոսկվայում կատարելագործվել է ատամնաբուժության գծով:

1937-41թթ. պետական ատամնաբուժական ամբուլատորիայում է աշխատել:

1939թ. կինը մահացել է և 5 երեխաների խնամքը մնացել է հորաքրոջ վրա:

1941թ. Հայրենական մեծ պատերազմին չի զորակոչվել 4 անչափահաս երեխաների միայնակ հայր լինելու պատճառով:

1941թ.-ից սկսել է տանն

աշխատել և քրոջն օգնել՝ երեխաներին խնամելու և տնտեսության հարցերով:

Մտերիմ է եղել ժամանակի երևելի անձանց հետ. լեզվաբան Հրաչյա Աճառյան, ֆիզիկոս Հովհաննես Նավակատիկյան, ժողկոմ Պետիկ Թորոսյան, նկարիչ Տարագրոս Տեր-Վարդանյան և այլն: Եղել է կերպարվեստի սիրահար և հավաքորդ:

Մահացել է 1973թ., Երևանում, 81 տարեկանում:

Ավագ որդին՝ Միհրանն ունի միջնակարգ նկարչական և բարձրագույն բժշկական կրթություն, և շուրջ 45 տարի պլաստիկ անատոմիա է դասավանդում Երևանի գեղարվեստի ինստիտուտում:

Լուսինե Խաչատրյանի և Արփինե Բաբլումյանի կազմած «Ցուցակ հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ»-ում (Երևան, 2004) թյուրիմացաբար հիշատակված է, թե զոհվել է 1915թ., Սեբաստիայում:

Նրա մասին.

1. Գուժկան Սեբաստիոյ (Կարապետ Գաբրիկեան), Եղեռնապատում Փոքուն Հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն, 1924:

2. Հ. Այթունյանի ձեռքով գրված ինքնակենսագրու-

թյուն, 1933:

3. Հիշենք անուն առ անուն, «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 24-11-1993, թ. 233:

4. Մանուկյան Արմենակ, Զաղաքական բռնաճնշումները Հայաստանում. 1920-1953թթ., Երևան, 1999:

5. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 1988:

6. Խաչատրյան Լ., Բաբլումյան Ա., Ցուցակ հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:

7. ՀՀ Ազգային անվտանգության ծառայության արխիվ, գործ 9584, նայված 14-04-2005-ին:

8. Որդու՝ բժիշկ-արվեստաբան Միհրան Այթունյանի հայտնած կենսագրականը, 15-04-2005-ին:

9. Մինասյան Հ., Սեբաստիայի ողբերգության և մի փոքրիկ լուսավոր կետի մասին, „Երևան 7 օր“, 27-29, ապրիլ, 2005

10. Մինասյան Հ., Լորահայտ փաստաթուղթ Սեբաստիայի կոտորածի մասին, „Ազգ“, 26-05-2007



ԱԼԹՈՒՅԱՆ ՄԻՀՐԱՆ ՍՏԵՓԱՆԻ

Ծնվել է մոտ. 1890թ., Սեբաստիայի նահանգի կենտրոն Սեբաստիա քաղաքում: Ատամնաբույժ Հովհաննես Այթունյանի ավագ եղբայրն է:

Ա տ ա մ ն ա բ ո լ ժ ա կ ա ն կրթություն է ունեցել:

Սեբաստիայում ատամնաբույժ է աշխատել:

Սպանվել է 1915թ., Սեբաստիայից դուրս՝ մոտ 25 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուժած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Գուժկան Սեբաստիոյ (Կարապետ Գաբիկեան), Եղեռնապատում Փոքուն Հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն, 1924:

3. Յուշամատեան Սեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

4. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորակաւորութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

5. Խաչատրյան Լ., Բաբլումյան Ա., Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:

ԱԼԹՈՒՅԱՆ ՎԱՀԱՆ

Ծնվել է 1888թ., Կոստանդնուպոլսում:

Ավարտել է Կ. Պոլսի ատամնաբուժական վարժարանը:

Կ. Պոլսում ատամնաբույժ է աշխատել:

1915թ. ապրիլին բանտարկվել է Կ. Պոլսի կենտրոնական բանտում (Այաշ), որտեղից աքսորվել է Զանդըրը՝ հայ մտավորականների խմբի հետ:

Անունը փորագրվել է Զանդըրըի բանտում հավաքված համրիչի 99 հատիկներից մեկի վրա:

1915թ. օգոստոսի 6/12-ին ազատվել է Զանդըրըի աքսորից և բռնել Կ. Պոլիս վերադարձի ճանապարհը, սակայն օգոստոսի 8-ին Անկարայում (Էնկյուրի) ձերբակալվել է և բանտարկվել:

Օգոստոսի 17-ին նրան դուրս են բերել բանտից և տեղի կաթոլիկ հայերի 750-800 հոգուց բաղկացած քարավանի հետ, բազուկներն իրար կապած, մահվան ճանապարհ են հանվել:

Հռոմի Պապի և Կ. Պոլսի նվիրակ Մոնսենյոր Դուչիի միջնորդությամբ փրկվել են և տարվել Գարակետիկ գյուղ:

Օգոստոսի 20-ին երկու ընկերների հետ այստեղից դուրս են եկել և ոտքով 21 օրում հասել Պոզանթի, որտեղից էլ քշվել են Տարսոն՝ քաղաքից դուրս հաստատված տարագիրների վրանաքաղաքը:

Ընտանիքի անդամների ջանքերով կարողացել են վերստանալ աքսորից ազատված լինելու նոր հրաման:

Սեպտեմբերի 19-ին Տարսոնից մեկնել և սեպտեմբերի 22-ին հասել են Կ. Պոլիս:

1922թ. ավարտել է Բեյրութի Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1923-24թթ. եղել է սբ.Փրկիչ ազգային հիվանդանոցի ղեկավարության կազմում:

1925 թ. դրությամբ, որպես վիրաբույժ-ատամնաբույժ, հիվանդներ է ընդունել Կ. Պոլսի Բերա, Բանկայթի, Համամ ճատտե-25 հասցեում և Կ. Պոլիս, Պահչե գաբու, Մինասյան դեղարանին կից թիվ 47 դարմանատանը, հեռ. 16-55:Մահացել է 1964թ., Կ. Պոլսում:

Ունեցել է որդիներ Լուրհանին և Արային և դուստր

Սյուզան Հալեպլիին, որը 2003թ. դրությամբ բնակվել է Մոնրեալում և հետագոտող Կարինե Ավագյանին նամակով ուղարկել հոր կենսագրականը:

Նրա մասին.

1. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Վիեննա, 1922:

2. «Կավոզ» Տարեգիրքը, Կ. Պոլիս, 1925

3. Պալաքյան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Երևան, 1991:

4. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

5. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողը և վկայք խաչի, Երևան, 2002:

6. Ավագեան Կարինե, «Չանդրըրի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդես Ամսօրեայ», 2008, հ. 1-12

**ԱԼԹՈՒՆԴԻՇԵԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԵՎՈՐԳԻ**

Ծնվել է մոտավորապես 1880թ., Կ. Պոլսում:

1907թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

1915թ. դրությամբ ծառայելիս է եղել օսմանյան բա-

նակի 10-րդ գորագնդի 3-րդ վաշտի գինվորական բժիշկ:

Մահացել է 1915թ. հունիսի 8-ին, ժանտախտից՝ մոտավորապես 35 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուճած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

3. İEĖĀĀĖİ Ė., ĀĀĐĀĀĐŪ İĐĖİRĖĖ İĖĀĐ-İĐİĀĐĀİÖ HOB, Se...



ԱԼԼԱՀԿԵՐԴԻ ՏԻԳՐԱՆ

Բժիշկ, պետական-հասարակական գործիչ, Ազգային կենտրոնական վարչության Զաղաքական ժողովի անդամ:

Ծնվել է 1860թ., Կոստանդնուպոլսի Ենի կափու թաղամասում կեսարացի ծնողների ընտանիքում:

Ուսանել է Ենի կափուի և Կոլմ կափուի ազգային վարժարաններում ու սուլթան Աբդուլ Ազիզի՝ 1868 թվականին հիմնած՝ Կ. Պոլսի Կալաթասերայի «Մեքթեբի Սուլթանիե» («Սուլթանական վարժարան») բարձրագույն վարժարանում և փայլուն ընդունակություններ դրսևորել:

1882թ. ստացել է դեղագործի վկայական և Կ. Պոլսի Բահչե կափու թաղամասում դեղագործ աշխատել:

1886/93/95թ. փայլուն ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը: Ժանտախտի հարցերին նվիրված նրա ավարտաճառն արժանացել է վարժարանի քննիչ մարմնի «պատվո նիշին»:

Բեռլինի և Վիեննայի բժշկական կենտրոններում մասնագիտացել ներքին հիվանդությունների գծով:

Վերադառնալով Կ. Պոլիս՝ բժիշկ է աշխատել և կարճ ժամանակում խղճմիտ ու ճարտար մասնագետի մեծ համբավ ձեռք բերել:

Անատոլիայի զանազան քաղաքներում քաղաքային բժիշկ է աշխատել և գինվորական բժիշկ ծառայել:

Երկար տարիներ եղել է Կ. Պոլսի Կոլմ կափուի, ապա՝ Բերայի թաղային բժիշկը:

Եղել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական ըն-

կերության անդամ: Չբաղվել է հանրային գործունեությամբ:

Դասախոսություններ է կարդացել Բերայի Աղքատախնամի հաստատած հիվանդապահության դասընթացում, Կ. Պոլսի չորս թաղերի ազգային վարժարաններում:

Բժշկական հանրամատչելի հողվածներով աշխատակցել է Կ. Պոլսի «Ստամբուլ» ֆրանսերեն օրաթերթին:

Եղել է Կ. Պոլսի Կոլմ կափու, ապա՝ Ֆերիզյուղ (Ֆերիքետոյ) թաղային խորհուրդների անդամ:

1901թ-ից եղել է Ազգային կենտրոնական վարչության Զաղաքական ժողովի անդամ (այսինքն՝ ազգային երեսփոխան), նաև՝ Զաղաքական ժողովի Դատաստանական խորհրդի անդամ:

Կյանքի վերջին տարիներին եղել է Կ. Պոլսի Կոլմ կափուի չորս թաղերի Աղքատախնամ ընկերության ատենապետը:

Մարմարա ծովի ասիական ափում գտնվող Բանդրմայում, Էդինջիքում և դրանց շրջակայքում տարածված խլրերայի համաճարակի ժամանակ, նշանակվել է այդ տարածքների առողջապահական տեսուչի պաշտոնին, և կանխարգելիչ միջոցներ կիրառելու շնոր-

հիվ մի քանի ամիս հաջողությամբ պայքարելով կանխել վտանգավոր համաճարակի հետագա տարածումը:

Իր ծառայությունների համար արժանացել է ուլայի (իւլա) զինվորական աստիճանին:

Պարգևատրվել է «Մեջիդիե», «Օսմանիե» և «Լիագաթ» պատվանշաններով, ինչպես նաև Հունաստանի «Այոս Յորդոս» (սբ. Գևորգ) ու Սերբիայի «սուրբ Սավվա» շքանշաններով:

1914-18թթ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զինվորական բժիշկ ծառայելով օսմանյան բանակում, բազմաթիվ օգուտներ է մատուցել Օսմանյան պետությանը և նրա հայ համայնքին:

1915թ. ապրիլի 11 (24)-ին ի թիվս բազմաթիվ ակնառու հայ մտավորականների, ձերբակալվել է և բանտարկվել Կ. Պոլսի կենտրոնական բանտում:

1915թ. ապրիլի 12-ին, ի թիվս բազմաթիվ ձերբակալված հայ մտավորականների, գնացքով տեղափոխվել է Այաշ ավանի ծայրամասի բլրի վրա գտնվող Սարը կըշլա հին զորանոց-բանտը և մի քանի ամիս արգելափակվել այնտեղ:

Հ ա ն գ ա մ ա ն ք ն ե թ ի բերումով փրկվել է անխուսափելի մահից:

Պատերազմից հետո դասախոսել է Աղքատախնամ ընկերության՝ Կ. Պոլսի Բերա թաղամասում հիմնած հիվանդապահների դասընթացում և Կ. Պոլսի 4 թաղամասերի ազգային վարժարաններում:

Մահացել է 1930/32թ. հունվարի 26-ին, Կ. Պոլսում 71 տարեկանում:

Աշխատությունը.

Տիֆ հիվանդության բուժումը:

Նրա մասին.

1. Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1905:

2. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Վիեննա, 1922:

3. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ., Գահիրէ, 1937:

4. Պոտոլրեան Մկրտիչ, Հայ հանրագիտակ, Պուքրէշ, 1938:

5. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

6. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

7. Ծիկահեր Վարդ, Կիսադարեան պատմութիւն թրքահայ բժշկութեան, 1923-1975, Իսթանպուլ, 1975:

8. Պալաքյան Գրիգորիս ծ.

վրդ., Հայ գողգոթան, Երևան, 1991:

9. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

10. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողը և վկայք խաչի, Երևան, 2002:

11. Փամուլքյան Գևորգ, Հայերը իրենց կենսագրականներով (թուրքերեն), Ստամբուլ, 2003:

12. Ավագեան Կարինե, «Չանդրըրի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդես Ամսօրեայ», 2008, հ. 1-12

ԱԼՂԵՐԹՅԱՆ ՄԿՐՏԻՉ

Ծնվել է Կարինում:

Ա տ ա մ ն ա բ ու ժ ա կ ա ն կրթություն է ստացել և ատամնաբույժ աշխատել:

Եղել է ՀՅԴ անդամ:

Սպանվել է 1915թ., Երզնկայից (Երզնկայի) դուրս:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուշամատեան Մեծ

Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուս, 1965:

3. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորակաւորեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

4. Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ալբոմ-ատլաս, Բ. հատոր, 1914-1925, Լոս Անճելըս, 2001:

ԱՐԱՄԻՐՅԱՆ

Գրվել է նաև Աղամիրզով: 1918թ. աշխատել է Բաքվում կամ Ելիզավետպոլում (Գանձակ, Գյանջա):

Եղել է շատ ճանաչված և հարգված բժիշկ:

Բուժել է հիմնականում թաթարներին (ադրբեջանցիներին):

1918թ. սեպտեմբերին Բաքվում/Գանձակում ինքը և ընտանիքի անդամները ի թիվս 40 հայ մտավորականների և 2000 այլ հայերի սպանվել են պարագլուխ Զավանշիրի ղեկավարությամբ թուրք մուսաֆաթականների կազմակերպած հայկական կոտորածի ժամանակ:

Նրա մասին.

Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում, 1918-1920թթ., Պատ. խմբ. Ա. Վիրաբյան, Ե.,

2003:

ԱՃԵՍՅԱՆ ԲԱՐՈՒՄԿ

Ծնվել է 1875թ., Բրուսա քաղաքում: 1896թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան դեղագործական վարժարանը, Բրուսայի Սեթ բաշը թաղամասում բացել սեփական դեղատուն: Բանդրմա քաղաքում ևս դեղագործ է աշխատել:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական դեղագործ ծառայել:

1915թ. օգոստոսի 29-ին, 45 տարեկանում, կախաղան է բարձրացվել Բանդրմայում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յոււշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

3. Թէոդիկ, Յոււշարձան Նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

4. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործութեան պատմութիւնից, Երևան, 1990:

5. Յարման Արսեն, Հայերը

օսմանյան առողջապահութեան ծառայութեան մեջ և պատմութիւնը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերէն), Ստամբուլ, 2001:



ԱՃԵՍՅԱՆ ՂԱԶԱՐՈՍ

Ծնվել է 1886թ. Նոյեմբերի 3-ին, Բրուսայի Նահանգի Բիլեջիկի գավառի Թյուրքմեն գյուղում:

Հետագայում կրել է Բագրե-վանոյան ազգանունը:

Երկրորդական կրթութիւնը ստացել է ամերիկացի միսիոներների Այնթապի Կենտրոնական Թուրքիայի կոլեջում: Այնուհետև 2 տարի ուսանել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետում: Ազգային հեղափոխական ընկերակցութիւններ կազ-

մելու պատճառով համալսարանի դեկանութիւնը հետապնդել է Նրան և հեռացրել այն օրերին, երբ, ինչպէս գրում է բժիշկը, «Թուրքիոյ վրայ կը շողար Ազատութեան կեղծ արեւը»:

Մեկնել է Ժնև և ուսումը շարունակել տեղի համալսարանի բժշկական ֆակուլտետում:

1914թ. ստանալով բժշկի վկայականը վերադարձել է Կ. Պոլիս:

1914թ. վերջերին զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել:

Օսմանյան բանակի կազմում կրել է բազում դժվարութիւններ ու դառնութիւններ, եղել Դարդանելում, Կիլիկիայում, Միջագետքում, Հայաստանում: Օսմանյան բանակի սպայի համազգեստով քայլել է բյուրավոր հայերի գողգոթան դարձած ճամփաներով:

1918թ. վերադարձել է Շվեյցարիա և 2 տարի մնացել Լոզան քաղաքում:

Եղել է Կ. Պոլսի «Ճակատամարտ» և «Դարման» թերթերի աշխատակից:

Հայ Կարմիր խաչի Կ. Պոլսի կենտրոնում է աշխատել:

Նրա քանքերի շնորհիվ Կ. Պոլսի Կարմիր խաչի մարմինը հրավիրվել է խորհրդակցական ձայնով մասնակցելու Կարմիր խաչի 10-րդ

միջազգային խորհրդածրոյին (1921թ. մարտի 31 - ապրիլի 7) և «Մանուկների օգնութեան» խորհրդածրոյին (1921թ. ապրիլի 7-9), որոնցում Ղազարոս Աճեմյանը ներկայացրել է Հայ Կարմիր խաչը:

Հայոց շվեյցարացի բարեկամների ընկերութեան կենտրոնի (Ժնև) անդամներից շատերի հետ ծանոթ լինելով դեռևս ուսանողական տարիներից, հրավեր է ստացել Նրանց՝ խորհրդային Հայաստան ուղարկվելից հիվանդանոցի բժշկատեղ լինելու, սակայն ինչ-ինչ պատճառներով չի կարողացել ստանձնել այդ առաքելութիւնը:

1921թ. տեղափոխվել է ԱՄՆ և հաստատվել Քոնեքթիքտի Նահանգի Հարթֆորթ քաղաքում:

Նրա մասին.

ԲԺ. Բագրեւանդեան, Ինքնակենսագրութիւն, Թեոդիկ, Կ. Պոլիս, 1922:

ԱՃԵՍՅԱՆ ՆՇԱՆ (ՅԻՔՐԻ)

Ծնվել է մոտ. 1867թ., Կոստանդնուպոլսի Խասագյուղ (Խասքեոյ) թաղամասում (որոշ աղբյուրներով՝ Սեբաստիայի Նահանգի Եվդոկիայի գավառի կենտրոն

Եվրոկիա [Թոքաթ] քաղաքում):

1894թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

1894թ.-ից ներքին հիվանդությունների բժիշկ է աշխատել Եվրոկիայում:

1914-18թթ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և հազարապետի աստիճանով ծառայել Տրապիզոնի նահանգի Սամսոն (Սամսուն) նավահանգստի զինվորական հիվանդանոցի բժշկապետ:

Պատերազմի ավարտից հետո երկար տարիներ շարունակել է քաղաքային հիվանդանոցի բժիշկ և ազատ բժիշկ աշխատել Սամսունում:

Որոշ ժամանակ քաղաքային հիվանդանոցի բժիշկ է աշխատել Սեբաստիայի նահանգի Ամասիայի գավառի կենտրոն Ամասիա քաղաքում:

Հետագայում հաստատվել է Կ. Պոլսում և բժիշկ աշխատել:

Առաջացած տարիքում հիվանդացել է և անդամալույծ դարձել:

Մահացել է 1930թ. կամ 1944թ. ապրիլի 30-ին, Կ. Պոլսի Կոլմ կափու թաղամասում:

Այլ (նվազ հավանական) տվյալներով՝ 1915թ. ապրի-

լին ձերբակալվել է Իթթիհարի ղեկավարներից դոկտոր Բեհաեդդին Շաքիրի կազմած 58 ականավոր հայ բժիշկների ցուցակով և սպանվել 1915թ., Երզնկայում մոտ 48 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութան տուճած զոհերը, ցուցակագրուճ վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եւրոկիոյ հայոց, Գահիրէ, 1952:

3. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

4. Շիկահեր Վարդ, Կիսադարեան պատմութիւն թրքահայ բժշկութեան, 1923-1975, Իսթանպուլ, 1975:

5. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

6. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործութեան պատմութեանից, Երևան, 1990:

7. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահութեան ծառայութեան մեջ և պատմութեան սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:



**ԱՃԵՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԱՎԵՏԻՍԻ**

Բժիշկ, բէյ, Օսմանյան կայսերական բժշկական վարժարանի դասախոս:

Ծնվել է 1852/53թ. փետրվարի 13-ին, Կոստանդնուպոլսի Ենի կափու թաղամասում:

Ավարտել է Կ. Պոլսի Կոլմ կափու թաղամասի Պեգճյան վարժարանը:

1866-73թթ. սովորել է Կ. Պոլսի Կայսերական զինվորական բժշկական վարժարանում և ավարտելուց հետո ստացել կապիտանի կոչում:

1873-75/76թթ. որպէս առաջավոր շրջանավարտ, պետությունը նրան ուղարկել է Վիեննա, ուր մասնագիտացել է ակնաբուժութեան գծով:

1875/76թ. վերադարձել է Կ. Պոլիս:

1875/76-78թթ. ակնաբույժ է աշխատել Սելանիկի (Սալոնիկ, Թեսալոնիկէ, այժմ՝ Հունաստանի տարածքում) հիվանդանոցում:

1878-1911թթ. ակնաբույժ է աշխատել Կ. Պոլսի Հայդարփաշայի զինվորական հիվանդանոցում:

Մեկնել է Եվրոպա և կա-

տարելագործվել Փարիզի ու Վիեննայի առաջատար հիվանդանոցներում:

1897թ. Փարիզում «Archive d'Ophthalmologie» հանդեսում հրատարակել է հոդված՝ աչքի վիրահատութեան միևնույն անհաջող համարված մի նոր մեթոդի շատ շահեկան ուսումնասիրութեան մասին:

Միաժամանակ, որպէս պրոֆեսոր Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանում դասավանդել է «Ակնաբուժություն» առարկան և բազմաթիվ ակնաբույժ մասնագետներ պատրաստել:

Որոշ ժամանակ քաղաքապետարանի ակնաբույժ է աշխատել:

Ավելի քան 25 տարի ակնաբույժ է աշխատել Հասեքի կանանց հիվանդանոցում:

Եղել է Ազգային կենտրոնական վարչութեան Զաղաքական ժողովի անդամ և նախագահ, Զաղաքական ժողովի Ուսումնական խորհրդի ատենապետ:

1907-09թթ. եղել է սր. Փրկիչ ազգային հիվանդանոցի հոգաբարձութեան խորհրդի անդամ:

1909թ. մարտի 26-ին ընտրվել է Օսմանյան կայսերական բժշկական ընկերութեան անդամ, ապա՝ նախագահի տեղակալ:

1911թ. պետական ծառայությունը ավարտել է գնդապետի (միրալայ) աստիճանով և հանգստյան կոչվել:

Ակնաբուժության վերաբերյալ հայերեն, թուրքերեն և ֆրանսերեն լեզուներով գրած բազմաթիվ գիտական աշխատությունների հեղինակ է:

Բեյի տիտղոս է ունեցել: Պարզևատրվել է 4-րդ (կամ 3-րդ) աստիճանի «Օսմանիե» (1899թ.) և 4-րդ աստիճանի «Մեջիդիե» պատվանշաններով, ինչպես նաև ոսկե մեդալով (1900թ.):

Ապրել է Կ. Պոլսի Բերաթաղամասում:

1912թ. սեպտեմբերի 21-ին, մահացած բժիշկ Անտոն փաշա Նաֆիյանի հուղարկավորության ժամանակ Օսմանյան կայսերական բժշկական ընկերության անունից կարդացել է իր գրած ֆրանսերեն դամբանականը, որի հայերեն օրինակը տպագրվել է Կ. Պոլսի «Բժիշկ» ամսաթերթում:

Մահացել է 1913/14թ. ապրիլի 12 (25)-ին, Կ. Պոլսի Բերաթաղամասում 61 տարեկանում:

Մահվան հանգամանքները անհայտ են, ամսաթիվը՝ խոստում:

Նրա մասին.

1. Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1900:

2. Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը, 2. տարի, Կ. Պոլիս, 1912, Բ. հրատարակութիւն, Հալէպ, 2008:

3. Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1931:

4. Պոտուրեան Մկրտիչ, Հայ հանրագիտակ, Պուլքրէշ, 1938:

5. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

6. Օսեան Երուանդ, Մեր երեսփոխանները, մեր Ազգային ժողովը, Երեւան, 1999:

7. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 1988:

8. Փամուրջյան Գևորգ, Հայերը իրենց կենսագրականներով (թուրքերեն), Ստամբուլ, 2003:

9. Չօհրապ Գրիգոր, Երկերի ժողովածու, հ. Ե., գիրք 1, Երեւան, 2004:

10. Անթայր (Վարուժան Զեօսէան), Դար մը առաջ պոլսահայ բժիշկները, «Ակօս», Ստամբուլ, 06-01-2006:

ԱՄԻՐԱԼՅԱՆ ՆՃԱԼ

Ծնվել է մոտ 1875թ., Հա-

լեյի Նահանգի Մարաշի գավառի կենտրոն Մարաշ քաղաքում:

1898թ. ավարտել է Բալթիմորի բժշկական համալսարանը (ԱՄՆ):

Մահացել է Առաջին համաշխարհային պատերազմի (1914-18թթ.) ընթացքում: **Նրա մասին.**

Պոտուրեան Մկրտիչ, Հայ հանրագիտակ, Պուլքրէշ, 1938



ՄԻՐՈՎԱԼՅԵ ԱՄԱՍԻԱՅԻ

Բնագետ, բժիշկ, մատենագիր, բառարանագիր, աստղագետ, արքունի բժիշկ, վիրաբուժապետ:

Ծնվել է մոտ 1420/1425թ., Մեբաստիայի Նահանգի Ամասիա գավառի կենտրոն Ամասիա քաղաքում՝ Եղիայի ընտանիքում:

Հ. Յազմաջյանը Նրան կոչում է Գևորգ Ամիրդովլաթ Ամասիացի:

Երիտասարդ հասակում շրջագայել է Արևելքի երկրներում, ծանոթացել դրանց

բնակչության սովորություններին, սովորել լեզուներ, ուսումնասիրել գիտություններ:

Տիրապետել է հայերենին, հունարենին, լատիներենին, պարսկերենին, արաբերենին և թուրքերենին:

Սկզբում ապրել է Մակեդոնիայում:

1450թ.-ից, երկար տարիներ, ապրել է Կ. Պոլսում, որտեղ էլ, հավանաբար, ստացել է բժշկական կրթությունը: Համաձայն այլ աղբյուրների՝ բժշկությունն ուսանել է Միջագետքում կամ Արաբիայում:

Ուսումնասիրել է հին և միջնադարյան բժշկագիտությունը:

Հռչակավոր բժշկի համբավ է ունեցել:

Եղել է օսմանյան Մեհմեդ II Ֆաթիհ սուլթանի անձնական և պալատական բժիշկը: Հռչակվել է իբրև վիրաբուժապետ:

1466-1469թթ. Ֆիլիպպոլո քաղաքում (այժմ Պլովդիվ, Բուլղարիա) գրել է «Օգուտ բժշկության» գիրքը, որում համակարգված ձևով տվել է ներքին օրգանների, նյարդերի և ուղեղի ավելի քան 200 հիվանդությունների նկարագրությունը, դեղաբուժության ու սննդաբուժության մեթոդները:

Ինչ-որ պատճառով արտաքսվելով մայրաքաղաք Կ.

Պոլսից, 10 տարի գտնվել է օտարության մեջ, շրջագայել տարբեր երկրներում ու քաղաքներում:

1470-ական թվականներին վերադառնալով Կ. Պոլիս՝ շարունակել է աշխատել սուլթանի պալատում:

Մահացել է 1496թ. դեկտեմբերի 8-ին, Բրուսայում:

«Օգուտ բժշկության» գրքում հիշատակելով 37 նյարդային և հոգեկան հիվանդություններ, խոսում է մանիայի, դեպրեսիայի, մելանխոլիայի, գառանցանքի, ցնորքների, գիտակցության խանգարումների, էպիլեպսիայի, հիստերիայի, անքնության մասին:

Ըստ Ամիրդովլաթ Ամասիացու՝ մելանխոլիան լինում է երկու ձևի.

- Տաք ձևը կախված է ուղեղում կուտակված արյան կամ դեղին լեղու առատությունից, տաք կամ գրգռող ուտելիքից: Սրա ժամանակ լինում են չպատճառաբանված ծիծաղ, դեմքի գերարյունություն, անկապ խոսք և այլն: Այս հիվանդության ժամանակ անհրաժեշտ է զգուշանալ հիվանդի ինքնասպանությունից:

- Սառը ձևը առաջանում է ուղեղում լորձի և սև լեղու կուտակումից: Հիվանդները քչախոս են, նստում են ինչոր անկյունում, ունենում են վախի գագացում, շատ են ու-

տում, բայց չեն կշտանում և կերածը վատ են մարսում: Մանիան դիտվում է որպես մելանխոլիայի տարատեսակ, հանդիպում է հաճախ փետրվարին, առաջանում է տարրական խոնավությունների կուտակվելուց ու խառնվելուց: Սրա ժամանակ լինում է անքնություն, աչքերի դժգունություն, հիվանդները թափառում են ամայի վայրերում, բղավում են, իրենք իրենց հետ խոսում և այլն:

Այնուհետև նկարագրում է հոգեկան խանգարման այլ տարատեսակներ. օրինակ՝ հիշողության, սիրահարվածության հողի վրա առաջացած խանգարումներ, երգատեսություններ և այլն:

Ըստ Ամիրդովլաթ Ամասիացու՝ էպիլեպսիան ևս լինում է տաք և սառը: Տաքի դեպքում նոպայից առաջ դեմքը կարմրում է, անոթները լարվում են, լինում է քթային արյունահոսություն: Սառի դեպքում դիտվում են դժգունություն, լորձի կուտակում քթում և փրփուր բերանի շուրջը:

Ամիրդովլաթը հիստերիան տարբերակում էր էպիլեպսիայից, հոգեկան գործառույթներն ու հոգեկան հիվանդությունները վերագրում ուղեղին՝ իր բնութագրումով՝ «հոգու օրգանին»:

Նա այս հիվանդություն-

ների առաջացման հիմնական պատճառ է համարում արտաքին գործոնները, իսկ մի շարք դեպքերում կարևորում ժառանգականությունը:

Հոգեկան հիվանդությունների բուժման հարցում առաջնորդվում էր հիպոկրատյան «Օգնել բնությանը» սկզբունքով, կիրառում բուսական, կենդանական, հանքային ծագման դեղամիջոցներ, ինչպես նաև կարևորում խոսքի ուժը. «Բժիշկը պիտի բուժի ոչ միայն մարմինը, այլև հոգին»:

Այս բոլորը վկայում են այն մասին, որ Ամասիացին լինելով լայն պրոֆիլի բժիշկ-գիտնական, զբաղվել է նաև հոգեբուժությամբ:

Աշխատությունները.

1. Ուսումն բժշկութեան (մարդակազմություն, առողջագիտություն, ախտաբանություն, դեղագիտություն), Կ. Պոլիս, 1459:

2. Ախրապատին, գիրք 1 (դեղագործություն, դեղագիտություն), Կ. Պոլիս, 1459:

3. Բառք այբուբենական ի վերայ ցաւոցն (դեղագիտություն), 1468:

4. Օգուտ բժշկութեան (մարդակազմություն, ախտաբանություն, հիվանդությունների պատճառագիտություն, կլինիկա,

բուժում), Ֆիլիպոպոլ, 1466-1469 (հրատ. Երևան, 1940):

5. Գիրք ռամկական (աստղաբաշխություն), Ֆիլիպոպոլ, 1474:

6. Ախրապատին, գիրք 2, 1481:

7. Անգիտաց անպետ (դեղագիտական վեցլեգվյան հանրագիտարան), Կ. Պոլիս, 1478-1482, (հրատ. Վենետիկ, 1926):

8. Վասն նշանաց հիւանդին, գլեկնաց եւ զմահուն:

9. Աղիւսակերպ բառարան:

Նրա մասին.

1. Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 1, Երևան, 1974.

2. Հայկական Համառոտ Հանրագիտարան, հ. 1, Երևան, 1990

3. Վարդանյան Ստեյլա, Հայաստանի բժշկության պատմություն, Երևան, 2000:

4. Հայ անվանի բժիշկներ, գիրք Ա, գլխավոր խմբագիր՝ Ա. Ծիրինյան, Երևան, 2002:

5. Ով ով է, Հայեր, Կենսագրական հանրագիտարան, հ. 1, Ե., 2005

ԱՅՎԱՉՅԱՆ

Բարձրագույն բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել:

Սպանվել է 1915թ., Սդերդում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տու-
լած զոհերը, ցուցակագրու-
լած վաւերական փաստե-
րով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուշամատեան Մեծ
Եղեռնի (1915-1965), պատ-
րաստեց Գերսամ Ահարոնե-
ան, Պէյրուք, 1965:

3. Թէոդիկ, Յուշարձան
Նահատակ մտաւորակա-
նութեան, Բ. տպագրութիւն,
Երեւան, ապրիլ 24, 1985:

ԱԹՎԱԶՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

Ծնվել է Սեբաստիայի
Նահանգի կենտրոն Սեբաս-
տիա քաղաքում:

Դեղագործական կրթու-
թյուն է ունեցել և դեղագործ
աշխատել:

Մահացել է Սեբաստիա-
յում, ժանտախտից:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուլած
զոհերը, ցուցակագրուլած
վաւերական փաստերով, Կ.
Պոլիս, 1919:

ԱԹՎԱԶՅԱՆ ՀԱԿՈՐ

Ծնվել է Անկարայի Նա-
հանգի Յոզղաթի գավառի
Ելլենջե գյուղում:

Բժշկական կրթութիւն է
ունեցել և բժիշկ աշխատել:

Այլ տեղեկութիւն չկա:
Հավանաբար անհետ կորել
է:

Նրա մասին.

1. Ծահբազյան Հասմիկ
և Միրզոյան Անահիտ (կազ-
մողներ), Յուշակ Հայոց ցե-
ղասպանութեան զոհերի
(1915-1923թթ.), հ. 3, Անկա-
րայի Նահանգ, Երևան, 2006:

ԱՆԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ

Արքունի բժիշկ:

Ծնվել է 1770թ., Կ. Պոլ-
սում:

Նախնական կրթութիւնն
ստա-ցել է ծննդավայրում,
երկրորդական ուսումը՝ Վե-
նետիկի Մխիթարյան միա-
բանութեան վանքի վարժա-
րանում:

1783-93/94թթ. սովորել է
Իտալիայի Պադովա քաղա-
քի համալսարանի բժշկա-
կան ֆակուլտետում և ստա-
ցել բժշկութեան դոկտորի
տիտղոս:

1793/94թ. վերադարձել
է Կ. Պոլիս և, զբաղվելով
բժշկութեամբ, կարճ ժամա-
նակ անց ձեռք բերել հմուտ
բժշկի համբավ:

Այդ ժամանակ Կ. Պոլսում
կար ընդամենը 2 համալսա-
րանական հայ բժիշկ՝ Պո-
ղոս Անտոնյան-Շաշյանը և
Հովակիմ Օղուկլիյանը:

Շուտով Օսմանյան կայս-
րութեան փառիշտի (միա-
պետ) հրովարտակով նշա-
նակվել է արքունի բժշկի
պաշտոնում և զբաղվել կայ-
սերական գերդաստանի

առողջապահութեան և բուժ-
ման հարցերով:

1814-15թթ. սուլթանի
հարեմի սիրած կանանցից
մեկին բուժելու, սակայն
կյանքը փրկել չկարողանա-
լու պատճառով ենթարկվել
է հետապնդումների, ուստի
մահապատժից խուսափելու
պատճառով (ըստ Մեզպու-
րեանի՝ սեփական խղճա-
հարութիւնից հալածված)
փախել է Իտալիա:

Հաստատվելով Իտալիա-
յի Տրիեստե քաղաքում շա-
րունակել է զբաղվել բժշկու-
թեամբ:

Մահացել է 1865թ. օգոս-
տոսի 3-ին, Տրիեստե քաղա-
քում 95 տարեկանում:

Թաղվել է Տրիեստեի գե-
րեզմանոցում:

Խոշոր գումար է կտակել
ազգային, բարեգործական
և որբախնամ նպատակնե-
րի հատկացնելու համար:

Նրա մասին.

1. Թորգոմեան Վահրամ,
«Հայաստանի կոչնակ», Նիւ-
եորք, թ. 28:

2. Թորգոմեան Վահրամ,
«Հանդէս ամսօրեայ», Վիեն-
նա, 1897, թ. 2:

3. Պոտուրեան Մկրտիչ,
Հայ հանրագիտակ, Պուքրէշ,
1938:

4. Մեզպուրեան Արթ, Հայ
եւ ծագումով հայ բժիշկներ,
Իսթանպուլ, 1950:



ԱՆՍՈՒՐ(Լ)ՅԱՆ ԳԱՐԻԲԵ
ՂԱԶԱՐԻ

Ծնվել է 1885թ., Խարբեր-
դի Նահանգի Մեյիտինեի
(Մալաթիա) գավառի կենտ-
րոն Մեյիտինե քաղաքում:

Ծնողները՝ Ղազար և Գո-
հար Անսուրյանները վաղա-
ժամ են մահացել և որբուկը
մեծացել է Հովսեփ հորեղ-
բոր խնամքի տակ: 1895թ.
հայկական կոտորածների
ժամանակ զոհվել է Նաև հո-
րեղբայրը և փոքրիկը մա-
ցել է կատարյալ որբ:

Նախնական կրթութիւնն
ստացել է ծննդավայրի սբ.
Երրորդութիւն վարժարա-
նում:

1903թ. ուղարկվել է Կա-
րին և անվճար ուսանել Սա-
նասարյան վարժարանում:

1906թ. ավարտելով ու-
սումը, վերադարձել է Մե-
յիտինե և ուսուցչութիւն
արել Մայր վարժարանում,
դասավանդելով քիմիա, բու-
սաբանութիւն, թվաբանու-
թիւն, տոմարակալութիւն
և բնագիտութիւն:

Միաժամանակ, եղել է Մե-
յիտինեի ՀՅԴ կոմիտեի քար-
տուղարը:

1909թ. Ադանայի եղեռնը սթափեցրել է Մելիտինեի մտավորականներից շատերին, և Գաբրիելը, մի խումբ գաղափարակից երիտասարդների հետ, լծվել է Մելիտինեի ինքնապաշտպանության գործին: Ընկերների հետ ռումբ պատրաստելիս վերջինս պայթել է ու վնասել Գաբրիելի աջ ձեռքը:

Ուսուցչություն անելու ընթացքում կապուչին միաբան հայր Սելեսթինի մոտ ֆրանսերեն է ուսանել:

1910թ. մեկնել է Բեյրութ և ընդունվել Սեն Ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1911թ. նշանվել է մի հայ օրիորդի հետ:

1914թ. ամռանն ավարտել է ուսումը և սպասել աշնանը ավարտական քննությունները հանձնելուն:

1915թ. մայիսին Բեյրութում ձերբակալվել է իբր իր ծննդավայրը ուղարկվելու համար: Սպանվել է նույն տարվա ամռանը՝ Եղեսիայի մոտ կամ Մելիտինեի բանտում, 30 տարեկանում:

Այլ տվյալներով՝ վերապրել է:

Նրա մասին.

1. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957

2. Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփիինե

(կազմողներ), Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի նահանգ, Երևան, 2004:

ԱՆՍՈՒՐՅԱՆ ԵՐՎԱՆԴ

Ծնվել է Սեբաստիայի նահանգի կենտրոն Սեբաստիա քաղաքում: Բուժակ է աշխատել: Սպանվել է 1915թ.:

Նրա մասին.

Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփիինե (կազմողներ), Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1,

Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:

ԱՆՍՈՒՐՅԱՆ ԿԱՐՎԴԵՏ

Ծնվել է Սեբաստիայի նահանգի կենտրոն Սեբաստիա քաղաքում:

Բուժակ է աշխատել:

Սպանվել է 1915թ.:

Նրա մասին.

Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփիինե (կազմողներ), Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:

ԱՆՍՈՒՐՅԱՆ ՎԱՀԱՆ

Ծնվել է Սեբաստիայի նահանգի կենտրոն Սեբաս-

տիա քաղաքում:

Բուժակ է աշխատել:

Սպանվել է 1915թ.:

Նրա մասին.

Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփիինե (կազմողներ), Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:



**ՎՃՃՅԱՆ ՎԱՀԱՆ
(ԿՈՍԿՈՍ)**

Ծնվել է Տրապիզոնի նահանգի կենտրոն Տրապիզոն քաղաքում:

Բժշկական կրթություն է ունեցել և Տրապիզոնում վիրաբույժ աշխատել:

1877-78թթ. Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ զինվորական վիրաբույժ է ծառայել օսմանյան բանակում:

Ղայրխճի (Նավավար) Մեհմեդի նավակով փախնե-

լով հասել է Սուխում և տեղի ՀՅԴ կոմիտեին զեկուցել երկրում տիրող կացության մասին: Կոմիտեն Տրապիզոնի շրջանի հայությանը նավերով Կովկաս տեղափոխելու որոշում է կայացրել: Սակայն գերմանական նավատորմն սկսել է ռմբակոծել ռուսական ծովեզորը և ծրագիրը հնարավոր չի եղել իրագործել:

Նրա մասին.

Թորլաքեան Միսաք, Օրենոս հետ,

Պեյրութ, 2001:

ԱՊՏԱԼՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

Ծնվել է 1844թ., Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառի Կյուրինի գավառակի կենտրոն Կյուրին քաղաքում:

Սովորել է ամերիկացի միսիոներների Մարզվանի Անատոլիա քոլեջում, որի ուսանողները, բացի մի քանի հույնից, հայեր էին:

Բարձր առաջադիմությամբ աչքի ընկնելով՝ շահել է քոլեջի ամերիկացի տնօրենի համակրանքը և նրա հոգածությամբ մեկնել ԱՄՆ-ի Քոնեքթիկուդի նահանգի Հարթֆորթ քաղաքի աստվածաբանական դպրոցում ուսանելու, որը ևս ավարտել է բարձր առաջադիմությամբ:

1877թ. Հարթֆորդում քարոզիչ է ձեռնադրվել և ամերիկյան քաղաքացիություն ստացել:

Այս տարիներին սովորել է Նյու Յորքի բժշկական կոլեջում և հմտացել վիրաբուժության ճյուղի մեջ:

1879թ. ավարտելով բժշկական կրթությունը՝ վերադարձել է Թուրքիա:

1882թ. Բրուսայի նահանգի Նիկոմիդիայի գավառակի կենտրոն Նիկոմիդիա (Իզմիր) քաղաքում ամուսնացել է օրհորդ Հայկանուշ Բեյազյանի հետ, այնուհետև կրկին մեկնել ԱՄՆ և իր մոտ հրավիրել կնոջը:

1884թ. Կյուրին քաղաքի կառավարչության մասնավոր հրավերով վերադարձել է Թուրքիա և հաստատվել իր ծննդավայրում:

1884-95թթ. Ամերիկյան Պորտի միսիոներ և կառավարական բժիշկ է աշխատել Կյուրինում:

1895թ. մի օր թուրքերը հարձակվել են Կյուրինի հայկական տների, այդ թվում՝ իրենց լավ ծանոթ բժիշկ Նահապետ Ապտայանի տան վրա: Բժշկի կինը զավակների հետ փախել ու ապաստանել է հայոց եկեղեցում:

Բժշկին նախօրոք, վիրաբուժական գործողություն կատարելու պատրվակով, հրավիրել են կառավարչատուն, որտեղ նրա մտերիմ

թուրք ժանդարմն սպանել է նրան թունավոր գնդակով՝ 51 տարեկանում:

Այդ ահավոր օրերից հետո տիկին Հայկանուշը մեկնելով Կ. Պոլիս՝ ԱՄՆ-ի հյուպատոսի միջոցով բողոք է հղել Թուրքիայի կառավարությանը՝ ԱՄՆ քաղաքացի ամուսնու սպանության համար և հաջողացրել հատուցում ստանալ:

Հետագայում տիկին Հայկանուշ Ապտայանը զավակների հետ տեղափոխվել է ԱՄՆ, որտեղ նրա դուստրը՝ Չապել Ապտայանը ստացել է բժշկական կրթություն:

Նրա մասին.

Պատմագիրք Կիլրինի, պատասխանատու խմբագիր՝ Պետրոս Մինասեան, Պեյրուբ, 1974, 823 էջ:

ԱՋՊԱՀՅԱՆ (ԱՇՊԱՀՅԱՆ) ՀԱՍՐԱՐՉՈՒՄ

Ծնվել է 1887թ., Սեբաստիայի նահանգի կենտրոն Սեբաստիա քաղաքում:

Ա տ ա մ ն ա բ ո լ ժ ա կ ա ն կրթություն է ունեցել:

1909թ. դրությամբ ատամնաբույժ է աշխատել:

Սպանվել է 1915թ., Սեբաստիա քաղաքում կամ

նրանից դուրս՝ 28 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուճած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուշամատեան Մեծ եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պեյրուբ, 1965:

3. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորակաւնութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

4. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

5. Խաչատրյան Լ., Բաբլումյան Ա., Յուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՊՈՂՍ

Ծնվել է մոտ 1850թ., Վանի նահանգի կենտրոն Վան քաղաքում:

Բժշկական կրթությունն ավարտել է ԱՄՆ-ում՝ հավանաբար 1875թ.:

Երեք տարի (1875-78թթ.) Խարբերդում բժիշկ է աշխատել, այնուհետև (1878թ.) ընտանիքով տեղափոխվել Ադիյաման և քաղաքային

բժիշկ աշխատել:

1895թ. Ադիյամանում տեղի ունեցած հայկական կոտորածի ժամանակ զոհվել է իր կրտսեր դստեր հետ միասին՝ մոտ 45 տարեկանում:

Այդ ողբերգությունից հետո, կինը՝ Բամբիշ Խանըմը տեղափոխվել է ԱՄՆ-ի Թրոյ քաղաքը, որտեղից էլ Լուս Անջելես, ուր մահացել է 1931թ.՝ 74 տարեկանում:

Նրա մասին.

Պոտուրեան Սկրտիչ, Հայ հանրագիտակ, Պուլքրէշ, 1938:

ԱՍԱՏՈՒՐՅԱՆ (ԱՍՏՈՒՐՅԱՆ, ԱՍԱՏՈՒՐ) ՎԱՀՐԱՄ

Ծնվել է 1876թ., Կ. Պոլսի Բեյքոզ թաղամասում:

1905թ. ավարտել է դեղագործական կրթությունը և դեղագործ աշխատել:

Ապրել է Կ. Պոլսի Կետիկփաշա թաղամասում:

1909-13թթ. Կ. Պոլսի նրա Կեդրոնական դեղատանը եղել է նաև բժշկի ընդունարան, որտեղ աշխատել է բժիշկ Հակոբը:

Եղել է հանրային գործիչ:

1915թ. ապրիլի 11 (24)-ին ոստիկանությունը նրան ձերբակալել է և բանտարկել Կ. Պոլսի կենտրոնական բանտում, որտեղից արտրվել է Չանդրը՝ հայ մտավորականների խմբի հետ:

Անունը փորագրվել է Չանդրորդի բանտում հավաքված համրիչի 99 հատիկներից մեկի վրա:

Չանդրորդի բանտից բազում տանջանքներ կրելով ինչ-ինչ հանգամանքներում տեղափոխվել է Մեսքենեի աքսորավայրը:

Մեսքենեում և Հալեպում բժշկի օգնականի կարգավիճակով անցել է զինվորական ծառայության՝ ենթասպայի աստիճանով և այդպիսով փրկվել սպանվելուց:

Զինվորական ծառայության ընթացքում բժշկական օգնություն և ցուցաբերել այդտեղով անցնող բազմաթիվ տարագիր հայ գաղթականների, որոնց համար դեղ ու խնամք չի խնայել:

Եղեռնից հետո վերապրել է:

1918թ. 4. Պոլսի Կետիկփաշ թաղամասում բացել է սեփական դեղատուն:

1926-27թթ. եղել է սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցի ղեկավարների կազմում:

Նրա մասին.

1. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Վիեննա, 1922:

2. Պալաքյան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Երևան, 1991:

3. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ

և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

4. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողը և վկայք խաչի, Երևան, 2002:

5. Ավագեան Կարինե, «Չանդրորդի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդես Ամսօրեայ», 2008, հ. 1-12
ԱՍԼԱՆՅԱՆ ՊՈՂՈՍ

Ծնվել է Ադիյամանում: Ուսանել է բժշկական վարժարանի Ե կարգում (5-րդ կուրսում):

Սպանվել է կամ մահացել հիվանդությունից՝ մոտ 22 տարեկանում:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:



ԱՍԼԱՆՅԱՆ ՎԱՐՊԱՆ ԶԱՀԱՆԱ

Մշակութային գործիչ:

Ծնվել է 1863թ., Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառի Ակն գավառակի Բինկյան ավանում:

Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում: Այնուհետև Կ. Պոլսում 3 տարի դեղագործություն է ուսանել:

1884թ. Կ. Պոլսում գրատուն է հիմնել:

1889թ. շրջագայել է Եվրոպայում և Փարիզի արվեստահանդեսը այցելել:

Կ. Պոլսում հիմնադրել է հյուսվածքեղենի գործարան, որի համար պատվանշան է ստացել:

1 8 9 2 - 1 8 9 7 թ թ . Բինկյանում ուսուցչությամբ է զբաղվել:

1897թ. քահանա է ձեռնադրվել:

1897-1909թթ. պաշտոնավարել է Սեբաստիայի գավառի Տի-վրիկի գավառակի Չմառա ավանում:

Այնուհետև պաշտոնավարել է Խարբերդի սբ. Կարապետ թաղի քարոզիչ քահանա:

Միաժամանակ, աշխարհագրություն և կրոն է դասավանդել Թլկատինցու դպրոցում և աղջկանց Սմբատյան ճեմարանում:

Պատմա-բանասիրական, կրոնա-բարոյական և այլ բնույթի հոդվածներով աշ-

խատակցել է «Հայրենիք», «Արեւելք», «Բիւզանդիոն» (Կ. Պոլիս) և «Արեւելեան մամուլ» (Զմյուռնիա [Իգմիր]) օրաթերթերին:

Հրատարակել է Հին և Նոր Ուխտի դասագրքեր, պատմական անտիպ երկեր:

1915թ. սարսափի օրերին իբրև հեղափոխական դեմք, բանտարկվել է Խարբերդի բանտում, եղել Թլկատինցու խցակիցը և երկու գործ գրել:

1915թ. Խարբերդի բանտում նահատակվել է ուրիշ հայ մտավորականների և հոգևորականների հետ միասին՝ շենքի հրկիզումով՝ 52 տարեկանում:

Նրա մասին.

1. Ստեփանյան Գառնիկ, Կենսագրական բառարան, հ. Ա., Երևան, 1973:

2. Թեոդիկ, Յուզարձան Նահատակ մտավորականութեան, Բ. տպագրութիւն, Երևան, ապրիլ 24, 1985:



ԱՍՏԱՐՃՅԱՆ ԳՐԻԳՈՐ

Բժշկ, մշակութային գործիչ:

Ազգանունը գրվում է նաև Ասթարճյան տարբերակով:

Ծնվել է 1886/88թ., Հալեպի նահանգի Մարաշի գավառի կենտրոն Մարաշ քաղաքում:

Նախնական կրթությունն ստացել է Մարաշի Ազգային Կեդրոնական վարժարանում, ապա ուսումը շարունակել Մարաշի պետական լիցեյում / Հալեպի Ֆրանսիական լիցեյում:

1905թ., բժշկական վարժարանում սովորելու նպատակով մեկնել է Կ. Պոլիս, ուր Յըլդըզի ռումբի դեպքի հետևանքով ձերբակալվել է և Հալեպ արքայապետի մոտ:

1907-08թթ. ուսումը շարունակել է Դամասկոսի բժշկական վարժարանում:

1910-11թթ. վերադարձել է Կ. Պոլիս և ուսումը շարունակել

նակել բժշկական վարժարանում:

1912թ. որպես բժիշկ-սպա մասնակցել է Բալկանյան առաջին պատերազմին:

1913թ. բժշկի վկայական է ստացել և որպես պետական բժիշկ Մուսուլ ուղարկվել:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, Մուսուլի նահանգապետի բժշկի հանգամանքի շնորհիվ, տեղահանությունից և զինվորական ծառայությունից զերծ է մնացել:

Այդ ժամանակ հաջողացրել է նահանգապետի միջոցով Մուսուլի շրջանում բնակեցնել 3000 կարնեցի հայ որբերի, աղքիկների, կանանց, պառավների և անկարների, որոնց արքայազն էին հետագայում կոտորելու նպատակով:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո շարունակել է մնալ Մուսուլում և ամբողջ 30 տարի զբաղվել բժշկությամբ ու հանրային աշխատանքով:

Սերտ կապեր է ունեցել արաբ մտավորականների հետ: Գերազանց տիրապետելով արաբերենին՝ հայ գրականությունից թարգմանություններ է կատարել և տպագրել արաբական թեր-

թրում, նաև արաբական գրականությունից թարգմանություններ կատարել և տպագրել Բաղդադում լույս տեսնող հայկական «Գոյամարտ» պարբերականում:

1951թ. Կահիրեի «Յուսաբեր» օրաթերթում հրատարակել է իր հուշերը Արևմտյան Հայաստանից հայ բնակչության տեղահանության մասին:

Նրա կարևորագույն աշխատությունները՝ «Հայոց պատմութիւն» ու «Հայոց գրական եւ մշակութային պատմութիւն» արաբերեն գրքերն արաբական մամուլի և արաբ մտավորականների ջերմ գնահատանքին են արժանացել: Արաբական պարբերականները, մասնավորաբար քաղղեացիների «ալ-Նեջմա» թերթը արտատպություններ են կատարել այդ գրքերից:

1950թ. իր անձնական գրադարանի հայկական մասը՝ շուրջ 200 դասական, գրական, պատմական գրքեր, նվիրել է Մուսուլի պետական գրադարանին, որով ստեղծվել է գրադարանի հայկական բաժինը:

Կատարել է նաև բազում այլ բարեգործություններ:

Տասնյակ տարիներ անընդմեջ ընտրվել է Իրաքի թեմի Ազգային գավառական ժողովի երեսփոխան:

1953թ. ընտանիքով տե-

ղափոխվել է Բաղդադ, որտեղ 1953 և 1956 թվականներին թեմի Զաղաքական ժողովի անդամ է ընտրվել:

Եղել է Թարգմանչաց-Սվաճյան միացյալ վարժարանի հոգաբարձության ատենապետը:

Մուսուլի բազմակրոն բնակչությանն անշահախնդիր ծառայելու համար՝ Հռոմի պապը նրան պարգևատրել է Սուրբ Սիլվեստրի Ասպետի պատվանշանով:

1957թ. ընտանիքով բնակվելիս է եղել Բաղդադում:

Աշխատությունները.

1. Հայոց պատմութիւն (արաբերեն), պատկերազարդ, հ.1-2, Մուսուլ, 1951, 404 էջ:

2. Հայոց գրական եւ մշակութային պատմութիւն (արաբերեն), Մուսուլ, 1954, 527 էջ:

Նրա մասին.

1. Գեորգեան Կարօ, Ամենուն տարեգիրքը, Դ. տարի, 1957, Պեյրուզ, 1958:

2. Ստեփանյան Գառնիկ, Կենսագրական բառարան, հ. Ա., Երևան, 1973:

ԱՎԱԳՑԱՆ ԹԱԴԵՎՈՍ

Ծնվել է մոտ 1880թ., Անկարայի նահանգի Անկարայի գավառի Սթանոզ ավանում:

1906թ. ավարտել է Կեսա-

րիայի բժշկական ֆակուլտետի դեղագործության բաժինը:

Դեղագործ է աշխատել:
 Սպանվել է 1915թ. մոտ 35 տարեկանում:

Նրա մասին.

1. Շահբազյան Հասմիկ և Միրզոյան Անահիտ (կազմողներ), *Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.)*, հ. 3, *Անկարայի Նահանգ, Երևան, 2006:*

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), *Ստամբուլ, 2001:*

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

Ծնվել է 1893թ., Կ. Պոլսի Գաղատիա (Կալաթա) թաղամասում:

Ուսանել Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանի Գ կարգում (3-րդ կուրսում):

Հավանաբար 1915թ. սպանվել է Գաղատիայում մոտ 22 տարեկանում:

Նրա մասին.

Հայ բժշկության տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱՐՈՒՐԱԿ

Սարգիս Սերոբյանի պատմածը.

„Իզմիրի հայտնի ընտանիքներից Ավետիսյանների ընտանիքը քաղաքի ընտրյալ Բեյազյան ընտանիքից հարս բերեց:

Չարուհին ամուսնացավ այս ընտանիքի զավակ բժիշկ Բարունակի հետ, ով ավարտել էր Ստամբուլի Գալերայի ռազմաբժշկական ակադեմիան:

Քանի որ բժիշկը Նախ աշխատանքի էր անցել Փոլաթհանեում, այնուհետև Գյումուշհանեում, Նրանց չորս երեխաները տարբեր վայրերում էին լույս աշխարհ եկել:

Նախ տան սյանը՝ սերժանտ բժիշկ Բարունակ Ավետիսյանին տարել են:

Տատիկս՝ Չարուհին, երբ գիշերը վրա է հասել և բժիշկ ամուսինը տուն չի եկել, դիմել է ծանոթ հարգարժան մարդկանց:

Ոմանք ականջին փսփսացել են, թե Գյումուշհանեից դուրս եկող հովտում դիակներ են տեսել, հնարավոր է՝ Նրանց մեջ լինի բժիշկը:

Չի հավատացել շշուկներին, չէր կարող նման բան լինել:

Բժիշկ սերժանտ էր, պետության սպա էր, անգամ մինչև Բաբերդ վազում էր հիվանդներին օգնության, սակայն բժիշկն այլևս չվերադարձավ, չկարողացավ վերադառնալ’:

Նրա մասին.

<http://allturkey.am/>- ից

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ

Ծնվել է Կ. Պոլսի Բերա թաղամասում:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և ծառայել է 4-րդ զորաբանակի զինվորական բժիշկ:

Մահացել է 1915թ. հոկտեմբերի 5-ին, ժանտախտից:

Նրա մասին.

Հայ բժշկության տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս:



ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԻՆԱՍ ԲԵՅ

Անասնաբույժ, անասնաբուժության պրոֆեսոր, բազմաթիվ մասնագիտական գրքերի հեղինակ, բեյ:

Ծնվել է 1849թ. փետրվարի 3-ին, Կոստանդնուպոլսի Բերա թաղամասում:

Նախնական ուսումն ստացել է Կ. Պոլսի հին Ներեկյան կրթարանում, որի բարձրագույն կարգն ավար-

տելուց հետո վարժարանի հոգաբարձու Հապեթիկ Նևրուզյանի միջոցով և պաշտպանությամբ ընդունվել է Կ. Պոլսի գինվորական իդադիե (միջնակարգ) վարժարանը: 1870-74թթ. սովորել է իդադիե վարժարանի անասնաբուժական բաժնում և գինվորական անասնաբույժի վկայական ստացել:

Ավարտելուց հետո օգնական դասատու է աշխատել վարժարանի դարմանաբանության և ծննդաբերության ճյուղերում:

1875թ. աչքի ընկնելով իր գրագետ ու բովանդակալից դասախոսություններով, նույն ճյուղերի և ներքին ախտաբանության դասախոսի պաշտոնն է ստացել:

Մ ա ն կ ա վ ա ր ժ ա կ ա ն գործունեությանը զուգահեռ գործնական աշխատանքում կատարել է անասնաբուժական գործի նորարարություններ՝ կենդանիների առողջապահությունն ու բժշկությունը հատուկ կայաններ ու հիվանդանոցներ տեղափոխելով:

Նրա անունն ամենուր հնչել է Չինվորական անասնաբուժական վարժարանի անվան կողքին:

Պարգևատրվել է բազմաթիվ պատվանշաններով:

Կ. Պոլսի կառավարությունը բացել է նոր՝ Զադա-

քային անասնաբուժական դպրոց և Մինաս բեյը հրավիրվել այդտեղ՝ համատեղությամբ դասախոսելու:

1903թ. եղել է Կ. Պոլսի երկու անասնաբուժական վարժարանների ընդհանուր ուսումնասպետը:

Մինչև 1906 թվականը, 30 տարի դասախոսել է, կրթել ու պատրաստել անասնաբույժներ Օսմանյան կայսրության ու Նրա բանակի համար:

Հասել էր կայմակամության աստիճանին և մոտ էր միրալայության, ապա փաշայության աստիճաններն ստանալուն, երբ բախտը երես թեքեց նրանից:

1906թ. Յըլդըզում տեղի ունեցած մահափորձի ուրբաթ օրը բժիշկը միանում է սելամլըքի հանդիսությանը ներկա ձիավոր գինվորների գնդին: Պայթյունի պահին իսկ, բժիշկը (անշուշտ՝ հայ լինելու համար), իբրև մեդսակից ձերբակալվում է:

1906-07թթ. անցկացրել է Յըլդըզի բանտում:

1907թ. դատավարության ավարտին անմեղ է ճանաչվել, սակայն աքսորվել է Դամասկոս:

1907-10թթ. մնացել է Դամասկոսի աքսորում:

1910թ. վերադարձել է Կ. Պոլիս և վերականգնվել իր նախկին պաշտոններում:

Սակայն աքսորի տարի-

ներից հոգնած, իր նկատմամբ ցուցաբերած զարշապեք ա պ եր ա խ տ ու թ յ ու ն ի ց զգված, իր պաշտոնավարությունը շարունակելու ի վիճակի չի եղել և անցել է հանգստի՝ իր խնդրանքով:

Հանդիսանում է անասնաբուժական բոլոր գիտությունների վերաբերյալ թուրքերենով առաջին գրքերը գրած ու հրատարակած մասնագետը: Այդ 14 գրքերով են երկար տարիներ դասավանդել անասնաբուժական վարժարանների դասախոսները, սովորել ուսանողները և առաջնորդվել պրակտիկ անասնաբույժները:

1917թ. Երզնկայում թուրքերի ձեռքով չարաչար նահատակվել է Նրա բժիշկ որդի Պերճ Մինասյանը (տե՛ս ստորև):

Իր որդեկորույս սրտի խորը վերքը սփոփելու համար գրել է 6 հատորից բաղկացած հայերեն գեղեցիկ մի գիրք՝ «Ազարակին անասնաբույժը», որը 1921թ. դրությամբ դեռևս անտիպ էր: Նաև այլ ձեռագիր գործեր է ունեցել:

1921թ. ապրիլի դրությամբ բնակվում էր Կ. Պոլսում:

Նրա մասին.

Թորգոմեան Վահրամ, Թուրք անասնաբուժական վարժարանին հայ դասա-

խօսները, Տօթթ. Մինաս Պեյ Ալետիսեան, «Դարման», Կ. Պոլիս, 1921, թ. 3-4:

ԱՐԱԴՅԱՆ ԳԱՍԴԱՐ

Ծնվել է 1883թ., Խարբերդի նահանգի կենտրոն Խարբերդ քաղաքում:

Դեղագործ է աշխատել: Սպանվել է 1915թ.՝ 32 տարեկանում:

Նրա մասին.

Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի նահանգ, Երևան, 2004:

ԱՐԱԴՅԱՆ ՀԱԿՈՐ

Ծնվել է Փոքր Ասիայի արևմուտքի Աֆիոն Գարահիսար քաղաքում:

Բժշկական կրթություն է ունեցել:

1907թ. դրությամբ Սիվրիհիսար քաղաքում բժիշկ է աշխատել:

1907թ. նոյեմբերին, ի թիվս 14 հայ մտավորականների, ձերբակալվել է Սիվրիհիսար քաղաքում:

Մեղադրվել է 1905թ. օգոստոսի 7-ին սելամլըքի ատեն Յըլդըզի մեջ ուրբաթ օրվա աղոթքի արարողության ժամանակ սուլթան Աբդուլ Համիդ II-ին սպանե-

լու մահափորձին մասնակցելու մեղսակցության համար:

Բանտարկվել է Սիվրիհիսարի քաղաքապետարանի սենյակներից մեկում:

Առավոտյան տեսել է, որ թաղապետարանի բոլոր սենյակները լցված են հայերով:

Այդ օրը բոլոր ձերբակալվածների տներում կատարվել է խուզարկություն:

Հետագայում պարզվել է, որ նրանց մատնիչները եղել են երկու հոգի. Զել Պողոսը (կեղծ բժիշկ Պողոս Թեսթիճյանը) և ասորահայ Հեքիմ Աբդալլահը:

Երեք օր հետո ձերբակալվածներին և երկու լրտեսներին շղթայակապ տեղափոխել են Անկարայի կենտրոնական բանտ:

Մեկ ու կես տարի բանտարկության ընթացքում բանտարկյալ հայերը բազմաթիվ հարցաքննությունների են ենթարկվել: Նրանց հայիոյել են, ծեծել, վրաները սառը ջուր լցրել, չարչարել և այլն:

1909թ. մայիսին յուրաքանչյուր բանտարկյալից 500-ական ոսկեդրամ վերցնելով, փաստաբանների օգնությամբ, Կ. Պոլսի պատրիարքարանի միջնորդությամբ բոլորը ազատ են արձակվել՝ Նյուքասթեն, Ֆիզիկապենս ու հոգեպենս քայ-

քայված վիճակում:

1926 թ. դրությամբ Կ. Պոլսի Բերա թաղամասի Սինե օպերայի դիմաց, Հաճի Պեքիր փողոցում գտնվող բուժարանում կատարել է միզածորանային հիվանդություններով հիվանդների մասնավոր ընդունելություն:

Նրա մասին.

1. Մասնավոր հայտարարություն, «Կավոզ», Կ. Պոլիս, 1926

2. Տեր Յովհաննեսեան Գրիգոր, Պատմագիրք Սիվրիհիսարի, 19...



ԱՐՇՈՒՅԱՆ (ԱՐՇԸՅԱՆ) ՍԱՐԳԻՍ

Ճնվել է 1872թ. օգոստոսին, Անկարայի Նահանգի Կեսարիայի գավառի Թալաս քաղաքում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, այնուհետև սովորել Կ. Պոլսում:

1897թ. ավարտել է Ֆրանսիայի Նանսի քաղաքի բժշկական համալսարանը և բժշկի վկայական ստացել:

1897թ. Կ. Պոլիս է վերադարձել:

Շատ արկածալից ու դժվար կյանք է ունեցել:

Կ. Պոլսում ենթարկվել է թուրքական ոստիկանության բռնություններին, ձերբակալվել ու բանտարկվել երկար ժամանակով:

Բանտից ազատվելուց հետո, երբ Նոր-Նոր սկսել է բժիշկ աշխատել, արտորվել է Կեսարիա: Ճանապարհին, Սև ծովի Սինոպ նավահանգստում փախել ու թաքնվել է ռուսական շոգենավում, սակայն նավապետը նրան հանձնել է թուրքական ոստիկանությանը:

Ֆրանսիական կառավարության միջնորդությամբ, Կեսարիայի արտորավայրից որոշ ժամանակ անց վերադարձվել է Կ. Պոլիս, որտեղից փախել է ու հաստատվել Փարիզում:

Օսմանյան սահմանադրության վերահաստատումից օգտվելով, 1908թ. սեպտեմբերին վերադարձել է Կ. Պոլիս:

Կ. Պոլսում մրցույթի մասնակցելով, Դամասկոսի նորաբաց թուրքական բժշկական վարժարանի մանրէաբանության և առողջապահության դասատու է նշանակվել:

1914թ. վարժարանի թուրք պաշտոնակիցների սադրանքով պաշտոնանկ է

արվել և Կ. Պոլիս վերադարձել:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել զինվորական հիվանդանոցներում:

Եղել է Կ. Պոլսի Հայ բժիշկներու միության անդամ:

1919թ. Հայաստանի Հանրապետության բանակին վիրաբուժական գործիքներ է նվիրել:

Այլևայլ թերթերում հրատարակված և անտիպ առողջապահական բնույթի հոդվածների հեղինակ է:

1922թ. վերջերին տեղափոխվել է Նեապոլ, ապա՝ Ֆրանսիա և հաստատվել Մարսել քաղաքում: Հասցեն՝ 2 Bd. Beaumont, Marseille, France:

Նրա մասին.

1. Ալյոյաճեան Արշակ., Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. հատոր, Գահիրէ, 1937:

2. Պոտոլրեան Մկրտիչ, Հայ հանրագիտակ, Պուքրէշ, 1938:

3. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ԱՐՄԵՐՈՒՆԻ ՆՇԱՆ

Բժիշկ, գրող, ազգային,

հասարակական գործիչ:

Իսկական ազգանունը եղել է Պլեոխանյան, սակայն հայրենի Վանը հիշեցնելու նպատակով փոխել են Արծրունիի:

Ծնվել է 1849թ., Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառի Ակն գավառակի Աբուլչեխ (Ապուլչեխ) ավանում վանեցու ընտանիքում:

Ավարտել է ծննդավայրի վարժարանի վեցամյա դասընթացը:

1867թ. մոր հետ տեղափոխվել է Կ. Պոլիս և վերցվել գինվորական բժիշկ հորեղբոր՝ Մինասի խնամքին:

1867-71թթ. սովորել է Կ. Պոլսի Կայսերական գինվորական բժշկական վարժարանում և ստացել դեղագործի, ապա նաև վիրաբույժի վկայականներ:

1871թ. արաբական ապստամբության ժամանակ օսմանյան բանակի կազմում, որպես գինվորական բժիշկ, ուղարկվել է Հիջազ և Եմեն:

1871-76թթ., ծառայության բերումով, հինգ տարի թափառել է արաբական անապատներում և դարմանել մալարիայով հիվանդ գինվորներին ու տեղացիներին:

Օսմանյան պետությունը գնահատել է Արաբիայում նրա ծառայությունը և նրան պարգևատրել «Մեջիդիե»-ի

Ա կարգի պատվանշանով և հարյուրապետի գինվորական աստիճանով:

1876թ. Կ. Պոլսում հրատարակել է Արաբիա կատարած իր ուղևորության մասին հայերեն գրած «Ուղևորութիւն դէպի Արաբիա» ուսումնասիրության թուրքերեն թարգմանությունը: Մեկ այլ աղբյուրում ասված է, որ գրքի բնագիրը եղել է թուրքերեն, իսկ 1911թ. թարգմանվել և հրատարակվել է նաև հայերեն:

1877-78թթ. Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ կրկին զորակոչվել է օսմանյան բանակ և, որպես գինվորական բժիշկ, Կարսի ռազմաճակատ ուղարկվել:

Կարսում օսմանյան բանակի պարտությունից հետո, հազարավոր թուրք գինվորների հետ գերի է ընկել քաղաքը գրաված ռուսական զորքին, տեղափոխվել Երևան, ապա՝ Թիֆլիս, ուր, որպես հմուտ բժիշկ և բարձրաստիճան գինվորական, արժանացել է Կովկասյան բանակի երկու բարձրաստիճան հայ հրամանատարների՝ գեներալներ Միքայել Լոռիս-Մելիքովի և Արշակ Տեր-Ղուկասյանի համակրանքին և շնորհներին: Լոռիս-Մելիքովը, որպես խորին հարգանքի նշան, նրան նվիրել է արծաթե շքադրամ և իր լուսանկարը:

Թիֆլիսում ծանոթացել է անվանի մշակութային գործիչ, «Մշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունու հետ, որի խնդրանքով պատերազմական հուշեր ու զանազան հոդվածներ է տպագրել «Մշակում»՝ «Պլեոխան» ծածկանունով:

Վերադառնալով ռուսական հսկողության տակ գտնվող Կարս, հրատարակել է Թրքահայաստանի ազատագրությանը նվիրված «Կարս Հայաստանի» (նման անունով պարբերական մատենագիտական որևէ ցուցակում կամ որևէ աղբյուրում չկա - խմբ.) եռօրյա հայրենաշունչ թերթը, որը, սակայն, 2-3 համար հրատարակվելուց հետո, քաղաքական նկատառումներով և բարեկամների խորհրդով ընդհատվել է, քանի որ կարող էր վնաս հասցնել Թուրքիայում բնակվող իր հարազատներին:

1880թ. հոկտեմբերի 16-ին, Կարսի Ազգային առաջնորդարանն ու կրթական մարմինները նրան շնորհել են «Գնահատական վկայագիր»՝ անձնվեր ծառայության համար:

1881թ. Կ. Պոլիս է վերադարձել և զանազան պաշտոններ վարել:

1881-88թթ. բնակվել է Սեբաստիայի նահանգի Սե-

բաստիայի գավառի Ակն գավառակի կենտրոն Ակն քաղաքում, ապա՝ Խարբերդի նահանգի Դերսիմի գավառի Չմշկածագ ավանում և քաղաքապետական դեղագործի ու վիրաբույժի պաշտոնները վարել: Այդ ընթացքում բազմիցս այցելել է Դերսիմ և իր համակրելի բնավորությամբ դարձել տեղի քուրդ ցեղապետերի սիրելին:

Կազմել է Հայաստանի ազատագրության համար ապստամբության ծրագիր, սակայն գտնելով, որ դա դժվարին և կանխահաս է, հրաժարվել է այդ մտքից:

1889թ. հունվարին Երզնկայում կազմված Հայ տնտեսական միության հրավերով մեկնել է Երզնկա՝ վիրաբույժ և դեղագործ աշխատելու:

1889թ. Երզնկայի օսմանյան իշխանությունը նրան ամբաստանել է իբրև ռուսական լրտես, որը 1877-78թթ. Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ իբր նպաստել է Կարս բերդաքաղաքի անկմանը, քանի որ Կարսի գինվորական հատակագիծը իբր ուղարկել է ռուսական բանակի գեներալ Արշակ Տեր-Ղուկասովին:

Տունը խուզարկելիս Անիում Կարսի առաջնորդի, Գամառ Զաթիպայի (Ռափայել Պատկանյան) և ուսուցիչ-

ների հետ լուսանկարված պատկերը և մի քանի նոր հեղինակած երգեր են հայտնաբերել:

1889թ. 5 տարվա տաժա-նակիր բանտարկության է դատապարտվել:

1894թ., Լիբիայի (Աֆրի-կայի հյուսիսում) Տրիպոլիս քաղաքն է աքսորվել:

1895թ. հունվարի 1-ին, ֆիզիկապես քայքայված ու հոգեպես ջլատված վիճա-կում մահացել է Տրիպոլիսի իտալական հիվանդանո-ցում 46 տարեկանում:

Թաղվել է Տրիպոլիսի հու-նական գերեզմանոցում:

Թողել է մի քանի թատե-րական և բժշկական գոր-ծեր, որոնցից մի քանիսը խարդախաբար հրատարա-կել են ուրիշները (Վ. Արծրու-նի, «Արեւ», 1932, հունվար):

Աշխատությունները.

1. Ուղեւորութիւն դէպի Արաբիա (թուրքերեն բնա-գիր), 1876:

2. Ուղեւորութիւն դէպի Արաբիա (հայերեն թարգմա-նություն), թերթոն «Աշխա-տանք» թերթում, Չմյուռնիա, 1911թ.:

Նրա մասին.

1. Պոտուրեան Մկրտիչ, Հայ հանրագիտակ, Պուրբէշ, 1940:

2. Պարսամեան Մկրտիչ, Ակն եւ ակնցիք, Փարիզ, 1952:

3. Կարոյեան Գասպար,

Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատ-գամները), Պոսթոն, 1957:

4. Ստեփանյան Գ., Կեն-սագրական բառա րան, հ. Ա., Երևան, 1973:

5. Յարման Արսեն, Հայե-րը օսմանյան առողջապա-հության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուր-քերեն), Ստամբուլ, 2001:

ԱՐՄԵՆԱԿ

Ծնվել է Բրուսա նահան-գի կենտրոն Բրուսա քաղա-քում:

Դեղագործական կրթու-թյուն է ունեցել և դեղագործ աշխատել:

1915թ. գնդակահարվել է Բրուսա քաղաքի մոտակա Ադըրնազ գյուղում:

Նրա մասին.

1. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորակա-նութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

2. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատ-րաստեց Գերսամ Ահարոնե-ան, Պէյրուզ, 1965:

ԱՐՄԵՆԱԿ ԷՖԵՆԴԻ

Բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել:

1914թ. Առաջին համաշ-խարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է

օսմանյան բանակ և զին-վորական բժիշկ ծառայել Երզնկայի 10-րդ գնդում՝ կապիտանի աստիճանով:

Սպանվել է 1915թ. ապրի-լի 11 (24)-ին, Երզնկայում:

Նրա մասին.

1. Ատաշ Ադնան, 20-րդ դարում նահատակված բժիշկները (թուրքերեն), Թուրքիա, 1997:

2. Յարման Արսեն, Հայե-րը օսմանյան առողջապա-հության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուր-քերեն), Ստամբուլ, 2001:



ԱՐՄԵՆԱԿՈՒՆԻ ԵՂԻԱ

Ծնվել է 1897թ., Ադանայի նա-հանգի Կոզանի գավառի Միս քաղաքում:

1912թ. ավարտել է Նախակր-թարանը:

1912-15թթ. սովորել է ամե-

րիկացի միսիոներների Տար-սունի Սեյնթ Պոլ քոլեջում:

1915թ. ուսումը կիսատ թող-նելով, ծնողների հետ աքսոր-վել է Սիրիա՝ Հալեպ, ապա Հոմս, ուր հոր հետ զբաղվել է զանազան առևտրական գործերով: Զաղաքի բրիտա-նական գրավումից հետո ծառայության է անցել բրի-տանական բանակում որպես թարգմանիչ: Այդ ընթացքում մեծ դեր է կատարել հայ կա-նանց և որբերին հավաքելու դժվարին գործում:

Որոշ ժամանակ եղել է Հոմ-սի որբանոցի ուսուցիչ, ապա՝ տնօրենը:

1919թ. մեկնել է Կիլիկիա և Տարսունի քոլեջում շարունա-կել իր ուսումնառությունը:

1921թ. ավարտելով ուսումը մեկնել է Բեյրութ:

1921-24թթ. սովորել է Բեյ-րութի Ամերիկյան համալսա-րանի ատամնաբուժական ֆակուլտետում, ուսանելու տարիներին գործուն մաս-նակցություն ունեցել Հայ ու-սանողական միության աշ-խատանքներին:

1924-25թթ. աշխատել է Կիպրոսի Լառնակա քաղա-քում:

1926թ. մեկնել է Հունաս-տան և շարունակել ատամ-նաբույժ աշխատել: Ծուլտով բարեխիղճ և հմուտ ատամ-նաբույժի համբավ է ձեռք բե-րել:

Քոքինիայում մասնակցել է

ազգային և հասարակական միջոցառումներին:

Գործուն աջակցություն է ցուցաբերել Միսաք Զէլէշեանին՝ «Միս-Մատեան» գիրքը կազմելու և հրատարակելու հարցում:

Նրա մասին.
Զէլէշեան Միսաք, Միս-Մատեան, Պէյրուք, 1949:

ԱՐՄԵՆԱՆ ԱՍԱՏՈՒՐ Ս.

Ծնվել է 1885թ. Ադանայի նահանգի Մարաշի գավառի Հաճընի գավառակում:

1909թ. ավարտել է դեղագործական դպրոցը:

Դեղագործ է աշխատել: 1910-24թթ. դեղատան վարիչ է աշխատել Կ. Պոլսի սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցում:

1915թ. ապրիլի 24-25-ի գիշերը Կ. Պոլսում ձերբակալված 235 անվանի հայ մտավորականների թվում է եղել նաև Ասատուր Արսենյանը:

Նրանց բանտարկել են Կ. Պոլսի կենտրոնական բանտում, ապա խումբ-խումբ ուղարկել Անատոլիայի խորքերն ու գազանաբար սպանել:

Անունը փորագրվել է Չանդըրըի բանտում հավաքված համրիչի 99 հատիկներից մեկի վրա:

Այլ տվյալներով՝ 1915թ. նահատակվել է Դեյր-Էլ-Չո-

րի կողմերում՝ 30 տարեկանում:

Այլ տվյալով՝ վերապրել է: 1930թ. վերամասնագիտանալով դարձել է ատամնաբույժ:

Նրա մասին.

1. Պալաքեան Գրիգորիս Ծ. վրդ., Հայ գողգորթան, Վիեննա, 1922:

2. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

3. Պալաքյան Գրիգորիս Ծ. վրդ., Հայ գողգորթան, Երևան, 1991:

4. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

5. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողք և վկայք խաչի, Երևան, 2002:

6. Ավագեան Կարինե, «Չանդըրըի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմույժը, «Հանդես Ամսօրեայ», 2008, հ. 1-12



ԱՐՄԵՆԱՆ ՀԱԿՈՐ

Դեղագործ:

Ծնվել է 1881թ., Բրուսայի նահանգի Նիկոմիդիայի գավառակի Օվաջըկ գյուղում:

Նախնական ուսումն ստացել է ծննդավայրի ազգային վարժարանում:

1904-07թթ. ուսանել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական համալսարանի դեղագործական բաժնում:

Սեփական դեղատուն է ունեցել Բրուսայի նահանգի Ադաբազար, ապա՝ Չմյուռնիա նահանգի կենտրոն Չմյուռնիա քաղաքներում:

1915թ. Մեծ Եղեռնի ժամանակ, մահացու վտանգներից ազատվելուց հետո, ընտանիքով փորձել է Մեսքենեից Հալեպ փախչել:

Հազար ու մի դժվարություններ կրելուց հետո օսմանյան բանակ է զորակոչվել:

Որպես զինվորական դեղագործ, հիսնապետի աստիճանով ուղարկվել է Երուսաղեմ, ուր տեղափոխել է ընտանիքի ողջ մնացած անդամներին:

1918թ. օսմանյան կառավարությունը նրան նշանակել է Բեթղեհեմ քաղաքի դեղագործ:

1918թ. բրիտանական

բանակը Պաղեստինը գրավելիս, Թուլ-Զերիմում գերի է ընկել: Տարագրվել է Եգիպտոս և վեց ամիս բանտարկված մնացել: Ազատվելուց հետո վերադարձել է Երուսաղեմ ընտանիքի մոտ:

1920թ. բրիտանական մանդատային կառավարությունը նրան նշանակել է Գազա քաղաքի դեղագործ:

1923թ. աշխատանքի է անցել Գազայի անգլիական C.M.S. հիվանդանոցի դեղատանը:

Եղել է բազմազգ քաղաքում հարգված ու սիրված մարդ և հմուտ մասնագետ:

1938թ. հասցեն՝ Agop Arsenian, Kaza (Palestine):

Նրա մասին.
Պոտուրեան Սկրտիչ, Հայ հանրագիտակ, Պոլքրեշ, 1938:

ԱՐՍԼԱՆԱՆ ԱՐՏԱՇ(ԵՍ) ՄԻՋԱՅԵԼԻ

Ծնվել է 1887թ., Խարբերդի նահանգի Խարբերդի գավառի Մեգիրե քաղաքում կաթոլիկ ծնողների բազմազավակ ընտանիքում:

Բժիշկներ Չարեհ Պողոս, Լևոն ու Հրանտ Արսլանյանների եղբայրն է:

Հայրը՝ փաստաբան Միքայել Արսլանյանը, եղել է Մեգիրեի բարեկեցիկ և ու-

սումնասեր ազգայիններից մեկը:

Ընտանիքի 7 որդիներից 5-ը բժիշկ է դարձել: Եթե հաշվենք նաև թոռներին, ապա գերդաստանում եղել է 12 բժիշկ: Դրա համար էլ համաքաղաքացիները նրանց կոչել են «Հեփիսի Տօքթօր Արսլանենը» («Բոլորը բժիշկ Արսլանյանները»):

Ավարտել է Բեյրութի Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Բժիշկ է աշխատել:

Կարինում բժավոր տիֆով վարակվելու և հիվանդանալու պատճառով արձակուրդ է վերցրել և մեկնել Հալեպ, եղբոր Չարեհի մոտ:

1915թ., ընդհանուր տեղահանության ընթացքում վայրագորեն սպանվել է եղբոր հետ միասին՝ 28 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկուրթեան տուճած զոհերը, ցուցակագրուճ վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

3. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

4. Խաչատրյան Լ., Բաբլումյան Ա., Յուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի նահանգ, Երևան, 2004:

ԱՐՍԼԱՆՅԱՆ ՉԱՐԵՀ ՊՈՂՈՍ ՄԻՋԱՅԵԼԻ

Ծնվել է Խարբերդի նահանգի Խարբերդի գավառի Մեզիրե քաղաքում կաթոլիկ ծնողների բազմազավակ ընտանիքում:

Բժիշկներ Արտաշես, Լևոն ու Հրանտ Արսլանյանների եղբայրն է:

Բժիշկ է աշխատել Հալեպում:

1915թ., ընդհանուր տեղահանության ընթացքում վայրագորեն սպանվել է եղբոր՝ Արտաշեսի հետ միասին:

Նրա մասին.

Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:



ԱՐՍԼԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ ՄԻՋԱՅԵԼԻ

Գրվել է նաև Ասլանյան: Բժշկին կոչել են նաև Լևոն Արսլան:

Ծնվել է 1867թ., Խարբերդի նահանգի Խարբերդի գավառի Մեզիրե քաղաքում կաթոլիկ ծնողների բազմազավակ ընտանիքում:

Բժիշկներ Չարեհ Պողոս, Արտաշես ու Հրանտ Արսլանյանների եղբայրն է:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի հայ կաթոլիկների ծխական դպրոցում, այնուհետև սովորել Մեզիրեի Սուլթանիե (պետական) երկրորդային վարժարանում:

1905թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Երկար տարիներ Տրապիզոնի թաղապետական բժիշկ է աշխատել և հայ, հույն ու թուրք բնակչության շրջանում մեծ հարգանք վայելել:

Ամուսնացած է եղել և 2 զավակ ունեցել՝ Հիլտա և Քայել:

1915թ. մայիսին ընտանիքի անդամների և եղբոր՝ Արտավազի Արսլանյանի հետ տեղահան է արվել:

Դարձել է Տրապիզոնի առողջապահական տնօրեն

բժիշկ Ալի Սայիբի սադրանքների զոհը: Այդ վայրբժշկին կոչել են նաև «Երեխաներ թունավորող»:

Այդ ընթացքում հիվանդացել է ժանտախտով ու ապաքինվել:

1915թ. հունիսին / հուլիսին, Կարինի գինվորական հրամանատարից հեռագիր է ստացել, թե գինվորական հիվանդանոցի բժիշկ է նշանակվել:

Մի քանի օրից եղբոր՝ Հրանտի և այլոց հետ իր վարձած կառքով ճամփա է ընկել դեպի Կարին: Գյումյուշխանե հասնելուն պես, օսմանյան բանակի գինվորները Ալի Սայիբի հրամանով նրան, Հրանտ եղբորը և մյուս ճամփորդներին մի ախոռ են տարել և սպանելու պատրաստվել: Բժիշկը խնդրել է իրեն սպանել մի գնդակով, սակայն թուրքերը 48 տարեկան Լևոնին ու եղբորը սրախողխող են արել:

Ականատես գինվորներից մեկը, ազգությամբ հույն, բժիշկ եղբայրներին գիշերը գաղտնիորեն տարել և թաղել է մի փոսում:

Նրա մասին.

1. Հայ բժշկուրթեան տուճած զոհերը, ցուցակագրուճ վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամ-

ները), Պոսթոն, 1957:

3. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուզ, 1965:

4. Սահակյան Լիլիկ, Ոճրագործները չխնայեցին նույնիսկ մարդու կյանքը փրկողներին, «Առողջապահություն», Երևան, 1965, թ. 4:

5. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

6. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

7. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

8. Խաչատրյան Լ., Բաբլումյան Ա., Յուշակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերողի



ԱՐՍԼԱՆՅԱՆ ՀՐԱՆ

ՄԻՔԱՅԵԼԻ

Ծնվել է 1886թ., Խարբերողի նահանգի Խարբերողի գավառի Մեգիրե քաղաքում՝ կաթոլիկ ճնողների բազմանդամ ընտանիքում:

Բժիշկներ Չարեհ Պողոս, Արտաշես ու Լևոն Արսլանյանների եղբայրն է:

Նախնական կրթությունն ստացել է Մեգիրեյի հայ կաթոլիկների ծխական դպրոցում:

1911թ. երկրորդային կրթությունն ստացել է Կաթոլիկ եկեղեցու կապուչին միաբանների քոլեջում:

1911թ. աշնանը, եղբոր՝ Ռուբենի հետ մեկնել է Բեյրութ և ընդունվել Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետը, որտեղ Ռուբենն արդեն մեկ տարի սովորում էր:

1914թ. ամռանը, երբ դեռ չէր սկսվել Առաջին համաշխարհային պատերազմը, այցելել էր Մեգիրե, տեսնելու ճնողներին, մինչդեռ Ռուբենը ավագ եղբոր՝ հալեպաբնակ բժիշկ Չարեհ Պողոս Արսլանյանի տանն էր մնացել:

1914թ. աշնանը զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժշկի օգնական ծառայելու ուղարկվել Կարինի ռազմաճակատը:

Բանակում վարակվել է հիվանդացել է ժանտախ-

տով:

Ապաքինման համար արձակուրդ է վերցրել և գնացել Տրապիզոնում բնակվող եղբոր՝ բժիշկ Լևոն Արսլանյանի մոտ:

1915թ. հունիսին/հուլիսին, եղբոր՝ Լևոնի հետ կառքով ուղևորվել է Կարին, որտեղ Լևոնը զինվորական հիվանդանոցի բժիշկ պիտի աշխատեր:

Գյումյուշխանե հասնելուն պես, օսմանյան բանակի զինվորները Տրապիզոնի առողջապահական տնօրեն, բժիշկ Ալի Սայիբի հրամանով՝ երկու եղբայրներին՝ 29 տարեկան Հրանտին, Լևոնին և մյուս ճամփորդներին մի ախոռ են տարել և սրախողխող արել:

Ականատես զինվորներից մեկը, որ ազգությամբ հույն էր, բժիշկ եղբայրներին գիշերը գաղտնիորեն տարել և թաղել է մի փոսում:


Նրա մասին.

1. Մեգալուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառոտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

3. Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Յուշակ Հայոց ցեղասպանության զո-

հերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերողի նահանգ, Երևան



ԱՐՍԼԱՆՅԱՆ ԱՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԵՐԿԱՅԻ

Բժշկապետ, ուսուցչապետ, զորավար, բանասեր, հասարակական-կրթական գործիչ, Ազգային կենտրոնական վարչության քաղաքական ժողովի բազմիցս ատենապետ:

Գրվել է նաև Ասլանյան կամ Ստեփան Եղիա:

Ծնվել է 1822թ. դեկտեմբերի 25-ին, Կ. Պոլսի Բերա թաղամասում՝ Եղիա և Վարդենի Արսլանյանների ընտանիքում:

Հայրը եղել է վանեցի և հանձնակատար ծեփագործ արհեստավոր աշխատել:

Ընտանիքում եղել են 4 եղբայր՝ Հակոբ, Հովհաննես, Հայրապետ, Ստեփան: Եղբայրներից Հայրապետը ևս եղել է զինվորական բժիշկ:

Նախնական կրթություն

ստացել է Կ. Պոլսի Բերա թաղամասի սբ. Էջմիածին ազգային դպրոցում / Գառնաուլա թաղի ծխական վարժարանում:

1838/39-41թթ. սովորել է Կ. Պոլսի ասիական կողմի Սկյուտար թաղամասի սբ. Երուսաղեմ ազգային գիշերօթիկ ճեմարանում, որտեղ կատարյալ յուրացրել է հին և նոր հայերենը, հայ մշակույթի պատմությունը:

1841-42թթ. սովորել է Կ. Պոլսի Սուլթանիե (պետական) լիցեյում:

1842-47թթ., օգտվելով Թանգիմարի ընծայած թույլտվությունից, սովորել է Կ. Պոլսի Կայսերական գինվորական բժշկական վարժարանում (այդ վարժարանի առաջին հայ շրջանավարտն է համարվում):

1847թ. վարժարանը գերազանց ավարտելուց հետո ստացել է բժշկի վկայական և հազարապետի (քոլ-ադասը) աստիճան:

1847թ. որպես լավագույն ուսանող, սուլթան Աբդուլ Մեջիդից արժանացել է պետական կրթաթոշակի և օսմանյան բանակի գինվորական համազգեստով ուղարկվել Ավստրիա՝ Վիեննայի համալսարանի բժշկական ֆակուլտետում և նրա կլինիկաներում վիրաբուժական մասնագիտություն ստանալու:

1848թ. քննությունները հանձնելուց և դոկտորական թեզ պաշտպանելուց հետո Վիեննայի համալսարանից դոկտորի վկայագիր է ստացել:

1848թ. վերադարձել է ծննդավայր, և լինելով վիրաբույժ (այլ ոչ թե վարակաբան), օգոստոսին նշանակվել է Կ. Պոլսի Բեյլերբեյի հիվանդանոցի բժշկապետ, որտեղ բուժվում էին խուլերայով հիվանդ թուրք գինվորները (Օսմանյան կայսրության ներքին օրենքներով որոշված էր, որ բժշկության բոլոր վտանգավոր բնագավառներում միայն հայ բժիշկները պետք է աշխատեին):

Այնուհետև նշանակվել է Սպարապետության (Սերասքեր կափուսու) հիվանդանոցի բժիշկ:

1849թ. վերջին ստացել է դեր-գնդապետի (կայմակամ) աստիճան, «բեյ» տիտղոս և նշանակվել Կ. Պոլսի Կայսերական գինվորական բժշկական վարժարանի վիրաբուժության օգնական դասախոս:

1849թ. նրա ջանքերով վերականգնվել է «Նարեկյան ընկերությունը»:

1849-50թթ. դասավանդել է «Առաջին օգնություն» առարկան:

1853թ. ամուսնացել է արքունի ճարտարապետ

Օհաննես (Հովհաննես) Սերվերյան ամիրայի դստեր հետ:

1857թ. Խասգյուղից տեղափոխվել է Բերա:

1857թ., բարեխիղճ ծառայության համար գնդապետի (միրալայ) աստիճանին է արժանացել:

1859թ. պրոֆեսորի կոչում է ստացել:

1857/58-70/72/79թթ. ծառայել է Կ. Պոլսի Կայսերական գինվորական բժշկական վարժարանի արտաքին ախտաբանության, տեսական և գործնական վիրաբուժության կարգավորյալ պրոֆեսոր (ամբիոնի վարիչ):

Այդ տարիներին պատրաստել է բազմաթիվ որակյալ բժիշկներ, որոնցից շատերը Օսմանյան կայսրության բժշկության երևելի դեմքերն են դարձել հետագայում:

1858թ. եղել է Ազգային գերագույն ժողովի (Ազգային կենտրոնական վարչության կամ Խառը ժողովին նախորդած մարմինը) ատենապետը:

1859-61թթ. եղել է Կ. Պոլսի Բերա թաղամասի 6-րդ բաժնի խորհրդի անդամ:

1860թ. աջակցել է Ազգային սահմանադրությունը պատրաստող Գրիգոր Աղաթոնին, Գրիգոր Օտյանին, Նահապետ Ռուսիյանին,

Սերվիչենին (Սերովբե Վիչենյան) և մյուսներին:

1863-64թթ. միաժամանակ եղել է հանրային կրթության տեսուչ:

1865-70թթ. դասավանդել է «Օպերատիվ վիրաբուժություն»:

1869թ. հիմնադրել է Կ. Պոլսի Սկյուտար թաղամասի բժշկական ընկերությունը՝ Բոսֆորի ասիական արհեստագործության մասնակցությամբ:

1870թ. արժանացել է փառայի գինվորական աստիճանին:

1870-80թթ. եղել է Սպարապետության բարձրագույն խորհրդի բժշկական և առողջապահական մարմնի անդամ և ատենապետ:

1871-72թթ. դասավանդել է «Ֆիզիոլոգիա» առարկան:

1875-76թթ. Թուրքիայի եվրոպական մասի՝ Ռումելիի ընդհանուր առողջապահության տեսուչ է նշանակվել:

1875-80թթ. եղել է Ազգային կենտրոնական վարչության (Խառը ժողովի) ատենապետը:

1877-78թթ. Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ օսմանյան բանակում ծառայել է գինվորական բժիշկ Ավստրիայում:

1877թ. պետության հրամանով կայսերական բանակի համար բժիշկներ ընտրե-

լու նպատակով ճամփորդել է Եվրոպայում:

1878թ. գտնվել է Թուրքիայի Եվրոպական մասի Ադրիանապոլիս (Էդիրնե) քաղաքում որպես Սաֆֆետ փաշայի բուժական գծով տեղակալ:

1878թ., երբ ավարտվել է Ռուս-թուրքական պատերազմը, մեծ դեր է կատարել հայերի ցավալի վիճակը Ռուսաստանի պետության Ռուսադրությանը հրավիրելու և հայտնի 16-րդ հողվածը Այա-Ստեֆանոյի դաշնագրի մեջ դնել տալու համար:

Բժշկական բազմաթիվ հոդվածների հեղինակ է:

Ըստ բժիշկ-պատմաբան Վահրամ Թորգոմյանի՝ Նրա անտիպ հուշերը կորել են տարիների թոհուրթոհում:

Իր հարգված և բարձր դիրք ունենալու շնորհիվ ունեցել է նաև նախանձողներ ու թշնամիներ բարձրաստիճան գինվորականների շրջանում:

1879թ. սրբոց Հակոբյանց վանքի վարչական և հաշվական գործերի լիազոր քննչի հանգամանքով մեկնել է Երուսաղեմ: Իր քննությունների տեղեկագիրը ներկայացրել է Կ. Պոլսի Ազգային կենտրոնական վարչության և Նրա շնորհակալությանն արժանացել:

1879թ., զգալով իր շուրջը Կ. Պոլսում խտացող զագ-

րելի ու վտանգավոր մթնոլորտը, որ առաջացել էր թուրք պաշտոնակիցների «շնորհիվ», Ստեփան փաշա Արսլանյանը գինվորական ասպարեզից ինքնակամ հրաժարվել է, գինվորական բժշկական վարժարանից դուրս եկել և թոշակի անցել:

Այդ ամենից հույժ վիրավորված, կամավոր կամ բուժման նպատակով մեկնել է Եգիպտոս և որոշ ժամանակ ապրել Կահիրեում, որտեղ շարունակել է զբաղվել բժշկությամբ:

1884թ. վերադարձել է Կ. Պոլիս, սակայն կարճ ժամանակ հետո Ֆրանսիա է մեկնել:

1884-89թթ. Կ. Պոլսից բացակայելու ընթացքում՝ Նրան ամբաստանել են իբրև «գյավուր», օսմանյան գահի դավաճան, թուրք գինվորական համազգեստին անարժան և այլն:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ը, հավատալով զրպարտանքներին, շնորհագրել է վաստակաշատ բժիշկ պրոֆեսորին:

1889թ. մի ականավոր հայի՝ Արթին փաշա Տատյանի բարեխոսության շնորհիվ սուլթանը թույլ է տվել, որ բժիշկը վերադառնա Կ. Պոլիս, որից հետո վերադարձել և բնակվել է Կ. Պոլսի Կուզգունջուկ թաղամասում:

1891թ. հրաժարվել է

Ազգային կենտրոնական վարչության Զաղաքական ժողովի անդամությունից:

1897թ. վերջերին կարողացել էր վերականգնել նաև իր գինվորական աստիճանին վայել իրավունքները:

Հետագա տարիները ապրել է Նյութանի դժվարությունների ու աղքատության մեջ:

Պրոֆեսորը մշտապես գտնվել է Կ. Պոլսի հայ կյանքի հորձանուտում: Աջակցել է հայկական դպրոցների կրթական վերելքին, զբաղվել եկեղեցանվեր, կրթասիրական բարեգործական գործունեությամբ:

Նրա ջանքերով է կառուցվել Կ. Պոլսի Բանկայթիի հայոց գերեզմանատան սբ. Լուսավորիչ եկեղեցին:

Իր պահպանողական հայացքների համար Նրան խստորեն քննադատել է Հակոբ Պարոնյանը, Նրան ընդգրկելով իր «Ազգային ջոջերի» մեջ:

Պարզևատրվել է արծաթյա և ոսկե մեդալներով, «Օսմանիե» և «Մեջիդիե», ինչպես նաև օտար պետությունների պատվանշաններով:

Մահացել է 1901թ. նոյեմբերի 17-ին, Կ. Պոլսում 79 տարեկանում:

Թաղվել է Շիշլիի ազգային գերեզմանոցում:

Բժիշկ Վահրամ Թորգո-

մյանը պատմել է, որ Ստեփան Արսլանյանի անտիպ շատ արժեքավոր հուշերը մի հայ ընտանիք իրենից վերցրել է պատճենելու նպատակով և չի վերադարձրել:

Աշխատությունը.

Նկարագիր Ս. Փրկչեան Հիւանդանոցի, Կ. Պոլիս, 1860:

Նրա մասին.

1. Ատիլ Գ. եւ ուրիշներ, Ազգային գերեզմանատուն հայոց. Շիշլի, Կ. Պոլիս, 1922:

2. Պոտուրեան Սկրտիչ, Հայ հանրագիտակ, Պուքրեշ, 1938:

3. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառոտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

4. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

5. Ստեփանյան Գառնիկ, Կենսագրական բառարան, հ. Ա, Ե., 1973:

6. Օտեան Երուանդ, Մեր երեսփոխանները, մեր Ազգային ժողովը, Երեւան, 1999:

7. Վարդանյան Ս., Հայաստանի բժշկության պատմություն, Ե., 2000:

8. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուր-

քերեն), Ստամբուլ, 2001:

9. Փամուքջյան Գևորգ, Հայերը իրենց կենսագրականներով (թուրքերեն), Ստամբուլ, 2003:

ԱՅԱՐՑԱԼ ԱՎԵՏԻՄ

Ծնվել է մոտ 1880թ.:

Եղել է դիպլոմավոր բժիշկ:

Ընտանիքով ապրել է Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառի Կյուրին գավառակի կենտրոն Կյուրին քաղաքում և բժիշկ աշխատել:

Բուժել է հայերին, թուրքերին, քրդերին ու չերքեզներին՝ առանց ազգային ու կրոնական խտրականության:

1908թ. որդին՝ Մեսիա Աֆարյանը ծնվել է Կյուրի-նում:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Ավետիսը գորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել:

1915թ. անհետ կորել է մոտ 35 տարեկանում:

1915թ. թուրքերը Կյուրի-նի ողջ բնակչությանը, այդ թվում բժշկի ընտանիքին, քշել են Դեյր-Էլ-Զորի անապատները: Երիտասարդներին նախօրոք հավաքել են բանակում ծառայելու պատրվակով, իսկ կանանց

ու երեխաներին տարագրել Շեդդադեի քարանձավները ու զազանաբար սպանել: Որդին՝ Մեսիան հրաշքով փրկվել է և ապաստանել մի արաբի ընտանիքում: Մեսիային գտել է բարերար Փռնակ Շիշկյանը և տեղափոխել հայկական որբանոց, որտեղ գրաճանաչ է դարձել: Հետագայում մշտապես կարդացել է տեղական թերթերը հուսալով, թե կարող է որևէ տեղեկություն ստանալ իր հարազատների մասին: Ապրել է Սիրիայի Թել Բրաք հայկական գյուղում, որտեղ ամուսնացել է այնթապցի Հերմինեի հետ և ունեցել 5 զավակ: 1948թ. ընտանիքով հայրենադարձվել է Խորհրդային Հայաստան ու բնակություն հաստատել Երևանում, փողոցներ ասֆալտապատող բանվոր է աշխատել: Նա այլևս որևէ բան չի իմացել իր բժիշկ հոր և մյուս հարազատների մասին:

Նրա մասին.

Ճղըյան Հակոբ, Սովետրում մնացած կյանք, Երևան



ԲԱԲԱԼՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ԱՂԱՍԻ

Բժիշկ, ՀՅԴ անդամ, հասարակական-քաղաքական գործիչ, հրատարակիչ, Հայաստանի առաջին և երկրորդ խորհրդարանների անդամ:

Ծնվել է 1886/87թ. նոյեմբերի 17-ին, Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում:

Սովորել է Շուշիի ռուսական ռեալական դպրոցում:

Պատանեկան տարիքից մասնակցել է ՀՅԴ աշակերտական խմբերին: Վաղ երիտասարդ տարիքում անդամակցել է ՀՅԴ Շուշիի կոմիտեին, ապա՝ Ղարաբաղի կենտրոնական կոմիտեին:

Հայ-թաթարական կռիվների ժամանակ գործուն մասնակցություն է ունեցել Ղարաբաղի ինքնապաշտպանության ճակատում:

1906-7թթ. Բաքվում գործակատար է աշխատել նավթարդյունաբերական մի ընկերությունում:

1907-12թթ. սովորել է Շվեյցարիայի Ժնև քաղաքի համալսարանի բժշկական ֆակուլտետում և բժշկության դոկտորի աստիճան ստացել:

Ժնևում ևս շարունակել է կուսակցական եռանդուն գործունեությունը, եղել «Ռուսանոց» ամսագրի խմբագրական կազմի անդամ և

աշխատակցել ՀՅԴ օրգան «Դրօշակին»:

1912թ. վերադարձել է Շուշի, ապա մեկնել Սանկտ Պետերբուրգ և Օբոլխովի հիվանդանոցում բժիշկ է աշխատել:

Միաժամանակ պատրաստվել է պետական քննություն հանձնելու՝ Ռուսաստանում բժշկությամբ զբաղվելու թույլտվություն ստանալու համար:

1913թ. օգոստոսին, որպես ՀՅԴ Ռուսաստանի ուսանողական միությունների խորհրդից ընտրված պատվիրակ, մասնակցել է Կարի-նում ՀՅԴ 7-րդ ընդհանուր ժողովին:

1914թ. տեղափոխվել է Խարկով և Տրուդովսկու հիվանդանոցում աշխատել:

Մասնակցել է պետական քննություններին և ստացել վկայական՝ բժշկական ազատ գործունեությամբ զբաղվելու համար:

1915թ., երբ ընթանում էր Առաջին համաշխարհային պատերազմը, թողնելով Խարկովը, մտել է Վարդան Մեհրաբյանի (Խանասորի Վարդան) հրամանատարած հայ կամավորական զնդի մեջ, եղել դրա բժշկապետը և զնդի հետ միասին հասել Վան:

1915թ. մայիսի 7-ին Վանի ազատագրելուց հետո այդտեղ հիվանդանոցներ է

կազմակերպել: Համագործակցել է Վանի ժամանակավոր կառավարության հետ և նշանակվել ժամանակավոր կառավարության առողջապահության բաժնի պետ ու քաղաքապետության անդամ:

Վանի նահանգի օրերին, նրա ջանքերի շնորհիվ, հիվանդանոցներում բուժվող վիրավոր և հիվանդ հայ զինվորները Իգդիր են տեղափոխվել: Այս տարիանումը հաջողությամբ կազմակերպելու և իրագործելու համար պարգևատրվել է ռուսական կառավարության Գեորգիևյան խաչի շքանշանով և մեդալով:

Կարճ ժամանակ էջմիածնում զբաղվել է գաղթականների խնամատարության գործով:

1916թ. ուղարկվել է Վան, այնտեղ վերադարձած գաղթականների խնամատարությունը կազմակերպելու առաքելությամբ:

Այնուհետև մեկնել է Թիֆլիս, երբ սկսվել է ռուսական բանակի նահանջը Կովկասյան ռազմաճակատից:

1917-20թթ. Թիֆլիսում հրատարակել է «Աշխատաւոր» օրաթերթը:

1917թ. Թիֆլիսում ընտրվել է Հայոց ազգային խորհրդի անդամ, «Համառուսական քաղաքների միություն» կազմակերպության մեջ կա-

րևոր պարտականություններ կատարել:

Անդրկովկասյան Սեյմի կազմավորումից հետո մասնակցել է ընտրապայքարին՝ որպես Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ:

1918թ. ամռանը, Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո ՀՀ խորհրդարանի անդամ է ընտրվել:

1918թ. գնացել է Կ. Պոլիս՝ միանալու Ավետիս Ահարոնյանի պատվիրակությանը, որպես ՀՀ կառավարության խորհրդական:

1919թ. սեպտեմբերին մասնակցել է Երևանում ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովին:

1919թ. հոկտեմբերի 31-ից մինչև 1920թ. մայիսի 5-ը եղել է ՀՀ հանրային խնամատարության և աշխատանքի, ապա՝ հանրային խնամատարության և վերաշինության նախարար, մայիսի 5-ից հոկտեմբերի 30-ը եղել է այդ գերատեսչության նախարարի պաշտոնակատար:

1920թ. մայիսին Ղարաքիլիսայում մասնակցել է բուլշևիկյան ապստամբության ճնշմանը:

1920թ. սեպտեմբերին սկսված թուրք-հայկական պատերազմին, ՀՀ կառավարության որոշումով, Սիմոն Վրացյանի հետ ուղարկվել է

Կարս-Սարիղամիշի ռազմաճակատ՝ կառավարության լիազոր ներկայացուցիչի իրավունքներով:

1920թ. հոկտեմբերի 30-ին Կարսի անկման ժամանակ թուրքերի ձեռքը գերի է ընկել:

1920-21թթ. արգելափակվել է Կարսի, ապա Կարինի բանտերում:

1921թ. հոկտեմբերին գերությունից ազատվելուց հետո անցել է Թավրիզ, քանի որ Հայաստանն արդեն խորհրդայնացվել էր: Բժշկի կինն ու երեխան հետագայում Թավրիզ են տեղափոխվել:

1924թ. տեղափոխվել է 2ամջան:

1928թ. ընտանիքով տեղափոխվել է Թեհրան և Պարսկաստանի մայրաքաղաքում հաստատվել:

1928-38թթ. բաժանմունքի վարիչ է աշխատել Թեհրանի «Փահլավի» զինվորական հիվանդանոցում:

1931թ. և 1939թ. բժիշկը ծանր ողբերգություններ է ապրել կորցնելով զավակներին՝ Ռենոյին և Վիգենին: Իր ծանր վիշտը փարատելու համար ամբողջությամբ նվիրվել է հանրային և կուսակցական գործերին:

1943թ. սեպտեմբերին խորհրդային զորքերի Իրան մուտքից հետո ձերբակալվել է խորհրդայինների կողմից:

1943-45թթ. անցկացրել է բանտում:

1945թ. հունիսի 4-ին ազատվել է բանտից:

1945թ. և հետագա տարիներին ընտրվել է Թեհրանի գործակալական ժողովի անդամ, ապա՝ Եկեղեցական վարչության ատենապետ, ապա Թեհրանի թեմի Պատգամավորական ժողովի անդամ և Թեմական խորհրդի փոխնախագահ, ապա՝ Նախագահ: Այնուհետև Հայոց ազգային խորհրդի նախագահ է ընտրվել:

Երկու անգամ մասնակցել է ՀՅԴ ընդհանուր ժողովներին:

1959թ. Կահիրեում հրատարակվել է նրա հուշերի գիրքը:

Նրա հոդվածները տպագրվել են Բեյրութի «Նաիրի» շաբաթաթերթում:

Մահացել է 1959թ. օգոստոսի 1-ին, Թեհրանում, սրտի հիվանդությունից, 73 տարեկանում:

Աշխատությունները.

1. Հուշերի գիրք, Գահիրե, 1959:

2. Կարսի անկումը, «Նաիրի» շաբաթաթերթ, Պեյրուզ, ժե տարվա (1968թ.- Հ. Մ.) 45-50 միացյալ համարների փոխարեն լույս տեսած բացառիկ համար:

3. Հայաստանի անկախության պատմությունը եւ այլ յիշատակներ, Գլենդեյ, 1997:

Նրա մասին.

1. Պոստուրյան Սկրտիչ, Հայ հանրագիտակ, գիրք Բ. Պուքրեշ, 1939:

2. Աւօ, Յեղափոխական Ալյոմ, Հալէպ, Գ. շարք, 1960, թ. 2 (26):

3. Գեորգեան Կարօ, Դոկտ. Արտաշէս Բաբայեան, Ամենուն տարեգիրքը, Ե. տարրի, 1960, Պէյրուս, 1961:

4. Վրացյան Սիմոն, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:

5. Իշխանյան Եղիշե, Լեռնային Ղարաբաղ, 1917-1920, Երևան, 1999:

6. Յուշամատենան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ալբոմ-ատլաս, Բ. հատոր, Գոյամարտ, 1914-1925, Լոս Անճելըս, 2001:

7. Ով ով է, Հայեր. Կենսագրական հանրագիտարան, հ. 1, Երևան, 2005:

ԲԱՄԼՔՅԱՆ (ՊԱՄԼՔՅԱՆ), ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (ԱՐԹԻՆ) ԷՖԵՆԴԻ

Ծնվել է 1878թ., Հալէպում / Հալէպի Նահանգի Այնթապի գավառի Նույնանուն գավառակի կենտրոն Այնթապ քաղաքում:

1902թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Եղել է ՀՅԴ անդամ:

Առաջին համաշխարհային պատերազմի (1914-1918)

ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և Սեբաստիայի թիվ 1 հիվանդանոցում (հոսպիտալում) զինվորական բժիշկ է ծառայել՝ կապիտանի աստիճանով:

1917թ. հուլիսի 12/13-ին (կամ 1918 թ. հունիսի 12) սպանվել է կամ ժանտախտից մահացել Սեբաստիայում 39 / 40 տարեկանում:

Գրանցված է թուրք հեղինակ Ատաշ Ադնանի՝ 20-րդ դարի զոհված առողջապահության ոլորտում ծառայած օսմանցի սպաների ցուցակում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուճած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Ատաշ Ադնան, 20-րդ դարի Նահատակ եղած բժիշկները (թուրքերեն), Թուրքիա, 1997:

3. Յուշամատենան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ալբոմ-ատլաս, Բ. հատոր, Գոյամարտ, 1914-1925, Լոս Անճելըս, 2001:

4. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ԲԱՄԻՉԻՆՅԱՆ ՄԻՍԱԲ ԿԱՐՈՑԻ

Բախչինէնց Կարոյի ավագ որդին ունեցել է դեղագործական կրթություն:

1919թ. Կարսում դեղագործ է աշխատել:

Ռուս կին և երեխաներ է ունեցել:

Թուրքերը 1920թ. հոկտեմբերին 30-ին Կարսը գրավելուց հետո սկսել են հայ բնակչության զանգվածային կոտորածն ու կողոպուտը:

Այդ օրերին Կարսում սուկայի դէպքեր են կատարվել: Քեմալական սպաները, զինվորները, թուրք և քուրդ բնակչությունը անհավատալի գազանություններ են կատարել: Շատ ընտանիքների ամբողջությամբ մորթել են, շատերն էլ խոշտանգումներից փրկելու համար իրենք են սպանել կամ մեռցրել իրենց երեխաներին ու կանանց, վերջում էլ՝ ինքնասպան եղել:

Աղետի օրը թուրք ասկյարը մտել է Նրա տունը և երեխաների աչքի առաջ հարձակվել կնոջ վրա՝ Նրան բռնաբարելու համար: Տեսնելով այդ և չկարողանալով տանել խայտառակությունը, Միսաքը սպանել է գազանին: Սակայն վախենալով, որ Նոր եկած ասկյարները տանջամահ անելով կմորթեն իր ընտանիքի անդամներին, բոլորին և ինքն իրեն բարձր դոզայով մորֆին է սրսկել: Բայց տես-

նելով, որ դեղի ներգործությունն ուշանում է, կտրել է բոլորի և իր արյունատար երակները...

Նրա մասին.

1. Ալեքսանդրյան Արտաշէս, Կարս. 1920-21, Երևան, 1986:

2. Ալեքսանդրյան Արտաշէս, Մղձավանջ, Երևան, 2001:

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԻՍԱԲ

Ծնվել է 1870թ., Կարինի Նահանգի Երզնկայի գավառի կենտրոն Երզնկա քաղաքում / Բաղդադում:

Ավարտել է Երզնկայի ազգային վարժարանը և Կարինի Սանասարյան վարժարանը:

1910թ. դեկտեմբերի 23-ին ավարտել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1910թ. վերադարձել է Երզնկա և բժիշկ աշխատել:

1914թ. Առաջին աշխարհամարտի սկզբին զորակոչվել է օսմանյան բանակ և Կարինի հոսպիտալում զինվորական բժիշկ ծառայել:

1915թ. Կարինում ձերբակալվել է և բանտարկվել:

Այնուհետև Կարինից տեղահանված հայերի քարավանի հետ տարագրվել է դէպի Երզնկա և ճանապարհ-

հին սպանվել՝ 45 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

3. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուս, 1965:

4. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

**ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԲԱՂԴԱՍԱՐ**

Ծնվել է 1874թ., Կարինի նահանգի Երզնկայի գավառի կենտրոն Երզնկա քաղաքում:

Բժշկական կրթություն է ունեցել և Կարինում բժիշկ աշխատել:

Սպանվել է 1915թ., Կարինից դուրս՝ 41 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուս, 1965:

ան, Պէյրուս, 1965:

3. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

**ԲԱՍԲՈՒԹՃՅԱՆ
ԱՐՄԵՆԱԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ**

Ծնվել է Բրուսայի նահանգի Նիկոմիդիայի գավառակի կենտրոն Նիկոմիդիա քաղաքում:

1914թ. Առաջին աշխարհամարտի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և Սեբաստիայի զինվորական հիվանդանոցում զինվորական բժիշկ ծառայել:

Մահացել է 1915թ. փետրվարի 18-ին, Սեբաստիայում, ժանտախտից:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:



ԲԱՈՒԼՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ

Զինվորական բժիշկ, բէյ: Գրվել է նաև Բառլատի բէյ, Փառլադայան, Փրոնլանդայան Սկրտիչ:

Ծնվել է 1823թ., Կ. Պոլսում արհեստավոր Գրիգորի ընտանիքում:

Իսկական ազգանունը եղել է Բուլանթիյան (Բրիլիանոյան, Ադամանոյան):

Նախնական կրթություն ստացել է թաղային վարժարանում:

1839թ. միջնակարգ կրթությունն ավարտել է Վենետիկում և Նոյն տարին վերադարձել ծննդավայր:

1841-49թթ. սովորել է Կ. Պոլսի Կալաթա թաղամասի զինվորական բժշկական վարժարանում և ավարտել դեր-հազարապետ բժիշկ Սկրտիչ Գրիգոր Էֆենդի անունով:

Հանդիսանում է Կ. Պոլսի Կայսերական զինվորական բժշկական վարժարանի առաջին պսակավորներից մեկը՝ Բարունակ Ֆերուհիանի, Ստեփան Արսլանյանի, Հակոբ Հովհաննեսյանի և Գաբրիել Սևյանի հետ:

Ամուսնացած է եղել Հովհաննես Գանթարյանի դուստր Սուրբիկի հետ: Զավակ չեն ունեցել:

1849թ. զինվորական բժիշկ է ծառայել Կ. Պոլսի զինվորա-

կան հիվանդանոցում կապիտանի աստիճանով:

Համարվել է օսմանյան արքունիքի պատվավոր բժիշկներից մեկը:

Հետագայում ծառայել է գավառներում գտնվող զինվորական հիվանդանոցներում:

1864թ. ստացել է կայմակամի (փոխգնդապետի) զինվորական աստիճան:

1864թ. նշանակվել է Օսմանյան կայսրության Բաղդադի կայազորի կայմակամ (պարետ):

1864-73թթ. եղել է Օսմանյան կայսրության Բաղդադի զորագնդի զինվորական հիվանդանոցի բժշկապետը:

1873թ. ծանրորեն հիվանդացել է և ստիպված է եղել Կ. Պոլիս վերադառնալ:

Մահացել է 1873թ., Բաղդադից Կ. Պոլիս գալու ճանապարհին՝ Սծբին (Նիսիբին) քաղաքում, հիվանդությունից՝ 50 տարեկանում:

Նրա մասին.

1. Մեզպուրեան Ա., Հայ եւ ծա-գումով հայ բժիշկներ, Իսթանպուլ, 1950:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունն Սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:



ԲԱՍՄԱՑՅԱՆ ԿԱՐԱԴԵՏ Ժ.

Դեղագործ, բժշկության պատմաբան, բառարանագիր:

Ծնվել է 1864թ., Կ. Պոլսում: Գրվել է նաև Պասմաճեան: Ավարտել է Կ. Պոլսի դեղագործական ուսումնարանն ու Փարիզի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը:

Միաժամանակ զբաղվել է արևելյան ժողովուրդների լեզուների, պատմության և բանասիրության ուսումնասիրությամբ:

Ճամփորդել է Արևելքի երկրներում և ուսումնասիրել այդ երկրների ժողովուրդների լեզուներն ու սովորությունները:

Վերադարձել է Կ. Պոլիս և ցանկացել այնտեղ հաստատվել:

Կ. Պոլսում քաղաքական շարժառիթով ձերբակալվել է և բանտարկվել: Որոշ ժամանակ անց ազատ արձակվելով տեղափոխվել է Փարիզ և վերջնականապես այնտեղ հաստատվել:

1899-1907թթ. Փարիզում հրատարակել է «Բանասեր»

պատմագիտական, հնախոսական և գրականագիտական հանդեսը, որի էջերում հայ բժշկության և Հայաստանի պատմության վերաբերյալ հոդվածներ է տպագրել:

Ուսումնասիրել է Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպետը» և կատարել նրա գլուխների լատիներեն ու ֆրանսերեն թարգմանությունները:

1926թ. ձեռնարկել և հիմնականում անձնական միջոցներով հրատարակել է Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպետ»-ի բնագիրը:

Լինելով դեղագործ և բանասեր, մեծ գործ է կատարել դեղամիջոցների և հիվանդությունների արաբական և հայկական անվանումները վերծանելու ու լատիներենի և ֆրանսերենի թարգմանելու հարցում:

Անգլահատելի դեր է կատարել եվրոպական պետական և մասնավոր գրադարաններում պահվող հայկական բժշկական ձեռագրերի նկարագրության գործում:

Առաջին անգամ մեկ գրքով տվել է հայ դրամագիտության պատմության ուրվագիծը:

Հեղինակ է հայ բժշկության պատմության հարցերին վերաբերող բազմաթիվ

հոդվածների, որոնք հրատարակվել են ֆրանսիական պարբերականներում:

Զբաղվել է նաև հայկական բժշկական եզրաբանության հարցերով:

Եղել է Փարիզի Հայ բժիշկների ընկերության անդամ, Ֆրանսիական բժշկա-պատմաբանների ընկերության ցլյանս անդամ:

Պարգևատրվել է Ֆրանսիայի հանրային կրթության գործչի ոսկե պատվանշանով:

Մահացել է 1942թ., Փարիզում:

Աշխատությունները.

1. Լեւոն Ե. Լուսինեան վերջին թագաւոր հայոց, Փարիզ, 1908:

2. Իսկական պատմութիւն հայոց, մաս 1, 2, Կ. Պոլիս, 1914, 1927:

3. Առձեռն բառարան հայերէն աշխարհիկ լեզուէ ֆրանսերէն (համահեղ.), 1915: Ընդգրկում է 42 000 բառահոդված:

4. Հայերէն արձանագրութիւնք Անույ , Բագնայրի եւ Մարմաշինու (ֆրանս. թարգմ. հանդերձ), Փարիզ, 1931:

5. Հայկական ընդհանուր դրամագիտութիւն եւ Հայաստանի վերաբերեալ դրամներ, 1936:

Նրա մասին.

1. Վարդանյան Ստեյլա, Հայաստանի բժշկության

պատմություն, Երևան, 2000:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

3. Ով ով է: Հայեր: Կենսագրական հանրագիտարան, հ. 1, Երևան, 2005:



ԲԱՐԵՉԱՆՅԱՆ (ԲԱՉԱՆՅԱՆ) ՍՄԲԱՏ Գ.

Ծնվել է 1880-ական թվականներին, Հալեպի Նահանգի Մարաշի գավառի կենտրոն Մարաշ քաղաքում:

Նախնական կրթությունն ստացել է Մարաշի սբ. Ստեփանոս Նախակրթարանում, միջնակարգը՝ Նույն քաղաքի Ազգային Կեդրոնական վարժարանում և ամերիկացի միսիոներների «Ակադեմի» (Academy) բարձրագույն վարժարանում:

1899թ. ավարտել է ամերիկացի միսիոներների Տարսոնի Սեյնթ Պոլ քոլեջը:

1900թ. մեկնել է ԱՄՆ:
1908թ. ավարտել է Յեյքի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1911թ. վերադարձել է Մարաշ և բժիշկ աշխատել: Եղել է եռանդուն ազգային-հասարակական գործիչ:

1913թ. Ադանայում ամուսնացել է օրիորդ Սիրվարդ Մ. Ճըռյանի հետ:

1914թ., ԱՄՆ քաղաքացի լինելով հանդերձ, իր կամքին հակառակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել:

Ծառայել է Դարդանեյի, Գալիցիայի, Պաղեստինի ռազմաճակատներում:

Պատերազմի ընթացքում անգլիացիների ձեռքը գերի է ընկել և Անգլո-Եգիպտական հիվանդանոց ուղարկվել՝ բժիշկ ծառայելու:

1919թ. բրիտանական գրավման բանակի ընդհանուր հրամանատար գեներալ Ալենբիի հրամանով մեկնել է Կիլիկիա և բժշկական ու ազգային գործունեություն ծավալել:

1921թ., երբ ֆրանսիացիները լքել են Կիլիկիան, բժիշկն իր ընտանիքով վերադարձել է ԱՄՆ:

1930թ. հաստատվել է ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգի Ուստր քաղաքում:

Եղել է Ամերիկյան բժշկական ընկերության, Մասաչուսեթս նահանգի բժշկական

ընկերության և հնչական կուսակցության անդամ:

Գրիգոր Գալուստյանի «Մարաշ» գրքի հրապարակությանն աջակցել է, տալով արժեքավոր տեղեկություններ հնչական կուսակցության մասին:

Նրա մասին.

1. Գալուստեան Գրիգոր Հ., Մարաշ, Նիւ Եորք, 1934:

2. Գալուստեան Գրիգոր Հ., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Չէյթուն, Նիւ Եորք, 1988:

ԲԱՐՍԵՂՅԱՆ (ԹՈՐԳՈՍՅԱՆ) ԼԵՎՈՆ ԹՈՐԳՈՍԻ

Ծնվել է Սեբաստիայի նահանգի կենտրոն Սեբաստիա քաղաքում:

Բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել:

Սպանվել է 1915թ., Սեբաստիայից դուրս:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուճած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Սահակյան Լիլիկ, Ոճրագործները չխնայեցին նույնիսկ մարդու կյանքը փրկողներին, «Առողջապահություն», Երևան, 1965, թ. 4:

3. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնե-

ան, Պէյրուք, 1965:

4. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորակաւնութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱԲԳԱՐ


Ծնվել է Կարինում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

Սպանվել է Երզնկայում:

Նրա մասին.

Թեոդիկ, Գողգոթայ հայ հոգեւորականութեան, Նիւ Եորք, 1987:



ԲԱՐՍԵՂՅԱՆ ՄԻՆԱՍ Ս. (ԲԱԶԻԼ ԽԱՆ)

Բժիշկ, գիտնական, պրոֆեսոր, բանասեր, թարգմանիչ, խան:

Գրվել է Նաև Մինաս Մանուկ Բարսեղ, պրոֆ. դոկտ. Պագիյան, Բագիլ կամ Պագիլ խան:

Ծնվել է 1857թ. հուլիսի 14-ին, Պարսկաստանի Նոր

Ջուղա (Իսֆահան) քաղաքում:

Նախնական կրթությունն ստացել է հայերեն և պարսկերեն լեզվով՝ Նոր Ջուղայի Դավրեժ թաղի սբ. Մինաս եկեղեցուն կից դպրոցում:

1871-74թթ. ուսանել է Հնդկաստանի Կալկաթա քաղաքի Հայոց մարդասիրական ճեմարանում:

1874-77թթ. ուսանել է բելգիացի ջիզվիտների Կալկաթայի սբ. Փրկիչ քոլեջում:

1877-80թթ. ուսանել է Կալկաթայի անգլիական պետական «Presidency College»-ում, որի 4000 ուսանողների մեջ միակ հայն էր, և ստացել Կալկաթայի համալսարանի արվեստից մագիստրոսի (Master of Arts) աստիճան:

1878-81թթ. «Presidency College»-ում սովորելուն զուգահեռ միաժամանակ բժշկություն է ուսանել «Medical College of Bengal»-ում և «Calcutta General Hospital»-ում:

1881-82թթ. ուսումը շարունակել է Շոտլանդիայի (Մեծ Բրիտանիա) մայրաքաղաք Էդինբուրգի համալսարանի բժշկական ֆակուլտետում և ավարտել փայլուն ցուցանիշներով: Այստեղ ուսանելու ընթացքում ցուցաբերել է արտառոց ընդունակություններ և առաջ անցել իր հայ, պարսիկ, հնդիկ, անգլ-

լիացի, շոտլանդացի ազգերի 400 մրցակիցներից: Այդ առիթով կատակել է. «Հայ ուղեղը ամենէն հինն է, եգիպտացւոց, ասորացւոց ու բաբելացւոց հետ պետք է մրցի, սա նոր բուսած ազգերը մանուկներ են ու տակաւին մարդու տեղ չեն հաշուուկիր»:

1882թ. բժշկական կրթությունն ավարտելուց հետո մի քանի ամիս Էդինբուրգում աշխատել է պրոֆ. Ռուտերֆորդի բնախոսական (ֆիզիոլոգիական) թանգարանում:

1882թ. եղել է բրիտանական «Զլան» շոգենավային ընկերության բժիշկը և Լիվերպուլից Բոմբեյ երթևեկել:

1882/83-85թթ. աջակից բժիշկ է աշխատել Մելիոզ քաղաքի նահանգային հոգեբուժական հիվանդանոցում:

1885/86-89թթ. օգնական բժիշկ է աշխատել Մանչեստրի կանանց ու մանկանց հիվանդանոցում:

Բրիտանական բժիշկների միության և Էդինբուրգի համալսարանի խորհրդի անդամ է ընտրվել:

Անգլիայի հիվանդանոցներում աշխատելու ընթացքում լայն ճանաչում է ձեռք բերել հայ բժիշկների շրջանում:

1889թ., երբ Պարսկաստանի Նասրեդդին շահն այցելել է Անգլիա, բժիշկը

Նրան ներկայացել է որպես Անգլիայի պարսկական գաղութի անդամ: Շահը հիանալով նրա մասնագիտական հմտության վրա՝ հրավիրել է Թեհրան՝ Իրանյան համալսարանում անգլերեն և բժշկագիտություն դասախոսելու:

1889թ. այցելել է Կ. Պոլիս և մեկնել Պարսկաստան:

1889-1911թթ. բժշկություն է դասավանդել Թեհրանի «Դարուլ-Ֆուլուն» (արվեստների) դպրոցում/համալսարանում:

Պրոֆեսորի կոչում և բժշկապետի աստիճան է ունեցել:

Թեհրանում աշխատելու քսաներկու տարվա ընթացքում տվել է բազմաթիվ փայլուն շրջանավարտներ, որոնք պարսիկ մտավորականության վերնախավն են դարձել հետագայում:

Երկար տարիներ եղել է շահի պալատի բժշկապետը և բժշկական խորհրդատուն:

Եղել է Թեհրանում Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի դեսպանների ընտանեկան բժիշկը:

Երկու տարի եղել է պարսկական կազակների 2000-անոց ջոկատի բժշկապետը:

Տիրապետելով մի շարք օտար լեզուների, մեծ թվով բժշկական աշխատություններ եվրոպական լեզուներից պարսկերենի է թարգմանել:

Հեղինակ է բազմաթիվ հասարակական-քաղաքական, բժշկական (հոգեբուժական տեսանկյունից հետաքրքրական) հոդվածների, որոնք տպագրվել են անգլիական, պարսկական, կովկասյան և պոլսահայ պարբերականներում:

1911թ. տեղափոխվել է Կ. Պոլիս և գիտական, բանասիրական ու հասարակական լայն գործունեություն ծավալել:

Կ. Պոլսում եղել է պարսկական դեսպանատան բժշկապետը:

Թղթակցել է անգլիական «Medical Chronicle», «Hospital», «British Medical Journal» և այլ բժշկական պարբերականների՝ հրատարակելով բազմաթիվ գիտական հոդվածներ:

Հայրենակիցների շրջանում բժշկաառողջապահական գիտելիքներ տարածելու նպատակով գրել է մի շարք հայերեն բժշկական գիտահանրամատչելի հոդվածներ և գրքեր, որոնցից է օրինակ, խղերային նվիրված ծավալուն աշխատությունը:

Կ. Պոլսում անդամակցել է Հայ բժիշկների միությանը, եղել է Օսմանյան կայսերական բժշկական կաճառի, Բրիտանական բժիշկների միության, Էդինբուրգի համալսարանական խորհրդի, Հայկական Կարմիր խաչի և

հայկական ու օտար մասնագիտական ու հասարակական այլ կազմակերպությունների անդամ:

1915թ. Մեծ Եղեռնի ժամանակ օսմանյան կառավարությունը արտրել է Նրան, սակայն Պարսկաստանի դեսպանի ազդու միջնորդության շնորհիվ ազատվել է և ապաստանել Բուլղարիայում:

1918թ., Առաջին համաշխարհային պատերազմն ավարտվելուց հետո ընտանիքով մեկնել է Ֆրանսիայի Նիցցա քաղաքը՝ կազդուրվելու:

Պարզևատրվել է Պարսկաստանի կառավարության «Շիր-օ-խորշիդ» («Առյուծ և արեգակ») Ա աստիճանի շքանշանով, խանության տիտղոսով և այլ պատվանշաններով ու պարգևներով:

Մահացել է 1922թ. հուլիսի 24-ին, Ֆրանսիայի Նիցցա քաղաքում:

1914թ. դրությամբ ունեցել է Փարիզի բժշկական համալսարանում ուսանող որդի և 3 դուստր, որոնք սովորում էին Կ. Պոլսի Բերա թաղամասի անգլիական դպրոցում:

Աշխատությունները.

1. Pathologie interne, par Dieulafoy, պարսկերեն թարգմանություն:

2. Pathologie externe, par quatre agregés: Kermission,

Bouget etc., պարսկերեն թարգմանություն:

3. Holden's Landmarks of Anatomy, պարսկերեն թարգմանություն:

4. Ընդարձակ ուսումնասիրություն խոլերայի մասին:

5. Տարափոխիկ հիվանդությունների մասին մի շարք հոդվածներ է տպագրել «Տերբիլետ» շաբաթաթերթում:

6. Թեհրանի պարսկերեն «Հաբլ-օլ-մաթին» օրաթերթում հոդվածներ է տպագրել «Վեզիֆե» և «Գապուս» ծածկանուններով:

Նրա մասին.

1. Ղազարեան Վահան, Բժշկական տարեցոյց, Կ. Պոլիս, 1914:

2. Պոտուրեան Մկրտիչ, Հայ հանրագիտակ, Պուրբեշ, 1938:

3. Վարդանյան Ստեյլա, Հայաստանի բժշկության պատմություն, Երևան, 2000:

ԲԵՆԻԱՄԻՆ ԱԶԻԶ

Ծնվել է մոտ 1875թ., Տրապիզոնի նահանգի Սամսոն նավահանգստում:

1900թ. ավարտել է Կ. Պոլսի Կայսերական գինվորական բժշկական վարժարանը (?):

Եղել է ատամնաբույժ: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բա-

նակ:

1917թ. ծառայության ընթացքում, սպայի աստիճանով, նշանակված է եղել Խոփի շրջանի Թալաղը գյուղի «գոնագճը», որի պարտականությունն էր թուրքական բանակի շարժվող զորախմբերին ընդունելը և իջևանատեղի ապահովելը:

1917թ. երբ թուրքերն առաջացել են դեպի Կովկաս, օսմանյան բանակի 11-րդ զորագնդի առողջապահական վաշտի գլխավոր բժիշկ Քեմալն ու դեղագործ Մեհմեդ Ալին նրան չարանենգորեն սպանել են Սարիղամիշից դուրս, Խոփի շրջանի Թալաղը գյուղում մոտ 42 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուճած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուզամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

3. Թեոդիկ, Յուզարձան նահատակ մտաւորակաւութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

4. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

5. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ

և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ԲՐՈՒՏՅԱՆ ՊՈՂՈՍ ԿԱՍ ՏԻԳՐԱՆ

Ծնվել է Կարինում:

Դեղագործական կրթություն է ունեցել:

1890-ական թվականներին Մեյխոնեում / Վանում քաղաքապետարանի դեղագործ է աշխատել:

1894թ. եղել է Կարինի Սանասարյան վարժարանի դեղագործը:

1894թ. բուժել է Սանասարյան վարժարանի դասատու Հրաչյա Աճառյանի աղիների բորբոքումը:

Սպանվել է 1915թ., Մեյխոնեի մոտ:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուճած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուզամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

3. Աճառյան Հրաչյա, Կյանքիս հուշերից, Երևան, 1967:

4. Թեոդիկ, Յուզարձան նահատակ մտաւորակաւութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

5. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դե-

ղագործության պատմությունից, Երևան, 1990:

6. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն). Ստամբուլ, 2001:



ԳԱՐՐԻԵԼՅԱՆ ՍՄԲԱՏ ՍԿՐՏՅԻ

Բանասեր, բժիշկ, հասարակա-կան գործիչ:

Ծնվել է 1856թ. դեկտեմբերի 15-ին, Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառի Ակն գավառակի կենտրոն Ակն քաղաքում:

Նախնական կրթությունն ստացել է Ակնում և Խարբերդում:

Ավարտել է ամերիկացի միսիոներների Այնթապի Կենտրոնական Թուրքիայի քոլեջը:

Սովորել է նաև Կ. Պոլսում և զբաղվել ուսուցչությամբ:

1884-85թթ. սովորել է Փարիզի համալսարանի բժշկա-

կան ֆակուլտետում, բայց ուսումը կիսատ է թողել:

Վերադառնալով Ակն՝ զբաղվել է մշակութային գործունեությամբ:

Գրական առաջին փորձերը կատարել է Ակնում հրատարակվող «Ճաղիկ» խմորատիպ պարբերականում:

Ակնում բողոքականության դեմ պայքարի ժամանակաշրջանում գրել է «Հայ բողոքականության անցեալն ու ներկան» աշխատությունը, որով պահանջել է Հայ ավետարանական եկեղեցու ազգայնացումը: Ա. Ժամկոչյանի հետ հաջողել է ժողովարաններում ընդունել տալ հայ եկեղեցական երգերը, տաղերն ու հոգեշունչ բանաստեղծությունները: Կրոնա-մշակութային այս շարժումը բորբոքելու համար օսմանյան կառավարությունը նրան կասկածելի տարր է համարել և հետապնդումների ենթարկել:

1886/90թթ., հետապնդումներից խուսափելու նպատակով մեկնել է ԱՄՆ և ապաստան գտել Նյու Յորքում:

1886-90թթ. սովորել է Նյու Յորքի Կոլումբիա համալսարանում մասնագիտանալով հասարակական գիտությունների գծով: Այնուհետև Նյու Յորքի բժշկական քոլեջում շարունակել և ավարտել է կիսատ թողած

բժշկական կրթությունը:

Նյու Յորքում զբաղվել է բժշկությամբ և հանրային գործունեությամբ, տպարան հիմնել:

1891-96թթ. Նյու Յորքում հրատարակել է «Հայք» ազգային, գրական կիսամյա հանդեսը, որի էջերում հեղինակել է բժշկական և հոգեբանական թեմաներով հոդվածներ, քննարկման ենթարկել հայ համայնքի գործունեությունը ԱՄՆ-ում:

Եռանդուն գործունեություն է ծավալել հրապարակախոսության ասպարեզում:

1896թ. «Հայքը» վերածվել է ամսագրի, որը երբեմն անգլերեն հավելվածներ է ունեցել: Գիտահասարակական և բժշկա-առողջապահական հոդվածներով թղթակցել է «Հանդես մասօրեայ» և «Կոչնակ Հայաստանի» պարբերականներին:

1895թ. վերադարձել է Թուրքիա և Այնթապի բժշկական դպրոցում բժշկություն դասավանդել:

1896թ. լույս է տեսել նրա «Հայաստանի վերականգնումը» խորագրով աշխատությունը, որի պատճառով օսմանյան իշխանությունները վերսկսել են նրան հալածել:

Հետապնդումներից խուսափելու համար կրկին մեկնել է ԱՄՆ:

Մահացել է 1919թ. հունիսի

3-ին, ԱՄՆ-ի Ուիհոքըն քաղաքում 63 տարեկանում:

Աշխատությունները.

1. Վերականգնումն հայոց, Կ. Պոլիս, 1879:

2. Հայ բողոքականության անցեալն ու ապագան, Կ. Պոլիս, 1888/1889:

3. Արուեստ Ատենախօսութեան ի պետս ազգային վարժարանաց, Լիւ Եօրք, 1891:

4. Խրիմեան Հայրիկ, Կենսագրութիւն, Լիւ Եօրք, 1892:

5. Հայկական հոգեբանութիւն, Լիւ Եօրք, 1894:

6. Զրիստոնեայ Հայաստան և քրիստոնեայ տերութիւնք (հայ. և անգլ.), Լիւ Եօրք, 1896/1897:

7. Հայկական ճգնաժամն եւ վերածնութիւն, Լիւ Եօրք, 1905 եւ 1909:

8. Հայ ցեղն, Լիւ Եօրք, 1911:

9. Ակնայ գաւառաբարբառը եւ արդի հայերէն լեզուն, Վիեննա, 1912:

10. Սեռային առողջաբանութիւն, Պոսթոն, 1915:

11. Ազգային քաղաքականութիւն:

12. Գիտութիւն, փիլիսոփայութիւն եւ կրօնք, անտիպ:

13. Հայերէն լեզուի փիլիսոփայութիւնը, անտիպ:

14. Հերոսն Առաջին, Տրամ երեք արարուածով, անտիպ:

15. Մարդկային մարմնոյն

հրաշալիքը, անտիպ:

16. Facts about Armenia, New York, 1895.

17. Bleeding Armenia (in collaboration with A. W. Williams), 1897.

18. Principles of Medical Pathology (translated from French), 1901 and 1905.

19. Infectious Diseases (translated from French), 1903.

20. Principles of Therapeutics (translated from French),

Նրա մասին.

1. Պարսամեան Մկրտիչ, Ակն եւ ակնցիք, Փարիզ, 1952:

2. Ստեփանյան Գառնիկ, Կենսագրական բառարան, հ. Ա, Ե., 1973:

3. Վարդանյան Ս., Հայաստանի բժշկության պատմություն, Ե., 2000:

4. Ով ով է: Հայեր: Կենսագրական հանրագիտարան, հ. 1, Ե., 2005:

ԳԱԶԱՅՑԱՆ ԱՐՇԱԿ

Ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Բժիշկ-դեղագործի մասնագիտություն է ունեցել:

1899-1909թթ. արտաքին բաժնի մնայուն օգնական բժիշկ է աշխատել Կ. Պոլսի սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցում:

Եղել է հանրային գործիչ: 1915թ. ապրիլին բանտարկվել է Կ. Պոլսի կենտր. բանտում, ապա արքայազն Չանդրը:

Անունը փորագրվել է Չանդրըրի բանտում հավաքված համրիչի 99 հատիկներից մեկի վրա:

Ենթադրվում է, որ փրկվել է անխուսափելի մահից ու վերապրել:

Նրա մասին.

1. Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1905:

2. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Վիեննա, 1922:

3. Ազգային հիւանդանոցի մէջ պաշտօնավարած բժիշկները, Ընդարձակ տարեգիրք Ազգային հիւանդանոցի, Իսթանպուլ, 1939:

4. Թէոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

5. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Երևան, 1991:

6. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

7. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողք և վկայք խաչի, Երևան, 2002:

8. Ավագեան Կարինե, «Չանդրըրի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդես Ամսօրեայ», 2008, հ. 1-12

ԳԱՉԱՆՃՅԱՆ ԳԱՌՆԻԿ

Անասնաբույժ:

Ծնվել է 1886թ., Կարինի նահանգի Երզնկայի գավառի կենտրոն Երզնկա քաղաքում:

Ավարտել է Կարինի իդարդիեն (միջնակարգ վարժարանը):

1912թ. ավարտել է Կ. Պոլսի Անասնաբուժական վարժարանը:

1913թ. քաղաքապետարանի անասնաբույժ է աշխատել:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ:

1915թ. մայիսի վերջին Դերջանում, լինելով զինվորական ծառայության մեջ, ի թիվս մի քանի հայ զինվորների, դաժանորեն սպանվել է թուրքերի ձեռքով՝ 29 տարեկանում:

Նրա մասին.

Պոտուրեան Սկրտիչ, Հայ հանրագիտակ, Պոլքրէշ, 1940:

ԳԱՉԱՆՃՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Լեզվաբան, գրականագետ, բժշկական գիտելիքների քարոզիչ:

Ծնվել է 1870թ. ապրիլի 3-ին, Սեբաստիայի նահանգի Եվդոկիայի գավառի կենտրոն Եվդոկիա քաղաքում:

1889թ. Հ. Գասարճյանի համահեղինակությամբ գրել է «Գաղտնիք եւ արուեստ մոգութեան» աշխատությունը:

1909թ., օգտվելով արտասահմանցի մասնագետների աշխատություններից, գրել է «Մագնիսականութիւն եւ ոգեհարցութիւն» գիրքը, որում արծարծված են ենթագիտակցության, ինքնաթելադրության, հոգեբուժության, մագնիսականության, կամքի ուժի, քնածության կամ մագնիսական քնի, հստակատեսության, մտածումների փոխանցման, հեռակրության, ոգեհարցության, մեդիումության և այլ հարցերը:

1915թ. մարտի 15-ին Եվդոկիայում զոհ է դարձել Մեծ Եղեռնին՝ 45 տարեկանում:

Աշխատությունները.

1. Գաղտնիք եւ արուեստ մոգութեան (համահեղ. Հ. Գասարճեան), 1889:

2. Եւդոկիոյ հայոց գաւառաբարբառը, 1899: Իզմիրյանց գրական միջանակին է արժանացել:

3. Մագնիսականութիւն եւ ոգեհարցութիւն: (Ենթա-

գիտակցութիւն, ինքնաթելադրութիւն, հոգեբուժութիւն, մագնիսականութիւն, կամքի ոյժ, քնածութիւն կամ մագնիսական քուն, յստակատեսութիւն, մտածումներու փոխանցում, հեռակրութիւն, ոգեհարցութիւն, մետիումութիւն եւ այլն), Կ. Պոլիս, 1909, 144 էջ:

4. Պատմութիւն Հայ Գրականութեան. Ա. Հատոր՝ Սկիզբէն Մինչեւ ԺԹ. Դար,

Բ. Հատոր՝ ԺԹ. Դարու ԿԵ-սէն Մինչեւ Մեր Օրերը, հրտ. ՀՍԳՄ թիւ 2, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան, 1970, 265 էջ:

5. Հայոց լեզվի դասագրքեր:

Նրա մասին.

Մինասյան Հարություն, 100 հայ հոգեբույժներ, Կենսագրական քարտանոցներ, Ե, Ե



ԳԱԼԱԳՅԱՆ ՃԱՆԻԿ ՀԱԿՈՐԶԱՆԻ

Ծնվել է 1881թ. փետրվարի 2-ին, Հալեպի նահանգի Մարաշի գավառի կենտրոն

Մարաշ քաղաքում բժիշկ Հակոբջան Ավետիսի Գալբազյանի ընտանիքում:

Հոր մասին

Այս տոհմում 300 տարի շարունակ Այնթապում եղել են բժիշկներ:

Մի անգամ Հակոբջանի պապին, որպես Այնթապի նշանավոր բժշկի, ներկայացրել են սուլթան Մահմուդ II-ին, երբ նա ճանապարհորդում էր դեպի Բաղդադ: Սուլթանը նրան պատվագրակ (գալբազ) է նվիրել՝ գրավոր հրամանով (ֆերմանով), որտեղից էլ առաջացել է Գալբազը օղյու կամ Գալբազյան ազգանունը: Հակոբջանի հայրը՝ բժիշկ Ավետիսը, նշանակվել է Մարաշի թաղապետական բժիշկ և ընտանիքով Մարաշ տեղափոխվել: Հակոբջանը ծնվել է 1849թ., Հալեպի նահանգի Այնթապի գավառի Նույնանուն գավառակի կենտրոն Այնթապ քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է Մարաշի սրբոց Զառասուն Մանկանց նախակրթարանում, ապա սովորել սբ. Սարգիս եկեղեցու ճեմարանում: Բժիշկ հորը օգնելու ընթացքում սովորել է գործնական բժշկության արվեստը: Հոր մահից հետո Մարաշի թաղապետական բժիշկ է նշանակվել: Ժողովուրդը նրան կոչել է Հեքիմ Ապուլճան (Հակոբջան): 1877-78թթ. Ռուս-

թուրքական պատերազմի ժամանակ գորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել: Վարել է նաև ազգային պաշտոններ: 1890թ. Չեյթոնում բռնկվել է ծաղկախտի, կարմրախտի և այլ մանկական վարակիչ հիվանդությունների համաճարակ, որի պատճառով զոհվել են շուրջ 500 երեխաներ: Հակոբջան Գալբազյանը ձեռքի տակ ունեցած պատվաստանյութով հասցրել է մի քանի մանուկների պատվաստել: Չեյթոնցիները Մարաշի կառավարությանը ամբաստանագիր են հղել, թե բժիշկը իբր երեխաներին թունավոր պատվաստանյութ է պատվաստել, ինչի պատճառով էլ 500 մանուկները մահացել են: 1931թ. հունիսի 11-ին, Կահիրեից հղած նամակում Տ. Ղևոնդ Հայրը գրել է. «Գալբազյանի վերագրուած ոճիրին՝ սուտ է, գրպարտութիւն է, ստուգուած ճշմարտութիւն չէ»: Ուրիշ զեյթունցիներ ևս վկայել են բժշկի անմեղության մասին: Մահացել է 1913թ. սեպտեմբերի 25-ին՝ 64 տարեկանում:

Ճանիկ Գալբազյանը նախնական և երկրորդական կրթությունն ստացել է Մարաշում:

Ուսանել է ատամնաբուժություն:

Երկար տարիներ ատամնաբույժ է աշխատել Մարաշում:

Ամուսնացել է Մարաշի Տեր-Մեսրոպյան ընտանիքի դստեր հետ և երկու դուստր ունեցել:

1920թ. հունվարին Մարաշի հայոց կոտորածի ժամանակ կինն ու դուստրերը սպանվել են, իսկ ինքը բանտարկվել է ու անլուր տառապանքների ենթարկվել:

Բանտից ազատվելուց հետո շարունակել է զբաղվել ատամնաբուժությամբ:

Որոշ ժամանակ անց ամուսնացել է Մարաշի Աղջկանց քոլեջի շրջանավարտ օրիորդ Էլիզա Թոփալյանի հետ և երկու զավակ ունեցել:

Այնուհետև ընտանիքով տեղափոխվել է ԱՄՆ:

ԱՄՆ-ում կինը մահացել է, իսկ ինքը նվիրվել է զավակների կրթության գործին:

1933թ. փետրվարի 22-ին հանկարծամահ է եղել 52 տարեկանում:

Նրա մասին.

1. Գալուստեան Գրիգոր Հ., Մարաշ, Նիւ Եորք, 1934:

2. Գալուստեան Գրիգոր Հ., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Չեյթոն, Նիւ Եորք, 1988:



ԳԱԼԱՎԶՅԱՆ ԵՉԵԿ

ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ

Գրվել է նաև Գալիաքճյան, Գալթակչյան տարբերակներով:

Ծնվել է 1860թ., Կ. Պոլսի Կաղդայուղ թաղամասում:

Ավարտել է Կ. Պոլսի Կալթասերայի «Մեքթեբ-ի Սուլթանիե» բարձրագույն վարժարանն ու Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Եղել է հին արմաշական:

1886/96թ. վարդապետ է ձեռնադրվել:

Պաշտոնավարել է զանազան գավառներում և Կ. Պոլսի թաղերում:

Եղել է Արմաշի դպրեվանքի փոխտեսուչը:

1912թ. ձեռնադրվել է եպիսկոպոս և պաշտոնավարել Բալուխի թեմում: Արքուքյան պատվին է արժանացել:

Եղել է Բալուխ, Արղընի և Չնգուշի հոգևոր առաջնորդի փոխանորդը, ապա՝ առաջնորդը: Նրա հովվության տակ 54 եկեղեցի և 4 վանք է գտնվել:

1915թ. Բալուխի իր հոտի հետ արքայվել է և նահա-

տակվել 55 տարեկանում:

Նրա մասին.

1. Թեոդիկ, Յուշարձան ապրիլ 11-ի, Կ. Պոլիս, 1919:

2. Պոտուրեան Մկրտիչ, Հայ հանրագիտակ, Պուրբեշ, 1940:

3. Կռայեան Մեսրոպ, Բալու, Անթիլիաս, 1965:

4. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

5. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ԳԱԼԱՔՅԱՆ ՀԱԿՈՒԿ

Դեղագործական կրթություն և ունեցել:

Կեսարիայում դեղագործ և աշխատել:

Ձերբակալվել է և բանտարկվել:

1930-ական թվականներին բնակվել է Բեյրութում:

Նրա մասին.

Ալայոյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. հատոր, Գահիրե, 1937:

ԳԱԼԸՅԱՆ (ԳԱԼԻՅԱՆ) ԽՈՐԵՆ

Ծնվել է մոտ 1880թ., Խարբերդ նահանգի կենտրոն Խարբերդ քաղաքում պատվելիի ընտանիքում:

Թուրքերը հորն սպանել են Խարբերդի իր տան տանիքում, իսկ մորը՝ Բամբիշ Ալմաստին և մանուկ Խորենին տարել և թուրքացրել են՝ վերջինիս տալով Խայրուլլա անունը:

Մայրն իր խնայած 60 ոսկին տվել է որդու բժշկական կրթության համար:

1904թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Խարբերդի թուրքերի շրջանում եղել է հարգված բժիշկ Խայրուլլա:

Օսմանյան բանակում զինվորական բժիշկ և դեղագործ է ծառայել:

Պաշտոնի բերումով շրջել է Արևմտյան Հայաստանի բոլոր նահանգներում:

1915թ. իրենց բնօրրաններից տեղահանված հայ գաղթականների հետ հասել է մինչև Դեյր-էլ-Չոր, որտեղ տեսել է, թե ինչպես շատերին հերթի են կանգնեցրել և մորթել: Աքսորյալները դիմել են բժշկի օգնությանը, և նա իր ուժերի ներած չափով գաղտնի կերպով օգնել է նրանց ու ազատել յաթաղանից:

Խարբերդում թուրքերը նրա վրա պահակ են դրել, որ նա հայերին բժշկական օգնություն չցուցաբերի: Սա-

կայն, այնուամենայնիվ, հնարավորության դեպքում միշտ և ամենատարբեր հարցերում օգնել է ազգակիցներին:

Հետագայում, զգալով իր գլխին կուտակվող մոլթ ամպերը, իր ընտանիքի բեռները գաղտնի ճանապարհով ուղարկել է Հալեպ և մի օր էլ վերադառնալով Կ. Պոլսից, հավաքել է ընտանիքը ու ծածուկ հեռացել Խարբերդից:

Այդպես գաղթելով հասել են Տիգրանակերտ (Դիարբեքիր), Մարդին, Հալեպ, Բեյրութ, Եգիպտոս:

1948թ. ընտանիքով հայրենադարձվել է Խորհրդային Հայաստան:

Այս պատմությունը բանահավաք Վերծինե Սվազյանին պատմել է բժիշկ Խորենի որդի Ռոբեր Գալընյանը (ծնված 1912թ., Խարբերդում):

Նրա մասին.

1. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառոտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

2. Սվազյան Վերծինե, Հայոց ցեղասպանություն: Ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2000:

ԳԱԼԻԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

Ծնվել է 1892թ., Բուրսայի

Նահանգի Նիկոմիդիայի գավառակի Իչմե գյուղում / Գեյվե ավանում:

Հաճախել է Կ. Պոլսի Բանկայթի թաղամասի Բագրատունի վարժարանը:

Ուսանել է բժշկական համալսարանում:

Եղել է հնչակյան կուսակցության ուսանողական միության անդամ:

Մահացել է հիվանդությունից, Հալեպում արքայազն ժամանակ, տակավին երիտասարդ հասակում:

Նրա մասին.

Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

ԳԱԼՏԱՅԱՆ ՄԻՀՐԱՆ ՀԱԿՈՒԿ

Ծնվել է 1891թ., Կ. Պոլսում:

Ծառայել է օսմանյան բանակի գործավորական Բ վաշտի զինվորական բժիշկ:

Մահացել է 1915թ. փետրվարի 14-ին, ժանտախտից՝ 24 տարեկանում:

Հայկ Ս. Բյուրատը նրա հիշատակին է ձոնել իր մի գիրքը:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:



ԳԱՄԱՊՈՒՐՑԱՆ ԱՆՏՈՆ

Ծնվել է 1886թ., Կոստանդնուպոլսի Գաղատիա (Կալաթա) թաղամասում:

Ավարտել է Գաղատիա թաղամասի ֆրանսիական, Կադրգյուղ թաղամասի Մխիթարյան և Վենետիկի Մուրատ-Ռափայեյան վարժարանները:

Ավարտել է Ֆրանսիայի Լիոն քաղաքի բժշկական համալսարանը:

Վերադարձել է Կ. Պոլիս:

1914-18թթ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժշկապետ ծառայել՝ հարյուրապետի աստիճանով:

Պատերազմի ընթացքում գերի է ընկել անգլիացիների ձեռքը և 13 ամիս Եգիպտոսում անցկացրել բանտարկության մեջ:

1918թ., պատերազմն ավարտվելուց հետո վերադարձել է Թուրքիա և Նշանակվել Կ. Պոլսի կաթոլիկ

հայերի սբ. Հակոբ հիվանդանոցի բժշկապետ:

1922թ. տեղափոխվել է Հունգարիա և հաստատվել Բուդապեշտ մայրաքաղաքում:

1938թ. հասցեն էր՝ Graf Tisza utca 12, Budapest (Hongrie):

Նրա մասին.

Պոտուրեան Մկրտիչ, Հայ հանրագիտակ, Պոլքրէշ, 1938:

ԳԱՄԱՊՈՒՐՑԱՆ ԳՐԻԳՈՐ

Ծնվել է 1880թ., Կոստանդնուպոլսում:

Ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան դեղագործական վարժարանը և աշխատել դեղագործ-քիմիագետ:

1914թ. Թուրքիայի Գեմիկ քաղաքում ունեցել է սեփական դեղատուն:

1915թ. Մեծ Եղեռնի ժամանակ Բրուսա քաղաքի մոտակա

Ադըրնազ գյուղում սպանվել է 35/36 տարեկանում և մարմինը այրվել:

Այլ տվյալով՝ սպանվել կամ մահացել է 1916թ. Բրուսայում:

Նրա մասին.

1. Պոտուրեան Մկրտիչ, Հայ հանրագիտակ, Պոլքրէշ, 1940:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և

պատմությունն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքեր



ԳԱՄԱՊՈՒՐՑԱՆ ՀԱՅԿ

Ծնվել է 1888թ., Կարինի նահանգի Երզնկայի գավառի կենտրոն Երզնկա քաղաքում:

Նախնական կրթությունն ստացել է Երզնկայի ազգային վարժարանում:

1906թ. մեկնել է Չմյուռնիա և քարափից ուղղակի բանտ առաջնորդվել:

Մեկ ամիս բանտում մաշուց հետո աքսորվել է Տրապիզոն:

1907թ. մեկնել է Կ. Պոլիս: 1908-11թթ. սովորել է դեղագործական համալսարանում:

1911թ. Բրուսա քաղաքի մոտակա Մխալիճ գյուղում բացել է սեփական դեղատուն:

Ի տ ա լ ա - թ ու ը ք ա կ ա ն (1911) և Բալկանյան (1912-1913) պատերազմների ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական

դեղագործի առաջին տեղակալ ծառայել:

1915թ. Մեծ Եղեռնի ժամանակ աքսորվել է, սակայն մի կերպ կարողացել է ապաստանել Կոստինայում և մի քանի ամիս ձրի աշխատել տեղի հիվանդանոցում:

Այնուհետև մեկնել է Կ. Պոլիս և ծառայության անցել օսմանյան բանակում:

Երեք ամիս ծառայելով վերապատրաստվել է Կ. Պոլսի Գյուլխանեի հիվանդանոցում:

Այնուհետև, որպես թնդանոթաձիգների բժիշկ, բանակի հետ ուղարկվել է Բաղդադի ռազմաճակատ:

1918թ. վերջերը ծառայել է Մուսուլ քաղաքի զինվորական հիվանդանոցում:

Ծառայության ընթացքում նյութապես և բարոյապես օգնել է հայ գաղթականներին:

Այնուհետև ապաստանել է Բաղդադում և անգլիական քաղաքային հիվանդանոցում (Civil Hospital) դեղագործ աշխատել:

Հետագայում վերադարձել է Կ. Պոլիս և մեկնել Փարիզ:

1921թ. Բրուսայում Զիրմասյում բացել է սեփական դեղատուն:

1922թ. տեղափոխվել է Հունաստան, հաստատվել Դրամա քաղաքում և բացել սեփական դեղատուն:

1938թ. հասցեն էր՝ Pharmacie H. Kambourian, Megas Alexandros, Drama (Grece):

Նրա մասին.

Պոտոուրեան Մկրտիչ., Հայ հանրագիտակ, Պուքրեշ, 1938:

ԳԱՊԴԵԼՃՅԱԼ ՄԵԼՔՈՆ

Դեղագործական կրթություն է ունեցել և եղեսիալում դեղագործ է աշխատել:

1915թ. Նահատակվել է Եղեսիայում:

Նրա մասին.

Սահակեան Արամ, Դիւ-ցազնական Ուրֆան եւ իր հայրորդիները, Պէյրուք, 1955:

ԳԱՍԱԴՅԱԼ ԱՐՇԱԿ

Ազգանունը գրվել է Նաև սիսալ՝ Գասսպարյան տարբերակով:

Ծնվել է Տրապիզոնի նահանգի Սամսոն նավահանգստային քաղաքում:

Բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել:

Սպանվել է 1915թ. Կարսի մոտ, Նարմանի մեջ:

Նրա մասին.

1. Հայ բժշկուրեան տու-լած զոհերը, ցուցակագրու-լած վաւերական փաստե-րով, Կ. Պոլիս, 1919:

2. Սահակյան Լիլիկ, Ոճ-րագործները չխնայեցին նույնիսկ մարդու կյանքը

փրկողներին, «Առողջապա-հոււթյուն», Երևան, 1965, թ. 4:

ԳԱՍԱԴՅԱԼ ՀԱԿՈՐ

Բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել: 1915թ. մահացել է տի-ֆից:

Նրա մասին.

Սահակեան Արամ, Դիւ-ցազնական Ուրֆան եւ իր հայրորդիները, Պէյրուք, 1955:

ԳԱՍԱԴՅԱԼ ՀՈՎՀԱՆԼԵՍ ԳՐԻԳՈՐԻ

Ծնվել է մոտ 1880թ., Սե-բաստիայի նահանգի Սե-բաստիայի գավառի Ակն գավառակի կենտրոն Ակն քաղաքում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում:

1903թ. ավարտել է Բեյ-րութի Ամերիկյան համալ-սարանի բժշկական ֆակուլ-տետը:

Հաստատվել է Սամ-սոն նավահանգստային քաղաքում և բժիշկ աշխա-տել:

1914թ. Առաջին համաշ-խարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օս-մանյան բանակ և ծառայել 10-րդ զորաբաժնի ամրու-թյունների վաշտի զինվորա-կան բժիշկ:

1915թ. փետրվարի 27-ին սպանվել է կամ մահացել ժանտախտից՝ մոտ 35 տա-րեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկուրեան տու-լած զոհերը, ցուցակագրու-լած վաւերական փաստե-րով, Կ. Պոլիս, 1919:

2. Պարսամեան Մկրտիչ, Ակն եւ ակնցիք, Փարիզ, 1952:

3. Խաչատրյան Լ., Բաբ-լումյան Ա., Յուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խար-բերդի նահանգ, Ե., 2004:

4. Զեստենեան Հրաչ, Պէյրութի Ամերիկեան Հա-մալսարանէն Շրջանաւարտ Եւ Մեծ Եղեռնին Նահատա-կուած Հայ Բժիշկներ, “Ազ-դակ”, 01-11-2012

ԳԱՍԱԴՅԱԼ ՏԻԳՐԱՆ Ա.

Ծնվել է Տիգրանակերտ քաղաքում, հայ առաքելա-կան ընտանիքում:

1912թ. ավարտել է Բեյ-րութի ամերիկյան համալ-սարանի բժշկական բաժի-նը:

1912թ. մեկնել է Ուրֆա և աշխատել Գերմանական հի-վանդանոցում:

1914թ. Առաջին համաշ-խարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օս-մանյան բանակ և ծառայել

որպես զինվորական բժիշկ: 1915թ. սպանվել է Կարի-նում զինվորական ծառայու-թյան ընթացքում:

Նրա մասին.

Զեստենեան Հրաչ, Պէյ-րութի Ամերիկեան Համալ-սարանէն Շրջանաւարտ Եւ Մեծ Եղեռնին Նահատա-կուած Հայ Բժիշկներ, “Ազ-դակ”, 01-11-2012

ԳԱՍԱԴՅԱԼ ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԻ

Բժիշկ, բանաստեղծ: Ծնվել է հավանաբար 1883թ., Բրուսայի նահան-գի Նիկոմիդիայի գավառա-կի Գեյվեի շրջանի Կընջըլար գյուղում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի ազ-գային վարժարանում:

1908թ. ավարտել է Կ. Պոլ-սի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

1908-14թթ. Տիգրանա-կերտի կենտրոնական հի-վանդանոցի բժիշկ է աշխա-տել:

Եղել է բանաստեղծ և գրել գողտրիկ ոտանավոր-ներ:

Հոդվածներով թղթակցել է հայկական թերթերին և հանդեսներին:

1914թ. Առաջին համաշ-խարհային պատերազմն սկսելուց հետո զորակոչ-

վել է օսմանյան բանակ, ուղարկվել Գալիցիայի ռազմաճակատ և ծառայել 11-րդ զորագնդի 2-րդ վաշտի զինվորական բժիշկ:

1915թ. սեպտեմբերի 3-ին կամ դեկտեմբերի 27-ին, Գալիցիայի ռազմաճակատում զոհվել է կամ Տիգրանակերտում մահացել է ժանտախտից՝ մոտ 32 տարեկանում:

Հետագայում նրա այրին՝ բժշկուհի Օֆեյան, իր երկու դուստրերով բնակություն է հաստատել Լոս Անջելեսում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

3. Պոտուրեան Մկրտիչ, Հայ հանրագիտակ, Պուրքեշ, 1940:

3. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգա



ԳՎՍԵԼՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ

Ծնվել է 1881թ., Շար գյու-

ղում, հաճընցի ծնողների աղքատ ընտանիքում:

Հետագայում նրան կոչել են հաճընցի հերոս տղքթոր Մարտիրոս կամ Մարտիրոս Աղբայ:

Մանկուց սկսել է աշխատել՝ հովիվ-խաշնարած, հողագործ:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուն պես ծառայության է մտել թուրքական բանակում:

Կոստանդնուպոլսում նկատելով պատանու վայելակազմ արտաքինը, ճերմակ դեմքը, կապույտ աչքերն ու խոնարհ վարքը, նրան ուղարկել են զինվորական հիվանդանոցում աշխատելու:

Հոսպիտալում ծառայելու ընթացքում նվաճել է բուժաշխատողների և բժիշկների համակրանքը և վիրաբույժը նրան դարձրել է իր օգնականը:

Ուշի ուշով յուրացնելով հիվանդներին խնամելու և տարրական բժշկական օգնություն ցույց տալու սկզբունքները, շուտով դարձել է անվանի հիվանդապահ:

Չանաքալայի ռմբակոծության ժամանակ վիրավորվել է ու զրկվել մի աչքից:

Հոսպիտալում բուժվելուց հետո կրկին վերադարձել է իր ծառայությանը հոսպի-

տալում:

1918թ. պատերազմը ավարտվելուց հետո ստացել է հավատարիմ ծառայողի վկայական և զորացրվել:

1918թ. վերադարձել է Ադանա:

Ադանայում թուրքական ոստիկանության կողմից մի քանի անգամ ձերբակալվել է, սակայն վկայականի շնորհիվ ազատ է արձակվել:

Այնուհետև տեղափոխվել է Հաճըն և գտել հորեղբոր որդի Սիմոնին, որին թուրքերը չէին տեղահանել իրենց գյուղերի միակ կլայագործը լինելու պատճառով:

Աշխատել է Սիմոնի մոտ, որպես օգնական:

Գաղթած հաճընցիների և շարցիների վերադառնալուց հետո գնացել է իր ծննդավայր Շար գյուղը, վերականգնել պապենական օջախը և զբաղվել հողագործությամբ:

1920թ. քեմալական հարձակման և Շար գյուղի պաշարման ժամանակ ցերեկները հիվանդներին ու վիրավորներին է բուժել, իսկ գիշերները՝ զենքը ձեռքին ճակատը պաշտպանել:

Շար գյուղի անկումից հետո մի խումբ կտրիճների հետ բարձրացել է լեռները և թուրքերի դեմ կռվելով հասել Հաճըն:

Հաճընում բժիշկ Տիրան

Թերզյանի հրավերով մնացել է հիվանդանոցում և զբաղվել հիվանդ ու վիրավոր մարտիկների բուժմամբ:

Այնուհետև որպես բժիշկ միացել է Ռուսլուի հարձակումին կռվող զինվորներին:

Դաժան ճակատամարտի ժամանակ ծանր վիրավորվել է Վարդան Ճերեճյանի թևը: Եվ Մարտիրոսը հմտորեն անդամահատելով թևը, նրան փրկել է մահից: Հետագայում Վարդանը ստացել է «Կուրո» մականունը, ինչպես եղել էր ֆրանսիացի անվանի զորավար Կուրոն:

Այդ օրվանից էլ Մարտիրոսին կոչել են դոկտոր:

Վերապրած հաճընցիները Ադանայում պարճանքով են պատմել դոկտոր Մարտիրոսի հերոսությունների մասին:

Փ ո խ հ Ր ա մ ա ն ա տ ա Ր Արամ Կայծակը նրան տվել է դոկտորի վկայագիր:

1925թ. վերստին ամուսնացել է վերապրող այրի տիկին Կյուլիզար Գուլումճյանի հետ, որի երկու զավակներին պահեց ու դաստիարակեց հարազատ հոր պես:

Հետագայում ընտանիքով տեղափոխվել է Արգեստիճ և հաստատվել Մոնտեվիդեո քաղաքում:

Այստեղ սեփական աշխատանքով ստեղծել են սեփական տուն և նպարավաճառի խանութ:

Ամուսինները հետագայում ունեցել են ևս երեք աղջիկ ու մեկ տղա՝ Խուանին:

Եղել է խելացի, կրթված, փորձառու, բարձր բարոյականության տեր, համեստ, լուրջ, վեհանձն, առատաձեռն, ազգասեր անձնավորություն:

Մշտապես հետաքրքրվել է Խորհրդային Հայաստանի վիճակով ու ուրախացել նրա հաջողություններով:

Մահացել է 1968թ. նոյեմբերի 27-ին:

Թաղվել է Մոնտեվիդեոյի Լորթե գերեզմանոցում:

1968թ. կինը ողջ է եղել:

Նրա մասին.
Մխճեան Ս., Հաճընցի հերոս շարքի տղթք. Մ. Գասելեան ոչ եւս է, Բուենոս Այրես, «Լոր Հաճըն», 1969, հ.1-2

ԳԱՍԴԱՐԻ ՈՐԴԻ ՀՍԿՈՔ

Ծնվել է մոտ 1890թ., Եդեսիայի նահանգի կենտրոն Եդեսիա քաղաքում:

Եղել է բժշկական վարժարանի Ե կարգի (5-րդ կուրս) ուսանող:

Միաժամանակ աշխատել է Իփիքիսանեի հիվանդանոցում:

Մահացել է 1916թ. հունվարի 29-ին՝ մոտ 25 տարեկանում:

Նրա մասին.
Հայ բժշկության տուած

զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

ԳԱՎԱՅՑԱՆ (ԳԱՅԱՅՑԱՆ) ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (ՎԱՀԱՆ, ՎԱՀՐԱՄ) ՄԻՆԱՍ

Ծնվել է 1885թ., Բրուսայի նահանգի Նիկոմիդիայի գավառակի կենտրոն Նիկոմիդիա քաղաքում կամ Կոստանդնուպոլսում, հայ առաքելական ընտանիքում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի ազգային վարժարանում:

Ավարտել է ամերիկացի միսիոներների Բրուսայի նահանգի Նիկոմիդիայի գավառակի Պարտիզակ (Բաղչեջիկ) ավանի բարձրագույն վարժարանը (պաշտոնական անունով՝ Բյուբանիայի բարձրագույն վարժարան):

1911թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1911թ. վերադարձել է Նիկոմիդիա և բժիշկ աշխատել:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուն պես զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել Երզնկայի Ազիզիեի զինվորական հիվանդանոցում, որի բժշկապետն էր հայաստաց թուրք դոկտոր Սանի Յավերը: Սրա հրամանով էլ 1915թ. հունիսի

սի (կամ հուլիսի) 10-ին նույն հիվանդանոցում (կամ դրա բակում) սրախողխող է արվել մոտ 30 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

3. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պեյրուք, 1965:

4. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

5. Զեստենեան Հրաչ, Պեյրուքի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ Եւ Մեծ Եղեռնին Նահատակուած Հայ Բժիշկներ, “Ազդակ”, 01-11-2012

ԳԱՐԱՄԱՆՅԱՆ

Ունեցել է բարձրագույն բժշկական կրթություն և աշխատել բժիշկ:

1917թ. դուստրը՝ Աղավնին, գտնվել է Ագտաղ Մատեն քաղաքում, իսկ որդին՝ Լուրթֆիկը՝ Կ. Պոլսում:

1917թ. սպանվել է:

Նրա մասին.
1. Պաղտիկեան Գրիգոր, Տարագրի Մը Ճամբան. Ապրոււմներ Եւ Յուշեր 1912-

1918, „Պայքար”ի մէջ որպէս թերթօն հրապարակուած է խմբագրապետ Հրաչ Երուանդի կողմէ, Ֆրեզնո, 1958, 303 էջ

2. Իսկահատեան Հ., Վկայարան հայկական ցեղասպանութեան, Գիրք Գ, Պեյրուք, 2011, 395 էջ

ԳԵՆՁՅԱՆ ՄԻՐԶԱ

Ունեցել է բժշկական կրթություն և աշխատել բժիշկ:

1915թ. ապրիլի 11-13-ը Իթթիհադի առաջին զոհերն եղան 600 հայ մտավորականները, որոնց մեջ էին բժիշկներ Լազարեթ Տաղավարյանը, Վահրամ Թորգոմյանը, Կարապետ Փաշայանը, Միրզա Գենջյանը, Հակոբ Լարկիլեջյանը, Տիգրան Ալլահվերդին և ուրիշներ:

Նրա մասին.
Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

ԳԵՎՈՐԳ ԷՅԵՆԴԻ

Ծնվել է 1894թ., Հալեպում:

1911-14թթ. սովորել է Դամաս կոսի համալսարանի բժշկական ֆակուլտետում: 1914թ. Առաջին համաշ-

խարհային պատերազմն սկսվելու պատճառով, լինելով համալսարանի 3-րդ կուրսի ուսանող, զորակոչվել է օսմանյան բանակ և 4-րդ բանակի սանիտարական գնդում զինվորական բուժակ ծառայել:

Մահացել է 1915թ. հոկտեմբերի 18-ին՝ 21 տարեկանում:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ ԷՅԵՆԴԻ

Ծնվել է Տիգրանակերտի նահանգի Տիգրանակերտի գավառի Չնգուշ ավանում:

Բարձրագույն դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

1909թ., երբ Խարբերդ և Մեզիրե քաղաքների արանքում կառուցվել ու բացվել է հայասեր դոկտոր Հերբերտ Էտկինսոնի նոր և ժամանակակից հիվանդանոցը, Մարտիրոսն ընդունել է դրա հարուստ դեղատան վարիչի պաշտոնը:

1915թ. դեկտեմբերի 23-ին մահացել է դոկտոր Էտկինսոնը և հիվանդանոցի կառավարումն անցել է տի-

կին Էտկինսոնի ձեռքը: Մի քանի օր անց թուրք ոստիկանները շրջապատել են հիվանդանոցը և ձերբակալել ու տարել 15 երիտասարդների, այդ թվում՝ Մարտիրոսին:

Տիկին Էտկինսոնը գիշերով, իր հետ վերցնելով 9-ամյա որդի Հենրիին, գնացել է ոստիկանապետի մոտ և ամեն ջանք թափելով ազատել բոլոր ձերբակալվածներին ու հիվանդանոց վերադարձրել:

Նրա մասին.

Ճիգմեճեան Մանուկ, Խարբերդ եւ իր գաւակները, Ֆր



ԳԵՎՈՐԳՅԱՆ (ԳԵՎՈՐԳՅԱՆ) ԼԵՎՈՆ

Բժիշկ, հոգեբան:

Ծնվել է մոտ 1885թ., Կոստանդնուպոլսի Սամաթիա քաղամասում:

1908թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

1908-12թթ. ներքին հի-

վանդությունների բաժնի մնայուն օգնական բժիշկ է աշխատել Կ. Պոլսի սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցում:

1909թ. Կիլիկիայի աղետից հետո «Կարմիր խաչի» բժշկական խմբի հետ մեկնել է Ադանա և բազմաթիվ վիրավորներ բուժել:

Հայ հեղափոխական դաշնակցության դարասկզբի հայտնի գործիչներից է: Եղել է ՀՅԴ Կ. Պոլսի պատասխանատու մարմնի (կենտրոնական կոմիտեի) անդամ:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և ծառայել Բրուսայի նահանգի Բանդրմա քաղաքի զինվորական հիվանդանոցի զինվորական բժիշկ՝ փոխ-բժշկապետի պաշտոնով:

1918թ., Բանդրմայում մահացել է ժանտախտից՝ մոտ 33 տարեկանում:

Ըստ այլ տպագիր աղբյուրների՝ զոհվել է օսմանյան բանակի կազմում:

Նրա մասին.

1. Թերգեան Յակոբ Յ., Կիլիկիոյ աղետը, Կ. Պոլիս, 1912:

2. Հայ բժշկության տուճած գոհերը, ցուցակագրուճ վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

3. Ազգային հիւանդանոցի մէջ պաշտօնավարած

բժիշկները, Ընդարձակ տարեգիրք Ազգային հիւանդանոցի, Իսթանպուլ, 1939:

4. Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ալբոմ-ատլաս, Ա. հատոր, Դիւցազնամարտ, 1890-1914, Լոս Անճելըս, 1992:

5. Գրիգորյան Սասուն, «Հավերժության լուսամատը»



ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍԻՄՈՆ

Գրվում է նաև Գրընյան տարբերակով:

Ծնվել է 1848թ. փետրվարի 16-ին, Սեբաստիա նահանգի Եվդոկիա գավառի կենտրոն Եվդոկիա քաղաքում:

Մանուկ հասակում կորցրել է հորը և մոր հոգատարությամբ դաստիարակվել:

Մայրը ամերիկացի միսիոներ վերապատվելի դոկտոր Հենրի Ջոն վան Լեննեփի քարոզների ազդեցության տակ հարել է ավետարանականությանը, կարդալ սովորել, սակայն նա ևս

վաղաժամ մահացել է:

Երկու որբերը մնացել են քեռու խնամքին:

Շուտով Սիմոնը վան Լեն-նեփի խորհրդով սովորել է ամերիկացի միսիոներների Մարզվանի Անատոլիա քոլեջում, այնուհետև՝ նույն քոլեջի աստվածաբանական բաժնում:

Ավարտելուց հետո դարձել է քարոզիչ և մի քանի տարի ձիով գյուղեգյուղ ճամփորդելով ծառայել է ավետարանականության քարոզչության:

Մի քանի տարի հետո դարձյալ դոկտոր Հենրի Ջոն վան Լեննեփի օժանդակությամբ մեկնել է ԱՄՆ՝ բարձրագույն կրթություն ստանալու:

Այստեղ ավարտել է Բոստոնի բարձրագույն վարժարանը և Ֆիլադելֆիայի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Այնուհետև տեղափոխվել է Անգլիա և 9 ամիս Լոնդոնի հիվանդանոցներում աշխատել:

Վերադառնալով Կ. Պոլիս, Օսմանյան կայսերական բժշկական վարժարանում քննություն է հանձնել և բժշկի վկայական ստացել:

Կ. Պոլսում ամուսնացել է գմյուռնիացի Լուսի Կարապետյանի հետ և վերադարձել իր ծննդավայր Եվդոկիա: 1880-ական թվականներ-

րից Եվդոկիայում բժիշկ է աշխատել:

Լինելով գաղափարական մարդ, այստեղ ևս շարունակել է զբաղվել հոգևոր կյանքով, մեծահասակների համար կարդացել կիրակնօրյա դասախոսություններ: Իր արժանի տեղն է ունեցել Եվդոկիայի Ավետարանական եկեղեցու պատմության մեջ:

Եղել է սիրված և հարգված բժիշկ ինչպես քրիստոնյաների, այնպես էլ մահմեդականների ու հրեաների շրջանում: Պատմել են, որ աղքատներին բուժել է ձրի, հաճախ դեղերը նրանց տվել է անվճար, երբեմն էլ նույնիսկ սննդի փող է տվել:

Օրերից մի օր հեղափոխականներն առևանգել են նրան: Կինը, փրկագին վճարելով, ազատել է: Այդ դեպքից հետո բժիշկն անմիջապես հեռացել է Եվդոկիայից՝ կառավարությանը հայերի անուններ հայտնելու պարտավորված չլինելու և նրանց ձերբակալության պատճառ չդառնալու համար:

Տեղափոխվել է ԱՄՆ և մի քանի տարի բժիշկ աշխատելուց հետո կրկին վերադարձել Եվդոկիա:

1903թ. հոկտեմբերին ընտանիքով վերջնականապես տեղափոխվել է ԱՄՆ և հաստատվել Ֆրեզնո քաղաքից 5 մղոն հեռու գտնվող մի ազա-

րակում:

Ծառայել է Ֆրեզնոյի Հայ երիցական եկեղեցու հոգևոր հովիվ:

Մահացել է 1922թ. մարտի 14-ին՝ 74 տարեկանում:

Նրա մասին.

1. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

2. Ալաոյաճեան Ա., Պատմութիւն Եւդոկիոյ հայոց, Գահիրէ, 1952:

3. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ԳԸՐՄԸԳՈՒԼԱՆՑԱՆ ԵՍԱՅԻՏԵՆ՝ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԵՍԱՑԻ

ԳՅՈՒՋՅԱՆ (ԳՅՈՒՋՅԱՆ) ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐԻ

Ծնվել է 1891/1893թ., Ադա-նայի նահանգի Կոզանի գավառի Սիս քաղաքում:

1907թ. նախնական կրթությունն ստացել է Սիսի՝ Հովհաննես Խերոյանի դեկավարած Ազգային վարժարանում:

1907-10թթ. սովորել է ամերիկացի միսիոներների Տարսոնի Սեյնթ Պոլ քոլեջում:

1910-14թթ. սովորել է Բեյրութի Սեն Ժոզեֆ Ֆրանսիա-

կան համալսարանի բժշկական ֆակուլտետում:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելու պատճառով զորակոչվել է օսմանյան բանակ և գինվորական օգնական բժիշկ ծառայել:

Սիրիայում մեծ օգնություն է ցուցաբերել հայ տարագիրներին:

Բանակի հետ զանազան վայրերում ծառայելուց հետո երուսաղեմի ռազմաճակատում գերի է ընկել անգլիացիներին, որոշ ժամանակ բանտարկվել Սեյդի Բեշիրի բանտում:

Ազատվելուց հետո անգլիական բանակում օգնական բժիշկ է ծառայել:

Այնուհետև մի քանի տարի աշխատել է Կ. Պոլսում, Բեյրութում, Մերսինում:

Անգլիացիների՝ Կիլիկիան թողնելուց քիչ հետո տեղափոխվել է Կիպրոս, այստեղից էլ՝ Ֆրանսիա:

Երկու տարի Ֆրանսիայի տարբեր բժշկական հաստատություններում կատարելագործել է բժշկական գիտելիքները:

1921թ. Փարիզում ստացել է բժշկի վկայական (Diplome superieur d'hygiene), որին արժանացած առաջին հայն է իբրև մանկաբարձ, կանանց և մանկանց հիվանդությունների մասնագետ:

1948թ. դրությամբ բնակվել

Ե Կիպրոսի Լառնակա քաղաքում և եղել ճանաչված ու հարգված բժիշկ:

Դպրոցական տարիներից ի վեր սեր է ունեցել դեպի գիրգրականությունը:

1909թ. Կիլիկիայի կոտորածների առթիվ գրած իր բանաստեղծությունների ժողովածուն հրատարակել է «Եստա» ծածկանունով:

Բժշկական հանրամատչելի հոդվածներով թղթակցել է հունահայ պարբերական մամուլին, եղել թերթի խմբագիր:

Սպանվել է 1944թ. ապրիլի 14-ին, Աթենքում 52 տարեկանում:

Աշխատությունը.

Ցուրտ կիթառ, Ստամբուլ, 1909:

Նրա մասին.

1. Զեյլեշեան Միսաք, Սիս-Մատեան, Պէրոլթ, 1949:

2. Հովակիմյան Բ., Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005:



ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ ԱԲԵԼ

ԲԱՐՍԵՂԻ

Ծնվել է 1879թ. Անկարայի Նահանգի Կեսարիայի գավառի Թալաս ավանում:

Վաղ տարիքում տեղափոխվել է Սեբաստիայի Նահանգի Ամասիայի գավառի կենտրոն Ամասիա քաղաքը:

Նախնական կրթությունն ստացել է Ամասիայի թաղային վարժարանում:

1896թ. ավարտել է Կեսարիայի սբ. Կարապետ վանքի ժառանգավորաց վարժարանը:

1898-1903/04թ. սովորել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանում:

1904թ. նշանակվել է իր ծննդավայր Թալասի քաղաքապետական բժիշկ:

Այնուհետև Չմյուռնիայի Նահանգի Տավաս գավառակի թաղապետական բժիշկ է աշխատել:

Հետագայում Կոնիայի, Ալսարայի քաղաքապետական բժիշկ և Սեբաստիայի Նահանգի Եվրոկիայի գավառի Էրպաս գավառակի բժիշկ է աշխատել:

1912-14թթ. գտնվել է Փարիզում, Բեռլինում, Վիեննայում և մասնագիտացել բժշկական տարբեր բնագավառների գծով:

Մասնավորապես Փարիզի Նեքերի և Լավուազիեի հիվանդանոցներում մաս-

նագիտացել է միզասեռական և վեներական հիվանդությունների գծով:

Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուց հետո զորակոչվել է Օսմանյան բանակ և Չորլուի, Հատըմքեռլի և Չանաքկալեի զորամիավորումներում զինվորական բժիշկ ծառայել:

1916թ. ուղարկվել է Գալիցիայի ռազմաճակատ, որտեղ ռուսական զորքի ձեռք գերի է ընկել:

1919թ., երբ արդեն ավարտվել էր պատերազմը, ազատվել է և վերադարձել Կ. Պոլիս:

Որոշ ժամանակ բժիշկ է աշխատել Կ. Պոլսի Միջագյուղ (Օրթագյուղ, Օրթաքեռլ), Բաիչե կափու, ապա՝ մինչև իր մահը՝ Թաքսիմի Թալիմխանե թաղամասերում, որտեղ ունեցել է իր մասնավոր դարմանատունը:

Չբաղվել է ներքին, միզասեռական և վեներական հիվանդությունների բուժմամբ:

Եղել է խոհեմ, պատվարժան մարդ, հոգատար ու հարգված բժիշկ: Չբաղվել է նաև հասարակական գործունեությամբ:

1926-27/28թթ. եղել է սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցի հոգաբարձության անդամ, իսկ 1928թ.-ին նաև՝ ատենապետ:

Մահացել է 1951թ., Կ. Պոլսում՝ 72 տարեկանում:

Ըստ Գասպար Կարոյանի հաղորդման՝ բժիշկը 1915թ. սեպտեմբերին Գալիցիայի ռազմաճակատում զոհվել է կամ ծանրորեն հիվանդացել ժանտախտով ու մահացել 36 տարեկանում: Կարոյանին հավանաբար հայտնի չի եղել բժշկի գերի ընկնելու և վերապրելու փաստը:

Նրա մասին.

1. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ., Գահիրէ, 1937:

2. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ. Այբուբենական համառոտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

3. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի Նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

4. Շիկահեր Վարդ, Կիսադարեան պատմութիւն թրքահայ բժշկութեան, 1923-1975, Իսթանպուլ, 1975:

5. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ ԳՐԻՊՈՐ

Ծնվել է 1887/90թ., Տրապիզոնի Նահանգի Սամսոն նավահանգստային քաղաքում/Սեբաստիայի

Նահանգի Սեբաստիայի գավառի Տիվրիկի գավառակի կենտրոն Տիվրիկ ավանում:

1914թ. գերեզանցության դիպլոմով ավարտել է Կոստանդնուպոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Բժիշկ է աշխատել: Եղել է հնչակյան կուսակցության անդամ, հասարակական-քաղաքական գործիչ:

1914թ. Առաջին աշխարհամարտի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և գնդապետի աստիճանով ուղարկվել Տրապիզոն:

1915 թ. զինվորական բժիշկ ծառայելու ժամանակ մի թուրք զինվոր խնդրել է իրեն զինվորական ծառայությունից ազատվելու կեղծ տեղեկանք տալ, ինչից բժիշկը հրաժարվել է:

Հաջորդ օրը այդ թուրք զինվորը դաշույնով սպանել է երիտասարդ բժշկին:

Այս մասին բանահավաք Վերժինե Սվազյանին պատմել է բժշկի եղբորորդին՝ Խորեն Գասպարի Գյուլբենկյանը (ծնվ. 1900թ., Տիվրիկում): Սակայն Վ. Սվազյանի մոտ, հավանաբար սխալմամբ, հիշատակված է Գևորգ անունով:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուժած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով,

Ստամբուլ, 1919:

2. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ. Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

3. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

4. Թեոդիկ, Յուշարձան Նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

5. Սվազյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն: Ականատես վերապրողների վկայություններ, Ե., 2000:

ԳՅՈՒՒԲԵՆԿՅԱՆ ԳՅՈՒՒԲԵՆ(Կ) ԳԵՎՈՐԳ

Ծնվել է 1888թ., Անկարայի Նահանգի Կեսարիայի գավառի Թալաս ավանում, հայ առաքելական ընտանիքում:

1903թ. “պսակավոր արվեստից” վկայականով ավարտել է Անատոլիա քոլեջը:

1907թ. ավարտել է Բեյրութի ամերիկյան համալսարանի բժշկական բաժինը:

1907-13թթ. բժիշկ է աշխատել Թալաս քաղաքում:

1914թ. սկսված Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառա-

յել:

1916թ. Կովկասյան (ռուսական) ռազմաճակատում սպանվել է մի թուրք հազարապետի գնդակով:

Նրա մասին.

1. Ալաօյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. հատոր, Գահիրէ, 1937:

2. Զեստենեան Հրաչ, Պէյրուքի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ Եւ Մեծ Եղեռնին Նահատակուած Հայ Բժիշկներ, “Ազդակ”, 01-11-2012

ԳՅՈՒՒՍԱՆՅԱՆ (ԿՅՈՒՒՍԱՆՅԱՆ)

Բժիշկ Մելքոն Գյուլիստանյանի ազգականն է:

Կրթությամբ և մասնագիտությամբ եղել է ատամնաբույժ:

Ապրել է Կոստանդնուպոլսում և աշխատել ատամնաբույժ:

1915թ. ապրիլի 11 (24)-ին ի թիվս բազմաթիվ ակնառու հայ մտավորականների (Ազգային դպրոցի տնօրեն Մարգաբետունի, դեղագործ Հակոբ Թերզյան, բժիշկ Միսաք Ճևեհիրճյան) ձերբակալվել է և բանտարկվել Կ. Պոլսի կենտրոնական բանտում, ապա արքորվել Զանդըրը:

Անունը փորագրվել է Զանդըրը բանտում հավաքված համրիչի 99 հատիկներից

մեկի վրա:

Վերապրել է և ատամնաբույժ աշխատել:

Նրա մասին.

1. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Վիեննա, 1922:

2. Մազմանեան Վրոյր, Յուշեր Եւ Վկայութիւններ, Անթիլիաս, 1991, 345 էջ

3. Պալաքյան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Երևան, 1991:

4. Ավագեան Կարինե, «Զանդըրը 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդես Ամսօրեայ», 2008, հ. 1-12

5. Իսկահատեան Հարութիւն, Վկայարան Հայկական Ցեղասպանութեան, Գիրք Բ., Պէյրուք, 2011, 352 էջ

ԳՅՈՒՒՍԱՆՅԱՆ ՄԵԼՔՈՆ

Բարձրագույն բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել:

1915թ. ապրիլի 11 (24)-ին ի թիվս բազմաթիվ ակնառու հայ մտավորականների ձերբակալվել է և բանտարկվել Կ. Պոլսի կենտրոնական բանտում:

1915թ. ապրիլի 12-ին, ձերբակալված բազմաթիվ հայ մտավորականների հետ գնացքով տեղափոխվել է Այաշ ավանի ծայրամասի

բլրի վրա գտնվող Սարը կըշ-
լա հին զորանոց-բանտը և
մի քանի ամիս պահվել այն-
տեղ:

Անունը փորագրվել է
Չանդրըրի բանտում հա-
վաքված համրիչի 99 հա-
տիկներից մեկի վրա:

Մեկ այլ վարկածով Այա-
շից վերադարձել է Կ. Պոլիս:
Վերապրել է, բնակվել Կ.
Պոլսում և բժիշկ աշխատել:
Նրա մասին.

1. Պալաքան Գրիգորիս
ճ. վրդ., Հայ գողգոթան, Վի-
եննա, 1922:

2. Պալաքյան Գրիգորիս
ճ. վրդ., Հայ գողգոթան, Երև-
ան, 1991:

3. Ավագյան Կարինե,
Եղեռնահուշ մատուցել կամ
խոստովանողը և վկայք խա-
չի, Երևան, 2002:

4. Ավագեան Կարինե,
«Չանդրըրի 1915 թ. ապրիլի
11, Յիշատակ»... Թանգարա-
նային ցուցանմոյշը, «Հան-
դես Ամսօրեայ», 2008, հ. 1-12

ԳՅՈՒԼԼԱՐՑՅԱՆ ԳՐԻԳՈՐ

Ծնվել է Կ. Պոլսի Թոփ կա-
փու թաղամասում:

Դեղագործական կրթու-
թյուն է ունեցել և դեղագործ
աշխատել:

Մահացել է 1918թ. ապրի-
լի 29-ին, ժանտախտից:

Նրա մասին.

Հայ բժշկուրթեան տուլած

զոհերը, ցուցակագրուած
վաւերական փաստերով,
Ստամբուլ, 1919:

ԳՅՈՒԼՅՈՒՇՅԱՆ (ԿՅՈՒԼՅՈՒՇՅԱՆ) ԳԵՎՈՐԳ ԷՅԵՆԴԻ

Ծնվել է 1840-ական թթ.,
Հալեպի նահանգի Մարաշի
գավառի կենտրոն Մարաշ
քաղաքում:

Դավանանքով եղել է
ավետարանական (բողոքա-
կան):

Նախնական կրթությունն
ստացել է ծննդավայրում:

Գործնական (ոչ ակադե-
միական) բժշկական կրթու-
թյուն է ստացել:

Եղել է Մարաշի թաղապե-
տական բժիշկը:

Եղել է „արժանավոր“ և
„փորձառու“ բժիշկ:

1890թ. հնդախտով (խո-
լերա) վարակված և անհույս
հիվանդ Սմբատ Բյուրատի
(գրող և հրապարակախոս,
1862-1915) և ուրիշ շատե-
րի կյանքը փրկել է «Համին
միքսչըր» դեղով:

1890թ. քաղաքական
պատճառներով ինքն ու իր
հղի կինը բանտարկվել են
Մարաշի բանտում, որտեղ
օգնել է իր կնոջը ծննդաբե-
րելու:

Եղել է ազնիվ, բարի,
անձնվեր, իր գործը լավ
իմացող անձնավորություն:

Ժողովուրդը նրան կոչել է
«հիվանդների հայրիկ»:

1895թ. սպանվել է Մարա-
շի հայկական ջարդի ժամա-
նակ „անօրեն և անխիղճ“
թուրք Հայտար աղայի կող-
մից, որը մի առիթով հայե-
րի շրջանակում այդ մասին
մանրամասնորեն պատմել
է „յոխորտանօք եւ պարծե-
նալով“:

Եղել է մոտ. 50 տարեկան:
Նրա մասին.

1. Բիւրատ Սմբատ, Բան-
տե բանտ, Կ. Պոլիս, 1910:

2. Գալուստեան Գրիգոր
Հ., Մարաշ, Նիւ Եորք, 1934:

3. Գալուստեան Գրիգոր
Հ., Մարաշ կամ Գերմանիկ
եւ հերոս Չէթուն, Նիւ Եորք,
1988:

4. Մարաշի Տէր Ղեւոնդ
քահանայի յուշերը, Ե., 2013,
464+16 էջ:

ԳՅՈՒՐՃՅԱՆ (ԿՅՈՒՐՃՅԱՆ, ԿԵԼՃՅԱՆ) ԳԱՐԵԳԻՆ

Ծնվել է 1885թ., Խարբեր-
դի նահանգի կենտրոն Խար-
բերդ քաղաքում:

Դեղագործական կրթու-
թյուն է ունեցել և Մելիտինե-
ում դեղագործ աշխատել:

Սպանվել է 1915թ., Մե-
լիտինեի ճանապարհին՝ 30
տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկուրթեան տո-
ւած զոհերը, ցուցակագրու-

ւած վաւերական փաստե-
րով, Ստամբուլ, 1919:

2. Յուշամատեան Մեծ
Եղեռնի (1915-1965), պատ-
րաստեց Գերսամ Ահարոնե-
ան, Պէյրուք, 1965:

3. Թեոդիկ, Յուշարձան
Նահատակ մտաւորակա-
նութեան, Բ. տպագրութիւն,
Երեւան, ապրիլ 24, 1985:

4. Հայրապետյան Վանիկ,
Էջեր Հայաստանի դեղագոր-
ծության պատմությունից,
Երևան, 1990:

5. Ցուցակ Հայոց ցեղաս-
պանության զոհերի (1915-
1923թթ.), հ. 2, Խարբերդի
նահանգ, Երևան, 2004:

ԳՅՈՒՐՃՅԱՆ ԳԵՎՈՐԳ

Ծնվել է 1860թ., Խարբեր-
դի նահանգի կենտրոն Խար-
բերդ քաղաքում:

Դեղագործական կրթու-
թյուն է ունեցել և դեղագործ
աշխատել:

1914թ. Առաջին համաշ-
խարհային պատերազմի
ժամանակ զորակոչվել է օս-
մանյան բանակ և զինվորա-
կան դեղագործ ծառայել:

Սպանվել է 1915թ.,
Բաբերդում՝ 55 տարեկա-
նում:

Նրա մասին.

1. Հայ բժշկուրթեան տո-
ւած զոհերը, ցուցակագրուած
վաւերական փաստերով,
Ստամբուլ, 1919:

2. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

3. Թէոդիկ, Յուշարձան Նահատակ մտաւորակաւորեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

4. Հայրապետոյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործութեան պատմութիւնից, Երեւան, 1990:

5. Խաչատրոյան Լուսինե և Բաբլումյան Արփիհնե (կազմողներ), Յուշակ Հայոց ցեղասպանութեան զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի Նահանգ, Երեւան, 2004:

ԳՈՅՈՒԹՅԱՆ ՄԻՍՈՒ

Ծնվել է Խարբերդի Նահանգի կենտրոն Խարբերդ քաղաքում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական դեղագործ ծառայել:

1915թ. սպանվել է Մուշ քաղաքի Խոփ (Զոբ) լեռան վրա:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

3. Թէոդիկ, Յուշարձան Նահատակ մտաւորակաւորեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

4. Հայրապետոյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործութեան պատմութիւնից, Երեւան, 1990:

5. Խաչատրոյան Լուսինե և Բաբլումյան Արփիհնե (կազմողներ), Յուշակ Հայոց ցեղասպանութեան զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի Նահանգ, Երեւան, 2004:

ԳՐԱԹԵՅԱՆ ՍԱՀԱԿ

Ծնվել է 1867թ., Սեբաստիայի Նահանգի կենտրոն Սեբաստիա քաղաքում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

Սեբաստիայում ունեցել է սեփական «Գրաթղթան» դեղատունը, որտեղ աշխատել է դեղագործ Գրիգոր Թաթարյանը:

1880-1905թթ. 25 տարի եղել է Սեբաստիայի Ազգային հիվանդանոցի դեղագործը և շատ բան արել հիվանդանոցի դեղատան և բուժարանի կազմավորման համար:

Վայելել է քաղաքի բնակ-

չութեան հարգանքն ու վստահութիւնը, հատկապէս թուրք պաշտոնյաների շրջանում:

Նրան ավելի էին վստահում, քան որևէ բժշկի և դիմում էին խորհուրդներ ու բուժում ստանալու խնդրանքով:

Եղել է հնչակյան կուսակցութեան անխոնջ անդամ:

Սպանվել է 1915թ., Սեբաստիայից դուրս՝ 48 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Գուժկան Սեբաստիոյ (Կարապետ Գաբիկեան), Եղեռնապատում Փոքուն Հայոց եւ Նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն, 1924:

3. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

4. Թէոդիկ, Յուշարձան Նահատակ մտաւորակաւորեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

5. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահութեան ծառայութեան մեջ և պատմութիւնը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերէն), Ստամբուլ, 2001:

6. Խաչատրոյան Լուսինե և Բաբլումյան Արփիհնե (կազ-

մողներ), Յուշակ Հայոց ցեղասպանութեան զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի Նահանգ, Երեւան, 2004:

ԳՐԱԾԵԱՆ ԳԵՎՈՐԳ Ս.

1906 թ. ավարտել է Բեյրութի ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Սպանվել է Թուրքիայում իրագործված Մեծ Եղեռնի ընթացքում:

Նրա մասին.

Քեստենեան Հրաչ, Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ եւ Մեծ Եղեռնին Նահատակուած Հայ Բժիշկներ, “Ազդակ”, 01-11-2012

ԳՐԻԳՈՐԻՍ

Ծնվել է Չանդըրըում:

Կոնիացի բժիշկ Տատիի դեղատանը և բժիշկ ժամկոչանի մոտ է աշխատել:

Ձերբակալվել է Չանդըրըում և Դէյր-Էլ-Չոր քաղաքով:

Հասել է մինչև Աբու Հարի անապատը և սպանվել այդտեղ:

1916թ. Աբու Հարի անապատում սև ռետինկոթ ֆրակը և սպիտակ օսլայած վերնաշապիկը հագին, ընկած է եղել մեքքի վրա, գանգը ճակատի կողմից բացված և ուղեղը

դուրս ընկած: Կողքին ընկած է եղել սև տետրակը, որը գտել են անապատում հանգրվանած հայ մանչուկները: Տետրակում գրի է առել իր հետ կատարվածը, որի վերջին տողերն են. «... գիշերային լուսնի լոյսով, ետ դեպի Հալեպ գարտուղի ճանապարհով հետիոտն քալելով ինքզինքս մեծ սպանդեն ազատել որոշած եմ»:

Նրա մասին.

Մ Ե ր ո թ Ե ան Յ ա կ ո թ Ա., Եղեռնի յուշերս, Պեյրուք, 2005:

ԳՈՒՑՈՒՄՃՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Ծնվել է Կարինի նահանգի Բաբերդի (Բայբուրդ) գավառի կենտրոն Բաբերդ քաղաքում:

Դեղագործական կրթություն է ունեցել և Մեյխոնեում դեղագործ է աշխատել:

Սպանվել է 1915թ., Մեյխոնեում կամ քաղաքից դուրս:

Արսեն Յարմանի գրքում հիշատակվում է ոմն Հովհաննես Գույումճյան, որը 1894-1921թթ. Կարինում ունեցել է սեփական դեղատուն: Սակայն չենք կարող պնդել, որ նույն մարդն է:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ.

Պոյիս, 1919:

2. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պեյրուք, 1965:

3. Թեոդիկ, Յուշարծան նահատակ մտաւորակաւուքեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

4. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Ե., 1990:

5. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ԳՈՒՆՏԱԳՃՅԱՆ ՍԱՍՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Ծնվել է հավանաբար 1875թ., Ադանայի նահանգի Ջեբել-Բերեքեթի գավառի Հասանբեյի գյուղում, ավետարանական ընտանիքում:

Հայրը, պապը և նախնիները եղել են հրացանի խզակոթ պատրաստող վարպետներ՝ գունդակչիներ և զինագործներ:

Գունտագճյան (Հովնանյան) Ֆիլիպի ավագ եղբայրն է:

Բարձրագույն բժշկական կրթությունն ստացել է արտասահմանում (Ֆրանսիա

?) : Հասանբեյի ընտանիքում բժիշկ է աշխատել: Ունեցել է Լյուդվիգ, Ասատուր և Բյուզանդ որդիներ:

1914թ. մեկ ամիս բուժել է մի թուրք փաշայի կնոջ կոտրված ոտքը / ձեռքը: Վերջում փաշան հարցրել է. «Գյավո՛ւր, ազգանունդ ի՞նչ է», և իմանալով, որ բժիշկը հայ զինագործների գերդաստանից է, գայրացել է, հանել յաթաղանն ու մի հարվածով կտրել գլուխը և ոտքով հարվածել իրենից հեռու: Հարագատները բժշկի մարմինը թաղել են առանց գլխի, որն այդպես էլ չեն գտել:

Նրա մասին.

Թոռան՝ երևանաբնակ թուրքագետ և ազգագրագետ Զեթի Ասատուրի Գունտագճյանի պատմածը, 12-01-2009:



ԳՈՒՆՏԱԳՃՅԱՆ

(ՀՈՎՆԱՆՅԱՆ) ՖԻԼԻՊ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Ծնվել է 1880թ., Ադանայի նահանգի Ջեբել-Բերեքեթի գավառի Հասանբեյի գյուղում:

Հայրը, պապը և նախնիները եղել են հրացանի խզակոթ պատրաստող վարպետներ (գունդակչի, որտեղից էլ առաջացել է ազգանունը) և զինագործներ:

Ընտանյոք ավետարանական են եղել:

Երկրորդական ուսումն ստացել է, նյութական դժվարությունների գնով, ամերիկացի միսիոներների Տարսոնի Սեյնթ Պոլ քոլեջում:

1907թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1907-09թթ. աշխատել է Այնթապում ամերիկացի անվանի բժիշկ դոկտ. Շեփրդի հետ:

1909թ. վերադարձել է ծննդավայր Հասանբեյի և բժիշկ, մտավոր գործիչ ու քարոզիչ աշխատել:

1912-19թթ. գեհեմական փոթորիկների շրջանում եղել է Բաղդադի գերմանական երկաթուղագծի բժիշկը:

1914-18թթ. Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում իր գիտե-

լիքները և եռանդը ներդրել է բազմաթիվ հայ գաղթականների կյանքերը փրկելուն: Դա պատճառ է հանդիսացել, որ թուրքական կառավարությունը նրան ամբաստանի և ձերբակալի՝ ինքնապաշտպանության նպատակով լեռները բարձրացող հայ ֆիդայիներին (չեթեներին) դրամ և պարեն հայթայթելու համար:

Ֆիլիպ Հովնանյանը բախտի բերումով ազատ է արձակվել Պատերազմական ատյանի նախագահի վճռով, որի տիկնոջը երկու տարի առաջ բուժել էր:

1919թ. տեղափոխվել է Հալեպ, որտեղ շահել է տեղի ողջ հայության համակրանքը:

„1922թ. սկսվում է Հեղվիգ Բյուլի հայասիրական գործունեության երկրորդ փուլը: Նա անդամագրվում է Ստրասբուրգ քաղաքում հիմնադրված „Քրիստոնեական առաքելություն Արևելքի մեջ“ ավետարանական մարդասիրական կազմակերպությանը և մեկնում Հալեպ: Այդ ժամանակ Սիրիայում կար ավելի քան 160 000 գաղթական, որոնք հիմնականում ապաստան էին գտել Հալեպի Սուլեյմանիե և Ռամատանիե արվարձաններում կառուցված հյուղակներում („Հայկական քեմի“) և ապրում էին

ծայրահեղ աղքատության ու թշվառության մեջ: Կենցաղային տարրական պայմաններից զուրկ հայ գաղթականության շրջանում խիստ տարածված էին վարակիչ զանազան հիվանդություններ, որոնք օրական հարյուրավոր մարդկային կյանքեր էին խլում: Անհրաժեշտ էր շտապ կերպով կազմակերպել հիվանդների փրկության գործը: Հալեպում Հեղվիգ Բյուլի նախաձեռնությամբ բացվում է հիվանդանոց, որտեղ աշխատում են Սիրիայի նշանավոր հայ բժիշկները (Ավետիս Ճեպեճյան, Ֆիլիպ Հովնանյան և այլն)՝:

„1932-ին Հալեպի ազդեցիկ ու հեղինակալոր Առաջնորդը՝ Տ. Արտաւազդ Արք. Սիւրմէյեան, քաջ հովիւ՝ Տ. Ներսէս Ա. Զինյ. Թաւուզճեան, Երուսանդ Զօրեան, ԲԺ. Ֆիլիպ Յովնանեան, ԲԺ. Արմենակ Ապուհայաթեան, ԲԺ. Բարսեղ Սեւեան, կը հիմնեն Հ.Ե.Ը.-ի Հալեպի Մասնաճիւղը, քանի մը տասնեակ չափահաս որբերով ու Այնթապու Կրթասիրաց Երիտ. Միութեան անդամներով՝:

„1935-36 տարեշրջանին Հալեպի Պոսթան Փաշաթաղամասէն 827 ընտանիք այս վերքերը ունեցած են: Այդ օրերուն թաղամասի բնակչութեան մեծ տոկոսը հայերը կը կազմէին: Հայ

բժիշկներ՝ Ֆիլիպ Յովնանեան, Յ. Ենիգոմիշեան ու Ռոպեր Ճեպեճեան, օգնութեան փութացին թաղի բնակիչներուն ու ծառայեցին անոնց ամբողջ երկու տարի՝:

Եղել է Ռամկավար ազատական կուսակցության ղեկավարներից:

1936թ. մի արաբ հիվանդի թոքը վիրահատելիս պատահաբար վնասել է սեփական մատը և արյան վարակման հաջորդող 5-րդ օրը՝ 1936թ. հունիսի 1-ին մահացել Հալեպում 56 տարեկանում:

Հուղարկավորությունը կատարվել է մեծ շուքով: Հայ և արաբ մտավորականներ դազադի վրա դամբանական ճառեր են ասել:

Սիրիայի նախարարների խորհրդի որոշումով հետմահու պարգևատրվել է Սիրիայի պետության Գ կարգի պատվանշանով:

Հետմահու հիմնվել է ՌԱԿ «Ֆիլիպ Հովնանյան» ակումբը:

Պատմել են, որ մի օր բժշկին հրավիրել են Ամանոսի լեռներում ապրող մի հիվանդի մոտ: Նա անմիջապես ճանաչել է իր Տիգրան եղբորն սպանող թուրք ոճրագործին: Վրիժառությունն ու պարտականությունը փոթորկել են հոգին: Սակայն ի վերջո նա բուժել է

եղբորն սպանողին: Նրա մասին.

1. Պոտուրեան Մկրտիչ, Հայ հանրագիտակ, Պուքրեշ, 1938:

2. Գրիգորյան Վ., Հայությանը նվիրված կյանք, Ե., 1996թ., 87 էջ:

3. Չարմիկի՝ երևանաբնակ թուրքագետ և ազգագրագետ Զեթի Ասատուրի Գունտագճյանի պատմածը, 12-01-2009:

4. Թորանեան Թորոս, Էջեր հայ եւ օտար բժշկութեան պատմութենէն, „Գանձասար“, 12-04-2012

ԴԱՎՈՒԴ

Բարձրագույն բժշկական կրթություն է ունեցել:

Կոստանդնուպոլսում բժիշկ (դոկտոր) է աշխատել: Աքսորվել է Կիլիկիա:

1909թ. ապրիլի 12-ին, հայկական ջարդերի ժամանակ, գտնվել է Կիլիկիայի Ադանայի սանջակի Միսիս ավանում:

Թուրք ոճրագործները հարձակվել են Միսիսի բնակիչ Եփրեմ աղայի տան վրա, որտեղ ապաստանել էին հայերը և այլ քրիստոնյաներ:

Դահիճները բոլորին դուրս են բերել ընդարձակ բակ և կոտորել:

Եփրեմ աղայի տանը ապաստանածների մեջ է եղել նաև «պոլսեցի մի աք-

սորական՝ դոկտոր Դավուդը, որը բավական դիմադրեց դահիճներին, բայց ի վերջո, ընկրկեց»:

Նրա մասին.

Սիմոնյան Հրաչիկ, Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909թ. ապրիլ), Երևան, 2009:

ԴԱՐԲԻՆՅԱՆ ԵՐՎԱՆԴ

Ծնվել է 1883թ., Սեբաստիայի Նահանգի Ամասիայի գավառի կենտրոն Ամասիա քաղաքում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

1915թ. ամռանը ձերբակալվել է:

Սպանվել է 1915թ. հունիսին, Ամասիայից ոչ հեռու՝ Հելվաճի Փունարում՝ 32 տարեկանում:

Նրա մասին.

1. Թեոդիկ, Գողգոթայի հայ հոգեւորականութեան, Նիւ Եորք, 1985:

2. Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի Նահանգ, Երևան, 2004:

ԴԱՐՊԱՅՅԱՆ ՀՐԱՆԴ Գ./Յ.

Դեղագործ, ազգային և հասարակական գործիչ:

Ծնվել է 1887թ., Կարի-

նում:

Ավարտել է Կարինի Արծնյան վարժարանը:

1908թ. ավարտել է Կոստան-դնուպոլսի Օսմանյան դեղագործական վարժարանը:

Կարինում, Եգիպտոսում և Կ. Պոլսում դեղագործ է աշխատել:

1914թ. Առաջին աշխարհամարտի ժամանակ ծառայել է օսմանյան բանակի 2-րդ զորաբանակի դեղապահեստում:

1918թ. անցել է Հայաստանի Հանրապետություն և ծառայել հայկական բանակում:

1920թ. հոկտեմբերի 30-ին Կարսի գրավման ժամանակ գերի է ընկել թուրքերին:

1922թ. վերջերը Վրաստանի ճանապարհով անցել է Կ. Պոլիս, ապա՝ Չանաքկալե, ապա՝ Հունաստանի Սալոնիկ քաղաքը, ուր բժիշկ Հ. Գալենտերյանի օգնական է աշխատել Խնամատարական առողջապահական ճյուղում:

Խնամատարությունը լուծարվելուց հետո պաշտոնավարել է Հայ Կարմիր խաչում:

Մի շարք ազգային պաշտոններ է վարել և եղել մի շարք միությունների վարչությունների անդամ:

Նրա մասին.

1. Պոտուրեան Մկրտիչ, Հայ հանրագիտակ, Պուլքրէշ, 1940:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքեր)



ԴԱՐՎԵՐ ԶԱՅԱՐ

Բժիշկ, ռենտգենաբան, պետական և հասարակական գործիչ:

Ծնվել է 1894թ., Ակն քաղաքում: Իսկական անունը եղել է Ռուբեն Չաքար Չաքարյան:

1894թ. ընտանիքով տեղափոխվել են Կոստանդնուպոլիս:

Ավարտել է Կ. Պոլսի Կոպկապըի ԼԼՈՆ-Վարդուհյան թաղային վարժարանը:

1911թ. ավարտել է Կ. Պոլսի Գումգաբուլի Պեզճյան Մայր վարժարանը:

Այնուհետև ուսումը շարունակել է Պարտիզակի Ամերիկյան քոլեջում:

1911-16/17 թթ. սովորել է Կ. Պոլսի համալսարանի բժշկական բաժնում:

1916/17-18թթ., երբ ընթանում էր Առաջին համաշխարհային պատերազմը, ծառայել է Օսմանյան բանակում, որպես զինվորական բժիշկ:

1919-22թթ. մեկնել է Փարիզ աշխատել ռենտգենաբանական բաժնի ասիստենտ և ձեռք բերել ռենտգենաբանի մասնագիտություն:

Փարզում աշակերտել է աշխարհահռչակ գիտնական ռադիոֆիզիկոս Մարիա Սկլադովսկայա-Կյուրիին:

1923-25թթ. և 1927-33թթ. աշխատել է Կ. Պոլսի Սուրբ Փրկիչ հայոց ազգային հիվանդանոցում, որպես ռենտգենաբանական բաժնի վարիչ:

1933թ. կատարելագործվել է ռենտգենաբանության գծով:

Եղել է ճանաչված մասնագետ, որի ռենտգենաբանական ճշգրիտ ախտաճանաչումների համբավը տարածվել էր երկրում և նրա սահմաններից դուրս:

Հմտացել է նաև ճառագայթաբուժության և ֆիզկաբուժության գծով:

Կ. Պոլսի Բեյոջուլ թաղամասում ունեցել է Նորագույն սարքավորումներով հագեցած սեփական ռենտ-

գենաբանական, ճառագայթաբուժության և ֆիզիկաբուժության օրինակելի բուժհիմնարկ:

Ձանազան առաքելություններով ճամփորդել է արտասահմանում, մասնակցել ճառագայթաբանների միջազգային գիտաժողովների, կարդացել գեկուցումներ, հրապարակել գիտական հոդվածներ:

Եղել է Ճառագայթաբանների միջազգային ընկերության անդամ:

1942-43թթ., երբ ընթանում էր Երկրորդ համաշխարհային պատերազմը, հարյուրապետի աստիճանով զորակոչվել է թուրքական բանակ և որպես զինվորական բժիշկ ծառայել Սեբաստիայում:

1949թ. մարտի 11-ին ընտրվել է Կ. Պոլսի Սուրբ Փրկիչ հայոց ազգային հիվանդանոցի 1949-51թթ. աշխատանքային շրջանի հոգաբարձության անդամ:

1950-54թթ. համատեղությամբ եղել է Կ. Պոլսի քաղաքապետական հանձնաժողովի անդամ:

1951թ. ապրիլի 23-ին կրկին ընտրվել է այդ հիվանդանոցի 1951-54թթ. աշխատանքային շրջանի հոգաբարձության անդամ:

Սակայն 1949/1951թ. վերջին ամիսներին, հրաժարվելով հոգաբարձության

անդամ լինելուց, ստանձնել է հիվանդանոցի տնօրենի պաշտոնը, որը վարել է մինչև 1954թ.:

Մեծ ջանքեր է գործադրել հիվանդանոցի նյութական, նյութատեխնիկական, տնտեսական և բուժական վիճակը բարելավելու գործում:

Գործուն մասնակցություն է ունեցել հիվանդանոցում հրատարակվող «Սուրբ Փրկիչ» տարեգիրքը որպես հանդես հրատարակվելու հարցում և հետևել, որ այն հագեցած լինի գիտական, գրական և գեղարվեստական հետաքրքիր նյութերով:

Բժշկական հանրամատչելի հոդվածներով ակտիվորեն թղթակցել է «Սուրբ Փրկիչ» հանդեսին:

Նրա աջակցությամբ հրատարակվել է «Դար» գրական հանդեսը, որի խմբագիրն էր տիկին Հերմինե Սինանյանը և որը արժանացել է ընթերցող լայն շրջանակների բարձր գնահատանքին:

Հեղինակ է նաև արձակ ստեղծագործությունների և պատմվածքների, որոնց տակ ստորագրել է «Ռ. Չաքարեան», «Չ. Քար»:

1954-57թթ. և 1957-60թթ., երկու շրջան՝ դեմոկրատական կուսակցության ցուցակով Կ. Պոլսից ընտրվել է Խորհրդարանի երեսփոխան:

Մեծ աջակցություն է ցուցաբերել Առողջապահության և ընկերային օժանդակության գործավարությանը, ինչպես նաև նախարարությունների աշխատանքներին:

Մշտապես պաշտպանել է իր համայնքի բնակչության և ընտրողների շահերը:

Եղել է ուղղամիտ, բարի, ժողովրդական անձնավորություն և վայելել պոլսահայ բոլոր խավերի սերն ու համակրանքը:

Տիրապետել է հայերեն, թուրքերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն լեզուներին:

1960թ. մայիսի 27-ին Թուրքիայում տեղի է ունեցել ռազմական հեղաշրջում, ինչի արդյունքում տապալվել է Դեմոկրատական կուսակցության իշխանությունը:

Դրան հաջորդել է շուրջ 600 պետական պաշտոնյաների և պատգամավորների ձերբակալությունը:

Ձերբակալվածների մեջ է եղել նաև հայ պատգամավոր Սկրտիչ Շելեֆյանը, որին առաջադրվել է մեղադրանք հակասահմանադրական գործողությունների համար: Նախկին քաղաքական վերնախավին տեղափոխել են Յասըադա (Եասըատա) կղզու բանտ, որտեղ էլ տեղի պիտի ունենային

դատավարությունները:

Ձերբակալվել է նաև մյուս հայ պատգամավորը՝ բժիշկ Չաքար Դարվերը:

Ինչպես հետագայում պատմել է Սկրտիչ Շելեֆյանը, Յասըադա կղզի տեղափոխվելու ժամանակ ուղեկցող զինվորներից մեկը հրացանով հարվածել է Չաքար Դարվերի գլխին և ստացված վնասվածքից նա մահացել է բանտում մեկ ամիս անց:

Մահացել է 1960թ. սեպտեմբերի 16/20-ին, Կ. Պոլսի (Ստամբուլ) Եասըադայի բանտում:

Բժշկի հարազատները դիակը ստանալիս վրան հայտնաբերել են բազմաթիվ կապտուկներ, ինչը վկայել է, որ բանտում գտնվելու ժամանակ նա ենթարկվել է դաժան ծեծի ու կտտանքների:

Մահվան պաշտոնական վարկածը եղել է հանկարծամահությունը:

Թաղվել է Կ. Պոլսի Պալլոք գերեզմանոցում:

Եղել է 66 տարեկան:

2011 թ. օգոստոսին Թուրքիայի վարչապետ Էրդողանը երկրի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ հիշել է «Եասըատայի մեջ դատապարտուած ու իր մահկանացուն կնքած նշա-

նաևոր հայ բժիշկ Չաքար Դարվերը: Ըսելով որ այս անձին ու միւսներուն պատճառաւ “Եասսըատա”ն դարձաւ “Եասլըատա” մը, սուգի կղզի: Վարչապետը յիշեց երեսփոխան Չաքար Դարվերի կողմէ խորհրդարանին մէջ կատարուած ճառագոյն սուրբին մը ուր ան ըսած էր որ այս երկրին մէջ ոչ-խլամները իրենց ճակատագիրը կապած էին իսլամ հայրենակիցներու ճակատագրին: Ասիկա լաւագոյն կերպով կը ցոլացներ այն միասնութիւնը, որուն մէկ օրինակը կապրինք այս գիշեր:

(Տքթ. Չաքար Դարվեր մօտիկ անցեալի ամէնէն նշանաւոր շողանկարի մասնագետն էր Թուրքիոյ մէջ, արժէքաւոր հայ մտաւորական մը, հայ մշակոյթի սիրահար մարդ, որ երեսփոխան ընտրուեցաւ անբախտ շրջանի մը, Ատնան ՄԷնտէրէսի հետ աքսորուեցաւ Եասսը Ատա, եւ հոն գրպարտութեան մը զոհ երթալով ծանր տանջանքներու ենթարկուեցաւ ու իր կեանքը կորսնցուց): “ՄԱՐՄԱՐՄ”, 29-08-2011 թ.

Նրա մասին.

1. Ամենուն Տարեգիրքը, Պէյրուք, 1961, 610 էջում:
2. Շիկահեր Վարդ, Կիսադարեան պատմութիւն թրքահայ բժշկութեան, 1923-1975, Իսթանպուլ, 1975, 121 էջ

3. Բախչիւնյան Ա., Հայագի գործիչներ, Ե., 2002, 472 էջ:

4. Մելքոնյան Ռուբեն, թուրքագետ, բան. գ. թ., դոցեն, Մկրտիչ Շելեֆյան. Վերջին հայ պատգամավորը Թուրքական խորհրդարանում, “ԱԶԳ”, 12-11-2011

ԴԵՄԻՐՃԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ

Ծնվել է Արևմտյան Հայաստանի Սեբաստիայի վիլայեթի Ազիզիեի գավառակի Բյունյան գյուղաքաղաքում:

Բժշկական կրթություն է ունեցել և Կ. Պոլսում բժիշկ աշխատել:

Եղել է ՍԴՀԿ-ի անդամ: 1915թ. Կ. Պոլսում ձերբակալվել է և բանտարկվել Դեպո բանտում:

Ի թիվս 36 ձերբակալվածների, տարվել է Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի Էվերեկ ավանի բանտը, որտեղ ենթարկվել է հարցաքննության: Այս խիստ հսկողության տակ տեղափոխվել է Կեսարիայի բերդը՝ դրվելով Պատերազմական ատյանի տրամադրության տակ:

Աքսորի ճանապարհին սպանվել է կամ մահացել ժանտախտից:

Նրա մասին.
Գալֆայեան Կարապետ աւագ քահանայ, Գիրք Ելից հայոց, Պէյրուք, 1955:

ԴԵՄԻՐՃԵԱՆ ՄԻՆԱՍ

Բժշկական կրթություն է ունեցել և Բաղէշի կենտրոնական հիվանդանոցի բժիշկ աշխատել:

Մահացել է 1915թ. հունիսի 2-ին, ժանտախտից:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած գրեհոռ. օտաւանաօոուած վս. Կ.



ԴԵՄԻՐՄԵՆՃԵԱՆ ԳՐԻԳՈՐ Ս.

Ծնվել է 1882թ., Բրուսայի նահանգի Նիկոմիդիայի գավառակի Օվաջըլ գյուղում:

1900թ. ավարտել է Օվաջըլի ազգային վարժարանը:

1907թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական համալսարանը:

Մի գիշեր թուրք լուսն Զեմալը Նրան ձերբակալել է ընկերոջ՝ Հակոբ Արսենյանի հետ՝ «Պրո-Արմենիա», «Դրօշակ», «Անահիտ» և այլ հեղափոխական թերթեր ընթերցելու մեղադրանքով: Նաև

ամբաստանվել է իբր վտանգավոր հեղափոխական և գաղտնի ռումբ պատրաստող:

Չինված ոստիկանների խս-տիվ հսկողությամբ, շղթայակապ տարվել են կենտրոնական բանտ, ուր, չգործած մեղքերի խստովանություն կորզելու համար, ստորացուցիչ հարցաքննությունների և ահավոր չարչարանքների են ենթարկված մնալուց հետո ազատ են արձակվել:

Ազատվելուց հետո Գրիգոր Դեյիրմենճյանն ուղարկվել է Մանասթըր և Գրչովա գավառի թաղապետական բժիշկ նշանակվել:

Այստեղ մի հեղափոխական կռվի ժամանակ վտանգավոր օրեր է անցկացրել:

1908թ. օսմանյան սահմանադրության վերահաստատումից հետո Կ. Պոլիս է տեղափոխվել: Որոշ ժամանակ անց տեղափոխվել է Յալովայի մոտ գտնվող և 1000 տնից բաղկացած զուտ հայաբնակ Չենկիլեր գյուղը և բժիշկ աշխատել: Այստեղ ամուսնացել է պարտիզակցի մանկապարտիզպանուհի օրիորդ Արաքսի Միքայելյանի հետ:

1911թ. հոկտեմբերին Սիվրիհիսարի թաղապետական բժիշկ է նշանակվել:

Այստեղ բժիշկը միաժա-

մանակ եղել է Սիվրիհիսարի վարժարանների հոգաբարձության և Օգնական միության ատենապետը, Լսարանի վարչության անդամ:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հրավիրվել է Անկարա և զորակոչվել օսմանյան բանակ՝ հարյուրապետի աստիճանով:

Սկզբում Կ. Պոլսում զինվորական բժիշկ է ծառայել:

1915թ. փետրվարին ուղարկվել է Սեզիրե և զինվորական ծառայությունն այնտեղ շարունակել:

Այդ ժամանակ արդեն Սեզիրե էին եկել «Թեշքիլաթ-ի մախսուսե»-ի («Հատուկ կազմակերպություն») արյունարբու չեթեները և սկսել 4000 անգեն ու անմեղ հայ զինվորականների ձերբակալություններն ու սպանությունները: Երանք այնուհետև ձերբակալել, բանտարկել ու սպանել են հարբերդի 400 հայ երևելիների, որից հետո մնացած հայությունը Եդեսիա է արտրվել:

Այդ դեպքերից մի քանի օր հետո Տիգրանակերտի ճանապարհին դաժանորեն սպանվել են հայ կաթոլիկ առաջնորդը, 5 հայ մայրապետներ և զինվորությունից ազատված 5 հայ բժիշկներ:

Այդ ընթացքում բժիշկ Գրիգորը 3 ամիս թաքնվել

է Կարինի հիվանդանոցում աշխատող և զինվորությունից չազատված բժիշկ Միքայել Բեշիշյանի ընտանիքի բնակարանում (Բեշիշյանն ու նրա ընտանիքի անդամները Սեզիրեում ապրելու արտոնված էին):

Ընդհանուր աքսորից առաջ բժիշկ Գրիգորի ընտանիքը Պարտիզակից եկել էր Սիվրիհիսար և, որպես բժիշկ-սպայի ընտանիքի անդամներ, գերծ մնացել աքսորից ու այդտեղ մնացել մինչև 1918թ.:

Այնուհետև բժիշկը Խարբերդից տեղափոխվել է Սեբաստիա և ծառայել տեղի հիվանդանոցում:

Սեբաստիայում ծառայելու ընթացքում կարողացել է Դեյր-Էլ-Չորի սպանդից ազատել իր ազգականներից 7-ին, սակայն ավելի քան 100-ը Լահատակվել են թուրքերի ձեռքով:

1918թ. զինադադարից հետո վերադարձել է Լիկոմոդիա, ուր զբաղվել է ազգային-հասարակական եռանդուն գործունեությամբ. եղել է Ազգային միության անդամ, վարժարանի հոգաբարձության ատենապետ, Հայաստանի օգնության կոմիտեի տեղի մասնաճյուղի և Հայ Կարմիր խաչի գանձապահ:

1922թ. հուլիսին քեմալականները Լիկոմոդիայի վրա մեծ հարձակում են գործել:

Գրիգորն ստիպված է եղել փախչել Միտիլի, այստեղից՝ Չմյուռնիա, ապա՝ Մանիսա:

1922թ. սեպտեմբերի առաջին օրերին սկսվել է Չմյուռնիայի աղետը և բժիշկը շոգեՆավով փախել է Միտիլի:

1922-23թթ. Միտիլիում եղել է դպրոցի հոգաբարձության ատենապետ և Գաղթականության հանձնաժողովի անդամ:

1923-26թթ. բնակվել է Հունաստանի հյուսիսային Թրակիա շրջանում:

1926-31թթ. ապրել է Հունաստանի Զոմոթինի քաղաքում և եղել նորաստեղծ Կապույտ խաչի ատենապետ և Գաղթականության հանձնաժողովի անդամ:

1931թ. տեղափոխվել է Դրամայի շրջան և այնտեղ հաստատվել:

Նրա մասին.

Տեր Յովհաննեսեան Գրիգոր, Պատմագիրք Սիվրի-Հիսարի հայոց, Պեյրուբ, 1965:

ԴԵՌՎԵԹՅԱՆ ԽԱՉԱՏՈՐԻ (ՏԵՎԼԵԹՅԱՆ ԽԱՉԻԿ)

Ծնվել է 1868թ., Անկարայի Լահանգի Կեսարիայի գավառի Էվերեկ գավառակի կենտրոն Էվերեկ ավանում, որի վաճառականությունը, ճարտարարվեստն ու կրթությունը հայերի ձեռքին էին: Հայրը՝ Դեովյեթ աղան, հայտնի վաճառական էր և առևտրական կապերով կապված

էր Կեսարայի ու Կարինի հետ (ըստ Ալպոյաճյանի՝ վիրաբույժ էր):

Նախնական կրթությունն ստացել է Էվերեկի ազգային վարժարանում:

Այնուհետև ավարտել է Մարզանի Անատոլիա քոլեջը, ապա՝ Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Այնուհետև մեկնել է ԱՄՆ և Փենսիլվանիայի համալսարանի (Ֆիլադելֆիա քաղաք) բժշկական ֆակուլտետում ուսանել, մասնագիտացել վիրաբուժության գծով և գործնական հմտություններ ստացել տեղի հիվանդանոցում:

Վերադառնալով ծննդավայր, եղել է տեղի միակ բժիշկը և կարճ ժամանակում հմուտ վիրաբույժի և սիրված ազգային գործչի համբավ ձեռք բերել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուն պես զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ-վիրաբույժ ծառայել Սեբաստիայի զինվորական հիվանդանոցում:

1915թ. հուլիսի 14-ին, Սեբաստիայից տարագրության ճանապարհին՝ Դերին դերեում («Խորը ձոր»), Սեբաստիայի հանրաճանոթ արյունարբու Լահանգապետ Մուամմերի հրահանգով սպանվել է անլուր չար-

չարանքների ենթարկվելով՝ 47 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Ալլաօյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ.Բ. Գահիրէ, 1937:

3. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի Նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

4. Հին եւ նոր Կեսարիա: Յուշամատեան, Փարիզ, 1989:

5. Շահբազյան Հ., Միրզոյան Ա., Ցուցակ Հայոց ցեղասպանութեան զոհերի (1915-1923թթ.), հ. 3, Անկարա 1966:



ԴԵՐԱՎԿՅԱՆ ՌՈՒԲԵՆ (ՓԱՅԼԱԿ)

«Խեղճ Փայլակ, Պոլսոյ մէջ թուրք ռեժիմը քո ճակատին գրել էր մահ, այդ ճակատագիրը քեզ հետեւեց Պոլսից Կադզուան, Կարսից Սիբիր, ապա Պարսկաստան եւ վերջը քեզ

զարկեց Վանայ գեղածիծաղ ափերին»:

Արամ Մանուկյան

Ծնվել է մոտ. 1860թ., Արևմտյան Հայաստանի Տարոն գավառում:

Տեղափոխվել է Կ. Պոլիս: Դեղագործական կրթութիւն է ստացել և դեղագործ աշխատել:

Զբաղվել է նաև բժշկութեամբ:

Եղել է ՀՅԴ անդամ: Հեղափոխական-կուսակցական ծածկանունը եղել է Փայլակ:

Արամ Մանուկյանի բնորոշմամբ՝ եղել է «հին մաքուր հեղափոխական» և «շիտակ մարդ»:

1890թ. Սարգիս Կուկունյանը Արևմտյան Հայաստանն ազատագրելու գործին մասնակցելու նպատակով մեկնել է Թիֆլիս և կազմակերպել 78 հոգանոց զինված ջոկատ, որի կազմում էր Փայլակը:

1890թ. սեպտեմբերի 22-ին ջոկատի անդամները փորձել են Ռուսաստանի կազմի մեջ մտնող Կարսի մարզից անցնել Արևմտյան Հայաստան՝ հուլիս ունենալով, որ արևմտահայերն իրենց կմիանան: Սակայն ռուս-թուրքական սահմանի մոտ մարտի են բռնվել թուրք սահմանապահների գերակշիռ ուժերի հետ և նահանջել: Ռուս սահմա-

նապահները ողջ ջոկատին ձերբակալել են:

1890թ. ռուսական դատարանը բոլորին դատապարտել է տարբեր տարիների բանտարկության և Սախալին կղզի աքսորել:

Բացի Փայլակից, ջոկատի կազմում են եղել նաև Եփրեմ Դավթյանը (հետագայի Եփրեմ խանը), Արշակ Գաֆաֆյանը (Ըբեռի, Ըաֆթառ Արշակ), Ստեփան Ստեփանյանը (Բալաջան), Գևորգը (Ռոսորդ) և այլն:

Որոշ ժամանակ Սախալինում գտնվելուց հետո մի ընկերոջ հետ փախել է աքսորավայրից և եկել Կովկաս: Բաքվում հանդիպել է Զրիստափորին և խնդրել իրեն աշխատանք գտնել: Այստեղ ծանոթացել է Արամ Մանուկյանի հետ:

Այնուհետև մեկնել է Պարսկաստան և միացել Սախալինի իր ընկերներին՝ Եփրեմին, Բալաջանին և Ուրիշների, որոնց արկածային կյանքի մասին հետագայում գրել է Անդրե Ամուրյանը (Անդրե Տեր-Օհանյան):

Գործել է Պարսկաստանի Սալմաստ և Խոյ քաղաքներում ու սբ. Թադեի վանքում:

Ըստ հեղինակ Ռուբենի նկարագրության՝ եղել է արդեն ծերացող, կապուտայա, միջահասակ, բարեխիղճ, անշահախնդիր, ժողովրդին նվիրված, ան-

հանգիստ, շարժուն, եռացող, խոսքաշատ, կատակասեր, հայիոյող մարդ: «Եթէ չունէր բժշկական վկայական, սակայն Սախալինէն Պարսկաստան այնքան մարդոց բժշկած եւ երեւի մեռցուցած էր, որ կրնար շատ գիտուններու նախանձը շարժել»:

Պարսկաստանի Ատրպատականի նահանգում հռչակավոր բժշկի համբավ է վայելել: Հայտնի է եղել որպէս «Դոկտոր»:

Տեղացիները նրան ամենուր ճանաչել են և ակնածանքով «Հաքիմ բաշի» կոչել: Մակուհի սարդարը նրան նահանգի համար անհրաժեշտ անձ է համարել: Բժշկական գործունեության քողի տակ զբաղվել է ընդհատակյա հեղափոխական աշխատանքով: Զուլֆայում զբաղվել է զենք փոխադրելու գործով:

Անձնական աշխատանքով ապրել է ինքը և ապրեցրել իր ընկերներին:

Պարսկական հեղափոխության ժամանակ շատ մեծ դեր է կատարել, մասնակցելով հետադիմական միապետականների դեմ հեղափոխականների կռիվներին:

Երբ հայ հեղափոխականներն ստիպված հեռացել են Թավրիզից, Ուրմիայից, Սալմաստից և Խոյից ու Վան տեղափոխվել, այնտեղ նրանց

կրկին ընդունել է Փայլակը: 1891թ. ընկերոջ՝ Աշոտի-Թորոսի հետ սեփական գործ է սկսել Վանի մոտակա Արճեշ քաղաքում:

Այստեղ ևս շարունակել է ընդհատակյա հեղափոխական գործունեությունը՝ օժանդակել Կովկասից Վան գեներալի փոխադրության գործին: Արճեշում նաև օգնել է ազգային, դպրոցական, պետական և այլ գործերի իրականացմանը:

1915թ. Արճեշի կոտորածի ժամանակ, առաջին խմբի մեջ, եղիշե քահանայի, նրա ավագ որդու, քաղաքի այլ ազդեցիկ հայ աղաների հետ կապկապված գնդակահարվել է մոտ 45 տարեկանում: Մինչև վերջին րոպեն պահել է իր անվեհերությունն ու քաջությունը: Պատահաբար փրկված արճեշցի Հակոբը պատմել է, որ Փայլակը մինչև վերջ հայիոյել է կայմակամին և կառավարությանը՝ այդ տմարդի վարմունքի համար:

Նրա մասին.

1. Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1, Թեհրան, 1982:

2. Մանուկեան Արամ, Յուզեր, Երեւան, 1990:

3. Մազմանեան Վրոյր, Յուզեր Եւ Վկայութիւններ, Անթիլիաս, 1991, 345 էջ

4. Յուզամատեան Հայ Յեղափոխական Դաշնակ-

ցութեան, Ալբոմ-ատլաս, Ա հատոր, Դիւցագնամարտ, 1890-1914, Լոս Անճելըս, 1992:

5. Յուզամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ալբոմ-ատլաս, Բ. հատոր, Գոյամարտ, 1914-1925, Լոս Անճելըս, 2001:

6. ՀՅԹԻՖ, -49, ծ-232, պ-14:

7. Իսկահատեան Հարութիւն, Վկայարան Հայկական Ցեղասպանութեան, Գիրք Բ., Պէյրուք, 2011, 352 էջ

ԵԶՆԻԿ

1915թ. ապրիլին բանտարկվել է Կ. Պոլսի Այաշի բանտում, ապա արքորվել Չանդորը:

Հավանաբար եղել է բուժաշխատող, քանի որ անունը փորագրվել է Չանդորըի բանտում հավաքված համրիչի 99 հատիկներից մեկի վրա՝ բուժաշխատողների շարքում:

Նրա մասին.

1. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մատուց կամ խոստովանողը և վկայք խաչի, Երևան, 2002:

2. Ավագեան Կարինե, «Չանդորըի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդէս Ամսօրեայ», 2008, հ. 1-12

ԵԼԱՆՃՅԱՆ (ՍԱՆԴՈՅԱՆ)

ՂՈՒԿԱՍ

Եղել են Ալեքսան և Ղուկաս եղբայրներ, որոնք զբաղվել են օձի խայթոցով բուժմամբ: Այդ շնորհքը ընտանիքի նահապետ Հակոբից սերնդե-սերունդ է փոխանցվել (Ելանճի՝ թուրքերեն օձ վարժեցնող):

Տանը օձեր են պահել փորձեր կատարելու նպատակով:

Ընտանիքում ունեցել են հայատառ արաբերեն ձեռագիր բժշկարան:

1915թ. Ղուկասը բժշկարանն իր հետ տարել է Դերսիմ, որտեղ և մահացել է:

Նրա մասին.

1. Ատաշ Ադնան, 20-րդ դարի նահատակ եղած բժիշկները (թուրքերեն), Թուրքիա, 1997:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ԵԿԱՎՅԱՆ ԼԵՎՈՆ

Ծնվել է Խարբերդի նահանգի Խարբերդի գավառի Արաբկիր քաղաքում:

Ա տ ա մ ն ա բ ո լ ժ ա կ ա ն կրթություն է ունեցել և ատամնաբույժ աշխատել:

Եղել է ՀՅԴ անդամ:

1914թ. Առաջին աշխար-

համարտի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և ատամնաբույժ ծառայել Երզնկայի Հալեպիե գինվորական հիվանդանոցում:

1915/16թ., Երզնկայի ռուսական գրավումից մեկ օր առաջ, Երզնկայի Հալեպիե գինվորական հիվանդանոցի գլխավոր բժիշկ-վիրաբույժ, հարյուրապետ Ֆերիդունի հրամանով, հիվանդանոցի ննջասենյակում քնած ժամանակ սպանվել է ատրճա-նակով «դեպո մեմուրիի» (պահեստի պաշտոնյայի) և առողջապահական «չավուշի» ձեռքով:

Մեկ այլ տվյալով՝ նահատակվել է Երզնկայից դուրս գտնվող մի վայրում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տու-լած գոհերը, ցուցակագրու-լած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուզամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատ-րաստեց Գերսամ Ահարոնե-ան, Պէյրուք, 1965:

3. Փոլատեան Ս., Պատ-մութիւն հայոց Արաբկիրի, Նիւ Եորք, 1969:

4. Թեոդիկ, Յուզարձան նահատակ մտաւորակա-նութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

5. Յուզամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ալբոմ-ատլաս, Բ. հատոր, Գոյամարտ, 1914-1925, Լոս

Անճեղս, 2001:

6. Խաչատրյան Լ., Բարլումյան Ա., Յուզակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի նահանգ, Երևան, 2004:

ԵՎԿՅԱՆ ՀՐԱՆՏ

Ծնվել է մոտ. 1895թ., Խարբերդի նահանգի Խարբերդի գավառի Արաբկիր քաղաքում:

1915թ. եղել է բժշկական վարժարանի 3-րդ կուրսի ուսանող:

Եղել է հնչակյան կուսակցության անդամ:

4. Պոլսի Պատերազմական ատյանը նրան մահվան է դատապարտել:

1915թ. հունիսի 15-ին, մոտ. 20 տարեկանում, 4. Պոլսի Սուլթան Բայազիդի հրապարակում կախաղան է բարձրացվել 20 հայ հնչակյանների խմբի մեջ:

Նրա մասին.


1. Հայ բժշկութեան տուճած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, 4. Պոլիս, 1919:

2. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուս, 1965:

3. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

4. Շամտանճեան Միքա-

յել, Հայ մտքին հարկը Եղեռնին



ԵՐԵՅՅԱՆ ԱՎԵՏԻՍ

Վերապատվելի:

Ծնվել է 1840/41թ., Սեբաստիա նահանգի Եվդոկիա գավառի կենտրոն Եվդոկիա քաղաքում:

1851թ. ծնողներից զրկվելով որբ է մնացել:

1851-55թթ. Մարզվան է ուղարկվել: Լախնական կրթությունն ստացել է տեղի վարժարանում քահանա պապի մոտ:

1855-60/62թթ. (այլ տվյալներով՝ 1848թ.) ուղարկվել է 4. Պոլիս և (12 տարի) սովորել 4. Պոլսի մերձակա Բեբեք գյուղում ամերիկացի միսիոներ, վերապատվելի դոկտոր Սայրուս Համլինի հիմնած ու տնօրինած վարժարանում:

1860/62-69թթ. գործակցելով ամերիկացի միսիոներների հետ, դասախոսություններով ու քարոզչությամբ ճամփորդել է

Անատոլիայի գանազան կողմերում՝ Կեսարիա, Չմյուռնիա, Մանիսա և այլուր:

Կեսարիայում միսիոներ Զարլզ Ֆարսուրթը դոկտոր Համլինից երկու օգնական է խնդրել և նա ուղարկել է պատվելի Քերովբե Յագուպանին ու քարոզիչ Ավետիս Երեցյանին: Մի քանի տարի, միսիոներների ձեռքի տակ, ուսուցիչ է ծառայել Կեսարիայում և շրջակա բնակավայրերում: Միաժամանակ երբեմն հանդես է եկել իբրև քարոզիչ:

1867թ. ամուսնացել է, կնոջ հետ տեղափոխվել Չմյուռնիա և երկու տարի Չմյուռնիայի ամերիկյան միսիոներական դպրոցում աշխատել:

1869թ. հեռացել է ամերիկյան միսիոներական կազմակերպությունից:

1869թ. վերադարձել է Կեսարիա և նպատակ ունեցել կնոջն այդտեղ թողնելով, քրոջ հրավերով մեկնել ԱՄՆ՝ բժշկություն ուսանելու: Սակայն շուտով հետ է կանգնել այդ մտքից:

1870թ. Կեսարիայում, իր աշակերտների խնդրանքով, հիմնել է 100-150 անդամ ունեցող «Լուսավորչյան ընկերությունը», դարձել նրանց հոգևոր առաջնորդը և յուրաքանչյուր կիրակի քարոզներ կարդացել:

Ընկերությունը Չամպար-

ճյաններից վարձած տանը բացել է աղքատ տղաների դպրոց, որտեղ դասավանդել է Երեցյանը: Տունը կիրակի օրերը քարոզներ կատարելու լսարան է ծառայել: Շուտով օսմանյան կառավարությունն ու հայ ազգային կազմակերպությունները հալածել են ընկերությանը, որը փակվել է: Ավետիս Երեցյանը և ընկերության որոշ անդամներ ձերբակալվել են և մի քանի օր ունած քննությունից հետո ազատվել:

Որոշ ժամանակ անց Երեցյանը մեկնել է 4. Պոլիս և ընկերությունը «Ուսումնասիրաց ընկերություն» անվան տակ վերաբացելու կոնդակ ստացել Մկրտիչ արք. Խրիմյան պատրիարքից:

1873թ. Ուսումնասիրաց ընկերության նյութական օգնությամբ մեկնել է ԱՄՆ՝ քարոզչություն անելու և բժշկություն սովորելու:

1874-77թթ. սովորել է Փենսիլվանիայի համալսարանի (Ֆիլադելֆիա քաղաք) բժշկական ֆակուլտետում և բժշկի վկայական ստացել: Ավարտաճառը պահվում է Փենսիլվանիայի համալսարանում:

1877թ. վերադարձել է 4. Պոլիս և Բահչե բաշը թաղամասում հաստատվել:

4. Պոլսում շարունակել է հանդես գալ որպես ավետարանական հայերի քարոզիչ

և կիրակնօրյա պերճախոս քարոզներ անել հոգիների փրկության կամ դավանափոխության համար:

Միաժամանակ բժիշկ է աշխատել և անձնվիրաբար բուժել մարմնային հիվանդություններով տառապող, տարբեր ազգերի պատկանող ու տարբեր կրոններ դավանող համաքաղաքացիներին: Չնայած չարախոսություններին, գրպարտանքներին ու հալածանքներին, ընկերությունն արագորեն զարգացել է ու տարածվել:

Խոլերայի համաճարակի ժամանակ գերմարդկային ջանքեր գործադրելով՝ քաղաքը փրկել է կործանումից, ինչի համար արժանացել է պատվանշանի, որը երբեք չի կրել:

1883թ. կրկին ձերբակալվել է և Անկարա քաղաքի բանտն ուղարկվել: Բանտում նահանգապետի հարցաքննություններից հետո ազատ է արձակվել:

Անկարայում ծանոթացել է եվրոպական երկրների հյուպատոսների հետ, որոնք նրան հորդորել են մնալ այդտեղ՝ 200 ոսկի տարեթոշակով: Սակայն նրանց մերժել է և տեղափոխվելով Կեսարիա, ծառայել 84 ոսկի տարեթոշակով:

1887թ. Ուսումնասիրաց ընկերության անդամների

թիվը հասել է 500-ի և վերածվել ադանդի, որը իրեն կոչել է Լուսավորչականություն, մինչդեռ ուրիշները դա կոչել են Ավետիսակա-նություն:

Ադանդը նաև աղջիկների և տղաների դպրոցներ է բացել:

Բժիշկ-քարոզիչը իր պարզակյաց, ազատամիտ, հեզահամբույր և ողորմասեր նկարագրով մեծ ազդեցություն է ունեցել կեսարացիների բարոյական կյանքի վրա, անձնապես կիրառելով իր նշանաբանը՝ «Վաճառական ըլլալով դրամ վաստակելէն, ազգին բարոյականը բարձրացնելով, հոգիները շահիլը նախամեծար է»:

1895թ. Փոքր Հայքում տեղի են ունեցել խլրտումներ և օսմանյան կառավարության համար հայերը կասկածելի են դարձել:

1895թ. Նոյեմբերին տեղի ունեցած Կեսարիայի հայկական ջարդերի ժամանակ մասնակցել է ինքնապաշտպանական մարտերին և շատերի կյանքը փրկել:

1895թ. Նոյեմբերի 18-ին, շարունակվող ջարդի ժամանակ, թուրք խուժանը հրկիզել է բժշկի տունը, և 55-ամյա բժիշկը, իր կնոջ, 20 տարեկան որդու ու աներորդու հետ նահատակվել է քաջի մահով:

1896թ. հունվարին նրա

մատուցները թաղվել են Կեսարիայի սբ. Լուսավորիչ եկեղեցու բակում:

Հրդեհից հրաշքով փրկվել են նրա 3 դուստրերը և մյուս որդին:

Դուստրերից Ռոզինը 1910թ. Նյու Յորքում ամուսնացել է Պարսկաստանի հյուպատոս Հ. Թոփագյանի հետ:

Ճոխ գրադարան և տպագրելու ենթակա մեծ քանակությամբ (8-10 հատոր) կրոնական քարոզներ, բժշկական ու գիտական ձեռագիր երկեր է ունեցել, որոնք ամբողջությամբ հրոճարակ են դարձել 1895թ. Նոյեմբերի 18-ին:

Ա. Երեցյանի գործը «Ինչիլ ջեմիեթի» («Ավետարանի միություն») անվան տակ Կեսարիայում շարունակվել է մինչև 1915թ.:

Նրա մասին.

1. Պոտուրեան Մկրտիչ Հայ հանրագիտակ, Պուրբէշ, 1938:

2. Ալպոյաճեան Արշակ, Պատմութիւն Եւդոկիոյ հայոց, Գահիրէ, 1952:

3. Ալպոյաճեան Արշակ, Պատմութիւն Հայ Կեսարիո, հ. 1-2, Կահիրէ, 1937:

4. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

5. Թեոդիկ, Ամէնուն տարեցոյցը, Ե. տարի, Կ. Պոլիս,

1911, Բ. տպագրութիւն, Հալէպ, 2008:

ԵՐՎԱՆԴ

Ծնվել է Յալովայում: Եղել է բժշկական վարժարանի ուսանող:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ (1914-1918) վիրավորվել է Շամի ռազմաճակատում և մահացել Հալէպում:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

ՉԱԻԳՈ ՊՈՂՈՍ

Ծնվել է Կոստանդնուպոլսում:

Դեղագործական կրթություն է ստացել և Տրապիզոնում դեղագործ աշխատել:

Սպանվել է կամ մահացել 1916թ.:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՉԱԽԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ ԱՍԱՏՈՒՐԻ

Բժիշկ, հասարակական-ազգային գործիչ: Ծնվել է մոտ 1865թ.: Ավարտել է Սանկտ Պետերբուրգի ռազմա-բժշկական ակադեմիան: Սկզբում եղել է զինվորական բժիշկ:

1895թ. մալարիայի մասին գիտական հոդված է գրել և տպագրել «Ռազմա-բժշկական հանդես» ռուսաստանյան պարբերականում:

1898թ. դրույթամբ ընտանիքով հավանաբար ապրել և աշխատել է Վրաստանի Գորի քաղաքում, քանզի հայտնի է, որ դուստր Մարիան 1898թ. այդտեղ է ծնվել: 5 երեխաներից 3-ը հետագայում բժիշկ են դարձել:

1906-18թթ. դրույթամբ բժիշկ է աշխատել Բաքվում (դստեր կենսագրությունից հայտնի է, որ ինքը այդ տարիներին սովորել է Բաքվում):

Եղել է բժշկության դոկտոր և դարասկզբի Բաքվի անվանի բժիշկներից մեկը:

1918թ. սեպտեմբերի վերջին թուրքերի Բաքու մուտքի ժամանակ ներխուժողները նրան ձերբակալել են ու սպանել՝ մոտ 53 տարեկանում:

1936թ., Մոսկվայում բնակվող 3 բժիշկ գավակները (հավանաբար իրենց հոր «մեղքերի» համար) ստալինյան բռնություններին են ենթարկվել: Մասնավորա-

պես Մարիա Չախարյանին մինչև 1958թ. արգելվել է ապրել և աշխատել Մոսկվայում:

Նրա մասին.

1. *İàèàðèÿ â Àçåðáàé-äæàíá, Àèáèèíáðàðè÷áñ-èèé óéàçàðáèü (1836-1973), Áàèó, 1974.*

2. Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում, 1918-1920թթ., պատասխանատու խմբագիր՝ Ամատունի Վիրաբյան, Երևան, 2003:

3. Թոռան՝ մոսկվաբնակ բժիշկ Նատալյա Ստեփանի Ռոտինյանի (ծնվ. 1929) գրած՝ իր մոր՝ բժիշկ Մարիա Տիգրանի Չախարյանի կենսագրականը, 19-05-2004:

ՉԱՐԻՑՑԱՆ ԱՎԵՏԻՍ

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

4. Պոլսի Կում կափու թաղամասում ունեցել է սեփական դեղատուն:

Եղել է Կ. Պոլսի դեղագործների միության հիմնադիր անդամներից մեկը: Հայտնի է եղել որպես հանրային գործիչ:

1915թ. բանտարկվել է Կ. Պոլսի կենտրոնական բանտում, որտեղից աքսորվել է Չանդորը:

Ատունը փորագրվել է Չանդորի բանտում հա-

վաքված համրիչի 99 հատիկներից մեկի վրա:

Գեհենից փրկվելով՝ վերապրել է:

1936թ. տեղափոխվել է Փարիզ:

Նրա մասին.

1. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Վիեննա, 1922:

2. Պալաքյան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Երևան, 1991:

3. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

4. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողը և վկայք խաչի, Երևան, 2002:

5. Ավագեան Կարինե, «Չանդորի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդես Ամսօրեայ», 2008, հ. 1-12

ՉԱԶԱՐՑԱՆ ԹԱԴԵՎՈՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Բժիշկ, գրող, հասարակական, ազգային գործիչ:

Ծնվել է 1862թ. Շամախիում:

Միջնակարգ կրթության ընթացքում կատարյալ ուսումնասիրել է հայոց լեզուն

և հայ ժողովրդի պատմությունը:

Ավարտել է Ռազմա-բժշկական ակադեմիան և բժշկի մասնագիտությունը ստացել:

Ուսանողական տարիներին ընկերակցել է Հովհաննես չովհաննիսյանին (հետագայում ականավոր բանաստեղծ) ու Գարեգին Ենգիբարյանին (հայտնի հրապարակախոս), որոնց հետ ամառները շրջել է Հայաստանի գավառներում հայ գյուղացուն անմիջականորեն ծանոթանալու և ուսումնասիրություններ կատարելու նպատակով: 1880-ական թվականներին «Աղբիւր» հանդեսում մի շարք հոդվածներ է տպագրել այդ թեմաներով:

Դեռևս ուսանողական տարիներից զբաղվել է գրական և հասարակական աշխույժ գործունեությամբ: Երկար տարիներ բժշկական, ազգագրական, բանասիրական, հրապարակախոսական արժեքավոր հոդվածներով աշխատակցել է Թիֆլիսի «Տարազ», «Մուրճ», «Մշակ» և այլն, ինչպես նաև Երևանի «Պսակ», սբ. Էջմիածնի «Արարատ» և այլ վայրերում լույս տեսնող պարբերականների, ստորագրելով «2.» կամ «Թ. 2.» ծածկանուններով:

1917թ. եղել է Բաքվի

Հայկական կուլտուրական միության բժշկական սեկցիայի ընդամենը 9 համար հրատարակած «Առողջ կեանք» ժողովրդական առողջապահիկ ամսագրի խմբագիր-հրատարակիչը: Տպագրությունը իրականացվել է Բաքվի Երևանցյալի տպարանում:

Մի քանի գրքերի և թարգմանությունների հեղինակ է: Զինվորական բժիշկ է ծառայել Արդահանում, Ախալքալաքում, Բաթումում, Գորիում և ամենուր բարի հիշատակ թողել:

Պետական բժշկական ծառայությունը թողնելուց հետո հաստատվել է Բաքվում, ուր եռանդուն մասնակցություն է ունեցել քաղաքի հասարակական կյանքին:

Եղել է Բաքվի հայոց միջնակարգ դպրոցների հոգաբարձության անդամ:

Բժշկապետի (պրոֆեսոր ?) կոչում է ունեցել:

1918թ. սեպտեմբերյան կոտորածից հետո, Ադրբեջանի թուրքա-թաթարական բռնակալ կառավարության հրամանով ձերբակալվել ու նետվել է Բաքվի բանտը, որտեղ և բարբարոսական տանջանքներից նահատակվել է 56 տարեկանում:

Աշխատությունները.

1. «Արարատ», Էջմիածին, 1879, թ. 1, «2.» ծածկանունով:

նով:

2. «Պսակ», Երևան, 1880, թ. 29, «2.» ծածկանունով:

3. «Արարատ», Էջմիածին, 1880, թ. 9, 10, «Թ. 2.» ծածկանունով:

4. «Արձագանք», Թիֆլիս, 1883, թ. 46, «Թ. 2.» ծածկանունով:

5. «Պսակ», Երևան, 1880, թ. 22, 23, 30, 31, 36, 38, «Թ. 2.» ծածկանունով:

6. «Արձագանք», Թիֆլիս, 1883, թ. 51, «Թ. 2.» ծածկանունով:

Նրա մասին.

1. Բժ. Թադեոս Չաքարեան, «Տարագ», Թիֆլիս, 1919, թ. 9:

2. Յուզամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ալբոմ-ատլաս, Ա. հատոր, Դիւցազնամարտ, 1890-1914, Լոս Անճելէս, 1992:

3. Հովակիմյան Բախտիար, Հայոց ցեղասպանության նահատակ գործիչների ծածկանուններ, Երևան, 2002:

4. Հովակիմյան Բախտիար, Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005:

ԶԻՂՆԻ ՄԻՂՐԱՆ ԷՖԵՆԴԻ

Ծնվել է Կ. Պոլսում:

Դեղագործական կրթություն է ստացել և դեղագործ աշխատել:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և Կարինում դեղագործ ծառայել՝ լեյտենանտի աստիճանով:

Մահացել է 1915թ. փետրվարի 27 (մարտի 12)-ին, ժանտախտից:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուժած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յարման Արսէն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ԶԻՂՆԵՆ (ԶԻՂԱՆ) ԷՖԵՆԴԻ

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և 131-րդ զորագնդի 1-ին գնդի Անտիոքի (Անթաքիա) զինվորական հիվանդանոցում զինվորական բժիշկ ծառայել:

1916թ. Նոյեմբերի 3-ին մահացել է նույն հիվանդանոցում:

Նրա մասին.

1. Ատաշ Ադնան, 20-րդ դարի նահատակ եղած բժիշկները (թուրքերեն), Թուրքիա, 1997:

2. Յարման Արսէն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:



ԶՈՒՂՈՒՅԱՆ ՄԵՂՐԱՄԿ

Ծնվել է Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի Խարբերդ քաղաքում:

Ունեցել է բժշկական կրթություն:

Զոհվել է Երիտթուրքերի կառավարության կազմակերպած Հայոց Ցեղասպանության ընթացքում:

Նրա մասին.

<http://www.genocide-museum.am/arm/remember-armenian-genocide.php>

ԷՂԱՆ ԷՖԵՆԴԻ

Ծնվել է Բեյրութում:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի

ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և 50-րդ սանիտարական վաշտում զինվորական բժիշկ ծառայել՝ կապիտանի աստիճանով:

Ռազմաճակատում ստացած վերքից 1917թ. նոյեմբերի 3-ին մահացել է Գագալում (Պաղեստին):

Լրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ԷԾՏԱՀԱՐԹԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ Կ.

Ծնվել է Խարբերդի նահանգի Խարբերդի գավառի Արաբկիր քաղաքում:

Ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը և Նույն համալսարանի հիվանդանոցում բժիշկ աշխատել:

Վերադարձել է Արաբկիր՝ հարազատների մոտ:

1915թ. սպանվել է Մեծ Եղեռնի ժամանակ:

Լրա մասին.

Փոլատեան Ս., Պատմութիւն հայոց Արաբկիրի, Լիւ Եորք, 1969:



ԷԼՄԱՃՅԱՆ ԵՐՎԱՆԴ Ս.

Ծնվել է մոտ 1880թ., Հալեպի նահանգի Մարաշի գավառի կենտրոն Մարաշ քաղաքում:

1904թ. ավարտել է ամերիկացի միսիոներների Այնթապի Կենտրոնական Թուրքիայի քոլեջը:

1905-10թթ. եղել է Մարաշի Ակադեմիա դպրոցի ուսուցիչ:

1914թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1914-15թթ. եղել է Չեյթունի թաղապետական բժիշկը:

1915թ. դրությամբ եղել է Մարաշի քաղաքապետարանի բժիշկը:

1915թ. Չեյթունի առաջին աղետի ժամանակ, մարտի 10-ին ընկերակցել է Մարաշից եկած 4 հայերից բաղկացած պատվիրակությանը՝ գերմանացի հեր (պարոն) Բլանկի նախագահությամբ,

որոնք եկել էին Չեյթունի սբ. Աստվածածին վանքում գտնվող ապստամբների հետ բանակցելու:

1915թ. մարտին, ի թիվս 198 անվանի հայերի, ձերբակալվել է ու բանտարկվել Մարաշի բանտում: Որոշ ժամանակ անց, ձերբակալվածներից մի քանիսը քսոսովել են Դեյր-Էլ-Չոր և այնտեղ սպանվել, մի քանիսը՝ կախաղան բարձրացվել, իսկ բժիշկը ազատ է արձակվել:

1915-18թթ. բնակվել է Հալեպում, որտեղ թաղապետական բժիշկ է աշխատել և օսմանյան բանակի զինվորական հիվանդանոցի զինվորական բժիշկ ծառայել:

1919թ. Չեյթունի վերջին աղետի ժամանակ ստանձնել է ժողովրդի առողջապահական և բժշկական գործը, որը անձնվիրաբար կատարել է մինչև 1921թ.:

1919թ. դեկտեմբերի 19-ին, որպես Չեյթունի և Նրա շրջակայքի՝ ամերիկյան Մերձավոր Արևելքի Նախատամառայի և ՀԲԸՄ-ի կողմից նշանակված բժիշկ, Մարաշից գնացել է Չեյթուն:

Նույն գիշերը հրավիրվել է Չեյթունի Ազգային միության հրավիրած ժողովին ու ներկաներին հանձնել բժիշկ Քաջբերունու (Վարդան Թոփալյան) նամակը: Նամակում եղել են մի քանի ստացագրեր, որոնք պետք

է ստորագրվելին ու շտապ Մարաշ վերադարձվելին, որպեսզի 1800 օսմանյան ոսկին որոշված սպառագինման նպատակին հատկացվեր: Բացի այդ, Նախատամառայից բերել էր 150 օսմանյան ոսկի՝ որբևայրիներին տալու համար:

1920թ. ապրիլի 5-ին, գտնվելով Չեյթունում, նամակ է ստացել Մարաշում գտնվող միստր Լայմընից, որն առաջարկում էր իր հետ տեսակցելու համար գնալ Պեշեն թրքաբնակ գյուղը:

1920թ. ապրիլի 6-ին բժիշկը երկու այլ ընկերների հետ մեկնել է Պեշեն՝ Լայմընի և մի թուրքի հետ տեսակցելու:

1920թ. Մարաշի Ամերիկյան միսիոներության («Պորտ») Մերձավոր Արևելքի ներկայացուցիչ միստր Լայմընը 200 ոսկի դրամագլխով բացել էր բրդի աշխատանոց՝ որբևայրիների համար աշխատանք ապահովելու և դրանով նրանց օգնելու համար: ՀԲԸ Միությունը ևս ամսական 50 ոսկի նպաստ է ուղարկել այդ գործին:

Երվանդ Էլմաճյանը, Ազգային միության ատենապետ Արամ Չոլագյանի հետ համախորհուրդ, հիշյալ նպաստները բաշխել է միայն մի քանի ավետարանական ընտանիքների՝ ավետարանական համայնքին

զարկ տալու համար, ինչը Ազգային միության պառակտման պատճառ է դարձել: Հետագայում բժիշկը զոջացել է իր արարքի համար և ամեն ինչ արել շտկելու դրությունը, ինչի համար արժանացել է հայրենակիցների համակրանքին:

1921թ. հունիսին Ազգային միությունը բժ. Երվանդ Էլմաճյանին և Հովհաննես Սիմոնյանին հանձնարարել է բանակցությունների միջոցով կարգի հրավիրել մի քանի զենքուսուցի խռովարարների, որոնք մինչ այդ սպանվում են թուրքերի ձեռքով:

Հետագայում հավանաբար գաղթել է Հալեպ:

1922թ. սեպտեմբերի 1-ին հասել է ԱՄՆ:

1922թ. նոյեմբերին Բոստոնում հանձնել է նահանգային քննությունը և բժշկի արտոնագիր ստացել:

1924թ. դրությամբ բնակվել է ԱՄՆ Մասաչուսեթսի նահանգի Բրիթոն քաղաքում Brithon, Telford str. 7 հասցեում և բժիշկ աշխատել:

Նրա մասին.

1. «Հայաստանի կոչնակ», Նիւ Եորք, 15-04-1924:

2. Նորաշխարհյան ԼԼ-ոն, Չեյթոնը 1914-1921թթ., Երևան, 1984:

ԷԼՄԱՍՅԱՆ

Ծնվել է Տիգրանակերտի նահանգի Տիգրանակերտի գավառի Սևերեկի գավառակի կենտրոն Սևերեկ քաղաքում:

Բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել:

1915թ. սպանվել է Սևերեկում այդ քաղաքի ոստիկանական զորքի հրամանատար Շևքեթի կողմից:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուժած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

3. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

ԷԼՄԱՍՅԱՆ ԵՍԱՅԻ

Բժշկական կրթություն է ունեցել և Եդեսիայում բժիշկ աշխատել:

1915թ. նահատակվել է Եդեսիայում:

Նրա մասին.

Սահակեան Արամ, Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, Պէյրուք, 1955:

ԷԼՄԱՍՅԱՆ ՀԱԿՈՐ ԷՅԵԼԴԻ

Ծնվել է 1858թ., Կոստանդնուպոլսի Բերաթաղամասում:

1880թ. ավարտել է Սուլթանական դպրոցը (Mekteb-i Sultani).

1886թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

1886-90թթ. սովորել է Փարիզի համալսարանի բժշկական բաժնում:

1890թ. նոյեմբերի 18-ին ստացել է բժշկի վկայական:

1890թ.-ից Կ. Պոլսում բժիշկ է աշխատել:

1918թ., Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, կապիտանի աստիճանով ծառայել է օսմանյան բանակի Կ. Պոլսի Կուլեյիի զինվորական հիվանդանոցում, որտեղ հիվանդներից վարակվել է ժանտախտով:

Մահացել է 1918թ. փետրվարի 23-ին, ժանտախտից, Կուլեյիի հիվանդանոցում 60 տարեկանում:

Այլ աղբուրում հիշվում է, որ „Չանաքքալեում վիրավորներին բուժելու ժամանակ ռմբակոծման հետևանքով 1918 թ. փետրվարի 23-ին նահատակվել է”:

Գրանցված է 20-րդ դարում նահատակված թուրքական առողջապահության

սպաների ցանկում:

Նրա մասին.

1. Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1905:

2. Հայ բժշկութեան տուժած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

3. Ատաշ Ադնան, 20-րդ դարի նահատակ եղած բժիշկները (թուրքերեն), Թուրքիա, 1997:

4. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ԷՍԻՆՅԱՆ ՀԱԿՈՐ ՍԵՐՈՎԲԵ

Ծնվել է 1878թ., Սեբաստիայի նահանգի Սեբաստիայում Մարզվան քաղաքում:

1899թ. ավարտել է Անատոլիա քոլեջը և ստացել “պսակավոր արվեստից” վկայական:

1905թ. ավարտել է Սիրիական բողոքական կոլեջի (Բեյրութի Ամերիկյան համալսարան) բժշկական բաժինը:

1908թ.-ից Եվդոկիայում բժիշկ է աշխատել:

Մարզվանում (Մերզիֆոն) բժիշկ, առողջապահության ուսուցիչ է աշխատել (Last

Position Teacher in Hygien and General Protection in Merzifoun, Asia Minor):

1914թ. սկսված Առաջին աշխարհամարտի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և Եվրոպիայում զինվորական բժիշկ ծառայել:

Հրաժարվել է իսլամ ընդունելու առաջարկից:

1915թ. Եվրոպիայում կախաղան է բարձրացվել բժիշկներ Միսաք Փանոսյանի և Արմենակ Սերայտարյանի հետ միասին՝ 37 տարեկանում:

Այլ տվյալով՝ 1915թ. սպանվել է Սեբաստիայի նահանգի Եվրոպիայի գավառի Չիլե ավանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկուրթեան տուճած զոհերը, ցուցակագրուճած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Ալաօյաճեան Ա., Պատմութիւն Եւրոպիոյ հայոց, Գահիրէ, 1952:

3. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

4. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէրոլթ, 1965:

5. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

6. Յարման Արսեն, Հա-

յերը օսմանյան առողջապահութեան ծառայութեան մեջ և պատմութիւնը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերէն), Ստամբուլ, 2001:

7. Խաչատրյան Լ., Բարլումյան Ա., Յուցակ Հայոց ցեղասպանութեան զոհերի (1915-1923թթ.), գ. 1, Սեբաստիայի նահանգ, Ե., 2004:

8. Զեստենեան Հրաչ, Պէրոլթի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ Եւ Մեծ Եղեռնին նահատակուած Հայ Բժիշկներ, “Ազդակ”, 01-11-2012

ԷԼՃԵՐՑԱՆ Ե.

Ծնվել է 1846թ., Տիգրանակերտի նահանգի կենտրոն Տիգրանակերտ քաղաքում:

1873թ. մեկնել է ԱՄՆ՝ բարձրագույն կրթություն ստանալու:

1877թ. ավարտել է Նյու Յորքի համալսարանի բժշկական ֆակուլտետը և բժշկի վկայական ստացել:

1877թ. ծննդավայրն է վերադարձել:

1877-87թթ. Խարբերդի գավառի Մեզիրե քաղաքի քաղաքապետական բժիշկ է աշխատել և հայ, թուրք և քուրդ բնակչության բուժման խնդիրներով զբաղվել:

1887-88թթ. աշխատել է Տրապիզոնում:

1895թ. հայկական ջարդե-

րի ժամանակ, առանց որևէ պատճառի ձերբակալվել է և բանտարկվել: Թուրքիայում հայ բժշկին բանտարկելու համար բավական էր, որ մի տգետ թուրք ասեր, թե նա հայիոյել է իր կրոնին, կամ եթե մի պաշտոնյա թուրք հայտներ, թե նա ֆիդայի է:

1896թ. Օսմանյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի դեսպանի միջամտությամբ ազատվել է բանտից:

1896թ. մեկնել է ԱՄՆ՝ մշտական բնակության:

1896-1910թթ. բնակվել է Ֆրեզնոյում և զբաղվել բժշկությամբ:

1910թ. մայիսի 24-ին, Ֆրեզնոյում զոհ է գնացել իր «դյուցազնասիրտ մի արարքին»՝ 64 տարեկանում:

Նրա մասին.

1. Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը, Ե. տարի, Կ. Պոլիս, 1911, Բ. տպագրութիւն, Հալէպ, 2008:

2. Պոտուրեան Մկրտիչ, Հայ հանրագիտակ, Պուքրէշ, 1940:

3. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

ԷՆԼՉՅՈՒՃՅԱՆ (ԷՆԼՉԻՃՅԱՆ) ՄԻՍԱԶ

Ծնվել է 1893թ., Սեբաստիա նահանգի Եվրոպիա քաղաքում:

Ավարտել է Կարինի Սասարյան վարժարանը:

Ուսանել է Կ. Պոլսի կայսերական բժշկական վարժարանի 3-րդ կուրսում:

Սպանվել է 1915թ., Եվրոպիայում:

Նրա մասին.

1. Հայ բժշկուրթեան տուճած զոհերը, ցուցակագրուճած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Մեզպուրեան Ա., Հայ եւ ծագումով հայ բժիշկներ:, Իսթանպուլ, 1940:

ԷՆՍՅՈՒՐՅԱՆ ՏԻՐԱՆ ՈՐԴԻ ԳՐԻԳՈՐԻ

Ծնվել է 1875թ., Կեսարիայում:

1899թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Գաղատիայի (Անկարա) հիվանդանոցի բժիշկ է աշխատել:

Հավանաբար 1915թ. մահացել է ժանտախտից:

Նրա մասին.

1. Հայ բժշկուրթեան տուճած զոհերը, ցուցակագրուճած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Մեզպուրեան Ա., Հայ եւ ծագումով հայ բժիշկներ, Իսթանպուլ, 1940:

ԷՐՄԵՔՅԱՆ ՀԱԿՈՐ

Ծնվել է մոտ 1883թ., Կ. Պոլսում:

1908թ. մայիսի 27-ին ավարտել է Փարիզի համալսարանի բժշկական բաժինը:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և 3-րդ զորաբանակի հեծելազորի զինվորական հիվանդանոցում զինվորական բժիշկ ծառայել:

Մահացել է 1915թ. հունիսի 20-ին/հուլիսի 9-ին, ժամտախտից՝ մոտ 32 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկությունն տուճած զոհերը, ցուցակագրուճած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Մեզ պուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համաճոտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

3. Ատաշ Ադնան, 20-րդ դարի նահատակ եղած բժիշկները (թուրքերեն), Թուրքիա, 1997:

4. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ԷՔՍԵՐՁՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ Գ.

Ավարտել է Դամասկոսի համալսարանի դեղագործական բաժինը:

1900-21թթ. եղել է Հալեպի նահանգի Քիլիս քաղաքի պետական դեղարանի վարիչը:

1915թ. Մեծ եղեռնի տարիներին, հակառակ իր կամքին, թուրքական կառավարությունը նրան ստիպողաբար պահել է Քիլիսում, քանի որ դիպլոմավոր թուրք փոխարինող չի գտնվել:

1921թ. վերջերին, երբ Կիլիկիայի հայաթափման հետևանքով Քիլիսի վերապրող ամբողջ հայությունը վերջնականապես հեռացել է բնօրրանից, քեմալական հրոսակների իշխանությունը դարձյալ թույլ չի տվել, որ նա իր հարազատների հետ հեռանա Քիլիսից:

Մահվան սպառնալիքի տակ պարտադրել են շարունակել աշխատել:

Շատ չանցած, զգալով, որ կյանքին վտանգ է սպառնում, փախել է Քիլիսից և ճանապարհին թուրքերի հարձակմանը ենթարկվել:

Որոշ ժամանակ անց հիվանդացել է թոքախտով և մահացել Հալեպում:

Նրա մասին.

Պայրամեան Ալիշան Ա.,

Կիլիզա. Հայկական Քիլիս, Երեւան, 2001:

ԹԱՔԻՔԱՆ ՀԱՅՎԱԶՈՒՆ ԹՈՐՈՍԻ

Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի կենտրոն Կեսարիա քաղաքում ծնված Հարություն Թուրքալճյանը հնագույն բժշկարանները ուսումնասիրելով և ինքնուսուցման ճանապարհով դարձել էր անվանի հեքիմ-բեկաբույժ (սնխչի), ինչպես նաև նախահայրը անվանի բժիշկների Թաքիբյան գերդաստանի («թաքիբ» արաբերենում և օսմաներենում նշանակում է բժիշկ):

Հարություն Թուրքալճյանի անդրանիկ գավակն էր բժիշկ Հաջի Թորոս Թաքիբյանը (Թուրքալճի Հեքիմ Օղլի, 1823-1914), կրտսեր որդին էր բժիշկ Նահապետ Թաքիբյանը (1844-1914):

Հաջի Թորոս Թաքիբյանի ավագ որդին է բժիշկ Տիգրանը (1858-?), կրտսերը՝ բժիշկ Հայկազունը:

Հայկազուն Թաքիբյանը ծնվել է 1867թ., Կեսարիա քաղաքում:

Եղբայրը՝ Տիգրան Թաքիբյանը բժշկական կրթությունն ստացել է ԱՄՆ-ում և եղել բժիշկ:

Հայկազունն ատամնաբուժական կրթություն է ունեցել

և ատամնաբույժ աշխատել: Եղել է հնչակյան կուսակցության և հասարակական-քաղաքական գործիչ:

1915թ. ամռանը ձերբակալվել է:

1915թ., Ամասիայում/Սադ-Տադի/Ղարա Զալուխի ճորում դաժանորեն սպանվել է տեղի կառավարիչի հրամանով՝ 48 տարեկանում:

1918թ., պատերազմի ավարտից հետո, ավագ եղբայրը՝ բժիշկ Տիգրանը, դատական գործ է հարուցել եղբոր սպանության համար և հասել նրան, որ Պատերազմական ատյանը 1920թ. մահվան է դատապարտել Ամասիայի ոճրագործ կառավարչին:

Սակայն շուտով կացության տերն է դարձել քեմալական կառավարությունը և կասեցրել հայակեր կառավարչին կախաղան բարձրացնելը:

Նրա մասին.

1. Ալպոյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. հատոր, Գահիրէ, 1937:

2. Մեզ պուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համաճոտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

3. Յուշամատեան Մեծ եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

4. Թեոդիկ, Գողգոթայ հայ

հոգեւորականութեան, Նիւ Եորք, 1985:

5. Թէոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

6. Շահբազյան Հասմիկ և Միրզոյան Անահիտ (կազմողներ), Յուլցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 3, Անկարայի նահանգ, Երևան, 2006:

ԹԱՔԻՔՅԱՆ ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍԻ

Ծնվել է 1858թ. դեկտեմբերի 13-ին, Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի կենտրոն Կեսարիա քաղաքում:

Նախնական ուսումնասիրում է Կեսարիայի Ավետիսականաց վարժարանում:

Ավարտել է ամերիկացի միսիոներների Այնթապի Կենտրոնական Թուրքիայի քոլեջի բժշկական բաժինը:

Այնուհետև մեկնել է ԱՄՆ և ուսանել Վերմոնտի բժշկական համալսարանում:

1890թ. ուսումնասիրությունը վերադարձել է ծննդավայր:

Կարճ ժամանակ Կեսարիայում մնալուց հետո նշանակվել է Անկարայի քաղաքապետարանի բժիշկ: Բացի այս պաշտոնից, դարձել է

Նահանգապետ Աբեդին փաշայի ընտանեկան բժիշկն ու բարեկամը: Փաշայի միջնորդության շնորհիվ խափանել է Անկարայի հայերի՝ Յըլդըզից հրահանգված ջարդը, ինչի պատճառով փաշան պաշտոնանկ է արվել:

Մեծ դեր է կատարել Գաղատիայի (Անկարա) դատավարության հարցում:

Երբ ձերբակալվածներ պրոֆ. Թումայանը և Հայայանը բերվել են Անկարա, նրանց մարմինները ամբողջովին ծածկված են եղել ոստիկանների խարազաններից առաջացած կապտուկներով: Ձեռքերի և ոտքերի երկայն շղթաները, քայքայելով փափուկ հյուսվածքները, հասել էին ոսկորներին, ինչից վերջույթների գանգրենայի վտանգ էր առաջացել: Բժիշկը Աբեդին փաշայի հրամանով նրանց վերքերը բուժելու և բանտի պարտեզում նրանց ազատ շրջելու թույլտվություն է ստացել: Բժշկի խնդրանքին ի պատասխան փաշան խոստացել է ամեն ինչ անել բանտարկյալների կյանքը փրկելու համար: Սակայն Պատերազմական ատյանը նրանց դատապարտել է մահվան:

1895թ. ԱՄՆ կառավարությունը բժշկին նշանակել է Գաղատիայի պատվո հյուսպատոս, սակայն սուլթան

Աբդուլ Համիդ II-ն մերժել է այդ նշանակումը՝ հաշվի առնելով նրա հայկական ինքնությունը:

1895թ.-ից սկսած բժիշկը Անատոլիայի զանազան կողմերից ստացած հարստահարությունների և ջարդերի տեղեկագրերը կառնակաբեր ձևով հանձնել է եվրոպական երկրների հյուսպատոսներին:

Բժշկի միջնորդությամբ Անկարայի հայերի ջարդը չիրականացնելու պատճառով Աբեդին փաշան պաշտոնանկ է արվել, ինչը վտանգել է նաև բժշկի դիրքը:

Այդ պատճառով, բժիշկը տեղափոխվել է Կ. Պոլիս և զբաղվել միայն բժշկությամբ:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և Կ. Պոլսի զինվորական հիվանդանոցում բժիշկ ծառայել՝ հարյուրապետի աստիճանով:

1915թ., Ամասիայում, տեղի կառավարիչի հրամանով դաժանորեն սպանվել է բժշկի կրտսեր եղբայրը՝ բժիշկ Հայկազուն Թաքիբյանը:

1918թ., պատերազմի ավարտից հետո բժիշկ Տիգրանը դատական գործ է հարուցել եղբոր սպանության համար և հասել նրան, որ Պատերազմական ատյանը

1920թ. մահվան է դատապարտել Ամասիայի ոճրագործ կառավարիչին, սակայն դատավճիռը չի գործադրվել: Դրանից հետո բժիշկ Տիգրանը մահափորձի է ենթարկվել, որից հրաշքով է փրկվել:

Այդ դեպքը վերջնականապես հուսալքել է բժշկին և նա մեկնել է ԱՄՆ:

1937թ. դրությամբ բնակվում էր ԱՄՆ-ում:

Նրա մասին

Այսօրյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. հատոր, Գահիրէ, 1937:

ԹԱՔԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

Ծնվել է մոտ 1888թ., Սեբաստիայի նահանգի կենտրոն Սեբաստիա քաղաքում:

1913թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան դեղագործական վարժարանը:

Սեբաստիայի «Գրայան» դեղատանը, ապա՝ Սեբաստիայի Ազգային հիվանդանոցում դեղագործ է աշխատել:

Նահատակվել է 1915թ., Սեբաստիայի մոտակայքում 27 տարեկանում:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ԹԱՀՄԱԶ ԶԱՐԵՀ

Ծնվել է 1881 թ., Լիկոմի-
դիայում (Իզմիր):

Նախակրթությունը ստա-
ցել է Պարտիզակի Ներսե-
սյան-Շուշանյան տիպար
կրթարանում:

Ավարտել է Կ. Պոլսի Պե-
պեքի Ռոպերթ քոլեջը:

1905 թ. ավարտել է Բեյ-
րուքի Ամերիկյան համալ-
սարանի բժշկական ֆակուլ-
տետը:

Հետագայում Անգլիայում
և Ֆրանսիայում կատարե-
լագործվել է մասնագիտու-
թյան մեջ:

1914-18 թթ., Առաջին
համաշխարհային պատե-
րազմի 5 տարիների ընթաց-
քում բժիշկ-հարյուրապետի
տիտղոսով ծառայել է օսմա-
նյան բանակում:

1915թ. ապրիլին արգե-
լափակվել է Կ. Պոլսի կենտ-
րոնական՝ Այաշի բանտում,
որտեղից աքսորվել է Չան-
դըրը:

Անունը փորագրվել է
Չանդըրըի բանտում հա-
վաքված համրիչի 99 հա-
տիկներից մեկի վրա՝ բու-
ժաշխատողների շարքում:

Վերապրել է և շարունա-
կել Կ. Պոլսում աշխատել
ընդհանուր, ներքին հիվան-
դությունների, կանանց հի-
վանդությունների բժիշկ,
մանկաբարձ և այլն:

Ունեցել է իր դարմանա-
տունները Ադաբազարում
(8 տարի), ապա Գատըգյու-
ղում:

Մահացել է 1952 թ., Կ.
Պլսում:

Նրա մասին.

1. Շիկահեր Վարդ, Կի-
սադարեան պատմութիւն
թրքահայ բժշկութեան, 1923-
1975, Իսթանպուլ, 1975:

2. Ավագյան Կարինե,
Եղեռնահուշ մատուցել կամ
խոստովանողը և վկայք խա-
չի, Երևան, 2002:

3. Ավագեան Կարինե,
«Չանդըրըի 1915 թ. ապրիլի
11, Յիշատակ»... Թանգարա-
նային ցուցանմոյշը, «Հան-
դէս Ամսօրեայ», 2008, հ. 1-12

ԹԱՀՄԱԶՅԱՆ ԳՐԻԳՈՐ

Ծնվել է Սեբաստիայի Նա-
հանգի Սեբաստիայի գավա-
ռում:

Դեղագործական կրթու-
թյուն է ունեցել և դեղագործ
աշխատել:

Սպանվել է 1915թ., Հա-
սան-Չելեքիում:

Նրա մասին.

Խաչատրյան Լուսինե և
Բաբլումյան Արփինե (կազ-
մողներ), Ցուցակ Հայոց ցե-
ղասպանության զոհերի
(1915-1923թթ.), գիրք 1, Սե-
բաստիայի Նահանգ, Երևան,
2004:

ԹԱԾՃՅԱՆ ԷՊԻՄԱՐԴ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Ծնվել է 1880թ., Խարբեր-
դի Նահանգի Խարբերդի
գավառի Մեզիրե քաղաքում:
Դեղագործական կրթու-
թյուն է ունեցել և դեղագործ
աշխատել:

1914թ., Առաջին համաշ-
խարհային պատերազմի
ժամանակ զորակոչվել է օս-
մանյան բանակ և զինվորա-
կան դեղագործ ծառայել:

1915թ. ապրիլ-մայիս
ամիսներին օսմանյան կա-
ռավարությունը Խարբեր-
դում և Մեզիրեում իրակա-
նացրել է բազմաթիվ հայ
մտավորականների ձերբա-
կալություններ: Թուրք ոս-
տիկանները նրանց շրթայա-
կապ տարել են փողոցներով
ու շուկաներով, և գազազած
թուրք ամբոխը նրանց վրա
քարեր է նետել, հարվածել,
ծեծել: Բոլորին արգելափա-
կել են Մեզիրեի բանտում և
կտտանքների ենթարկելով
փորձել տեղեկություններ
կորզել զենքեր, ռումբեր և
քաղաքական գաղտնիքներ
թաքցնելու մասին: Կեսգի-
շերին, արաբկիրցի ոստի-
կան Ալի օնբաշին բանտա-
պահ Հասան Էֆենդիի հետ
եկել է բանտ և հրամայել,
որ մեկ առ մեկ դուրս գան
և Եդեսիա տեղափոխվելու
պատրաստվեն: Բժիշկ Նշան

Նահիկյանը համարձակորեն
առաջ գալով ասել է. «Եթե
դուք մեզ իրոք Եդեսիա պի-
տի ուղարկեք, ավելի լավ է
որ ցերեկով ուղարկեք, որ-
պեսզի ժողովուրդը իմանա,
որ մենք Եդեսիա ենք գնում,
իսկ եթե ձեր հետին դիտա-
վորությունը մեզ սպանելն
է, կրկին ցերեկով սպանեք
և կախեք, որպեսզի հա-
մայն Խարբերդի ժողովուր-
դը ականատես լինի մեր մա-
հին»:

Եվ չնայած ոստիկանը
ժխտել է նրանց սպանելու
մտադրությունը, բանտար-
կյալները հասկացել են, որ
պատրաստվում են իրենց
սպանել, ուստի հրաժար-
վել են կատարել գիշերով
բանտից շրթայակապ դուրս
գալու հրամանը: Լուրը հա-
ղորդել են գնդապետ Ֆերիդ
բեյին, որը հրամայել է բոլո-
րին սրախողխող անել:

1915թ. հունիսի 25-ին /
հուլիսին / օգոստոսի 4-ին
(ըստ տարբեր աղբյուրնե-
րի), Մեզիրեի բանտի 37 հայ
բանտարկյալները վճռել են
բանտը հրկիզել և ինքնահր-
կիզվել: Իրար վրա են հա-
վաքել բանտի վերմակնե-
րը, իրենց հագուստները և
դրանց վրա լցնելով ճրագնե-
րի նավթը՝ հրկիզել են բան-
տը: Բոլորը զոհվել են:

35 տարեկան Էդվարդ
Թաշճյանը և բժիշկ Նահի-
կյանը կրակի բոցերի մի-

ջից դուրս են եկել կիսամեռ վիճակում: Ոստիկանները սվիններով պատառոտել են նրանց:

37 բանտարկյալների կիսամոխրացած դիակները աղբատար կառքով տարել և լցրել են Զոր աղբյուրի մոտ գտնվող մի փոսում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Բախտիկեան Սարգիս (խմբագիր), Ոսկեգետակ, տարեգիրք, Գ. տարի, Պէյրուս, 1948:

3. Ճիզմէճեան Մանուկ, Խարբերդ եւ իր գաւակները, Ֆրեզնօ, 1955:

4. Յուշամատեան Մեծ եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուս, 1965:

5. Թեոդիկ, Յուշարձան Նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

6. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործութեան պատմութեանից, Երևան, 1990:

7. Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփիկե (կազմողներ), Ցուցակ Հայոց ցեղասպանութեան զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի Նահանգ, Երևան, 2004:

8. ՀՅԹԻՖ, ֆ-49, ծ-231,

պ-14:

ԹԱՉԻՐՅԱՆ (ԹԱՃԵՐՅԱՆ) ՀԱԿՈՒ

Ծնվել է մոտ 1890թ., Տիգրանակերտի Նահանգի կենտրոն Տիգրանակերտ քաղաքում:

1915թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Բժիշկ է աշխատել Տիգրանակերտում:

1915թ. ապրիլին տեղացի հայերի հետ ձերբակալվել է և բանտարկվել Տիգրանակերտի բանտում:

Տեղեկանալով, որ թուրքերը մտադիր են բանտարկված հայերին կենդանի այրել, փորձել է փախչել, սակայն բանտը շրջապատող ոստիկանները բռնել են նրան և սպանել մոտ 25 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:


3. Սահակյան Լիլիկ, Ոճրագործները չխնայեցին նույնիսկ մարդու կյանքը փրկողներին, «Առողջապահություն», Երևան, 1965, թ.

4:

4. Յուշամատեան Մեծ եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուս, 1965:

5. Թեոդիկ, Յուշարձան Նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

պ-14:



ԹԵՐԾՅԱՆ ՀԱԿՈՒ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Դեղագործ, բանասեր, հրապարակախոս:

Ծնվել է 1879/80թ. օգոստոսի 22-ին, Ադանայի Նահանգի Մարաշի գավառի Հաճընի գավառակի կենտրոն Հաճըն քաղաքում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, այնուհետև սովորել Ադանայի Ազգային վարժարանում, ավարտել Հիտուսյանների Ադանայի վարժարանը:

1897թ. մեկնել է Կ. Պոլիս:

1900թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը

և դեղագործի վկայական ստացել:

1908թ. եղել է Ադրիանապոլիս քաղաքի «Մերքեզի» («Կենտրոնական») դեղատան տնօրէնը:

Եղել է ճանաչված հրապարակախոս, զբաղվել է նաև գրական գործունեությամբ, բանասիրությամբ, լուսանկարչությամբ: Միաժամանակ եղել է նաև ճանաչված փաստաբան:

Կ. Պոլսի հայկական պարբերականներում տպագրված իր հրապարակախոսական և բանասիրական հոդվածները ստորագրել է Յակթեր, Հմայեակ, Յիթօ, Տաւրոս, Թըթակից ծածկանուններով:

1909թ. ապրիլին Կիլիկիայում տեղի ունեցած հայկական կոտորածների ժամանակ եղել է Ադանայի ինքնապաշտպանության ղեկավարներից մեկը:

Մագապուրծ լինելով կոտորածից՝ վերադարձել է Կ. Պոլիս:

Կ. Պոլսի Կոլմ կափու թաղամասում ունեցել է «Ադանա» անունով սեփական դեղատունը:

Եղել է հնչակյան գործիչ:

1912թ. Կ. Պոլսում հրատարակել է «Կիլիկիոյ աղէտը. ականատեսի նկարագրութիւններ» 5 հատորով ծավալուն աշխատությունը, որում հանգամանորեն

նկարագրել է 1909թ. Կիլիկիայի կոտորածը՝ վիճակագրական տվյալներով: Աշխատությունը ներկայացվել է Իզմիրյանց գրական մրցանակին, սակայն օսմանյան կառավարությունն ամբողջ տպաքանակը բռնագրավել է:

Հակոբը կարողացել է այդ գրքի մի քանի հարյուր օրինակ փախցնել և թաքցնել իր տան առաստաղների արանքներում:

Այդ մասին իմացել է նրա եղբայր Տիրան Թերզյանը:

1915թ. Հաճընում և Ադա-նայում հաջորդաբար ունեցել է սեփական դեղատներ ու դեղագործ աշխատել:

1915թ. ապրիլին Կ. Պոլսում ձերբակալվել է և արտորվել Այաշ, այնուհետև՝ Չանղըրը:

Անունը փորագրվել է Չանղըրըի բանտում հավաքված համրիչի 99 հատիկներից մեկի վրա:

Ձերբակալությունից հետո կառավարության ներկայացուցիչները նրա դեղատունը կողոպտել են և դուռը կնքել:

1915թ. ապրիլի 24-ին, գաղթի ճանապարհին, Չանղըրից դուրս, Անկարայի մոտակայքում սրախողխող է արվել ընկերոջ՝ բժիշկ Միսքճյանի հետ միասին՝ մոտ 35 տարեկանում:

Աշխատությունները.

1. Արուեստ լուսանկարչութեան, Կ. Պոլիս, 1905:

2. Ատանայի կեանքը, Կ. Պոլիս, 1909 (1911):

3. Կիլիկիոյ աղետը. ակա-նատեսի նկարագրութիւն-ներ, 5 հատորով, (պատկե-րագարդ), Կ. Պոլիս, 1912:

4. Հաճընի գաւառաբար-բառը, ձեռագիր, անտիպ:
Նրա մասին.

1. Թերզեան Յակոբ Յ., Կիլի-կիոյ աղետը, Կ. Պոլիս, 1912:

2. Հայ բժշկութեան տուած զո-հերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

3. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Վիեն-նա, 1922:

4. Յուշամատեան Մեծ եղե-նի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէ-րուս, 1965:

5. Ստեփանյան Գառնիկ, Կենսագրական բառարան, հ. Ա., Երևան, 1973:

6. Թեոդիկ, Յուշարձան Նա-հատակ մտաւորականութե-ան, Բ. տպագրութիւն, Երե-ւան, ապրիլ 24, 1985:

7. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագոր-ծության պատմությունից, Երևան, 1990:

8. Պալաքյան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Երևան, 1991:

9. Մազմանեան Վրոյր, Յուշեր եւ Վկայութիւններ, Անթիլիաս, 1991, 345 էջ

10. Հայկական հարց, հանրագիտարան, Երևան, 1996:

11. Օտեան Երուանդ, Մեր երեսփոխանները, մեր Ազգա-յին ժողովը, Երևան, 1999:

12. Յարման Արսեն, Հա-յերը օսմանյան առողջապա-հության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուր-քերեն), Ստամբուլ, 2001:

13. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողք և վկայք խա-չի, Երևան, 2002:

14. Քոչարյան Վահան, Հայ լուսանկարիչներ, Երևան, 2007:

15. Ավագեան Կարինե, «Չանղըրըի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարա-նային ցուցամոյցը, «Հանդես Ամսօրեայ», 2008, հ. 1-12

16. Սիմոնյան Հրաչիկ, Հայերի զանգվածային կոտո-րածները Կիլիկիայում (1909թ. ապրիլ), Երևան, 2009:

17. Իսկահատեան Հարու-թիւն, Վկայարան Հայկական Ցեղասպանութեան, Գիրք Բ., Պէրուս, 2011, 352 էջ:

18. Իսկահատեան Հ., Վկայարան հայկական ցե-ղասպանութեան, Գիրք Գ, Պէ-րուս, 2011, 395 էջ

19. ՀՅԹՖ, ֆ-49, ծ-13, պ-14:



ԹԵՐԶԵԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԻՐԱԿՈՍԻ / ԿԱՐԱՊԵՏԻ

Ծնվել է 1883/88թ., Տիգ-րանակերտի Նահանգի կենտրոն Տիգրանակերտ քաղաքում, հայ առաքելա-կան ընտանիքում:

Հայրը՝ դերձակ (թուր-քերեն՝ թերզի) Չուրպար-մադյան Կիրակոսը, Տիգ-րանակերտում հայտնի էր իբրև ազգասեր, հայրենա-սեր, ուսումնասեր, բարե-րար մարդ:

Նախնական կրթությունն ստացել է սբ. Կիրակոս եկե-ղեցուն կից ազգային վարժա-րանում:

Ավարտել է ամերիկացի միսիոներների Խարբերդի Եփրատ քոլեջը:

1899թ., մեկնել է Բեյրուս ուսանելու:

1904/06թ. ստացել է «պսակավոր արվեստից» վկայականը:

1904/06-10թթ. սովորել է Բեյրուսի Ամերիկյան հա-մալսարանի բժշկական ֆա-կուլտետում:

Եղել է Համալսարանի Հայ

ուսանողական միության հիմնադիրներից մեկը:

1905թ., համալսարանում ուսանելու ժամանակ, ՀՅԴ հիմնադիրներից, գյուղատնտես Սիմոն Չավարյանի ազդեցության տակ ընդունվել է ՀՅԴ շարքերը և դարձել ՀՅԴ Բեյրութի կոմիտեի հիմնադիր ու եռանդուն 4 անդամներից մեկը:

1910թ. վերադարձել է Տիգրանակերտ և բժիշկ աշխատել:

Այստեղ ևս աշխույժ մասնակցություն է ունեցել կուսակցական-քաղաքական կյանքին, եղել ՀՅԴ Տիգրանակերտի կենտրոնական կոմիտեի և նրա Գաղտնի մարմնի անդամ:

Եղել է նաև Տիգրանակերտի Բանվորների և Բանվորուհիների միությունների կազմակերպմանն օժանդակողներից մեկը:

1911թ. նրա նախաձեռնությամբ և մի քանի գաղափարակիցների բարոյական ու նյութական աջակցությամբ Կ. Պոլսի Կրթության նախարարությունից արտոնագիր ստանալով վերաբացվել և մինչև 1914թ. գործել է Տիգրանակերտի «Յառաջդիմական վարժարանը», որտեղ դասավանդելու էին հրավիրվել առաջադեմ ուսուցիչներ Կ. Պոլսից, Խարբերդից, Կարինից և Այնթապից: Եղել է այդ վարժարանի նախա-

գահը:

Արսեն Յարմանի գրքում Հովհաննես Թերգյանը հիշատակված է նաև Չմյուռնիայի հայկական հիվանդանոցի բժիշկների ցանկում:

1912-13թթ. որպես օսմանյան բանակի հազարապետ բժիշկ՝ մասնակցել է Բալկանյան պատերազմին:

1914թ. հուլիս-օգոստոսին, Հովհաննես Տիգրանյանի հետ, որպես Տիգրանակերտից ընտրված պատգամավոր, մասնակցել է Կարինի ՀՅԴ 8-րդ ընդհանուր ժողովին:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուն պես զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել Երզնկայի Ազիզիե հիվանդանոցում:

1915թ. հուլիսին, Կարինից Երզնկա ընկած ճանապարհին, Բաբերդ չհասած, Մուշի Քոբ (Կոպ) լեռան ստորոտին, 32-րդ զորաբաժնի սպա Մեհմեդ Ալիի հրամանով սպանվել է բժիշկ Լևոն Լուրթի Հալեպյանի հետ միասին, թուրք սպայի և թուրք զինվորների ձեռքով՝ մոտ 33 տարեկանում:

Այլ տվյալով՝ նահատակվել է 1916թ. Կարինի ռազմաճակատում ծառայելու ընթացքում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած

վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

3. Մկուռն Տիգրան, Ամիտայի արձագանգներ, Ուիհօքըն, Նիւ Ճերզի, 1950:

4. Մկուռն Տիգրան, Ամիտայի արձագանգներու վերակոչումն եւ Բ. հատոր, Ուիհօքըն, Նիւ Ճերզի, 1953:

5. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

6. Աւօ, Յեղափոխական Ալպօս, Պէյրուք, Բ. շարք, թ. 8 (26):

7. Սահակյան Լիլիկ, Ոճրագործները չինայեցին նույնիսկ մարդու կյանքը փրկողներին, «Առողջապահություն», Երևան, 1965, թ. 4:

8. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գեքսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

9. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

10. Ատաշ Աղնան, 20-րդ դարի նահատակ եղած բժիշկները (թուրքերեն), Թուրքիա, 1997:

11. Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակ-

ցութեան, Ալբոմ-ատլաս, Բ. հատոր, Գոյամարտ, 1914-1925, Լոս Անճելոս, 2001:

12. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

13. ՀՅԹԻՖ, ֆ-49, ծ-229, պ-14:

14. Զեստենեան Հրաչ, Պէյրուքի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ եւ Մեծ Եղեռնին Նահատակուած Հայ Բժիշկներ, «Ազդակ», 01-11-2012

ԹԵՐԶՅԱՆ ՏԻՐԱՆ

Հավանաբար Հակոբ Թերգյանի եղբայրն է:

Իմացել է որ Հակոբ Թերգյանը իրենց տան առաստաղի արանքներում թաքցրել է իր հեղինակած «Կիլիկիոյ Աղէտը» գրքի մի քանի հարյուր օրինակներ, ինչպես նաև զենքեր՝ վեցհարվածանի ատրճանակ, փամփուշտներ:

Ծնվել է Լեռնային Կիլիկիայի Հաճըն քաղաքում:

Բժշկական կրթություն է ունեցել:

Եղել է բժիշկ և գյուտարար:

1920 թ. հոկտեմբերի 15-ին մասնակցել է Հաճընի ինքնապաշտպանությանը և զոհվել:

Նրա մասին.

1. Մագմանեան Վրոյր, Յուշեր եւ Վկայութիւններ, Անթիլիաս, 1991, 345 էջ

2. Գրիգոր Գրաճեան, Ինկաւ Հաճընը, Կ'ապրի Հաճընցին, Պէյրուք, 25 Հոկտեմբեր 2010,

3. Իսկահատեան Հարութիւն, Վկայարան Հայկական Տեղասպանութեան, Գիրք Բ., Պէյրուք, 2011, 352 էջ:

4. <http://www.keghart.com/Krajian Hajn>

ԹԻՐՅԱԸՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

Ունեցել է բարձրագույն դեղագործական կրթություն:

Եղել է դեղագործ:

Ապրել և աշխատել է Եդեսիայում (Ուրֆա):

1898 թ. Եդեսիայի հիվանդանոցի գլխավոր բժիշկ նշանակված շվեցարացի բժիշկ Հերման Զրիստի օրոք եղել է այդ հիվանդանոցի դեղագործը:

1915 թ. Մեծ Եղեռնի օրերին թուրքերը գիշերով եկել են նրա տուն և տարել անհայտ ուղղությամբ:

Այլևս չի վերադարձել:

Թոռը՝ Մովսես Թիրյաքյանը, 1908 թ. ծնվել է Եդեսիայում:

Եղեռնի օրերին Մովսեսի մայրը՝ Վարդենին, համոզված լինելով, որ զավակները իր հետ գաղթի ճամփան

բռնելով անպայման կզոհվեն, 7-ամյա տղային հանձնել է Ամուտա գյուղի բնակիչ քուրդ Համո-Պրոո ընտանիքին, իսկ դստերը՝ մի այլ քուրդ ընտանիքի:

Մովսեսը քուրդ ընտանիքում դառնում է Մուսա Իբրահիմ և ապրում ախոռում:

Մովսեսը հետագայում մեծանում է որպես քուրդ, սակայն նրա զավակները իմանում են իրենց հոր հայ լինելու մասին:

Նրա մասին.

1. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

2. Աբելեան Գեորգ (Ճորճ), Ցկեանս Նահատակութիւն 2, Աղբարի'կ, Ափիկ Սը Զո'ւր..., «Սավա» թիվ 6, Պէյրուք, 2010, 460 էջ

3. Իսկահատեան Հարութիւն, Վկայարան Հայկական Տեղասպանութեան, Գիրք Բ., 2011, 352 էջ:



ԹԻՐՅԱԸՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՆ

Բժիշկ, բանասեր, թարգմանիչ, հայագետ, արևելագետ, մշակութային գործիչ:

Ծնվել է 1845թ. դեկտեմբերի 25-ին, Անկարայի Նահանգի Կեսարիայի գավառի Թալաս ավանում:

Սկզբնական կրթությունն ստացել է Թալասի Վարդ-Պատրիկյան (Գյուլբենկյան) վարժարանում, որտեղ խորացել է հայերեն և թուրքերեն լեզուների մեջ:

1870թ. միջնակարգ կրթությունն ստացել է Կ. Պոլսի Ֆրերների վարժարանում:

1870-72թթ. եղել է Տրապիզոնի Ազգային Լուսավորչյան վարժարանի տնօրենը և ուսուցիչը:

1872թ. վերադարձել է Կ. Պոլիս:

1872-78թթ. սովորել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետում: Երկրորդական անբավարարության պատճառով, ուսմանը զուգահեռ զբաղվել է արևելյան լեզուներից թարգմանություններ կատարելով:

1878թ. մայիսի 13-ին Փարիզում պաշտպանել է «Մոլեխիսնդ բույսի թույնի մասին» թեմայով ավարտաճառ, որում խոսել է համանուն բույսի թույնի գիտական անալիզի մասին և պատմել, թե ինչպես են դրանով աթենացիները թուևավորել և սպանել Սոկրատեսին:

տեսին: Բժշկության դոկտորի կոչման, Ֆրանսիական ակադեմիայի հատուկ մեդալին և դրամական պարգևի է արժանացել:

1878թ. վերադարձել է Կ. Պոլիս և սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցի բժշկապետ նշանակվել:

Միաժամանակ զբաղվել է հասարակական եռանդուն գործունեությամբ:

1881-90թթ. եղել է Ազգային կենտրոնական վարչության Զաղաքական ժողովի անդամ: Եռանդուն մասնակցություն է ունեցել Նաև Կ. Պոլսի կրթական ընկերությունների գործունեությանը, ընտրվել Զաղաքական ժողովի Ուսումնական խորհրդի ատենապետ:

1890թ. Կ. Պոլսի Կում կափուկի հեղափոխական հակակառավարական անդրանիկ ցույցը կազմակերպելու և դրան մասնակցելու մեղադրանքով Տատյանների, Արփիար Արփիարյանի, Հակոբ Շավարշի և ուրիշների հետ ձերբակալվել է և բանտարկվել:

1891թ. ազատվել է բանտից և հեռացել հասարակական կյանքից:

1891-96թթ. զբաղվել է բժշկությամբ և գրական գործունեությամբ:

1895-96/97թթ. եղել է Կ. Պոլսի սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցի գլխավոր բժիշկ:

կը:

1896թ. եղել է սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցում բացված բուժքույրական դասընթացի առաջին դասատուն:

1896/97-1906թթ. ընտանիքով տեղափոխվել է Թեհրան, որտեղ Սոգաֆֆերեդդին շահի կանանոցի (հարեմի) բժշկապետ է աշխատել:

Երկարատև ու բարեխիղճ աշխատանքի համար շահից արժանացել է ժառանգաբար փոխանցվող «խան» տիտղոսին:

1899-ական թվականներին, համալսարանական ջրավոր ուսանողներին օգնելու համար կազմակերպել է միություն, որը որոշ ժամանակ հաջողությամբ գործել է:

Պ ա Ր Ա կ ա ս տ ա ն ու մ գտնվելու 10 տարիների ընթացքում, բժշկությանը զուգահեռ, զբաղվել է պահլավերենի ուսումնասիրությամբ, թարգմանություններ կատարել այդ լեզվից:

1906-07թթ. տեղափոխվել է Շվեյցարիա, ապա՝ Փարիզ:

1907թ. տեղափոխվել է ԱՄՆ-ի Նյու Յորք քաղաքը և շարունակել զբաղվել հասարակական գործունեությամբ:

Տիրապետել է հայերեն, թուրքերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, պահլավերեն, արաբերեն, հին և նոր պարսկերեն լեզուներին:

Հեղինակ է լեզվաբա-

նական, բանասիրական, թարգմանական, գիտական գրքերի և բազմաթիվ հոդվածների, որոնք տպագրվել են ժամանակի պարբերական մամուլում:

Մահացել է 1919թ. մարտի 1/2-ին, Նյու Յորքում 74 տարեկանում:

Որդին՝ Միհրդատ Թիրյաքյանը, հոր մահից հետո հրատարակել է նրա որոշ աշխատությունները:

Նրա անձնական արխիվը պահվում է Հայաստանի ազգային արխիվում:

Աշխատությունները.

1. Հայկական տաղաչափություն, 1906, 1918:
2. Արտաշիր Պապականի Կարևամակը, դրվագ, թարգմանություն, Փարիզ, 1907:
3. Ատրպատ Մարանպանդան, «Անդարձ», թարգմանություն, Նիւ Եորք, 1909:
4. Ֆիրդուսի, «Շահնամակ», թարգմանություն, Նիւ Եորք, 1909:
5. Արիահայ բառարան, Նիւ Եորք, 1914-1920:
6. Հայերենի գեղծումները, 1917:
7. Պուլալո Ն., «Արուեստ քերթողական», թարգմանություն, Ճանօթագրություններով եւ առաջաբանով, Նիւ Եորք, 1919:
8. Սաադի, «Գոլեստան», թարգմանություն, Նիւ Եորք, 1920:
9. Հայ-իրանական ուսում-

նասիրությունը, Վիեննա, 1922:

10. Տելեմաքը թարգմանել է գրաբարի, մրցելով Հայր Արսեն Բագրատունու հետ:

Նրա մասին.

1. Տօրթ. Յարութիւն Թիրեաքեան Խան, «Բժիշկ», Կ. Պոլիս, 1913, թ. 11:

2. Ղազարեան Վահան, Բժշկական եւ առողջապահական տարեցոյց, Կ. Պոլիս, 1914:

3. Էջ մը տորթ. Յ. Թիրեաքեանի «Ինքնակենսագրութենէն», «Ամերիկահայ հանրագիտակ տարեգիրք, 1925», Պոսթըն, 1924:

4. Ալաօյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. Գահիրէ, 1937:

5. Ազգային հիւանդանոցի մէջ պաշտօնավարած բժիշկները. Ընդարձակ տարեգիրք Ազգային հիւանդանոցի, Իսթանպուլ, 1939:

6. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

7. Դանիել Վարուժան, Լամականի, Երևան, 1965:

8. Ստեփանյան Գառնիկ, Կենսագրական բառարան, Կ. Ա, Երևան, 1973:

9. Վահէ Հայկ, Լուսաւոր դէմքեր մեր օրերուն վրայ, Պէյրութ, 1973:

10. Յուշամատեն 160-ամեայ սուրբ Փրկիչ հա-

յոց հիւանդանոցի, աշխատասիրեց Վ. Զեօսեան, Իսթանպուլ, 1975:

11. Հայկական սովետական հանրագիտարան, Կ. 4, Երևան, 1978:

12. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մէջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

13. Փաշայան Ասատուր, Տիտղոսակիր հայեր, XV-XIX դարեր, Ե., 2001:

14. Փամուքջյան Գևորգ, Հայերը իրենց կենսագրականներով (թուրքերեն), Ստամբուլ, 2003:

15. Հովակիմյան Բ. Հայոց ծածկանունների բառարան, Ե., 2005:

16. ՀԱԱ, Հարություն Թիրյաքյանի ընտանեկան ֆոնդ, ֆոնդ 235, նայվել է 2007թ. փետրվարին:



ԹՅՈՒԹՅՈՒՆԸՅԱՆ Գ. Յ.

Բարձրագույն բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել:

Չոհվել է Մեծ եղեռնի ընթացքում:

Նրա մասին.

Սարաֆեան Գեորգ, Պատմության Գիտությունների ակադեմիկոս



ԹՅՈՒՂԵՆՏՅԱՆ ԿԱՐԴԻՍ

Ծնվել է 1894թ., Կարինի նահանգի Բաբերդի գավառի կենտրոն Բաբերդ քաղաքում:

1896թ. ջարդի ժամանակ կորցրել է ծնողներին:

1903-06թթ. սովորել է Կարին քաղաքի Կարմիր վանուց ժառանգավորաց վարժարանում:

1906թ. փոխադրվել է Կ. Պոլիս և սովորել Կեդրոնական, ապա Էսայան վարժարաններում:

Ուսանել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական համալսարանի դեղագործական բաժնում:

Նյութական պայմանների

պատճառով ուսումը թողել է թերավարտ:

Կ. Պոլսի Բերա թաղամասում դեղագործ է աշխատել: Եղել է ՀՅԴ անդամ:

1914թ. դաշնակցական լինելու պատճառով, ենթարկվել է թուրքական ոստիկանության հետապնդումներին: Սկզբում թաքնվել է ոստիկանությունից, ապա գործել է կեղծանունով:

1914թ., Առաջին աշխարհամարտի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և Մաքրիգյուղում (Բաքըրքեոյ) զինվորական դեղագործ ծառայել:

1918թ., պատերազմն ավարտվելուց հետո իր հորեղբորորդի Ա. Բաբերդյանի և Պ. Եմենիճյանի հետ լքվել է որբահավաքության ազգանվեր, սակայն հույժ վտանգավոր գործին, որ վարում էր Ա. Չագըրյանը:

1922թ. վերջերին Կ. Պոլսից անցել է Ֆրանսիա, որտեղ դեղագործ է աշխատել:

Քայքայված առողջությունը վերականգնելու և կազդուրվելու նպատակով որոշ ժամանակ ապրել է Կիպրոսում:

Մահացել է 1927թ. փետրվարի 23-ին, Մարսելում՝ 33 տարեկանում:

Նրա մասին.

Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը, 1928, Փարիզ, 1929:

ԹՅՈՒՂԵՆՏՅԱՆ ՄԻՆԱՍ ԷՅԵՆԴԻ

Ծնվել է 1870թ., Բրուսայի նահանգի Ադաբազար քաղաքում:

1901թ. հունիսի 27-ին ավարտել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1908թ. եղել է Ադաբազարի Կրթասիրաց ընկերության անդամ:

1914թ., Առաջին աշխարհամարտի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և Բաղդադում տեղակայված զորաբանակում զինվորական բժիշկ ծառայել:

1915թ. հուլիսի 4-ին, սպանվել է ռազմաճակատում կամ 1916թ. մահացել ժանտախտից՝ Հալեպում՝ 45 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկուկթեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուշամատեան Մեծ եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

3. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

4. Ատաշ Աղնան, 20-րդ դարի նահատակ եղած բժիշկ-

ները (թուրքերեն), Թուրքիա, 1997:

5. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ԹՅՈՒՐԵՔՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

Ծնվել է Խարբերդի նահանգի Խարբերդ քաղաքում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

Սպանվել է 1915թ.:

Նրա մասին.

Խաչատրյան Լ. և ուրիշն., Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի նահանգ, Ե., 2004:

ԹՈՐԳՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ

Ծնվել է 1868թ., Սեբաստիայի նահանգի Սեբաստիա քաղաքում՝ տեր Եփրեմ քահանայի ընտանիքում:

1906թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը կամ Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Շապին-Կարահիսարում, Տիվրիկում և Էնտիրեսում բժիշկ է աշխատել:

Սպանվել է 1915թ.՝ 47

տարեկանում:

Նրա մասին.

1. Յարման Ա., Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

2. Խաչատրյան Լ. և ուրիշն., Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գ.1, Սեբաստիայի նահանգ, Ե., 2004:

ԹՈՐԳՈՍՅԱՆ ԽԱՉԱՏՐԻ

Ծնվել է 1875թ., Սեբաստիայի նահանգի Սեբաստիա քաղաքում:

Դեղագործական կրթություն է ունեցել և Կ. Պոլսում դեղագործ է աշխատել:

Եղել է Կ. Պոլսի Բժշկական ընկերության նախագահը:

1915թ. ապրիլի 24-25-ի գիշերը Կ. Պոլսում ձերբակալված 235 անվանի հայ մտավորականների մեջ է եղել:

1915թ., սպանվել է Սեբաստիայում կամ քաղաքից դուրս՝ 40 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուժած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

3. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորակա-

նութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

4. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

5. Խաչատրյան Լ. և ուրիշն., Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Ե., 2004:



ԹՈՐԳՈՍՅԱՆ ՎԱՀՐԱՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Բժիշկ, բժշկության պատմաբան, բանասեր, հանրային գործիչ:

Ծնվել է 1858թ. ապրիլի 20-ին, Կ. Պոլսի ասիական կողմի Սկյուտար թաղամասի Սելամսուրգ թաղում:

Հայրը՝ Հարություն աղա Թորգոմյանը եղել է սափրիչ և, կարդացած լինելով հայ բժիշկ Միքայել Բեստենի հայերեն բժշկական գրքերը, զբաղվել է նաև մանր վիրաբուժությամբ:

1877թ. ավարտել է ծննդավայրի սբ. Խաչ վարժարանը,

այնուհետև սովորել Կ. Պոլսի Կալաթասերայի «Մեքթեբի Սուլթանիե» բարձրագույն վարժարանում:

1878-79թթ. սովորել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանում:

1879-84թթ. սովորել է Փարիզի բժշկական համալսարանում:

1884թ. նոյեմբերի 14-ին ստացել է բժշկի վկայական:

1885թ. վերադարձել է Կ. Պոլիս, զբաղվել բժշկությամբ և քաղաքի ճանաչված բժիշկներից մեկը դարձել կարճ ժամանակում:

1884/85թ. եղել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական ընկերության նախագահի տեղակալը:

Երկար տարիներ եղել է Կ. Պոլսի Հայկական բժշկական ընկերության նախագահը:

1886թ.-ից ի վեր զբաղվել է ազգային-հասարակական եռանդուն գործունեությամբ. եղել է Կ. Պոլսի Ազգային կենտրոնական վարչության քաղաքական ժողովի անդամ, նույնի Առողջապահության խորհրդի անդամ, 1897-1905թթ.՝ Ուսումնական խորհրդի ատենապետ:

Չբաղվել է նաև գրական գործունեությամբ:

1880-ական թվականների վերջերից հրատարակել է դպրոցական բժշկության

հարցերին նվիրված գրքույկներ, մամուլում հանդես եկել բանասիրական հոդվածներով: Հետագա գործունեությունը առավելապես նվիրված է եղել հայ բժշկության պատմությանը և 18-19-րդ դարերի հայ բժիշկների կենսագրություններին:

Աշխույժ մասնակցություն է ունեցել Կ. Պոլսի և Փարիզի հայ բժիշկների, բժշկության պատմության ֆրանսիական ընկերությունների և միջազգային համաժողովներին:

Եղել է Իզմիրյանց գրական մրցանակի դատակազմի նախագահը:

1890-ական թվականներից թղթակցել է Վիեննայի «Հանդես ամսօրեայ» ու եվրոպական տարբեր պարբերականների և հիմնականում հայ բժշկության առանձին հարցերին ու հայ հին բժիշկներին նվիրված բազմաթիվ հոդվածներ հրատարակել:

Ղրիմի պատերազմում զոհված և Կ. Պոլսի Շիշլիի ազգային գերեզմանոցում թաղված ֆրանսիացի զինվորների մասին գրած ուսումնասիրության համար արժանացել է «Պալմ Ակադեմիք» պատվանշանին:

1898-1907թթ. և 1922-23թթ. եղել է սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցի հոգաբարձության անդամ:

Եղել է Հայոց տառերի գյուտի 1500-ամյակի և Հայոց

տպագրության 400-ամյակի հոբելյանների հանձնաժողովների ատենապետը:

4. Պոլսում եղել է անչափ սիրված ու հարգված անձ և ճանաչված բժիշկ:

Օսմանյան բարձր շրջանակներում մեծ հեղինակություն վայելելով և արքայազն Աբդուլ Մեջիդի 20 տարվա անձնական բժիշկը լինելով, Կիլիկիայի հայկական ջարդերը կանխելու նպատակով, Գրիգոր Չոհրապի հետ միասին բանակցություններ է վարել մեծ վեզիրի հետ:

1915թ. ապրիլի 11 (24)-ին, Կ. Պոլսում ի թիվս 600 հայ մտավորականների ձերբակալվել և արգելափակվել է Կ. Պոլսի կենտրոնական բանտում: Նրանց մեջ էին նաև բժիշկներ Նազարեթ Տաղավարյանը, Կարապետ Փաշայանը, Միրզա Կենճյանը, Հակոբ Նարկիլեճյանը, Տիգրան Ալլահվերդին և ուրիշներ: Նույն բանտախցում են գտնվել Տիրան Զելեկյանը, Կոմիտաս վարդապետը, Գրիգորիս վարդապետ Պալաքյանը, Հովհան վարդապետ Կարապետյանը, վերապատվելի Զերոբեանը, բժիշկ Թորգոմյանը, վաճառական Հակոբ Գորյանը, սեղանավոր Հովհաննես Թերլեմեզյանը և «Բիւզանդիոնի» խմբագիր Բյուզանդ Զեչյանը:

1915թ. ապրիլի 12-ին արտրվել է Այաշի բանտը:

Անունը փորագրվել է Չանդըրըի բանտում հավաքված համրիչի 99 հատիկներից մեկի վրա:

Այաշի քաղաքային քաղաքում է մեծ վեզիր Սալիդ Հալիմ փաշային Աբդուլ Մեջիդ իշխանի կամ սուլթան Մեհմեդ V Ռեշադի (որոնց անձնական բժիշկն էր) անձնական միջնորդությամբ:

1915թ. մայիսի 2-ին (ըստ 1331 (1915)թ. ապրիլի 26-ի հրամանի) ազատվել է և վերադարձել Կ. Պոլիս:

1916թ. ապրիլի 2/15 տաժանակրությամբ տեղափոխվել է Դեյր-Էլ-Չոր և Հալեպ:

1918թ. նոյեմբերին հիմնադրել է «Ազգային համախմբումը»՝ ժողովրդի բեկորված ուժերը համախմբելու նպատակով:

1918-20թթ. Կարմիր խաչի հայկական բաժանմունքի նախագահի հանգամանքով նշանակալի դեր է խաղացել Հայաստանի առաջին հանրապետությանը բարոյապես և նյութապես աջակցելու գործում:

1923թ. Թուրքիայում քեմալականների իշխանության հաստատումից հետո տեղափոխվել է Փարիզ, ուր զբաղվել է հիմնականում բանասիրությամբ և հայ բժշկության պատմության հարցերով:

Ընտրվել է Փարիզի Հայ բժիշկների ընկերության նա-

խագահ, ապա՝ պատվավոր նախագահ:

Երեք տարի ուսումնասիրել է Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի և Փարիզի Ազգային գրադարանի հայկական բժշկական ձեռագրերը և դրանց վերաբերյալ բազմաթիվ ընդարձակ աշխատություններ հրատարակել միաբանության «Բազմավեպ» ամենամսյա հանդեսում:

Հեղինակ է ավելի քան 100 գիտական աշխատությունների, որոնք փաստական հարուստ նյութ են պարունակում հայ հասարակական մտքի պատմության վերաբերյալ:

1933թ. ընտրվել է Ռումի-նիայի բժիշկ-պատմաբանների ընկերության պատվավոր անդամ:

Պարգևատրվել է Բժշկության պատմության միջազգային կոնգրեսի մեդալով, Ռումի-նիայի բժիշկ-պատմաբանների ընկերության շքանշանով:

Ֆրանսիական կառավարության «Ակադեմիայի սպա» (Officier d'Academie) պատվավոր կոչմանն է արժանացել:

Մահացել է 1942թ., Փարիզում՝ 84 տարեկանում:

Նրա հարուստ անձնական արխիվը պահվում է Երևանի Եղիշե Զարենցի անվան գրականության և արվեստի

թանգարանում և կարոտ Է ուսումնասիրության ու հրատարակման:

Աշխատությունները.

1. Արդի հնդկահայ բժիշկները, Մաս 1, Վիեննա, 1896:

2. Դպրոցներու առողջապահութիւնը, Վենետիկ, 1908:

3. Հրատարակել է Երեմյա Չելեպիի 3 հատորանոց «Պատմութիւն Ստամբուլայ»

չափածո երկը, ընդարձակ ծանոթագրություններով, որի Ա հատորը լույս է տեսել Վիեննայում, 1913թ., իսկ Բ և Գ հատորները՝ Առաջին համաշխարհային պատերազմից հետո, դարձյալ Վիեննայում:

4. Հարիւրամեակ Ըստենի բժշկական հրատարակութեան, Վենետիկ, 1922:

5. Հայ բժշկական արձանագրաբանութիւն, Վենետիկ, 1931:

6. Դպրոցական առողջապահութիւն:

7. Համալսարանական հին հայ 40 բժիշկներ:

8. Հայ բժշկական ձեռագիրը:

9. Հայրուհիները հայ բժշկութեան պատմութեան մէջ:

10. Amirdovlat d'Amasie... «Bulletin de la Societe de l'Histoire et de la Medicine», 1919.

11. Les Manuscrits Medicaux Armeniens de la Bibliotheque Nationale de Paris,

«Bulletin de la Societe de l'Histoire et de la Medicine», 1925.

Նրա մասին.

1. Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1905:
2. Ղազարեան Վահան, Բժշկական եւ առողջապահական տարեցոյց, Կ.Պոլիս, 1914:
3. Զէչեան Բիւզանդ, Դրուագ աքսորի շրջանէն, Թէոդիկ, 1922:
4. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Վիեննա, 1922:
5. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:
6. Ստեփանյան Գառնիկ, Կենսագրական բառարան, հ. Ա, Ե., 1973:
7. Շիկահեր Վարդ, Կիսադարեան պատմութիւն թրքահայ բժշկութեան, 1923-1975, Իսթանպուլ, 1975:
8. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, Երևան, 1978:
9. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Երևան, 1991:
10. Ղարիբջանյան Ստեփան, Վահրամ Թորգոմյան-140, «Նարեկ» թերթ, Ե., 1998, թ. 7 (77):
11. Օտեան Երուանդ, Մեր երեսփոխանները, մեր Ազգա-

- յին ժողովրդ, Երևան, 1999:
12. Վարդանյան Ս., Հայաստանի բժշկության պատմություն, Ե., 2000:
13. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:
14. Հայ անվանի բժիշկներ, գ. Ա, Գլխ. խմբագիր՝ Ա. Շիրիկյան, Ե., 2002:
15. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողք և վկայք խաչի, Ե., 2002:
16. Փամուկքջյան Գևորգ, Հայերը իրենց կենսագրականներով (թուրքերեն), Ստամբուլ, 2003:
17. Զօհրապ Գրիգոր, Երկերի ժողովածու, հ. Ե, գիրք 1, Երևան, 2004:
18. Ավագեան Կարինե, «Չանդրըրի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդէս Ամսօրեայ», 2008, հ. 1-12
19. Իսկահատեան Հարութիւն, Վկայարան Հայկական Ցեղասպանութեան, Գիրք Բ., Պէյրուզ, 2011, 352 էջ



ԹՈՐՈՍՅԱՆ ՊԵՆՆԵ Դ.

Իսկական անունը եղել է Մանուկյան Պետրոս Թորոսի, սակայն գրվել է նաև Թորոսյան Պետրոս:

Կրել է նաև Տոքոտ. Պ. Պեննե և Պետրոս Ուստա Մանուկյան մականունները:

Ծնվել է 1881թ. նոյեմբերի 2-ին, Խարբերդի նահանգի Խարբերդի գավառի Հյուսեյնիկ (Հապուսի) գյուղում:

1890թ. հայրը մահացել է և ընտանիքի հոգսը մնացել է մոր վրա:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի վարժարանում:

1897թ. ավարտել է Խարբերդի ամերիկացի միսիոներների Եփրատ վարժարանը՝ մաթեմատիկական բարձր ընդունակություններ դրսևորելով:

1897թ.-ից Արաբկիրի և Հյուսեյնիկ գյուղի դպրոցների դասատու է աշխատել:

1903թ., աշխատելուն զուգահեռ, հաջողությամբ ավարտել է ինքնաշխատությամբ ուսանած ամերիկացի միսիոներների Խարբերդի Եփրատ քոլեջը:

Շարունակել է Հյուսեյնիկ գյուղի, ապա՝ Խարբերդի սբ.

Հակոբ թաղի, Թլկատինցու Կեդրոնական վարժարանի (Կարմիր կոլեջ) ուսուցիչ աշխատել:

Ցանկացել է անցնել ԱՄՆ, սակայն չի հաջողվել:

1903-09/10թթ. ուսանել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետում և փայլուն ավարտել: Աջքի ընկնելով իր պատրաստվածությամբ՝ համալսարանի նախագահության առաջարկով, ցածր կուրսերի օգնական ուսուցիչ է աշխատել:

Բեյրութում ուսանելու ընթացքում մի քանի տարի եռանդուն համագործակցել է Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության Բեյրութի մասնաճյուղի հետ և քաղաքում հնչակյան ուսանողական միություն կազմակերպել:

1909թ. գնացել է Խարբերդ, ապա անցել Եվրոպա:

1910թ. մասնագիտության մեջ կատարելագործվելու նպատակով մեկնել է ԱՄՆ:

Թե՛ Եվրոպայում և թե՛ ԱՄՆ-ում զբաղվել է հնչակյան գաղափարախոսության քարոզչությամբ, ապա վերադարձել և հաստատվել է Կ. Պոլսի Բերա թաղամասում:

Եղել է բարի և անշահախնդիր բժիշկ ու աղքատներին, զինվորներին, ընկերներին բուժել ձրի:

Մեծ համբավ է ունեցել ինչպես Կ. Պոլսում, այնպես էլ արաբական աշխարհում:

ՄԴՀԿ քեոսթենջեի (Կոստանցա՝ Ռումինիայում) ընդհանուր պատգամավորական ժողովին ընտրվել է ՄԴՀԿ-ի Վարիչ մարմնի անդամ:

Եղել է Իթթիհադի դեմ ազգային-ազատագրական պայքարի անձնավեր մարտիկներից մեկը:

1914թ. ճանաչված լինելով որպես Օսմանյան պետության համար վտանգավոր անձ, ի թիվս այլ հնչակյան պարագլուխների, ձերբակալվել է և ավելի քան մեկ տարի արգելափակվել Կ. Պոլսի բանտում, որտեղ նրան խոշտանգումների են ենթարկել, պահանջել, որ մատնի ազատագրական պայքարի իր ընկերներին, պարտադրել իսլամություն ընդունել:

1915թ. հունիսի 15-ին, Կ. Պոլսի Սուլթան Բայազիդի հրապարակ շղթայակալ բերել են 20 հնչակյան մտավորականի, որոնց մեջ էր նաև Պեննեն:

Կարդում են մահավճիռի պատճառը՝ «ազատագրական ձգտումներ ունենալու համար»:

Բոլորը միաժամանակ կախաղան են բարձրացվել:

Կախվելուց առաջ՝ 34 տարեկան Պեննեն բղավել

է իր դահիճների երեսին. «Դուք մեզ քսաններս կը կախեք, գիտցած եղէք թե մեր ետեւէն քսան հազարներ պիտի գան՝ մեր վրէժը լուծելու»:

Նրա մասին.

1. Գաբամաճեան Ս., Հայաստանի կադանդէքը: Մեծ եղեռնի զոհերը իրենց պատկերներով, Կ. Պոլիս, 1919:

2. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

3. Բախտիկեան Սարգիս (խմբագիր), Ոսկեգետակ, տարեգիրք, Գ. տարի, Պէյրուք, 1948:

4. Ճիզմեճեան Մանուկ, Խարբերդ եւ իր զաւակները, Ֆրեզնօ, 1955:

5. Կարոյեան Գասպար, Մեծ եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

6. Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան, 1887-1963, Բ. հատոր, խմբագիր՝ Արսէն Կիտուր, Պէյրուք, 1963:

7. Սահակյան Լիլիկ, Ռճրագործները չխնայեցին նույնիսկ մարդու կյանքը փրկողներին, «Առողջապահություն», Երևան, 1965, թ. 4:

8. Յուշամատեան Մեծ եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

9. Հիւսէյնիկ, խմբագիր՝ Կ. Ահարոնեան, Պոսթոն, 1965:

10. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորակաւորութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

11. Հայրապետյան Վահիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

12. Հովակիմյան Բախտիար, Հայոց ցեղասպանության նահատակ գործիչների ծածկանուններ, Ե., 2002:

13. Գալաճյան Հ., Ողիսւս աքսորական, Հուշեր, Երևան, 2004:

14. Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Յուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի նահանգ, Երևան, 2004:

15. Զեստենեան Հրաչ, Պէյրուքի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ եւ Մեծ եղեռնին նահատակուած Հայ Բժիշկներ, «Ազդակ», 01-11-2012

ԹՈՐՈՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

Ծնվել է Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի Էվերեկի գավառակի Ֆենեսե գյուղում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

Եղել է ՀՅԴ անդամ:

Թուրքական պաշտոնական թղթակցությունների թուրքերեն բնագրերը մի զարմանալի միջոցով կարողացել է ձեռք գցել և բանտում գտնվող Արիսին տալ:

1915թ. ձերբակալվել է և բանտարկվել Դեպո բանտում, որտեղ կային 860 բանտարկյալներ:

1915թ. սպանվել է Էվերեկի բանտում կամ Կեսարիայի բերդում:

Այլ տվյալով մահացել է աքսորի ճանապարհին՝ Սիրիայի անապատներում:

Նրա մասին.

1. Արիս Տ. Կ. Գալֆայեան, Չոմախլու (Կեսարիա), հրատարակութիւն «Չոմախլուի նպաստամտոյց Ընկերութեան», «Կոչնակ» տպարան, Լիւ Եորք, 1930, 168 էջ

2. Գալֆայեան Կարապետ աւագ քահանայ, Գիրք ելից հայոց, Պէյրուք, 1955:

3. Շահբազյան Հասմիկ և Միրզոյան Անահիտ (կազմողներ), Յուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 3, Անկարայի նահանգ, Երևան, 2006:

4. Իսկահատեան Հ., Վկայարան հայկական ցեղասպանութեան, Գիրք Գ, Պէյրուք, 2011, 395 էջ



**ԹՈՓԱԼՅԱՆ ՈՍԿԱՆ
(ՈՍԿԻԱՆ, ՕՍԿԱՆ)
ԷՅԵՆԴԻ Հ./Գ.**

Ծնվել է 1878թ., Օսմանյան կայսրության Հալեպի նահանգի Մարաշի գավառի կենտրոն Մարաշ քաղաքում, հայ առաքելական ընտանիքում:

Նախնական կրթությունն ստացել է Մարաշի ազգային (թաղային) վարժարաններից մեկում / ամերիկացի միսիոներների Մարաշի «Ակադեմի» բարձրագույն վարժարանում:

Երկրորդային կրթությունը և «պսակավոր արվեստից» վկայականը ստացել է ամերիկացի միսիոներների Կենտրոնական Թուրքիայի քոլեջում, որ կոչվում էր նաև Այթապ քոլեջ:

1905թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Ուսման տարիներին հետաքրքրվել է վիրաբուժությամբ:

Մի քանի ամիս Մարաշում բժիշկ է աշխատել և, քանի որ տեղի համբավավոր վիրաբույժ, ամերիկացի դոկտ.

Շեփրդի հեղինակությունը սահմանափակում էր նրա վիրաբուժական ձգտումները, տեղափոխվել է Տիգրանակերտ:

1905թ. վերջերին հաստատվել է Տիգրանակերտում, վիրաբույժ աշխատել և անվանի դարձել:

1908թ. օսմանյան սահմանադրության վերահաստատումից հետո, խանդավառված ժողովրդական ցույցերով, ազատության և հավասարության նշանախոսքերով, անդամակցել է Իթթիհադ վե Թերաքքի կուսակցության տեղի կոմիտեին:

Շնորհիվ իր բժշկական համբավի, ժողովրդի մեջ ունեցած հարգանքի, բարյացակամ զոհողությունների և թուրքերենի գերազանց իմացության, ընտրվել է Իթթիհադի տեղական կոմիտեի կենտրոնական վարչության քարտուղար:

Այդ օրերին Սելանիկից Տիգրանակերտ եկած իթթիհադական քարոզիչ ոմն Վեհիբ բեյի՝ կուսակցական ժողովում հակահայկական ելույթից հետո բժիշկը պատռել է երկերեսանի թուրքի դիմակը և հրապարակայնորեն հեռացել կուսակցությունից:

Այնուհետև իր կյանքի ապահովության նպատակով բրիտանական հյուպատ.

տոսարանի թարգմանիչ է աշխատել:

Այդ հարցում նրան օգնել է Տիգրանակերտում երկար տարիներ բրիտանական փոխհյուպատոսի պաշտոնը վարող վերապատվելի Թովմաս Մկրտիչյանը:

Հետագայում տեղափոխվել է Եվդոկիա և շարունակել բժիշկ աշխատել:

Եղել է ՀՅԴ անդամ:

1914թ. Առաջին աշխարհամարտի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և ուղարկվել Երզնկա / Կարին՝ Ազգիկեի կենտրոնական զինվորական հիվանդանոցի բժիշկ ծառայելու՝ կապիտանի աստիճանով:

1915թ. հունիսի 12-ին, Երզնկայում (Երզնկայի մոտ կամ Կարինում) թուրք զինվորները սրախողխող անելով սպանել են Ո. Թոփայանին մի քանի հայ բժիշկների հետ միասին՝ 37 տարեկանում:

Տիգրանակերտում բժշկի թուրք թշնամիները սրախող են արել նրա ողջ գերդաստանը՝ օրորոցի մանուկից մինչև չափահասները:

Այլ տվյալով՝ ծառայության է ուղարկվել Կովկասյան ռազմաճակատ և այդտեղ սպանվել թուրք զինվորների ձեռքով:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վա-

ւերական փաստերով, Ստամբուլ, 1919:

2. Գալուստեան Գրիգոր Հ., Մարաշ, Նիւ Եորք, 1934:

3. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եւդոկիոյ հայոց, Գահիրէ, 1952:

4. Ժամկոչեան Բենիամին, Հայնի, Պէյրուք, 1952:

5. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

6. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

7. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

8. Գալուստեան Գրիգոր Հ., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն, Նիւ Եորք, 1988:

9. Ատաշ Ադնան, 20-րդ դարի նահատակ եղած բժիշկները (թուրքերեն), Թուրքիա, 1997:

10. Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ալբոմ-ատլաս, Բ. հատոր, Գոյամարտ, 1914-1925, Լոս Անճելըս, 2001:

11. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

12. Խաչատրյան Լ. և ուրիշն., Յուշակ Հայոց ցե-

ղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի նահանգ, Ե., 2004:

13. Զեստենեան Հրաչ, Պեյրուրի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ Եւ Մեծ Եղեռնին Նահատակուած Հայ Բժիշկներ, «Ազդակ», 01-11-2012

ԹՈՓՉՑԱՆ ԿԱՐԱՊԵՏ

Չմշկածագցի գերդաստանի նահապետը՝ զինվորական կոմիսար Ֆիլիպը, Հալեպ է տեղափոխվել հավանաբար 1870-ական թվականներին:

Հալեպում հայտնի Թոփչյան գերդաստանի անդամներն ի սկզբանե արաբախոս են եղել:

Ֆիլիպն ունեցել է 6 արու թոռ: Պարթևը դերձակ էր, Բարսեղը՝ երկաթագործ, Գրիգորը՝ առևտրական, Կարապետը՝ բժիշկ, իսկ Նշանը և Արմենը դեռևս չէին կողմնորոշվել:

Կարապետն ավարտել է բժշկական վարժարանը:

1914թ., Առաջին աշխարհամարտի ժամանակ Հալեպում զորակոչվել է օսմանյան բանակ և որպես զինվորական բժիշկ-սպա ուղարկվել Բաղդադ, ուր թուևավորվել է և մահացել:

Նրա մասին.

«Գեղարդ» սուրիահայ

տարեգիրք, Ե. գիրք, Հալեպ, 1996:

ԹՈՓՉՑԱՆ ՀԱԿՈՒՔ

Բժիշկ Ավետիս Նազգաշյանը գրում է, որ 1915թ. ապրիլի 12 (24)-ին Կ. Պոլսում ձերբակալված բազմաթիվ հայ մտավորականների հետ զննարկով (շոգեկառքով) տեղափոխվել է դեպի Իգմիթ, ապա Էնկյուրիից դեպի Սինճան քեոյ:

Շոգեկառքի Ա կարգի վագոնի մեջ եղել են Կոմիտասը, Հովնան և Պալաքյան վարդապետները, բժիշկ Վահրամ Թորգոմյանը, Տիրան Զելեկյանը, դոկտոր Հակոբ Թոփչյանը և ուրիշներ:

Այնուհետև նրանց ձերբակառքեր նստեցնելով տարել են Այաշ ավանի ծայրամասի բլրի վրա գտնվող Սարը կոչլա հին զորանոց-բանտը:

Հետագա ճակատագիրն անհայտ է:

Նրա մասին.

1. Հայ եղեռնը, Բ տպագրութիւն Պէյրուր, 1978, 171 էջ

2. Իսկահատեան Հարութիւն, Վկայարան Հայկական Ցեղասպանութեան, Գիրք Բ., Պէյրուր, 2011, 352 էջ

ԻՐԱՆՈՍՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

Ծնվել է Անկարայի նա-

հանգի Կըրշեհիրի գավառի Կեսկին Տենեկ-Մադեն / Եսքի Տենեկ-Մադեն քաղաքում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի ազգային վարժարանում, այնուհետև ավարտել տեղի թուրքական իդադիեն (միջնակարգ դպրոցը):

Ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Այաշի թաղապետական բժիշկ է աշխատել:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Այաշ ավանը թուրքական վայրագությունների հանրահայտ վայր էր դարձել:

Այաշի բանտը, որ 15-20 կանգուն լայնք ու երկայնք ունեցող միահարկ շենք էր, դարձել էր հայ կուսակցական գործիչների ու մտավորականների նահատակության առաջին հանգրվանը:

Բժիշկը Այաշի թաղապետական բժշկի հանգամանքով այցելել է հայ բանտարկյալների կայքերը՝ բանտի դեկավարության կողմից առողջապահական կանոնների ապահովմանը հսկելու նպատակով:

1915 թ. բժիշկը իր հոր հետ միասին ձերբակալվել է և ձերնակապով տարվել Կալեջիկի (Անկարայի) բանտը:

Այնուհետև նրանց խառնել են տեղի հայ բնակչության տարագրվող քարավանին ու

աքսորել:

1915թ., Կալեջիկից 8 ժամվա հեռավորության վրա գտնվող մի վայրում կամ Այաշում սպանվել է հայ տարագիրների ջարդի ժամանակ:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Ստամբուլ, 1919:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի Նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

3. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուր, 1965:

4. Թեոդիկ, Յուշարձան Նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

5. Շահբազյան Հասմիկ և Միրզոյան Անահիտ (կազմողներ), Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 3, Անկարայի նահանգ, Երևան, 2006:

6. Ավագեան Կարինէ, «Չանդըրըի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդէս Ամսօրեայ», 2008, հ. 1-12

ԻՍՊԵՆՑՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

Ծնվել է Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի կենտրոն Կեսարիա քաղաքում:

Ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Երկար տարիներ Կեսարիայում բժիշկ է աշխատել: Եղել է հմուտ և անվանի բժիշկ, աչքը կուշտ, աղքատասեր, կարոտյալների ցավերը փարատող:

1915թ. Կեսարիայից տարագրվել է և Ազիզիեի մոտ չարաչար նահատակվել:

Նրա մասին.
Ալլաօյաճեան Ա., Պատմության համալիր, Բ.



ԻՄՊԵՐՅԱՆ ՀԱԿՈՐ

Ծնվել է 1856թ., Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի կենտրոն՝ Կեսարիա քաղաքում:

1876թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան դեղագործական վարժարանը և դեղագործի վկայական ստացել:

1876-86թթ. դեղագործ է աշխատել Կ. Պոլսում, ապա՝ Կեսարիայում:

1886-90թթ. սովորել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերա-

կան բժշկական վարժարանում և բժշկի վկայական ստացել:

1890-1915թթ. Կեսարիայում թաղապետարանի բժիշկ է աշխատել:

1915թ. Կեսարիայում ձերբակալվել է և Սիրիայի հարավի Դարաա քաղաքն աքտորվել:

Այնուհետև ազատվել է և նշանակվել Հաուրանի թաղապետական բժիշկ:

Այստեղ, ըստ ոմն «Իրազեկի», ինչ-որ չափազանց տխուր դեր է կատարել:

1918թ. Առաջին աշխարհամարտի ավարտից հետո հաստատվել է Հալեպում, որտեղ և մահացել է:

Նրա մասին.
Ալլաօյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. հատոր, Գահիրե, 1937:

ԼԵՎՈՆ

Ծնվել է Կոստանդնուպոլսին մոտակա, Մարմարա ծովի եվրոպական եզերքին գտնվող Սիլիվրի ավանում:

Բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել:

Մահացել է 1916թ. փետրվարի 11-ին, ժանտախտից:

Նրա մասին.
Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Ստամբուլ, 1919:

ԼՈՒԹՅԱՆ (ԼՅՈՒԹՅՈՒԹԱՆ) ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (ԱՐԹԻՆ)

Ծնվել է 1860թ., Բրուսա նահանգի կենտրոն Բրուսա քաղաքում:

Բրուսայի Սեթ բաշը թաղամասում ունեցել է սեփական դեղատուն և դեղագործ աշխատել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և գինվորական դեղագործ ծառայել:

1915թ., Բրուսա քաղաքի մոտակա Ադըրնազ գյուղում գնդակահարվել է ի թիվս 100 այլ հայերի՝ 55 տարեկանում:

Նրա մասին.
1.Յուլյան մատեան Մեծ եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

2.Թեոդիկ, Յուլյարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

3.Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

4.Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:



ԽԱԽԱՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ Ա. ՆՇԱՆԻ

Ծնվել է 1884թ., Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի Կըրշեհիր քաղաքում:

Մանկական տարիքում տեղափոխվել է Կեսարիա: Ուսանել է Կեսարիայի ազգային վարժարաններում:

1904թ. ավարտել է Կեսարիայի սբ. Կարապետի ժառանգավորաց բարձրագույն վարժարանը:

1908թ. ավարտել է Բեյրութի Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Ուսանողական տարիներին զանազան պարբերականների աշխատակցել է գիտական, գրական և առողջապահական հոդվածներով:

Բժշկությամբ է զբաղվել Արևմտյան Հայաստանի քաղաքներում և մեծ համակրանքի արժանացել:

1914թ. աշխատել է Կ. Պոլսի Կալեջիկ թաղամասում, եղել Հալքեվիի (Ժողովրդական տուն) բուժարանի և Բերա թաղամասի

աղքատախնամ դարմանատան բժիշկ:

4. Պոլսում մեծ ժողովրդականություն է վայելել:

1914թ., Առաջին աշխարհամարտի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել՝ կապիտանի աստիճանով:

Եղել է Սիրիական ռազմաճակատում, գերի ընկել անգլիացիներին և որոշ ժամանակ մնացել Եգիպտոսում:

Պատերազմի ավարտից հետո վերադարձել է Կ. Պոլիս:

1915թ. Կ. Պոլսի Կալաթա թաղամասում ձերբակալվել է և աքսորվել, ինչը պատճառ է դարձել, որ անունը հայտնվի տարբեր հեղինակների (օրինակ Արշակ Ալպոյաճյանի) նշած նահատակվածների ցուցակներում:

Իրականում հրաշքով փրկվելով կոտորածներից, վերադարձել է Կ. Պոլիս ու շարունակել զբաղվել բժշկությամբ:

4. Պոլսի Բարմաք կափու Իմամ փողոցում, ապա՝ Բերա թաղամասի Իսթիքլալ պողոտայում ունեցել է սեփական դարմանատուն կամ հիվանդանոց, որի ճակատին հայերեն գրված էր «Խախամյանի կլինիկ»:

Գիտական պրպտումները վերաբերել են բժշկական էթիկայի, բժիշկ-գիտություն,

բժիշկ-ճշմարտություն, բժիշկ-հիվանդ, բժիշկ-բժիշկ փոխհարաբերություններին:

Հրապարակախոսական ու բժշկական հոդվածներով և այլ ստեղծագործություններով թղթակցել է Բագարատ Թևյանի՝ Կ. Պոլսում լույս տեսնող «Երջանկին Տարեցոյցը» պարբերականին և այլ թերթերի:

1940-ական թթ. սկզբին Երևանում բնակվող եղբորորդուն ուղարկած նամակում գրել է, որ Կ. Պոլսի հայերի վրա դրված պետական հարկերը այնքան մեծ են, որ ինքը մտածմունքներից ինֆարկտ է ստացել:

Մահացել է 1944թ., Կ. Պոլսում, սրտային հիվանդությունից՝ 60 տարեկանում:

Թաղվել է Կ. Պոլսի Ծիշիի ազգային գերեզմանոցում:

Որդին՝ Լևոն Արմենակի Խախամյանը ևս եղել է ներքին հիվանդությունների բժիշկ:

Երևանում ազգանվանակից ազգականներ ունի:

Նրա մասին.

1. Ղազարեան Վ, Բժշկական եւ առողջապահական տարեցոյց, Կ. Պոլիս, 1914:

2. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Բ., Գահիրէ, 1937:

3. Ծիկահեր Վարդ, Կիսադարեան պատմութիւն թրքահայ բժշկութեան, 1923-1975, Իսթանպուլ, 1975:

5. Չարմիկի՝ Երևանաբնակ Արմենակ Խախամյանի հայտնած տվյալները, 1998:

6. Մինասյան Հ., Արմենակ Խախամյան-115, «Նարեկ», Ե., 1999, թ. 1 :

7. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

8. Շահբազյան Հ. և ուրիշ., Յուզայ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 3, Անկարայի նահանգ, Երևան, 2006:

ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

Ծնվել է Կարինի նահանգի Երզնկայի գավառի կենտրոն Երզնկա քաղաքում:

Բարձրագույն կրթություն է ունեցել և բժիշկ կամ դեղագործ աշխատել:

Օսմանյան բանակում եղել է զինվորական ծառայության մեջ:

Սպանվել է 1915թ., Դերջա-նում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Ստամբուլ, 1919:

2. Յուզամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

3. Թեոդիկ, Յուզարձան նահատակ մտաւորակա-նութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

4. Հայրապետյան Վահիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

**ԽՈՈՒՍՈՈՒՐԻ
(ԽՈՐԽՈՐՅԱՆ,
ՀՈՐՀՈՐՅԱՆ) ԳԵՎՈՐԳ**

Ծ ն վ ե լ Է մոտավորապես 1890թ., Կոստանդնուպոլսում:

1914թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Բժիշկ է աշխատել:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել Երզնկայի բերդի հիվանդանոցում՝ կապիտանի աստիճանով:

1915թ. փետրվարի 25-ին կամ 1916թ. մարտի 7-ին, Երզնկայում մահացել է ժանտախտից՝ մոտ 25 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Ստամբուլ, 1919:

2. Մեզպուրեան Արթո, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ. Այբուբենական համառոտ

անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

3. Ատաշ Ադնան, 20-րդ դարի նահատակ եղած բժիշկները (թուրքերեն), Թուրքիա, 1997:

4. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ԿԱՐԱԳԵՂՈՎ ԱՐՏԱԾԵՍ

Մինչև 1919թ. Բաքվում բժիշկ է աշխատել:

Ռուսի նման շեկ կին և մեկամյա որդի է ունեցել:

1919թ. տեղափոխվել և բնակություն է հաստատել Կարսում, որի քաղաքային հիվանդանոցում բժիշկ է աշխատել: Այդ հիվանդանոցում աշխատում էին գլխավոր բժիշկ կաղզվանցի Արմենակ Ասոյանը, գլխավոր վիրաբույժ թիֆլիսեցի Լևոն Արեշյանը, բժիշկ Անահիտ Յաղջօղյանը, բուժքույրեր Շուրա Սարգսյանը, Էլիզկան, Մարուսյան, բուժակներ Կարո Շահխաթունին, Կարպ Դուկասյանը, Լևոն Տեր-Գրիգորյանը և այլն:

Այնուհետև զորակոչվել է բանակ և ծառայել Կարսի ամրոցի զինվորական հիվանդանոցում, որի գլխավոր բժիշկն էր գնդապետ Մելքոնյանը: Նրա դասալըույուն-

նից ու փախուստից հետո հիվանդանոցը ղեկավարել է միայնակ:

Այստեղ Կարազեդովի տրամադրության տակ եղել են 2 բուժակ և 6 սանիտար:

1920թ. հոկտեմբերի 30-ին թուրքական զորքը, չհանդիպելով հայկական բանակի դիմադրությանը, գրավել է Կարսը:

Թուրքերը ձերբակալել են Կարսի 1-ին տեղամասի կոմիսարի օգնական Կարազեդովին, բանտարկել և բոլոր գերիների պես ամբողջովին մերկացրել:

Սակայն մի քանի օրից նրան հաջողվել է ազատվել բանտից:

Նույն օրը 5 թուրք ասկյարներ շրջապատել են բժշկին (որի գրկին որդյակն էր, իսկ կողքին՝ կինը) և բռնորին դուրս հանել իրենց տան բակից:

Բժիշկը նկատելով որբանոցի՝ հեռվում կանգնած մայրապետին, փորձել է երեխային տալ նրան. ռուսերեն աղերսելով. «Սպասիտե րեբյոնկա» («Փրկեք երեխային»), սակայն կողքից քայլող ասքյարը հրացանի կոթով բժշկին հրել է առաջ:

Նրանք այլևս չվերադարձան: **Նրա մասին.**

1. Ալեքսանդրյան Արտաշես, Կարս. 1920-21, Երևան, 1986:

2. Ալեքսանդրյան Արտա-

շես, Մղձավանջ, Երևան, 2001:

3. Ներսիսյան Մկրտիչ, Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան, 2005:

ԿԱՐԱԳՅՈՂՅԱՆ ՄԿՐՏԻՉ (ՄԻԷ, ՄԻԷԱՅԵԼ, ՄԱՅԸ)

Ծնվել է 1880/90թ., Կոստանդնուպոլսում:

Նախնական կրթությունն ստացել է Կ. Պոլսի թաղային վարժարաններից մեկում:

1914թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո զորակոչվել է օսմանյան բանակ և ծառայել Վանի գավառի Սարայի (Սարոյի) գավառակի զինվորական հիվանդանոցի զինվորական բժիշկ:

1915թ. հիվանդանոցում ծառայության ժամանակ ձերբակալել են նրան, պոկել հարյուրապետի զինվորական ուսադիրները, վերցրել սպայական սուրը և բանտարկել:

1915թ. ապրիլի 15-ին, Վանի նահանգապետ Ջևդեթ բեյի հրահանգով դաժանորեն սպանվել է Սարայի զինվորական հիվանդանոցի մոտակայքում՝ իր իսկ բուժած թուրք զինվորի ձեռքով՝ 25 կամ 35 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

3. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

4. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

5. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

ԿԱՐԱՊԵՏ ԷՖԵՆԴԻ

Բժշկական բարձրագույն կրթություն է ունեցել:


1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և Կարինի 3-րդ դաշտային հիվանդանոցում զինվորական բժիշկ ծառայել՝ կապիտանի աստիճանով:

1915թ. մարտի 23-ին մահացել է Կարինում:

Նրա մասին.

1. Ատաշ Ադնան, 20-րդ դարի նահատակ եղած բժիշկները (թուրքերեն), Թուրքիա, 1997:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:



ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (ԳԸՐՄԸԶԳՈՒՄԼՅԱՆ) ԵՍԱՑԻ

Ծնվել է 1894թ., Եդեսիայի նահանգի կենտրոն Եդեսիա քաղաքում:

1908թ. օսմանյան սահմանադրության վերահաստատումից հետո ի թիվս բազմաթիվ եդեսահայ երիտասարդների, մեկնել է Կ. Պոլիս՝ կրթություն ստանալու:

1908-15թթ. սովորել է Կ. Պոլիսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանում:

1915թ. Առաջին աշխարհամարտի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել:

1918թ., պատերազմն ավարտվելուն պես աճա-

պարել է Կ. Պոլիսից հեռանալ դեպի իր ծննդավայրը՝ Եդեսիա:

Ճանապարհին այցելել է Ադանա, որտեղ Ազգային միությունը և ընկերները նրան հորդորել են գնալ Հաճըն:

Անսալով հորդորներին, մեկնել է Հաճըն՝ բժիշկ աշխատելու:

Կիլիկիայի քեմալական շարժումների ընթացքում Հաճընը լքված ու մեկուսացած էր մնացել:

1920թ. մարտին Հաճընը շրջապատվելով քեմալական զորքերով, կտրվել է արտաքին աշխարհից:

Չստանալով Ֆրանսիայից ակնկալած օգնությունը, հաճընցիները դիմել են ինքնապաշտպանության և հերոսաբար կռվել իրենց ազատության համար:

Այդ հերոսամարտի ընթացքում բժիշկը անգնահատելի ծառայություններ է մատուցել հաճընցիներին:

1920թ. նահատակվել է Հաճընի ինքնապաշտպանական կռիվների ընթացքում:

1920թ. հոկտեմբերի 15-ին թուրքերը ներխուժել են քաղաք և կոտորել անզեն բնակիչներին: Փրկված հաճընցիները տարագրվել են և բնակություն հաստատել տարբեր երկրներում, այդ թվում՝ Խորհրդային Հայաստանում:

Նրա մասին.

1. Սահակեան Արամ, Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, Պէյրուք, 1955:

2. Հայկական Հարց, հանրագիտարան, Երևան, 1996:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԻՆԱՍ

Ծնվել է 1867թ., Սեբաստիայի նահանգի Կեմերեկ քաղաքում:

Նախնական կրթությունն ստացել է Կեմերեկի ազգային վարժարանում:

Քաջալերվելով Զիկագոյում հաստատված ազգականներով, մեկնել է ԱՄՆ:

Նյու Յորկի մեծ դժվարություններ կրելուց հետո ընդունվել է Զիկագոյի բժշկական համալսարան:

Ուսումնառության ավարտին բժշկի վկայականով վերադարձել է Կեմերեկ՝ ծնողների մոտ, ամուսնացել և երեխաներ ունեցել:

Եղել է հայ և թուրք հասարակայնությանից հարգված բժիշկ:

Կաստեմունիի նահանգի Զյուրե քաղաքի թաղապետական բժիշկ է աշխատել:

1915թ. Մեծ Եղեռնի ժամանակ ընտանիքի հետ բռնի տարագրվել է Դեյր-էլ-Զորի անապատները:

1916թ. ընտանիքի հետ միասին զոհվել է Դեյր-էլ-Զորի ահավոր ջարդերի ժամա-

նակ:

Նրա մասին.

1. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ. Այբուբենական համառոտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ (ՍԵՐՁՈ) ԿԱՐԱՊԵՏԻ

Ծնվել է 1795թ. Չմյուռնիայի նահանգի Մանիսա քաղաքում:

Գրվել է նաև Սերջո կամ Սերգեյ Կարապետով:

Նախնական կրթությունից հետո, ավարտել է Չմյուռնիայի սբ. Մեսրոպյան վարժարանը:

Աշակերտել է Չմյուռնիայի Վելաստիի դեղատանը:

1818-22թ. սովորել է Իտալիայի Պիզայի համալսարանի բժշկական ֆակուլտետում և բժշկի վկայական ստացել:

1822թ. վերադարձել է Չմյուռնիա և զբաղվել բժշկությամբ:

1822-23թթ. Հունական ազատագրական շարժման և Անկախության պատերազմների ժամանակ Յուսուֆ փաշայի (եղել է նրա ամենավստահելի անձը) բանակի կազմում, զինվորա-

կան բժիշկ (գլխավոր բժիշկ) Է ծառայել Կրետե և Մորա կղզիներում:

1827թ. Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Յուսուֆ փաշայի հետ, որպես բժիշկ, եղել է Ռումելիում և Վառնայում:

1828թ. հոկտեմբերին օսմանյան բանակի պարտությունից և Վառնայի գրավումից հետո, Յուսուֆ փաշայի հետ գերի է ընկել ռուսական զորքին և թուրքական զորապետերի, սպաների ու գինվորների հետ միասին, իբրև ռազմագերի, գերեվարվել Օդեսա:

1828-33թթ. Օդեսայում մնացել է գերության մեջ, որտեղ էլ նրան կոչել են Սերգեյ Կարապետով:

1833թ. վերադարձել է Կ. Պոլիս և մի քանի ամիս անց մեկնել Չմյունխիս:

1833թ. Կ. Պոլսում տեղեկանալով, որ Յուսուֆ փաշայի մասին զագրելի մեղադրանքներ ու դավեր են նյութվում, իր կյանքի գնով ամեն տեղ դիմել, պատմել, հերքել է նրա հասցեին ասված մեղադրանքները:

Այնուհետև վերադարձել է Օդեսա և բերել Յուսուֆ փաշային, որը վերագտել է իր նախկին հեղինակությունը, երախտապարտ լինելով հանուն իրեն սեփական կյանքը վտանգած բժշկին:

1834թ. տեղափոխվել և

հաստատվել է Կիլիկիայի Էոդեմիշ ավանում:

Մահացել է 1869թ. մայիսին, Էոդեմիշում՝ 74 տարեկանում:

Նրա մասին.

1. Մեզպուրեան Արթուր, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ, Իսթանպուլ, 1950:

2. Գարրը Յ., Հայեր թուրքական պետության ծառայության մեջ, 1453-1953 (թուրքերեն), Ստամբուլ, 1953:

3. Յարման Ա., Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը *սու Փոնիս հիմնադրանքի* (Օդեսա, 2001)



ԿՅՐՈՅԱՆ ԳՅՄՐԱՐ ՄԿՐՏԳԻ

Ծնվել է 1884/88թ., Խարբերդի նահանգի Խարբերդի գավառի Փերչենճ գյուղում:

Հայրը զոհվել է Մեծ Եղեռնի ընթացքում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի նախակրթարանում:

1895թ. մազապուրծ փրկվել է կոտորածից:

Հայրը նրան տարել է Խարբերդի նահանգի Մեզիրե քաղաքի ֆրանսիացի կապուչին հայրերի որբանոցը, որտեղ և շարունակել է ուսումը:

Այնուհետև միջնակարգ կրթությունն ստացել է նույն հաստատության քոլեջում:

1900թ. ավարտել է քոլեջը:

1900-10թթ. հարազատ քոլեջում պատմության, հայոց լեզվի և գրականության դասատու է աշխատել:

Ապա սովորել է Վենետիկում:

1910-14թթ. սովորել է Բեյրութի Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետում:

1914թ. սկսված Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, դեռևս ուսումը չավարտած, զորակոչվել է օսմանյան բանակ և գինվորական բժիշկ ծառայել:

Ծառայել է Սիրիայի և Պաղեստինի շրջաններում:

Օսմանյան բանակում իր հայրենակից պաշտոնակիցների պես անցել է անհամար վտանգների միջով: Բանակի բժշկական հոգսերով տարված՝ ենթարկվել է բազում սպառնալիքների ու դավադրությունների և հրաշքով փրկվել:

Պաղեստինի ռազմաճակատում գերի է ընկել առա-

ջացող անգլիական բանակին:

Եգիպտոսի հայոց առաջնորդարանի միջամտությամբ ազատ է արձակվել:

Որոշ ժամանակ ծառայել է Կիպրոսում, որտեղ զբաղվել է թուրք ռազմագերիների բուժամբ ու խնամքով:

1918թ., պատերազմի ավարտից հետո մեկնել է Բեյրութ և ուսումը շարունակել Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետում:

1919թ. ավարտել է համալսարանը և բժշկի վկայական ստացել:

1919թ. մեկնել է Փարիզ և մասնագիտացման դասընթաց անցել առաջատար բուժօրհաստատություններում:

1919-20թթ. Փարիզի հիվանդանոցներից մեկում է աշխատել:

1920թ. օգոստոսին մեկնել է ԱՄՆ և հաստատվել Մասաչուսեթս նահանգի Բոստոն քաղաքում:

Բոստոնի համալսարանում հանձնել է բժշկական քննությունները և բժշկի հավատարմագիր ստացել:

Բոստոնում բացել է իր բուժարանը և բժիշկ աշխատել: Ծուլտով վայելել է շրջապատի սերն ու հարգանքը: Մոտիկից հետևել է ազգային-մտավորական շարժանը:

երկար տարիներ թղթակցել է ամերիկահայ թերթերին: Եղել է «Հայրենիք» պարբերականի գնահատված աշխատակիցներից մեկը և բժշկական, գիտական, գրական, հանրային, քաղաքական բազմաթիվ հոդվածներ հեղինակել:

Տիրապետել է հայերեն, թուրքերեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներին:

1957թ., մահից մի քանի ամիս առաջ լույս է տեսել նրա երկար տարիների տքնաջան աշխատանքի արդյունքը հանդիսացող «Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները)» արժեքավոր գիրքը:

1957թ. հունիսի 17-ին, Բոստոնում մահացել է երկարատև հիվանդությունից հետո՝ մոտ 71 տարեկանում:

Աշխատությունը.

Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

Նրա մասին.

1. Մեզպուրեան Արթո, Հայ ել ծագումով հայ բժիշկներ. Այբուբենական համառոտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

2. Գեորգեան Կարո, Ամենուն տարեգիրքը, Դ. տարի, 1957, Պէյրուս, 1958:

3. Տոքթ. Գ. Մ. Կարոյեանի մահը, Ֆրեզնո, „Ասպարեզ“,

27-06-1958

4. Վահե Հայկ, Խարբերդ ել անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1959:

ԿԸՆԲԱՊԱՊԹԱՆ ԿԱՐԱՊԵՏ

Գրվել է նաև Ընքապայայան:

Ծնվել է մոտ 1885թ., Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի կենտրոն Կեսարիա քաղաքում:

1910թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Ավանդի թաղապետական բժիշկ է աշխատել:

1915թ. սպանվել է Ավանդում, թուրքերի կողմից՝ մոտ 30 տարեկանում:

Նրա մասին.

1. Ալպոյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. հատոր, Գահիրէ, 1937:

2. Մեզպուրեան Արթո, Հայ ել ծագումով հայ բժիշկներ. Այբուբենական համառոտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

3. Յուլցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 3, Անկարայի նահանգ, Երևան, 2006:

ԿՈՇԿՐՅԱՆ ՊՈՐՈՍ

Ծնվել է Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավա-

ռի Խուռնավուլա գյուղում:

Դեղավաճառ է աշխատել: Սպանվել է 1915թ.:

Նրա մասին.

Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Յուլցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:

ԿՐՃԻԿՅԱՆ ՄԻՀՐԱՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ

Ծնվել է մոտ. 1850թ., Կոստանդնուպոլսում:

Որդին է անվանի բժիշկ, պրոֆեսոր Անդրանիկ փաշա Կրճիկյանի:

1873թ. ավարտել է Կ. Պոլսի Կայսերական զինվորական բժշկական վարժարանը:

1873թ-ից Կ. Պոլսի Հայդարփաշայի զինվորական հիվանդանոցում զինվորական բժիշկ է ծառայել:

Նաև Հայդար փաշայի զինվորական դեղագործական վարժարանում դասավանդել է բնագիտություն:

1886թ. Թուրք-հունական պատերազմի ժամանակ օսմանյան բանակի զինվորական բժիշկ է ծառայել Էլաստոնում (Ալաստինիա):

1886թ. Էլաստոնում վարակվել է տիֆով և մահացել մոտ. 36 տարեկանում:

Նրա մասին.

1. Մեզպուրեան Արթո, Հայ ել ծագումով հայ բժիշկներ, Իսթանպուլ, 1950:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:



ՀԱՆ(Լ)ԱՅՅԱՆ ՏԻԳՐԱՆ Վ.

Ծնվել է 1881/82թ., Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառի Կյուրինի գավառակի կենտրոն Կյուրին քաղաքում, հայ ավետարանական ընտանիքում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի ազգային վարժարանում:

Այնուհետև սովորել է Սեբաստիայի ամերիկյան վարժարանում, որտեղ ուսանել է նաև անգլերեն լեզու:

1902թ. ավարտել է ամերիկացի միսիոներների

Խարբերողի Եփրատ քոլեջը
և ստացել “պսակավոր ար-
վեստից” վկայական:

1902-04թթ. Նույն քոլեջում
ուսուցիչ է աշխատել:

1904-06թթ. Սեբաստիայի
Արամյան ազգային վարժա-
րանում ուսուցիչ է աշխա-
տել:

Այնուհետև որոշել է դառ-
նալ բժիշկ կամ դեղագործ,
քանի որ այդ տարիներին
հայ բժիշկներն ու դեղա-
գործները բացառիկ պա-
տիվ ու հարգանք էին վայե-
լում Օսմանյան կայսրության
բազմազգ ու բազմակրոն
բնակչության շրջանում,
չնայած որ թուրքական կա-
ռավարությունը զանազան
հասարակ պատրվակներ էր
գտնում նրանց հալածելու և
բանտարկելու համար:

Թողնելով ուսուցչություն-
ը, մեկնել է Բեյրութ՝ բժշկա-
կան կրթություն ստանալու:

1912թ. ավարտել է Բեյ-
րութի Ամերիկյան համալ-
սարանի բժշկական ֆակուլ-
տետը:

1912թ. վերադառնալով
հայրենիք՝ դարձել է Կյուրի-
նի առաջին հայ բժիշկը:

Եղել է սիրված ու հարգ-
ված անձնավորություն:

Մեկ այլ տվյալով՝ եղել է
Զեյթիթի նոքթայի (բուժակե-
տի) բժիշկ:

Կյուրինում ամուսնացել է
Էլիզա Պոչոյանի հետ և ունե-
ցել դուստր Բերսաբեին:

1915թ., Առաջին համաշ-
խարհային պատերազմին
զորակոչվել է օսմանյան բա-
նակ և զինվորական բժիշկ
ծառայելու ուղարկվել Կարի-
նի ռազմաճակատը:

Կարճ ժամանակ Երզնկա-
յի Ազիզիեի զինվորական հի-
վանդանոցում ծառայելուց
հետո 2 հետևակ զորքերի ու-
ղեկցությամբ Շապին-Կարա-
հիսար է ուղարկվել:

Ունեցել է հազարապետի
զինվորական աստիճան:

1915թ. գարնանը (այլ
տվյալով՝ հունիսին) ի թիվս
8 հայ բժիշկների, կրկին
ծառայել է Ազիզիեի զինվո-
րական հիվանդանոցում,
որի վերատեսուչը՝ հարյու-
րապետ Շևքեթը, փորձել է
կազմակերպել հիվանդա-
նոցի հայ բժիշկների գիշե-
րային սպանությունը, ինչը,
սակայն չի հաջողվել:

Հաջորդ առավոտյան հայ
բժիշկներին ազատ են ար-
ձակել:

Բժիշկ Հալաճյանին ևս
տրամադրել են 2 ուղեկցող
զինվոր ու ազատ արձակել:

Իրաքի Զերքուկ քաղաքի
մոտ / Զեյթիթից Տրապիզոն
գնալու ճանապարհին բժիշ-
կը զգալով, որ զինվորները
մտադիր են իրեն սպանել,
ինքն է նախահարձակ եղել.
մեկին սպանել է, իսկ մյու-
սը հասցրել է փախչել ու մո-
տակա ոստիկանությանը
տեղեկացնել: Վրա հասած

ոստիկանների խումբը տե-
ղում սպանել է 34 տարեկան
բժշկին:

Այլ տվյալով, նրան ուղեկ-
ցող 2 թուրք զինվոր-ծառա-
ները, չիմանալով, որ բժիշկը
հայ է, միմյանց պատմում են,
թե ինչպես են աքսորի ճա-
նապարհին բազմաթիվ հա-
յերի գազանաբար սպանել:

Բժիշկը, չդիմանալով
նրանց պատմածներին,
սպանում է զինվորներից
մեկին: Մյուս զինվորը փախ-
չելով, եղելության մասին
հայտնում է ղեկավարությա-
նը: Առավոտյան բժշկին կա-
խաղան են բարձրացնում:

Այրին՝ Էլիզան և աղջիկը՝
Բերսաբեն, տարագրվել են
Բիրեջիկ, որտեղ այրին սո-
վից մահացել է: Դուստրը
ապաստանել է Սիրիայում,
ապա տեղափոխվել ԱՄՆ և
ընտանիք կազմել Պրովի-
դենս քաղաքում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տո-
ւած գոհերը, ցուցակագրո-
ւած վաւերական փաստե-
րով, Ստամբուլ, 1919:

2. Մեզպուրեան Արթօ,
Հայ եւ ծագումով հայ բժիշկ-
ներ. Այբուբենական համա-
ռօտ անուանացանկ (1688-
1940), Իսթանպուլ, 1940:

3. Կարոյեան Գասպար,
Մեծ Եղեռնի նահատակ հայ
բժիշկները (անոնց պատ-
գամները), Պոսթոն, 1957:

4. Սահակյան Լիլիկ,

Ոճրագործները չիւնայեցին
Նույնիսկ մարդու կյանքը
փրկողներին, «Առողջապա-
հոււթյուն», Երևան, 1965, թ.
4:

5. Պատմագիրը Կիւրինի,
հրատարակութիւն Կիւրինի
Հայրենակցական Միութե-
ան, տպ. «Սեւանե, Պէյրութ»,
1974, մեծ չափի, 823 էջ

6. Իսկահատեան Հ.,
Վկայարան հայկական ցե-
ղասպանութեան, Գիրք Գ,
Պէյրութ, 2011, 395 էջ

7. Զեստենեան Հ., Պէյ-
րութի Ամերիկեան Համալ-
սարանէն Շրջանաւարտ
Եւ Մեծ Եղեռնին Նահատա-
կուած Հայ Բժիշկներ, “Ազ-
դակ”, 01-11-2012

ՀԱԼԵՊԼԵԱՆ ԼՈՒԹՅՈՒ ԼԵՎՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Գրվել է Նաև Հալապյան,
Հալեպյան:

Ծնվել է 1882/84թ., Հա-
լեպի Նահանգի Այնթապի
գավառի Նույնանուն գա-
վառակի կենտրոն Այնթապ
քաղաքում՝ հայ ավետարա-
նական Հարություն և Լու-
սիա Հալեպյանների ընտա-
նիքում:

Ընտանիքում եղել են 2
զավակ, որոնք քոլեջ և հա-
մալսարան են ավարտել:

Լուրճին ավարտել է Այն-
թապի առևտրականների
նախակրթարանը:

1902թ. ավարտել է ամե-

րիկացի միսիոներների Այնթապի Կենտրոնական Թուրքիայի քուլեջը և ստացել “պսակավոր արվեստից” վկայական:

1907/09թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1907թ. վերադարձել է Այնթապ և ծնողներին կարճատև այցելելուց հետո մեկնել Մեյիտինե (Մալաթիա) ու բժիշկ աշխատել:

Լավ տիրապետելով թուրքերենին, շահել է նաև թրքուհի հիվանդների համակրանքը:

1911թ. գերմանական վաճառականական մի ընկերության խնդրանքով մեկնել է Գերմանիա և Բեռլինի հիվանդանոցներում հմտացել վիրաբուժության մեջ, պատրաստվել վերադառնալ ու վիրաբույժ աշխատել Կարինում բացվելիք գերմանական հիվանդանոցում:

1913թ. վերադարձել է Այնթապ և շարունակել զբաղվել բժշկությամբ:

Եղել է ՀՅԴ անդամ:

1914թ. ամռանը Առաջին համաշխարհային պատերազմն սկսելուց հետո զորակոչվել է օսմանյան բանակ և, ուղարկվելով Երզնկայի շրջան, նշանակվել Զեռփոյուքեոյի մոտակայքում բացված Մեզեի զինվորական հիվանդանոցի բժշկապետ:

1915թ. սկզբներին կանխազգալով հայերին սպառնացող մոտալուտ վտանգը, իրեն կոչել է Սըր Թապիա Լուրթի:

1915թ. ձերբակալվել է, բանտարկվել ու արքորվել:

1915թ. հուլիսի սկզբներին Կարինից Երզնկա ընկած ճանապարհին, Բաբերդ չհասած, Մուշի Քոբ (Կոպ) լեռան ստորոտին, 32-րդ զորաբաժնի սպա Մեհմեդ Ալի հրամանով, իրենց ընկերակցող թուրք սպայի և թուրք զինվորների ձեռքով եղերական ու բարբարոս ձևով սպանվել է բժիշկ Հովհաննես Թերզյանի հետ միասին:

Եղել է ամուրի:

Նրա ընտանիքից փրկվել են տեր և տիկ. Լ. Լևոնյանները, որոնք հաստատվել են ԱՄՆ-ի Մասաչուսեթսի նահանգի Ուոթերթաուն քաղաքում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Ստամբուլ, 1919:

2. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ. Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

3. Սարաֆեան Գ., Պատմութիւն Անթէպի հայոց, հ. Բ., Լոս Անճելըս, 1953:

4. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ

բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

5. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

6. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

7. Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ալբոմ-ատլաս, Բ. հատոր, Գոյամարտ, 1914-1925, Լոս Անճելըս, 2001:

8. Զեստենեան Հ., Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ Եւ Մեծ Եղեռնին Նահատակուած Հայ Բժիշկներ, “Ազդակ”, 01-11-2012

ՀԱԼԵՊԼԵԱՆ ՆՈՒՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Գրվել է նաև Հալեպյան:

Վիրաբույժ Լուրթի Լևոն Հալեպյանի եղբայրն է:

Ատամնաբուժական կրթություն է ունեցել և ատամնաբույժ աշխատել:

Տարագրության օրերին նահատակվել է Մեյիտինեի շրջակայքում:

Եղել է շատ երիտասարդ և ամուրի:

Քույրը ու փեսան՝ տեր և տիկին Լ. Լևոնյանները, տարագրության գողգոթայից վերապրելով, բնակություն են հաստատել ԱՄՆ-ի Մասաչուսեթսի նահանգի Ուոթերթաուն քաղաքում:

Թաուն քաղաքում:

Նրա մասին.

Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

ՀԱԼՎԱՃՅԱՆ (ՀԵԼՎԱՃՅԱՆ) ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (ԱՐԹԻՆ) ԲԵՑ

Վիրաբույժ, բեյ:

Ծնվել է 1850/65թ., Տիգրանակերտի նահանգի կենտրոն Տիգրանակերտ (Դիարբեքիր) քաղաքում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի սբ. Կիրակոս եկեղեցու ազգային վարժարանում:

Ավարտել է նաև տեղի թուրքական իդադիեն (միջնակարգ դպրոցը):

Մոտավորապես 1890թ. ավարտել է Կ. Պոլսի Կայսերական զինվորական բժշկական վարժարանը և ստացել «թոփչիի» (իրետանու սպայի) զինվորական կոչում:

Մասնագիտությամբ եղել է վիրաբույժ:

Ավարտելուց անմիջապես հետո զինվորական ծառայության է անցել օսմանյան բանակում:

Երկար տարիներ Օսմանյան կայսրության մի շարք քաղաքներում գտնվող զինվորական հիվանդանոցներում զինվորական բժիշկ է ծառայել:

Գևորգյանի գինվորական կոչումը և բժշկապետի տիտղոս է ունեցել:

Ծառայել է օսմանյան բանակի Մեգիրեի գինվորական հիվանդանոցում:

Եղել է Խարբերդի գավառի կառավարիչ (կայմակամ):

Հարյուրավոր թուրք քաղաքացիներ ու գինվորականներ փրկվել են նրա հմուտ վիրահատությունների շնորհիվ:

Օսմանյան կայսրության պատերազմական նախարարությունից արժանացել է բեյի տիտղոսին:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ իր դեղագործ եղբոր հետ միասին, 5-րդ կոլ-օրդուի (ենթաբանակի) բժշկապետի պաշտոնով ուղարկվել է Կովկասյան ռազմաճակատը:

Այստեղ օսմանյան բանակի պարտությունից հետո հայ գինվորական բժիշկների ներկայությունը ռուսական սահմանի մոտ համարվել է կասկածելի, և գնդապետ բժիշկը ուղարկվել է Խարբերդ ու Մեգիրեի գինվորական հիվանդանոցի բժշկապետ նշանակվել: Այստեղ նա մեծ ծառայություն է մատուցել օսմանյան բանակում ժանտախտի համաճարակի դեմ պայքարելու և հազարավոր թուրք գինվորների կյանքը փրկելու գործին,

ինչի համար արժանացել է գինվորական իշխանության գնահատանքին:

Թուրք պաշտոնակից բժիշկների զրպարտանքների հետևանքով բժիշկը հետ է ուղարկվել իր ծննդավայրը՝ ծառայելու տեղի գինվորական հիվանդանոցի բժշկապետ: Հարությունը Հալվաճյանն իրեն ուղեկցող թուրք գինվորականների հետ կառքով ճանապարհ է ընկել դեպի Տիգրանակերտ, որի մոտակա Դևե բոյնու (Ուղտի վիզ) տեղանքում չեթեները (ավազակները) հարձակվել են կառքի վրա, իսկ թուրք գինվորները դիմադրություն չեն ցուցաբերել: Չեթեները բժշկին կողոպտելուց հետո վայրագորեն սպանել են նրան ու մարմինը ձորը նետել:

Այլ տվյալով՝ 1915թ. հուլիսին սպանվել է Խարբերդում կամ Գեղվանքի մոտ, իր աշխատավայրում՝ մոտ 55 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Ստամբուլ, 1919:

2. Կարոյեան Գասպար, Մեծ եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

4. Սահակյան Լիլիկ, Ոճրագործները չխնայեցին նույնիսկ մարդու կյանքը

փրկողներին, «Առողջապահություն», Երևան, 1965, թ. 4:

5. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

6. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

7. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայություն մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

8. Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփիինե (կազմողներ), Յուշակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի նահանգ, Երևան, 2004:

ՀԱԿՈՐ

Ծնվել է Բաղեշի նահանգի Սղերդի գավառի կենտրոն Սղերդ քաղաքում:

Բժշկական կրթություն է ունեցել:

Սղերդի թաղապետական բժիշկ է աշխատել:

Սպանվել է 1915թ., Սղերդում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Ստամբուլ, 1919:

2. Յուշամատեան Մեծ եղեռնի (1915-1965), պատ-

րաստեց Գերսամ Ահարունեան, Պէյրուք, 1965:

3. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

ՀԱԿՈՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

Ծնվել է Կոստանդնուպոլսում:

Բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել:

Մահացել է 1917թ. հունիսի 12-ին, ժանտախտից:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Ստամբուլ, 1919:

ՀԱԿՈՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Ծնվել է 1870թ., Ադանայի նահանգի կենտրոն Ադանա քաղաքում:

Սովորել է ծննդավայրում:

12 տարի ուսուցիչ է աշխատել Ադանայում և Դեորթ Յուլում:

Ավարտել է Բեյրութի Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Ադանայում, Դեորթ Յուլում և Կոնիայում բժիշկ է աշխատել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և գինվորական

բժիշկ ծառայել:


Պատերազմի ընթացքում գերի է ընկել անգլիացիների ձեռքը:

1918թ., պատերազմից հետո եղել է Ադանայի Հայ Ազգային միության անդամ:

1921թ. վերջերին Կիլիկիայի հայաթափման պատճառով ապաստանել է Կիպրոսում:

Մահացել է 1927թ. մարտի 3-ին, Նիկոզիայում 57 տարեկանում:

Լուս մասին.



ՀԱՎՈՐՑԱՆ ՄԻՔԱՅԵԼ

Ծնվել է 1867թ., Հալեպի նահանգի Այնթապի գավառի նույնանուն գավառակի կենտրոն Այնթապ քաղաքում:

1873թ. մահացել է հայրը և տղան որբ է մնացել: Ընդունվել է Հալլաճյան որբանոցը, որտեղ որոշ ժամանակ ջուլհակությամբ է զբաղվել:

Անթիվ գրկանքներից հետո ավարտել է ամերիկացի միսիոներների Այնթապի Կենտրոնական Թուրքիայի

քոլեջը:

Անգլիացի երկու բարեսեր տիկիներին աջակցությամբ սովորել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետում և դա ավարտել 1888թ.:

1888-91թթ. Մելիտինեում բժիշկ է աշխատել և Հալլաճյան որբանոցի՝ իր վրա կատարած ծախսերը վերադարձրել:

1891թ.-ից Արաբկիրում բժիշկ է աշխատել:

1895թ. հայկական ջարդերի ժամանակ Արաբկիրում, ի թիվս շատ հայերի, գրպարտությամբ ձերբակալվել է որպես հեղափոխական ֆիդայի և բանտարկվել:

Այնուհետև տեղափոխվել է Մեզիրեի բանտը, ուր 5 ամիս դաժան հարցաքննությունների է ենթարկվել, ապա տարվել դատարան: Դատավարության ընթացքում խոսել է համարձակորեն ու ազատ արձակվել:

Այնուհետև նշանակվել է Մեզիրեի քաղաքապետական բժիշկ, քանի որ այդ պաշտոնից հեռացել ու ԱՄՆ էր մեկնել բժիշկ Ե. Էնշերյանը (տե՛ս վերևում):

1898-1902թթ.՝ չորս տարի աշխատել է այդ պաշտոնում:

1902-22թթ.՝ քսան տարի ծառայել է Խարբերդի դաշտի բազմազգ բնակչությանը:

Միաժամանակ, բժիշկ է աշխատել գերմանական մի-

սիոներության Մեզիրեի նորաստեղծ բուժարանում, և գերմանացիների հովանավորության շնորհիվ գերծ է մնացել Մեծ Եղեռնի զոհ դառնալուց:

Ծոփաց աշխարհի ամենից հանրածանոթ հայ բժիշկն է համարվել:

Եղել է ուղղամիտ, խղճմիտ, աղքատասեր ու աստվածավախ մարդ:

1915թ. ապրիլ-մայիս ամիսների ընթացքում Խարբերդում ձերբակալված բազմաթիվ հայ մտավորականների հետ կրկին բանտարկվել է Մեզիրեի բանտում: Որոշ ժամանակ անց ազատ է արձակվել:

Մնացած 37 բանտարկյալները հրկիզել են բանտը և ինքնահրկիզվել:

1922թ. ընտանիքով տեղափոխվել է ԱՄՆ և հաստատվել Մասաչուսեթսի նահանգի Բոստոն քաղաքում:

1929թ. ԱՄՆ Ֆրեզնո քաղաքն է տեղափոխվել:

Մահացել է 1952թ. օգոստոսին, Ֆրեզնոյում 85 տարեկանում:

Լրա մասին.

1. Ճիզվեճեան Մանուկ, Խարբերդ եւ իր գաւակները, Ֆրեզնո, 1955:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

3. Սվազյան Վերծինե, Հայոց

ցեղասպանություն: Ականատի թյ



ՀԱՎՈՐՑԱՆ ՄՏԵՓԱՆ

Ծնվել է 1851թ., Կոստանդնուպոլսում:

Նախնական կրթությունն ստացել է Կ. Պոլսի Կուլագունջուկ թաղամասի միջնակարգ վարժարանում (իդադիե), ապա՝ Կոնկափու թաղամասի Պեզճյան դպրոցում:

1874թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

1874-77թթ. զինվորական կայսրության դանուբյան նահանգներում և մասնակցել Սերբիական պատերազմին:

1877-1917թթ.՝ 40 տարի Կ. Պոլսի Կաղըզյուղ թաղամասի Սողայի հիվանդանոցի բժիշկ է աշխատել:

Այդ ընթացքում կատարելագործման կարճատև դասընթացներ է անցել Փարիզում և Վիեննայում:

Եղել է Ընկերությանց տնօրենների ժողովի անդամ և Ազգային կենտրոնական վար-

չության Զաղաքական ժողովի Ուսումնական խորհրդի անդամ: Տասը տարի եղել է Կաղըզյուղի Արամյան վարժարանի հոգաբարձության անդամ:

Գիտաբժշկական և գիտահանրամատչելի հոդվածներ է տպագրել «Երկրագունտ», «Մասիս», «Բիւզանդիոն» և «Բժիշկ» թերթերում:

Եղել է Կաղըզյուղի բազմազգ բնակչության սիրելի և հարգելի բժիշկը:

Չնայած առաջացած տարիքին՝ առողջ, առույգ, կենսախիսնդ անձնավորություն է եղել:

Մահացել է 1917թ. մարտի 15-ին, ժանտախտից՝ 66 տարեկանում:

Աշխատությունները.

1. Առողջապահական գիտելիք: Գրքույկը տպագրել է Սովետյոց հանձնաժողովը և գրեթե ձրի բաժանվել գավառներում:

2. Հիւանդին բարեկամը, գիրք, 1884:

Նրա մասին.

1. Ընդարձակ օրացոյց Սուրբ Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1905:

2. Ղազարեան Վահան, Բժշկական եւ առողջապահական տարեցոյց, Կ. Պոլիս, 1914:

3. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Ստամբուլ, 1919:

4. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՀԱԿՈՐՈՎ (ՅԱԿՈՐՈՅ) ԳՐԻԳՈՐ

Ծնվել է մոտ 1870թ., Կ. Պոլսի Կաղըզյուղ թաղամասում:

1897թ. հուլիսի 20-ին ավարտել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1904թ. դրությամբ Կ. Պոլսի Կաղըզյուղ թաղամասում բժիշկ է աշխատել:

Մահացել է 1918թ. ապրիլի 10-ին, ժանտախտից:

Նրա մասին.

1. Ընդարձակ օրացոյց Սուրբ Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1905:

2. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Ստամբուլ, 1919:

ՀԱՅՅԱՆ Գ. (ԳԱՌՈՒ, ԳԱՌՈՒ ԲԵՅ)

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

Երկար տարիներ դեղա-

գործ է աշխատել Կ. Պոլսի Հայդարփաշայի զինվորական հիվանդանոցում:

1900թ. Կ. Պոլսի Կաղըզյուղ թաղամասի Մյուսիյուրդար պողոտայում բացել է սեփական դեղատուն:

Բեյի տիտղոս է ունեցել:

1915թ. ապրիլի 11 (24)-ին, ի թիվս բազմաթիվ ակնառու հայ մտավորականների, ձերբակալվել է և բանտարկվել Կ. Պոլսի բանտում, ապա արտրվել Չանղըրը:

Անվան առաջին «Գ» տանը փորագրվել է Չանղըրը բանտում հավաքված համրիչի 99 հատիկներից մեկի վրա:

Հրաշքով վերապրել է:

Չինադարից հետո Չանղըրը արտրվայրից վերադարձել է Կ. Պոլիս:

Նրա մասին.

1. Յարման Ա., Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սբ Փրկիչ հիվանդանոցի (թրք.), Ստամբուլ, 2001:

2. Ավագյան Կ., Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողք և վկայք խաչի, Ե., 2002:

3. Ավագեան Կ., «Չանղըրը 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյժը, «Հանդէս մասօրեայ», 2008, հ. . 1-12

ՀԱՅԿԱՉՅԱՆ ԱՐՄԵՆԱԲ

Ծնվել է Լեռնային Կիլիկիայի Հաճըն քաղաքում:

Բժշկական կրթություն է ունեցել:

1920 թ. հոկտեմբերի 15-ին մասնակցել է Հաճընի ինքնապաշտպանությանը:

Ձերբակալվել է Գոնիայում:

Տարվել է Խարբերդ և սպանվել:

Նրա մասին.

Գրիգոր Գրաճեան, Ինկալ Հաճընը, Կ'ապրի Հաճընցին, Պէյրուք, 25 Հոկտեմբեր 2010, http://www.keghart.com/Krajian_Hajn

ՀԱՅՐԱՄԵ ՀՐԱՆՏ

Բժշկական կրթություն է ունեցել:

1914թ., Առաջին աշխարհա-մարտի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և բժիշկ ծառայել Մուսուլի կենտրոնական զինվորական հիվանդանոցում՝ կապիտանի աստիճանով:

1916թ. հունվարի 21-ին մահացել է Մուսուլում:

Նրա մասին.

1. Ատաշ Ադնան, 20-րդ դարի նահատակ եղած բժիշկները (թուրքերեն), Թուրքիա, 1997:

2. Յարման Արսեն, Հա-

յերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՀԱՅՐԱՆՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ (ԱՐՄԵՆՇԱՀ)

Ծնվել է 1881թ., Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառի Տիվրիկ գավառակի կենտրոն Տիվրիկ ավանում՝ բարեկեցիկ ընտանիքում:

Պապը՝ Կարապետ Փաշա Հայրանյանը, մեծ հարգանք է վայելել հայերի և թուրքերի շրջանում:

Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի վարժարանում:

1908թ. ավարտել է Ծվեյցարիայի Ժնև քաղաքի բժշկական համալսարանը: Ուսանելու տարիներին անդամակցել է ՀՅԴ-ին:

1908-09թթ. գերմանիայի Բեռլին մայրաքաղաքում մասնագիտացել է վիրաբուժության գծով:

Բեռլինում ծանոթացել ու ամուսնացել է Բաքվի հայ առևտրական Ադամյանի աղջկա հետ և ունեցել երկու դուստր:

«Տօթթ. Ա. Հ.» ծածկանունով հրապարակախոսական հոդվածներ է տպագրել է Կ. Պոլսի «Ազատամարտ» (1909, թ. 158; 1911, թ. 376) և

«Ազատամարտ, Հավելված» (1910-1911թթ.) թերթերում:

1913թ. ընտանիքը թողնելով Բեռլինում, վերադարձել է հայրենի Տիվրիկ՝ ծանր հիվանդ մորը բուժելու համար: Այստեղ սկսել է բուժել նաև իրեն դիմած համաքաղաքացիներին: Հետագայում աշխատել է Սեբաստիայում: Եղել է դաշնակցական գործիչ, ՀՅԴ Սեբաստիայի կենտրոնական կոմիտեի լավագույն դեմքերից մեկը:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուց հետո զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական հիվանդանոցի բժիշկ-վիրաբույժ ծառայել:

Լավ հարաբերություններ է հաստատել Սեբաստիայի եկած գերմանացի մարզիչ սպաների հետ և եղել նրանց թարգմանիչը (ողջ պատերազմի ընթացքում գերմանացի սպաների թարգմանիչները մեծ մասամբ հայեր էին):

Օգտվելով այդ մտերմությունից և հույսը դնելով գերմանացիների պաշտպանության վրա, համարձակ դիմումներ է գրել Սեբաստիայի ջարդարար նահանգապետ Մուլամմերին՝ իր ձերբակալված ընկերներին ազատելու պահանջով:

Բժիշկը լուր է ստացել, թե հայդուկ Սեբաստացի Մուրատը Սախարի լեռան վրա

ժանտախտով ծանր հիվանդ է և անհետաձգելի բուժման կարիք ունի:

Ընկեր վերցնելով բժիշկ Բաղդասար Վարդանյանին՝ Արմենակ Հայրանյանը գաղտագողի բարձրացել է սարը և ծանր հիվանդ Մուրատին գտել է մուլթ ու խոնավ քարայրում: Բժիշկներն անհրաժեշտ բուժումը նշանակել են նրան, դեղեր տվել և վերադարձել: Մի քանի օրից Մուրատը լավացել է և թուրքերի դեմ կռիվներում նորանոր սխրանքներ գործելով մինչև Կովկաս հասել:

1915թ. մայիսին բժիշկ Բաղդասար Վարդանյանը (դեղագործ Վահան Վարդանյանի եղբայրը), բժիշկ Արմենակ Հայրանյանը և ոստիկանական բժիշկ Մագսուտը ձերբակալվել են ու բանտարկվել:

1915թ. մայիսի 27-ին, Բ. Վարդանյանին, Ա. Հայրանյանին և Մագսուտին խիստ ծեծի և տանջանքների ենթարկելուց հետո, ձեռքերը կապած տարել են Յենիխանից 2 ժամ դեպի հարավ-արևմուտք, Իթ Տաղըի ստորոտում Իթ Սեզարը կոչված վայրը (Սեբաստիայի մոտակայք) և Մուլամմերի հրահանգով, թուրք ոստիկան-զինվորների ձեռքով գնդակահարել ու թաղել:

Ոճրագործությանը ներկա են եղել Իթթիհատի պատաս-

խանատուներից Ալի Շեֆիքը և Փերթև բեյը, որոնք նաև լուսանկարել են դեպքը:

Եղել է 34 տարեկան:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Ստամբուլ, 1919:

2. Համբարձումեան Վահան, Գիւղաշխարհ, Փարիզ, 1927:

3. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ. Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

4. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

5. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

6. Կազմեց Առաքել Ն. Պատրիկ, Պատմագիրք Յուշամատեան Սեբաստիոյ եւ Գաւառի Հայութեան, Ա. Հատոր, Հրատարակութիւն՝ Համասեբաստահայ Վերաշինաց Միութեան, Նիւ Եորք, տպ. «Սշակե, Պէյրուք, 1975, մեծ չափի 880 էջ

7. Թէոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

8. Համբարձումյան Վահան, Գիւղաշխարհ, Երևան, 2000:

9. Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ալբոմ-ատլաս, Բ. հատոր, Գոյամարտ, 1914-1925, Լոս Անճելըս, 2001:

10. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

11. Հովակիմյան Բախտիար, Հայոց ցեղասպանության նահատակ գործիչների ծածկանուններ, Երևան, 2002:

12. Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Յուշակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:

13. Տիվրիկցիների հայրենակցական միության հուշերը...

14. ՀՅԹԻՖ, ֆ-49, ծ-229, պ-14:

15. Իսկահատեան Հ., Վկայարան հայկական ցեղասպանութեան, Գիրք Գ, Պէյրուս, 2011, 395 էջ

**ՀԱՅԻ - ԵՆՈՎՅԵԱՆ
(ՍԻՀՐԱՆ - ԽԱՉԱՏՈՒՐ)**

Ծնվել է հավանաբար 1871թ., Մարմարա ծովի եվրոպական ափի Ռոդոսթոն (Թեքիրդաղ) քաղաքում: 1896թ. ավարտել է Կ.

Պուսի զինվորական դեղագործական վարժարանը և բժշկական ծառայության ավագ լեյտենանտի աստիճան ստացել:

Կ. Պուսի Թոփխանե թաղամասում սեփական դեղատուն է ունեցել, այնուհետև Փոքր Ասիայի արևմուտքի Մանիսա քաղաքն է տեղափոխվել:

Մահացել է 1916թ. մոտ 45 տարեկանում:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:



**ՀԵՔԻՅԵԱՆ ԽՈՍՐՈՎ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ**

Ծնվել է մոտ 1875թ., Սեբաստիայում/ Խարբերդում: Հայրը եղել է Խարբերդի անվանի բժիշկ Հարություն Հեքիմյանը:

Սովորել է ամերիկացի միսիոներների Խարբերդի եփրատ քոլեջում, սակայն ուսումն անավարտ է թողել:

1899թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը և արժանացել վիրաբուժության և ներքին հիվանդությունների գծով առաջին մրցանակին:

1900-06թթ. Սեբաստիա քաղաքի Հայոց ազգային հիվանդանոցում բժիշկ է աշխատել:

1906-14/15թթ. Տրապիզոն քաղաքում բժիշկ է աշխատել:

Անատոլիայում առաջին է կիրառել ռենտգենյան սարքը:

1915թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել:

Պատերազմի ընթացքում Պաղեստինի Նազարեթ քաղաքում անգլիական բանակի ձեռքը գերի է ընկել: Իննը ամիս, որպես ռազմագերի, պարտադրված է եղել անգլիական զինվորական հիվանդանոցում բժիշկ աշխատել:

1919-22թթ. եղել է Ամերիկյան Նպաստամատույցի (Նիր Իսթ Ռիլիֆ) Սեբաստիայի հիվանդանոցի և որբանոցի բժշկապետ:

Այնուհետև տեղափոխվել է ԱՄՆ:

1924թ. դրությամբ բնակվել է ԱՄՆ-ի Մասաչուսեթսի նահանգի Բոստոն քաղաքում (Brookline ave., 484)

1924թ. ապրիլին, հայրենասիրական մղովներով, ԱՄՆ-ից հայրենադարձվել է Խորհրդային Հայաստան:

Երևանում եղել է անվանի բժիշկ, վիրաբույժ:

Եղել է Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) ներկայացուցիչը Խորհրդային Հայաստանում:

1936թ. հուլիսի 9-ին, Թբիլիսիում Լավրենտի Բերիայի ձեռքով Ադասի Խանջյանի սպանությունից հետո դիակը բերվել է Երևան և հուլիսի 12-ին հանձնվել հողին:

Մինչև թաղելը դիակը գնել են բժիշկներ Խոսրով Հեքիմյանը, Հարություն Միրզա-Ավագյանը և Գրիգոր Սադյանը, որոնք համոզվել են, որ դա չէր կարող ինքնասպանություն լինել, ուստի մահվան եզրակացությունն ստորագրելուց հրաժարվել են և պատճառաբանել, թե «Խանջյանը պետք է առնվազն երկու մետրանոց ձեռք ունենար և ձախլիկ լիներ, որպեսզի ձախ ձեռքով ինքն իր գլխին կրակեր»:

1937թ. (այլ վարկածով 1930թ.) ձերբակալվել է և բանտարկվել Երևանի ներքին բանտում:

Բանտարկյալներին հերթական զբոսանքի հանելիս

բժիշկը հրաժարվել է դուրս գալ և մնացել է բանտախցում: Որոշ ժամանակ անց վերադառնալով բանտախուց ընկերները բժշկին գտել են մահացած. նա ապակիով կտրել էր իր երակը և արյունաքամ եղել: Դրանից հետո չեկիստները սկսել են բանտախցերից հավաքել երկաթյա իրերն ու ապակյա շշերը, որոնք կարող էին բանտարկյալների համար ինքնասպանության գործիք դառնալ:

Որդին 1960-ական թթ. աշխատել է ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայում:

Նրա մասին.

1. «Մանգոլմեի Էֆքեար», Կ. Պոլիս, թ. 788, 21-02-1904:
2. «Հայաստանի կոչնակ», Լիւ Եորք, 27-12-1924:
3. Պատրիկ Առաքել, Պատմագիրք-յուշամատենան Սեբաստիոյ եւ գաւառի հայուրեան, Կ. Ա., Պէյրուք, 1974:
4. Պատրիկ Առաքել, Պատմագիրք-յուշամատենան Սեբաստիոյ եւ գաւառի հայուրեան, Կ. Ա., Լիւ Ճըրգի, 1983:
5. Ալբոյաջյան Հ., Խաչելության ճամփաներով, Երևան, 2005:
6. Զյոսեյան Ա., Այցելություն Բրզնիք, «Չայն համշենական», Երևան, 2006, թ. 5-6:

ՀԵՔԻՍՅԱՆ ՅԵՐՈՒՆ Գ.

Ծնվել է 1886թ., Զեսապ քաղաքում, հայ ավետարանական ընտանիքում:

1903թ. ավարտել և «պսակավոր արվեստից» վկայական է ստացել Այնթապի քուլեջից:

1908թ. ավարտել է Բեյրութի ամերիկյան համալսարանի բժշկական բաժինը:

1914թ. սկսված Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և ծառայել որպես զինվորական բժիշկ:

Սպանվել է Անտիոքում:

Նրա մասին.

Քեստենեան Հրաչ, Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ եւ Մեծ Եղեռնին Նահատակուած Հայ Բժիշկներ, «Ազդակ», 01-11-2012

ՀԵՔԻՍՅԱՆ ԶԸՐՋԻ

Բժշկական կրթություն է ունեցել:

Բաղդադի կենտրոնական հիվանդանոցում բժիշկ է աշխատել:

Մահացել է 1916թ. մարտի 30-ին, ժանտախտից:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով,

Ստ



ՀԵՔԻՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ

Ծնվել է 1864թ., Սեբաստիայի նահանգի Ամասիայի գավառի կենտրոն Ամասիա քաղաքում:

1889թ. ԱՄՆ-ում ստացել է բժշկական բարձրագույն կրթություն և մասնագիտացել վիրաբուժության գծով:

Ամասիայի ազգային հիվանդանոցում բժիշկ-վիրաբույժ է աշխատել:

Սպանվել է 1915թ. հունիսին, Տարենտեի ճորում՝ 51 տարեկանում, գնդակահարվելով:

Նրա մասին.

1. Մեզպուրեան Արթո, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ. Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

2. Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սե-

բաստիայի նահանգ, Երևան, 2004:

3. http://www.genocidemuseum.am/arm/remember_armenian_genocide.php

ՀԵՔԻՍՅԱՆ ՕՎՍԵՍ ԳԵՎՈՐԳ

Ծնվել է 1880 թ., Զեսապ քաղաքում:

Նախնական կրթությունը ստացել է Զեսապի հայկական Ավետարանական վարժարանում:

1896-98 թթ. հաճախել է Այնթապի Ամերիկյան քուլեջը:

Ապա հաճախել է Սիրիական բողոքական քուլեջ (հետագայում՝ Բեյրութի ամերիկյան համալսարան - Էյ.Եոլ.Պի.), որտեղ ուսանել է բժշկություն և ստացել բժշկության դոկտորի վկայական:

Որպես բժիշկ աշխատել է Զեսապում:

1914 թ. սկսված Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է թուրքական բանակ և ուղարկվել ռազմաճակատ:

1915 թ. մայիսին սպանվել է թուրքերի կողմից:

Ամուսնացած էր Կ. Ինճեճիկյանի հետ:

Նրա մասին.

Քեստենեան Հրաչ, Պէյրութի Ամերիկեան Համալսարանում:

սարանէն Շրջանաւարտ եւ Մեծ Եղեռնին Նահատակուած Հայ Բժիշկներ, “Ազդակ”, 01-11-2012

ՀԻՆԴՅԱՆ ԱՐԹԻՆ

Դեղագործական կրթություն է ունեցել:

Տրապիզոնի նահանգի Սամսոն նավահանգստում դեղագործ է աշխատել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական դեղագործ ծառայել:

Չոհվել է Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Կովկասյան ռազմաճակատում:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունն սուրբ Փրկիչ հաս...



ՀԻՆԴՅԱՆ ՀԱՅԿԱԿ

Ծնվել է Սեբաստիայի նահանգի Շապին-Կարահիսարի գավառի կենտրոն Շապին- Կարահիսար քաղաքում:

Բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել:

Սպանվել է 1915թ., Գանկայի շրջանում:

Նրա մասին.

Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:

ՀԻՆԴՅԱՆ ՍՏԵՓԱՆ

Ծնվել է 1882թ., Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի Թալաս ավանում:

1911թ. ավարտել է Բեյրութի Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Թուրքիայում բժիշկ է աշխատել:

Սպանվել է 1922թ., Պելեն նավահանգստի մոտ՝ 40 տարեկանում:

Նրա մասին.

1. Մեզպուրեան Արթո, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ. Այբուբենական համառոտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

2. Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 3, Անկարայի նահանգ, Երևան, 2006:

ՀԻՍԱՐԼՅԱՆ ՊՈՂՈՍ

Ծնվել է 1887թ., Կ. Պոլսում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի թաղային վարժարաններից մեկում:

1912թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

1912թ.-ից բժիշկ է աշխատել, ամուսնացել, տուն-տեղ դրել:

1914թ. ամռանը, Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուն պես, բոլոր հայ բժիշկների հետ միասին զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայելու համար Կարին ուղարկվել:

1915թ. գարնանն սկսել են հայերի ձերբակալությունները, բանտարկություններն ու տեղահանությունը:

Հազարավոր հայ ընտանիքների թվում բժշկի ընտանիքը ևս տարագրվել է դեպի Դեյր-Է-Չորի անապատները:

Պողոս Հիսարյանը տեղեկանալով իր ընտանիքի տարագրության մասին, դիմումներ է գրել զինվորական

հրամանատարությանը և Կարինից Սեբաստիա մեկնելու թույլտվություն ստացել՝ իր ընտանիքը փրկելու համար:

Սակայն 1915թ. գարնանը, Կարինից Սեբաստիա մեկնելու ճանապարհին, Խարբերդի և Երզնկայի միջև, Մամախաթունի մոտերքը զինվորական համազգեստով բժիշկը սրախողխող է արվել թուրք զինվորների ձեռքով՝ 28 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուլած զոհերը, ցուցակագրուլած վաւերական փաստերով, Ստամբուլ, 1919:

2. Մեզպուրեան Արթո, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ. Այբուբենական համառոտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

3. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

4. Յուլչամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

5. Թեոդիկ, Յուլչարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

6. ՀՅԹԻՖ, ֆ-49, ծ-229, պ-14:

ՀՈՎԻԿՅԱՆ ՍԵՂՄԱ

Ծնվել է 1892թ., Խարբերդի նահանգի կենտրոն Խարբերդ քաղաքում:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և Խարբերդի զինվորական հիվանդանոցում զինվորական օգնական բժիշկ ծառայել:

Սպանվել է 1915թ., Խարբերդում, պաշտոնավարման ժամանակ՝ 23 տարեկանում:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Ստամբուլ, 1919:

ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ ՈՍԿԱՆ

Ծնվել է Տիգրանակերտում: Բժշկական կրթություն է ունեցել:

Յոնջալըի հիվանդանոցի բժիշկ է աշխատել:

Մահացել է 1915թ. փետրվարի 15-ին, ժանտախտից:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Ստամբուլ, 1919:

ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ ՊԵՏՐՈՍ

Ա տ ա մ ն ա բ ու ժ ա կ ա ն կրթություն է ունեցել:

1915թ. դրությամբ Եդեսիայում ատամնաբույժ է աշխատել:

1915թ. նահատակվել է

Եդեսիայում:

Նրա մասին.

Սահակեան Արամ, Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, Պէյրուք, 1955:



ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ ՈՍԿԱՆ ՈՍԿԱՆ

Ծնվել է 1888թ., Կ. Պոլսի Միջագյուղ թաղամասում:

Պապը՝ Սարգիս Հովսեփյանը (Ուսուպենց) Բուրսայի նահանգի Նիկոմիդիայի գավառակի Գեյվեի շրջանի դատավորն է եղել, իսկ հայրը՝ Գալուստ Հովսեփյանը՝ Օսմանյան կայսրությունում նոր զարգացող շերամապահության հիմնադիրներից մեկը:

Սարգիսը սովորել է Կ. Պոլսի Գաղատիա թաղամասի Կեդրոնական վարժարանում:

Լինելով քաղաքի այդ տարվա երկու գերազանցիկներից մեկը, ավարտական դիպլոմն ստացել է քաղաքապետի ձեռքից՝ արժեքավոր գրքերի մի տրցակ նվեր

ստանալով:

1913թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական համալսարանը:

Այնուհետև ուսումը շարունակել է Լայպցիգում, ապա՝ Ժնևում և բժշկի մասնագիտությունն ստացել:

1914թ. վերադառնալով Թուրքիա՝ նշանակվել է Տրապիզոնի նահանգի Թերմե գավառի քաղաքապետարանի բժիշկ:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել:

Սարիդամիշի ռազմաճակատում մի թուրք զինվոր (որին բուժել էր) նրան զգուշացրել է, որ բոլոր հայ զինվորականները գաղտնի հրամանով դատապարտվել են մահվան և լուսաբացին բոլորին սպանելու են:

Սարգիս Հովսեփյանն ընկերոջ՝ բժիշկ Արշակ Պողոսյանի հետ գիշերով փախել է զորամասից ու գերի հանձնվել ռուսական կողմին: Հաջորդ օրը դասալիքներից յուրաքանչյուրի գլուխը 50 000 ոսկի գնահատումով ազդարերը տարածվել են ամենուր: Հետագայում նրանք անհետ կորած են համարվել:

Բժիշկներին ռազմագերիների հետ տեղափոխել են Թիֆլիս և բանտարկվել: Եռամսյա բանտարկություն

նից հետո նրանց ուղարկել են հարկադրական աշխատանքի՝ Նաֆթուրդի զինվորական լագարեթում:

1915թ. մարտին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի միջնորդությամբ բժիշկները ազատվել են գերությունից, տեղափոխվել Վաղարշապատ (Էջմիածին) և բժշկական օգնություն ցուցաբերել սովից ու հիվանդություններից տառապող ավելի քան 75 000 գաղթականներին:

1915թ. սեպտեմբերին Սարգիսը տեղափոխվել է Դիլիջան և «Համառուսական քաղաքների միություն» կազմակերպության գծով գաղթականական հիվանդանոցներ ու որբանոցներ հիմնել:

1916թ. ամռանը, Կարինի ռուսական գրավումից հետո, Կարինի քաղաքային հիվանդանոցի գլխավոր բժիշկ է նշանակվել:

Հետո տեղափոխվել է Թիֆլիս, ապա գլխավոր բժիշկ աշխատել հաջորդաբար Վաղարշապատի, Դիլիջանի, Իջևանի հիվանդանոցներում:

1918թ. ժանտախտի և «իսպանական» համաճարակների ժամանակ հազարավոր գաղթականների կյանքն է փրկել:

1918թ. հունվարին Իջևանի հիվանդանոցի իր բնա-

կարանում 4 օր թաքցրել է Ստեփան Շահումյանին և դեղերով լեցուն արկղներով բեռնավորված իր «Ֆիատ» ավտոմեքենայում թաքցնելով նրան փախցրել Թիֆլիս:

1920թ. դեկտեմբերին տեղափոխվել է Շամշադին և Բերդ ավանում շրջանի առաջին հիվանդանոցը հիմնադրել ու կազմակերպել:

Այնուհետև հիվանդանոցի հիմքի վրա սկսել է շրջանի համար ապագա բուժքույրերի ուսուցման գործը:

1921թ. եռանդուն մասնակցություն է ունեցել Հայաստանում մայիսյան շարժումներին, համագործակցել լեգենդար Ենոք Սկրտումյանի, Աղասի Վարդանյանի և ուրիշների հետ:

1930-ական թվականների դժնի տարիներին, շատերի պես նա էլ գերծ չի մնացել հետապնդումներից: Նրան մի քանի անգամ կարողացել են փրկել, թաքցնել, անունը հանել ձերբակալության կամ աքսորի ենթակա անձանց ցուցակներից:

Նրան նույնիսկ փորձել են դավադրաբար սպանել:

Մինչև 1948թ. եղել է Շամշադինի հիվանդանոցի գլխավոր բժիշկը, միաժամանակ կատարելով առողջապահության բաժնի վարիչի և պետական սանիտարական տեսուչի պարտականությունները:

Իր իսկ ստեղծած բուժաշխատողների անձնակազմի հետ մեծ գործ է կատարել շրջանի առողջապահական գործը բարելավելու ուղղությամբ: Հիմնադրել է հիվանդանոցներ, ծննդատներ, բժշկական տեղամասեր, սանէպիդկայան, բաղնիքներ, բուժքույրական դասընթացներ, պայքարել տարաբնույթ համաճարակների դեմ և այլն:

Հետագայում աշխատել է շրջանի տրոպիկական կայանի վարիչ, բժիշկ-ինֆեկցիոնիստ և այլն:

1928թ-ից ի վեր վերապատրաստման ու կատարելագործման մի քանի դասընթացներ է անցել Լենինգրադում:

Հանրապետական և միութենական բազմաթիվ գիտաժողովների է մասնակցել:

Մտերիմ է եղել իր ժամանակի մեծանուն բժիշկներ Զրիստափոր Փիրումյանի, Հարություն Միրզա-Ավագյանի, Լևոն Հովհաննիսյանի, Համբարձում Զեչեկի և ուրիշների հետ:

Բժշկական գործունեությանը զուգահեռ հետաքրքրվել է նաև հանրապետության քաղաքական անցուղարձով:

Եղել է Հայաստանում ամենաերկար (68 տարի) աշխատանքային ստաժ ունեցող բժիշկը:

13 անգամ ընտրվել է Շամշադինի շրջանային խորհրդի դեպուտատ և 25 տարի եղել շրջխորհրդի գործադիր կոմիտեի անդամ:

Պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի» և Լենինի շքանշաններով, արժանացել վաստակավոր բժշկի և ԽՍՀՄ առողջապահության գերագանցիկ կոչումների:

Հրաշալի տիրապետել է 8 լեզուների, այդ թվում արաբերենին և օսմաներենին:

Եղել է նվիրված ամուսին և հոգատար հայր, որի բոլոր 5 զավակները՝ 2 որդիներն ու 3 դուստրերը բարձրագույն կրթություն են ստացել:

Մահացել է 1975թ.՝ 87 տարեկանում:

2010 թ. նոյեմբերի 11-ին Բերդ քաղաքում կայացել է Սարգիս Հովսեփյանի անունով փողոց անվանակոչելու և նրա հուշարձանի բացման հանդիսավոր արարողությունը:

Նրա մասին.

1. Մեր անվանի մարդիկ, «Շամշադին», 1967, դեկտեմբեր, թ. 1:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

3. Դստեր՝ Մինիոն Հովսեփյանի գրած կենսագրական

նր, 2003:

4. Ստեփանյան Հ., Սարգիս Հովսեփյան - 115, «Առողջապահության լրատու», Երևան, 2003, թ.:

5. ՀԱՄ, ֆ.1191, ց. 1, գ. 955:

6. Մինասյան Հ., Վերագտած կյանքը՝ ընծա Մայր Հայրենիքին, «Ազատամտություն», Ե., 20-11-2008:

7. Մինասյան Հարություն, Պոլսահայ բժշկի վերագտած կյանքը՝ ընծա Մայր Հայրենիքին, „Էրեբունի“ ամսաթերթ, 2010, թ. 4

8. Հայրապետյան Ֆ., Բժիշկ Հովսեփյանը ..., „Ազգ“, 13-07-2011

ՂԱՉԱՆՉՑԱՆ ԳԵՐԱՍԻՄ

Գրվել է նաև Կարո Ղազանջյան:

Ծնվել է Ախալքալաք գավառի կենտրոն Ախալքալաք քաղաքում:

Բարձրագույն բժշկական կրթություն է ունեցել և Կարսում բժիշկ աշխատել:

Եղել է ՀՀԴ Կարսի կենտրոնական կոմիտեի անդամ և դրա ղեկավարը:

Եղել է ամուսնացած և ապրել բարեկեցիկ կյանքով:

Երիտասարդ կինը եղել է բավարար կրթված, եգալի համեստ, բոլորի կողմից սիրված ու հարգված տիկին: Տառապել է հոգեկան հիվանդությամբ և մի քանի անգամ

կատարել ինքնասպանության փորձ:

1913 թ. հուլիսի 14-ին երիտասարդ կինը ինքնասպանություն է գործել ատրճանակով: Հուլիսի 16-ին Կարսի սբ. Նշան եկեղեցում կատարվել է հուղարկավորության արարողությունը, որին ներկա են եղել Կարսի նահանգապետը, ոստիկանապետը և շատ ոռու ծառայողներ: Այդ օրը Կարսի բոլոր խանութները եղել են փակ: Փողոց են դուրս եկել բազմաթիվ մարդիկ:

Կնոջ մահվան կապակցությամբ բժիշկը կանխիկ 1000 ռուբլի նվիրաբերել է Կարսի հայոց երկսեռ դպրոցին, 200 ռուբլի՝ Ախալքալաքի հայոց դպրոցին, 100 ռուբլի՝ ԿՀԲ ընկերության Կարսի մասնաճյուղին, 50 ռուբլի՝ տեղական աղքատներին, 50 ռուբլի՝ տպագրական ֆոնդին:

Ունեցել է աղջիկ և տղա:

1920թ. հոկտեմբերի 30-ին, թուրքերը Կարսը գրավելուց հետո սկսել են քաղաքի հայ բնակչության զանգվածային կոտորածն ու թալաւը:

Կարաբեքիր փաշան Կարսի քաղաքագլուխ Համագասպ Նորհատյանին, Կարապետ Գրիգորյանին (Սև Կարո) և բժիշկ Գերասիմ Ղազանչանին (Բժիշկ Կարո) սիրալիր հանձնարարել է շրջել

հայերի տները, իմանալ, թե ո՞վ է ողջ մնացել, ի՞նչ վնաս է հասցվել նրանց, ցուցակագրել ու ցուցակները 15 օրում ներկայացնել իրեն՝ տուժած բնակիչների վնասները հատուցելու համար:

Հանձնախումբը ճիշտ ժամանակին ցուցակները ներկայացրել է փաշային և տեղնուտեղը ձերբակալվել: 2 ժամ անց, նույն օրը՝ 1920թ. նոյեմբերի 15-ին, Կարաբեքիր փաշայի հրամանով թուրքերը Կարսի խափան հրապարակում կախաղան են բարձրացրել Համագասպ Նորհատյանին, Կարապետ Գրիգորյանին և բժիշկ Գերասիմ Ղազանչանին:

Նրա մասին.

1. Տեր-Սեթրիսեդեկեան Սարիբեգ, Տեղեկութիւններ գաւառից, Ցաւալի մահ, «Մշակ», 19-07-1913

2. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1, Թեհրան, 1982:

3. Ալեքսանդրյան Արտաշես, Կարս. 1920-21, Երևան, 1986:

4. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, «Նշանակ» Էլեկտրոնային կայքէջ, 25-11-2009

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱԿՈՒ

Ծնվել է Փոքր Ասիայի արևմուտքի Չոնկուլդակ քաղաքում:

Բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և ծառայել Կ. Պոլսի գործավորական վաշտի զինվորական բժիշկ:

Մահացել է 1915թ. նոյեմբերի 8-ին, ժանտախտից:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Ստամբուլ, 1919:

ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

Ծնվել է 1891թ., Բրուսայի նահանգի Նիկոմիդիայի գավառակի Պարտիզակ ավանում:

Ուսանել է բժշկական վարժարանի Դ դասարանում (4-րդ կուրսում):

Մահացել է Կոնիա - Կարա Այդընի արքայազարում, ժանտախտից՝ մոտ 21 տարեկանում:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Ստամբուլ, 1919:

ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

Ծնվել է 1891թ., Բրուսայի նահանգի Նիկոմիդիայի գավառակի Պարտիզակ ավանում:


Ուսանել է բժշկական

վարժարանի Դ դասարանում (4-րդ կուրսում):

Մահացել է Կոնիա - Կարա Այդընի արքայազարում, ժանտախտից՝ մոտ 21 տարեկանում:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Ստամբուլ, 1919:



ՂԱԶԱՐՅԱՆ ԻՍՀԱՆ Թ.

Բժիշկ, խմբագիր:

Ծնվել է 1875թ., Մարզվանում:

Նախնական և բարձրագույն կրթությունն ստացել է ամերիկացի միսիոներների Մարզվանի Անատոլիա քոլեջում:

1903-07թթ. սովորել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետում և ավարտել գերագանցությամբ:

Ուսանողական տարիներին հետևել է հայկական մամուլին և գրականությանը ու դրանց իր մասնակցությունը բերել:

1911թ. Տրապիզոնում եղել է «Բժիշկ» բժշկա-առողջապահական ամսաթերթի խմբագրապետը:

1912-14թթ. 4. Պոլսում եղել է «Բժիշկ» բժշկա-առողջապահական ամսաթերթի խմբագրապետը:

Բազմաթիվ բժշկական և հրապարակախոսական հոդվածների հեղինակ է:

1914թ. խմբագրել և հրատարակել է առաջին համարը «Բժշկական եւ առողջապահական տարեցոյցի», որն ամեն տարի հրատարակելու նպատակ է ունեցել:

1914թ., Առաջին աշխարհամարտն սկսվելուն պես գորակոչվել է օսմանյան բանակ և հարյուրապետի աստիճանով ծառայել 153-րդ զորագնդի 3-րդ գումարտակի զինվորական բժիշկ:

1915թ., Եդեսիայի / Զմյուռնիա-Ֆոշայի ճանապարհին, սպանվել է իր զորահրամանատարների թելադրանքով՝ իր իսկ օգնականի ձեռքով՝ 40 տարեկանում:

Աշխատությունը.

Ղազարեան Վահան, Բժշկական եւ առողջապահական տարեցոյց, Կ. Պոլիս, 1914:

Նրա մասին.

1. Ղազարեան Վահան, Բժշկական եւ առողջապահական տարեցոյց, Կ. Պոլիս, 1914:

2. Հայ բժշկութեան տուած

զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Ստամբուլ, 1919:

3. Պոտոլրեան Մկրտիչ, Հայ հանրագիտակ, Պուքրէշ, 1938:

4. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

5. Սահակյան Լիլիկ., Ոճրագործները չխնայեցին նույնիսկ մարդու կյանքը փրկողներին, «Առողջապահություն», Երևան, 1965, թ. 4:

6. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

7. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

8. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

9. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

10. Զեստենեան Հրաչ, Պէյրուքի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ եւ Մեծ Եղեռնին նահատակուած Հայ Բժիշկներ, “Ազդակ”, 01-11-2012

ՂԱԶԱՐՈՍ

Ծնվել է 1877թ., Խարբերդում:

Բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել:

1915թ. սպանվել է Կարիսում 38 տարեկանում:

Նրա մասին.

1. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

2. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

3. ՀՅԹԻՖ, ֆ-49, ծ-229, պ-14:

ՂԱՐԱԳՅՈՉՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

Բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել:

1915թ. ապրիլին ձերբակալվել է Իթթիհադի ղեկավարներից դոկտոր Բեհա-Էդդին Շաքիրի կազմած 58 ականավոր հայ բժիշկների ցուցակով:

Սպանվել է 1915թ., Տիգրանակերտի մոտերքում:

Նրա մասին.

Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

Բժշկական կրթություն է

ունեցել և բժիշկ աշխատել:

1915թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել:

Կարսի ռազմաճակատում փախել է օսմանյան բանակից, միացել ռուսական զորքին ու եկել Կարս:

Կարսի ձորի 3-րդ հայկական որբանոցի բժիշկ է աշխատել:

1920թ. հոկտեմբերի վերջին օրերին թուրք զինվորները մտել են ձորը և կրակ բացել որբանոցի վրա: Այդ ընթացքում զոհվել է որբանոցի բժիշկ Գ. Սուրյանը: Այնուհետև թուրքերը մտել են որբանոց ու կրակ բացել երեխաների ու մեծերի վրա:

Այստեղ քեմալականները անմարդկային ու սարսափելի շատ բաներ են կատարել, շատ երեխաների ու քաղաքացիների սպանել:

Բժիշկ Ղարաքեշիշյանին ժանդարմները տարել են իրենց հետ...

Բժիշկներ Գ. Սուրյանն ու Ղարաքեշիշյանը հրաշալի մարդիկ և փայլուն մասնագետներ են եղել:

Նրա մասին.

1. Ալեքսանդրյան Արտաշես, Կարս. 1920-21, Երևան, 1986:

2. Ալեքսանդրյան Արտաշես, Մղձավանջ, Երևան,

2001:

**ՂՈՒՋԵԳՑՈՒԼՑԱՆ
(ՂՈՒՋԵԳՑՈՒԼՑԱՆ,
ԳՈՒՋԱԳՑՈՒԼՑԱՆ) ՆՇԱՆ**

Ծնվել է 1882թ., Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառի Բինկյան գյուղում:

Ա տ ա մ ն ա բ ու ժ ա կ ա ն կրթություն է ունեցել:

Հաստատվել է Սեբաստիայում և ատամնաբույժ աշխատել:

Եղել է Ազգային կենտրոնական վարչության քաղաքական ժողովի անդամ:

Սպանվել է 1915թ., Սեբաստիայից դուրս՝ 33 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Ստամբուլ, 1919:

2. Գուլժկան Սեբաստիոյ (Կարապետ Գաբիկեան), Եղեռնապատում Փոքուն Հայոց եւ Նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն, 1924:

3. Յուլշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուս, 1965:

4. Թեոդիկ, Յուլշարծան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

5. Յարման Արսեն, Հայերը

օսմանյան առողջապահության ծառայության մեք և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

6. Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Ցուցակ Հայոց ցեղասպանության գոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:

ՂՈՐՂՈՐՑԱՆ ՏՐՄԱՏ

Ծնվել է Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառի Կեմերեկ ավանում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

Սպանվել է 1915թ.:

Նրա մասին.

Խաչատրյան Լ. և ուրիշն., Ցուցակ Հայոց ցեղասպանության գոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Ե., 2004:



**ՃԵՎԱՀԻՐՃՑԱՆ
(Գրվել է նաև ՃԵՎԵՀԻՐՃՑԱՆ) ՄԻՍԱԶ ՍԱՐԳՍԻ**

Ծնվել է 1858թ., Կեսարիայում՝ գոհարավաճառ Սարգիս Ճեվահիրճյանի ընտանիքում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի թաղային դպրոցում:

1877-82թթ. սովորել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանում:

Մասնագիտացել է կանանց հիվանդությունների, մանկաբարձության, գինեկոլոգիայի և վիրաբուժության գծով:

Սիրիայում և Իրաքում՝ որպես քաղաքապետական բժիշկ, մանկաբարձ-գինեկոլոգ է աշխատել:

1895-98թթ. Փարիզում անցել է կատարելագործման դասընթաց:

Եղել է նաև Թունիսում (1897-98թթ. ?):

1898թ. վերադարձել է Կ. Պոլիս և հաստատվել Կում կափու թաղամասում:

Եղել է Կում կափուի ծերանոցի բժիշկը, 1908-09թթ.՝ Ազգային կենտրոնական վարչության քաղաքական ժողովի Դատաստանական խորհրդի անդամ:

1903թ. սկզբին, բարվոք ծառայության և Մաղաքիա

արք. Օրմանյան պատրիարքի դեմ մահափորձից հետո՝ նրա նկատմամբ հոգատար վերաբերմունք ցուցաբերելու համար արքունիքից արժանացել է «Սանիյե»-ի աստիճանին և «Մեջիդիե»-ի Գ կարգի պատվանշանին:

1905թ. սկզբներին մի հայի մատնության պատճառով ձերբակալվել է և 3 ամիս բանտարկվել, սակայն Օրմանյան պատրիարքի՝ սուլթան Աբդուլ Համիդ II-ին կատարած դիմումով ազատ է արձակվել:

Ամուսնացել է «Բիւզանդիոն» օրաթերթի խմբագիր Բյուզանդ Բեյյանի դստեր՝ Աղավաու հետ:

Հայտնի է եղել իբրև փորձված ու հեղինակավոր բժիշկ-մանկաբարձ: Իր բժշկական ծառայությունները հավասարապես մատուցել է ինչպես վերնախավին, այնպես էլ չքավորներին:

1908-09 թթ. եղել է Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի դատաստանական, Կում կափու թաղամասի սբ. Աստվածածին մայր եկեղեցու թաղական խորհուրդների անդամ, Կում կափուի 4 թաղերի Աղքատախնամի բժիշկը:

Եղել է Ազատ որմնադիրների (մասոնների) «Թուրքիայի Մեծ Արևելք» օթյակի անդամ և ունեցել «Մեծ վարպետի» (33-րդ) աստիճան:

1915թ. ընտրվել է Կ. Պոլսի քաղաքային (քաղաքապետարանի) վարչական ժողովի անդամ:

1915թ. ապրիլի 24-ին մայրաքաղաքի բազմաթիվ հայ մտավորականների թվում ձերբակալվել և բանտարկվել է Կ. Պոլսի կենտրոնական բանտում, ապա արտորվել Չանղըրը, որտեղից էլ՝ Այաշի բանտը:

Անունը փորագրվել է Չանղըրըի բանտում հավաքված համրիչի 99 հատիկներից մեկի վրա:

Այաշի բանտից ազատվել է արքունիքի թուրք կանանց (քանի որ նրանց անձնական գինեկոլոզն էր) և իր գործընկեր թուրք Բեսիմ Էոմեր (Օմեր) փաշայի բարեխոսությամբ և դուրս. Մեհմեդ Ալի բեյի անմիջական ջանադրությամբ:

Պարզևատրվել է մի քանի պատվանշաններով:

Մահացել է 1924թ. փետրվարի 5-ին, Կ. Պոլսում՝ 66 տարեկանում:

Թաղվել է Կ. Պոլսի Բայրըրի ազգային գերեզմանոցում:

Ունեցել է երեք որդի: Լևոնը մահացել է մանուկ հասակում:

Սարգիսը եղել է անվանի ճարտարապետ և բնակվել Լոզանում, ապա՝ Ժնևում: Սարգիսը ունեցել է դուստր Սոնային, որը եղել է բալետի

պարուհի և ապրել Փարիզում: Սա ունեցել է դուստր, որը մանկական տարիքում հիվանդացել է մանկական պարալիչով և մահացել 18 տարեկանում:

Հայկը եղել է բանկիր և Կ. Պոլսում ունեցել օճառի գործարան: Ունեցել է մեկ որդի՝ Ճևեհիրճյան Միսաքին (Կ. Պոլիս, 22-11-1922 - Երևան, 24-06-2009): Սա մասնագիտությամբ եղել է մեխանիկ և 1958 թ. ներգաղթել է Խորհրդային Հայաստան և բնակվել Երևանում: Ունեցել է Հայկին (Երևան, 30-03-1962), որը մասնագիտությամբ շինարար-ինժեներ է: Սա ունեցել է երկու որդի՝ Միսաքին և Սարգիսին, որոնք բժիշկ Միսաք Ճևեհիրճյանի կողմերն են և 2010 թ. դրությամբ ծնողների հետ բնակվում են Ռուսաստանի Դոնի Ռոստով հայաշատ քաղաքում:

Միսաքը (1989) ուսանում է Դոնի Ռոստովի բժշկական ինստիտուտի ստոմատոլոգիական ֆակուլտետում, իսկ Սարգիսը (1991)՝ ժողովրդական տնտեսության ինստիտուտի տնտեսագիտական ֆակուլտետում:

Բժշկի թոռան՝ Միսաքի կինը՝ Նինան, 2010 թ. ապրիլի 18-ին տողերիս հեղինակի հիմնած Հայ բժշկության թանգարանին նվիրել է բժշկին պատկանած երկու փոքրիկ մկրատ, իսկ թոռնե-

րի համար, որպես մասունք, պահել բժշկի բնօրինակ լուսանկարը և նրա ձեռքով պատրաստված, ուլունքակար կազմ ունեցող դրամականակը, որի երեսին ուլունքներով գործված է. «Կեցցե Սահմանադրութիւնը, 1909 թ., Մ. Ճ.»:

Նրա մասին.

1. Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1905:

2. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Վիեննա, 1922:

3. Ալլոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ, Գահիրէ, 1937:

4. Շիկահեր Վարդ, Կիսադարեան պատմութիւն թրքահայ բժշկութեան, 1923-1975, Իսթանպուլ, 1975:

5. Մազմանեան Վրոյր, Յուշեր Եւ Վկայութիւններ, Անթիլիաս, 1991, 345 էջ

6. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Երևան, 1991:

7. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

8. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողը և վկայք խաչի, Երևան, 2002:

9. Ավագեան Կարինե, «Չանղըրըի 1915 թ. ապրիլի

11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդես Ամսօրեայ», 2008, հ. 1-12
10. Բժշկի թոռ Միսաք Ճևեհիրճյանի կնոջ՝ Նինայի հայտնած տեղեկությունները, 18-04-2010:

11. Իսկահատեան Հարութիւն, Վկայարան Հայկական Յեղասպանութեան, Գիրք Բ., Պէյրուք, 2011, 352 էջ

ՃԵՐԱՃՅԱՆ ՍԱՐԳԻՍ

Դեղագործական կրթություն է ունեցել:

1915թ. դրությամբ Եդեսիայում դեղագործ է աշխատել:

1915թ. նահատակվել է Եդեսիայում:

Նրա մասին.

Սահակեան Արամ, Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, Պէյրուք, 1955:

ՃԸԼՃԼԹԱՆ ՍԻՄՈՆ

Ծնվել է 1870թ., Խարբերդի նահանգի Մելիտիների գավառի կենտրոն Մելիտիսն քաղաքում:

1903թ. ավարտել է Բեյրութի Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Մեզիրեում բժիշկ է աշ-

խատել:

1915թ. հունվարին (?) ձերբակալվել է կաշառակերության պատրվակով և դատապարտվել 6 ամսվա բանտարկության:

1915թ. մարտին ազատվել է բանտից՝ բժիշկների կարիք լինելու պատճառով, քանի որ համաճարակները բռնկվել էին բանտերում և գորանոցներում:

Բժշկին հրամայել էին, որ ցերեկը աշխատի հիվանդանոցում, իսկ գիշերը գնա բանտ:

Որոշ ժամանակ անց արդեն թույլ էին սվել, որ գիշերը մնա հիվանդանոցի հյուրանոցում:

1915թ. ապրիլի մեջ, մի օր ցերեկը իր գործին է եղել, երբ երկու սվինավոր ոստիկան կանգնել են դռան առջև և պահանջել, որ բժիշկը դատավարության սենյակ գնա:

Բժիշկը չի հասցրել դուրս գալ, երբ ոստիկանները նրան բռնել են ու բանտ տարել:

Այդ օրերին Մեզիրեում ձերբակալվել են նաև քաղաքի շատ մտավորականներ ու անվանի մարդիկ, որոնց բանտարկել են Պատերազմական ատյանի բանտում:

1915թ. հունիսի 23-ին Մեզիրեի բանտից, շատերի հետ միասին, քստրվել է Գեղվանքի ճամփով դեպի Տիգրանակերտ:

Բազմաթիվ հայ երևելիների հետ միասին չարչարանքների ու տանջանքների է ենթարկվել:

1915թ. սպանվել է Մելիտինեում 45 տարեկանում: **Նրա մասին.**

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Հասկաքաղ: Բրոֆ. Տ. Կ. Լիւլէճեանի (Բագրատ) գրական վաստակը եւ 1915-ի բանտի յուշերը, Ֆրեզնօ, 1955:

3. Յուշամատեան Մեծ եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

4. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

5. Թեոդիկ, Գողգոթայ հայ հոգեւորականութեան, Նիւ Եորք, 1985:

6. Խաչատրյան Լ. և ուրիշ., Յուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի նահանգ, Երևան, 2004:

ՃԸՐՃԸՐՑԱՆ ԳԱՌՆԻԿ

Ծնվել է 1862թ., Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի կենտրոն Կեսարիա քաղաքում:

1885-90թթ. Կ. Պոլսում ստացել է դեղագործական

կրթություն:

Կեսարիայում ունեցել է սեփական դեղատուն և դեղագործ աշխատել:

1915թ. նահատակվել է Ղրզաշարում 53 տարեկանում:

Նրա մասին.

1. Ալպոյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. հատոր, Գահիրէ, 1937:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՄԱԳՍՈՒՏ

Ազգությամբ հայ է: Ունեցել է բարձրագույն բժշկական կրթություն:

Ծառայել է օսմանյան ոստիկանական բժիշկ:

1915թ. մայիսին բժիշկ Բաղդասար Վարդանյանը (դեղագործ Վահան Վարդանյանի եղբայրը), բժիշկ Արմենակ Հայրանյանը և ոստիկանական բժիշկ Մագսուտը ձերբակալվել են ու բանտարկվել (պատճառի մասին կարդա Ա. Հայրանյանի կենսագրականում):

1915թ. մայիսի 27-ին, Բ. Վարդանյանին, Ա. Հայրանյանին և Մագսուտին խիստ ծեծի և տանջանքների ենթարկելուց հետո, ձեռքերը կապած տարել են

Յենիխանից 2 ժամ դեպի հարավ-արևմուտք, Իթ Տաղլի ստորոտում Իթ Մեզարը կոչված վայրը (Սեբաստիայի մոտակայք) և Մուամմերի հրահանգով, թուրք ոստիկան-զինվորների ձեռքով գնդակահարել ու թաղել:

Ոճրագործությանը ներկա են եղել Իթթիհատի պատասխանատուներից Ալի Շեֆիքը և Փերթև բեյը, որոնք նաև լուսանկարել են դեպքը:

Նրա մասին.

1. Կազմեց Առաքել Ն. Պատրիկ, Պատմագիրք Յուշամատեան Սեբաստիոյ եւ Գաւառի Հայութեան, Ա. Հատոր, Հրատարակութիւն Համասեբաստահայ Վերաշինաց Միութեան, Նիւ Եորք, տպ. «Մշակ», Պէյրուք, 1975, 880 էջ

2. Իսկահատեան Հ., Վկայարան հայկական ցեղասպանութեան, Գիրք Գ, Պէյրուք, 2011, 395 էջ

ՄԱՆԿՅԱՆ ՊԵՏՐՈՍ

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

Կ. Պոլսի Գումգաբու թաղամասում ունեցել է սեփական դեղատուն:

1893թ. եղել է Կ. Պոլսի դեղագործների միության անդամ:

Եղել է հանրային գործիչ: 1915թ. ապրիլին բան-

տարկվել է Կ. Պոլսի կենտրոնական բանտում, որտեղից քարտրվել է Չանդրըրը:

Անունը փորագրվել է Չանդրըրի բանտում հավաքված համրիչի 99 հատիկներից մեկի վրա:

Եղեռնից հետո վերապրել է:

Նրա մասին.

1. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Վիեննա, 1922:

2. Պալաքյան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Երևան, 1991:

3. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողը և վկայք խաչի, Երևան, 2002:

4. Ավագեան Կարինե, «Չանդրըրի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդես Ամսօրեայ», 2008, հ. 1-12

ՄԱՆԿԵԼՅԱՆ ԽԱՉԱՏՈՐԻ

Ծնվել է 1875թ., Խարբերդի նահանգի կենտրոն Խարբերդ քաղաքում:

Բժիշկ է աշխատել:

1915թ. սպանվել է Մեյիտինեում 40 տարեկանում:

Նրա մասին.

1. Յուլշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

2. Թէոդիկ, Յուլշարձան նահատակ մտաւորակա-

նութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

3. Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Յուլցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի նահանգ, Երևան, 2004:

ՄԱՆՈՒԿ

Ծնվել է Կարինի նահանգի Բաբերդի գավառի կենտրոն Բաբերդ քաղաքում:

Ա տ ա մ ն ա բ ու ժ ա կ ա ն կրթություն է ունեցել և ատամնաբույժ աշխատել:

1915թ. սպանվել է Կարինից դուրս:

Նրա մասին.

1. Հայ բժշկուրեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուլշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

3. Թէոդիկ, Յուլշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱԿՈՒՐ

Ծնվել է Կոստանդնուպոլսի Բերա թաղամասում:

Ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական

բժշկական վարժարանը:

1904թ. Բերա թաղամասում, ապա Թաշ կըռլայում բժիշկ է աշխատել:

Մահացել է 1916թ. մայիսի 12-ին, ժանտախտից:

Նրա մասին.

1. Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի, Պոլիս, 1905:

2. Հայ բժշկուրեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՊԵՏՐՈՍ ԹՈՐՈՍԻ

ՏԵՆ՝ ԹՈՐՈՍՅԱՆ ՊԵՆԵ

ՄԱՏԻԿՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

Ծնվել է Անկարայի նահանգի կենտրոն Անկարա քաղաքում:

Ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան դեղագործական վարժարանը:

Անկարայում ունեցել է սեփական դեղատուն և դեղագործ աշխատել:

Մահացել կամ սպանվել է 1916թ., Անկարայում:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՄԱՐԶՊԱՆՅԱՆ ԱՐԱՀԱՍ

Ծնվել է Խարբերդի նահանգի կենտրոն Խարբերդ քաղաքում:

Ա տ ա մ ն ա բ ու ժ ա կ ա ն կրթություն է ունեցել և ատամնաբույժ աշխատել:

Մահացել է 1918թ. մարտի 28-ին, ժանտախտից:

Նրա մասին.

Հայ բժշկուրեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:



ՄԱՐՄԱՐՅԱՆ ՍԵՂՄԱԿ

Ծնվել է մոտ 1880թ., Տրապիզոնի նահանգի կենտրոն Տրապիզոն քաղաքում՝ տեղի համբավավոր կաթոլիկ Մարմարյանների գերդաստանում, որը շատ մտավորականներ ու կղերական գործիչներ է տվել:

Նախնական կրթություն

ստացել է Տրապիզոնում, միջնակարգը՝ Իտալիայում:

1907թ. ավարտել է Իտալիայի Պադովա քաղաքի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1907թ. վերադարձել է Տրապիզոն և զբաղվել բժշկությամբ:

Եղել է նաև ճանաչված ազգային և հասարակական գործիչ:

Մեկնել է Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքը, որտեղ բնակվում էին հարազատները, և բժշկությամբ զբաղվելու արտոնագիր հանել:

Սակայն Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելու պատճառով վերադարձել է Տրապիզոն, գորակոչվել օսմանյան բանակ և զինվորական հիվանդանոցում զինվորական բժիշկ ծառայել:

1915թ. զինվորական ծառայության ընթացքում տարագրվել է Մելիտինե, ուր հրաշքով ազատվել է սպանդից և տեղի հիվանդանոցում բժշկի պաշտոն ստացել:

1918թ., պատերազմի ավարտից հետո վերադարձել է Տրապիզոն:

1918թ. վերջին Տրապիզոնում հիմնել է Բուլղարահայ Կարմիր խաչի հիվանդանոց:

1926թ. տեղափոխվել է Եգիպտոս, հաստատվել Ալեքսանդրիայում, ուր բացել է սեփական դարմանա-

տուն և զբաղվել բժշկությամբ:

Եղել է ներքին և մանկական հիվանդությունների ճանաչված մասնագետ և սիրված ու հարգված քաղաքացի:

Կյանքի վերջին տարիներին Ալեքսանդրիայի հայ համայնքի դարմանատանն է աշխատել:

Ունեցել է 7 երեխա, որոնցից երկուսը մահացել են՝ մեծ վիշտ պատճառելով բժշկին:

Մահացել է 1951թ., Ալեքսանդրիայում՝ մոտ 71 տարեկանում:

Նրա մասին.

Յովակիմեան (Արշակունի) Յովակիմ, Պատմութիւն Հայրու



ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

Ծնվել է 1875թ., Բուլղարիայի Շումեն քաղաքում: Մարտական անունը եղել է Շումենցի Խաչիկ:

Մ ա ս ն ա գ ի տ ու թ յ ա մ բ բժիշկ է:

1903թ. կնոջն ու որդուն Շումենում թողնելով մեկնել է Կարս, այնտեղից Սասուն անցնելու և ժողովրդին օգնելու նպատակով:

1903թ., երբ կազմվել են Խանի ու Օննիկ Նևրուզի ֆիդայական խմբերը, բժիշկն ասել է. «Մեռաք՝ ես ձեզի հետ, վիրաւորուեցաք՝ ձեզի պահապան», և դեղորայքի պայուսակը ուսին միացել է ֆիդայիների խմբին:

1903թ. Բասենի կռիվների ժամանակ եղել է առաջին զոհերից՝ 28 տարեկանում:

Նրա մասին.

Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ալբոմ-ատլաս, Ա. հատոր, Դիւցազնամարտ, 1890-1914, Լոս Անճելըս, 1992:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՕՆՆԻԿ

Ծնվել է Կ. Պոլսի Թոփ կափու թաղամասում:

Դեղագործական կրթություն է ունեցել և Կ. Պոլսում դեղագործ աշխատել:

Մահացել է 1918թ. դեկտեմբերի 28-ին, ժանտախտից:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

ՄԵԼԻՔՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԳԵՎՈՐԳԻ

Ծնվել է 1883թ., Խարբերդի Նահանգի Խարբերդի գավառի Արաբկիր քաղաքում:

Ավարտել է ծննդավայրի ուսումնարանը:

1901թ. ավարտել է ամերիկացի միսիոներների Խարբերդի Եփրատ քոլեջը:

1901-07թթ. սովորել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետում:

1907թ. բժշկի վկայական ստանալով վերադարձել է հայրենի Արաբկիր:

1907-10թթ. տեղափոխվել է Կարինի Նահանգի Կարինի գավառի Զոյի գավառակի կենտրոն Զոյի ավանը և թաղապետարանի բժիշկ աշխատել:

Զոյում ամուսնացել է Լիկոդոս Էֆենդի Օհանյանի աղջկա հետ:

Բալկանյան պատերազմի ժամանակ զինվորական բժիշկ է ծառայել օսմանյան բանակում, եղել Ադրիանապոլսում և այլուր:

1915թ. ապրիլին Զոյի մոտերքը զոհ է դարձել թրքական յաթաղանին՝ 32 տարեկանում:

Նրա մասին.

1. «Տեղեկատու», 1951, 36, էջ 1901:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի Նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

3. Փոլատեան Ս., Պատմութիւն հայոց Արաբկիրի, Նիւ Եորք, 1969:

4. Խաչատրյան Լ. և ուրիշ., Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի նահանգ, Երևան, 2004:

5. Զեստենեան Հ., Պէրոլթի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ Եւ Մեծ Եղեռնին Նահատակուած Հայ Բժիշկներ, “Ազդակ”, 1.1



**ՄԵԼԻՍԵՆԵ ԿՈԼՅԱ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ**

Թերապևտ, ՀԽՍՀ վաստակավոր բժիշկ:

Ծնվել է 1895թ., Բաքվում: Հետագայում գրվել է Մեյիթյան Նիկոլայ Արտեմի (Արտաշեսի):

1914թ. ավարտել է Բաքվի Կայսր Ալեքսանդր III-ի անվան արական գիմնազիան:

1918թ. ռուսական բանակի կազմում ծառայել է Արևմտյան պարսկական ռազմա-

ճակատում:

Չինվորագրվել է բանակում ընդհատակյա գործող բոլշևիկյան կազմակերպությանը և զինվորական հեղափոխական կոմիտեի գանձապահ ընտրվել:

1920թ. ընդունվել է Կիևի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Բանտարկվել է ու բանտից փախել:

1920թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Կարսի ձորի 3-րդ որբանոցում թաքնվել է թուրքերից:

1921թ. ամերիկացիները որբանոցը Ալեքսանդրապոլ են տեղափոխել: Որբանոցի հետ էլ տեղափոխվել է:

Ուսումը շարունակել է Բաքվի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետում:

Համալսարանն ավարտելուց հետո մեկ տարի աշխատել է Ադրբեջանի Ուղաջուր գյուղում: Այնուհետև տեղափոխվել է Դիլիջան և աշխատել բժիշկ, ապա՝ Դիլիջանի գավառային առողջապահության բաժնի վարիչ:

1928թ. տեղափոխվել է Երևան և ԵրԴԲԻ պրոֆ. Ա. Մեյիթ-Աղամյանի կլինիկայի ներքին հիվանդությունների ամբիոնում ասիստենտ աշխատել:

1929թ. կամավոր ընդգրկվել է «Կարմիր խաչի» ջոկատում և մասնակցել

Անդրկովկասյան զորավար-ժողովուհներին:

1931թ. օգոստոսի 18-ին մշտական բնակություն է հաստատել Լենինականում:

Տեքստիլ կոմբինատի պոլիլինիկայում թերապևտ է աշխատել և մասնակցություն ունեցել կոմբինատի դիսպանսերի կազմակերպմանը:

1939թ. նրա ջանքերով հիմնադրվել է Լենինականի քաղաքային թ. 2 բուժֆակուլտետը, որտեղ մինչև իր կյանքի վերջը գլխավոր բժիշկ և թեևապատիկ բաժանմունքի վարիչ է աշխատել:

1958թ. Կոռնակ Տեր-Թորոսյանի և մյուս բռնադատվածների մասին դրական բնութագրեր է տվել:

1958թ. բնակվել է Լենինական, Կիրովի-4, բն. 25 հասցեում:

Հիմնական աշխատանքին զուգահեռ դասավանդել է Լենինականի բժշկական ուսումնարանում, աշխատել զինվորական կոմիսարիատում:

ՀԽՍՀ վաստակավոր բժշկի կոչման է արժանացել:

Պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի», «Պատվո նշան» շքանշաններով, «Առողջապահության գերազանցիկ» նշանով, պատվոգրերով:

Մ ա հ ա ց ե լ է մոտավորապես 1965թ., Լե-

նինականում:

1965թ. Հայաստանի կառավարության որոշմամբ Լենինականի թ. 2 բուժֆակուլտետը անվանակոչվել է Նիկոլայ Մեյիթյանի անունով: **Նրա մասին.**

1. Ալեքսանդրյան Արտաշես, Կարս. 1920-21, Երևան, 1986:

2. Վարդանյան Գ., Շիրակի առողջապահությունը: Պատմությունը, բուժֆակուլտետները, բուժաշխատողները, Գյումրի, 2003:

3. Վարդանյան Գ., Գյումրի, գիրք 1, Երևան, 2006:

**ՄԵԼԻՍԵՆԵ ԿՅԱՆ
(ՄԻԼԻՍԵՆԹՅԱՆ,
ՄԵԼԻՍԵՆԹՅԱՆ) ՍՏԵՓԱՆ**

Ծնվել է 1865/67թ., Բրուսա նահանգի կենտրոն Բրուսա քաղաքում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի ազգային վարժարանում:

1890թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը և բժշկի վկայական ստացել:

Փարիզում մասնագիտացել է վիրաբուժության գծով: Ըստ Լեֆսիուսի՝ եղել է Բրուսայի քաղաքային հիվանդանոցի բժշկապետը:

Երկար տարիներ բժիշկ է աշխատել: Եղել է անվանի մասնագետ:

1914թ. Առաջին համաշ-

խարհային պատերազմն սկսվելուն պես զորակոչվել է օսմանյան բանակ և Բրուսայի զինվորական հիվանդանոցում զինվորական բժիշկ ծառայել:

Մի քանի ամիս անց անհայտ պատճառով (անհավատալի զրպարտությամբ) մի քանի այլ անվանի մտավորականների հետ ձերբակալվել է ու շրջայակապ ուղարկվել Բանդրմայի բանտը:

Այստեղ հայտնի չէ, թե ինչ մեղքի համար (հավանաբար որպես հեղափոխական), դատապարտվել է 10 տարվա բանտարկության:

Այնուհետև շրջայակապ վերադարձվել է Բրուսայի բանտը, որտեղից առանձին-առանձին նամակներ է գրել կնոջը, երեք զավակներին և աներորդուն՝ նկարագրելով, թե ինչ տանջանքների ու կտտանքների է ենթարկվում:

1915թ. օգոստոսին, 3 այլ հայերի հետ միասին, կախաղան է բարձրացվել Բրուսայի կամրջի վրա՝ 49 տարեկանում:

Երեք աներորդիները՝ Կարապետը, Հակոբը և Արթինը, գորգավաճառությամբ զբաղվելով հոգացել են իրենց այրիացած քրոջ ընտանիքի հոգսը:

2009թ. ապրիլին, Հայ ճարտարապետների հա-

մաժողովին մասնակցելու համար, ինչպես նաև Մեծ Եղեռնի 94-րդ տարելիցի առթիվ, ԱՄՆ-ի Դեթրոյտ քաղաքից Երևան ժամանած տեր և տիկին Հովսեփ և Լադիա Սարաֆյանները Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին են հանձնել իրենց ազգական բժիշկ Ստեփան Մելիքսեթյանի բանտային 5 ձեռագիր նամակները՝ որպես կարևոր վավերագրեր:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

4. Սահակյան Լիլիկ, Ռճրագործները չխնայեցին նույնիսկ մարդու կյանքը փրկողներին, «Առողջապահություն», Երևան, 1965, թ. 4:

5. Յուլյան մատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուս, 1965:

6. Թեոդիկ, Յուլյան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

7. Մակարյան Մարիետա, Դոկտոր Մելիքսեթյանի վերջին նամակները՝ Յեղասպանության թանգարանին,

«Ազգ», Երևան, 14-05-2009:
ՄԵՍԻԱՅԱՆ ԵՂԻՎՁԱՐ ՍԱՐԱԹԵԼԻ

Ծնվել է 1874թ., Սեբաստիայի նահանգի կենտրոն Սեբաստիա քաղաքում:

1896թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան դեղագործական վարժարանը:

Դեղագործ է աշխատել: Սեբաստիայում ունեցել է սեփական դեղատուն:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ, որպես զինվորական դեղագործ:

Սպանվել է 1915թ., Սեբաստիայում՝ 41 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուլյան մատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուս, 1965:

3. Թեոդիկ, Յուլյան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

4. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

5. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և

պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

6. Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:

ՄԵՍԻԱՅԱՆ ՀՈՎՃԱՆՆԵՍ

Ծնվել է 1857թ., Սեբաստիայի նահանգի կենտրոն Սեբաստիա քաղաքում:

Ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան դեղագործական վարժարանը:

Սեբաստիայում ունեցել է սեփական դեղատուն և դեղագործ ու բժիշկ աշխատել: Տեղահանության ժամանակ չի տեղափոխվել, այլ մնացել է քաղաքում:

Վերջին տարագրության ժամանակ տեղափոխվել է Մելիտինե:

1915թ. սպանվել է կամ 1919թ. մահացել Մելիտինեում՝ 58/62 տարեկանում:

Նրա մասին.

1. Գուժկան Սեբաստիոյ (Կարապետ Գաբիկեան), Եղեռնապատում Փոքուն Հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթոն, 1924:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահու-

թյան ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

3. Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:

ՄԵՍՐՈՊ ԷՖԵՆԴԻ

Բժշկական կրթություն է ունեցել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և ավագ լեյտենանտի աստիճանով ծառայել 13-րդ զորախմբի 2-րդ շրջիկ հիվանդանոցի դեղագործ:

Մահացել է 1916թ. փետրվարի 28-ին, ժանտախտից:
Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՄԵՐՏԻԼՅԱՆ ԳԵՎՈՐԳ

Դեղագործական կրթություն է ունեցել:

Կեսարիայում դեղագործ է աշխատել:

1915թ. նահատակվել է:
Նրա մասին.

Ալլայոյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Բ, Գահիրե, 1937:

ՄԵՐՏԻԼԵՆ ՇՈՉԵՅ

Ծնվել է հավանաբար 1868թ., Սեբաստիայի նահանգի Եվդոկիայի գավառի կենտրոն Եվդոկիա քաղաքում կաթոլիկ հայի ընտանիքում:

Հայրը եղել է առանց վկայականի բժիշկ:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում:

1893թ. ավարտել է Բեյրութի Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Եվդոկիայում բժիշկ է աշխատել:

Յոթ զավակ է ունեցել:

1895թ. Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային ձերբակալություններ էին կատարվում: Հնչակյան կուսակցության անդամների մեծ մասը բանտարկվել էր: Այդ հարցում մեծ դեր էին կատարել երկու հայ մատնիչներ՝ հայ-կաթոլիկ բժիշկ Մերտիլենը և Ղազըլին Թոփալը, որոնք լինելով հնչակյան կուսակցության անդամներ՝ ներքին գաղտնիքները կառավարությանն էին հայտնել:

Հնչակյանները խիստ

հսկողություն սահմանելով իրենց կուսակիցների վրա, պարզել էին, որ բժիշկը գիշերը մի թուրք բեյի տուն է գնացել և գաղտնիքներ հայտնել:

Համոզվելով նրա դավաճանության մեջ, հնչակյանները որոշել են իրենց անդամներից Ավետիս Իփեքյանին («Մետաքս») ուղարկել հայ կաթոլիկների առաջնորդի փոխանորդ Ներսես ծայրագույն վարդապետ Կարոյեանի մոտ, որպեսզի վերջինս խրատի բժշկին դադարեցնելու դավաճանությունը: Սակայն Ներսես վարդապետը, վախենալով, հրաժարվում է այդ գործին խառնվելուց:

Դրանից հետո հնչակյանները որոշում են կայացրել սպանել դավաճանին:

1895թ. մի օր, երեկոյան ժամը 5-6-ի սահմաններում, թուրքի հագուստներով ծայրված հայ կաթոլիկ Տիգրան Գուլումճյանը, Դեորթ Զեռչե Նազարը և գեղացի Գրիգորը ԼԼՈՆ Մեյքոնյանի ղեկավարությամբ դաշունահարելով սպանել են մատնիչ և դավաճան, մոտ 27 տարեկան բժշկին:

Որդին՝ բժիշկ Վիկտոր Մերտիլենը, 1900թ. ավարտել է Բեյրութի Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետը և մինչև 1915թ., Եվդո-

կիայում բժիշկ է աշխատել: 1915թ. քաղաքի բնակչության տեղահանության ժամանակ, հոր նման մի դժխեմ դեր է կատարել (ըստ Օտյան քահանայի տեղեկության):

Նրա մասին.

1. Ալլայոյաճեան Արշակ, Պատմութիւն Եւդոկիոյ հայոց, Գահիրե, 1952:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՄԻԱՍԵՐՅԱՆ ԿԱՐԱԴԵՏ ԳՐԻԳՈՐԻ

Հայրը՝ Գրիգոր Միասերյանը (1851-1908) սկզբում եղել է գյուղի սափրիչը: Ինչպես հայտնի է, բժշկի բացակայության ժամանակ սափրիչները կատարել են ատամնաբույժի և բժշկի դերերը: Մի առիթով, դիպլոմավոր բժիշկ Կարապետ Իսպենջյանը գնացել է Կեսարիայի մոտակա Էֆքերե ավանը և ծանոթացել Գրիգորի հետ: Տեսնելով նրա հմտություններն ու բժշկության նկատմամբ սերը, առաջարկել է թողնել սափրիչությունը և իր օգնականը դառնալ: Այդ օրվանից Գրիգորը բժշկի հետ հիվանդների է այցելել, բուժումներ կատարել, գործնական

բժշկության մեջ հմտացել: Ահա այդպես, չունենալով բժշկական կրթություն, բնական ձիրքի և ուշիմության շնորհիվ Գրիգորը դարձել է էֆքերեի և հարակից 10-15 գյուղերի բժիշկը ու ավելի քան 25 տարի մեծ համբավ վայելել բնակչության շրջանում: Դեղագործները սիրով են պատրաստել նրա անընթեռնելի հայերենով գրված դեղատոմսերի դեղերը:

Գրիգորը շուրջ 20 տարի եղել է նաև սբ. Կարապետ բարձրագույն վարժարանի բժիշկը:

Որդին՝ Կարապետը ծնվել է 1876թ., Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի էֆքերե ավանում:

1904թ. ավարտել է Բեյրութի Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1904-15թթ. բժիշկ է աշխատել:

1915թ. տարագրվել է կամ գորակոչվել օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել:

1916թ., Կովկասի ռազմաճակատում սպանվել է թուրքերի ձեռքով՝ 40 տարեկանում:

Նրա մասին.

1. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, Ա, Գահիրէ, 1937:

2. Ալպոյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ,

Բ. հատոր, Գահիրէ, 1937:

3. Ծահբագյան Հասմիկ և Միրզոյան Անահիտ (կազմողներ), Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 3, Անկարայի նահանգ, Երևան, 2006:

ՄԻՆԻՄԱԼ ԷՖԵՆԴԻ

Դեղագործական կրթություն է ունեցել:

1912թ. օսմանյան բանակի կապիտանի աստիճանով մասնակցել է Բալկանյան պատերազմին և Ռումելիի Մանասթըր քաղաքի Քոզանա հիվանդանոցում զինվորական դեղագործ ծառայել:

Ծառայության ընթացքում վարակվել և հիվանդացել է ժանտախտով:

Մահացել է 1912թ. հոկտեմբերի 7-ին, Մանասթըրում, ժանտախտից:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՄԻՆԻՄԱԼ ԷՖԵՆԴԻ

Բժշկական կրթություն է ունեցել:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել Տիգ-

րանակերտի (Դիարբեքիր) «մենզիլում» (թուրքերեն՝ «մենզիլ»՝ հոսպիտալ)՝ կապիտանի աստիճանով:

Մահացել է 1916թ. հոկտեմբերի 24-ին, Տիգրանակերտի հոսպիտալում, ծառայության ընթացքում:

Նրա մասին.

1. Ատաշ Ադնան, 20-րդ դարի նահատակ եղած բժիշկները (թուրքերեն), Թուրքիա, 1997:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՄԻՆԻՄԱԼ (ԱՎԵՏԻՍՅԱԼ) ՊԵՐՃ

Ծնվել է 1887թ., Կոստանդնուպոլսում:

Հայրը՝ Մինաս բեյ Ավետիսյանը եղել է Կ. Պոլսի Անաստաբուժական վարժարանի երկարամյա դասախոսը և անվանի մտավորական (տե՛ս վերևում):

Նախնական կրթությունն ստացել է Կ. Պոլսի ազգային վարժարաններում:

1912թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը և բժշկի վկայական ստացել:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմն

սկսվելուն պես զորակոչվել է օսմանյան բանակ, ուղարկվել Բաղեշ (Բիթլիս) և 5-րդ զորաբաժնի բուժարանի զինվորական բժիշկ նշանակվել:

1915թ. հուլիսին Երզնկայի հայ բնակչության տեղահանության օրերին ձերբակալվել է և աքսորվել Երզնկա՝ բնակչությանը բժշկական օգնություն ցուցաբերելու համար:

Նրան ընկերակցել է իր նախկին իրամանատարի թիկնապահ բուժակը, որը նույն բուժարանի իր գործընկեր թուրք բժիշկների թելադրանքով Երզնկայի ճանապարհին սպանել է 28 տարեկան բժշկին:

Ոճիրն իրականացնելուց հետո վայ-ուղեկցորդը սպանված բժշկի մոտ եղած 30 ոսկին գրպանել է, իսկ ժամացույցն ու ատրճանակը վերադարձին տվել զորաբաժնի բուժարանի բժշկապետին:

Ըստ բժիշկ-պատմաբան Վահրամ Թորգոմյանի՝ սպանվել է 1917թ.:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Թորգոմեան Վահրամ, Թուրք անասնաբուժական վարժարանին հայ դասախօսները, Տօքթ. Մինաս Պէ

ԱԼԵՏԻՍԵԱՆ, «Դարման», Կ. Պոլիս, 1921, թ. 3-4:

3. Մեզպուրեան Արթո, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

4. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

5. Սահակյան Լիլիկ, Ոճրագործները չխնայեցին նույնիսկ մարդու կյանքը փրկողներին, «Առողջապահություն», Երևան, 1965, թ. 4:

6. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

ՄԻՍՔՅԱՆ ԳՐԻԳՈՐ

Ծնվել է 1865թ., Կ.Պոլսում՝ հայ կաթոլիկ ընտանիքում:

Բժիշկ Ստեփան Միսքյանի եղբայրն է:

Նախնական կրթությունն ստացել է Կ. Պոլսի Միջագյուղի (Օրթաքեոյ) վարժարանում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

1915թ. ապրիլին բանտարկվել է Կ. Պոլսի բանտում, ապա արքայազն Չանդըրը:

Անունը փորագրվել է

Չանդըրըրում հավաքված համրիչի 99 հատիկներից մեկի վրա:

1915թ. օգոստոսի 5-ին Օրթագյուղից նորից արքայազն է:

Կոնիայից 2 ժամ հեռավորության վրա գտնվող վայրում, Անկարայի մոտ սրախողխող է արվել եղբոր՝ Ստեփանի հետ:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգորթան, Վիեննա, 1922:

3. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

4. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգորթան, Երևան, 1991:

5. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողք և վկայք խաչի, Երևան, 2002:

6. Ավագեան Կարինե, «Չանդըրըրի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդէս Ամսօրեայ», 2008, հ. 1-12



ՄԻՍՔՅԱՆ ՍՏԵՓԱՆ

Ծնվել է 1850/52թ., Կոստան-դնուպոլսում՝ հայ կաթոլիկ ընտանիքում:

Դեղագործ Գրիգոր Միսքյանի եղբայրն է:

Նախնական կրթությունն ստացել է Կ. Պոլսի Միջագյուղ թաղամասի վարժարանում:

1878թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը և բժշկի վկայական ստացել:

Մասնագիտացել է մանկաբարձության և վիրաբուժության գծով:

1880-89թթ. մանկաբարձ գինեկուղոգ, վիրաբույժ, գլխավոր բժշկի տեղակալ է աշխատել սբ. Փրկիչ հայոց ազգային հիվանդանոցում:

Բնակվել է Կ. Պոլսի Միջագյուղ թաղամասում:

Եղել է Միջագյուղի կաթոլիկ եկեղեցու թաղական խորհրդի անդամ:

Եղել է բժշկական և կրթական եռանդուն գործիչ:

1915թ. ապրիլին, եղբոր՝ դեղագործ Գրիգորի հետ ձերբակալվել և բանտարկվել է Կ. Պոլսի կենտրոնական բանտում, ապա՝ արքայազն Չանդըրը:

Անունը փորագրվել է

Չանդըրըրի բանտում հավաքված համրիչի 99 հատիկներից 6-րդի վրա:

1915թ. օգոստոսի 5-ին Կ. Պոլսի Օրթագյուղ թաղամասից նորից արքայազն է:

Կոնիայից 2 ժամ հեռավորության վրա գտնվող վայրում, Անկարայի մոտ սրախողխող է արվել բժիշկ եղբոր՝ Գրիգորի հետ՝ 64 տարեկանում:

Օգոստոսի 5-ին ձերբակալվածների մեջ նրա անունը հիշատակել է Երվանդ Օտյանը:

1921թ. ընթացքում Կ. Պոլսի «Ճակատամարտ» թերթի մի քանի համարներում հարազատները հայտարարություններ են տպագրել նրան գտնելու հույսով, քանի որ նրանց համար անհայտ է եղել բժշկի ողբերգական ճակատագիրը:

Նրա անունը ընդրկված է նաև Արշակ Ալպոյաճյանի 303 նահատակների անվանացանկում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Կփնտրվին, «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 05-01-1921, ապա մայիս, հունիս, սեպտեմբեր, նոյեմբեր

3. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգորթան, Վիեննա, 1922:

4. Ազգային հիւանդանոցի մէջ պաշտօնավարած բժիշկները, Ընդարձակ տարեգիրք Ազգային հիւանդանոցի, Իսթանպուլ, 1939:

5. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

6. Շամտանճեան Մ., Հայ մտքին հարկը Եղեռնին, Անթիլիաս, 1965:

7. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

8. Պալաքյան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգորթան, Երեւան, 1991:

9. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

10. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողք և վկայք խաչի, Երեւան, 2002:

11. Ավագեան Կարինե, «Չանդրըրի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդես Ամսօրեայ», 2008, հ. 1-12

12. Միրզանսոյլու Չաքարիա, Կփնտրվին, «Ակոս», Ստամբուլ, 23-04-2010

ՄԻՔԱՅԵԼ

Բժշկական կրթություն և ու-

նեցել:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և ծառայել Վանի նահանգի Սարայի գավառի զինվորական բժիշկ:

Մահացել է 1916թ. փետրվարի 15-ին, ժանտախտից: **Նրա մասին.**

Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

ՄԿՐՑԱՆ ՄԱՆՎԵԼ

Դեղագործական կրթություն և ունեցել և դեղագործ աշխատել:

1914թ. հուլիսին, ի թիվս բազմաթիվ հայ մտավորականների, բանտարկվել է Կեսարիայի բանտում:

Բանտում խնամք ու բժշկական օգնություն է ցուցաբերել թուրքերի խոշտանգած բանտարկյալ հայերին:

Խնամել և բուժել է նաև սարսափելի խոշտանգումներից արյունահոսող վերքեր ստացած Համբարձում Պոյաճյանին (Մեծն Մուրատ):

Նրա մասին.

1. Յուշարձան, Ֆրանսիա, 1930:

2. Լազեան Գաբրիել, Յեղափոխական դէմքեր, Գահիրե, 1945:

3. Լազեան Գաբրիել, Դեմքեր հայ ազատագրական շարժումէն, Գահիրե, 1949:

4. Աւօ, Յեղափոխական Ալպօս, Հալէպ, Գ. շարք, 1960, թ. 5 (29):

5. Սիրվարդ (Եղիա Գրիգորյան), Մեծն Մուրատ (Համբարձում Պոյաճյան), Կյանքն ու գործունէությունը, Երեւան, 1991:

ՄԿՐՏԻՉ ԷՅԵՆԴԻ

Ծնվել է 1860թ.:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական դեղագործ ծառայել Կարմիր մահիկի Երուսաղէմի Էմրագը Սարիէ (համաճարակներ) հիվանդանոցում լէյտենանտի աստիճանով:

Աշխատանքի ընթացքում վարակվել է ժանտախտով:

Մահացել է 1916թ. մարտի 22-ին, Երուսաղէմում, ժանտախտից՝ 46 տարեկանում:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՄԿՐՏԻՉՅԱՆ ԳՐԻԳՈՐԻՍ

Ծնվել է Փոքր Ասիայի արևմուտքի Բոլու քաղա-

քում:

Դեղագործական կրթություն և ունեցել:

1915թ. Բրուսայում ունեցել է սեփական դեղատուն և դեղագործ աշխատել:

Եղել է Բրուսայի քաղաքային խորհրդի նախագահը և քրեական դատարանի անդամ:

Սպանվել է կամ մահացել 1915թ.:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՄԿՐՏԻՉՅԱՆ ՍՏԵՓԱՆ

Ծնվել է 1873թ., Բրուսա նահանգի Բրուսա քաղաքում:

1895թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան դեղագործական վարժարանը:

Բրուսայում ունեցել է սեփական դեղատուն:

Դասավանդել է Բրուսայի համալսարանի կենսաբանության ֆակուլտետում:

Եղել է Փարիզի քիմիկոսների միության անդամ:

1915թ. ձերբակալվել է և Դեյր-Էլ-Չորի անապատներն աքտրվել:

Մահացել է 1915թ., Դեյր-Էլ-Չորում՝ 42 տարեկանում: **Նրա մասին.**

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՄԿՐՏՁՅԱՆ ԱՐՇԱԿ

Ծնվել է մոտ 1880թ., Վանի նահանգի Արճեշի գավառակի Կտրած քար գյուղում:

Ունեցել է եղբայրներ՝ Մանուկ (եղել է Կտրած քար գյուղի ռեսը և մինչև 1915թ. մահացել բնական մահով), Իսրայել, Պապեր և քույրեր՝ Քիշմիշ, Դիլբար:

Բարձրագույն բժշկական կրթություն է ունեցել:

Վանի նահանգի Բերկրիի գավառակի կենտրոն Բերկրի քաղաքում բժիշկ է աշխատել:

Եղել է անվանի և բազմահմուտ բժիշկ: Նրան հիվանդի մոտ տարել են միայն կառքով և վճարել միայն ոսկեդրամով:

Եղել է ամուսնացած և ունեցել Երվանդ (ծնվ. 1906) և Սմբատ (ծնվ. 1908) որդիներին:

1915թ. Մեծ Եղեռնի ժամանակ ընտանիքի անդամները միմյանց կորցրել են:

Երվանդն ու Սմբատը գաղթականների քարավանով հասել են Ալեքսանդրապոլ և այնտեղ կորցրել միմյանց:

Սմբատը տեղավորվել է Ալեքսանդրապոլի ամերիկյան որբանոցում: Նա հետագայում ոչինչ չի իմացել եղբոր ու ծնողների ճակատագրի մասին, ուստի ենթադրել է, որ վերջիններս զոհվել են, այլապես ինչ-որ կերպ կգտնեին միմյանց:

Սմբատը Լենինականում (Ալեքսանդրապոլ) միջնակարգ կրթությունն ավարտելուց հետո Երևան է տեղափոխվել:

Բժշկի թոռները՝ Երվանդ և Սոնա Սմբատի Մկրտչանները 2008թ. դրությամբ ապրում էին Երևանում:

Բժշկի Դիլբար քույրը և Նրա ընտանիքը ապրում են Հայաստանի Կոտայքի մարզի կենտրոն Հրազդան քաղաքի Կոճոր թաղամասում:

Նրա մասին.

1. Թոռների՝ Երվանդ և Սոնա Սմբատի Մկրտչանների հայտնած տեղեկությունը, 20-12-2008թ.:

ՄԻԿՅԱՆ ՆՇԱՆ

Ծնվել է Կարինի նահանգի Երզնկայի գավառի կենտրոն Երզնկա քաղաքում:

Ատամնաբույժ է աշխատել:

Սպանվել է 1915թ., Կարինի նահանգի Երզնկայի գավառի Կամախի (Քեմախ) գավառակի կենտրոն Կամախ ավանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

3. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորակաւութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

ՄՈՎԱՏՍԻ ՈՐԴԻ ԹԵՈՂՈՐ

Ծնվել է Կոստանդնուպոլսի Բերա թաղամասում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

Մահացել է 1916թ. հունիսի 21-ին, ժանտախտից:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

ՄՈՍՃՅԱՆ (ՄՈՒՄՃՅԱՆ) ՍԱՐԳԻՍ

Ծնվել է 1875թ., Խարբերդի նահանգի Դերսիմի գավառի Խոզաթի գավառակի կենտրոն Խոզաթ ավանում կամ Մեյիտինեում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի թա-

ղային վարժարանում:

1894թ. ավարտել է ամերիկացի միսիոներների Խարբերդի Եփրատ քոլեջը:

1898/99թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1899թ. վերադարձել է Խարբերդ և բժիշկ աշխատել:

1900թ. մեկնել է ԱՄՆ և վիրաբուժություն ուսանել Բայթիմորի և Յեյլի բժշկական համալսարաններում:

1901թ. ԱՄՆ-ի Ջոն Հոփքինս հիվանդանոցում վիրաբույժի օգնական է աշխատել:

1901թ. աշնանը վերադարձել է Թուրքիա և Կ. Պոլսում մասնագիտական քննությունները հանձնելուց հետո վերադարձել Խարբերդ / Խոզաթ:

Կարճ ժամանակ անց դարձել է Խարբերդի / Խոզաթի անվանի վիրաբույժը, տեղի կառավարչի և երևելի անձանց ընտանեկան բժիշկը:

1911թ. դրությամբ աշխատել է Խարբերդում / Խոզաթում:

1911թ. Կ. Պոլսի «Բժիշկ» պարբերականում հոդված է տպագրել:

1915թ. ապրիլին Խարբերդում / Խոզաթում ձերբակալվել է, բանտարկվել և քրտրվել Մեյիտինե:

Սպանվել է 1915թ., Խոզաթում / Մեյխոխնեում, ի թիվս բազմաթիվ հայ մտավորականների՝ 40 տարեկանում:

Կինը՝ Վիկտորիան և Լուբար որդին կորել են տարագրության ճանապարհին: Սիրվարդ դուստրն ու Հայկ որդին մազապուրծ փրկվելով գոյատևել են ու հետագայում բնակվել Լյու Յորքում:

Նրա մասին.

1. Երեւանեան Գեորգ Ս., Պատմութիւն Հարսանճագի հայոց, Պէյրուք, 1956:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

3. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

4. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

5. Խաչատրյան Լուսինե և Բաբլունյան Արփինե (կազմողներ), Յուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի նահանգ, Երևան, 2004:

ՄՈՒՐԱՏՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

Ծնվել է Տրապիզոնի նահանգի Սամսոն նավահանգստում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

Եղել է ՀՅԴ անդամ:

Նահատակվել է 1915թ.,

Մեծ Եղեռնի ժամանակ:

Նրա մասին.

Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Այբում-ատլաս, Բ. հատոր, 1925, Լոս Անջելես:



ՄՈՒՐԱՏՅԱՆ ՀԱԿՈԲ (ՅԱԳՈՒԴ)

Ծնվել է Խարբերդի նահանգի Խարբերդի գավառի Հյուսեյնիկ գյուղում:

Բուժակ է աշխատել:

Սպանվել է 1915թ.:

Նրա մասին.

1. Սարաֆեան Գեորգ, Պատմութիւն Անթեպի հայոց, հ. Բ., Լոս Անճելես, 1953:

2. Խաչատրյան Լուսինե և Բաբլունյան Արփինե (կազմողներ), Յուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի նահանգ, Երևան,

2004:

ՅԱԳՈՒԴԻ ՈՐԴԻ ՄԵՍՐՈՂ (ՄԵՍՐՈՂ ՅԱՂՈՒԲ)

Ծնվել է Բաղդադում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

1914թ., Առաջին աշխարհամարտի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական դեղագործ ծառայել:

Մահացել է 1915թ. փետրվարի 15-ին, ժանտախտից:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՅԱՉԸՃՅԱՆ ՄԻՀՐԱՆ

Ծնվել է մոտ. 1870թ., Կ. Պաղլտում:

1894թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Քեշան քաղաքի թիվ 5 հիվանդանոցի բժիշկ է աշխատել:

Մահացել է 1915թ. մայիսի 12-ին, ժանտախտից:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Մեզպուրեան Արթո, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

ՅԱՉԸՃՅԱՆ ՍՏԵՓԱՆ

Ծնվել է Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի Թալաս ավանում:

Դեղագործական կրթություն է ունեցել:

Թալասում դեղագործ է աշխատել:

Սպանվել է 1915թ.:

Նրա մասին.

1. Ալպոյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. հատոր, Գահիրէ, 1937:

2. Շահբազյան Հասմիկ և Սիրզոյան Անահիտ (կազմողներ), Յուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 3, Անկարայի նահանգ, Երևան, 2006:

ՅԱՂՃՅԱՆ (ԳԱՅԼՅԱՆ) ԾԵՐՈՆ

Ծնվել է մոտ 1890թ., Փոքր Ասիայի արևմուտքի Բալլքեսիր քաղաքում:

1914թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Մահացել է Կարինի շրջակայքում, ժանտախտից՝ 27

տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տու-
լած գոհերը, ցուցակագրու-
լած վաւերական փաստե-
րով, Կ. Պոլիս, 1919:

2. Մեզպուրեան Արթօ,
Հայ եւ ծագումով հայ բժիշկ-
ներ: Այբուբենական համա-
նօստ անուանացանկ (1688-
1940), Իսթանպուլ, 1940:

ՅԱՐԱՄԵՆԻԱՆ ՆԿՈՂԱՅՈՍ

Բժիշկ, բանասեր, խմբա-
գիր, Շուշիում «Ղարաբաղ»
եռօրյա թերթի խմբագիրն ու
հրատարակիչը:

Գրվել է նաև Երամիշյան,
Եարամահիշեան:

1910թ. թերթ տպագրելու
իրավունք ստանալու հույ-
սով դիմել է Կովկասի փո-
խարքա իշխան Գոլիցինին:

1910թ. Շուշիում հիմ-
նադրված Մելքոն Բաբաջա-
նյանի տպարանում վանեցի
գրող Վրթանես Փափագյանի
հետ տպագրել են մի քանի
գրքուկներ:

1911թ. սեպտեմբերի 13-
ին բժիշկ-բանասերը ստա-
ցել է թերթ հրատարակելու
իրավունք:

Թերթի ստեղծման գործին
բավական քանք ու եռանդ
են ներդրել ինքը՝ Նիկոլայ
Յարամիշյանը, Վրթանես
Փափագյանը, Մակար Բար-
խուդարյանը և ուրիշներ:

1911թ. սեպտեմբերի 17-

ից մինչև 1912 թ. որպես սե-
փականատեր և գլխավոր
խմբագիր Շուշիում հրատա-
րակել է «Ղարաբաղ» եռօրյա
թերթը, որի խմբագիրն էր Վ.
Փափագյանը:

Թերթը լույս է տեսել շա-
բաթը 2 անգամ՝ երեքշաբթի
և ուրբաթ օրերին:

1909-1913թթ. Ստոլի-
պինյան ներքին քաղաքա-
կանության դժնդակ տա-
րիներին տեղի ունեցած
ազգամիջյան ընդհարումնե-
րից հետո այդ թերթը լույսի
ու հույսի մի շող էր, որ ճա-
նազում էր Արցախ աշխար-
հում:

Թերթի առաջին համարը
լույս է տեսել 17-09-1911թ.,
իսկ վերջին համարը՝ 19-08-
1912թ.:

1918թ. դրուկամբ շարու-
նակել է Շուշիում աշխատել
որպես բժիշկ:

Այդ ժամանակ արդեն հա-
մարվել է «քաղաքի լավա-
գույն դոկտորը»:

1919թ. դաշնակցական
Ազգային Խորհրդի հրավե-
րով մասնակցել է Շուշիում
և գավառում բռնկված բժա-
վոր տիֆի և «խսպանկա» հի-
վանդության համաճարակի
պայքարին:

Տասնյակ տարիներ զբաղ-
վել է ակտիվ հասարակա-
կան գործունեությամբ:

1920 թ. մարտի 23-ին Շու-
շիում, ի թիվս շուրջ 400 հա-
յերի, սպանվել է թուրքերի

կողմից իրականացված կո-
տորածի ժամանակ:

Նրա մասին.

1. Պոտուրեան Մ., Հայ
հանրագիտակ, Պուլքրէշ,
1938, 760 էջ

2. Իշխանյան Ե., Լեռնա-
յին Ղարաբաղ (1917-1920),
Ե., 1999:

3. Հայերի կոտորածները
Բաքվի և Ելիզավետպոլի նա-
հանգներում 1918-1920թթ.,
Կազմողներ Սոնա Միրզո-
յան և Ալվարդ Ղազիյան, Ե.,
2003, 523 էջ

4. Եսայան Է. «Ղարա-
բաղ» թերթի վանեցի խմբա-
գիրը, «Դեմո», 29-04-2006

5. <http://www.yerkramas.org>

6. <http://forum.hayastan.com>



ՅԱՐՄԱ(Ն)ՅԱՆ ՄԻՆԱՍ

Ծնվել է մոտ 1880թ., Սե-
բաստիայի Նահանգի Եվդո-

կիայի գավառի կենտրոն Եվ-
դոկիա (Թոքաթ) քաղաքում:

Ներկայումս ստամբուլաբ-
նակ գործարար և «Հայերը
օսմանյան առողջապահու-
թյան ծառայության մեջ և
պատմությունը սուրբ Փրկիչ
հայոց հիվանդանոցի» աշ-
խատության հեղինակ Ար-
սեն Յարմանի պապի եղ-
բայրն է:

Նախնական կրթությունն
ստացել է Եվդոկիայի թաղա-
յին ազգային վարժարանում:

1900թ. ավարտել է ամե-
րիկացի միսիոներների
Մարզվանի Անատոլիա քո-
լեջը:

1904/06թ. ավարտել է Բեյ-
րութի Ամերիկյան համալ-
սարանի բժշկական ֆակուլ-
տետը և բժշկի վկայական
ստացել:

1904թ. վերադարձել է իր
ծննդավայրը և բժիշկ է աշ-
խատել, օգտակար լինելով
իր համաքաղաքացիներին՝
անկախ կրոնական պատկա-
նելությունից:

1914թ., Առաջին համաշ-
խարհային պատերազմն
սկսվելուն պես զորակոչվել
է օսմանյան բանակ և Երզն-
կայի Ազիզիեի զինվորական
հիվանդանոցում զինվորա-
կան բժիշկ ծառայել:

1915թ. հունիսին, Ազիզի-
եի զինվորական հիվանդա-
նոցի հանդիպակաց արտի
(այգու) մեջ իր հիվանդի հետ
գրուցելու ժամանակ, հիվան-

դանոցի գլխավոր բժիշկ-հարուրապետի (հետագայում հազարապետ) հրահանգով և մի հիվանդապահի ղեկավարությամբ սպանվել է սրերով ու փայտերով զինված թուրք զինվորների ձեռքով, բժշկապետի աչքի առաջ մոտ 35 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Ալլայօյաճեան Արշակ, Պատմութիւն Եւրոպոյ հայոց, Գահիրէ, 1952:

3 Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

4. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

5. Թէոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

6. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

7. Ատաշ Ադնան, 20-րդ դարի նահատակ եղած բժիշկները (թուրքերեն), Թուրքիա, 1997:

8. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ

հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

9. Խաչատրյան Լ. և ուրիշ., Յուցակ Հայոց ցեղասպանության գոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Մեքաստիայի նահանգ, Երևան, 2004:

10. Մեծ Եղեռնի գոհեր, 1968:

11. Զէստենեան Հրաչ, Պէյրուքի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ Եւ Մեծ Եղեռնին Նահատակուած Հայ Բժիշկներ, “Ազդակ”, 01-11-2012

ՅՈՂՈՒՐԹՅՅԱՆ ԳԵՎՈՐԳ Գ.

Ծնվել է 1883թ., Փոքր Ասիայի արևմուտքի Աֆիոն-Կարահիսար քաղաքում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Սարկավազյան վարժարանում:

Որոշ ժամանակ հաճախել է թուրքական ոյուզդիե վարժարան (նախակրթարան):

Ավարտել է Աֆիոն-Կարահիսարի ազգային վարժարանը:

1900թ. տեղափոխվել է Կոստանդնուպոլիս:

Ավարտել է Կ. Պոլսի ազգային վարժարաններից մեկը:

1903-05թթ. սովորել է Կ. Պոլսի Օսմանյան դեղագործական վարժարանում:

1905թ. վերադարձել է

Աֆիոն-Կարահիսար և բացել սեփական դեղատուն և աշխատել:

Բալկանյան պատերազմի և Առաջին աշխարհամարտի ընթացքում որպես զինվորական դեղագործի տեղակալ ծառայել է օսմանյան, ապա՝ քեմալական բանակներում:

Ծառայության ընթացքում ամբաստանության պատճառով ձերբակալվել և դատապարտվել է մահվան:

Սակայն հետո ազատվել է բանտից և վերադարձել Աֆիոն-Կարահիսար:

1922թ. սեպտեմբերին Չմյուռնիայի և շրջակա բնակավայրերի հայերի և հույների կոտորածի պատճառով գաղթել է Հունաստան և Սալոնիկ քաղաքում դեղատան տնօրեն աշխատել:

Այստեղ հայրենասիրական եռանդուն աշխատանք է տարել:

1932թ. ընտանիքով հայրենադարձվել է Խորհրդային Հայաստան և բնակություն հաստատել Երևանում, ուր ընտանիք, զավակներ և հարազատներ է ունեցել:

Մինչև կյանքի վերջը Երևանում դեղատան վարիչ է աշխատել:

Մահացել է 1962թ., Երևանում:

Որդին՝ Մկրտիչ Յողուրջյանը Բաքվում աշխատել է բժիշկ:

Նրա մասին.

1. Մակարյան Ա., Յուշագիրք Թրակիոյ եւ Մակեդոնիոյ հայ գաղութներու, Մելանիկ: Տպ. «Հորիզոն» օրաթերթի, 1929, էջ 105:

2. Պոտուրեան Մկրտիչ, Հայ հանրագիտակ, Պուքրէշ, 1938:

3. Պոտուրեան Մկրտիչ, Հայ հանրագիտակ, Պուքրէշ, 1940:

4. Չերքեզյան Կ., Աֆիոն-Կարահիսարի հայ գաղթօջախը, Ե., 1986:

5. Յարման Ա., Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սբ Փրկիչ հիվանդանոցում, 20



ՆԱԳԱՎԾՅԱՆ ԱՎԵՏԻՍ Ս.

Բժիշկ, գրող, թարգմանիչ, հրապարակախոս:

Ծնվել է 1868թ., Հալեպի նահանգի Այնթապի գավառի Նույնանուն գավառակի կենտրոն Այնթապ քաղաքում:

Նախնական կրթությունն ստացել է Ասատուր խալֆայի «դպրոցում»:

1887/88թ. ավարտել է ամերիկացի միսիոներների Այնթապի Կենտրոնական Թուրքիայի քոլեջը:

1888-89թթ. սովորել է Այնթապի բժշկական վարժարանում, որը փակվելու պատճառով ուսումը կիսատ է թողել:

1889-90թթ. բժիշկ Ալթունյանի օգնական է աշխատել:

1890-94թթ. սովորել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետում և բժշկի վկայական ստացել:

1895թ. հայկական կոտորածների ժամանակ գտնվել է Մարաշում և, շահելով տեղի կառավարչի ու զինվորական հրամանատարության համակրանքը, նրանց աջակցությամբ արտասահման փախել:

1896թ. մեկնել է Փարիզ և 9 ամիս մնացել այնտեղ, այնուհետև անցել Լոնդոն, ապա՝ Բեռլին և այդ քաղաքների հիվանդանոցներում աշխատել:

Որոշ ժամանակ անց Ադանա է վերադարձել:

Ամռան ամիսներին մեծ հաջողությամբ աշխատել է Անատոլիայի տարբեր վայրերում:

Մի քանի տարի անց հաստատվել է Կ. Պոլսում:

Բացի բժշկական և հասարակական աշխատանքից, զբաղվել է նաև գրական-

հրատարակախոսական գործունեությամբ: Եղել է Կ. Պոլսի՝ հայատառ թուրքերենով հրատարակվող «Բահնիմա» շաբաթաթերթի սիրված աշխատակիցներից մեկը, քանի որ ընթերցողները հաճույքով էին կարդում զավեշտներով համեմված նրա գրվածքները: Երգիծական գրություններով թղթակցել է նաև Կ. Պոլսի «Աւետաբեր» և այլ պարբերականների: Դրանցից լավագույնները ամփոփվել են «Սեյեահաթ խաթըրէլէրի» («Ճանապարհորդական հուշեր») հայատառ թուրքերեն հատորում:

1913թ., «Աւետաբեր» թերթի խմբագրապետ պատվելի Գրիգորյանի ԱՄՆ կատարած ճամփորդության ժամանակ փոխարինել է նրան:

Եղել է եռանդուն հանրային և ազգային գործիչ:

Կ. Պոլսում ապրել է Կոմիտաս վարդապետի և ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի հարևանությամբ:

1915թ. ապրիլի 11 (24)-ին, ի թիվս Կ. Պոլսի բազմաթիվ ակնառու հայ մտավորականների, ձերբակալվել է և բանտարկվել Կ. Պոլսի կենտրոնական բանտում:

1915թ. ապրիլի 12 (24)-ին Կ. Պոլսի բազմաթիվ հայ մտավորականների հետ գնացքով տեղափոխվել է Այաշ ավանի ծայրամասի

բլրի վրա գտնվող Սարը կըշլա հին զորանոց-բանտը և մի քանի ամիս բանտարկված մնացել այնտեղ:

Անունը փորագրվել է Չանդըրըի բանտում հավաքված համրիչի 99 հատիկներից մեկի վրա:

Որոշ ժամանակ հետո դեսպան Մորգենթաուի միջնորդությամբ ազատվել է բանտից և վերադարձել Կ. Պոլիս:

1922թ. մեկնել է Եգիպտոս, բնակվել Ալեքսանդրիայում:

1924թ. հաստատվել է ԱՄՆում:

Հայկական և ամերիկյան մամուլում տպագրել է երգիծական գործեր: Հայերեն գործերի մի մասը հրատարակել է «Զվարթ պատմություններ» ժողովածուում: Հետագայում հուշեր է գրել Չանդըրըի և Այաշի ողբերգությունների մասին:

Հավանաբար ծերունական տարիքում նրա մոտ հոգեկան խանգարում է առաջացել:

Մահացել է 1943թ., ԱՄՆում (?)՝ 75 տարեկանում:

Դուստրը՝ Ֆիլիրա Նագաշյանը, բնակվել է Ալեքսանդրիայում և իր մոտ պահել հոր օրագիրը:

Աշխատությունները.

1. Հենրի Վուդի «Լեդի Իգաբել» (Լեյտի Իգապել) վեպը անգլերենից թարգմանել է հայատառ թուրքերեն, Կ. Պո-

լիս, 1910թ.:

2. Սեյեահաթ խաթըրէլէրի (Ճանապարհորդական հուշեր), հայատառ թուրքերեն գիրք, Կ. Պոլիս, 1913թ., 303 էջ:

3. Մի գրոպավախոթիւն, Վահան Ղազարեանի «Բժշկական եւ առողջապահական տարեցոյց» գրքում, Կ. Պոլիս, 1914:

4. Հենրի Վուդի «Լեդի Իգաբել» անգլերենից հայատառ թուրքերեն թարգմանած վեպ, Պէյրուք, 1938թ.:

5. Չուարթ պատմութիւններ, Հայերեն երգիծական գործերի ժողովածու:

6. Հայրենիք գտած մարդը (անգլ.), Կենսագրական վեպ, որ գրել է իր սիրած հեղինակ Մարկ Տվէյնի ոճով, Լյու Յորք, 1940:

7. Եղեռնի հետքերով, «Հայ մտաւորականներու ձերբակալութիւնը եւ Այաշի բանտը», Պէյրուք, 1969:

Նրա մասին.

1. Ղազարեան Վահան, Բժշկական եւ առողջապահական տարեցոյց, Կ. Պոլիս, 1914:

2. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Վիեննա, 1922:

3. Հաւաքեց Կարապետ Թէրզեան, “Պատմագիրք Ստանոգի Հայոց”, տպ. Տոնիկեան եւ Որդիք, Պէյրուք, 1969, 374 էջ

4. Սիմոն Հովիւեան, “Ապ-

րիլեան Լահատակներուն Շաւիղով, Մեծ Եղեռնի 60ամեակի Սեմին”, Պէյրուք, 1975, 349 էջ

5. Հայ Եղեռնը, Բ տպագրութիւն, Պէյրուք, 1978, 171 էջ

6. Ստեփանյան Գառնիկ, Կենսագրական բառարան, հ. Գ, Ե., 1990:

7. Պալաքյան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Երևան, 1991:

8. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մատուց կամ խոստովանողը և վկայք խաչի, Երևան, 2002:

9. Ստեփանյան Հ., Հայատառ թուրքերեն գրքերի և հայատառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտություն (1727-1968), Ստամբուլ, 2005:

10. Ճոռան՝ Ռայմոն Թելֆեյանի հայտնած տեղեկությունը Վերժինե Սվազյանին, 27-05-2007:

11. Ավագեան Կարինե, «Չանդրըրի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդես Ամսօրեայ», 2008, հ. 1-12

12. Իսկահատեան Հարութիւն, Վկայարան Հայկական Ցեղասպանութեան, Գիրք Բ., Պէյրուք, 2011, 352 էջ

13. Իսկահատեան Հ., Վկայարան հայկական ցեղասպանութեան, Գիրք Գ, Պէյրուք, 2011, 395 էջ

Ճոռան՝ Ռայմոն Թելֆեյանի հայտնած տեղեկությունը ազգագրագետ Վերժինե Սվազյանին և նրա դուստր, պատմաբան Զնարիկ Ավագյանին:

«Իմ տատիկ Ֆիլիրա Լագաշյանը՝ պոլսեցի Ավետիս Լագաշյանի դուստրը, Ցեղասպանությունից հետո ապրել է Ալեքսանդրիայում: Ավետիս Լագաշյանը եղել է օսմանյան բանակի բժիշկ: Սիրելի է գրել և գրել է բազմաթիվ գրքեր թուրք-հայկական թեմաներով: Եղել է Մարկ Տվենի երկրպագուն: Նա անգլերեն գրել է ինքնակենսագրական վեպ Տվենի ոճով. «Երկիր գտած մարդը»: Նա Կ. Պոլսում ապրել է Կոմիտասի և Մորգենթաուի հարևանությամբ: Նրանք սովորություն են ունեցել միասին նարդի խաղալ: Մորգենթաունը իր օրագրում գրել է, թե ինչպես է 1915թ. ապրիլի 24-ին Լագաշյանը ձերբակալվել, կողոպտվել ու մերկացվել Թուրքիայի մայրաքաղաք Կ. Պոլսի կենտրոնում: Ես ունեմ նրա օրագիրը, որ ստացել եմ իմ տատիկից: Օրագրում, 1915թ. ապրիլի 24-ին գրված առաջին էջի վերևի մեջտեղում հուշ կա, որ նրա կյանքը խաթարվեց: Նա այդ օրը ձերբակալված այն քչերից մեկն էր, ով հետո ազատվեց: Նա ստիպված էր կիրառել իր

բժշկական մասնագիտությունը, որպեսզի ձեռք բերեր հազուստ, որ վերադառնար քաղաքակրթության, բայց նա վերջիվերջո խելագարվում է, ինչպես Կոմիտասը, տեսնելով իր շուրջը կատարվող ջարդը: Իմ հայրը՝ Ռուլանդ Թելֆեյանը հիշում է, թե ինչպես նա կորցրեց իր բանականությունը: Ես մի տոմարս քչերից



ԼԱԶԱՐՅԱՆ ՀԱԲԻԲ

Բարձրագույն բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել: Չոհվել է 1915թ. Մեծ Եղեռնի ընթացքում: Հետաքրքիր զուգահեռ պոլսյանը՝ ինտերնետում գտանք ոմն մանկաբույժ Հաբիբ Լագարյանի անունը, որը 2009թ. դրությամբ ապրում է ԱՄՆ-ում: Տվյալներն են. Habib Nazarian, MD, Pediatrics, Male - 32 years experience, Address: Springfield

Pediatrics, 23520 147th ave. Ste. 4, Rosedale, New York.

Նրա մասին. Սարաֆեան Գեորգ,



ԼԱԶԼ(Ը)ՅԱՆ ԹՈՐՈՍ

Ծնվել է 1881թ., Անկարայի Լահանգի Կեսարիայի գավառի Կեսարիա քաղաքում/ Կեսարիայի գավառի Էվերեկի գավառակի կենտրոն Էվերեկ ավանում/ Էվերեկի գավառակի Ֆենեսե գյուղում՝ աղքատ ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում: 1906թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը: Բժիշկ է աշխատել և շուտով բոլորից հարգված մասնագետ դարձել: Ամուսնացել է և զավակներ ունեցել: Եղել է Գևորգ Փամբուքյանի մոր՝ Լազելի-Հաջի-գյուլ հանրմի առաջին ամուսինը: Եղել է ՀՅԴ անդամ և աչքի

ընկել իր ազգային ազատական գաղափարներով:

Եղել է թիկնեղ և կրակոտ երիտասարդ, կորովի կամքի տեր, անվախ, առաջնակարգ ատենաբան և հավատացել խոսքի ազատությանն ու սահմանադրությանը:

Բալկանյան պատերազմների ժամանակ զինվորական բժիշկ է ծառայել օսմանյան բանակում:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և Դարդանեյի ռազմաճակատում զինվորական բժիշկ ծառայել:

1915թ. ընկերների մատուցած ծերեքակալվել է:

Ի թիվս 36 ծերեքակալվածների, Կ. Պոլսից տարվել է Եվերեկի բանտը, որտեղ ենթարկվել է հարցաքննության: Այնուհետև խիստ հսկողության տակ Կեսարիայի բանտն են տեղափոխվել:

Ըստ դոկտոր Լեփսիուսի՝ 1915թ. այն օրը, երբ Կ. Պոլսում 20 հնչակյաններ կախաղան բարձրացվեցին, Կեսարիայում 12 կուսակցական հայեր, որպես հեղափոխական մահվան՝ դատապարտվեցին: Վերջիններիս մեջ էր նաև բժիշկ Թորոս Լազրյանը:

1915թ. հուլիսի 30/31-ին, Պատերազմական ատյանի դատավճռով Կեսարիայում

կախաղան է բարձրացվել 34 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Ալլաօյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Բ, Գահիրէ, 1937:

3. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անունանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

4. Գալֆայեան Կարապետ աւագ քահանայ, Գիրք ելից հայոց, Պէյրուք, 1955:

5. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

6. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

7. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

8. Հին եւ նոր Կեսարիա: Յուշամատեան, Փարիզ, 1989:

9. Գեորգ Միքայելի Բամբուքճեան, (Ինքնակենսագրութիւն), «Սուրբ Փրկիչ», Ստամբուլ, մարտ-ապրիլ, 2003:

10. Փամբուքջյան Գևորգ, Հայերը իրենց կենսագրականներով (թուրքերեն),

Ստամբուլ, 2003:

11. Շահբազյան Հասմիկ և Միրզոյան Անահիտ (կազմողներ), Յուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 3, Անկարայի նահանգ, Երևան, 2006:

ՆԱԶԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Ծնվել է 1877թ., Սեբաստիայի նահանգի Եվդոկիա քաղաքում:

Ըստ Ա.Յարմանի՝ նա Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետից 1907թ. տեղափոխվել է Դամասկոսի (Շամ) բժշկական վարժարան:

1912թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Բժիշկ է աշխատել:

1914թ. Առաջին աշխարհամարտի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել:

1915թ. սպանվել է Մուշի մոտ, Խոփ (Քոք) լեռան վրա՝ 38 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Ալլաօյաճեան Ա., Պատմութիւն Եւդոկիոյ հայոց, Գահիրէ, 1952:

3. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատ-

րաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

4. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

5. Յարման Արսէն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

6. Խաչատրյան Լ. և ուրիշ., Յուցակ Հայոց ցեղասպան-

ւոր 1915-1919 թթ. հայ



ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՀԱՅԿԱԶՈՐ

Ծնվել է Հալեպի նահանգի Քիլիսի գավառակի կենտրոն Քիլիս քաղաքում:

1914թ. ավարտել է Շվեյցարիայի Ժնև քաղաքի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Հայրենիքի սիրո կանչով, Շվեյցարիայից եկել և միացել է զորավար Անդրանիկ Օզանյանի կամավորական գնդին:

1914թ. եղել է Անդրանիկի բանակի բժշկասանիտարական խմբի բժիշկը:

Հայկական լեգեոնում զինվորական բժիշկ է ծառայել:

Եղել է ՀՅԴ Այնթապի կենտրոնական կոմիտեի անդամ:

Չոհվել է Կիլիկիայի հայության ինքնապաշտպանության մարտերում:

Նրա մասին.

1. Հովակիմյան Վ., Դժվարին տարիներ, Երևան, 1988:

2. Յուզամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցության, Ալբոմ-ատլաս, Բ. հատոր, Գոյամարտ, 1914-1925, Լուս Անճեյրս, 2001:

3. Պայրամեան Ալիշան Ա., Կիլիկա. Հայկական Քիլիս, Երեւան, 2001:

ՆԱՀԱԳԵՏՑԱՆ ՄԻՆԱՍ

Ծնվել է հավանաբար 1873թ., Տրապիզոնի նահանգի կենտրոն Տրապիզոն քաղաքում:

1898թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան դեղագործական վարժարանը:

Տրապիզոնում դեղագործ է աշխատել:

Սպանվել է կամ մահացել 1915թ.՝ մոտ 42 տարեկանում:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը

օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՆԱՀԱԳԵՏՑԱՆ ՆՇԱՆ

Ծնվել է Կ. Պոլսում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

Եղել է ՀՅԴ անդամ և հասարակական-քաղաքական գործիչ:

Բանտարկվել է Յուլդոզի դեպքի ժամանակ՝ սուլթան Աբդուլ Համիդ II-ի դեմ մահափորձից անմիջապես հետո:

1915թ. սպանվել է խոշտանգվելով:

Նրա մասին.

1. Թեոդիկ, Յուզարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, 1985:



**ՆԱՀԻԿՑԱՆ ՆՇԱՆ
ՏԵՐ - ՎԱՀՐԱՄԻ**

Ծնվել է 1883թ. օգոստոս-

սին, Խարբերդի նահանգի Խարբերդի գավառի Հյուսեյնի գյուղում:

1895թ. սուլթան Աբդուլ Համիդ II-ի կազմակերպած հայկական ջարդերի ժամանակ թուրքերը հորը՝ Տեր Վահրամ քահանային կացնահար սպանել են:

Վայրենիները սրախողջոց են արել նաև երկու եղբայրներին ու երկու քույրերին:

12-ամյա Նշանը սրունքից ու գլխից կացնահար վիրավոր, ուժասպառ և արյունաքամ վիճակում հանձնվել է մորը, որի գլխին և ս կացնի հարվածի 3 վերքեր կային:

Նշանը բուժվել է Մեզիրեի ֆրանսիական քոլեջի հիվանդանոցում:

Այնուհետև մոր, կրտսեր եղբոր, երեք քույրերի և զարմիկի հետ ապաստանել է լատին կապուչինյան միաբանության որբանոցում:

1900թ. ավարտել է Մեզիրեի ֆրանսիական քոլեջը:

1900-02թթ. նույն քոլեջում դասատու է աշխատել:

1902-04թթ. կապուչինյան միաբանության ղեկավարը Նրան ուղարկել է Եդեսիա, որտեղ դասատու է աշխատել:

1904/05-09թթ. կապուչինյան միաբանության ղեկավար փեր (հայր) Ռաֆայելի Նյուրթական աշակցությամբ ընդունվել է

Բեյրութի Սեն Ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետ:

1905թ. լինելով ուսանող, մասնակցել է Բեյրութում ՀՅԴ կոմիտեի հիմնադրմանը:

1909թ. աշնանը վերադարձել է Մեզիրե և ամուսնացել տեղացի անվանի փաստաբան Միքայել Արսլանյանի դստեր հետ:

Կարինում բժիշկ, ապա՝ բժշկապետ է աշխատել, եղել սիրված ու հարգված անձնավորություն:

Եղել է հասարակական և քաղաքական եռանդուն գործիչ:

Շուտով դարձել է Ճովաց բարձրավանդակի (Խարբերդի շրջանի [կուսակցական ծածկագրությամբ՝ Լեռնասարի]) ՀՅԴ ակնառու դեմքերից մեկը, ընտրվել ՀՅԴ Լեռնասարի կենտրոնական կոմիտեի անդամ, հերթապահ:

Նրա միջոցով են պահպանվել ՀՅԴ հարաբերությունները նահանգապետի և կառավարական մարդկանց հետ:

Նրա տունը դարձել էր ՀՅԴ կուսակցության տունը, ուր հաճախ գալիս էին կուսակցական գործիչները:

1914թ., Առաջին աշխարհամարտը սկսվելուց հետո զորակոչվել է օսմանյան բանակ, ուղարկվել Հասան կա-

լե և գերմանացի հրամանատարի ղեկավարության տակ զինվորական բժիշկ ծառայել:

Կարճ ժամանակից, բարեխիղճ ծառայության համար, արժանացել է գերմանացի հրամանատարի դրվատանքին և զինվորական աստիճանի բարձրացման:

Որոշ ժամանակ անց վարակվել է ժանտախտով, սակայն բուժվել և հրաշքով փրկվել է այդ մահասփյուռ հիվանդությունից:

1915թ. ապրիլին, կարճատև արձակուրդ ստանալով, հանգստանալու և ապաքինվելու նպատակով Կարինից եկել է Խարբերդ / Մեզիրե՝ ընտանիքի մոտ:

Մեզիրեում թուրք բժիշկներ Թևֆիկը և Չիան պահանջել են, որ նա ոչ պաշտոնապես օգնի իրենց, քանի որ բժշկական աշխատանքների կարիք կար: Նշանը, կրկին ռազմաճակատ չուղարկվելու ակնկալիքով, նրանց հետ ամեն հանձնարարություն կատարելուն սիրահոժար համաձայնել է:

Նրան զինվորական կենտրոնական հիվանդանոցի գիշերապահ բժիշկ են նշանակել:

Երբ բժշկի հանգստանալու ժամկետը լրացել է և նրան հետ են կանչել կենտրոնից, զինվորական հրամանատարությունը պահանջել

է, որ նա մնա Խարբերդում, ինչը բժշկի համար մեծ մխիթարություն է եղել:

Խարբերդում գտնված ժամանակ իր զորամասից գոհունակության թղթեր է ստացել և նորից զինվորական աստիճանի բարձրացման արժանացել:

Խարբերդում մեծ ծառայություններ է մատուցել հայազգի զինվորներին:

Մի քանի օրից վերադարձել է Հասան կալե՝ զինվորական ծառայության:

1915թ. ապրիլի վերջերին, սովորականի պես գնացել է զորանոց՝ իր բժշկական պարտականությունները կատարելու, բայց նկատել է, որ զինվորներն իրեն չեն բարևում և միմյանց հետ փսփսում են:

Այդ օրը, նա հերթապահելիս է եղել բժիշկ Չիայի փոխարեն:

Ոստիկանները դիմել են բժ. Չիային, որպեսզի նա թույլ տա, որ Նշանը մի հիվանդի այցելի: Չիան իմանալով, որ դա պատրվակ է, չի մերժել և Նշանին հրամայել է գնալ ոստիկանի հետ: Ոստիկանները նրան առաջնորդել են հրամանատարի սեկյակը, որտեղ պոկել են ուսադիրները և պահանջել, որ հանի իր զինվորական համազգեստն ու հանձնի սուրը: Սա բժշկի համար տհաճ անակնկալ է եղել: Սկզբում չի ցանկա-

ցել հնազանդվել, ապա զայրույթով լցված, հանել է համազգեստը և սուրը, ասելով. «Առե՛ք ձեր հագուստները ձեզի. մենք անկեղծորեն նայեցանք ձեզի, բայց յիմարացած էինք... Առե՛ք, ասոնք չե՛ն յարմարիր մեզի»:

Այնուհետև երկու սվինավոր զինվորների ուղեկցությամբ նրան Մեզիրեի կենտրոնական բանտ են տարել:

1915թ. ապրիլ-մայիս ամիսներին օսմանյան կառավարությունը Խարբերդում և Մեզիրեում բազմաթիվ հայ մտավորականների ձերբակալություններ է իրականացրել:

Թուրք ոստիկանները նրանց շղթայակապ տարել են փողոցներով ու շուկաներով, և գազազած թուրք ամբոխը նրանց վրա քարեր է նետել, հարվածել, ծեծել:

Նրանց բոլորին բանտարկել են Մեզիրեի բանտում և կտտանքների ենթարկելով փորձել տեղեկություններ կորզել զենքեր, ռումբեր և քաղաքական գաղտնիքներ թաքցնելու մասին:

Կեսգիշերին, արաբկիրցի ոստիկան Այի օմբաշին բանտապահ Հասան Էֆենդիի հետ եկել է բանտ և հրամայել, որ մեկ առ մեկ դուրս գան և Եդեսիա տեղափոխվելու պատրաստվեն:

Բժիշկ Նշան Նահիկյանը համարձակորեն առաջ գա-

լով ասել է. «Եթե դուք մեզ իրոք Եդեսիա պիտի ուղարկեք, ավելի լավ է, որ ցերեկով ուղարկեք, որպեսզի ժողովուրդը իմանա, որ մենք Եդեսիա ենք գնում, իսկ եթե ձեր հետին դիտավորությունը մեզ սպանելն է, կրկին ցերեկով սպանեք և կախեք, որպեսզի համայն Խարբերդի ժողովուրդը ականատես լինի մեր մահին»:

Չնայած ոստիկանը ժխտել է նրանց սպանելու մտադրությունը, բանտարկյալները հասկացել են, որ պատրաստվում են իրենց սպանել, ուստի հրաժարվել են կատարել գիշերով բանտից շղթայակապ դուրս գալու հրամանը:

Լուրը հաղորդել են գնդապետ Ֆերիդ բեյին, որը հրամայել է բոլորին սրախողխող անել:

1915թ. հունիսի 25-ին/հուլիսի 1-ին/օգոստոսի 4-ին (ըստ տարբեր աղբյուրների), Խարբերդ քաղաքի Մեզիրեի բանտի 37 հայ բանտարկյալները վճռել են բանտը հրկիզել և ինքնահրկիզվել:

Իրար վրա են հավաքել բանտի վերմակները, իրենց հագուստները և դրանց վրա լցնելով ճրագների նավթը՝ հրկիզել են բանտը:

Բոլորը զոհվել են: 35 տարեկան Էդվարդ Թաշճյանը և 32 տարեկան Նշան Նահիկյանը կրակի բոցերի միջից դուրս են եկել

կիսամեռ վիճակում:

Ոստիկանները սվիններով պատառոտել են նրանց:

37 բանտարկյալների կիսամոխրացած դիակները աղբատար կառքով տարել և լցրել են Զոր աղբյուրի մոտ գտնվող մի փոսում:

Նշան Նահիկյանի այրին ու որդի Վահրամը տարագրվել են Հալեպ, ապա՝ Բեյրութ, որտեղ Վահրամը ֆրանսիական դեսպանատան ակնառու պաշտոնյաներից մեկն է դարձել:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Գուժկան Սեբաստիոյ (Կարապետ Գաբիկեան), եղեռնապատում Փոքրուն Հայոց եւ Նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն, 1924:

3. Բախտիկեան Սարգիս (խմբագիր), Ոսկեգետակ, տարեգիրք, Գ. տարի, Պէյրութ, 1948:

4. Հասկաքաղ: Բրոֆ. Տ. Կ. Լիւլէճեանի (Բագրատ) գրական վաստակը եւ 1915-ի բանտի յուշերը, Ֆրէզնօ, 1955:

5. Ճիզմէճեան Մանուկ, Խարբերդ եւ իր զաւակները, Ֆրէզնօ, 1955:

6. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի Նահատակ հայ բժիշկները (անոնց պատ-

գամները), Պոսթըն, 1957:

7. Սահակյան Լիլիկ, Ոճրագործները չխնայեցին Նույնիսկ մարդու կյանքը փրկողներին, «Առողջապահութիւն», Երևան, 1965, թ. 4:

8. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրութ, 1965:

9. Հիւսէյնիկ, խմբագիր՝ Կ. Ահարոնեան, Պոսթըն, 1965:

10. Թեոդիկ, Յուշարձան Նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

11. Թեոդիկ, Գողգոթայ հայ հոգեւորականութեան, Նիւ Եորք, 1985:

12. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմութիւնից, Երևան, 1990:

13. Սվազյան Վ., Հայոց ցեղասպանութիւնը: Ականատես վերապրողների վկայութիւններ, Ե., 2000:

14. Խաչատրյան Լ. և ուրիշ., Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի Նահանգ, Երևան, 2004:



ՆԱՃԱՐՅԱՆ ԳԱԼՈՒՄՏ

Ծնվել է 1856թ., Օսմանյան կայսրության Հալեպի Նահանգի Մարաշի գավառի կենտրոն Մարաշ քաղաքում:

Մայրենի լեզվի Նախնական ծանոթությունն ստացել է մի ոստայնանկի մոտ աշխատելու ընթացքում:

Նախնական կրթությունն ստացել է թաղային ազգային վարժարանում:

Ավարտել է ամերիկացի միսիոներների Այնթապի Կենտրոնական Թուրքիայի քոլեջը, այնուհետև մեկ տարի սովորել Մարաշի աստվածաբանական ճեմարանում:

Ապա սովորել է Ամերիկյան միսիոներական հաստատության («Պորտ») Այնթապի Նորաբաց բժշկական վարժարանում:

1888թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1888թ. Կ. Պոլսում հանձնել է պետական քննությունները և բժշկի վկայական ստացել:

Այնուհետև հաստատվել է Մարաշում և զբաղվել բժշկությամբ:

1895թ. Մարաշի հայկա-

կան կոտորածների ժամանակ մեկնել է Շոտլանդիա և կատարելագործվել Էդինբուրգի բժշկական համալսարանում:

Մասնագիտական գիտելիքներով հարստացած, վերադարձել է ծննդավայր և Մարաշի գերմանական հիվանդանոցի բժիշկ-վիրաբույժ նշանակվել:

Շուրջ 40 տարի առանց ցեղի ու կրոնի խտրականության բարեխղճորեն բուժել է քաղաքի բնակչությանը:

1920թ. հունվարին, Մարաշի հայկական կոտորածի ժամանակ սրախողխող է արվել իր ընտանիքի ու զավակների հետ միասին՝ 64 տարեկանում:

Նրա մասին.

1. Գալուստեան Գրիգոր Հ., Մարաշ, Նիւ Եորք, 1934:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի Նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթըն, 1957:

3. Գալուստեան Գրիգոր Հ., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Չէյթուն, Նիւ Եորք, 1988:

4. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմութիւն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:



ՆԱՐԿԻԼԵՃՅԱՆ ՀԱԿՈՐ

Ծնվել է մոտ 1880թ.:
1900թ. ավարտել է Կոստանդնուպոլսի Կալաթասերայի «Մեքթեբ-ի Սուլթանիե» բարձրագույն վարժարանը:

1904թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան դեղագործարան վարժարանը և դեղագործ աշխատել:

Կ. Պոլսի Օսմանբեյ թաղամասում (Շիշլիի մոտ) ունեցել է սեփական դեղատուն և պատրաստել «Fitinli Maksut Surubu», «Terpestezin Ampulleri» դեղերը:

Եղել է հանրային գործիչ:
1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական դեղագործ ծառայել:

1915թ. ապրիլին 11-13 (24-26)-ի ընթացքում, լինելով զինվորական ծառայության մեջ, բանտարկվել է Կ. Պոլսի կենտրոնական բանտում:

Թուրք ոստիկանը նրան Կ. Պոլսի Հայտար փաշայի Ա. սպասասարահից արտաքննող

տանելով որպես նվաստացում պոկել է նրա զինվորական համազգեստի նշանները:

Այնուհետև արտրվել է Չանդորը:

Անունը փորագրվել է Չանդորի բանտում հավաքված համրիչի 99 հատիկներից մեկի վրա:

Եղել է Չանդորից ազատված 5 հոգանոց առաջին խմբի կազմում:

Մեծ Եղեռնից հետո վերապրել է:

1949-51թթ. եղել է սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցի հոգաբարձուների խորհրդի անդամ:

Նրա մասին.

1. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգորթան, Վիեննա, 1922:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

3. Հայ Եղեռնը, Բ տպագրութիւն, Պէյրուս, 1978, 171 էջ

4. Պալաքյան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգորթան, Երևան, 1991:

5. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

6. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մատուցելով

խոստովանողք և վկայք խաչի, Երևան, 2002:

7. Ավագեան Կարինե, «Չանդորի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդես Ամսօրեայ», 2008, հ. 1-12

8. Իսկահատեան Հարութիւն, Վկայարան Հայկական Ցերասամուրթեան Գեորգ., Պէ.



ՆԵՐՍԵՍՅԱՆ ԼԵՎՈՆ

Ծնվել է Կ. Պոլսում:
Դեղագործական կրթություն է ունեցել:

Փոքր Ասիայի արևմուտքի Սիվրիհիսար քաղաքում ունեցել է սեփական դեղատուն և դեղագործ աշխատել:

1907թ. նոյեմբերին, ի թիվս 14 հայ մտավորականների, ձերբակալվել է Սիվրիհիսարում: Մի ուրբաթ օր ոստիկանը մտել է Լևոնի դեղատուն և ասել, թե քաղաքապետարանի ժողովը ցանկանում է նրան տեսնել, ուստի խնդրում է իր հետ

գնալ այնտեղ: Վատ բան չկասկածելով՝ Լևոնը ոստիկանի հետ գնացել է քաղաքապետարան: Այստեղ Լևոնի վաղեմի բարեկամ, գավառապետ արբանացի Խայրի բեյը խոժոռ դեմքով հարցրել է, թե արդյոք նրա մոտ գեներ կամ վտանգավոր իրեր ու թղթեր չկան: Լսելով բացասական պատասխան՝ Խայրի բեյը հրամայել է դատարկել գրպանները: Արդյունքի չհասնելով՝ ոստիկանին հրամայել է Լևոնին մեկուսացնել մի դատարկ ու կեղտոտ սենյակում, որն աղոթավայր էր ծառայում կառավարության անդամների համար:

Լևոնն առավոտյան տեսել է, որ քաղաքապետարանին բոլոր սենյակները հայերով են լցված:

Այդ օրը բոլոր ձերբակալվածների տներում խուզարկություն է կատարվել: Լևոնի մայրը ոստիկանների առջև դուռը չի բացել: Խուզարկուները հրավիրել են թաղի հայ աղաներից մեկին և քահանային ու դրսից բացատրել, թե խուզարկությունը կապացուցի որդու անմեղ լինելը և թույլ կտա, որ նրան ազատեն:

Խուզարկության ժամանակ բռնագրավել են Լևոնի բոլոր թղթերը, նամակները, թերթերը և այդ բոլորը կցել նրա գործին:

Հետագայում պարզվել է, որ նրանց մատնիչները եղել են երկու հոգի. Զել Պողոսը (կեղծ բժիշկ Պողոս Թեսթի-ճյանը) և ասորահայ Հեքիմ Աբդալլահը:

Երեք օր հետո ձերբակալվածներին և երկու լրտեսներին շղթայակապ տեղափոխել են Անկարայի կենտրոնական բանտ:

Մեղադրվել է 1905թ. օգոստոսի 7 (հուլիսի 8)-ին Կ. Պոլսի Յըլդըզ թաղամասում ուրբաթ օրվա աղոթքի արարողության ավարտին սուլթան Աբդուլ Համիդ II-ին սպանելու մահափորձին մասնակցելու համար:

Մեկ ու կես տարի տևած բանտարկության ընթացքում հայ բանտարկյալները բազմաթիվ հարցաքննությունների են ենթարկվել: Նրանց հայհոյել են, ծեծել, վրաները սառը ջուր լցրել, չարչարել և այլն:

1909թ. մայիսին յուրաքանչյուր բանտարկյալից 500-ական ոսկեդրամ վերցնելով, փաստաբանների օգնությամբ, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի միջնորդությամբ բոլորը ազատ են արձակվել՝ նյութապես, ֆիզիկապես ու հոգեպես քայքայված վիճակում:

Նրա մասին.

Տեր Յովհաննեսեան Գրիգոր, Պատմագիրք Սիվրի-Հիսարի հայոց, Պէյրուզ, 1965:

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԵԱՍ
Ծնվել է Նախիջևանի Ագուլիս քաղաքում:

Մոսկվայում ստացել է բարձրագույն բժշկական կրթություն:

Բժիշկ է աշխատել:

1919թ. Ագուլիսում գտնվել է հայ-թուրքական արյունալի բախումների ժամանակ:

Նրա մասին.

Այվազյան Արզամ., Նախիջևան: Բնաշխարհիկ պատկերագարդ հանրագիտակ, Երևան, 1995:



ՆՇԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Ծնվել է 1880/84թ., Անկարայի Նահանգի Կեսարիայի գավառի Կերմիր գյուղում:

Նախնական կրթությունն ստացել է Կեսարիայի ազգային վարժարանում, միջնակարգը՝ Կեսարիայի սբ. Կարապետի վանքում:

1907թ. ավարտել է Բեյրութի Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1909-11թթ. օգնական վիրաբույժ է աշխատել Կ. Պոլսի սուրբ Փրկիչ հայոց ազգային հիվանդանոցում:

1911թ-ից հետո ևս շարունակել է բժիշկ աշխատել:

Աշխատակցել է հայկական մամուլին, հրապարակային բժշկական դասախոսություններ կարդացել:

Եղել է ՀՅԴ գործիչ:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և Անկարայում զինվորական բժիշկ ծառայել:

1915թ. ապրիլին, Անկարայում, ծառայության ընթացքում ծանրորեն հիվանդացել է և անտանելի հոդացավերի պատճառով գամվել հիվանդանոցային մահճակալին:

2 ե դ ծ ա ր ա ր ո լ թ յ ա ն զրպարտանքով, Անկարայում, ծանր հիվանդ վիճակում ձերբակալվել է Իթթիհադի ղեկավարներից դոկտոր Բեհաեդդին Շաքիրի կազմած 58 ականավոր հայ բժիշկների ցուցակով:

1915թ. Անկարայից ծանր հիվանդ, անդամալույծ, կիսամեռ վիճակում Կեսարիա է տարվել:

1915թ. սեպտեմբերի

5-ին, շաբաթ գիշերով, Կեսարիայում, առանց դատ ու դատաստանի, մեծ դժվարությամբ կախաղան է բարձրացվել՝ 33 տարեկանում:

Նրա մասին.

1. Ղազարեան Վահան, Բժշկական եւ առողջապահական տարեցոյց, Կ. Պոլիս, 1914:

2. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

3. Ալպոյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Ա. հատոր, Գահիրէ, 1937:

4. Ալպոյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. հատոր, Գահիրէ, 1937:

5. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի Նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

6. Սահակյան Լիլիկ, Ռճրագործները չխնայեցին Նույնիսկ մարդու կյանքը փրկողներին, «Առողջապահություն», Երևան, 1965, թ. 4:

7. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուզ, 1965:

8. Տեր Յովհաննեսեան Գրիգոր, Պատմագիրք Սիվրի-Հիսարի հայոց, Պէյրուզ, 1965:

9. Թեոդիկ, Յուշարձան Նահատակ մտաւորակա-

նութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

10. Հին եւ նոր Կեսարիա: Յուշամատեան, Փարիզ, 1989:

11. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990, 221 էջ:

12. Շահբազյան Հասմիկ և Միրզոյան Անահիտ (կազմողներ), Յուզակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 3, Անկարայի նահանգ, Երևան, 2006:

ՇԱՀԲԱԴԼՅԱՆ ՆԵՐՍԵՍ

Ծնվել է 1882թ., Վանում: Ծնողները հավանաբար եղել են Վանի մերձակա Շահբադի գյուղից, որտեղից էլ ծագել է ազգանունը:

Նախնական ուսումն ստացել է ծննդավայրի նախակրթարանում:

Ավարտել է Վանի համբավավոր դաստիարակ Համբարձում Երամյանի բարձրագույն վարժարանը:

1912թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուն պես զորակոչվել է օսմանյան բանակ և Մուշի զինվորական հիվանդանոցում զինվորական բժիշկ ծառայել-վիրաբույժ:

1915թ. միաժամանակ

եղել է Մուշի թաղապետը:

1915թ. սեպտեմբերի 5-ին, երբ արդեն ընթանում էին Մուշի հայերի տեղահանությունն ու ջարդը, աշխատանքային ընկեր, Մուշի քաղաքապետական հայտոյաց թուրք բժիշկ Ասաֆը երեկոյան մաուզերը թիկունքում բռնած այցելել է Ներսեսին և երբ վերջինս նրան դիմավորելով պատրաստվել է հյուրասիրել, Ասաֆը մաուզերով դիմահար կրակել է սանդուղքին կանգնած բժշկի կրծքին ու սպանել նրան՝ 33 տարեկանում:

Այս դեպքին ականատես է եղել Մուշի զինվորական հիվանդանոցի վերատեսուչ, ազգությամբ հավանաբար հույն բժիշկ Փեթրաքի բեյը, որը սակայն որևէ կերպ չի արձագանքել տեղի ունեցածին:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

3. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուզ, 1965:

4. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն,

Երեւան, ապրիլ 24, 1985:

5. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

ՇԱՏԱՐԵՎՅԱՆ ԱՐԲԱՀԱՄ

Ծնվել է մոտ 1855թ.:

Բժշկական բարձրագույն կրթություն է ունեցել:

1895թ. դրությամբ եղել է Եդեսիայի քաղաքապետական բժիշկը:

Եդեսիայում հայտնի է եղել Հաքիմ Աբրահամ անունով:

1895թ. սեպտեմբեր ամսվա մի կիրակի օր 12 զինված թուրքեր մտել են Եդեսիա քաղաքի հայոց թաղը, տնից դուրս կանչել հայ եկեղեցու գանձապահ Պողոս Սարաֆյանին և դռան առջև դաշունահարելով սպանել: Հայ երիտասարդները, հետապնդելով փախչող թուրքերին, բռնել են նրանցից մեկին՝ բերեջիկցի Իսմայիլին, որի ձեռքին եղել է արյունոտ դաշույնը, և հանձնել հայոց եկեղեցու մոտ գտնվող ոստիկանատուն: Թուրք ոստիկանները սվինով սպանել են Իսմայիլին, ասելով. «Մեր օգուտի համար հայերը քեզ սպանելու էին: Զանի որ ողջ այստեղ հասար, պետք է որ մենք քեզ սպանենք, ապա՝ հայերին այդ առիթով նեղը ղենքը և թուրքերին ոստի հա-

նենք: Դու մեր ազգային նահատակն ես: Դու պիտի մեռնես, որպեսզի ուրիշները քո հետևից գան»:

Շատ չանցած՝ ոստիկանատուն են ժամանել ոստիկանական նոր ուժեր:

Իսմայիլի դիակը կառավարչատուն են տարել: Զաղաքի բժիշկ Աբրահամ Շատարկյանը, զննելով դիակը, հայտարարել է, որ Իսմայիլին սպանել են սվինով (իսկ սվինով կարող էին սպանել միայն թուրք ոստիկանները): Դա ակնհայտորեն հակասել է կառավարության տեսակետին, ըստ որի՝ Իսմայիլին սպանել էին հայերը:

Կառավարությունը հետամուտ չի եղել Պողոս Սարաֆյանի սպանության և ոճրագործ Իսմայիլի մյուս 11 ընկերները փնտրելու գործին:


Այդ դեպքից հետո անհայտ անձինք բժշկին վայր են նետել իր պաշտոնատան (բուժարանի) տանիքից ու սպանել՝ 40 տարեկանում:

1915թ. ձերբակալվել է նրա երիտասարդ որդին՝ Գևորգ Շատարկյանը:

Նրա մասին.

1. Գագանճեան Նիկողոս,, Յուշագրութիւն Եդեսիոյ 1895-ի Ձարդէն Մինչեւ 1915-ի Հերոսամարտը եւ Եղեռնը, Երեւան, 2004, 224 էջ:

2. Իսկահատեան Հարութիւն, Վկայարան Հայկական



ՅԵ
ՊԵ

**ԺԻՇՄԱՆՑԱՆ ՀՈՎԱՏՓ
ՀԱԿՈՒԲԻ (ՇԵՐԵՆՑ)**

Բժիշկ, գրող, հրապարակախոս, պատմավիպագիր:

Ծնվել է 1822թ. սեպտեմբերի 16-ին, Կ. Պոլսում:

Գրական ծածկանունը՝ Շերենց:

Միջնակարգ կրթությունն ստացել է Վենետիկի Մխիթարյանների վանքի վարժարանում:

Ուսումն ավարտելուց հետո հրաժարվել է հոգևորական կոչում ընդունելուց:

1837/40թ. վերադարձել է Կ. Պոլիս և ազգային-լուսավորչական գործունեությունն ծավալել:

1843թ. եկել է Կովկաս, այցելել Հայաստան

1848թ. ընդունվել է Փարիզի Սորբոնի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1853թ. ավարտել է Իտալիայի Պիզա քաղաքի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Ուսմանը զուգահեռ դասավանդել է Փարիզի Մուրատ-Ռափայեյան վարժարանում:

1848թ. Ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը և իտալական ազգային-ազատագրական շար-

ժումները մեծ ազդեցություն են ունեցել նրա լուսավորչական աշխարհայացքի վրա:

1849թ. նրա, Լահապետ Ռուսինյանի և այլոց ջանքերով Փարիզում կազմակերպվել է «Արարատյան ընկերությունը»:

1853թ. փետրվարին Կ. Պոլիս վերադառնալու ճանապարհին Միլանում ուստիկանությունը թյուրիմացաբար ձերբակալել է նրան, քանի որ դեմքով նման է եղել իտալական ազգային-ազատագրական շարժման ղեկավար Զուզեպպե Մաձձինիին:

1853թ. վերադարձել է Կ. Պոլիս և զբաղվել բժշկությամբ:

Միաժամանակ հանդես է եկել կրթա-դաստիարակչական բնույթի հրապարակախոսական հոդվածներով, մասնակցել ազգային սահմանադրության մշակմանը, պայքարել միջհամայնքային բաժանումների դեմ, դարձել հակահասունյան շարժման պարագլուխ:

1860-ական թվականների սկզբներին, լինելով Կ. Պոլսում կազմակերպված «Համազգային» և «Բարեգործական» ընկերությունների հիմնադիրներից մեկը, զբաղվել է հայ ժողովրդի ազատագրական շարժման հարցերով, հարել Հարություն Սվաճյան-Միքայել Լալբանդյան խմբին:

1862թ. Չեյթունի ապստամբության Նախօրեին մեկնել է Կիլիկիա՝ մշակութային, կրթական աշխատանք ծավալելու, գյուղատնտեսական դպրոց բացելու առաջադրանքով, սակայն քաղաքական հալածանքների ենթարկվելով, հարկադրաբար վերադարձել է Կ. Պոլիս:

1872թ.-ից ազգային կյանքին նվիրված հոդվածներով աշխատակցել է Մատթեոս Մամուրյանի «Արեւելեան մամուլ» թերթին:

1872թ. Գրիգոր Օտյանի միջնորդությամբ աշխատանքի է ընդունվել Կ. Պոլսի հիվանդանոցներից մեկում որպես բժիշկ:

1874թ. մահացել է կինը՝ իր խնամքին թողնելով 14-ամյա դստերը՝ Թագուհուն:

1875թ. գարնանը, ֆրանսիացի կաթոլիկ մայրապետների՝ քաղաքական հիմք ունեցող բանսարկությունների հետևանքով, հիվանդանոցի տնօրեն Հ. Տատյանը նրան հեռացրել է աշխատանքից, ինչը նրա հոգեկան տառապանքներն ավելի է ծանրացրել:

1876թ. Կ. Պոլսում նոր քաղաքական հալածանքների ենթարկվելով, ստիպված մեկնել է թուրքական կառավարության արքայապարտիցի մեկը հանդիսացող Կիպրոս կղզի և բնակչության ու

արքայալների բժիշկ աշխատել:

1878թ. դստեր հետ տեղափոխվել է Թիֆլիս և հայոց պատմություն դասավանդել Լեոսիայան դպրոցում:

Այդ ընթացքում, բնակչությանը բժշկական օգնություն ցուցաբերելու առաքելությամբ եղել է Վանում, Ալաշկերտում, Բասենում և այլուր:

Բժշկական և ազգային-հասարակական աշխույժ գործունեության զուգահեռ զբաղվել է գրական-ստեղծագործական աշխատանքով: Պատմական վեպերի, պատմվածքների, հրապարակախոսական հոդվածների հեղինակ է:

Նշանակալի դեր է կատարել հայ պատմա-ռոմանտիկական դասական վեպի ստեղծման ու զարգացման գործում:

Մահացել է 1888թ. փետրվարի 17-ին, Թիֆլիսում՝ 66 տարեկանում:

Աշխատությունները.

1. Թորոս Լեւոնի, Կ. Պոլիս, 1877, վեպ, որում երկրի անկախության վերականգնման երաշխիքը տեսնում էր ժողովրդի միասնության և կենտրոնաձիգ իշխանության հաստատման մեջ:

2. Երկունք Թ. դարու, Թիֆլիս, 1879, վեպ, որում համոզմունք է հայտնում, որ երկրի անկախության գլխա-

վոր հենարանը «Ժողովրդոց բանակն» է:

3. Թեոդորոս Ռշտունի, Թիֆլիս, 1881, վեպ, որում Ժողովրդին կոչ է արել դուրս գալ բռնագրավիչների դեմ:

Հիշյալ վեպերն ունեցել են բազմաթիվ հրատարակություններ Հայաստանում և սփյուռքում:

Նրա մասին.

1. Մեզպուրեան Արթո, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառոտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

2. Նանուկյան Ռ., Ծերենց, Երևան, 1961:

3. Նանուկյան Ռ., Ծերենց (հորված), Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979:

4. Ստեփանյան Գառնիկ, Կենսագրական բառարան, հ. Բ, Երևան, 1981:

5. Պարսամյան Ա., Բժիշկը, գրողը, մարդը..., «Նարեկ», Երևան, 1997, թ. 2 (67):

6. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

7. Հովակիմյան Բախտիար, Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005:

ՇԻՏԱՆՑԱՆ ՎԱՀԱՆ

Ծնվել է Տրապիզոնի

Նահանգի Սամսոն Նավահանգստում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

1914թ., Առաջին աշխարհամարտի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական դեղագործ ծառայել:

1915թ., զինվորական ծառայության մեջ սպանվել է Սեբաստիայում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած զրհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

3. Թեոդիկ, Յուշարձան Նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երևան, ապրիլ 24, 1985:

4. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

ՇՆՐՏՏԸՄՑԱՆ ՎԵՐԳԻՆ

Ծնվել է Լեռնային Կիլիկիայի Հաճըն քաղաքում:

Հաճընի հիվանդանոցում աշխատել է հիվանդապահուհի:

1920 թ. հոկտեմբերի 15-ին զոհվել է Հաճընի ինքնապաշտպանության

ժամանակ:

Նրա մասին.

Գրիգոր Գրաճեան, Ինկաւ Հաճընը, Կ'ապրի Հաճընցին, Պէ



ՇՄՎՈՆՑԱՆ ՍԱՄՎԵԼ ՍՏԵՓԱՆԻ

Բժիշկ մեծանուն, գիտական խորհուն, Իր կեանքն էր փառքով ու պատուով բեղուն, Յ'անմխիթար սուգի թողլով իր այրին, Վաթսունամեայ զոհ եղաւ չար բախտին, Խոր եղել վիշտը, կակիծն ընդհանուր, Տէ'ր, ծոցդ ընդունէ, իր հոգին մաքուր:

Բժիշկ Սամվել Շմավոնյանի տապանաքարի արձանագրուելը:

Ծնվել է հավանաբար 1856թ., Կոստանդնուպոլսի Հայնի թաղամասում:

Կ. Պոլսի հանրահայտ վերապատվելի Ստեփան Շմա-

վոնյանի որդին է:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում:

1872թ. մեկնել է ԱՄՆ, որտեղ միաժամանակ աշխատել է և ուսանել Կալիֆորնիայի համալսարանի բժշկական ֆակուլտետում: Համալսարանի 1500 ուսանողներից միակն է, որ ուսումն ավարտել է ոսկե մեդալով:

Մի քանի տարի աշխատել է զանազան բուժհիմնարկներում և հմտացել մասնագիտության մեջ:

1885թ. վերադարձել է Հալեպ, հիվանդ քրոջը՝ տիկին Ռեբեկա Սարգսյանին բուժելու նպատակով:

Քրոջ ապաքինվելուց հետո հաստատվել է Հալեպի Կաստ-Էլ-Հաջար թաղամասում, ուր բացել է իր սեփական հիվանդանոցը և աշխատել:

Կարճ ժամանակ անց մեծ համբավ է ձեռք բերել քաղաքի քրիստոնյա, մահմեդական և հրեա բնակչության շրջանում:

Ամուսնացել է պոլսեցի Աղավնի Արամյանի հետ: Չավակներ չեն ունեցել:

Աշխույժ մասնակցություն է ունեցել քաղաքում իրականացվող ազգային, եկեղեցական, կրթական և այլ ազգանպաստ միջոցառումներին: Նյութապես օգնել և բարոյապես քաջալերել է

1909թ. Հալեպի Ակ-յու թաղամասում դարմանատուն բացած սասունցիներին: Միաժամանակ աշխատելով այդ դարմանատանը, քննել է հիվանդներին, հսկել մաքրությանն ու կարգուկանոնին:

Եղել է ՀԲԸՄ-ի 1910թ. Հալեպում հիմնված մասնաճյուղի հիմնադիրներից մեկը և նրա վարչության ցմահ ատենապետը:

1915թ., հայերի տարագրության և Մեծ Եղեռնի ընթացքում, թողնելով գործերը, մի բարի հրեշտակի նման ընդունել, կերակրել ու հագցրել է քսորյալ ազգակիցներին:

Երբ վերապատվելի Ահարոն Շիրաճյանն ստանձնել է որբանոց-ապաստարան բացելու գործը, բժիշկը դարձել է նրա առաջին բարերարը՝ 200 հնչյուն ոսկի պատկանելի գումար նվիրաբերելով:

Հալեպի Ազիզիե թաղամասում ավետարանական էմմանուել եկեղեցու կառուցման համար նվիրաբերել է 300 օսմանյան ոսկի:

Լինելով ավետարանական համայնքի անդամ, մշտապես ներկա է եղել եկեղեցու կարևոր ժողովների և ջանացել խոսքով, խորհուրդներով ու գործով օգտակար լինել եկեղեցական, կրթական ու հասարակական միջոցառումներին:

1916թ. թուրքական կա-

ռավարությունը վտանգավոր է համարել ՀԲԸՄ-ի գործունեությունը:

1916թ. Ջեմալ փաշան հրաման է արձակել կախաղան բարձրացնել բժշկին, որպես վտանգավոր ընկերության պարագլխի, սակայն հայ և մուսուլման բնակչությունը միասնաբար դիմել է կառավարությանը և կարողացել մահապատժից փրկել սիրելի բժշկին:

1916թ., հազիվ բեկանված մահավճիռը, վարակվել է տիֆով և մի քանի օր անց մահացել՝ մոտ 60 տարեկանում:

Չնայած անկայուն քաղաքական իրավիճակին, հալածանքներին ու քսորին, բազմազգ թափորը թաց աչքերով է ուղեկցել բժշկի դագաղը:

Բժիշկ Սամվել Շմավոնյանը նախօրոք գիտակցել էր, որ իր դեմ մահվան վճիռ է արձակված: Երբ խնամում էր տիֆով հիվանդ քրոջը՝ Արուսյակ Մարգարյանին, շարունակ կրկնել է. «Ինքս պետք էի ըլլալ թիֆուսե վարակուողը, պիտի նախընտրեի հիւանդութեամբ մեռնիլ, քան թե կախաղանի վրայ»:

Նրա մասին.

Մարգարեան-Սինանեան Ա., Տոքթ. Սամուել Շմավոնեան, «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, Ե. գիրք, Հալեպ, 1996:

ՉԱՔՐՅԱՆ (ՉԱԳԸՐՅԱՆ) ԱՆԿԵԱՍ ԲԵՑ ԳՐԻԳՈՐԻ

Ծնվել է մոտավորապես 1870թ., Դամասկոսում:

1896թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Ռոդոսթոյի հիվանդանոցի բժիշկ է աշխատել:

Մահացել է 1915թ. փետրվարի 17-ին, ժանտախտից՝ մոտ 45 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

ՉԱՔՐՅԱՆ ՆԵՐՍԵՍ ՈՐԻ ԿԱՐԱՊԵՏԻ

Ծնվել է Բրուսայի նահանգի Նիկոմիդիայի գավառակի կենտրոն Նիկոմիդիա քաղաքում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

Մահացել է 1916թ. Կոնիայի բանտում, ժանտախտից:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:



ՉԻԼԻԿԻՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ)

Բժիշկ, գրող, բանաստեղծ, հասարակական գործիչ:

Ծնվել է 1885թ. փետրվարի 15-ին, Կոստանդնուպոլսին մոտակա, Մարմարա ծովի եվրոպական ափին գտնվող Սիլիվրի ավանում:

Նախնական կրթությունն ստացել է Սիլիվրիի Աքա-նազյան նախակրթարանում:

1889-1901թթ. սովորել է ամերիկացի միսիոներների Բրուսայի նահանգի Նիկոմիդիայի գավառակի Պարտիզակ ավանի Բյուրանիայի բարձրագույն վարժարանում:

1901-05թթ. սովորել է Կ. Պոլսի Պերպերյան վարժարանում:

Դպրոցական տարիներից զբաղվել է գրական գործունեությամբ:

Գիտության նկատմամբ սեր և հակումներ ունենալու շնորհիվ, Պերպերյան վարժարանի տնօրեն, վաստակավոր ուսուցչապետ Ռեթենու Պերպերյանի խորհրդով ու բարոյական օժանդակությամբ մեկնել է Շվեյցարիա՝ բժշկական կրթություն ստանալու:

1905-11/12թ. սովորել է Եվրոպայի բժշկական խոշորագույն կենտրոններից մեկում՝ Լոզանի համալսարանի բժշկական ֆակուլտետում:

Լավ տիրապետել է ֆրանսերենին:

Մի օր Լոզանի օրհորդաց վարժարանի մոտով անցնելիս պատահաբար տեսել է այդ վարժարանի սան, պրուսական զինվորական ազդեցիկ ընտանիքից սերած գերմանուհի Հելեն ֆոն Պրամմին (Յաննի Ապել) ու նրա գեղեցկությամբ հրապուրվել:

Յաննիի հետ Ռուբենին ծանոթացրել է վերջինիս ընկերը՝ եգիպտահայ Լևոն Ազնավուրյանը:

1910թ. Փարիզում / Լոզանում ամուսնացել է Յաննիի հետ:

1911-14թթ. Լոզանի մի հիվանդանոցում և մի դարմանատանը օգնական բժիշկ է աշխատել ու մասնագիտական հմտություններ ձեռք բերել:

1912թ. Լոզանում ծնվել է որդին՝ Լևոնը, իսկ 1914թ. Կ. Պոլսում դուստրը՝ Շամիրամը:

Ուսանողության շրջանից սկսած հետաքրքրվել է Հայրենիքի ազատության պայքարի գաղափարով: Եղել է ՀՅԴ անդամ:

1908-14թթ. եղել են նրա ստեղծագործական բեղուն տարիները:

Նրա բանաստեղծությունները և մյուս գրությունները լույս են տեսել Կ. Պոլսի «Սուրհանդակ», «Ազդակ», «Շանթ», «Հայ գրականութիւն», «Ազատամարտ», Վենետիկի Մխիթարյանների «Գեղունի», «Բազմավէպ», ինչպես նաև այլ պարբերականներում:

Կրել է Ռուբեն Սևակ գրական ծածկանունը:

1909թ. գարնանը, երբ Կիլիկիայում երիտթուրքական իշխանությունների կազմակերպած արյունահեղությանը 30 000 հայ զոհ դարձավ, Սևակը եղել է այն ազգային գործիչներից (Արշակ Զոպանյան, Անդրանիկ Օզանյան, Փարամազ և ուրիշներ), ով երիտթուրքական հեղափոխությունից ոգևորվածներ-

րին զգուշացրել է ահազանացող վտանգի մասին: Նա իր տազնապն արտահայտում էր ոչ միայն իր բանաստեղծություններում («Գիւղական եկեղեցիին մէջ», «Գիւղական գերեզմանին մէջ», «Վրեժին սերմնացանը», «Վերջին օրօր», «Վերջին հայերը»), այլև նամակներում ու հրապարակախոսական ելույթներում:

Դեռևս 1908թ. օգոստոսի 8-ին իր մի հրապարակային ելույթում ասել է.

«Ամբողջ Եւրոպայի մէջ աշխարհի էն շքեղ կեդրոններէն մինչև ամենամութ ու խաւարին անկիւնները ես չեմ տեսեր ու չեմ ալ կրնար հաւատայ, որ գտնուի տակաւին ՄԵԿ ՌԻՐԻՇ ԱԶԳ, որ ամէն օր ու ամէն վայրկեան ապրէր դերասանի ճշմարտապէս կեդծ ու գերեզմանօրէն ծիծաղելի այն կեանքը, որ դարերէ ի վեր մեր կեանքը եղաւ մեր՝ ստրկացած թրքահայերուս կեանքը... Տառապիլ ու ստիպուած ըլլալ ամենաերջանիկ կերպարանք մը ցոյց տալու... անպատուուի, բռնաբարուի, գետնաքարշ տապալիլ ու ստիպուած ըլլալ գոհութեան ջերմագին աղաղակներ բարձրացնելու... Ժպտիլ այնպիսի մէկ վայրկեանիդ, որ արիւն-արցունք պիտի պոռթկար աչքերէդ, մաղթանքի ճիչեր հանել կոկոր-

դէդ այն բռնակալ ձեռքին համար, որ զքեզ կը խեղդէ, մեռնիլ ու հոգեպէս մեռնիլ ու ապրիլ ձևացնել. ահա՛ դերասանական ահռելիօրէն կեդծ կեանքը, որ մերը եղաւ այնքան երկար տարիներ: Արդ, ինչպէ՞ս կ'ուզէք, որ այսպիսի պայմաններու մէջ ժառանգօրէն ու բնածինօրէն մեր ամենաանկեղծ յատկութիւնը մեր կեղծելը չ'ըլլար ու մեր բնական յարմարութիւնը՝ դերասանութիւնը»: Այնուհետև զգուշացնում էր. «Ներսի գաւառներու մէջ կոտորածի վախ կայ, կը լսէ՞ք ԿՈՏՈՐԱԾԻ ՎԱԽԸ», ու պահանջում էր «մարդկօրէն կատղիլ», այսինքն՝ զինված ազատագրական պայքար մղել:

1914թ. կնոջ հետ վերադարձել է Կ. Պոլիս և հաստատվել Բերա թաղամասում:

1915թ. դասախոսություններով հանդես է եկել Կ. Պոլսում՝ հայ բժիշկների կազմակերպած հիվանդապահության դասընթացում:

Երազել է Կ. Պոլսում բժշկական գիտահանրամատչելի պարբերական հիմնել:

Բազմաթիվ հողվածների, պատմվածքների, հանրամատչելի գրույցների, քնարական խորհրդածությունների, բանաստեղծությունների և այլն հեղինակ է:

Թարգմանել է ֆրանսիացի բանաստեղծ և հասարակական գործիչ Լըկոնտ դը Լիլի և Հայնրիխ Հայնեի բանաստեղծություններից:

1915թ., երբ արդեն սկսվել էր Առաջին համաշխարհային պատերազմը, զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել Մաքրիգյուղի (Մագրիքենոյ) զորամասում:

1915թ. ապրիլի 11 (24)-ին, լինելով զինվորական ծառայության մեջ, ձերբակալվել և բանտարկվել է Կ. Պոլսի կենտրոնական բանտում, ապա արքայազն Չանդրը:

Անունը փորագրվել է Չանդրըրի բանտում հավաքված համրիչի 99 հատիկներից մեկի վրա:

Չանդրըրում բուժել է թուրք ավազակապետ (չեթեջի) Արաբաջի Իսմայիլի աղջկան: Իսմայիլը նրան հորդորել էր իսլամություն ընդունելով փրկվել սպառնացող վտանգից, սակայն բժիշկը հրաժարվել է այդ խորհրդին հետևելուց:

Չանդրըրի չեթեզ փոխկառավարիչը, որ նրա բարեկամն էր, անզոր պատասխանել է, «Ես չեմ կրնար Պոլսեն եկած հրաման մը չգործարդել»:

Ռուբենին ազատելու համար Գերմանիայի արտգործնախարարությանը, Կ. Պոլսի և Սոֆիայի նրա դեսպաններ-

րին, Լոզանի հյուպատոսին, Կ. Պոլսում դեսպան Հանս ֆոն Վանգենհայմին բազմաթիվ դիմումներ են ուղարկել նրա աները՝ գերմանական բանակի պահեստի սպա Ֆրանց Ապելն ու կինը՝ Հելեն Ապել-Չիլիսկիրյանը: Բոլորն էլ՝ ապարդյուն:

1915թ. օգոստոսի 12 (25)-ին հեռագրել է կնոջը, թե Դանիել Վարուժանի հետ գտնվում է Այաշի բանտում:

1915թ. օգոստոսի 13 (25/26)-ին, դեպի Այաշ արքայի ճանապարհին՝ Չանդրըր և Կալեջիկ (Գալայճըր) գյուղերի միջև, Չանդրըրից կառքով 6 ժամ հեռու գտնվող Թյունե (Թյունայ, Թյունեյ) կոչված վայրում, իր 4 բախտակից ընկերների հետ (այդ թվում Դանիել Վարուժանն ու Սիամանթոն), թուրք չեթեների կողմից սպանվել է քարերով ու յաթաղաններով խոշտանգումների ենթարկվելով՝ 30 տարեկանում:

Ըստ Գոնիայի պատերազմական ատյանում կառույցի չասանի տված վկայության՝ բժիշկը եղել է վերջին սպանվողը:

1915թ. հոկտեմբերին կինը երեխաների հետ տեղափոխվել է Լոզան՝ հոր մոտ:

1920թ. ընտանիքով տեղափոխվել են Փարիզ:

Հետագայում Ռ. Սևակի գործերը մատենաշարի ձևով հրատարակել է եղբո-

րորդին՝ Հովհաննես Չիլիսկիրյանը, որ աջակցել է նաև նրա մասին բազմաթիվ հոդվածների ու գրքերի հրատարակմանը: Հովհաննեսը հիմնել է Ռուբեն Սևակի անվան մրցանակ, որին արժանացել են տասնյակ հեղինակներ, այդ թվում՝ հալեպահայ բժիշկ-գրող Թորոս Թորանյանը՝ «Իմ Ռուբեն Սևակը» գրքի համար: Հ. Չիլիսկիրյանը Ֆրանսիայի Լիցցա քաղաքում հիմնել է Ռ. Սևակի տուն-թանգարան, որտեղ 1985թ. մեծ շուքով նշվել է բանաստեղծի ծննդյան 100-ամյակը:

1995թ. Ռուբեն Սևակի անունով է կոչվել Երևանի թիվ 151 դպրոցը, որտեղ գործում է Ռուբեն Սևակի թանգարան-սրահ, իսկ բալուստեղադրված է նրա կիսանդրին, որի բացման պատիվը ընձեռվել է դստերը՝ Շամիրամին: Նույն դպրոցում 2007թ. նոյեմբերին կայացել է հալեպահայ բժիշկ-գրող Թորոս Թորանյանի «Իմ Ռուբեն Սևակը» գրքի շնորհանդեսը, որին մասնակցել է նաև 93-ամյա Շամիրամ Չիլիսկիրյան-Սևակը:

Աշխատությունները.

1. Բաժանման խօսքեր, «Մասիս» հանդես, Կ. Պոլիս, 1905, թ. 24;

2. Կարմիր գիրք (Կիլիկեան երգեր), Բանաստեղծությունների ժողովածու նվիր-

ված 1909թ. Կիլիկիայի հայոց կոտորածներին, 1910:

3. Վերջին հայերը:

4. Լեմանի լիճը:

5. Բժիշկին գիրքեն փրցուած Էջեր, պատմվածաշար, Կ. Պոլիս «Ազատամարտ» թերթ:

6. Բժիշկին գիրքեն փրցուած Էջեր եւ քերթուածներ, Փարիզ, 1946:

7. Էսէյներ, Երևան, 1955, 198



Նրա մասին.

1. Գաբամաճեան Ս., Հայաստանի կաղանդէքը: Մեծ Եղեռնի զոհերը իրենց պատկերներով, Կ. Պոլիս, 1919:

2. Թեոդիկ, Յուշարձան ապրիլ 11-ի, Կ. Պոլիս, 1919:

3. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

4. Պալաքեան Գրիգորիս Ժ. վրդ., Հայ գողգոթան, Վիեննա, 1922:

5. Չարեւանդ Ս., Անցորդի տպաւորութիւններ, Նիւտորք, 1924:

6. Կարոյեան Գասպար,

Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

7. Հատիտյան Գ., Ռուբեն Սևակ, Երևան, 1959:

8. Ամատյան Գ., Հուշեր նահատակների մասին, «Սովետական գրականություն», Երևան, 1965, թ. 4:

9. Սահակյան Լիլիկ, Ոճրագործները չխնայեցին նույնիսկ մարդու կյանքը փրկողներին, «Առողջապահություն», Երևան, 1965, թ. 4:

10. Զրբաշյան Էդուարդ, Ռուբեն Սևակ, Երևան, 1966:

11. Նորենց Վաղարշակ, Հուշեր և արձագանքներ, Երևան, 1968:

12. Կիրակոսյան Վլադիմիր, Ռուբեն Սևակ (Կյանքը և ստեղծագործությունը), Երևան, 1972:

13. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երևան, ապրիլ 24, 1985:

14. Թոփչյան Ալեքսանդր, Բժիշկ բանաստեղծը, «Առողջապահություն», Երևան, 1985, թ. 6:

15. Կիրակոսյան Վլադիմիր, Ապրելու երջանկության երգիչը, «Սովետական Հայաստան», Ե., 1985, թ. 2:

16. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

17. Պալաքյան Գրիգորիս Ծ.

Վրդ. Հայ գողգորթան, Երևան, 1991:

18. Միքայելյան Վարդգես, Ապարդյուն ջանքեր Ռուբեն Սևակին փրկելու թուրքական յաթաղանից, «Երկիր», Երևան, 18-03-1994:

19. Գալոյան Սերգեյ, Նոր բացահայտում, «Լրագիր», Երևան, 23-04-1994:

20. Զիլինկիրեան Յովհաննես, Գայգերական Գերմանիոյ մեղսակցութիւնը եւ... ապերախտութիւն, «Նպատակ», Երեւան, 28-10-1994:

21. Զիլինկիրեան Յովհաննես, «Բանաստեղծ եւ բժիշկ Ռուբեն Սևակը», «Նպատակ», Երևան, 1995, թ. 2:

22. Հայկական հարց, հանրագիտարան, Երևան, 1996:

23. Վարդանյան Ս., Հայաստանի բժշկության պատմություն, Ե., 2000:

24. Փաշայան Ա., Հայ մշակույթի վաղամեռիկ գործիչներ, Ե., 2002:

25. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողք և վկայք խաչի, Երևան, 2002:

26. Հովակիմյան Բախտիար, Հայոց ցեղասպանության նահատակ գործիչների ծածկանուններ, Ե., 2002:

27. Փամուլքյան Գևորգ, Հայերը իրենց կենսագրականներով (թուրքերեն), Ստամբուլ, 2003:

28. Թորանեան Թորոս, Իմ Ռուբեն Սեւակը, Երեւան,

2007:

29. Թյուրյունջյան Պ., «Հայրս մշտապես ներկա է իմ կյանքում ու գործում», «Ազգ», Ե., 01-12-2007:

30. Ավագեան Կարինե, «Զանդրորի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդես Ամսօրեայ», 2008, հ. 1-12

- «Վարդէրը մեռան.

Վարդէրը մեռան,

Իրենց բիւր-բիւրան,

Յօղիկին վրան,

Վարդէրը մեռան,

Վարդէրը մեռան:

«Արիւնոտ, մանրիկ,

Ոտներըս բոպիկ

Դիակներու վրան

Դողդոջ կ'երերան:

Վարդէրը մեռան,

Վարդէրը մեռան:

«Գթա՛ ինձ, Աստուա՛ծ,

Մագերըս ցրուա՛ծ

Կ'երթամ տարածամ,

Կ'երթամ ու կու լամ.

«Ո՛ր է իմ վարդը»,

«Ո՛ր է իմ վարդը»:

Կ'ուզէի գլխո՛ւն

Տակ դնել անհո՛ւն

Գեհենը կուրծքիս:

Թող այսպէս հոգիս,

Մեռնէ՛ր գուրգուրանքո՛վ,

Իր դիակին քո՛վ...»:

Ռուբեն Սևակ



ԶԻՆԵՆԿԻՐԵԱՆ ՍԱՐԳԻՍ Գ.

Ծնվել է 1884/85թ. հունվարի 25-ին, Մարմարա ծովի ասիական ափի Բանդրմա (Պանտերմա) քաղաքում, հայ առաքելական ընտանիքում:

1899թ. ավարտել է ծննդավայրի թաղային վարժարանը:

1899-1902թթ. սովորել է ամերիկացի միսիոներների Բրուսայի նահանգի Նիկոմիդիայի գավառակի Պարտիզակ ավանի Բյուրանիայի բարձրագույն վարժարանում:

1902-06թթ. ուսանել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետում:

1908-09թթ. վիրաբուժության և մանկաբարձության մեջ կատարելագործվելու նպատակով հաջորդաբար եղել է Փարիզի և Լոնդոնի բժշկական խոշորագույն հաստատություններում:

1909թ. վերադառնալով Կ. Պոլիս, վիրաբույժ և մանկաբարձ է աշխատել:

1914թ. դրությամբ եղել է անվանի և հարգված բժիշկ Կ. Պոլիսի բազմազգ բնակչության շրջանում:

Գրական-ստեղծագործական աշխատանքներով աշխատակցել է «Մանգումեի էֆքեար»-ին և պրոֆ. Հակոբոս Ճեճիզյանի հրատարակած «Բիւրական»-ին, իսկ «Բժիշկ»-ի հրատարակումից սկսած՝ եղել է նրա կանոնավոր աշխատակիցը:

Գրել է ընկերային և առողջապահական բնույթի հոդվածներ, որոնք ընթերցողները մեծ հետաքրքրությամբ են կարդացել:

Գոշիխարի թաղապետական բժիշկ է աշխատել:

Մահացել է 1916թ., Գոշիխարում, ժանտախտից՝ 31 տարեկանում:

Այլ տվյալով՝ սպանվել է Տեր Չորի ճանապարհին:

Աշխատությունները.

1. Առողջապահութիւն կամ հիւանդ չըլլալու արուեստը, Առողջապահական դասագիրք նախակրթարանների համար:

2. Սիրոյ գոհը, Վահան Ղազարեանի «Բժշկական եւ առողջապահական տարեցոյց» գրքում, Կ. Պոլիս, 1914:

Նրա մասին.

1. Ղազարեան Վահան, Բժշկական եւ առողջապահ-

ական տարեցոյց, Կ. Պոլիս, 1914:

2. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

3. Քեստենեան Հրաչ, Պէյրուքի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ եւ Մեծ Եղեռնին Նահատակուած Հայ Բժիշկներ, “Ազդակ”, 01-11-2012

ՉԻԼԻԿԻՅԱՆ - ԱՄՐԱԿՈՒՄՅԱՆ ՄԱՐԻԱՍ

Թեթև կաղալու պատճառով նրան կոչել են «Թիմուրլենկ» մականունով:

Եղել է Եդեսիայի Կարմիր խաչի սյուններից մեկը:

Եդեսիայի հերոսամարտի ընթացքում նշանավոր է դարձել ոչ միայն որպես տիպար գթության քույր, այլև՝ մարտիկների խիզախ գործընկեր:

Երբ թուրքերի դիրքերից ճերմակ դրոշակ պարզվեց և հայտարարվեց, թե Ֆախրի փաշան երկու հոգի է ուզում բանակցություն վարելու համար, Մարիամը խիզախորեն առաջ է անցել, որին հետևել է մտերիմ ընկերուհի Ազնիվ Միրզոյանը: Երբ նրանք հասել են թուրք փաշայի մոտ, վերջինս շատ հարգալիք վերաբերմունք ցույց տալով ասել է. «Չավակներ՝ ու, ձեր

քաջության վրա հիանում եմ: Ցավում եմ, որ ստիպված եմ կռվել ձեզ պես հերոսների և հերոսուհիների դեմ: Սակայն այլ կերպ չենք կարող վարվել պետությանը անհնազանդ լինողների հետ: Խղճում եմ ձեր ժողովրդին: Ցանկանում եմ, որ վերադառնաք ու խոսեք ձեր հրամանատարի հետ: Դուք ձեր ունեցած ուժերով ավելին չեք կարող անել մի բանակի դեմ»:

Երկու հերոսուհիները փաշային պատասխանել են. «Շատ լավ եք խոսում: Սակայն մոռանում եք, որ կռիվը մե՛նք չենք սկսել: Մեր երիտասարդներին ու առաջնորդին տարաք սպանեցիք: Ձայն չհանեցինք: Բնչ որ պահանջեցիք՝ տվեցինք: Այլևս ի՞նչ եք ուզում մեզանից: Ձեր կատարած անգթությունների փոխարեն, գերի ընկած թուրք զինվորներին պահում ենք առանց վնաս հասցնելու: Դադարեցրե՛ք հարձակումները և մենք դարձյալ հավատարիմ հպատակներն ենք կառավարության»:

Թուրք փաշան չի ընդունել նրանց առաջարկը, սակայն հայ հերոսուհիների անվեհեր ու կորովի կեցվածքը խորապես տպավորել է նրան:

Ամբողջ հերոսամարտի ընթացքում Մարիամը կռվել է մարտիկներին հավասար, խնամել վիրավորներին,

մխիթարել հուսահատներին:

Հերոսամարտից հետո ժողովրդի բեկորներին առաջնորդել է դեպի ապահով թաքստոցներ կամ պատուպարել օտար հաստատություններում:

Շատերի պես Մարիամը ևս ձերբակալվել է ու դատապարտվել 101 տարվա բանտարկության:

1918թ., Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո ազատվել է բանտից:

Այնուհետև տեղափոխվել է ԱՄՆ և հետագայում ամուսնացել Ամբակումյանի հետ:

Նրա մասին.

1. Սահակեան Արամ, Դիւցազնական Ուրֆան եւ իր հայրորդիները, Պէյրուք, 1955:

2. Չէյթլեան Սոնա, Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մէջ, Անթիլիաս, 1968:

ՉԻՉԵԿՅԱՆ ԱՐԹԻՆ ԱՐԱՄՅԻՍ

Ծնվել է 1881թ., Տրապիզոնի նահանգի Կիրասոնի (Կիրեսոնի) գավառի կենտրոն Կիրասոն քաղաքում:

Քեստենեանի աղբյուրում հիշատակվում է Չիքիճյան Արամայիս Ա.:

1902 /10թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան հա-

մալսարանի բժշկական ֆակուլտետի դեղագործական բաժինը:

1910-14թթ. Կիրասունում ունեցել է սեփական դեղատուն և դեղագործ աշխատել:

Սպանվել կամ մահացել է 1915թ. Թուրքիայում իրագործված Մեծ եղեռնի ընթացքում, 34 տարեկանում:

Նրա մասին.

1. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

2. Զեստենեան Հրաչ, Պէրոլթի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ եւ Մեծ Եղեռնին Նահատակուած Հայ Բժիշկներ, “Ազդակ”, 01-11-2012

ՉՈՒՆՅԱՆ (ՄԱՉՄԱՆՅԱՆ) ՍԱՀԱԿ

Ծնվել է Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառի Ակն գավառակի կենտրոն Ակն քաղաքում:

Ինքնակրթությամբ ձեռք է բերել բժշկական հմտություններ և բժիշկ աշխատել:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ օսմանյան կառավարությունը Ակնի ժամկոչյանների ապարանքը և

այլ կարևոր շենքեր հայերից խլելով վերածել է խղճուկ հիվանդանոցների, որոնց բժշկապետ է նշանակվել Ակնի դիպլոմավոր քաղաքային բժիշկ, իր տգիտության հետևանքով շատ զոհեր տված Մահմուդ բեյը: Լուրջ և վտանգավոր հիվանդ լինելու դեպքում, Մահմուդ բեյը դիմել է իրենից ավելի կարող ու ձեռնահաս ինքնուս բժիշկ Սահակին:

1915թ. ձմռանը, քաղցած, ցրտահարված, հիվանդ ու վիրավոր 25 ակնցի հայ զինվորներ, այդ թվում Սահակը, գիշերով լքել են զինվորական ծառայությունը, վերադարձել Ակն ու պատուպարվել մոտակա լեռան քարայրներում:

Դասալիք ընկերների հետ միասին ձերբակալվել է նաև Սահակը, որ սպանվել է 1915թ. Գյումուշ-Մադենում մյուս ձերբակալված ընկերների հետ միասին:

Նրա մասին.

1. Պարսամեան Մկրտիչ, Ակն եւ ակնցիք, Փարիզ, 1952:

2. Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի նահանգ, Երևան, 2004:

ՉՈՂԱՆՅԱՆ ԱՆԻԿՏՈՍ

Ծնվել է 1885/89թ., Կ. Պոլսի Սամաթիա թաղամասում / Կարինի նահանգի Երզնկա քաղաքում:

1912թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Բժիշկ է աշխատել:

Սպանվել է 1915թ., Խարբերդում 28 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէրոլթ, 1965:

3. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորակաւնութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

ՉՈՐԼՅԱՆ ՍՏԵՓԱՆ

Ծնվել է 1854թ. մարտի 13-ին, Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի Մունջուսուն գյուղում:

Նախնական կրթությունն ստացել է ծխական դպրոցում:

Մեկնել Թուրքիայի եվրոպական մասում ապրող ազգականի մոտ և շարունակել ուսումը:

1873-76թթ. ուսանել է Կ. Պոլսի Օսմանյան դեղագոր-

ծական վարժարանում:

1876թ. վերադարձել է ծննդավայր և դեղատուն հիմնել:

Շուտով դարձել է գյուղի հմուտ դեղագործն ու բժիշկը:

1880թ. փոխադրվել է Կեսարիա և Ուզուն Չարշըում («Երկար շուկա») դեղատուն բացել:

Կարճ ժամանակից նվաճել է տեղի բնակչության համա-կրանքը:

1900թ. տեսնելով Կեսարիայի Ավետիսականների բեմը դատարկ, կիրակի օրերը քարոզներ է տվել և հավատացյալ ժողովրդին գոհացրել:

1903թ. անբասիր գործունեության համար, երախտապարտ հավատացյալներից ոսկեզօծ Աստվածաշունչ է նվեր ստացել:

1907-08թթ., Թալասի ամերիկյան հիվանդանոցի դեղատանը դեղագործ է աշխատել և օգնել բժիշկ Դադրին:

1910թ. մեկնել է Եգիպտոս և մեկ տարի մնացել Ալեքսանդրիա քաղաքում եղբոր մոտ:

1911թ. վերադառնալով Սեթեն Էոնյու, Իսպենջյան դեղատան տնօրեն է աշխատել:

Հաճախ գնացել է մոտակա գյուղերը՝ քարոզելու, բժշկելու, աղքատներին

դեղ բաժանելու:

1913թ. գնել է Բեորեկ-
ջի Չարշըսըում («Գաթայա-
գործների շուկա») Գայթաք-
ճյաններին պատկանած
դեղի մթերանոցը:

1915թ. տեղահանության
ժամանակ, կառավարության
հրամանով, նրա ընտանիքն
ու ազգականները չեն աք-
սորվել:

Պատերազմի ընթացքում
աշխատել է Կեսարիայում:

1917թ. հուլիսին Մուն-
ջուսուն-Կեսարիա ճանա-
պարհին գողերը կողոպտել
և դանակահարել են նրան:
Մահից փրկվել է հրաշքով:

1920թ. վերջերին ձերբա-
կալվել է որպես հեղափոխա-
կան և բանտարկվել ի թիվս
մի շարք ակնառու անձանց:

Մեկ ամսից ազատ է ար-
ձակվել՝ առողջությունը իս-
պառ քայքայված և հիվանդ
վիճակում:

1921թ. մայիսի 15-ին մա-
հացել է՝ 67 տարեկանում:

Կինը և երեք աղջիկները
տեղափոխվել են Ալեքսանդ-
րիա:

Նրա մասին.

Ալաոյաճեան Արշակ,
Պատմութիւն հայ Կեսարիոյ,
Բ. հատոր, Գահիրէ, 1937:

**ՉՈՐՊԱՃՅԱՆ ԱՐՇԱԿ ԿԻՐԱ-
ՎՈՍԻ**

Ծնվել է մոտ 1880թ., Հա-

լեպի նահանգի Մարաշի գա-
վառի կենտրոն Մարաշ քա-
ղաքում՝ Հաջի Կիրակոսի
ընտանիքում:

1902թ. ավարտել է Մարա-
շի ազգային վարժարանը:

1902-03թթ. դասավանդել
է Մարաշի ազգային վարժա-
րանում:

1904թ. ավարտել է ամերի-
կացի միսիոներների Այնթա-
պի Կենտրոնական Թուրքի-
այի քոլեջը:

1907թ. ավարտել է Բեյրու-
թի Ամերիկյան համալսարա-
նի բժշկական ֆակուլտետի
դեղագործական բաժինը:

1907թ. Եգիպտոս է տեղա-
փոխվել:

Լինելով ՀՅԴ Կիլիկիայի
շրջանի եռանդուն անդամ-
ներից մեկը, 1907թ. ուղարկ-
վել է ժնև՝ ՀՅԴ «Դրօշակ»
պաշտօնաթերթի խմբագ-
րություն:

1908թ. օսմանյան սահ-
մանադրության վերահաս-
տատումից հետո Մարաշ է
վերադարձել:

Ադանայի կոտորածի
ժամանակ, որպես հեղա-
փոխական-կազմակերպիչ,
Մարաշի Պատերազմական
ատյանը նրան դատապար-
տել է (մահվան?):

Կարողացել է Թուրքիայից
Եգիպտոս փախչել:

1918թ. փորձել է Թուրքիա
վերադառնալ, սակայն տես-
նելով Ադանայի ու Կիլիկիա-
յի պայքարները, ջարդերը և

հայաթափումը, ստիպված է
եղել մեկնել Եգիպտոս, ուր
դեղագործությամբ է զբաղ-
վել:

«Մարաշ» գրքի հրատա-
րակությանը նպաստել է ՀՅԴ
գործունեության մասին տե-
ղեկություններ տալով:

Նրա մասին.

Գալուստեան Գրիգոր Հ.,
Մարաշ կամ Գերմանիկ եւ
հերոս Չէյթուն, Նիւ Եորք,
1988:

ՉՐԱՔՅԱՆ ՏԻԳՐԱՆ

Ծնվել է Տրապիզոնի նա-
հանգի կենտրոն Տրապիզոն
քաղաքում:

Դեղագործական կրթու-
թյուն է ունեցել և դեղագործ
աշխատել:

Մահացել է 1914թ. նոյեմ-
բերի 26-ին, Կարինի կենտ-
րոնական հիվանդանոցում,
ժանտախտից:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած
զոհերը, ցուցակագրուած
վաւերական փաստերով, Կ.
Պոլիս, 1919:

**ՊԱԳ(Գ)ԱԼՅԱՆ ՆՇԱՆ
ՀՈՎՍԵՓ**

Ծնվել է 1872թ., Տիգրա-
նակերտում, հայ առաքելա-
կան ընտանիքում:

Ավարտել է Այնթապ քո-
լեջը և ստացել «պսակավոր
արվեստից» վկայական:

1914թ. ավարտել է Բեյ-
րութի Ամերիկյան համալ-
սարանի բժշկական ֆակուլ-
տետը:

Եղել է ՀՅԴ անդամ:

1914թ. Առաջին աշխար-
համարտի ժամանակ զորա-
կոչվել է օսմանյան բանակ
և Խնուսի զինվորական հի-
վանդանոցում զինվորական
բժիշկ ծառայել:

Բուժելով և ինսամելով հի-
վանդանոցի զինվորներին,
հատուկ հոգատարություն
է ցուցաբերել հայերին, ինչը
թուրք բժշկապետին դուր չի
եկել:

1915թ., սպանվել է իր
պաշտոնակից բժշկապետի
կողմից Խնուսում, 43 տարե-
կանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած
զոհերը, ցուցակագրուած
վաւերական փաստերով, Կ.
Պոլիս, 1919:

2. Մեզպուրեան Արթօ, Հայ
եւ ծագումով հայ բժիշկներ:
Այբուբենական համառօտ
անուանացանկ (1688-1940),
Իսթանպուլ, 1940:

3. Յուշամատեան Մեծ
Եղեռնի (1915-1965), պատ-
րաստեց Գերսամ Ահարոնե-
ան, Պէյրուք, 1965:

4. Թեոդիկ, Յուշարձան Նա-
հատակ մտաւորականութե-
ան, Բ. տպագրութիւն, Երե-

լան, ապրիլ 24, 1985:

5. Հայրապետյան Վ., Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Ե., 1990:

6. Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ալբոմ-ատլաս, Բ. հատոր, Գոյամարտ, 1914-1925, Լոս Անճելըս, 2001:

7. Քեստենեան Հրաչ, Պէյրուքի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ եւ Մեծ Եղեռնին Նահատակուած Հայ Բժիշկներ, “Ազդակ”, 01-11-2012

ՊԱՉՊԱՉՅԱՆ ՎԱՀՐԱՄ

Ծնվել է 1890թ., Բրուսայի նահանգի Ադաբազար քաղաքում:

Եղել է բժշկական վարժարանի ուսանող:

Մահացել է աքսորում:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

ՊԱՆՅԱՆ ԵՐՎԱՆԴ

Ծնվել է մոտ 1893թ., Սիվրիհիսարում:

Ուսանել է բժշկական վարժարանի Ե դասարանում (5-րդ կուրսում):

1915թ. խեղդամահ է արվել Եփրատի մեջ՝ մոտ 22 տարեկանում:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

ՊԱՆՅԱՆ ՄԻՍԱԲ

Ավարտել է Անկարայի նահանգի Կեսարիայի գաւառի Էվերեկ գաւառակի կենտրոն Էվերեկի դեղագործական դպրոցը:

Սպանվել կամ մահացել է 1915թ. հունիսի 10-ին:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՊԱՆՅԱՆ ՄԿՐՏԻՉ ԿԻՐԱԿՈՍ

Ծնվել է 1883թ. Խարբերդում:

1902/10 թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետի դեղագործական բաժինը:

1910-14 թթ. աշխատել է Տիգրանակերտի և Վանի Ամերիկյան հիվանդանոցներում:

Սպանվել է Թուրքիայում իրագործված Մեծ եղեռնի ընթացքում:

Նրա մասին.

1. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահու-

թյան ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

2. Քեստենեան Հրաչ, Պէյրուքի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ եւ Մեծ Եղեռնին Նահատակուած Հայ Բժիշկներ, “Ազդակ”, 01-11-2012

ՊԱՅՐԱՍՅԱՆ ՀԱԿՈԲ

Ծնվել է Հալեպի նահանգի Բիլիսի գաւառակի կենտրոն Բիլիս քաղաքում:

Ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել:

1917թ. Պաղեստինի ռազմաճակատում գերի է ընկել անգլիացիների ձեռքը:

1918թ. թուրքերի պարտությունից և պատերազմի ավարտից հետո ազատվել է գերությունից ու Բիլիս վերադարձել:

1918-22թթ. Բիլիսում բժիշկ է աշխատել:

Նրա մասին.

Պայրամեան Ալիշան Ա., Կիլիզա. Հայկական Բիլիս, Երեւան, 2001:

ՊԱՊԻԿՅԱՆ ԹՈՐՈՍ ԱՇՈՏԻ

Ծնվել է 1881/87թ., Սեբաստիայի նահանգի Սեբաստիա քաղաքում:

Նախնական և միջնակարգ կրթությունն ստացել է Հիսուսյան միաբանության Սեբաստիայի վարժարանում:

1906-10թթ. ուսանել է Բեյրութի Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետում:

Ուսանողության վերջին տարում ամուսնացել է մարաշցի հայտնի վաճառական Հազարապետյանի աղջկա հետ:

1910թ. աշնանը վերադարձել է Սեբաստիա և բժիշկ աշխատել:

1914թ., Առաջին աշխարհամարտի սկսվելուն պես զորակոչվել է օսմանյան բանակ և հոսպիտալում զինվորական բժիշկ ծառայել:

1915թ. հունիսին, ի թիվս հազարավոր հայ հայրենակիցների, ձերբակալվել ու բանտարկվել է:

1915թ. սպանվել է Տրապիզոնից դուրս՝ տարագրության ճանապարհին:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

3. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուս, 1965:

4. Թէոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

5. Յարման Արսէն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

6. Խաչատրյան Լ. և ուրիշ., Յուշակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:

ՊԱՐՈՆ - ՎԱՐՁԱՆ ԱՐԱՍԱՅԻՍ

Ծնվել է 1880թ., Տրապիզոնի նահանգի Կիրասոնի գավառի Կիրասոն քաղաքում:

Դեղագործ Պարոն-Վարդյան եղիայի եղբայրն է:

Ավարտել է Բեյրութի Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետի դեղագործական բաժինը:

Կիրասոնում եղբայրներով սեփական դեղատուն են ունեցել և դեղագործ աշխատել:

1915թ. թուրքերը կողոպտել են դեղատունը, իսկ եղ-

բայրներին սրախողխող արել Կիրասոնից դուրս:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

ՊԱՐՈՆ - ՎԱՐՁԱՆ ԵՐԻԱ (ԵՐԻՇԵ)

Ծնվել է 1880թ., Տրապիզոնի նահանգի Կիրասոնի գավառի կենտրոն Կիրասոն քաղաքում:

Դեղագործ Պարոն-Վարդյան Արամայիսի եղբայրն է: Ավարտել է Բեյրութի Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետի դեղագործական բաժինը:

Կիրասոնում եղբոր հետ միասին սեփական դեղատուն են ունեցել և դեղագործ աշխատել:

1915թ., թուրքերը կողոպտում են դեղատունը, իսկ եղբայրներին սրախողխող անում Կիրասոնից դուրս: Եղիան սպանվում է 35 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

ՊԱՐՈՆ - ՎԱՐՁԱՆ (ՊԱՐՈՆ-ՎԱՐՁԱՆ) ՎԱՀԱՆ

Ծնվել է 1880թ., Տրապիզոնի նահանգի Օրդու քաղաքում / Տրապիզոնի նահանգի Կիրասոնի գավառի կենտրոն Կիրասոն քաղաքում:

Մանուկ հասակում զրկվել է հորից: Մայրը երկրորդ անգամ ամուսնացել է Բրուսայի ազգային վարժարանի անվանի ուսուցիչ Կ. Երեցյանի հետ:

Նախնական և երկրորդային կրթությունն ստացել է Բրուսայի ազգային վարժարաններում:

1908-12թթ. Կ. Երեցյանի խորհրդով ու Նյուրթական աջակցությամբ ուսանել է Բեյրութի Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետում:

1912թ. կարճ ժամանակով իր ծննդավայրն է այցելել:

1912-14թթ. Բրուսայի շրջանի Ենիշեհիր գյուղի բժիշկ է աշխատել: Այստեղ ամուսնացել է և տուն-տեղ դրել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորա-

կան բժիշկ ծառայել:

1915թ. ապրիլին ձերբակալվել է և Տիգրանակերտի բանտը աքսորվել:

Նրան և մի այլ հայ բժշկի գրպարտել են Տիգրանակերտի բանտում բազմաթիվ հայ բանտարկյալների՝ բժավոր տենդից մահվան համար, մինչդեռ նրանց բոլորին թուրքերն սպանել էին:

1915թ., Տիգրանակերտի բանտում տանջանքների ու չարչարանքների ենթարկվելուց հետո սպանվել է արունարբու նահանգապետ, չերքեզ դոկտոր Ռեշիդ բեյի հրահանգով՝ 35 տարեկանում:

Ըստ գերմանացի միսիոներ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի հայտնած տեղեկության՝ բժիշկը թուրք չեթեների ձեռքով սպանվել է Տիգրանակերտից Մելիտինե աքսորվելու ճանապարհին, ի թիվս 10 ականավոր հայերի:

Վահանի խորթ եղբայրը՝ Հմայակ Կ. Երեցյանը, փրկվելով տարագրության գողոթայից, բնակություն է հաստատել Ֆրանսիայում: Զույրը՝ Բեթարիսը՝ բնակվել է Իտալիայում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Կարոյեան Գասպար,

Մեծ Եղեռնի Նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

3. Յովակիմեան (Արշակունի) Յովակիմ, Պատմութիւն Հայկական Պոնտոսի, Պէյրուս, 1967:

ՊԱՐՈՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

Ծնվել է 1877թ., Կ. Պոլսում / Ադրիանապոլիս քաղաքում:

1903թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և 3-րդ զորաբանակի Սեբաստիայի Աղվանիս հիվանդանոցում զինվորական բժիշկ ծառայել՝ կապիտանի աստիճանով:

1917թ. մարտի 4-ին, Սեբաստիայում մահացել է ժանտախտից՝ 40 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Ատաշ Ադնան, 20-րդ դարի Նահատակ եղած բժիշկները (թուրքերէն), Թուրքիա, 1997:

3. Յարման Արսէն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ

հայոց հիվանդանոցի (թուրքերէն), Ստամբուլ, 2001:

ՊԱՐՈՆՅԱՆ ՀԱՃԻ (ՀԱՃԻ ՊԱՐՈՆՅԱՆ, ՀԱՃԻ - ՊԱՐՈՆՅԱՆ)

Ծնվել է Կիլիկիայի Տարսոն բնակավայրում:

Մասնագիտությամբ ատամնաբույժ է եղել:

1909թ. ապրիլին, Տարսոնի հայերի ջարդի ժամանակ մասնակցել է ինքնապաշտպանությանը, ինչի համար մեղադրվել է:

1909թ. Ադանայի Պատերազմական ատյանը նրան դատապարտել է 3 տարի բանտարկության:

Նրա մասին.

Թերզեան Յակոբ Յ., Կիլիկիոյ աղետը, Կ. Պոլիս, 1912:

ՊԱՐՍԱՄՅԱՆ ԲԱՂՂԱՍԱՐ

1889/99 թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետի դեղագործական բաժինը:

Մասնագիտությամբ եղել է դեղագործ և աշխատել Այնթապում:

Սպանվել է Թուրքիայում իրագործված Մեծ եղեռնի ընթացքում:

Նրա մասին.

1. Յարման Արսէն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և

պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերէն), Ստամբուլ, 2001:

2. Զեստենեան Հրաչ, Պէյրուսի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ եւ Մեծ Եղեռնին Նահատակուած Հայ Բժիշկներ, “Ազդակ”, 01-11-2012

ՊԱՐՍԱՄՅԱՆ ՄԻՆԱՍ

Բարձրագույն բժշկական կրթություն է ունեցել:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և Երզնկայի Ազիզիեի զինվորական հիվանդանոցում զինվորական բժիշկ ծառայել:

1915թ. հունիսի 30-ին մահացել է ժանտախտից:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

ՊԱՐՏԻՉՊԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ ՂՈՒՆԿԱՆՈՍԻ

Բժիշկ, հասարակական-քաղաքական գործիչ:

Գրվել է Նաև Պարտիզյան: Ծնվել է 1887թ., Խարբերդի Նահանգի Խարբերդի գավառի Մեզիրե քաղաքում:

Հայրը՝ Ղունկիանոս Պարտիզյանը երկար տարիներ եղել է Բաքըր-Մադենի քաղաքապետության բժիշկը և 1907թ. մահացել խորհրդավոր պայմաններում:

Նախնական կրթությունն ստացել է Մեզիրեի Կեդրոնական վարժարանում, այնուհետև՝ Նույն քաղաքի Սուլթանիե վարժարանում:

Բնակվել է Կ. Պոլսի Կադըգյուղ թաղամասում:

Եղել է ՀՅԴ Կադըգյուղի կոմիտեի եռանդուն անդամ:

1912թ., երբ Արտակարգ դատարանը դադարեցրել է ՀՅԴ օրգան «Ազատամարտի» հրատարակությունը, ՀՅԴ տպագիր օրգանի դերը կատարել է «Ազդարարը», որի արտոնատերն էր Լևոնը:

1914թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը և բժշկի վկայական ստացել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուն պես զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել՝ հարյուրապետի աստիճանով:

1915թ. ապրիլին, զինվորական համազգեստը հագին ձերբակալվել է և բանտարկվել Կ. Պոլսի կենտրոնական բանտում, ապա

աքսորվել Չանդըրը: Այնուհետև մի շարք դաշնակցական մտավորականների հետ աքսորվել է Այաշ և պահվել տեղի բանտում:

Անունը փորագրվել է Չանդըրըի բանտում հավաքված համրիչի 99 հատիկներից մեկի վրա:

Թեոդիկի «Յուշարձան...» գրքում ասվում է, թե սպանվել է 1915թ., Այաշի ճանապարհին, ի թիվս մի խումբ հայ մտավորականների՝ 28 տարեկանում: Այլ աղբյուրում ասված է, որ սպանվել է Դեյր-Էլ-Չորում: Մինչդեռ Գրիգորիս ծ. վրդ. Պալաքյանը նրան հիշում է Չանդըրըի աքսորից վերապրողների թվում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919

2. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Վիեննա, 1922:

3. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

4. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

5. Պալաքյան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Երեւան, 1991:

6. Յուշամատեան Հայ Յե-

ղափոխական Դաշնակցութեան, Ալբոմ-ատլաս, Բ. հատոր, Գոյամարտ, 1914-1925, Լոս Անճեղլոս, 2001:

7. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողք և վկայք խաչի, Երեւան, 2002:

8. Խաչատրյան Լուսինե և Բաբլունյան Արփինե (կագմողներ), Յուցակ Հայոց ցեղասպանութեան զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի նահանգ, Երեւան, 2004:

9. Ավագեան Կարինե, «Չանդըրըի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդէս Ամսօրեայ», 2008, հ. 1-12

ՊԱՐՏԻԶՊԱՆՅԱՆ ԽԱԳԻԿ (ԽԱԳԱՏՈՒՐ)

Ծնվել է Կ. Պոլսում:

Բժշկական կրթությունն է ունեցել և բժիշկ աշխատել: Եղել է հանրային գործիչ:

1915թ. ապրիլի 11 (24)-ին ի թիվս 235 անվանի հայ մտավորականների, ձերբակալվել է և բանտարկվել Կ. Պոլսի կենտրոնական բանտում:

1915թ. ապրիլի 12-ին, ձերբակալվածների հետ, գնացքով տեղափոխվել է Այաշ ավանի ծայրամասի բլրի վրա գտնվող Սարը կըշլա հին զորանոց-բանտը և մի քանի ամիս այնտեղ մնա-

ցել:

Այնուհետև նրանց, այդ թվում՝ Խաչիկին, խումբ-խումբ ուղարկել են Անատոլիայի խորքերն ու Անկարայի մոտ գազանաբար սպանել:

Նրա մասին.

1. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Վիեննա, 1922:

2. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երեւան, 1990:

3. Պալաքյան Գրիգորիս ծ. վրդ. Հայ գողգոթան, Երեւան, 1991:

4. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողք և վկայք խաչի, Երեւան, 2002:

5. Ավագեան Կարինե, «Չանդըրըի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդէս Ամսօրեայ», 2008, հ. 1-12

ՊԱՐՏԻԶՊԱՆՅԱՆ ՂՈՒԿԻԱՆՈՍ

Բժիշկ Լևոն Պարտիզպանյանի հայրն է:

Երկար տարիներ եղել է Բաքըր-Մադենի քաղաքապետության բժիշկը:

Մահացել է 1907թ., խորհրդավոր պայմաններում:

Դի ա գ ն ու լ թ յ ու ն ի ց պարզվել է, որ մահացել է թունավորումից:

Տեղական թուրքական կառավարությունը խնդիրը փակել է առանց հանցավորներ փնտրելու, զգուշանալով, որ հետքը կարող է դեպի իրենց տանել:

Նրա մասին.

Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները)



ՊԵՅԱԶՅԱՆ ԷՏՈՒՄ

Ծնվել է 1873թ. փետրվարի 8-ին, Կ. Պոլսի ասիական կողմի Սկյուտար թաղամասում:

Բժիշկ Վահրամ Թորգոմյանի մորեղբորորդին է:

Ավարտել է Կ. Պոլսի Պերպետյան վարժարանը:

1890/93թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը և դեղագործի վկայական ստացել:

1893թ. անդամակցել է Կ. Պոլսի դեղագործների միությանը:

Այնուհետև շերամաբու-

ծուրթուն է սովորել և այդ գործով զբաղվել:

Աշխատել է Բրուսայի շերամաբուծական վարժարանի փոխտնօրեն և դասավանդել:

Միաժամանակ եղել է Հանրային պարտուց վարչության շերամաբուծական ընդհանուր քննիչ:

Բազմիցս ուղարկվել է Զմյուռնիա, Ադանա, Խարբերդ, Մելիտինե, Արաբկիր՝ շերամաբուծական բանախոսություններ կարդալու:

Լինելով հասարակական և քաղաքական գործիչ, ՀՅԴ եռանդուն անդամ, ՀՅԴ «Աշխատանքի տան» վարչության անդամ և գանձապետ, կատարել է ՀՅԴ կուսակցական կարևոր հանձնարարություններ:

Հոդվածներով աշխատակցել է «Ազատամարտ» թերթին:

1914թ., Առաջին աշխարհա-մարտի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական դեղագործ ծառայել:

Սպանվել է 1915թ., Բրուսա քաղաքի մոտակա Ադրոնազ գյուղում՝ 42 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Թեոդիկ, Յուշարձան նա-

հատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

3. Շամտանճեան Մ., Հայ մտքին հարկը Եղեռնին, Անթիլիաս, 1965:

4. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990, 221 էջ:

5. Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ալբոմ-ատլաս, Բ. հատոր, Գոյամարտ, 1914-1925, Լոս Անճելոս, 2001:

6. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՊԵՏԻՎՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

Ծնվել է մոտ 1887թ., Բրուսայի նահանգի Նիկոմիդիայի գավառակի կենտրոն Նիկոմիդիա քաղաքում:

1912թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Տրապիզոնի շրջիկ հիվանդանոցի բժիշկ է աշխատել:

1915թ. մարտի 10-ին մահացել է ժանտախտից՝ մոտ 28 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած

գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Մեզպուրեան Արթո, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

3. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

Ծնվել է 1876թ., Կեսարիայում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի Կըրշեհիր քաղաքում սեփական դեղատուն է ունեցել:

Մահացել է 1915թ., Կըրշեհիր քաղաքի մերձակա Մուջուր ավանում՝ 39 տարեկանում:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

Ծնվել է 1865թ., Ադանայում/ Կեսարիայում:

1899թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանի դեղագործական բաժինը:

Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի Կըրշեհիր քաղաքում գտնվող իր սեփական դեղատանը դեղագործ է աշխատել:

Մահացել է 1915թ., արսորավայր Անկարայում քաղցից ու հիվանդությունից, 50 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Մեզպուրեան Արթո, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

3. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՊԵՐՊԵՐՅԱՆ ՀԱԿՈՒ

Ծնվել է 1872թ., Կեսարիայում:

Հավանաբար 1897թ. դեղագործական կրթություն է ստացել Կ. Պոլսում:

1897-1916թթ. Կեսարիայում դեղագործ է աշխատել:

1916թ. տարագրվել է և նահատակվել Դամասկոսից հարավ՝ Հաուրանի շրջանի թըսըլ բնակավայրում, 44 տարեկանում:

Նրա մասին.

1. Ալպոյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. հատոր, Գահիրէ, 1937:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՊԵՐՊԵՐՅԱՆ ՇՆՈՐՀԶ

Ծնվել է 1895թ.:

Բժշկական կրթությունը և ունեցել է Կ. Պոլսի բուլղարական և հրեական հիվանդանոցներում մանկաբարձ-վիրաբույժ աշխատել:

1925 թ., որպես բերայաևտ, վիրաբույժ և մանկաբարձ, աշխատել է Կ. Պոլսի, Բանկայթի, Պեոյիվ Զտերե ճատտեսի-46 հասցեում գտնվող բուժարանում:

Մահացել է 1927թ. հունիսի 25-ին, Կ. Պոլսում՝ զոհ գնալով մասնագիտությանը:

Նրա մասին.

1. «Կավոզ» Տարեգիրքը, Կ. Պոլիս, 1925

2. Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը, 1928, Փարիզ, 1929:

ՊՈԼԻՍ ԷՅԵՆԴԻ

Ծնվել է 1891թ.:

Դեղագործական կրթությունը և ունեցել է դեղագործ աշխատել:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և Դամասկոսի զինվորական հիվանդանոցում զինվորական դեղագործ ծառայել: Ծառայության ընթացքում հիվանդացել է ժանտախտով:

Մահացել է 1916թ. մարտի 25-ին, Դամասկոսում, ժանտախտից՝ 25 տարեկանում:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:



ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՇԱԿ

Ծնվել է Սեբաստիա նահանգի կենտրոն Սեբաստիա քաղաքում:

Բժշկական կրթությունը և ունեցել է բժիշկ աշխատել:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի

ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել:

Սարիղամիշում ծառայելու ընթացքում մի թուրք զինվորից տեղեկացվելով, որ բանակում ծառայող բոլոր հայ զինվորականները գաղտնի հրամանով դատապարտվել են մահվան, ընկերոջ՝ բժիշկ Սարգիս Հովսեփյանի հետ փախել է զորամասից ու գերի հանձնվել ռուսական կողմին:

Հ ա ջ ո ղ օ թ ը , յուրաքանչյուր դասալիքի գլուխը 50000 ոսկի գնահատումով ազդագրերը տարածվել են ամենուր: Հետագայում անհետ կորած են համարվել:

Բժիշկները ռազմագերիների հետ տեղափոխվել են Թիֆլիս և բանտարկվել: Եռամսյա բանտարկությունից հետո նրանց ուղարկել են հարկադրական աշխատանքի Նաֆթլուղի զինվորական լազարեթում:

1915թ. մարտին Ամենայն հայոց կաթողիկոսի միջնորդությամբ ազատվելով գերությունից, բժիշկները տեղափոխվել են Էջմիածին և սովից ու հիվանդություններից տառապող ավելի քան 75 000 գաղթականների բժշկական օգնությունը ցուցաբերել:

1918թ. սեպտեմբերին գտնվել է Բաքվում, և թաքնվելով հրեա բարեկամի տանը, ակնատես եղել Բաքվի հայության կոտորածին:

Հետագայում բնակվել է Փարիզում, ամուսնացել և անվանի բժիշկ դարձել:

Նրա մասին.

1. Թորլաքեան Միսաք, Օրերուս հետ, Պէյրուք, 2001:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

3. Ստեփանյան Հ., Սարգիս Հովսեփյան - 115, «Առողջապահության լրատու», Երևան, 2003:

ՊՈՂՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ Գ.

Հոգեբույժ, Ազգային կենտրոնական վարչության Զաղաքական ժողովի անդամ, հասարակական և կուսակցական գործիչ:

Ծնվել է 1875/76թ. Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի Կերմիր գյուղում:

Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում:

1895-96թթ. սովորել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական համալսարանում, բայց ուսումը կիսատ է թողել:

1896-1901թթ. սովորել է Շվեյցարիայի Լոզան քաղաքի համալսարանի բժշկական ֆակուլտետում:

1899-1900թթ. լինելով բարձրագույն կարգի ուսանող, մրցույթով անցնելով, որպես ինտերն ընդունվել է Լոզանի Սըրիի հոգեբուժական կլինիկական հիվանդանոցը և, 6 ամիս մասնագիտանալով հոգեկան հիվանդությունների գծով, պրոֆ. Մահմեդի երաշխավորությամբ հոգեբույժի վկայական է ստացել:

1900-02թթ. նույն հիվանդանոցում օգնական-հոգեբույժ է աշխատել:

1902թ. հրաժարվելով պաշտոնից, մի քանի ամիս գիտական ճամփորդություն է կատարել Գերմանիայում և Ֆրանսիայում:

Եղել է Ծվեյցարիայի և Փարիզի հոգեբուժական ընկերությունների անդամ:

1902թ. վերադարձել է Կ. Պոլիս, որտեղ իր ազգայնական հայացքների պատճառով ենթարկվել է հալածանքի, ձերբակալվել և արքայազն իր ծննդավայր Կեսարիա:

Այնուհետև հաջողել է կրկին վերադառնալ Կ. Պոլիս:

1902-06թթ. Կ. Պոլիսի սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցում օգնական-հոգեբույժ է աշխատել:

1906-15թթ. նույն հիվանդանոցի հոգեբուժական բաժանմունքի հոգեբույժ, ապա՝ բաժանմունքի վարիչ է աշխատել: Այդ բաժան-

մունքում տարեկան բուժվել է հոգեկան հիվանդություններով տառապող շուրջ 200 տղամարդ և 100 կին:

Որոշ ժամանակ վարել է նաև հիվանդանոցի բժշկապետի պաշտոնը:

1908թ. երբ հիմնվել է հետազային Ռամկավար ազատական կուսակցության (ՌԱԿ) առանցքային ուժերից մեկը դարձած Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը (ՀՍՌԿ), անդամակցել է դրան:

1910թ. Գաղափարային ընտրվել է Կ. Պոլիսի Ազգային կենտրոնական վարչության Քաղաքական ժողովի անդամ (այսինքն՝ ազգային երեսփոխան), վերընտրվել 1913թ.:

1910թ. Կ. Պոլիսի Գաղափարաբանական վարժարանի խնամակալության անդամ է նշանակվել:

1915թ. ապրիլի 11 (24)-ին, ի թիվս բազմաթիվ հայ մտավորականների, ձերբակալվել և բանտարկվել է Կ. Պոլիսի կենտրոնական բանտում:

Անունը փորագրվել է Զանդըրդի բանտում հավաքված համրիչի 99 հատիկներից մեկի վրա:

1915թ. ապրիլի 12-ին, ի թիվս բազմաթիվ հայ մտավորականների, որպես ձերբակալվածներ, գնացրով

տեղափոխվել են Այաշ ավանի ծայրամասի բլրի վրա գտնվող Սարը կըշլա հին զորանոց-բանտը:

Մի քանի ամիս անց ազատվել է բանտից և տանջանքներով անցնելով Այաշ-Անկարա-Հալեպ ճանապարհը, վերադարձել է Կ. Պոլիս:

Կ. Պոլսում եղել է Կոմիտասի հոգեկան առողջության գրադոդ առաջին հոգեբույժը:

1915թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել:

1918թ. զինադադարից հետո զորացրվել է բանակից և Կ. Պոլիս վերադարձել:

Հավանաբար 1923թ. տեղափոխվել է Սիրիա, բնակություն հաստատել Հալեպ քաղաքում և հոգեբույժ աշխատել:

1925թ. մի խումբ ազգայնականների հետ հիմնել է Հալեպի Հայ Կարմիր խաչը:

1935-55թթ. եղել է Հալեպում 1935թ. հիմնադրված Ազգային Վերժին Կյուլպենկյան մայրանոցի (ծննդատան) խնամակալության ատենապետն ու պատվավոր նախագահը:

Եղել է շատ ճանաչված ազգային գործիչ, եռանդուն ու նվիրված կուսակցական, հարգված անձնավորություն, Հյուսիսային Սիրիա-

յի ՌԱԿ ակումբների ղեկավարը, ՌԱԿ պաշտոնաթերթ «Եփրատ»-ի (Հալեպ) արտոնատերն ու տնօրենը:

Եղել է Բերիո (Հալեպի) թեմի Քաղաքական ժողովի ատենապետը:

Թերթերում և տարեցույցներում տպագրված բժշկական հոդվածների հեղինակ է:

Մահացել է 1955թ. ապրիլին, Հալեպում՝ 80 տարեկանում:

Նրա մասին.

1. Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1905:

2. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Վիեննա, 1922:

3. Ալաօյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. հատոր, Գահիրէ, 1937:

4. Ազգային հիւանդանոցի մէջ պաշտօնավարած բժիշկները. Ընդարձակ տարեգիրք Ազգային հիւանդանոցի, Իսթանպուլ, 1939:

5. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Երևան, 1991:

6. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

7. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողը և վկայք խա-

չի, Երևան, 2002:

8. Փոլյադյան Անդրանիկ Լ., Հերկ եւ բերք, Բեյրութ, «Սիփան» հրատարակչություն, (հրատարակման վայր է նշվել ԱՄՆ, Նյու Ջերսի նահանգ), 2002, 464 էջ:

9. Մինասյան Հարություն, 100 հայ հոգեբույժներ, Կենսագրական բառարան, գիրք Բ, Երևան, 2004:

10. Ավագեան Կարինե, «Չանդրորդի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդես Ամսօրեայ», 2008, հ. 1-12

11. «Եղեռնէն վերապրող հալեպահայ գաղութին երախտաւորը - Տոքթ. Խաչիկ Պօղոսեան (1875-1955)», կապույտ քարտէս, Երևան, ԽՍՀՄ, 1955 թ.



ՊՈՅԱՃՅԱՆ ՀԱՄԱՐԶՈՒՄ ՀԱՎՈՐԻ (ՄԵՇՆ ՄՈՒՐԱՏ)

Ուսուցիչ, Հայ ազգային ազատագրական շարժման գործիչ, ՄԴՀԿ-ի ղեկավարներից, Ազգային կենտրոնա-

կան վարչության Զաղաքական ժողովի անդամ:

Ծնվել է 1867թ., Ադանայի նահանգի Մարաշի գավառի Հաճընի գավառակի կենտրոն Հաճըն քաղաքում:

Բժիշկ Գրիգոր Ճելալ(յան) ի ընկերը, կուսակիցը և փեսան է, նրա քրոջ՝ Ագյուլինեի ամուսինը:

Հայդուկական ծածկանուկը եղել է Մուրատ, սակայն ավելի է գործածվել Մեծն Մուրատ մականունը՝ նրան ֆեդայի Սեբաստացի Մուրատից տարբերակելու համար:

ՄԴՀԿ-ի գործիչ, 1894թ. մարտի 24-ին կախաղան բարձրացված ժիրայրի (Հարություն-Մարտիրոս Պոյաճյան, Մորուք ժիրայր) երեք եղբայրն է:

Նախնական կրթությունն ստացել է Միացյալ ընկերության Հաճընի վարժարանում:

Ավարտել է Կ. Պոլսի իդադիե (միջնակարգ) վարժարանը:

1885-90թթ. սովորել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանում և ստիպված եղել ուսումը թերավարտ թողնել:

1888թ. եղել է հնչակյան կուսակցության առաջին կազմակերպիչներից մեկը Կ. Պոլսում:

1890թ. հուլիսի 15-ին եղել է Կոնկափուկ անգեն ցույցի գլխավոր կազմակերպիչներից

և ստանձնել հայոց պահանջները սուլթան Աբդուլ Համիդ II-ին ներկայացնելու դժվարին գործը:

Կարողացել է խուսափել ձերբակալությունից և փախչել է Աթենք՝ Հունաստան:

1892թ. Հնչակյան Կենտրոնի հրահանգով անցել է Տարոն և Սասունում գործակցել Միհրան Տամատյանի հետ:

1893թ. Կենտրոնի հրահանգով մեկնել է Կովկաս և այնտեղից գեներալ Ուզունովից տեղափոխել Սասուն:

1894թ., Մ. Տամատյանի ձերբակալությունից հետո ղեկավարել է Սասունի ինքնապաշտպանությունը, որը հայկական կոտորածների, եվրոպայի միջամտության և 1895թ. մայիսի 11-ի բարենորոգումների ծրագրի ընդունման է հանգեցրել:

1894/95թ. օգոստոսի վերջին իր փոքրաթիվ խմբով պաշարվել է և 3 օր տևած կռվից հետո թուրքական իշխանությունների ձեռքն ընկել:

1894/95-96թթ. Բաղեշի բանտում 2 տարի տանջանքների է ենթարկվել:

Բաղեշից տեղափոխվել է Կ. Պոլիս և մահվան դատապարտվել: Սակայն օտարների միջամտության շնորհիվ մահապատիժը փոխարինվել է ցմահ բանտարկության: Աքսորվել է Տրիպոլիս

(Լիբիա) / Աքիա (Պաղեստին):

1904/05/06թ. փախել է Տրիպոլիսի / Աքիայի բանտից, անցել Եգիպտոս, ապա՝ Եվրոպա և հաստատվել Փարիզում:

1907թ. այցելել է Եգիպտոս, տեսակցել Միհրան Տամատյանի հետ:

1907թ. մեկնել է ԱՄՆ և ամենուրեք ժողովրդի խանդավառ ընդունելությանն արժանացել:

1908թ. երիտթուրքերի հեղաշրջումից և սահմանադրության վերահաստատումից հետո Կ. Պոլիս է վերադարձել:

Կոնկափուկի հայությունը նրան ընտրել է Ազգային կենտրոնական վարչության Զաղաքական ժողովի, իսկ Հաճընի և Սիսի շրջանի (Կոզանի) բազմազգ բնակչությունը՝ օսմանյան խորհրդարանի անդամ:

Օսմանյան խորհրդարանում բողոքել է ոչ-մահմեդականների զինվորագրության և սուլթանի իրավասությունների ընդլայնման դեմ, խստորեն արտահայտվել Կիլիկիայի աղետի առթիվ և այդ պատճառով թշնամացել թուրք պաշտոնակիցների հետ:

1915թ. հուլիսին, ի թիվս բազմաթիվ հայ մտավորականների, թոմարգայում ձերբակալվել է և բանտարկ-

վել Այաշի բանտում, այնուհետև քրտրվել Կեսարիա, որի բանտում արյունարբու Չեքի բեյի կողմից սարսափելի խոշտանգումների է ենթարկվել և արյունահոսող բազմաթիվ վերքեր ստացել: Բանտում նրան խնամք և բժշկական օգնություն է ցուցաբերել բանտարկյալ դեղագործ Մանվել Մկրյանը:

1915թ. հուլիսի 30 / օգոստոսի 24-ին Կեսարիայում կախաղան է բարձրացվել՝ 48 տարեկանում:

Նրա մասին.

1. Գաբամաճեան Ս., Հայաստանի կադանդէքը: Մեծ եղեռնի զոհերը իրենց պատկերներով, Կ. Պոլիս, 1919:

2. Պալաքեան Գրիգորիս Ծ. վրդ., Հայ գողգոթան, Վիեննա, 1922:

3. Արիս Տ. Կ. Գալֆայեան, Չոմախլու (Կեսարիա), հրատարակութիւն «Չոմախլուի Նպաստամատոյց Ընկերութեան», «Կոչնակ» տպարան, Նիւ Եորք, 1930, 168 էջ

4. Լազեան Գաբրիէլ, Դեմքեր հայ ազատագրական շարժումէն, Գահիրէ, 1949:

5. Փափագեան Վահան, Իմ յուշերը, Բ. հատոր, Պէյրուք, 1952:

6. Կարոյեան Գասպար, Մեծ եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

7. Աւօ, Յեղափոխական Ալպօմ, Հալէպ, Գ. շարք,

1960, թ. 5 (29):

8. Թէոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորակաւորութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

9. Թաթուլեան Գրիգոր, «Անթողուած Գաղտնիքներ», գրի առաւ եւ խմբագրեց՝ Յարութիւն Սահակեան, տպ. «Ատլաս», Պէյրուք, 1967, 479 էջ

10. Օտեան Գասաբեան Ալիս, «Պատմագիրք Անկիւրիոյ եւ Ստանոզի Հայոց (Նախաքրիստնէական եւ Հին Գաղափարական Շրջաններէն Մինչեւ 1918 Թուականը)», տպ. «Տօնիկեան», Պէյրուք, 1968, 319 էջ (որուն 247 էջը՝ հայերէն, 72 էջը՝ անգլերէն):

11. Հաւաքեց Կարապետ Թերզեան, «Պատմագիրք Ստանոզի Հայոց», տպ. Տօնիկեան եւ Որդիք, Պէյրուք, 1969, 374 էջ

12. Պատասխանատու խմբագիր Պետրոս Մինասեան, Պատմագիրք Կիւրինի, հրատարակութիւն Կիւրինի Հայրենակցական Միութեան, տպ. «Սեւան», Պէյրուք, 1974, 823 էջ

13. Սիմոն Հովիւեան, «Ապրիլեան Նահատակներուն Շաւիղով, Մեծ եղեռնի 60 ամեակի Սեմին», Պէյրուք, 1975, 349 էջ

14. Պալաքեան Գրիգորիս Ծ. վրդ., Հայ գողգոթան, Երեւան, 1991:

15. Սիրվարդ (Եղիա Գրիգորյան), Մեծն Սուրատ (Համբարձում Պոյաճյան): Կյանքն ու գործունեությունը, Երևան, 1991:

16. Մեծն Սուրատ, «Երկիր», Երևան, 01-07-1994:

17. «Նարեկ», Ե., 30-10-1995:

18. Հայկական հարց, հանրագիտարան, Երևան, 1996:

19. Օտեան Երուանդ, Մեր երեսփոխանները, մեր Ազգային ժողովը, Երեւան, 1999:

20. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերէն), Ստամբուլ, 2001:

21. Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 4, Երևան, 2003:

22. Ով ով է: Հայեր: Կենսագրական հանրագիտարան, հ. 2, Ե., 2007:

23. Ավագեան Կարինէ, «Չանդրըրի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդես Ամսօրեայ», 2008, հ. 1-12

24. Իսկահատեան Հ., Վկայարան հայկական ցեղասպանութեան, Գիրք Գ, Պէյրուք, 2011, 395 էջ

ՊՐՈՒՄԱԼՅԱՆ ԼԵՎՈՆ

Դեղագործական կրթու-

թյուն է ունեցել:

Կեսարիայում դեղագործ է աշխատել:

1915թ. տարագրվել է հայրենի օջախից՝ տուն ու տեղ կորցնելով:

Նրա մասին.

Ալպօյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. հատոր, Գահիրէ, 1937:

ՋԵՉՎԵՑՅԱՆ ԶԵՐՈՎԲԵ

Ծնվել է 1883թ., Կ. Պոլսի Մաքրիգյուղ թաղամասում:

Ավարտել է Կ. Պոլսի Կում կափու թաղամասի Պեգճյան դպրոցը:

Ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Եղել է կանանց և մանկական հիվանդությունների բժիշկ:

1909թ. Կիլիկիայի Ադա-նա քաղաքում բժիշկ է աշխատել:

1909թ. մարտի 28-ին, Ադանայում հրահրված հայկական կոտորածների նախօրյակին, թուրք սադրիչները քաղաքի Սաաթխանեի (Ժամացույցի) հրապարակի մոտակայքում սպանել են Լութֆիկ անունով մի կեսարացի հայի, որի թլպատված լինելու մասին նախապես իմացել էին: Ոճրագործությունից հետո թուրքերը քաղաքով մեկ լուր են տարածել,

թե հայերը դարձյալ «խլամ» են սպանել: Սակայն սպանվածին ճանաչող մի քանի թուրքեր կասկած են հայտնել, թե սպանվածը կարող է և հայ լինել:

Կառավարությունում ստիպված որոշել են դիակը բժշկական քննության ենթարկել և կանչել են բժիշկ Զերովբե Ջեզվեջյանին:

Բժիշկը դիագնոստիկ հետո համարձակություն է ունեցել հայտարարելու, որ սպանվածը հայ է՝ ատաղձագործ Լուրճիկը, որին ինքը մի քանի օր առաջ վիրաբուժական գործողության էր ենթարկել, միաժամանակ ցույց է տվել հանգուցյալի թևի վրայի խաչանշանը:

1914թ. Առաջին աշխարհամարտի ժամանակ գորակոչվել է օսմանյան բանակ և Չանաքկալեի ռազմաճակատում զինվորական բժիշկ ծառայել:

Գերի է ընկել անգլիական բանակին և Հնդկաստան տարվել:

Չորս տարվա գերությունից հետո Կ. Պոլիս է վերադարձել:

Կ. Պոլսի Բեյոզլու (Բերա) թաղամասում բացել է սեփական բուժարան և բժիշկ աշխատել:

Որոշ ժամանակ աշխատել է նաև Կ. Պոլսի բուլղարական հիվանդանոցում:

Կ. Պոլսի հայկական հա-

մայնքում ճանաչված է եղել իր բարեգործություններով:

Մահացել է 1942թ. փետրվարի 12-ին, Կ. Պոլսում 59 տարեկանում:

Նրա մասին.

1. [Սերոբեան] Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի ջարդը եւ պատասխանատուները, Պոսթոն, 1910:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

3. Սիմոնյան Հրաչիկ, Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1907-1908 թթ.), Կոնստանդուպոլիս, 2009



ԶԵՆԵՍ (ՅԱՆ) ԳՐԻԳՈՐ

Ծնվել է մոտ 1868/70թ., Կ. Պոլսում/ Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի Թալաս ավանում:

Պրոֆեսոր Հովսեփ Ջելայյանի (Ճելայյան) ավագ եղբայրն է:

Բժիշկ և հայդուկապետ

Համբարձում Պոյաճյանի (Մեծն Մուրատ) աներորդին, կուսակիցը և ընկերն է եղել:

Նախնական կրթությունն ստացել է Կ. Պոլսում / Բրուսայի ազգային վարժարանում:

1896թ. նոյեմբերի 25-ին ավարտել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետը՝ մրցանակի և պատիվների արժանանալով:

1896-1901թթ. աշխատել և մասնագիտացել է Փարիզի տարբեր հիվանդանոցներում:

1901թ. վերադարձել է Կ. Պոլիս և բժիշկ աշխատել:

1905թ. դրությամբ եղել է Կ. Պոլսի Հայդարփաշա թաղամասում բնակվող, օսմանյան կառավարության նախկին ծովային նախարար, բնավորությամբ բարի, ազնիվ և մարդասեր Հաջի Թահսին՝ փաշայի սիրելին և հավատարիմ ընտանեկան բժիշկը, քանի որ ստույգ մահից փրկել էր փաշայի բազմանդամ ընտանիքի անդամներից մեկին: Բժշկի ընտանիքի անդամները ևս ազատ մուտք ունեին փաշայի ապարանքը և վայելում էին նրա հովանավորությունը:

Աշխատել է նաև Կ. Պոլսի Թաքսիմի Ֆրանսիական հիվանդանոցում:

1911-14թթ. եղել է Կ. Պոլսի սբ. Փրկիչ ազգային հի-

վանդանոցի հոգաբարձուների խորհրդի անդամ:

Եղել է Ազգային կենտրոնական վարչության Զաղաքական ժողովի անդամ:

Եղել է հին հնչակյան գործիչ: Կ. Պոլսում հնչակյանությունը նրա տանն է հիմնադրվել:

1915թ. ապրիլին ձերբակալվել է Կ. Պոլսում և Չանդըրը արքայապետը արքայապետը:

Անունը փորագրվել է Չանդըրը բանտում հավաքված համրիչի 99 հատիկներից մեկի վրա:

Հետագայում կառավարության հրահանգով Չանդըրը բանտում կատարվել է զտում, որի արդյունքում քարավանը բաժանվել է 2 մասի՝ «ճանր հանցագործների» և «թեթև հանցագործների»: Առաջիններն ուղարկվել են Այաշի բանտը՝ սպանվելու, վերջինները, որոնց մեջ էր բժիշկ Գրիգոր Ջելայյանը, ազատվել են:

1915-23թթ. շարունակել է ապրել և աշխատել Կ. Պոլսում:

Եղել է անվանի բժիշկ և նվիրյալ բուլղից սիրված ու հարգված ազգային գործիչ:

1923թ. տեղափոխվել է ԱՄՆ:

Մահացել է 1937թ. մայիսի 12-ին, ԱՄՆ-ում՝ 69 տարեկանում:

Նրա մասին.

1. Ընդարձակ օրացոյց

Սուրբ Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1905:

2. Պալաքեան Գրիգորիս Ծ. վրդ., Հայ գողգոթան, Վիեննա, 1922:

3. Մահագրութիւն Տօքթ. Գր. Ճէլալ, Ընդարձակ տարեգիրք Ազգային հիւանդանոցի, Իսթանպուլ, 1938:

4. Սիրվարդ, Մեծն Սուրատ (Համբարձում Պոյաճյան), Կյանքն ու գործունեությունը, Երևան, 1991:

5. Պալաքեան Գրիգորիս Ծ. վրդ., Հայ գողգոթան, Երևան, 1991:

6. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

7. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողը և վկայք խաչի, Երևան, 2002:

8. Ավագեան Կարինե, «Չանդրորդի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանամոյշը, «Հանդես Ամսօրեայ», 2008, հ. 1-12

ՁԵԼԱԼՑԱՆ Ս.

Բարձրագույն բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել:

1915թ. ապրիլ-մայիս ամիսներին օսմանյան կառավարությունը Խարբերդում և Մեզիրեում իրական-

նացրել է բազմաթիվ հայ մտավորականների ձերբակալություններ: Թուրք ոստիկանները նրանց շղթայակապ տարել են փողոցներով ու շուկաներով, և գազազած թուրք ամբոխը նրանց վրա քարեր է նետել, հարվածել, ծեծել: Նրանց բոլորին բանտարկել են Մեզիրեի բանտում և կտտանքների ենթարկելով փորձել տեղեկություններ կորզել զենքեր, ռումբեր և քաղաքական գաղտնիքներ թաքցնելու մասին: Կեսգիշերին, արաբկիրցի ոստիկան Ալի օնբաշին բանտապահ Հասան Էֆենդիի հետ եկել է բանտ և հրամայել, որ մեկ առ մեկ դուրս գան և Եդեսիա տեղափոխվելու պատրաստվեն: Բժիշկ Նշան Նահիկյանը համարձակորեն առաջ գալով ասել է. «Եթե դուք մեզ իրոք Եդեսիա պիտի ուղարկեք, ավելի լավ է, որ ցերեկով ուղարկեք, որպեսզի ժողովուրդը իմանա, որ մենք Եդեսիա ենք գնում, իսկ եթե ձեր հետին դիտավորությունը մեզ սպանելն է, կրկին ցերեկով սպանեք և կախեք, որպեսզի համայն Խարբերդի ժողովուրդը ականատես լինի մեր մահին»: Չնայած ոստիկանը ժխտել է նրանց սպանելու մտադրությունը, բանտարկյալները հասկացել են, որ պատրաստվում են իրենց սպանել, ուստի հրաժար-

վել են կատարել գիշերով բանտից շղթայակապ դուրս գալու հրամանը: Լուրը հաղորդել են գնդապետ Ֆերիդ բեյին, որը հրամայել է բոլորին սրախողխող անել:

1915թ. հունիսի 25-ին / հուլիսին, օգոստոսի 4-ին (ըստ տարբեր աղբյուրների), Խարբերդ քաղաքի Մեզիրեի բանտի 37 հայ բանտարկյալները վճռել են բանտը հրկիզել և ինքնահրկիզվել: Իրար վրա են հավաքել բանտի վերմակները, իրենց հագուստները և դրանց վրա լցնելով ճրագների նավթը՝ հրկիզել են բանտը: Բոլորը զոհվել են, այդ թվում Ս. Ջելայյանը:

37 բանտարկյալների կիսամոխրացած դիակները աղբատար կառքով տարել և լցրել են Չոր աղբյուրի մոտ գտնվող մի փոսում:

Նրա մասին.

Ճիզմեճեան Մանուկ, Խարբերդ եւ իր գաւազները, Ֆրեզնօ, 1955:

ԶԸՐՁԻ ԷՖԵՆԴԻ

Բժշկական կրթություն է ունեցել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և Հաֆիրի հիվանդանոցում գինվորական բժիշկ ծառայել՝ կապիտանի աստիճանով:

Մահացել է 1916թ. ապրիլի 26-ին, Հաֆիրում՝ անհայտ պատճառից:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՈՒՑԱՆ

Այս անձը հրեա է, սակայն ներկայացնում ենք որպես թուրքերի իրագործած ոճրագործությունների տիպիկ օրինակ:

Դեղագործական կրթություն է ունեցել:

Կարսի Ալեքսանդրովսկայա փողոցում ունեցել է սեփական տուն, որի մի փողոցահար սենյակը վերածել է դեղատան և դեղագործ աշխատել:

1920թ. հոկտեմբերի 30-ին, թուրքերը Կարսը գրավելուց հետո սկսել են հայերի զանգվածային կոտորածն ու թալանը:

Ռայմանը, տեսնելով քաղաքի բնակիչների փախուստը դեպի ձորը, կնջը խորհուրդ է տվել երեխայի և հոր հետ մնալ տան սենյակներից մեկում, չմտնել դեղատուն, չերևալ թուրքերի աչքին:

Ինքը խալաթը հագին մտել է դեղատուն:

Քիչ անց դեղատուն են մտել մի քանի ասքյար ու նրան (հավանաբար կարծելով, թե հայ է - ՀՄ) գազանաբար սպանել:

Լսելով ամուսնու ճիչը, կից սենյակից դուրս է թռչել դեղա- գործի կինը և ընկել թուրքերի ձեռքը:

Ասքյարները նրան բռնաբարելուց հետո կտրել են ստինքները, դրել վաճառասեղանի վրա ու գնացել:

Ծանր լսող ծերունի հայրը տեսնելով, որ աղջիկը ուշացավ, թռնիկին թողել է սենյակում և մտել է դեղատուն, որտեղ տեսնելով զարհուրելի տեսարանը՝ կաթվածահար է եղել:

Հաջորդ օրը Չախմախ գյուղից Կարս եկած մի ռուս մալական մտել է դեղատուն և տեսել մորթված ծնողների ու պապի դիակի մոտ կիսամեռ ընկած փոքրիկ աղջնակին:

Վերցրել է աղջնակին և ֆուրգոնով տարել Չախմախ:

Հետագա օրերին տունը թալանվել ու ավերվել է:

Նրա մասին.

Ալեքսանդրյան Ա., Կարս. 1920-21, Երևան, 1986, 124 էջ

ՈՎԵՐՑՑՑԱՆ ԳՐԻԳՈՐ

Ծնվել է մոտ 1880թ., Ան-

կարայի նահանգի Կեսարիայի գավառի կենտրոն Կեսարիա քաղաքում:

Ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական համալսարանը:

Անկարայի նահանգի Յոզղաթի գավառի հայ և թուրք խառը բնակչության մբ Բողազյան գյուղում տուն էր կառուցել, բնակվել այնտեղ և բժիշկ աշխատել:

1916թ., երբ ընթանում էին հայերի կոտորածները, թուրքերը մի գիշեր մտել են բժշկի տունը և հաշվի չառնելով, որ նա ռևմատիզմով ծանր անկողնային հիվանդ է, տարել նրան: Դա իմանալով, Իբրահիմ բեյի աղջիկը հորը ասել է. «Եթե այս բժիշկը չլիներ՝ ես մեռած կլինեի»: Բեյը ձիավոր է ուղարկել գավառապետի մոտից բժշկին հետ բերելու համար: Վերջինս բժշկին ասել է. «Մի դեղատոմս գրի՛ր»: Բժշկի ձեռքերը հիվանդությունից, թե վախից սկսել են դողալ: Գավառապետն ասել է. «Բանի պետք չէ՛. տարե՛ք, մորթե՛ք»: Հանձնակատարները այդպես էլ վարվել են մոտ 36 տարեկան բժշկի հետ:

Բժիշկը ունեցել է կին և Մայրենի անունով մի մանկամարդ դուստր, որին Իբրահիմ բեյը ուղարկել է իր արտը վարելու: Բժշկի երիտասարդ այրին գնացել է բեյի մոտ և խնդրել, որ աղջ-

կան ազատի գերությունից: Բեյը իր Սիմսար անունով ծառային հրամայել է աղջկան հետ բերել: Այնուհետև ծառան մորը նստեցրել է էշի վրա, իսկ բեյը աղջկան՝ ձիու վրա և նրանց գյուղից դուրս տարել: Ճանապարհին հրացանով սպանել են մորը, իսկ աղջկան՝ բռնաբարել, որից հետո Մայրենին խելագարվել է:

Համագյուղացի Պերպերյանների ընտանիքը աղջկան վերցրել-պահել է, և որոշ ժամանակ անց մի հայ կառապանի հետ Կեսարիա՝ նրա հեռավոր ազգականի տուն ուղարկել:

Այս մասին բանահավաք Վերծինե Սվազյանին պատմել է Վերոնիկա Գասպարի Բերբերյանը (ծնվ. 1907թ., Յոզղաթի գավառի Բողազյան գյուղում):

Նրա մասին.

Սվազյան Վերծինե, Հայոց ցեղասպանություն: Ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2000:



ՌԵԹԵՆՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

Ծնվել է Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի կենտրոն Կեսարիա քաղաքում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Հայկյան վարժարանում:

Ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Կեսարիայում թաղապետական բժիշկ է աշխատել:

1909թ. Ադանայի հայկական կոտորածների օրերին, երբ Կեսարիան ևս դժվարին օրեր ապրեց, բժիշկ Տիգրանը որոշ դեր է խաղացել Ջելալ բեյի մոտ՝ ջարդն արգելել տալու համար:

1910թ. մեկնել է Կ. Պոլիս և որպես թաղապետական բժիշկ Ադաբազար, ապա՝ Կեսարիա ուղարկվել:

Եղել է գթասիրտ ու սիրված բժիշկ:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել:

Ծառայության ընթացքում ուղարկվել է Կարամանի նահանգի Նիյոն գավառի կենտրոն Նիյոն քաղաքը (Կիլիկիա), որտեղ էլ մահացել է

Ժանտախտից:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Ալլայոյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. հատոր, Գահիրէ, 1937:

3. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

**ՌՈՒԲԵՆԻ ՈՐԴԻ
(ՌՈՒԲԵՆՅԱՆ) ՄԻՀՐԱՆ**

Ծնվել է մոտ 1885թ.:

1910թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Տիգրանակերտի «մենզիլի» (հոսպիտալի) բժիշկ է աշխատել:

Մահացել է 1915թ. հոկտեմբերի 11-ին, ժանտախտից՝ մոտ 30 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

ՍԱԼԲԻ ԱՐԱՄ

Ծնվել է մոտ. 1888թ., Կեսարիա քաղաքում:

Իսկական անունը եղել է Արամ Սալբի Սահակյան:

Ավարտել է Բեյրութի համալսարանի բժշկական ճյուղը:

Բեյրութում ուսանելու տարիներին անդամագրվել է ՀՅԴ կուսակցությանը:

Մ. Սալբի գրչանունով աշխատակցել է «Ազատամարտ» շաբաթաթերթին:

Եղել է ՀՅԴ հնագույն անդամ:

1914-18 թթ. Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում զորակոչվել է օսմանյան բանակ և ծառայել որպէս զինվորական բժիշկ:

Պատերազմի ընթացքում գերի է ընկել անգլիական կողմին:

Որպէս ռազմագերի տեղափոխվել է Պորտ Սայիդ, որտեղ եղել է մուսալեռցի գաղթականների բժիշկը:

Այդ օրերի հուշերը տպագրել է իր «Ալեակներ եւ խլեակներ» և «Մեր խաչը» գրքերում:

1918թ. գերությունից վերադարձել է Կ. Պոլիս:

Հետպատերազմյան տարիներին անունը փայլել է Կ. Պոլսի ազգային և գրական շրջանակներում: Աշխատակցել է Կ. Պոլսում հրատարակվող «Ճակատա-

մարտ» թերթին:

Ապա մի քանի տարի ապրել է Փարիզում, որտեղ ևս զբաղվել է հանրային գործունեությամբ:

Հետագայում հաստատվել է Ռումինիայում:

Մահացել է 1968թ. հունիսին, Բուխարեստում, մոտավորապէս 80 տարեկան հասակում:

Աշխատությունները.

Տոքթ. Մ. Սալբի, Ալեակներ եւ խլեակներ, Աղբրասանդրիա, 1919

Մ. Սալբի, Մեր խաչը, Փարիզ, 1921

Նրա մասին.

Գեորգեան Կարօ, Ամէնոս, 19...



ՍԱՅՅԱՆ (ՍԱՅԵԱՆ) ԳՐԻԳՈՐ

Ծնվել է մոտավորապէս 1870թ., Կոստանդնուպոլսում:

1894թ. ավարտել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1896-1900թթ. ապրել և

բժիշկ է աշխատել Բուլղարիայում:

1900թ. վերադարձել է Կ. Պոլիս:

Կ. Պոլսում հետաանդումների ենթարկվելու պատճառով փախել է Օդեսա, որտեղից էլ՝ Կովկաս, ապա՝ Մոսկվա:

1902թ. տեղափոխվել և հաստատվել է Բուլղարիայի Ռուսշուք քաղաքում:

Չբաղվել է դեպի երկիր գեներ տեղափոխելու աշխատանքով:

1906 թ. եղել է Կ. Պոլսում „Յըլդըզի Պոմպայի” մահափորձի կազմակերպիչներից մեկը:

1919թ. մասնակցել է Փարիզի Ազգային համագումարին:

Եղել է գերազանցապէս գաղափարապաշտ ու անձնվեր գործիչ:

Ունեցել է նաև ազգային-հասարակական ակտիվ գործունեություն:

1919 թ. եղել է Փարիզի Ազգային համագումարին մասնակցած բուլղարահայ գաղութի երկու պատգամավորներից մեկը:

Մահացել է 1921թ. հունվարի 27-ին, Ռուսշուք քաղաքում, արյան թունավորումից:

Նրա մասին.

1. Թեոդիկ, Անդարձ մեկտոք, Կ. Պոլիս, 1922

2. Գեորգեան Կարօ, Ամէ-

Նուն Տարեգիրքը, Պէյրուք, 1962

**ՍԱՍՈՒԼՑՅԱՆ
(ՍՈՍՈՒԼՑՅԱՆ,
ՍԱՊՈՒԼՑՅԱՆ) ԿԱՐԱՊԵՏ**

Բժշկական կրթություն է ունեցել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և 19-րդ զորամասի 77-րդ զնդում զինվորական բժիշկ ծառայել:

1917թ. եղել է Պաղեստինի ռազմաճակատում և զոհվել Բիր-Սեբաայի կռիվների ժամանակ:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՍԱՆՏԱԼՑՅԱՆ ՀԱԿՈՐ

Ծնվել է հավանաբար 1867թ., Փոքր Ասիայի արևմուտքի Մանիսա քաղաքում:

1892թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Եղել է Փարիզի միջազգային բժշկական խորհրդի անդամ:

Չմյուռնիայի հայկական հիվանդանոցում բժիշկ է աշխատել:

Նազիլլիի թաղապետա-

կան բժիշկ է աշխատել:

Մահացել է 1917թ. օգոստոսի 27-ին, ժամտախտից՝ մոտ 50 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

3. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

**ՍԱՐԱՅՅԱՆ ԵՐՎԱՆԴ
(ԱՐՈՒՄԱՆԴ)**

Ծնվել է 1888թ., Կ. Պոլսի Միջագյուղ թաղամասում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի վարժարանում:

1914թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Մի քանի ամիս բժիշկ է աշխատել:

1914թ. սկսած Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ, և ուղարկվելով Սիրիայի ռազմաճակատ, զինվորական բժիշկ ծառայել:

1917թ. Պաղեստինի ռազմաճակատում զործողությունների ժամանակ ոտքից վիրավորվել է և Դամասկոսի զինվորական հիվանդանոցը տեղափոխվել:

1917թ. ստացած վերքի պատճառով մի քանի ամիս հիվանդանոցում տառապել է թուրք բժիշկներից դիտավորյալ բուժում և խնամք չստանալու հետևանքով:

Մահացել է 1917թ. ամռանը, Դամասկոսի զինվորական հիվանդանոցում, արյան վարակումից՝ 29 տարեկանում:

Ավելորդ չէ ասել, որ այդ ժամանակ Դամասկոսում կար Օսմանյան բժշկական համալսարան, որտեղ եվրոպական բժշկական և վիրաբուժական համալսարաններն ավարտած բարձրակարգ բժիշկներ էին աշխատում, ինչպես նաև կար ֆրանսիացի Գթության քոլյերի լավ կազմակերպված հիվանդանոց, որը զինվորական իշխանությունը գրավել էր:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

43 Յարման Արսեն, Հայե-

րը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՍԱՐԱՅՅԱՆ ՏԻԳՐԱՆ

Ծնվել է մոտավորապես 1885-90-ական թվականներին, Մարաշի սանջակի կենտրոն Մարաշ քաղաքում:

Բարձրագույն բժշկական կրթությունը ստացել է Ծվեյցարիայում:

Սովորելու ընթացքում ծանոթացել և սիրահարվել է մի շվեյցարուհու:

Ուսումը ավարտելուց հետո վերադարձել է Մարաշ և աշխատել որպես բժիշկ, հետագայում դառնալով այդ տարիների Կենտրոնական Թուրքիայի ամենահայտնի բժիշկը:

Մոտավորապես 1913 թ. շվեյցարուհին եկել է Մարաշ և ամուսնացել բժշկի հետ:

1915 թ. Մարաշի հայ բնակչության տեղահանության ժամանակ ընտանիքով արքայազնի Դեպի Ուրֆա:

Գաղթականների քարավանը ուղեկցող գերմանացի կապիտան Շապենը Ուրֆայում առևանգել է բժշկի գեղեցկուհի կնոջը, իսկ բժշկին Նրա հրամանով գնդակահարել են:

Հետագայում Շապենը

տիկին Սարաֆյանին իր հետ տարել է Հալեպ:

Նրա մասին.

Հռոտոված Հայաստան, Արշալույս (Ավրորա) Մարտիկանյանի հուշերը, Լոս Անջելես, 1995, 212 էջ

ՍԱՐԳԻՍ

Ծնվել է Սեբաստիայի նահանգի կենտրոն Սեբաստիա քաղաքում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

Սպանվել է 1915թ., Ռեֆաիումում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուււաւատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

3. Թէոդիկ, Յուււարծան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

ՍԱՐԻԿՅԱՆ ՀԱԿՈՒՐ

Ծնվել է 1880թ., Եդեսիայի նահանգի կենտրոն Եդեսիա քաղաքում: 1902 թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի դեղագործական բաժինը և դեղագործ աշխատել:

Սպանվել է 1915թ., Եդեսիայում 35 տարեկանում:

Նրա մասին.

1. Յուււաւատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

2. Թէոդիկ, Յուււարծան նահատակ մտաւորականութեան, Ե., 1985:

3. Քեստենեան Հրաչ, Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտել Մեծ Եղեռնին նահատակուած Հայ Բժիշկներ, “Ազդակ”, 01-11-2012



ՍԱՐԻԿՅԱՆ ԱՏԵՓԱՆ ՎԱՐՆԱԴԵՏ

Բնագետ, մշակութային գործիչ, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ:

Ծնվել է 1865թ., Կ. Պոլսի Գաղատիա թաղամասում:

1880թ. միացել է Մխիթարյան միաբանության (Վենետիկի սբ. Ղազար կղզի):

1887թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1890թ. ավարտել է Հռոմի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետը և աստվածաբանության ու փիլիսոփայության դոկտորի տիտղոս ստացել:

1890թ. վերադարձել է սբ. Ղազարի վանքը:

1891-93թթ. սբ. Ղազար վանքի դպրոցի ուսուցիչ և տեսուչի օգնական է աշխատել:

1898-99թթ. միաժամանակ եղել է Վենետիկի Մխիթարյան միաբանության «Բազմավէպ» հանդեսի խմբագիրը և տպարանի տեսուչը, բնագիտական հոդվածներով աշխատակցել հանդեսին:

1899-1901թթ. «Բազմավէպի» համարներում լույս են տեսել նրա «Մագնիսական քուն» վերնագիրը կրող հոդվածները՝ նվիրված հիպնոսի առեղծվածներին:

1902/05թ. գրել է հայ իրականության մեջ առաջին երկը դարվինիզմի և տեսական ծագման մասին:

1902-06թթ. եղել է Մխիթարյանների Փարիզի Մուրատ-Ռափայեյան վարժարանի տեսուչը:

1906-10թթ. Եդիսաբերուպոլսում եղել է առաքելական քարոզիչ:

Այնուհետև որոշ ժամանակ ուսուցչություն է արել

իր ծննդավայր Կ. Պոլսի Գաղատիա թաղամասում:

1910թ. տեղափոխվել է Տրապիզոն և վարել տեղի հայ կաթոլիկների վարժարանների տեսուչի ապա՝ հոգևոր հովվի պաշտոնները:

1915թ. զոհվել է Մեծ Եղեռնի ժամանակ, Տրապիզոնում 50 տարեկանում:

Սույն գրքում ընդգրկվելը պատճառաբանված է նրա բնագիտական և հոգեբանական խորը գիտելիքների իմացության փաստով:

Առավել հիշարժան շխատությունները.

Ընթացք տեսական աստուածաբանութեան, 1894, 825 էջ:

Մագնիսական քուն, Վենետիկ, 1901: Մինչ այդ լույս է տեսել «Բազմավէպի» 1899-1901թթ. համարներում:

Էականերու ծագումը, 1902/1905: Հանդիսանում է հայ իրականության մեջ առաջին երկը դարվինիզմի և կյանքի ծագման մասին:

Նրա մասին

1. Թէոդիկ, Յուււարծան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

2. Փաշայան Ասատուր, Տիտղոսակիր հայեր, XV-XIX դարեր, Երևան, 2001:



ՄԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

Ծնվել է 1880թ. փետրվարի 20-ին, Բրուսայի նահանգի Նիկոմիդիայի գավառակի Օվաջըկ գյուղում:

1905թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան դեղագործական վարժարանը:

1905թ. տեղափոխվել է Տրապիզոնի նահանգի Սամսոն քաղաքը և կառավարական դեղագործ աշխատել:

1907թ. տեղափոխվել է Սիվրիհիսար քաղաքը և կառավարական դեղագործ աշխատել: Այստեղ ամուսնացել է և սեփական դեղատուն բացել:

Շուտով դարձել է Սիվրիհիսարի ազգային գործիչներից մեկը և մշակութային, ազգային, քաղաքական աշխույժ գործունեություն ծավալել:

1914թ. Առաջին աշխարհամարտի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և Անկարայի զինվորական դեղագործ ծառայել:

1915թ. վերադարձել է Սիվրիհիսար և տեղի հայության հետ քարտրվել մինչև Ռակկա:

Աքսորի ճանապարհին

կորցրել է իր 40 հոգանոց ընտանիքի անդամներին, իսկ ինքը հրաշքով փրկվել:

Ռակկայում թաղապետական առողջապահական պաշտոնյա և բժշկական փոխանորդ է նշանակվել և աշխատելու ընթացքում բազմաթիվ տարագիրների և որբերի ազատել ստույգ մահից:

Հետագայում հաստատվել է Հալեպում և սեփական դեղատուն բացել:

Որդին՝ Վազգեն Սեյանը ևս դեղագործ էր Հալեպում:

Նրա մասին.

Տեր Յովհաննեսեան Գրիգոր, Պատմագիրք Սիվրի-Հիսարի հայոց, Պեյրուք, 1965:

ՄԵՂՐՈՍՅԱՆ ՄԻՄՈՆ

Ծնվել է մոտ 1850թ., Կ. Պոլսի ասիական կողմի Սկյուտար թաղամասում:

1874թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

1880-90-ական թվականներին Կ. Պոլսի սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցում բժիշկ է աշխատել:

1904թ. դրուկյամբ Կ. Պոլսի Բերա թաղամասում բժիշկ է աշխատել:

Մահացել է 1917թ. մարտի 27-ին, ժանտախտից՝ մոտ

67 տարեկանում:

Նրա մասին.

1. Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1905:

2. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

3. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

4. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՄԵՂՈՒՀ

Ծնվել է Կարինի նահանգի Երզնկայի գավառի կենտրոն Երզնկա քաղաքում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

Սպանվել է 1915թ., Կարինի նահանգի Երզնկայի գավառի Կամախի (Քեմախ) գավառակի կենտրոն Կամախ ավանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուլշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնե-

ան, Պեյրուք, 1965:

3. Թեոդիկ, Յուլշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

4. ՀՅԹԻՖ, ֆ-49, ծ-231, պ-14:

ՄԵՎԿ ՌՈՒԲԵՆ ՏԵՆ՝ ԶԻԼԻՆԿԻՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՄԵՎՅԱՆ ԲԱՐՍԵՂ

Ունեցել է բարձրագույն բժշկական կրթություն և Մարաշում աշխատել բժիշկ: Ունեցել է կին և երեխաներ:

1915 թ. մայիսի 1-ին Մարաշի թուրք կառավարիչ „մարդակերպ գազան“ Սյունթազ բեյը ութ հայ ընտանիքի արտաքսել է Մարաշից և քարտրել:

Դրանց մեջ էր նաև բժիշկ Բարսեղ Սևյանն իր ընտանիքով:

Ըստ Ա. Յարմանի 1920 թ. Մարաշում շարունակել է աշխատել բժիշկ:

Նրա մասին.

1. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

2. Մարաշի Տեր Ղեւոնդ քահանայի յուշերը, Ե., 2013, 464+16 էջ

ՍԵՐԱՑՏԱՐՑԱԼ ԱՐՄԵՆԱԿ ԳԱՍՊԱՐԻ

Ծնվել է 1880/82թ., Սեբաստիայի նահանգի կենտրոն Սեբաստիա քաղաքում / նույն նահանգի Եվդոկիայի գավառի Չիլե ավանում՝ բրուտ Կարոյեան Գասպարի ընտանիքում:

Դեղագործ Տիգրան Սեբաստիայի եղբայրն է:

Նախնական կրթությունն ստացել է Սեբաստիայի ազգային վարժարանում, միջնակարգը՝ քաղաքի ավետարանականների վարժարանում:

1903-07թթ. սովորել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետում և բժշկի վկայական ստացել:

Ըստ Արշակ Ալպոյաճյանի՝ բժշկական կրթությունն ստացել է 1891թ. ԱՄՆ-ում:

1907թ. վերադառնալով Սեբաստիա՝ բժիշկ է աշխատել: Հետագայում աշխատել է Չիլեում:

Եղել է ՀՅԴ անդամ:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և իբրև պահեստային զինվորական բժիշկ՝ թողնվել ծառայելու Եվդոկիայում:

1915թ. Եվդոկիայում Շո-

ուրբե րեխի («[Չինվորագրության] բաժնի պետ») Քեոր բինբաշի («Կույր մայր») հրամանով ձերբակալվել է և բանտարկվել: Մերժել է իսլամությունն ընդունել և ճաշակել է բանտի դառնությունները: Որոշ ժամանակ անց, նույն հրամանատարի հրամանով, ազատվել է:

Բանտից դուրս գալուց և իր զինվորական համազգեստը վերստանալուց անմիջապես հետո, Սեբաստիայի հայ բնակչության տեղահանության ժամանակ, Եվդոկիայի ճանապարհին, ընտանիքի անդամների աչքի առաջ, եղբոր հետ միասին սպանվել է Քեոր բինբաշի հրամանով՝ մոտ 35 տարեկանում: Նախապես բժշկից վերցրել են սուրը և նրան հանձնել ուղեկցող ոստիկան-զինվորների ձեռին ու տանջանքներին:

Այլ տվյալով՝ Եվդոկիայում կախաղան է հանվել իր երկու հայ բժիշկ պաշտոնակիցների՝ Միսաք Փանոսյանի և մարզվանցի Հակոբ Էմինյանի հետ միասին:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուժած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եւդոկիոյ հայոց, Գահիրէ, 1952:

3. Կարոյեան Գասպար,

Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

4. Սահակյան Լիլիկ, Ոճրագործները չինայեցին նույնիսկ մարդու կյանքը փրկողներին, «Առողջապահություն», Երևան, 1965, թ. 4:

5. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

6. Թեոդիկ, Գողգոթայ հայ հոգեւորականութեան, Նիւ Եորք, 1985:

7. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երևան, ապրիլ 24, 1985:

8. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

9. Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ալբոմ-ատլաս, Բ. հատոր, Գոյամարտ, 1914-1925, Լոս Անճելըս, 2001:

10. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

11. Խաչատրյան Լ. և ուրիշ. Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:

12. Զեստենեան Հրաչ,

Պէյրուքի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ Եւ Մեծ Եղեռնին Նահատակուած Հայ Բժիշկներ, “Ազդակ”, 01-11-2012

ՍԵՐԱՑՏԱՐՑԱԼ ԽԱՉԻԿ

Ծնվել է Սեբաստիայի նահանգի կենտրոն Սեբաստիա քաղաքում:

Ավարտել է Եվդոկիայի դեղագործական դպրոցը: Եղել է Եվդոկիայի անվանի դեղագործներից մեկը:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական դեղագործ ծառայել:

Սպանվել է 1915թ., Եվդոկիայում / Չիլեում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուժած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եւդոկիոյ հայոց, Գահիրէ, 1952:

3. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

4. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն,

Երևան, ապրիլ 24, 1985:

5. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

6. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

7. Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), Երևան, 2001:



**ՍԵՐԱՅՏԱՐՑԱԼ
(ՍԱՐԱՅՏԱՐՑԱԼ) ՄԻՂՐԱՆ**

Ծնվել է Տրապիզոնի նահանգի Կիրասոնի գավառի Կիրասոն քաղաքում՝ ունևոր ու բարեկիրթ գերդաստանում:

Սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրի ազգային վարժարանում, միջնակարգը՝ Մարզվանի ամե-

րիկացի միսիոներների Անատոլիա կոլեջում:

Բժշկական կրթությունն ստացել է ԱՄՆ-ում:

Մի քանի տարի աշխատել և կատարելագործվել է ԱՄՆ-ում:

Վերադարձել է Կիրասոն և զբաղվել բժշկությամբ:

Եղել է անվանի բժիշկ, հասարակական եռանդուն գործիչ, հարգված՝ հայերի և օտարների կողմից:

1915թ. ձերբակալվել է և սպանվել:

Կինը՝ Պայծառը, իր ձեռքերով փորած փոսերում իր մեռած երեխաներին թաղելուց հետո նետվել է Եփրատ գետը, սակայն նրան փրկել են: Հետագայում Պայծառը երկար ժամանակ փնտրել է կորած ավագ որդուն, որը սովորում էր Կ. Պոլսի Պերպերյան վարժարանում:

1918թ. Պայծառը իր որդի Սուրենին գտել է Եգիպտոսի Չակագիկ քաղաքում, որտեղ օսմանյան բանակի զինվոր էր ծառայում: Սուրենը Եգիպտոսում գերի է ընկել անգլիացիներին: Ազատվելուց հետո Կահիրեում աշխատել է Կամսարականների ծխախոտի գործարանում: Ամուսնացել է բանասեր և ուսուցիչ Հմայակ Ծեմսի (Սափրիչյան) քրոջ՝ Հայկուհու հետ և ունեցել որդի: Մահացել է ամուսնությունից 4 տարի հետո:

Նրանց Վահե որդին 1960թ. ԱՄՆ Քենթըքի նահանգի համալսարանի դասախոս (պրոֆեսոր) է աշխատել:

Նրա մասին.

1. Սելջօնքեան Թովմաս (բուն մականունով՝ Գարագաշեան), “Կիրասոն (Իմ ծննդավայրս)”, տպարան “Ահակ-Մեսրոպ”, Գահիրե, 1947, 108 էջ

2. Յովակիմեան (Արշակունի) Յովակիմ, Պատմութիւն Հայկական Պոնտոսի, Պէյրուք, 1967:

3. Իսկահատեան Հ., Վկայարան հայկական ցեղասպանութեան, Գիրք Գ, Պէյրուք, 2011, 395 էջ

**ՍԵՐԱՅՏԱՐՑԱԼ ՍՈՒՐԵԼ
ԳԱՄՊԱՐԻ**

Ծնվել է Սեբաստիայի նահանգի կենտրոն Սեբաստիա քաղաքում՝ բրուտ Գասպար Կարոյանի ընտանիքում:

Բժիշկ Արմենակ Սերայտարյանի եղբայրն է:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

Սպանվել է 1915թ.:

Նրա մասին.

Խաչատրյան Լ. և ուրիշ., Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:

**ՍԵՐԱՅՏԱՐՑԱԼ ՏԻԳՐԱՆ
ԳԱՄՊԱՐԻ**

Ծնվել է 1883թ., Սեբաստիայի նահանգի Սեբաստիա քաղաքում, բրուտ Գասպար Կարոյանի ընտանիքում:

Բժիշկ Արմենակ Սերայտարյանի եղբայրն է:

Ավարտել է Բեյրութի Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանը և դեղագործի կոչում ստացել:

Վերադառնալով Սեբաստիա՝ դեղագործ է աշխատել:

Եղել է հնչակյան կուսակցության գործիչ:

1915թ., Սեբաստիայի հայ բնակչության տեղահանության ժամանակ, Եվրոպիայի ճանապարհին, Չիլեի մոտ, ընտանիքի անդամների աչքի առաջ, Արմենակ եղբոր հետ միասին սպանվել է թուրք ոստիկանապետ Շուլեբե ռեիսի (Բաժանմունքի պետ) Ջեոր բինբաշիի հրամանով՝ ոստիկան-զինվորների ձեռքով:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եւրոպիոյ հայոց, Գահիրե, 1952:

3. Ահարոնեան Գ., Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), Պէյրուք, 1965:

4. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

5. Հայրապետյան Վ., Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Ե., 1990:

6. Խաչատրյան Լ. և ուրիշ., Յուշակ Հայոց ցեղասպանութեան զոհեր (1915-1922), գիտ. հոփարակ (1985-1992), Երևան, 1992:



ՍԵՐԹԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

Ծնվել է 1880/83թ., Կարիտում / Մուշում:

Նախնական կրթությունն ստացել է Կարինի թաղային վարժարանում:

1902թ. ավարտել է Կարինի Սանասարյան վարժարանը:

1902-10թթ. սովորել և հուլիսի 21-ին ավարտել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1905-10թթ., ուսմանը զուգահեռ, օգնական բժիշկ է աշխատել Փարիզի հիվանդանոցներում:

1910-12թթ. որպես օգնական բժիշկ աշակերտելով

ակնաբուժության պրոֆեսորներ Մոռաքսին և Քալթին, մասնագիտացել է ակնաբուժության գծով:

1912թ. ֆրանսերենով գրել է «Բնական և արհեստական աչքի դերը դիմագծության մեջ» ավարտաճառը, որի մասին փիլիսոփայության նշանավոր պրոֆեսոր Դյուլման դրվատանքով է խոսել Սորբոնի համալսարանում կարդացած իր դասախոսության ընթացքում:

Փարիզում անդամակցել է Հայ բժշկական միությանը: 1912թ. վերադարձել է Կ. Պոլիս և հաստատվել Բերաթաղամասում:

1912-14թթ. Կ. Պոլսի սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցի հոգաբարձության հրավերով ակնաբույժ է աշխատել այդ հիվանդանոցում:

1912թ. օգոստոսին մասնագիտական հոդված է տպագրել Կ. Պոլսի «Gazette Medicale d'Orient» ֆրանսերեն բժշկական հանդեսում:

Կ. Պոլսում սեփական ակնաբուժարան է բացել: Եղել է ՀՅԴ անդամ:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին զորակոչվել է օսմանյան բանակ, ուղարկվել Երզնկա և զինվորական բժիշկ-ակնաբույժ ծառայել:

Երզնկայում եղել է անվանի ակնաբույժ:

1915թ. հուլիսի 4-ին Երզնկայում դիմել է Գերմանական Կարմիր խաչի 3-4 գերմանացի բժիշկներից բաղկացած պատվիրակությանը և խնդրել նրանց միջամտությունն ու պաշտպանությունը թուրքերից՝ եթե նրանք ձեռնարկեն հայ բժիշկների սպանությունը:

Նրա խնդրանքին գերմանացի բժիշկները պատասխանել են լռությամբ. ավելին, նրան, իբրև դավաճանի, ներկայացրել են թուրքական իշխանություններին:

1915թ. հուլիսի 5-ին Երզնկայի քաղաքային իշխանության ոստիկանները «դավաճան» բժշկին ձերբակալել են և նույն օրը սբ. Ստեփանոս եկեղեցու մեջ քարկոծելով սպանել, այլ տեղեկությամբ՝ սրախողխող արել:

Աշխատությունը. Աչքի բուժման ատրոպիների երկու նոր կիրառումը, «Gazette Medicale d'Orient», 1912թ., օգոստոս:

Նրա մասին. 1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Ազգային հիւանդանոցի մէջ պաշտօնավարած բժիշկները, Ընդարձակ տարեգիրք Ազգային հիւանդանոցի, Իսթանպուլ, 1939:

3. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ

բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

4. Սահակյան Լիլիկ, Ոճրագործները չխնայեցին նույնիսկ մարդու կյանքը փրկողներին, «Առողջապահություն», Երևան, 1965, թ. 4:

5. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

6. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

7. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

8. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

9. Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը, 2. տարի, Կ. Պոլիս, 1912, Բ. հրատարակութիւն, Հալէպ, 2008:

ՍԵՐԻԿՅԱՆ ՀԱԿՈՔ

Դեղագործական կրթություն է ունեցել:

1915թ. դրությամբ Եդեսիայում դեղագործ է աշխատել:

1915թ. նահատակվել է Եդեսիայում: Նրա մասին.

Սահակեան Արամ, Դիւ-
ցազնական Ուրֆան եւ իր
հայրորդիները, Պէյրուս,
1955:

ՍԵՆԵՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ

Ծնվել է մոտ 1895թ.:
Սովորել է Կ. Պոլսի Անաս-
նաբուժական վարժարա-
նում:

1914թ. Առաջին համաշ-
խարհային պատերազմի
սկզբին ընդունվել է Կ. Պոլսի
զինվորական վարժարանը:

1915թ. որպէս քաղաքա-
կան հանցագործ ձերբակալ-
վել է, բանտարկվել և աքսոր-
վել:

Վերապրել է:
1933թ. բնակվելիս է եղել
ԱՄՆ-ի Մասեչուսեթս նահան-
գի Ուոթըրթաուն քաղաքում:
Նրա մասին.
Գալուստեան Գրիգոր Հ.,
Մարաշ, Նիւ Եորք, 1934:

ՍԻՍՈՆ ԷՅԵՆԴԻ

1914թ. Առաջին համաշ-
խարհային պատերազմի
ժամանակ զորակոչվել է օս-
մանյան բանակ և Բաղդադի
հիվանդանոցում զինվորա-
կան բժիշկ ծառայել՝ կապի-
տանի աստիճանով:

1916թ. ապրիլի 17-ին
Բեյթ-ուլ-Արիսում հակահար-
ձակման ժամանակ զոհվել է:
Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը

օսմանյան առողջապահու-
թյան ծառայության մեջ և
պատմություն սուրբ Փրկիչ
հայոց հիվանդանոցի (թուր-
քերեն), Ստամբուլ, 2001:

ՍՄԲԱՏ

Ծնվել է Կոստանդնուպոլ-
սում:

Մասնագիտական կրթու-
թյուն է ունեցել և անասնա-
բույժ աշխատել:

Սպանվել է 1915թ., Երզն-
կայում:

Նրա մասին.

1. Յուշամատեան Մեծ
Եղեռնի (1915-1965), պատ-
րաստեց Գերսամ Ահարոնե-
ան, Պէյրուս, 1965:

2. Թեոդիկ, Յուշարձան
Նահատակ մտաւորակա-
նութեան, Բ. տպագրութիւն,
Երեւան, ապրիլ 24, 1985:

3. ՀՅԹԻՖ, ֆ-49, ծ-228,
պ-14:

ՍՅՈՒՄԵՆ ԷՅԵՆԴԻ

Ծնվել է 1890թ.:
Դեղագործական կրթու-
թյուն է ունեցել և դեղագործ
աշխատել:

1914թ. Առաջին համաշ-
խարհային պատերազմի
ժամանակ զորակոչվել է օս-
մանյան բանակ և 2-րդ պա-
հեստների վաշտի հիվանդա-
նոցի դեղագործ ծառայել՝
լեյտենանտի աստիճանով:

Մահացել է 1917թ. ապրի-

լի 17-ին, ժանտախտից՝ 27
տարեկանում:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը
օսմանյան առողջապահու-
թյան ծառայության մեջ և
պատմություն սուրբ Փրկիչ
հայոց հիվանդանոցի (թուր-
քերեն), Ստամբուլ, 2001:

ՍՅՈՒԼՅՈՒՃՅԱՆ ՍԱՐԳԻՍ (ՍԱՐԳԻՍ ՍՈՒԻՆ)

Ծնվել է 1870թ. օգոստոսի
15-ին, Կոստանդնուպոլսում:

Մասնագիտությամբ եղել
է գանգաբան և դիմագետ:

1900-ական թվականնե-
րին տպագրվել է Վառնայի
«Իրաւունք» և Կ. Պոլսի «Ժա-
մանակ» թերթերում:

Կրել է Ս.Ս., Սուլին Ս.,
Սարգիս Սուլին, Սուլին Սար-
գիս, *** ծածկանունները:

Կարևոր պաշտոններ
է վարել Կ. Պոլսի պատրի-
արքարանում, այդ թվում՝
պատրիարքարանի քար-
տուղարությունը, ընտրվել
Ազգային կենտրոնական
վարչության Քաղաքական
ժողովի անդամ:

1909թ. Կիլիկիայի կոտո-
րածներից հետո այցելել է
ադետի վայրերը և Կ. Պոլ-
սում կազմակերպել վերապ-
րած որբերի ու այրիների
օժանդակության աշխա-
տանքը՝ պատրիարքարանի
ծիրի մեջ:

Սպանվել է 1915թ.՝ 45

տարեկանում:

Նրա մասին.

1. Օտեան Երուանդ, Մեր
երեսփոխանները, Մեր Ազ-
գային ժողովը, Երեւան,
1999:

2. Հովակիմյան Բախտի-
ար, Հայոց ցեղասպանու-
թյան նահատակ գործիչնե-
րի ծածկանուններ, Երևան,
2002:

ՍՅՈՒՆԻ ԼԵՎՈՆ ԳԱՐԵԳԻՆԻ

Ծնվել է մոտ. 1880թ., Սե-
բաստիայի նահանգի Սե-
բաստիա քաղաքում անվա-
նի բժիշկ Գարեգին Սյունիի
(Հեքիմյան, 1851-1939) ըն-
տանիքում, այլ աղբյուրում՝
առևտրականի ընտանի-
քում:

1900/05թ. ավարտել է Բեյ-
րուրի Ամերիկյան համալսա-
րանի բժշկական ֆակուլտե-
տը:

1914թ-ից Սեբաստիա քա-
ղաքի հայկական ազգային
հիվանդանոցում (հիմնադր-
վել է 1889թ.) և կառավարա-
կան հիվանդանոցում բժիշկ
(վիրաբույժ) է աշխատել:

1914թ. Առաջին համաշ-
խարհային պատերազմի
ժամանակ զորակոչվել է օս-
մանյան բանակ և զինվորա-
կան բժիշկ ծառայել 10-րդ
զորաբաժնի Կարինի շրջուն
հիվանդանոցում:

1915թ. դեկտեմբերի 22-

ին մահացել է ժանտախտից կամ թոքախտից, այլ աղբյուրում 1916թ. սպանվել Կարինի ռազմաճակատում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Գուժկան Սեբաստիոյ (Կ. Գաբիկեան), Եղեռնապատում Փոքուն Հայոց եւ Նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն, 1924:

3. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահուլթյան ծառայուլթյան մեջ և պատմուլթյուն սուլթր Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուլթրքերեն), Ստամբուլ, 2001:

4. Խաչատրյան Լ. և ուլթիշ., Յուլցակ Հայոց ցեղասպանուլթյան զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:

5. Զեստենեան Հրաչ, Պէյրուլթի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ եւ Մեծ Եղեռնին Նահատակուած Հայ Բժիշկներ, “Ազդակ”, 01-11-2012

ՍՅՈՒՐՆԻ (ՀԵՔԻՍՅԱՆ) ՏԻԳՐԱՆ

Ծնվել է 1861թ., Սեբաստիայի նահանգի Սեբաստիա քաղաքում:

Բժիշկ Գարեգին Սյունիի ավագ եղբայրը և Լևոն ու Արմենակ Սյունիների հորեղբայրն է:

բայրն է:

1885թ. մեկնել է ԱՄՆ և ուսանել է Նյու Յորքի համալսարանի բժշկական ֆակուլտետում:

Մասնագիտացել է քիկոկորդ-ականջի հիվանդուլթյունների բուժման գծով:

Վերադարձել է Սեբաստիայի նահանգի Յոզղաթի գավառի կենտրոն Յոզղաթ քաղաքը:

Որոշ ժամանակ անց ընտանիքով հաստատվել է Կ. Պոլսում և բժիշկ աշխատել:

Սպանվել է 1918թ. հունվարի 24-ին, Կ. Պոլսում:

Նրա մասին.

1. Մեզպուլթեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուլթենական համառօտ անուանացանկ (1688-1940), Խթթանպուլ, 1940:

2. Յարման Ա., Հայերը օսմանյան առողջապահուլթյան ծառայուլթյան մեջ և պատմուլթյուն սր Փրկիչ հայոց հիվանդանոցի (թրք.), Ստամբուլ, 2001:

3. Խաչատրյան Լ. և ուլթիշ., Յուլցակ Հայոց ցեղասպանուլթյան զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:

ՍՅՈՒՐՆԵԼՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

Դեղագործ Ստեփան Սյուլթմէյանի եղբայրն է:

Դեղագործական կրթուլթյուն է ունեցել:

Տրապիզոնում սեփական դեղատոուն է ունեցել և դեղագործ աշխատել:

Սպանվել է կամ մահացել 1916թ., Տրապիզոնում:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահուլթյան ծառայուլթյան մեջ և պատմուլթյուն սուլթր Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուլթրքերեն), Ստամբուլ, 2001:

ՍՅՈՒՐՆԵԼՅԱՆ ՍՏԵՓԱՆ

Դեղագործ Կարապետ Սյուլթմէյանի եղբայրն է:

Դեղագործական կրթուլթյուն է ունեցել:

Տրապիզոնում սեփական դեղատոուն է ունեցել և դեղագործ աշխատել:

Սպանվել է կամ մահացել 1916թ., Տրապիզոնում:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահուլթյան ծառայուլթյան մեջ և պատմուլթյուն սուլթր Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուլթրքերեն), Ստամբուլ, 2001:

ՍՅՈՒՐՆԵԼՅԱՆ ՎՐԹԱՆԵՍ

Դեղագործական կրթուլթյուն է ունեցել և դեղագործ

աշխատել:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական դեղագործ ծառայել:

Սպանվել է 1915թ., Տրապիզոնում արքորում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Հայրապէտյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործուլթյան պատմուլթյունից, Երևան, 1990:

ՍՈՐՈՍՈՆ

Ա տ ա մ ն ա բ ու ժ ա կ ա ն կրթուլթյուն է ունեցել և ատամնաբույժ աշխատել:

Եղել է Չմյուռնիա քաղաքի ճանաչված ատամնաբույժներից մեկը:

1922թ. սեպտեմբերի 12-ին, երեքշաբթի, ի թիվս բազմաթիվ հայերի, իր կնոջ հետ միասին սպանվել է Չմյուռնիա քաղաքի Կարադաշ թաղամասում, քաղաքում թուլթրքերի իրականացրած` հայերի և հույների ընդհանուլթ կոտորածի, կողոպուտի և հրդեհի ժամանակ:

Նրա մասին.

Տէրենց Յա. (Տէր-Յակոբեան), Իզմիրի աղէտը եւ մեծ հրդեհին մանրամասնու-

թիւները, «Ազգ», Երևան, 08-12-2007:

ՍՈՐՈՍՈՒՑԱՆ (ՍՈՐՈՍՑԱՆ) ՀԱԿՈՐ

Ծնվել է Սեբաստիայի նահանգի Եվդոկիայի գավառի Բիլեջիկ (Բիրեջիկ) քաղաքում:

Ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան դեղագործական վարժարանը:

1892թ. Կ. Պոլսի Բահչե կափու թաղամասի Իքի կափուլը («Երկդռնանի») դեղատանը դեղագործ է աշխատել: Այնուհետև տեղափոխվել է ծննդավայրը՝ Բիլեջիկ:

Մահացել է 1915թ. Կոնիայում՝ արքայազն գտնվելու ժամանակ, ժանտախտից:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահուլթյան ծառայուլթյան մեջ և պատմուլթյուն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՍՈՍՈՒԼՃՑԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Բժիշկ, ազգային, հասարակական, կուսակցական գործիչ:

Ծնվել է 1879թ., Բրուսայի նահանգի Նիկոմիդիայի գավառակի Պարտիզակ ավանում:

Սովորել է ամերիկացի միսիոներների Պարտիզակի Բյութանիայի բարձրագուլն վարժարանում:

Ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական համալսարանը:

Երկար տարիներ Բրուսայի հայաշատ շրջաններում բժիշկ, ապա՝ քաղաքատական բժիշկ է աշխատել:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ գորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել:

Պաղեստինի ռազմաճակատում գերի է ընկել անգլիացիներին:

1922թ. Փոքր Ասիայի աղետի հետևանքով ապաստանել է Հունաստանում և հաստատվել Թրակիայի Քոմոթինի (Գյումյուլջինա) քաղաքում, ուր ապրել և աշխատել է 35 տարի:

Քոմոթինիի հայ համայնքի պառակտման ամենասուր շրջանում գտնվել է պայքարի առաջին գծի վրա՝ մնալով ՀՅԴ-ի կողքին:

Ժողովրդական ընտրության արդյունքում ստանձնել է Քոմոթինիի ազգային մարմնի ատենապետի պաշտոնը: Ընտրվել է նաև Քոմոթինիի քաղաքատական

խորհրդի անդամ՝ 4 տարինով:

Հանրային շահերի և ազգային-քաղաքական առաջադրուլթյունների առողջ ըմբռնում է ունեցել, եղել խղճամիտ բժիշկ, բնավորությամբ շենշող, ընկերական, ուղղամիտ, սիրված բոլորից:

Մահացել է 1957թ. հոկտեմբերի 1-ին, Քոմոթինի քաղաքում՝ 78 տարեկանում:

Նրա մասին.

Գեորգեան Կարօ, Ամէնուն տարեգիրքը, 2. տարի, 1959, Պէյրուք, 1960:

ՍՏԱՄԲՈՒՅՑԱՆ ՊԵՏՐՈՍ

Ծնվել է Սեբաստիայի նահանգի կենտրոն Սեբաստիա քաղաքում:

Բուժակ է աշխատել:

Սպանվել է 1915թ.:

Նրա մասին.

Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:

ՍՏԵՓԱՆՑԱՆ ՍԱՐԳԻՍ

Ծնվել է Հալեպի նահանգի Մարաշի գավառի Գերքեշ

բնակավայրում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

Մահացել է 1916թ. մայիսի 11-ին, Իրաքում, Քուք-Էլ-Մարայի հիվանդանոցում, ժանտախտից:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

ՍՐԱԴՊԱՆ ԳԱՍԴԱՐ

Ծնվել է 1883թ., Խարբերդի նահանգի Խարբերդի գավառի Հյուսէյնիկ գյուղում:

Դեղագործ է աշխատել:

Սպանվել է 1915թ.՝ 32 տարեկանում:

Նրա մասին.

1. Յուլշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

2. Թեոդիկ, Յուլարձան նահատակ մտաւորակաւնութեան, Բ. տպագրութիւն, Երևան, ապրիլ 24, 1985:

3. Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի նահանգ, Երևան, 2004:

ՄՐԱՊԵՍՆ ՍԱՍՎԵԼ 8.

Խարբերդի նահանգի Խարբերդի գավառի, իր ծննդավայր Հյուսեյնիկ գյուղում ուսուցիչ է աշխատել:

1918թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1918թ. գորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել:

1918թ., զինադարձից քիչ առաջ Պաղեստինում գերի է ընկել անգլիացիներին:

Ծառայությունը շարունակել է Անգլիական բանակի առողջապահական բաժնում:

Հետագայում վերադարձել է Բեյրութ:

Նրա մասին.

Հիւսեյնիկ, խմբագիր՝ Կ. Ահարոնեան, Պոսթըն, 1965:

ՄՐՍԱԶԵՇՅԱՆ ՀՐԱՆՏ

Ծնվել է մոտ. 1888թ., Կոստա-նդնուպոլսում:

1913թ. հոկտեմբերի 17-ին ավարտել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Մուսուլի կենտրոնական հիվանդանոցի բժիշկ է աշխատել:

Մահացել է 1915թ. հունվարի 8-ին, ժանտախտից:

Նրա մասին.

1. Հայ բժշկութան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

ՍՈՒՐՅԱՆ 9.

Բժշկական կրթութիւնը եւ ունեցել և բժիշկ աշխատել:

1912-15թթ. բնակվել է Կոստ-անդնուպոլսում և բժիշկ աշխատել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել:

Կարսի ռազմաճակատում փախել է բանակից, անցել ռուսական կողմը և գնացել Կարս:

1919թ. Կարսի ձորի 3-րդ հայկական որբանոցի բժիշկ է աշխատել:

1920թ. հոկտեմբերի 30-ին թուրք ասքյարները մտել են ձոր ու կրակ բացել որբանոցի վրա: Այդ ժամանակ բժիշկը երեխաներին հանգստացնելու նպատակով մտել է սենյակ: Թուրքի զնդակը ջարդելով լուսամտի ապակին, խրվել է բժշկի սիրտը:

Այնուհետև թուրքերը մտել են որբանոց և երեխաների ու մեծերի վրա կրակ

բացել:

Այստեղ քեմալականները անմարդկային ու սարսափելի շատ արարքներ են կատարել:

Որբանոցի մյուս բժշկին՝ օսմանյան բանակից նույնպես փախած Ղարաքեշիշյանին թուրքերը որբանոցից տարել են իրենց հետ:

Երկուսն էլ հրաշալի մարդիկ և փայլուն մասնագետներ են եղել:

Նրա մասին.

1. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

2. Ալեքսանդրյան Արտաշես, Կարս. 1920-21, Երևան, 1986:

3. Ալեքսանդրյան Արտաշես, Միջավանք, Երևան, 2001:

ՎԱՀԱՆ

Ծնվել է Արևելյան Հայաստանի Երևանի նահանգի Ալեքսանդրապոլ քաղաքում:

Մասնագիտությամբ եղել է բուժակ:

Գերի է ընկել 1920թ. հոկտեմբերի 30-ին Կարսի թուրքական գրավման ժամանակ:

1920թ. դեկտեմբերին հայերի 31 հոգանոց մի խմբի հետ (որոնց մի մասը եղել է

զինված), Կարսից փախել է դեպի Ալեքսանդրապոլ:

Վահանի մոտ եղել է ճամփորդական դեղարկղ:

Ճանապարհին, գիշերով լեռն ի վեր մագլցելու ժամանակ, Էպիլեպտիկ նոպա է ունեցել ու գլորվել ձորը: Որոնումը արդյունք չի տվել...

Նրա մասին.

Ալեքսանդրյան Արտաշես, Կարս. 1920-21, Երևան, 1986:

ՎԱՀԵ

Բժշկական կրթութիւնը եւ ունեցել և բժիշկ աշխատել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ, ուղարկվել Կարինի ռազմաճակատ և զինվորական բժիշկ ծառայել:

Կինը՝ Արաքսին ամուսնու հետ մեկնել է Կարին:

1919թ. դոկտոր Ս. Չարևանդը այցելել է Չանդորը և հանդիպել Արաքսին, որը ամուսնացել էր թուրք բժիշկ Չիա բեյի հետ և Մյունիքե հանրմ դարձել:

Ենթադրվում է, որ Չիա բեյը Կարինում սպանել է բժիշկ Վահեին և Նրա կնոջը բռնությամբ տիրացել:

Նրա մասին.

Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատ-

գամները), Պոսթոն, 1957:

ՎԱՂԱՐՇԱԿ

Ծնվել է 1888թ., Վանում:
Ուսանել է բժշկական վարժարանի 3-րդ դասարանում:

Մահացել կամ սպանվել է 1915թ.՝ 27 տարեկանում:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

ՎԱՐՄԱՆ ԷՅԵՆԴԻ

Ծնվել է 1885թ., Սեբաստիայում:

Ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և Պաղեստինում մի հոսպիտալում (մենզիլ) ծառայել զինվորական բժիշկ՝ լեյտենանտի աստիճանով:

Մահացել է 1918թ., հունիսի 22-ին, հոսպիտալում՝ 33 տարեկանում:

Նրա մասին.

1. Ատաշ Աղնան, 20-րդ դարի նահատակ եղած բժիշկները (թուրքերեն), Թուրքիա, 1997:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ

և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիւանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՎԱՐՄԱՆՅԱՆ ԷՅԵՆԴԻ

Բժշկական կրթություն է ունեցել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կապիտանի կոչումով զորակոչվել է օսմանյան բանակ և 11-րդ զորաբաժնի 5-րդ շրջուն հիւանդանոցում զինվորական բժիշկ ծառայել:

Մահացել է 1915 / 1916թ. հունվարի 29 (փետրվարի 11)-ին, Կարինի հիվանդանոցում, ժանտախտից:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիւանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՎԱՐՄԱՆՅԱՆ ԲԱՂԱՍԱՐ

Ծնվել է 1883թ., Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառի Տիվրիկի գավառակի Չմառա ավանում:

Դեղագործ Վահան Վարդանյանի եղբայրն է:

Նախնական և միջնա-

կարգ կրթությունն ստացել է ծննդավայրի Ազգային Արամյան վարժարանում:

Ավարտել է Հիսուսյան միաբանության Սեբաստիայի բարձրագույն վարժարանը (կոլեջ) և կատարելագործվել ֆրանսերեն լեզվի գծով:

1906թ. ավարտել է Բեյրութի Սեն Ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1906թ. վերադարձել է Սեբաստիա և բժիշկ աշխատել: Ունեցել է ընտանիք:

Եղել է Սեբաստիայի ՀՅԴ կազմակերպության եռանդուն գործիչներից:

1915թ. մարտին Բաղդասար Վարդանյանը լուր է ստացել, թե հայդուկ Սեբաստացի Մուրատը բժավոր տենդով ծանր հիվանդ է Սախարի լեռան վրա և անհետաձգելի բուժման կարիք ունի:

Բժիշկ Բաղդասարը և բժիշկ Արմենակ Հայրանյանը գաղտագողի բարձրացել են սարը և խոնավ քարայրում գտել ծանր հիվանդ Սեբաստացի Մուրատին: Նշանակել են անհրաժեշտ բուժումը, դեղերը տվել և վերադարձել: Մի քանի օրից Մուրատը լավացել է, և թուրքերի դեմ կռիվներում նորանոր սխրանքներ գործելով հասել մինչև Կովկաս: Սակայն երկու բժիշկները ձերբակալվել են ու բանտարկվել:

1915թ. մայիսին կամ հունիսին, Սեբաստիայի մոտակայքում, Մաշարլար Երի վայրում, Սեբաստիայի արյունարբու նահանգապետ Մուամմերի հրահանգով թուրք ոստիկան-զինվորների ձեռքով ընտանիքի անդամների հետ միասին սրախողխող է արվել՝ 32 տարեկանում: Այնուհետև նրանց մարմինները կտորկտոր են արել՝ ի սարսափ մյուս հայերի:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Համբարձումյան Վահան, Գիւղաշխարհ, Փարիզ, 1927:

3. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

4. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

5. Կազմեց Առաքել Ն. Պատրիկ, Պատմագիրք Յուշամատեան Սեբաստիոյ Եւ Գաւառի Հայութեան, հ. Ա., Նիւ Եորք, Պէյրուք, 1975, 880 էջ

6. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորակաւորութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

7. Հայրապետյան Վանիկ,

Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

8. Համբարձումյան Վահան, Գյուղաշխարհ, Երևան, 2000:

9. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիւանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

10. Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (Կազմողներ), Ցուցակ հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:

11. Իսկահատեան Հ., Վկայարան հայկական ցեղասպանության, Գիրք Գ, Պէյրուզ, 2011, 395 էջ

ՎԱՐՄԱՆ ԱՐՍԵՆ

Ծնվել է մոտ. 1890թ., Տրապիզոնի նահանգի Կիրասոնի գավառի Կիրասոն քաղաքում:

1914թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Մասնագիտությամբ եղել է բժիշկ:

Եղել է ՀՅԴ գործիչ: «Մեսիր» ծածկանունով տպագրվել է Թիֆլիսի «Ազատամարտ» (1917) և «Հայաստան» (1917, N 6, 7, 9, 10, 23-

25) թերթերում: Սպանվել է 1919թ. Պարսկաստանի Համադան քաղաքի մերձակայքում՝ մոտ 30 տարեկանում:

Նրա մասին.

1. Մեզպուրեան Արթուր, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

2. Յուզամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցության, Ալբում-ատլաս, Բ. հատոր, Գոյամարտ, 1914-1925, Լոս Անճելես, 2001:

3. Հովակիմյան Բախտիար, Հայոց ցեղասպանության նահատակ գործիչների ծածկանուններ, Երևան, 2002:

ՎԱՐՄԱՆ ՄԵՍՐՈՊ ԱՐԱԳԻՍ

Ծնվել է 1888թ. Չերայում, հայ առաքելական ընտանիքում:

1914թ. ավարտել է Բեյրութի ամերիկյան համալսարանի բժշկական բաժինը:

1914թ. զորակոչվել է օսմանյան բանակ և ծառայել որպես զինվորական բժիշկ:

1915թ. սպանվել է ծառայության ընթացքում:

Նրա մասին.

Քեւտենեան Հրաչ, Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ եւ Մեծ Եղեռնին Նահատա-

կուած Հայ Բժիշկներ, “Ազդակ”, 01-11-2012

ՎԱՐՄԱՆ ՎԱՀԱՆ ԴԱՎԻԹ

Ծնվել է 1877/80/82թ., Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառի Տիվրիկի գավառակի Չմառա ավանում:

Բժիշկ Բաղդասար Վարդանյանի եղբայրն է:

1907թ. ավարտել է Բեյրութի Սեն Ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի դեղագործական բաժինը:

Սեբաստիայում սեփական դեղատուն է ունեցել և դեղագործ աշխատել:

Եղել է ամուսնացած և ընտանիքատեր:

Եղել է Սեբաստիայի ՀՅԴ Կենտրոնական կոմիտեի կարկառուն դեմքերից:

1915թ. մարտին / ապրիլին ձերբակալվել են դեղագործ Վահանը, Մշեցի Մարտիրոսը, Հովհաննես Փոլադյանը և ուրիշներ:

Մի քանի օր անց, Սեբաստիայից դուրս, գաղթի ճանապարհին, Մաշարլար երի վայրում, Սեբաստիայի արյունարբու նահանգապետ Մուսամբերի հրահանգով թուրք ոստիկան-զինվորների ձեռքով ընտանիքի անդամների և ընկերների հետ սրախողխող է արվել՝ մոտ 35 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Համբարձումեան Վահան, Գիւղաշխարհ, Փարիզ, 1927:

3. Յուզամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուզ, 1965:

4. Թեոդիկ, Յուզարձան Նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երևան, ապրիլ 24, 1985:

5. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

6. Համբարձումյան Վահան, Գյուղաշխարհ, Երևան, 2000:

7. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

8. Խաչատրյան Լ., Բաբլումյան Ա., Ցուցակ հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:



ՎԱՐԺԱԴԵՏՅԱՆ ԳԵՎՈՐԳ

Ծնվել է 1895թ., Բաղադում, վիրաբույժի ընտանիքում:

Պատանեկության տարիները անցել են Հալեպում:

Ավարտել է Հալեպի ազգային վարժարանը:

Ավարտել է Հալեպի Ֆրերների միջնակարգ դպրոցը:

Սովորել է Դամասկոսի բժշկական վարժարանում:

1916թ. ուսումը շարունակել է ավարտել է Կոստանդնուպոլսի բժշկական համալսարանը և ստացել բժշկի վկայական:

1916թ., երբ ընթանում էր Առաջին համաշխարհային պատերազմը, զորակոչվել է թուրքական բանակ և մատուցել տարբեր հիվանդանոցներում ծառայել որպես զինվորական բժիշկ:

Գերի է վերցվել անգլիական զորքի կողմից:

Որպես ռազմագերի անգլիական հիվանդանոցում ծառայել է վիրաբույժ:

1918թ. պատերազմի ավարտից հետո ազատվել է գերությունից:

Այնուհետև ծառայել է Կ. Պոլսում, Դարդանեղում, Մայտում:

1923թ. հաստատվել է

Հունաստանի Սելանիկ (Սալոնիկ) քաղաքում, որտեղ և աշխատել է մինչև իր կյանքի վերջը:

Սելանիկում ունեցել է իր սեփական հիվանդանոցը:

Եղել է հմուտ և բազմաշնորհ վիրաբույժ, սիրված ու հարգված քաղաքացի:

1947թ. եղել է Հունաստանի Սելանիկ քաղաքից դեպի Խորհրդային Հայաստան ներգաղթող քարավանները կազմակերպող հանձնախմբի ղեկավարը:

1947թ. հոկտեմբերի 12-ին Աթենքում հանկարծամահ է եղել Եվրոպա կատարած ճամփորդությունից վերադառնալիս:

1947թ.վականի հոկտեմբերի 19-ին թաղվել է Սելանիկի գերեզմանոցում:

Եղել է 52 տարեկան:

Նրա մասին.

Գեորգեան Կարո, Ամեն

19



ՎԵՂԵՏՅԱՆ (ՎԵՂԵՃՅԱՆ) ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (ԱՐԹՒՆ)

Ծնվել է 1875/83թ., Խարբերդի նահանգի Խարբերդի գավառի Հյուսեյնիկ գյուղում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում:

1900թ. ավարտել է Խարբերդի նահանգի իդադիե (միջնակարգ) կամ «Սուլթանիե» վարժարանը:

1900-07թթ. սովորել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանում:

Ուսանելու ընթացքում ստացել է ԱՄՆում բնակվող 2 եղբայրների նյութական օգնությունը:

1907թ.-ից Թալաս, ապա Զիլե քաղաքների թաղապետական բժիշկ է աշխատել:

1910թ. եղբայրներին տեսակցելու նպատակով մեկնել է ԱՄՆ Քոննեքթիկուտի նահանգի Նյու Հեյվըն քաղաքը, ուր վիրաբուժության գծով կատարելագործման դասընթացի է մասնակցել:

Վերադառնալով հայրենիք, Խարբերդի թաղապետական բժիշկ է նշանակվել:

1912թ. ամուսնացել է Մեզիրեի հանրածանոթ Հարություն Էֆենդի Խարփուլյանի դստեր՝ Արաքսի հետ և ունեցել Մասիս որդուն, որը հրաշքով փրկվելով կոտորածներից, հետագայում դարձել է դեղագործ և բնակություն հաստատել ԱՄՆ-ի Փրովիդենս քաղաքում:

1914թ. գարնանը Մեզիրեի քաղաքապետական կամ Հյուսեյնիկ գյուղի բժիշկ է նշանակվել:

Եղել է ՀԲԸՄ-ի անդամ:

1914թ. աշնանը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել:

1915թ. ձմռանկալվել է, բանտարկվել ու տարագրվել դեպի Մելիտինե:

Սպանվել է 1915թ., Մելիտինեում կամ Սեբաստիայի մոտակայքում՝ սրախողխող արվելով՝ մոտ 35 տարեկանում:

Այլ տվյալներով՝ 1915թ. հունիսի 25-ին, բժիշկներ Նշան Նահիկյանի և Մանվելի հետ նահատակվել է Մեզիրեի բանտում հայ արգելափակյալների ինքնահրկիզման ժամանակ:

Նրա մասին.

1. Հայ բժշկութան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Գուժկան Սեբաստիոյ (Կարապետ Գաբիկեան), Եղեռնապատում Փոքուն Հայոց եւ Նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն, 1924:

3. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

4. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

5. Հիւսէյնիկ, խմբագիր՝ Կ. Ահարոնեան, Պոսթըն, 1965:

6. Թեոդիկ, Յուշարձան ևահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

7. Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Յուշակ Հայոց ցեղասպանութեան զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբէն, 20



ՏԱՐԱՎԱՐՅԱՆ ՆԱԶԱՐԵԹ ՆԱԶԱՊԵՏԻ (ՎԱՀԱՆԻ)

Բժիշկ, բնագետ, գյուղատնտես, մանկավարժ, բանասէր, խմբագիր, Օսմանյան խորհրդարանի անդամ, Ազգային կենտրոնական վարչութեան Զառարանական ժողովի անդամ, հասարակական գործիչ:

Իսկական ազգանունը եղել է Չաղըրջյան կամ Չատրճյան:

Ծնվել է 1862թ. դեկտեմբերի 13/25-ին, Սեբաստիայի նահանգի Սեբաստիա քաղաքում՝ արհեստավորի ընտանիքում:

1869-78թթ. սովորել է Կ. Պոլսի ասիական կողմի Սկյուտար թաղամասի Սեւամարզ թաղի Ամենափրկչան և Կալաթա թաղամասի ազգային վարժարաններում:

1878-79թթ. սովորել է Փարիզի գործնական երկրագործութեան վարժարանում:

1879-81թթ. սովորել է Ֆրանսիայի երկրագործական բարձրագույն ուսումնարանում (Institut National Agronomique de France) և երկրագործութեան ճարտարագետի/գյուղատնտես-ինժեների կոչում ստացել:

1881-83թթ. հաճախել է նաև Ճառաբուժական և Այգեբանական վարժարաններ:

1883թ. վերադարձել է Կ. Պոլիս և աշխատանքի անցել երկրագործութեան նախարարությունում, որտեղ նպատակ է ունեցել եվրոպական նորագույն մեթոդները ներդնել Օսմանյան կայսրութեան նահապետական երկրագործութեան մեջ:

Հանդիպելով խավարամիտ ու նախանձ պաշտոնակիցների խարդավանքներին, կարճ ժամանակ հետո թողել է պաշտոնը և Սեբաստիա վերադարձել:

Սեբաստիայում աշխատել է Ազգային վարժարանների տնօրէն, բարեկարգել դրանք, բարեփոխումներ կատարել ուսումնական ծրագրերում:

Ժողովրդին եվրոպական քաղաքակրթութեանը հաղորդակից դարձնելու նպատակով, չափահասների լսարան ու կիրակնօրյա կրթարան է հիմնադրել: Հիմնել է իգական սեռի դաստիարակութեան հարցերով զբաղվող Հայուհիների ընկերություն:

Սեբաստիայում ցուցաբերած նրա աշխուժությունը, բնական գիտություններ տարածելու ձգտումը հարուցել է տեղի պահպանողական իշխանությունների և հայ հոգևորականների անբարեհաճությունն ու թշնամանքը, ինչի հետևանքով կրկին վերադարձել է Կ. Պոլիս:

1885-86թթ. աշխատել է Կ. Պոլսի Կաղըրջուղ թաղամասի Արամյան վարժարանի տնօրէն և դպրոցը կարճ ժամանակում օրինակելի կրթօջախ դարձրել:

1885-87թթ. Կ. Պոլսում մասնակցել է հայերեն բնագիտական առաջին հանդեսի՝ «Գիտական շարժումի» հիմնադրմանը և հրատարակմանը:

Եռանդուն կերպով աշխատակցել է նաև Կ. Պոլ-

սի և Փարիզի հայկական և ֆրանսիական պարբերականներին:

Օգտագործել է «Տաղավար», Ա., Արարչահիւք, Արժրունի, Բորակածին, Ն. Ա., Ս. Բ., Սկսնակ Բանասէր, Տ., Տիւն, *** ծածկանունները:

1885թ., բնագիտական առաջադիմական հայացքների համար Կ. Պոլսի պատրիարքարանի Ազգային խառը ժողովի Կրոնական ժողովը նրան բանադրել է:

1887թ., խուսափելով հալածանքներից, հրաժարվել է մանկավարժական գործունեությունից և մեկնել Կահիրե, ապա՝ Ֆրանսիա:

1887-90թթ. ուսանել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետում և, միաժամանակ, Սորբոնի համալսարանի բնագիտական ֆակուլտետում: Սակայն ծանր հիվանդութեան պատճառով ուսումնառնությունը և Սեբաստիա վերադարձել է:

1890թ. կրկին մեկնել է Փարիզ և ուսումը շարունակել:

1891/92թ. ավարտել է Փարիզի համալսարանի բնագիտական ֆակուլտետը և ստացել Licencie en Sciences կոչումը:

1892թ. հընթացս մասնագիտացել է Պաստյորի մանրէաբանութեան ինստիտուտում:

1892թ. Ֆրանսիայի գի-

տական ընկերություն
նստաշրջանում 3 դասախոսություն է կարդացել:

1893թ. հուլիսի 25-ին ավարտել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետը և բժշկագիտության դոկտորի կոչում ստացել:

1893թ. վերադարձել է Կ. Պոլիս և Բերա թաղամասում սեփական բուժարան բացել:

1896թ., Կ. Պոլսում հայրենասիրական գործունեության համար ձերբակալվել է ու բանտարկվել:

Չորս ամիս անց, ընդհանուր համաներման շնորհիվ ազատ է արձակվել:

1897թ. Կ. Պոլսի Բերա թաղամասի Ֆրանսիական հիվանդանոցի օժանդակ բժիշկ է նշանակվել:

1899-1905թթ. եղել է Կ. Պոլսի սբ. Փրկիչ հայոց ազգային հիվանդանոցի թերապևտիկ բաժանմունքի բժշկապետը:

Հիվանդանոցում կազմակերպել է բժշկագիտական բանախոսությունների դասընթաց, որին մասնակցել են իրենց գործնական գիտելիքները բժշկության այս կամ այն բնագավառում խորացնել ցանկացող տարբեր ազգերի բժշկական ուսանողներ:

Դա ևս կասկածելի է թվացել թուրք ոստիկաններին, որոնք արգելել են նրա մուտքը հիվանդանոց:

Միաժամանակ եղել է Բերայի ազգային վարժարանների հոգաբարձու:

Աբդուլհամիդյան բռնապետության տարիներին, հայ մտքի ու գրչի մշակները՝ եկեղեցական, ուսուցիչ, խմբագիր, փաստաբան, բժիշկ, ևն. հաճախ հալածանքների էին ենթարկվում:

Նպատակը հայ ազգի կրթական և մշակութային զարգացումը կասեցնելն էր:

Որպես կասկածյալ, բազմաթիվ անգամ հարցաքննությունների և բնակարանի խուզարկության է ենթարկվել:

1900թ. Կ. Պոլսում հայրենասիրական գործունեության համար կրկին ձերբակալվել է ու բանտարկվել:

Որոշ ժամանակ անց ազատվել է Ֆրանսիայի դեսպանի ազդու միջամտության շնորհիվ:

Այս բոլորից հոգնած, ցանկացել է հեռանալ Թուրքիայից, երբ իմացել է, որ ոստիկանությունը փնտրում է իրեն:

Փրկության միակ միջոցը եղել է իբրև հիվանդ Ֆրանսիական հիվանդանոցում ապաստանելը:

Ոստիկանները պաշարել են հիվանդանոցը՝ կարծես այնտեղ գտնվում էր ոչ թե մի համեստ բժիշկ, այլ՝ ըմբոստ հեղափոխական:

Ստիպված է եղել, իբրև

հիվանդ, 4 ամիս մնալ հիվանդանոցում, ապա հիվանդանոցի ֆրանսիացի ղեկավարների շնորհիվ տեղափոխվել Ֆրանսիայի Մարսել քաղաքը:

Սկզբում եղել է հնչակյան կուսակցության, ապա, 1908թ-ից՝ Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության անդամ և եռանդուն գործիչ:

1902թ. պարգևատրվել է Ֆրանսիայի կրթության նախարարության Officier d'Academie («Ակադեմիայի սպա») պատվանշանով և ակադեմիկոսի կոչման արժանացել:

1904թ. Փարիզի աստղագիտական ընկերության պատվավոր անդամ է ընտրվել:

1905թ. մեկնել է Եվրոպա, այնտեղից անցել Եգիպտոս և հաստատվել Կահիրեում, որտեղ բժիշկ է աշխատել, ներգրավվել մանկավարժական և հասարակական գործունեության մեջ:

1906թ. մասնակցել է Պոդոս Լուբար փաշայի նախաձեռնությամբ հիմնված Հայկական բարեգործական ընդհանուր միության ծննդին, երկու տարի եղել միության Կենտրոնական վարչության անդրանիկատենադպիրն ու վարիչը:

1908թ. Օսմանյան սահմանադրության վերահաստա-

տումից հետո, այլ տարագիր հայերի պես, վերադարձել է Կ. Պոլիս և շարունակել իր բժշկական, մշակութային ու ազգային գործունեությունը:

Սեբաստիայից ընտրվել է Օսմանյան խորհրդարանի անդամ և զբաղվել հողային հարցի նախագծի մշակմամբ:

Խորհրդարանում կրակոտ ելույթներ է ունեցել ազգային իրավունքների և հողային հարցի մասին:

1910-12թթ. եղել է Կ. Պոլսի Ազգային կենտրոնական վարչության քաղաքական ժողովի անդամ և եռանդուն գործունեություն ծավալել այդտեղ:

1909/10թ. պարգևատրվել է Ֆրանսիայի հանրապետության գյուղատնտեսության նախարարության հողագործական ծառայության «Merite d'Agricole» («Ասպետի խաչ») պատվանշանով:

1912-13թթ. աշխատել է Կ. Պոլսի քաղաքապետարանում:

1913թ. Կ. Պոլսի քաղաքապետարանի ընդհանուր քննիչ է նշանակվել:

1914թ. ՀԲԸՄ-ի մասնաճյուղեր բացելու նպատակով Կովկաս է այցելել:

Հանդիսացել է թաղապետական բժիշկ, հոգաբարձու բժիշկ, հիվանդանոցների բժշկապետ, Իթթիհադին հակադիր կուսակցությունների

համախմբման՝ Իթթիլաֆի հիմնադիրներից և այլն:

1915թ. ապրիլի 11 (24)-ին, ի թիվս Կ. Պոլսի 600 ակնառու հայ մտավորականների (որոնց մեջ էին նաև բժիշկներ Վահրամ Թորգոմյանը, Կարապետ Փաշայանը, Միրզա Կենճյանը, Հակոբ Նարկիլեճյանը, Տիգրան Ալլահվերդիև և ուրիշներ), ձերբակալվել է և բանտարկվել Կ. Պոլսի կենտրոնական բանտում:

1915թ. ապրիլի 12-ին, ի թիվս բազմաթիվ հայ մտավորականների, գնացքով տեղափոխվել է Այաշ ավանի ծայրամասի բլրի վրա գտնվող Սարը կըշլա հին գորանոց-բանտը:

Բանտում բուժել ու խնամել է հիվանդ ու վիրավոր բանտարկյալներին:

Մի քանի ամիս անց, 13 այլ մտավորականների հետ Այաշից ուղարկվել է Տիգրանակերտ՝ իբր Պատերազմական ատյանին ներկայանալու համար:

1915թ. հուլիսի 21/23-ին կամ սեպտեմբերի 15-ին Եդեսիայից Տիգրանակերտ տեղափոխվելու ճանապարհին, Եդեսիայի մոտակայքում, անասելի չարչարանքների ենթարկվելով, ի թիվս 13 հայ մտավորականների, գազանաբար սպանվել է Տիգրանակերտի ոճրագործ Նահանգապետ Ռեշիդի ու-

ղարկած չեթեների հրոսակախմբի ձեռքով, գերմանացի զինվորականների անտարբեր ներկայությամբ:

Աշխատությունները.

1. Բնական պատմութիւն, հ. 1, Դասագիրք ազգային վարժարանների, 1886:

2. Հանքեր, Տեղեկութիւններ հանքագործութեան մասին (հայատառ թուրքերեն), Կ. Պոլիս, 1890:

3. Ծագումնային տառից, 1895: Իգմիդյանց գրական մրցանակին է արժանացել:

4. Առողջապահութիւնն առտնին եւ ի պէտս ազգային երկրորդական վարժարանաց (հիգիենա), 1898:

5. Մանրէաբանութիւն, 1898:

6. Մանրէաբանութիւն (հայատառ թուրքերեն), թարգմ. Հովհաննէս Ոսկյանի, Կ. Պոլիս, 1898, 168 էջ, պատկերազարդ:

7. Ծննդական գործարանը, 1899, 2-րդ բարեփոխված ու լրացված հրատարակություն՝ 1914:

8. Բառացուցակ ախտախուանց ֆրանսերէնէ ի հայ, (բժշկական տերմինների ֆրանս-հայերէն բառարան), 1900:

9. Մարդկային սաղմնախօսութիւն, 1900 (սաղմնաբանությանը վերաբերող առաջին աշխատությունը հայ իրականության մեջ):

10. Տիեզերք եւ իր կազ-

մութիւնը, 1902:

11. Օդոյ եւ լուսոյ առողջապահիկ դերն, «Առողջապահիկ թերթ», Թիֆլիս, 1903, թ. 1-2:

12. Ուրուագիծ պատմութեան հայոց ի սկզբանէ մինչ ց'Արշակունի հարստութիւն, 2-րդ հրատ., 1908:

13. Հայոց հին կրօնքները, 2-րդ հրատ., 1909:

14. Դարվինականութիւն, «Երկրագունտ» և «Գիտական շարժում» ամսագրեր, Կ. Պոլիս, 1910:

15. Մարդկային կազմախօսութիւն եւ բնախօսութիւն, 1910:

16. Ուրուագիծ պատմութեան հայոց ի սկզբանէ մինչ ց'Աղէքսանդր Մակեդոնացի, 3-րդ հրատ., 1913:

17. Հիւլէն, 1915:

18. Ուսումնասիրութիւն միզային քարերու (ֆրանսերէն հոդված) (միզաքարային հիվանդության պատճառագիտությունն ու կազմախօսությունը):

Նրա մասին.

1. Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1905:

2. Գաբամաճեան Ս., Հայաստանի կաղանդէքը: Մեծ եղեռնի զոհերը իրենց պատկերներով, Կ. Պոլիս, 1919:

3. Թէոդիկ, Յուշարձան ասարի[11-ի, Կ. Պոլիս, 1919:

4. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած

վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

5. Ասիլ Գ. և ուրիշներ, Ազգային գերեզմանատուն հայոց. Ծիշլի, Կ. Պոլիս, 1922:

6. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգորթան, Վիեննա, 1922:

7. Ազգային հիւանդանոցի մէջ պաշտօնավարած բժիշկները, Ընդարձակ տարեգիրք Ազգային հիւանդանոցի, Իսթանպուլ, 1939:

8. Փափազեան Վահան, Իմ յուշերը, Բ. հատոր, Պէյրուք, 1952:

9. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

10. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

11. Գաբրիելյան Ռ., Ակնարկներ դարվինիզմի և բիոլոգիական մտքի պատմության հայ գրականության մեջ XIX-XXդդ., Երևան, 1963:

12. Աճառյան Հրաչյա, Կյանքիս հուշերից, Երևան, 1967:

13. Օտեան Գասաբեան Ալիս, «Պատմագիրք Անկիւրիոյ եւ Ստանոգի Հայոց (Նախաքրիստեական եւ Հին Գաղափարական Շրջաններէն Մինչեւ 1918 Թուականը)», Պէյրուք, 1968, 319 էջ (247 էջը՝ հայերէն, 72-ը՝ անգլերէն):

14. Հաւաքեց Կարապետ Թերզեան, “Պատմագիրք Ստանոզի Հայոց”, տպ. Տօնիկեան եւ Ռոդիք, Պէյրուք, 1969, 374 էջ

15. Յուշամատեն 160-ամեայ սուրբ Փրկիչ հայոց հիւանդանոցի, աշխատասիրեց Վարուժան Թեօսեան, Իսթանպուլ, 1975:

16. Սիմոն Հովիւեան, “Ապրիլեան Նահատակներուն Շաւիղով, Մեծ Եղեռնի 60ամեակի Սեմին”, Պէյրուք, 1975, 349 էջ

17. ՀՍՀ, հ. 11, Երևան, 1985:

18. Թեոդիկ, Յուշարձան Նահատակ մտաւորականութեան, Ե., 1985:

19. Փաշայան Ասատուր, Բնագետք, բժիշկը, բանասերը...«Սովետական Հայաստան», Ե., 1985, 9

20. Հայրապետյան Վահիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

21. Պալաքյան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգորթան, Երևան, 1991:

22. Հովասափյան Հովսեփ, Նազարեթ Տաղավարյան, «Առողջապահություն», Երևան, 1992, թ. 3-4:

23. Հայկական հարց, հանրագիտարան, Երևան, 1996:

24. Ատաշ Ադնան, 20-րդ դարի Նահատակ եղած բժիշկները (թուրքերեն),

Թուրքիա, 1997:

25. Օտեան Երուանդ, Մեր երեսփոխանները, մեր Ազգային ժողովը, Երևան, 1999:

26. Վարդանյան Ս., Հայաստանի բժշկության պատմություն, Ե., 2000:

27. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

28. Հայ անվանի բժիշկներ, գիրք Ա, գլխ. խմբ. Ա. Շիրիկյան, Ե., 2002:

29. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողք և վկայք խաչի, Երևան, 2002:

30. Հովակիմյան Բախտիար, Հայոց ցեղասպանության Նահատակ գործիչների ծածկանուններ, Երևան, 2002:

31. Չօրապ Գրիգոր, Երկերի ժողովածու, հ. Դ., Երևան, 2003:

32. Փամուքջյան Գևորգ, Հայերը իրենց կենսագրականներով (թուրքերեն), Ստամբուլ, 2003:

33. Խաչատրյան Լ. և ուրիշ., Ցուցակ հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի Նահանգ, Երևան, 2004:

34. Ստեփանյան Հասմիկ, Հայատառ թուրքերեն գրքե-

րի և հայատառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտություն (1727-1968), Ստամբուլ, 2005:

35. Ավագեան Կարինե, «Չանդրըրի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդես Ամսօրեայ», 2008, հ. 1-12

36. Իսկահատեան Հ., Վկայարան հայկական ցեղասպանութեան, Գիրք Գ, Պէյրուք, 2011, 395 էջ

SUSRՅԱՆ ՀԱԿՈՒՔ ԲԵՑ

Ծնվել է 1853թ., Անկարայի Նահանգի Կեսարիայի գավառի կենտրոն Կեսարիա քաղաքում:

Ավարտել է Կեսարիայի պետական վարժարանը:

1878թ. ավարտել է Կ. Պոլսի Կայսերական զինվորական բժշկական վարժարանը:

Եղել է փոքր վիրահատությունների վիրաբույժ, մանկաբարձ և ներքին հիվանդությունների մասնագետ:

1888-98թթ. հատուկ ծառայության («հրզմեթի մախսուսե») մեջ է եղել Բաղդադում, Մուսուլում, Բասրայում և դրանց շրջակայքում:

1898թ. վերադարձել է Կեսարիա, ամուսնացել և մեկ որդի ու երկու դուստր ունեցել:

Պաշտոնավարել է Թրակիայի Քրքլարեյի, Չորլուի և Ուզուն քեոփրյուկի զինվորական հիվանդանոցներում: Եղել է Մարմարա-Էրեյի զինվորական հիվանդանոցի բժշկապետը:

1912-13 թթ. Բալկանյան պատերազմի ժամանակ զինվորական բժիշկ է ծառայել Յանիայում, որտեղ և վիրավորվել է և գերի ընկել: Պատերազմն ավարտվելուց հետո ազատվել է և Կ. Պոլիս եկել:

1914 թ. Առաջին աշխարհա - մարտի ժամանակ կրկին զորակոչվել է օսմանյան բանակ:

1914-16թթ. եղել է Սելիմիեի զորանոց-հիվանդանոցի բժշկապետը:

1916թ. զորացրվել է և թոշակի անցել գնդապետի (միրալայ-այբայ) աստիճանով:

Որոշ ժամանակ Կ. Պոլսի Կադրայուղ թաղամասի քաղաքապետական բժիշկ է աշխատել:

Եղել է փորձառու բժիշկ և հարգված քաղաքացի:

Պարգևատրվել է արքունիքի և սպայակույտի շքանշաններով:

Մահացել է 1936թ., Կադրայուղում՝ 83 տարեկանում:

Հուղարկավորությունը կատարվել է զինվորական պատիվներով:

Նրա մասին. Շիկահեր Վարդ, Կի-

սադարեան պատմութիւն թրքահայ բժշկութեան, 1923-1975, Իսթանպուլ, 1975:
ՏԵՐ - ԲԱԴԱԼՅԱՆ ԽԱԶԱՐ

Ծնվել է Սեբաստիայի նահանգի կենտրոն Սեբաստիա քաղաքում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

Սպանվել է 1915թ.:

Նրա մասին.

Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Ցուցակ հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004

ՏԵՐ-ԹՈՒՄԱՅԱՆ ՈՎՓԱՅԵԼ ԹՈՒՄԱՅԻ

Ծնվել է Անկարայի նահանգի Անկարայի գավառի Ստանոզ ավանում, Տեր Թումա քահանայի ընտանիքում:

Պատկանել է Ստանոզի առևտրական համայնքին:

Բժշկական կրթություն չի ունեցել, սակայն ունենալով բժշկական ու անասնաբուժական բազմակողմանի գիտելիքներ ու փորձ: զբաղվել է ժողովրդական բժշկությամբ (հեքիմությամբ) և անձնվիրաբար ծառայել ժողովրդին:

Ճանաչված ու հարգված

է եղել ավանի թուրք և հայ բնակչության կողմից, որպես աստվածավախ ու անբասիր նկարագրով անձ:

Նրան կոչել են Հաջի Ռափայել կամ Հեքիմ Ռափայել:

1915թ. տարագրության ժամանակ բոլոր ստանոզցիներին տեղահանել են դեպի Անկարա, սակայն որոշ պատճառներով առևտրականները վերադարձվել են Ստանոզ:

Կարճ ժամանակ անց պետական մարմինները նրանց կրկին կանչել են իրենց մոտ ու առաջարկել իսլամ ընդունել, ինչի փոխարեն նրանց կտրվեր գերմանական անձնագիր:

Սական ստանոզցիները մերժել են այդ առաջարկը, ինչի հետևանքով առևտրականներին տարել են Ստանոզից 8 կմ հեռու գտնվող մի վայր, բոլորին սպանել ու թաղել մի խորունկ փոսում:

Դրանց մեջ է եղել ու առանձնակի դաժանությամբ սպանվել նաև Հեքիմ Ռափայելը:

Ունեցել է կին՝ Սրբուհի և որդիներ Կղեմես և Թումա Տեր-Թումայաններին, որոնցից վերջինը 1940թ. զոհվել է Փարիզի ռմբակոծության ժամանակ:

Նրա մասին.

1. Թերզեան Կարապետ, Պատմագիրք Ստանոզի Հայոց, Պէյրուս, 1969, 372 էջ

2. Ծահբազյան Հասմիկ և Միրզոյան Անահիտ (կազմողներ), Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 3, Անկարայի նահանգ, Երևան, 2006:



ՏԵՐ - ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ ՀԱԿՈՒ Ս.

Բժիշկ, քաղաքական գործիչ:

Ծնվել է 1886/90թ. փետրվարի 5-ին, Կիլիկիայի Էոդեմիշ ավանում:

Ավարտել է ծննդավայրի սբ. Մեսրոպեան, ապա՝ Սեն ժոզեֆ վարժարանները:

Որոշ ժամանակ գրագիր է աշխատել:

Այնուհետև շրջագայել է Փոքր Հայքի մի շարք հայաշատ քաղաքներում և զբաղվել ՀՅԴ-ի գաղափարների քարոզչությամբ:

1910-14թթ. սովորել է Բեյրութի Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետում:

Ամռանը ավարտել է ու-

սումը և սպասել, որ աշևանը հանձնի ավարտական քննությունները:

1913թ. նոյեմբերին Բեյրութի սբ. Նշան եկեղեցում կատարել է ՀՅԴ հիմնադիրներից մեկի՝ 1913թ. հոկտեմբերի 27-ին մահացած Սիմոն Չավարյանի սգահանդեսի ատենապետի պարտականությունը:

Եղել է մտերիմ ընկերը բժիշկ Գաբրիել Անսուրյանի:

Եղել է ճարտասան, բեմախոս, աշխատասեր, մի քիչ ջղագրգիռ անձնավորություն:

1915թ. գարնանը ձերբակալվել է ու շրջայակապ տեղափոխվել է Չմյուռնիայի (Իզմիր) բանտը և կուսակցական գաղտնիքներ կորզելու նպատակով անասելի չարչարանքների ենթարկվել:

1915թ. դեկտեմբերի 3-ին, ի թիվս 60 բանտարկված հայ մտավորականների ու կուսակցականների, արտորվել է Իսլահիե:

1915թ. սպանվել է Իսլահիեում՝ թուրքերի բարբարոսական տանջանքներին ենթարկվելուց հետո՝ մոտ 27 տարեկանում:

Նրա մասին.

1. Լազեան Գաբրիել, Դեմքեր հայ ազատագրական շարժումն, Գահիրե, 1949:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատ-

գամները), Պոսթոն, 1957:

3. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուս, 1965:

4. Կարօ Գեորգեան, Ամէնուն տարեգիրքը, ԺԲ. տարի, 1965, Պէյրուս, 1966:

5. Թէոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորակաւորութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

6. Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան տարիները, 1915-1918, Լուսինի, 1955:



**ՏԵՐ - ՄԱՆՎԵԼՅԱՆ
ԽԱՉԱՏՈՒՐ (ԽԱՉԻԿ)
ՍԵՐՈՒԲ**

Ազգանունը եղել է Նահիկյան (?), գրվել է նաև Էմանուէլյան:

Ծնվել է մոտ 1875թ., Խարբերդի նահանգի Խարբերդի գավառի Խարբերդ / Մեզիրե քաղաքում:

Մանկական տարիքում գրկվել է հորից և մեծացել մոր խնամքի տակ:

Նախնական կրթութունն ստացել է ծննդավայրի վարժարանում:

Սովորել է ամերիկացի միսիոներների Խարբերդի Եփրատ կոլեջում:

Նույն կոլեջի ուսուցիչները նրան երաշխավորել են համալսարանական կրթութուն ստանալու համար:

1903թ. մայիսի 23-ին ավարտել է ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի (Ֆիլադելֆիա քաղաք) բժշկական ֆակուլտետը: Որոշ ժամանակ հիվանդանոցներում մասնագիտացել է վիրաբուժության գծով, այնուհետև Նյու Յորքում սեփական բուժարանը բացել:

Տեղի տալով մոր խնդրանքներին՝ վերադարձել է հայրենի Մեզիրե, ուր բացել է սեփական կլինիկա և սիրված վիրաբույժի համբավ վաստակել կարճ ժամանակում:

Բժիշկ Էթքինսընի խնդրանքով, շաբաթը երկու օր այցելու բժիշկ է աշխատել 1909թ. բացված «Էնի Թրէյսի Բիգգ» ամերիկյան հիվանդանոցում:

Հաճախ հրավիրվել է Եփրատ քոլեջ՝ առողջապահական դասախոսութուններ կարդալու:

1913թ. ամուսնացել է Մեզիրեի անվանի ընտանիքներից մեկի՝ Ճեֆերյան Հովակիմի և Հռիփսիմեի դստեր՝

Մարի-Վենյուսի հետ:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուն պես ուղարկվել է Կրզըլ քիլիսե, Մանագլերտ, Փերի, Գյումյուշ-Մադեն և այլ քաղաքներ՝ բժիշկ ծառայելու:

Ութ ամիս ծառայելուց հետո արձակուրդ վերցնելով վերադարձել է Մեզիրե և նահանգապետի առաջին գրագրի կնոջ կյանքը փրկել: Այդ դեպքից հետո բժիշկ է նշանակվել Կարմիր մահիկի հիվանդանոցում, ուր եռանդով զբաղվել է վիրավոր և հիվանդ հայ բանտարկյալների բուժմամբ, ոմանց էլ հիվանդանոցից ծածուկ ազատել և ուղարկել է Դերսիմ:

ԱՄՆ-ի քաղաքացիություն է ունեցել և ԱՄՆ-ի հյուպատոս Դեյվիդի ընտանեկան բժիշկը եղել:

1915թ. հուլիսին հիվանդանոցից տուն վերադառնալու ժամանակ ձերբակալվել է, բանտարկվել ու Մեյիտինե քաղաքում:

Սպանվել է 1915թ. հուլիսի վերջին, Մեյիտինեում կամ Խարբերդում՝ մոտ 40 տարեկանում:

Կինը՝ Մարի-Վենյուսը, նախազգալով վտանգը, թույն խմելով փորձել է ինքնասպան լինել, սակայն նրան փրկել է պատահաբար այցելած հարևանուհին:

1929թ. դեկտեմբերի 29-

ին, ԱՄՆ քաղաքացի Մարի-Վենյուսն ու նրա դուստր Թովինան այդ երկիրն են տեղափոխվել:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

3. Թէոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորակաւորութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

4. Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Յուցակ Հայոց ցեղասպանութեան գոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի նահանգ, Երևան, 2004:

ՏԵՐ-ՄԱՆՎԵԼՅԱՆ ՀՄԱՅԱԿ

Դեղագործական կրթութուն է ունեցել և դեղագործ աշխատել:

1915թ. ապրիլի 21-ին, երեքշաբթի երեկոյան, Խարբերդի նահանգի Դերսիմի գավառի Զմշկածագ ավանի շուկայում թուրք ոստիկանները կատարել են առաջին ձերբակալութունները՝ կառավարչին այցելելու խաբեութեամբ: Կառավարչատուն (սերայ) են գնացել 9 հոգի,

որոնց թվում՝ Հմայակը: Երանց բոլորին ձերբակալել են ու բանտարկել: Դրանից հետո էլի շատերին են ձերբակալել:

Սակայն Հմայակին որոշ ժամանակ անց ազատ են արձակել, քանի որ նրա համար միջնորդել է մի հանրաժանութ թուրք, որի համար նա ժամանակին դեղ էր պատրաստել:

Իսկ մյուսները գնացին ու այլևս չվերադարձան...

Երանց սկզբում բանտարկել են կառավարչության շենքում, ապա՝ տեղափոխել Վերին թաղի Ալի բեյի և Օսման աղայի տների տակ և օր ու գիշեր դաժանորեն ծեծելով ու կտտանքների ենթարկելով՝ սպանել:

Նրա մասին.
Ղազարեան Հ., Պատմագիրք Չմշկածագի, Պեյրուք, 1971:

ՏԵՐ - ՄԿՐՏԻՉՑԱԼ ԱՂԱՍԻ

Ծնվել է Բրուսայի նահանգի Լիկոմիդիայի գավառակի Պարտիզակ ավանում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

Մահացել է 1916թ. մարտի 9-ին, Պաղեստինի Ռամլե քաղաքի հիվանդանոցում, ժանտախտից:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

ՏԵՐ - ՆԵՐՍԵՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

Ծնվել է 1891թ., Բրուսայի նահանգի Լիկոմիդիայի գավառակի կենտրոն Լիկոմիդիա քաղաքում:

Ուսանել է բժշկական վարժարանի Ե դասարանում (5-րդ կուրսում):

Մահացել է 1915թ., Բոսֆորում, ժանտախտից՝ 24 տարեկանում:

Նրա մասին.

Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

ՏԵՐ - ՍԱՐԿԻՍՈՎ

Տեր-Սարկիսովը Կարսում եղել է բժիշկ:

1920թ. հոկտեմբերի 30-ին թուրքական զորքը, չհանդիպելով հայկական բանակի դիմադրությանը, գրավել է Կարսը: Թուրք զինվորներն անմիջապես սկսել են քաղաքի հայ խաղաղ բնակչության ջարդը: Ընդամենը 5 օրվա ընթացքում Կարսում սպանվել է շուրջ 4000 խաղաղ հայ բնակիչ և ձերբակալվել շուրջ 7000 հայ տղամարդ:

Թուրքերը ձերբակալել, բանտարկել և բոլորի պես

ամբողջովին մերկացրել են բժիշկ Տեր-Սարկիսովին, որ, այնուամենայնիվ, մի քանի օրից հաջողել է ազատվել բանտից:

Նրա մասին.

1. Ներսիսյան Մկրտիչ, Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան, 2005:

2. ՀԱՍ, ֆ. 114, ց. 2, գ. 33, թ. 67 և գ. 43, թ. 33:



ՏԵՐ - ՍՏԵՓԱՆՅԱՆ ԸՆԾԱՅԵԿ

Ծնվել է 1892թ., Օսմանյան կայսրության Հալեպի նահանգի Մարաշի գավառի կենտրոն Մարաշ քաղաքում:

Նախնական կրթությունն ստացել է Մարաշի սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցու վարժարանում:

Միջնակարգ կրթությունը ստացել է Մարաշի Ազգային Կեդրոնական վարժարանում:

1908թ. ավարտել է ամե-

րիկացի միսիոներների Տարսուսի Սենթ Փոլ քոլեջը (Ամերիկյան Սուրբ Պողոս վարժարան):

1908-10թթ. ուսուցչություն է արել Մարաշի և Եդեսիայի (Ուրֆայի) ազգային վարժարաններում:

1910-16թթ. սովորել է Կ. Պոլսի Հայդարփաշայի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանում՝ գիշերօթիկ ուսանողի կարգավիճակով:

1916թ. այս վարժարանը նրա հետ միասին ավարտել են նաև Սարգիս Ազատյանը և Սամվել Գանձապետյանը ու զինվորական բժշկի վկայական ստացել:

1916թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ, ուղարկվել Դամասկոս և զինվորական բժիշկ ծառայել տեղի զինվորական հիվանդանոցում: Այստեղ կարճ ժամանակում արժանացել է աշխատակիցների գնահատանքին ու հարգանքին:

1918թ., Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո վերադարձել է Մարաշ և բժիշկ աշխատել:

Եղել է նաև հասարակական և ազգային գործիչ:

1919թ. ապրիլին Ազգային պատվիրակության կազմած Առողջապահական առաքե-

լուծյան (նախագահ՝ բժիշկ Ղազարոսյան) կազմում ընդգրկված հայ բժիշկները աշխատել են Կիլիկիան գրաված ֆրանսիական զինվորական դեկավարության ներքո:

Կիլիկիան հայաթափելու օրերին, ֆրանսիացիների ու Հայկական լեգեոնի Մարաշից նահանջելուց հետո, բժիշկը ջանացել է հեռանալ թուրք չեթների կազմակերպած սպանդից:

1920թ. փետրվարի 11-ին, Մարաշում, Ակսուհի եզերքին զոհվել է թուրք հրոսակների գնդակից՝ 28 տարեկանում:

Նրա մասին.

1. Գալուստեան Գրիգոր Հ., Մարաշ, Նիւ Եորք, 1934:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

3. Գալուստեան Գրիգոր Հ., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Չէյթուն, Նիւ Եորք, 1988:

4. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:



ՏԵՐ-ՍՏԵՓԱՆԱՆ ՀՈՎՍԵՓ

Ծնվել է 1866/67 թ., Թուրքիայի Իզմիրի նահանգի Նիկոմեդիայի գավառի Պելեծիկ (Պիլեծիկ) հայկական քաղաքում:

Նախնական կրթությունը ստացել է Ռոդոսթո (Թեքիրդաղ) քաղաքի թաղային վարժարանում:

1883թ. ավարտել է Պարտիզակ քաղաքի Ամերիկյան բարձրագույն վարժարանը:

1887թ. ավարտել է Կ. Պոլսի Ռոբերթ քոլեջը պսակավորի (Բ Ա.) աստիճանով:

1888-90/93թթ. սովորել է Լոնդոնի համալսարանի բժշկական ֆակուլտետում և ստացել վիրաբուժական և բժշկական կրկնակի դիպլոմներ:

1893թ. վերադարձել է Ռոդոսթո և աշխատել բժիշկ:

1896թ. տեղափոխվել է Պարտիզակ և շարունակել զբաղվել բժշկությամբ:

Ավելի քան 20 տարի բնախոսություն (ֆիզիոլոգիա) և հոգեբանություն և դասավանդել Գոնիայի «Ճե-

նանյան» և Պարտիզակի Ամերիկյան բարձրագույն քոլեջներում:

Պարտիզակի Ամերիկյան բարձրագույն վարժարանում դասավանդել է անգլերեն լեզու և գրականություն, ինչին տիրապետել է բարձր մակարդակով:

Նախասիրած գրքերը եղել են Շեքսպիրի «Հուլիոս Կեսարը» և Գոլթսմիթի «Ամայացած գյուղը», որոնք յուրաքանչյուր ուսումնական տարեշրջան թարգմանել և տող առ տող վերլուծել է մաքուր և գեղեցիկ հայերենով:

Թարգմանել է Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը» ստեղծագործությունը:

Բարձրագույն վարժարանում դասավանդել է նաև մարդակազմություն, առողջաբանություն և հոգեբանություն, որոնք մատուցել է մեծ սիրով, հետաքրքրությամբ ու հումորով՝ աշակերտների մեջ սեր առաջացնելով այդ առարկաների նկատմամբ:

Եղել է հմուտ մանկավարժ, սիրված՝ աշակերտների և հարգված՝ գործընկերների ու Պարտիզակի բնակչության կողմից:

Հեղինակել է «Բիւզանդիոն», «Մասիս» և այլ պարբերականներում տպագրված բազմաթիվ գիտահանրամատչելի հոդվածներ, ինչպես նաև մարդակազմու-

թյանը, ժողովրդական բժշկությանը և առողջաբանությանը նվիրված գրքեր:

1909-12 թթ. եղել է խմբագիրը Պարտիզակի Բարձրագույն վարժարանի Ընթացավարտների ընկերության վեցամսյա «Պարտիզակ» հանդեսի (48 էջ), որը լույս է տեսել ընդամենը 7 համար:

1915 թ. Մեծ Եղեռնի ժամանակ հայրենակիցների հետ թուրքական կառավարության կողմից տեղահանվել ու արստրվել է դեպի անձանոթ շրջաններ, ավարառուներին թողնելով իր երկհարկանի գեղեցիկ տունը, կահ-կարասին ու հարուստ գրադարանը:

Գոնիայում, շնորհիվ երկաթուղու բարձրաստիճան և ազդեցիկ հայ պաշտոնյա պարոն Ավքարյանի ջանքերի, ազատվել է ստույգ մահվան ճիւղաններից և նշանակվել Լույն ընկերության “Պաշեարի” կոչված վայրի հիվանդանոցի բժշկապետ:

Այստեղ նա անձվիրաբար զբաղվել է հայ գաղթականների բուժմամբ և շատերին ազատել արքորից ու փրկել:

Իր բժշկական արվեստի շնորհիվ փրկվել է անխուսափելի մահից:

1918 թ. Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո վերադարձել է Կոստանդնուպոլիս և աշխատել է Զուլեյիի կենտ-

րունական որբանոցի տնօրեն:

Իզմիրի աղետից հետո տեղափոխվել է Հունաստան և մեկ տարի անվարձահատույց աշխատել Սթրունկայի հայկական որբանոցում:

Այնուհետև տեղափոխվել է Ռումինիա՝ քրոջ՝ տիկին Սրենցի (Ս. Սրենցի կինը) մոտ:

Այստեղ ևս մեկ տարի գբաղվել է հայ որբերի հարգերով:

Այնուհետև տեղափոխվել է Թեհրան և ապրել ամուսնացած եղբոր՝ անվանի ատամնաբույժ Հարություն Տեր-Ստեփանյանի (1870-1953) մոտ:

Եղել է Թեհրանի հայ բժշկական միության նախագահը:

1928թ. փետրվարին Թեհրանի Հայ ակումբում տոնվել է նրա բժշկական և հասարակական գործունեության 35-ամյակը:

1943թ. սկզբին Ֆրանսիայում տոնել է իր բժշկական գործունեության 50-ամյակը:

Եղել է ամուրի:

Մահացել է 1943 թ. փետրվարի 26-ին, Թեհրանում, 76 տարեկան հասակում:

Աշխատությունները.

1. Մանչերու թշնամի, գրքուկը նվիրված էր տղաների ձեռնաշարժության վնասներին:

2. Մանչերու բարեկամ:

3. Մարդկային (մարդակազմական) մարմինը:

4. Թոքախտը:

Նրա մասին.

1. Ս.Ա., Դօքտ. Յովս. Տեր-Ստեփանեան (Մահախոսական), Թեհրան, “Ալիք”, 1943, մարտ

2. Գեորգեան Կարօ, Ամենուն և Տարեգիրքը, Պէյրուք, 1956

3. Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967), կազմ. Ա. Կիրակոսյանը, Ե., 1970

4. Վարդ Շիկահեր, Կիսադարեան պատմութիւն թրքահայ բժշկութեան, 1923-1975, Իսթանպուլ, 1975, 120 էջ

ՏԵՐ - ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԿՐՏԻՉ

Ծնվել է 1855թ., Խարբերդի նահանգի Խարբերդի գավառի Մեգիրե քաղաքում:

Հավանաբար 1880թ. ստացել է դեղագործական կրթություն:

Մեյիտինեում դեղագործ է աշխատել:

Սպանվել է 1915թ., Մեյիտինեում՝ 60 տարեկանում:

Նրա մասին.

1. Յուզամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

2. Թեոդիկ, Յուզարձան նահատակ մտաւորակաւնութեան, Բ. տպագրութիւն,

Երեւան, ապրիլ 24, 1985:

3. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

4. Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Յուզակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի նահանգ, Երևան, 2004:

ՏԵՐ - ՎԱՀՐԱՄՅԱՆ ՆՇԱՆ ՏԵՆ՝ ՆԱՀԻԿՅԱՆ ՆՇԱՆ ՏԵՐ - ՎԱՀՐԱՄԻ

ՏԵՐՊԱԴՅԱՆ (ՏԵՐ - ՊԱԴՅԱՆ, ՏԵՐ - ՊԱԴԻԿՅԱՆ) ԲՅՈՒՂԱՆԴ

Ծնվել է 1890թ., Սեբաստիայի նահանգի կենտրոն Սեբաստիա քաղաքում:

1912թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան դեղագործական վարժարանը:

Դեղագործ է աշխատել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական դեղագործ ծառայել:

Սպանվել է 1915թ., Սեբաստիայի նահանգի Շապին Կարահիսարի գավառի Էնդիրես ավանում՝ 25 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած

զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուզամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

3. Թեոդիկ, Յուզարձան նահատակ մտաւորակաւնութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

4. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

5. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

6. Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Յուզակ հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:

ՏԵՐՏԵՐՅԱՆ

Բարձրագույն բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել:

1915թ. ապրիլ-մայիս ամիսներին օսմանյան կառավարությունը Խարբերդում և Մեգիրեում իրականացրել է բազմաթիվ հայ մտավորականների ձերբակալություններ: Թուրք ոս-

տիկանները նրանց շղթայակապ տարել են փողոցներով ու շուկաներով, և գազազած թուրք ամբոխը նրանց վրա քարեր է նետել, հարվածել, ծեծել:

Նրանց բոլորին բանտարկել են Մեզիրեի բանտում և կտտանքների ենթարկելով փորձել տեղեկություններ կորզել զենքեր, ռումբեր և քաղաքական գաղտնիքներ թաքցնելու մասին: Կեսգիշերին, արաբկիրցի ոստիկան Այի օնբաշին բանտապահ Հասան Էֆենդիի հետ եկել է բանտ և հրամայել, որ մեկ առ մեկ դուրս գան և Եդեսիա տեղափոխվելու պատրաստվեն: Բժիշկ Նշան Նահիկյանը համարձակորեն առաջ գալով ասել է. «Եթե դուք մեզ իրոք Եդեսիա պիտի ուղարկեք, ավելի լավ է որ ցերեկով ուղարկեք, որպեսզի ժողովուրդը իմանա, որ մենք Եդեսիա ենք գնում, իսկ եթե ձեր հետին դիտավորությունը մեզ սպանելն է, կրկին ցերեկով սպանեք և կախեք, որպեսզի համայն խարբերողի ժողովուրդը ականատես լինի մեր մահին»:

Եվ չնայած ոստիկանը ժխտել է նրանց սպանելու մտադրությունը, բանտարկյալները հասկացել են, որ պատրաստվում են իրենց սպանել, ուստի հրաժարվել են կատարել գիշերով

բանտից շղթայակապ դուրս գալու հրամանը: Լուրը հաղորդել են գնդապետ Ֆերիդբեյին, որը հրամայել է բոլորին սրախողխող անել:

1915թ. հունիսի 25-ին / հուլիսին, օգոստոսի 4-ին (ըստ տարբեր աղբյուրների), Խարբերդ քաղաքի Մեզիրեի բանտի 37 հայ բանտարկյալները վճռել են բանտը հրկիզել և ինքնահրկիզվել:

Իրար վրա են հավաքել բանտի վերամակները, իրենց հագուստները և դրանց վրա լցնելով ճրագների նավթը՝ հրկիզել են բանտը: Բոլորը զոհվել են, այդ թվում՝ բժիշկ Տերտերյանը:

37 բանտարկյալների կիսամոխրացած դիակները աղբատար կառքով տարել և լցրել են Զոր աղբյուրի մոտ գտնվող մի փոսում:

Նրա մասին.

Ճիգմեճեան Մանուկ, Խարբերդ եւ իր գաւակները, Ֆրեզնօ, 1955:

ՏԻԳՐԱՆ ԷՖԵՆԴԻ

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և Կարինի կենտրոնական զինվորական հիվանդանոցում դեղագործ ծառայել՝ լեյտենանտի

աստիճանով:

Մահացել է 1914թ. դեկտեմբերի 9-ին, ժանտախտից:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՏԻԳՐԱՆ ԷՖԵՆԴԻ

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և Իրաքի Խանեքին քաղաքի զինվորական հիվանդանոցում ծառայել՝ լեյտենանտի աստիճանով:

Մահացել է 1917թ. մայիսի 12-ին, ժանտախտից:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՏԻԳՐԱՆ ԷՖԵՆԴԻ

Ծնվել է 1873թ., Սեբաստիա նահանգի կենտրոն Սեբաստիա քաղաքում:

Բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և Սեբաստիայի հիվանդանոցին կից Կայադիբի բուժարանում բժիշկ ծառայել՝ կապիտանի աստիճանով:

1917թ. հունվարի 2-ին սպանվել կամ մահացել է Սեբաստիայում՝ 44 տարեկանում:

Նրա մասին.

1. Առաջ Ադնան, 20-րդ դարի նահատակ եղած բժիշկները (թուրքերեն), Թուրքիա, 1997:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՏԻՆԱՆՑԱՆ ԲԱՐՍԵՂ ՄՈՎՍԵՍԻ

Ծնվել է 1887թ., Թուրքիայի եվրոպական մասի Ռոդոսթո քաղաքում՝ բժիշկ Մովսես Տինանյանի ընտանիքում:

1906թ. ավարտել է Կ.Պոլսի ասիական կողմի Սկյուտար թաղամասի Պերպերյան վարժարանը:

1911թ. փետրվարի 15-ին ավարտել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Եղել է ներքին հիվանդու-

թյունների մասնագետ:

1911թ. վերադարձել է Կ. Պոլիս և բժիշկ աշխատել:

1912թ. Բալկանյան պատերազմի ընթացքում Ադրիանապոլիս քաղաքում օսմանյան բանակի բժիշկ է ծառայել՝ հարյուրապետի աստիճանով:

1913-14թթ. մնայուն օգնական բժիշկ է աշխատել Կ. Պոլսի սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցի արտաքին բաժնում:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ծառայել է Կ. Պոլսի Բուլղարական հիվանդանոցում:

Պարզևատրվել է բուլղարական արքունիքի «Կարմիր խաչ» շքանշանով:

1915թ. ապրիլին բանտարկվել է Կ. Պոլսի կենտրոնական բանտում, ապա աքսորվել Չանղորը:

Անունը փորագրվել է Չանղորը բանտում հավաքված համրիչի 99 հատիկներից 41-րդի վրա:

Վերապրել է:

Եղել է 1919թ. ապրիլի 11 (24)-ին՝ Մեծ Եղեռնին նվիրված առաջին սգահանդեսի կազմակերպիչ հանձնախմբի անդամներից:

Եղել է հանրային գործիչ, երկար տարիներ՝ «Կարմիր խաչի» Կ. Պոլսի մասնաճյուղի ատենապետն ու Կարաօյոզյան տան (որբանոց)

մնայուն բժիշկը:

Չբաղվել է նաև ուսուցչությամբ: Կ. Պոլսի Էսայեան վարժարանում դասավանդել է առողջապահություն և կենսաբանություն առարկաները: Իր նախաձեռնությամբ նույն վարժարանում հիվանդապահների դասընթաց է կազմակերպել և անցկացրել:

Տարեգրքերի և օրաթերթերի էջերում տպագրված բժշկագիտական և հրապարակախոսական հոդվածների հեղինակ է:

Եղել է լավ ջութակահար և բարձր գնահատանքի արժանացել արվեստասեր շրջանակներում:

Մահացել է 1965թ. փետրվարի 8-ին, Կ. Պոլսում՝ 78 տարեկանում:

Չավակներից Ժիրայր Տինանյանը բնակվել է Փարիզում և եղել ներքին ու սրտային հիվանդությունների բժիշկ:

Աշխատությունը.

Բժիշկի մը խորհրդածութիւնները, Կ. Պոլիս, 1941:

Նրա մասին.

1. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Վիեննա, 1922:

2. Ազգային հիւանդանոցի մէջ պաշտօնավարած բժիշկները, Ընդարձակ տարեգիրք Ազգային հիւանդանոցի, Իսթանպուլ, 1939:

3. Շիկահեր Վարդ, Կի-

սադարեան պատմութիւն թրքահայ բժշկութեան, 1923-1975, Իսթանպուլ, 1975:

4. Սիմոն Հովիւեան, “Ապրիլեան Նահատակներուն Շաւիղով, Մեծ Եղեռնի 60ամեակի Սեմին”, Պէյրուք, 1975, 349 էջ

5. Պալաքյան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Երևան, 1991:

6. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

7. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողք և վկայք խաչի, Երևան, 2002:

8. Ավագեան Կարինե, «Չանղորըի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդես Ամսօրեայ», 2008, հ. 1-12

9. Իսկահատեան Հ., Վկայարան հայկական ցեղասպանութեան, Գիրք Գ, Պէյրուք, 2011, 395 էջ

ՏԻՆԱՆՅԱՆ ՄՈՎՍԵՍ

Ծնվել է 1858թ., Թուրքիայի եվրոպական մասի Ռոդոս-թո քաղաքում:

Բժիշկ Բարսեղ Տինանյանի հայրն է:

Ավարտել է Կ. Պոլսի Գաղատիա թաղամասի Կեդրո-

նական վարժարանը և եղել դրա առաջին շրջանավարտներից մեկը:

1881թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Երկար տարիներ ազատ պրակտիկ բժիշկ է աշխատել իր ծննդավայրում:

Եղել է վիրաբույժ, ներքին հիվանդությունների մասնագետ և մանկաբարձ:

Եղել է Ռոդոսթոյի քաղաքապետական բժիշկը:

Հետագայում Կ. Պոլսում բժիշկ է աշխատել:

1915թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել՝ հարյուրապետի / կապիտանի աստիճանով:

1915թ. ապրիլի 11-13-ը ձերբակալվել է, բանտարկվել ու աքսորվել Չանղորը:

1915թ. օգոստոսին, հրաշքով, նրան ազատելու և Կ. Պոլիս վերադարձնելու հրաման է ստացվել:

Իր խնամքի ու բուժման տակ եղած չեթեջի արաբաջի Իսմայիլի աղջկա բուժումը շարունակելը թողել է բժիշկ Ռուբեն Սևակին, հույս ունենալով, որ չեթեջին, ի նշան երախտագիտության, բարոյացական վերաբերմունք կունենա նրա նկատմամբ:

Մահացել է 1935թ., Կ. Պոլսում՝ 77 տարեկանում:

Որդին՝ Բարսեղ Տիևանյանը (1887-1965) և թոռը՝ Ժիրայր Տիևանյանը ևս բժիշկ են եղել:

Նրա մասին.

1. Մեզպուրեան Արթուր, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

3. Շիկահեր Վարդ, Կիսադարեան պատմութիւն թրքահայ բժշկութեան, 1923-1975, Իսթանպուլ, 1975:

4. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՏԻՆԿԻՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

Ծնվել է Սեբաստիայի նահանգի Ամասիայի գավառի կենտրոն Ամասիա քաղաքում:

Ա տ ա մ ն ա բ ու ժ ա կ ա ն կրթություն է ունեցել և ատամնաբույժ աշխատել:

Սպանվել է 1915թ.:

Նրա մասին.

Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (կազմողներ), Յուզակ հայոց ցեղասպանության զոհերի

(1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Երևան, 2004:

ՏԻՄՈՒՆ (ԹԻՑՉՈՆ) ՄԻՔԱՅԵԼ ԷՖԵՆԴԻ

Բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և Լեռնալիբանանի Ալեյ ավանի հիվանդանոցում զինվորական բժիշկ ծառայել՝ ավագ լեյտենանտի աստիճանով:

Մահացել է 1915թ. մայիսի 16-ին, ծառայության ընթացքում:

Նրա մասին.

1. Ատաշ Ադնան, 20-րդ դարի նահատակ եղած բժիշկները (թուրքերեն), Թուրքիա, 1997:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՏՈՒՆԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Ծնվել է մոտ 1890թ., Սեբաստիայի նահանգի Ամասիայի գավառի Ամասիա քաղաքում:

1915թ. ավարտել է Կ. Պոլ-

սի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

Բժիշկ է աշխատել:

Սպանվել է 1915թ., Ամասիայում՝ մոտ 25 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուճած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Մեզպուրեան Արթուր, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

3. Թեոդիկ, Յուզարծան նահատակ մտաւորականները, Երևան, 1997:



ՈՒՇՈՒՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

Ծնվել է 1883թ., Կ. Պոլսում:

Մանկությունը ծնողների հետ անցկացրել է Կարին քաղաքում:

Վերադառնալով Կ. Պոլիս՝ սովորել է Պերպերյան վարժարանում:

Հետագայում կրկին տե-

ղափոխվել է Կարին և սովորել Սանասարյան վարժարանում:

Այնուհետև ուսանել է Բեյրութի Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետում:

Ավարտելուց հետո մեկնել է Փարիզ և «Օդել Դիեո» հիվանդանոցում հետևել Դիյուլաֆուլայի դասերին:

Վերադառնալով Կ. Պոլիս՝ թուրք-ռուսական սահմանագլխի առողջապահական քննիչ է նշանակվել:

1911թ. հրաժարվելով պաշտոնից՝ հաստատվել է Կ. Պոլսի ասիական կողմի Սկյուտար թաղամասում:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել:

Ռազմաճակատում վիրավորվել է, բուժվել, ապա Գեյլիբոլուի զինվորական հիվանդանոցի բժշկապետ նշանակվել:

1918թ., պատերազմի ավարտից հետո վերահաստատվել է Սկյուտարում, ուր լայն ժողովրդականություն է վայելել:

Եղել է Տարագրելոց, Որբախնամի, Կարմիր խաչի և Հայ բժիշկներու միությունների անդամ:

Եղել է Հայ մարմնակրթական ընդհանուր միության (ՀՄԸՄ) հիմնադիրներից մե-

կը:

1920թ. ամուսնացել է հանրաճանաչ գրագիտուհի տիկին Անայիսի (Եվփիմե Ավետիսյան) դստեր՝ Մարգարիտ Ավետիսյանի հետ:

1922թ. աշնանը ընտանիքով գաղթել է Ռուսիա և հաստատվել Բուխարեստ մայրաքաղաքում, ուր շարունակել է բժիշկ աշխատել և հանրային գործունեությամբ զբաղվել:

Բուլղարական դոկտորական աստիճանով ատենախոսություն է կատարել:

Մահացել է 1927թ. փետրվարի 23-ին, Բուխարեստում 44 տարեկանում:

Նրա մասին.
Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը, 1928 Փարիզ, 1929:



ՈՒՂՈՒԳՅԱՆ ՍԵՊՈՒՀ

Ծնվել է 1840թ., Կ. Պոլսի Սամաթիա թաղամասում:
Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում:

1859-64թթ. սովորել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանում և դա ավարտել՝ ստանալով կապիտանի աստիճան:

1864-95թթ. եմենում և Արաբիայում գտնվող օսմանյան բանակում բժիշկ է ծառայել՝ կապիտանի աստիճանով:

1895թ. կայմակամի զինվորական աստիճանով ծառայել է Լիբիայի Տրիպոլիս քաղաքում:

1908թ. Կ. Պոլսի Հայտարարության զինվորական հիվանդանոցի գլխավոր բժիշկ է ծառայել՝ միրալայի (փոխգնդապետ) աստիճանով:

1915թ., Հայկական ցեղասպանության ընթացքում, Էնվեր փաշայի հրամանով հեռացվել է ծառայությունից և թոշակի ուղարկվել:

Եղել է տրոպիկական վարակիչ հիվանդությունների խոշոր մասնագետ:

Մահացել է 1934թ. Կ. Պոլսում՝ 94 տարեկանում, թաղվել Կ. Պոլսի Բաղլարբաշքի հայկական գերեզմանոցում:

Նրա մասին.
Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:



**ՈՒՂՈՒԲՆԱՆ
(ՈՒՂՈՒԲՆՈՒԹՅԱՆ) ՀԱԿՈՒԲ
ԷՖԵՆԴԻ ԱԼԻԲՆԱՆԻ**

Ծնվել է 1874/78թ., Կոստանդնուպոլսի Բերաթաղամասում / Անկարայի Նահանգի Յոզղաթի գավառի կենտրոն Յոզղաթ քաղաքում:

1906-07թթ. Կ. Պոլսի սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցում մտային հիվանդությունների բաժնի բժիշկ է աշխատել:

Մասնագիտացել է ծննդամիջական և վեներական հիվանդությունների գծով:

1913թ. Կ. Պոլսում զբաղվել է ծննդամիջական և վեներական հիվանդությունների բուժմամբ: Հիվանդներին բուժել է պրոֆ. Էրլիխի վերջին մեթոդով՝ 606 Սալվարսան դեղով:

Ամենակարճ ժամկետում բուժել է հին և նոր գաղղիական ախտով (սիֆիլիս), ջերմամիզությամբ (սուսանակ), միզապարկի և երիկամների հիվանդություններով տա-

ռապող հիվանդների: Հիվանդներին ընդունել է Կ. Պոլսի Սիրքեջի տրամվայի ճանապարհի վրայի, Ֆեբիուս լուսանկարչատան առաջին հարկում գտնվող իր մասնավոր դարմանատանը:

1914թ. Առաջին աշխատանքի ժամանակ օսմանյան բանակում ծառայել է զինվորական դպրոցների ու պահեստների գլխավոր բժշկի տեղակալ կապիտանի աստիճանով:

Մահացել է 1918թ. ապրիլի 14/19/25-ին, Կ. Պոլսի Թաքսիմի հոսպիտալում, ժանտախտից՝ 42 տարեկանում: Թաղված է Կ. Պոլսի Շիշլիի ազգային գերեզմանատանը:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:
2. Ատիլ Գ. և ուրիշներ, Ազգային գերեզմանատուն հայոց. Շիշլի, Կ. Պոլիս, 1922:
3. Ազգային հիւանդանոցի մէջ պաշտօնավարած բժիշկները, Ընդարձակ տարեգիրք Ազգային հիւանդանոցի, Իսթանպուլ, 1939:
4. Ատաշ Ադնան, 20-րդ դարի Նահատակ եղած բժիշկները (թուրքերեն), Թուրքիա, 1997:
5. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ

և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՓԱԼԱԲԸՅԸՑՑԱՆ ՊՈՂՈՍ

Ծնվել է 1880/85թ., Կոստան-դնուպոլսում:

Նախնական կրթությունն ստացել է Կ. Պոլսի թաղային ազգային վարժարաններից մեկում:

1912թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

1912թ.-ից Վանի նահանգի Վանի գավառի Արճեշ քաղաքի թաղապետական բժիշկ է աշխատել և թուրք ու հայ բնակչության հարգանքը վայելել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին զորակոչվել է օսմանյան բանակ և Համիդիե հեծելազորի զինվորական բժիշկ ծառայել:

Թուրք հրամանատարներից սիրված և հարգված է եղել համեստ բնավորության և բացառիկ ծառայությունների համար:

1915թ. հունվարին Էնվեր փաշայի բանակը ծանր պարտություն է կրել Սարիղամիշի ռազմաճակատում, իսկ ինքը՝ Էնվերը փրկվել է սեբաստացի սպա Հովհաննես Ակինյանի և հայ զինվորների հերոսական ու անձնազոհ դիմադրության շնորհիվ: Ի

«հատուցում», Էնվերը հրամայել է օսմանյան բանակի հայ զինվորներին զինաթափել:

1915թ. Բաղեշի և Սուլշի միջև ընկած մի անմարդաբնակ վայրում, մոտ 33 տարեկանում գնդակահարվել է գազազած թուրք հրամանատարի կողմից, որը իմացել է, թե բժիշկը վիրավոր թուրք զինվորների հետ միասին նույնպիսի հոգատար բժշկական օգնություն է ցուցաբերել նաև հայ զինվորներին...

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

3. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

4. Սահակյան Լիլիկ, Ոճրագործները չխնայեցին նույնիսկ մարդու կյանքը փրկողներին, «Առողջապահություն», Երևան, 1965, թ. 4:

5. Յուլչամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

6. Թէոդիկ, Յուլչարձան

Նահատակ մտաւորակա-նութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

7. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

ՓԱՆՈՍԻ ՈՐԴԻ ՍԱՐԳԻՍ տե՛ս՝ ԱԶԱՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՓԱՆՈՍԻ (ՓԱՆՈՍԻ ՈՐԴԻ ՍԱՐԳԻՍ)

ՓԱՆՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ

Ծնվել է 1870թ., Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի կենտրոն Կեսարիա քաղաքում:

Մասնագիտական կրթություն չի ունեցել, կամ էլ վկայականը ետ են վերցրել:

Եղել է դեղագործ կամ բժիշկ:

Եղել է Գյումուշյան վարժարանի հոգաբարձու, հնչակյան կուսակցության պատասխանատու գործիչ:

Լինելով ամուրի՝ բոլոր ազգային օգտակար գործերի համար առատ նվիրատվություններ է կատարել:

1915թ. ձերբակալվել է և բանտարկվել ի թիվս 38 հեղափոխականների:

Իրենց 12 ընկերների կախաղան հանվելուց երկու շաբաթ հետո մյուս 26 բանտարկյալները աքսորվել են Սեբաստիայի ճանապարհ-

հով:

1915թ., տարագրության ճանապարհին, Թոմարգայում կամ Կեմերեկից հյուսիս ընկած Ղըչալարի Մուտարասը կոչված ձորամեջում սպանվել է հողագործ թուրքերի և թրքուհիների մանգաղներով՝ 45 տարեկանում:

Նրա մասին.

1. Ալպոյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. հատոր, Գահիրէ, 1937:

2. Գալֆայեան Կարապետ աւագ քահանայ, Գիրք Ելից հայոց, Պէյրուք, 1955:

3. Թէոդիկ, Յուլչարձան նահատակ մտաւորակա-նութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985

4. Շահբազյան Հասմիկ և Միրզոյան Անահիտ (կազմողներ), Յուլչակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 3, Անկարայի նահանգ, Երևան, 2006:

ՓԱՆՈՍՅԱՆ ՄԻՍԱԲ

Ծնվել է 1890թ., Սեբաստիայի նահանգի Եվդոկիայի գավառի կենտրոն

Եվդոկիա քաղաքում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի ազգային վարժարանում:

1895թ. մտել է Արմաշի դպրեվանքը:

Երկար տարիներ Եվդոկիայում ուսուցիչ և դպրոցների տեսուչ է աշխատել ար-

դյունավետ կերպով:

1907-11թթ. սովորել է Բեյրութի Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետում:

1911թ. հոկտեմբերին վերադարձել է Եվդոկիա և բժիշկ աշխատել:

Ամուսնացել է և զավակներ ունեցել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ գորակոչվել է օսմանյան բանակ և բժիշկ նշանակվել Եվդոկիայի զինվորական հիվանդանոցում, ուր ծառայում էին նաև բժիշկներ Արմենակ Սերայտարյանը և Հակոբ Էմինյանը: Երեքն էլ հրաժարվել են իսլամություն ընդունելու առաջարկից:

1915թ. ապրիլին Եվդոկիայում Շուուբե ընդհանրապես («[Զինվորագրության] բաժնի պետ») Քեոր բինբաշի («Կույր մայր») հրահանգով, երեք բժիշկները ձերբակալվել և բանտարկվել են Իթի-հադի դեկավարներից մեկի՝ դոկտոր Բեհաեդդին Շաքիրի կազմած 58 ականավոր հայ բժիշկների ցուցակով:

1915թ. հունիսին, պոկելով երեք հայ բժիշկների սպայական ուսադիրները, նրանց տարել են Մալ Գայանի թաղի բլուրի վրա գտնվող պահակակետը, հանել զինվորական համազգեստները և համարյա մերկ վիճակում

կախաղան բարձրացրել: Մահվան ժամանակ Միսաք Փանոսյանը եղել է 25 տարեկան:

Այլ տվյալով՝ Միսաք Փանոսյանը, Արմենակ Սերայտարյանը և Հակոբ Էմինյանը սրախողխող են արվել թուրք ոստիկան զինվորների ձեռքով:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

3. Ալպօյաճեան Արշակ, Պատմութիւն Եւդոկիոյ հայոց, Գահիրէ, 1952:

4. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

5. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

6. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

7. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

8. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապա-

հուբյան ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

9. Խաչատրյան Լուսինե և Բաբլումյան Արփինե (Կազմողներ), Յուցակ հայոց ցեղասպանության զոհերի (1915-1922թթ.) ցանկը, Սեբասթիա, 2001:



ՓԱՇՎԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԽԱՆ Հ.

Բժիշկ, գրող, հրապարակախոս, հասարակական, քաղաքական, մշակութային, ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ, Ազգային կենտրոնական վարչության քաղաքական ժողովի և օսմանյան խորհրդարանի անդամ, խան:

Ծնվել է 1864թ., Կ. Պոլսի Կետիկփաշա թաղամասում:

1888թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը: Մասնագիտացել է ակնաբուժության գծով:

Իր ազատական հայացք-

ներով աչքի է ընկել մայրաքաղաքում:

Օգտագործել է Թափառիկ, Թելեֆոն, Կ. Հ. Փ. խան, ԿԷՆ-Փիւր, Փաշ., Կ. Հ. ծածկանունները:

1888թ. Առողջապահական տնօրինությունը (ամենայն հավանականությամբ՝ որպես արտոր) նրան նշանակել է ներքին գավառների՝ Բալուի, Մեյխոնեի թաղապետական բժիշկ:

1889թ. հաստատվել է Տիվրիկում և թաղապետական բժիշկ աշխատել:

Աշխույժ մասնակցություն է ունեցել ազգային մշակութային և կրթական կյանքին: Եղել է ՀՅԴ եռանդուն գործիչ:

Շապին-Կարահիսարի մոտ Լիհեսեի արծաթահանքի անգլիական ընկերության բժիշկ է աշխատել:

1890թ. Կարինի նահանգի Երզնկայի գավառի Կամախի (Քեմախ) գավառակի Բագառիճ գյուղում հեղափոխական-հայդուկային խմբեր կազմակերպելու մեղադրանքով ձերբակալվել է և բանտարկվել Սեբաստիայի բանտում: Խիստ պատժից խուսափել է լոկ պատահականությամբ. թուրք դատավորը հիվանդացել է աչքի հիվանդությամբ և կուրանալու վտանգ է առաջացել: Նա դիմել է բանտում գտնվող Փաշայանին, որը դատավորին

բուժել է և փրկել կուրանալուց:

1891թ. մարտին երախտապարտ դատավորը բժշկին ազատ է արձակել բանտից:

4. Փաշայանը Շապին-Կարահիսար է տեղափոխվել:

1892թ. սեպտեմբերին, զինված խմբեր կազմակերպելու և զինամթերք պահելու մեղադրանքով կրկին ձերբակալվել է ու բանտարկվել:

1894թ. ապրիլի 13-ին երզնկայում սկսվել է դատավարությունը հնչակյան գործիչ Գալուստ Արխանյանի խմբի, որի մեջ էր նաև բժիշկ Կարապետ Փաշայանը: Դատավարությունը տևել է շուրջ 2 տարի, և 21 հեղափոխականներ ստացել են մահապատիժ, որը փոխվել է ցկյանս բանտարկության կամ այլ պատիժների:

1895թ. մահապատժից ազատվել է Նշանածի՝ օրինորդ Վերգին Պ. Թորգոմյանի ջանքերով, որը դիմել է Օսմանյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի դեսպանին ու նրա տիկնոջը՝ տիկին Ֆ. Ջրրին, որի միջնորդության շնորհիվ Բարձրագույն դուռը նրան ներում է շնորհել:

1895թ. մեկնել է Պարսկաստան:

Դավրեժ (Թավրիզ) քաղաքում եղել է թագածառանգ

Մեհմեդ Ալի միրզայի (1907-1909թթ.՝ շահ) խորհրդական բժիշկը, այնուհետև՝ Բենդեր Գեչ նավահանգստի մաքսատան (6 տարի) և արտաքին գործոց նախարարության բժիշկը, ինչպես նաև «Ռոսիա» ապահովագրական ընկերության և «Կավկազի Մերկյուրի» ռուսական ընկերության բժիշկը:

Օգտագործելով իր բարձրաշխարհիկ ծանոթություններն ու լայն հնարավորությունները, մեծապես օգնել է պարսկահայ գաղութին, կազմակերպել բարեգործական, կրթական, ազգապահպան զանազան ձեռնարկումներ:

Մեծ դեր է կատարել Դավրեժում թեմական կանոնագրի խմբագրման և դպրոցները երկրորդային վարժարանի մակարդակին բարձրացնելու գործում: Այդ դպրոցներում եղել է հոգաբարձության ատենապետ և հաճախ էլ ձրի ուսուցչություն արել: Ստանձնել է Պարսկաստանի հակաակոհության և դպրոցական առողջապահության բաժինները:

1903-06թթ. ապրել է Եգիպտոսում: Ալեքսանդրիայում իր միջոցներով, ընկերների հետ հիմնել է ՀՅԴ լսարան / դպրոց, «Գամբետա» տպարանը և «Հորիզոն» շաբաթաթերթը (1904),

որի խմբագրական խորհրդի անդամն էր Ա. Տեր-Գալուստյանի, Հակոբ Աստուրյանի և Արտավազ Հանըմյանի հետ միասին, իսկ շուրջ 3 ամիս՝ խմբագիրը:

1907թ. հրավիրվել է Պարսկաստան և երկրին, հատկապես Բենդեր Գեչին մատուցած անձնվեր ծառայությունների համար արժանացել խան տիտղոսին և զանազան պատվանշանների, մասնավորաբար «Շիր-օ-խորշիդ» («Մոլուծ և արև») պատվանշանի 2-րդ և 4-րդ աստիճանների, «Հասարակաց կրթության» 1-ին կարգի ոսկե մեդալի:

1908թ. երիտթուրքական հեղաշրջումից և օսմանյան սահմանադրության վերահաստատումից հետո Կ. Պոլիս է վերադարձել:

1908թ. Սեբաստիայից ընտրվել է օսմանյան խորհրդարանի անդամ:

1912թ. Խարբերդից ընտրվել է Ազգային կենտրոնական վարչության Քաղաքական ժողովի անդամ:

Մեծ դեր է ունեցել Տիվրիկում սահմանադրական ժողովների հաստատման մեջ:

1882թ. - ի ց թղթակցել է բազմաթիվ հայկական, ֆրանսիական, գերմանական, թուրքական, պարսկական բժշկաառողջապահական և գրական-հասարակական

պարբերականների:

Աշխատակցել է ֆրանսիական և գերմանական ստվար հատորների հավաքական խմբագրությանը:

Չբաղվել է դպրոցական առողջապահության և, հատկապես, ալկոհոլիզմի դեմ պայքարի խնդիրներով: Բազմիցս մասնակցել է այդ խնդիրներին նվիրված միջազգային հավաքների, հանդես եկել զեկուցումներով:

Թողել է գրական-գեղարվեստական, տեղագրական, գիտական, առողջապահական մեծ ժառանգություն, որն ամփոփված է ավելի քան 16 մեծ ու փոքր հատորներում, որոնց մի մասը տպագրվել է Ալեքսանդրիայի իր սեփական «Գամբետա» տպարանում:

Եղել է միջազգային բժշկական և առողջապահական ընկերությունների անդամ:

Շատ ճանապարհորդել է Թուրքիայում, Եգիպտոսում, Պարսկաստանում, Ռուսաստանում, Կովկասում, Արևմտյան և Արևելյան Հայաստանում:

1915թ. ապրիլի 11 (24)-ին, ի թիվս 600 ակնառու հայ մտավորականների, ձերբակալվել է և բանտարկվել Կ. Պոլսի կենտրոնական բանտում:

1915թ. ապրիլի 12-ին, ձերբակալված հայ մտավոր

րականների (Խաչատուր Մալումյան, Ռուբեն Չարդարյան և այլք) գնացքով տեղափոխվել է Այաշ ավանի ծայրամասի բլրի վրա գտնվող Սարը կըշլա հին զորանոց-բանտը և մի քանի ամիս այնտեղ մնացել:

Նահատակվել է Անկարայի մոտ կամ Այաշում 51 տարեկանում:

Բժշկագիտական աշխատությունները.

1. Մարդկության ամենամեծ թշնամին, Իզմիր, 1901:

2. Երեխաներու սնունդ, Ալեքսանդրիա, 1903:

3. Ցրտառութիւն եւ մարմնի ամրապնդումն (հոդվածն ուղարկել է Թավրիզից), «Առողջապահիկ թերթ», Թիֆլիս, 1903, թ. 1-2:

4. Եգիպտոսի կլիման թոքախտաւորների համար, «Ժողովուրդ» կիսամսյա հանդես, Կահիրե, 1904, թ. 6, 7, 8:

5. Թոքախտ, «Ժողովուրդ» կիսամսյա հանդես, Կահիրե, 1904, թ. 12-16, 18-20:

6. Պատկերազարդ ընդարձակ դպրոցական առողջապահութիւն, Ալեքսանդրիա, 1905:

7. Բժշկական տարեցոյց, Կ. Պոլիս, 1914:

8. Յրի կանանց կրած տպաւորութեանց փոխազդեցութիւնը սաղմի վրայ:

Գրական-գեղարվեստական աշխատությունները.

9. Մարիա², թե² Հայկա-նոյշ, վեպ, Կ. Պոլիս, 1889:

10. Աղջկան մը յիշատակարանը, նորավեպ, Կ. Պոլիս, 1895:

11. Դրուագ մը յեղափոխական անցեալէն, Կ. Պոլիս, 1911:

12. Աղեքսանդրիոյ սահմանադրական պայքարին վիժումը եւ «Ազատ Բեմ»-եան վերակազմեալները, Աղեքսանդրիա, 1905/06:

13. Վիպական հավաքածու, Աղեքսանդրիա, 1906:

14. Համիտի օրերէն, Կ. Պոլիս, 1911:

15. Ժողովուրդի բարեկամները, Կ. Պոլիս, 1909, Վենետիկ, 1910:

Նրա մասին.

1. Ղազարեան Վ.ահան, Բժշկական եւ առողջապահական տարեցոյց, Կ. Պոլիս, 1914:

2. Գաբամաճեան Ս., Հայաստանի կաղանկէքը: Մեծ Եղեռնի զոհերը իրենց պատկերներով, Կ. Պոլիս, 1919:

3. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

4. Թէոդիկ, Յուշարձան ապրիլ 11-ի, Կ. Պոլիս, 1919:

5. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Վիեննա, 1922:

6. Չարդարեան Վահան, Յիշատակարան (1512-1933), հ. 4, Գահիրե, 1939:

7. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

8. Փափագեան Վահան, Իմ յուշերը, Բ. հատոր, Պէյրուք, 1952:

9. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

10. Օտեան Գասաբեան Ալիս, “Պատմագիրք Անկիւրիոյ եւ Ստանոզի Հայոց (Նախաքրիստնեական եւ Հին Գաղափարական Շրջաններէն Մինչեւ 1918 Թուականը)”, տպ. “Տոնիկեան”, Պէյրուք, 1968, 319 էջ (որուն 247 էջը` հայերէն, 72 էջը` անգլերէն):

11. Շիկահեր Վարդ, Կիսադարեան պատմութիւն թրքահայ բժշկութեան, 1923-1975, Իսթանպուլ, 1975:

12. Թէոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

13. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Երևան, 1991:

14. Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ալբոմ-ատլաս, Ա. հատոր, Դիւցագնամարտ, 1890-1914, Լոս Անճելըս, 1992:

15. Հայկական հարց, հանրագիտարան, Երևան,

1996:

16. Օտեան Երուանդ, Մեր երեսփոխանները, մեր Ազգային ժողովը, Երեւան, 1999:

17. Վարդանյան Ս., Հայաստանի բժշկության պատմություն, Ե., 2000:

18. Փաշայան Ասատուր, Տիտղոսակիր հայեր, XV-XIX դարեր, Ե., 2001:

19. Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ալբոմ-ատլաս, Բ. հատոր, Գոյամարտ, 1914-1925, Լոս Անճելըս, 2001:

20. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերէն), Ստամբուլ, 2001:

21. Խաչատրյան Հ. և համահեղ., Հայկագունք, Երևան, 2002:

22. Հովակիմյան Բախտիար, Հայոց ցեղասպանության նահատակ գործիչների ծածկանուններ, Երևան, 2002:

23. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողը և վկայք խաչի, Երևան, 2002:

24. Չօհրապ Գրիգոր, Երկերի ժողովածու, հ. 2, գիրք 2, Երեւան, 2004:

25. Ավագեան Կարինե, «Չանդորդի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հան-

դէս Ամսօրեայ», 2008, հ. 1-12
26. Իսկահատեան Հ.,
Վկայարան հայկական ցե-
ղասպանութեան, Գիրք Գ,
Պէյրուք, 2011, 395 էջ



**ՓԱՇԱԴԵՑՅԱՆ
ՄԻՍԱԶ ԿԱՐԱՊԵՏԻ
(ԹՈՐՈՍԻ)**

Ծնվել է 1872թ., Ադանայի
Նահանգի Կոզանի գավառի
Սիս քաղաքում:

Ավագ եղբայր Սարգիսը
եղել է բժիշկ և երիտասարդ
տարիքում մահացել հիվան-
դությունից, կրտսեր Միսաքը
եղել է դեղագործ:

Ավարտել է Սիսի ազգա-
յին վարժարանը:

1907թ. ավարտել է Բեյ-
րուլթի Սեն ժոզեֆ Ֆրանսիա-
կան համալսարանի բժշկա-
կան ֆակուլտետը:

Վերադարձել է Սիս և
կարճ ժամանակ աշխատել

ներքին հիվանդությունների
բժիշկ և մանկաբարձ:

Սիսում Կիրակոս Պարի-
տյանի կինը ծննդաբերու-
թյան ժամանակ մեռնելու
պատճառով մի քանի տարի
եղել է դատական քաջքշուք-
ների մեջ:

Այդ պատճառով տեղա-
փոխվել է Չմյուռնիա և կարճ
ժամանակ անց քաղաքի ճա-
նաչված բժիշկներից մեկը
դարձել:

1914-18թթ., Առաջին աշ-
խարհամարտի ժամանակ
զորակոչվել է օսմանյան բա-
նակ և գինվորական բժիշկ
ծառայել:

1918թ. պատերազմից
հետո վերադարձել է Չմյուռ-
նիա և աշխատել բժիշկ, իսկ
որոշ ժամանակ՝ Ազգային
հիվանդանոցի բժիշկը:

1922թ. սեպտեմբերի սկզ-
բին, Չմյուռնիայի աղետի
ժամանակ, բազմաթիվ հա-
յերի հետ, գերի է ընկել թուր-
քերի ձեռքը և սեպտեմբերի
12-ին, հուլյների բարեկամ լի-
նելու մեղադրանքով սպան-
վել Զորտելիո թաղամասում:

Կինը և զավակները
1945թ. բնակվել են Աթեն-
քում:

Նրա մասին.

1. Զէլէշեան Միսաք, Սիս-
Մատեան, Պէյրուք, 1949:

2. Տէրենց Յա. (Տէր-Յա-
կոբեան), Իզմիրի աղետը եւ
մեծ հրդեհին մանրամաս-

նութիւնները, «Ազգ», Ե.,
8.12.2007:

**ՓԱՇԱԴԵՑՅԱՆ ՄԻՍԱԶ
ԿԱՐԱՊԵՏԻ (ԹՈՐՈՍԻ)**

Ծնվել է 1881թ., Ադանայի
Նահանգի Կոզանի գավառի
Սիս քաղաքում:

Ավագ եղբոր՝ Հարություն-
նի օգնությամբ գնացել է Բեյ-
րուք և ուսանել Սեն ժոզեֆ
Ֆրանսիական համալսարա-
նի բժշկական ֆակուլտետի
դեղագործական բաժնում:

1908թ. ավարտել է ուսու-
մը և վերադարձել Սիս:

Հայրենի քաղաքում շու-
տով բարեհոգի և խղճմիտ
դեղագործի համբավ է ձեռք
բերել:

1914թ., թուրքերի պնդու-
մով, զերծ է մնացել տեղա-
հանությունից:

Հիվանդացել է է տիֆով:

Սիսի պետական բժիշկ
թուրք Ալին չարամտորեն
Նրան սխալ բուժում է կա-
տարել, ինչի հետևանքով
Միսաքը մահացել է 33 տա-
րեկանում:

Նրա մասին.

Զէլէշեան Միսաք, Սիս-
Մատեան, Պէյրուք, 1949:

**ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ ԽԱՉԻԿ
(ԽԱՉԱՏՈՒՐ)
ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ**

Ծնվել է 1877թ., Կարի-
նի Նահանգի Կարին քաղա-

քում մեծատոհմիկ Փաստր-
մաճյանների ընտանիքում:

Ազգային անվանի գոր-
ծիչ Արմեն Գարոյի (Գարե-
գին Հարությունի Փաստր-
մաճյան, 1873-1923) կրտսեր
եղբայրն է:

Պապը՝ Խաչատուր Էֆեն-
դի Փաստրմաճյանը Կարի-
նում եղել է տաղանդավոր
ու ձեռներեց մարդ և առաս-
պելական հարստություն ու-
նեցել: Թուրքերի դեմ ըմբոս-
տության համար, Կարինի
կառավարության կարգադ-
րությամբ և ուղղակի հրա-
հանգով, սպանվել է իր կա-
ռուցած հոյակապ բաղնիքի
դիմաց Նստած ժամանակ:

Հայրը՝ Հարություն և
Փաստրմաճյանը և Հովհան-
նես եղբայրը ուղղակի մաս-
նակցություն են ունեցել Կա-
րինի 1890թ. դեպքերին և
հայկական ցույցերին:

Ավարտել է Կարինի Սա-
նասարյան վարժարանը:

Հավանաբար 1900թ.
ավարտել է Բեյրուքի Սեն
ժոզեֆ Ֆրանսիական հա-
մալսարանի բժշկական ֆա-
կուլտետի դեղագործական
բաժինը:

Ուսանողական տարինե-
րին եղել է Բեյրուքի ՀՅԴ
«Չավարյան ուսանողական
միության», ապա՝ ՀՅԴ ան-
դամ:

Ավարտելուց հետո Կարին
է վերադարձել:

1908թ. Կարինում սեփա-

կան դեղատուև և ունեցել:

Եղել է նյութապես ապահովված և հանրային գործերով մտահոգված անձնավորություն:

1908թ. օսմանյան սահմանադրության վերահաստատման ժամանակ եղել է Կարինի երիտասարդության առաջապահներից և կարևոր դեմքերից, ամենուր սիրված անձնավորություն:

Եղել է վարչությունների, ուսումնական խորհուրդների և հանրային մարմինների անդամ:

Այնուհետև Մեյիտինեում դեղագործ է աշխատել:

Սպանվել է 1915թ., Մեյիտինեում՝ 38 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Չարըզ Ղազար, Յոււշամատեան Բարձր Հայքի. Կարինապատում, Պէյրուք, 1957:

3. Յոււշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

4. Թէոդիկ, Յոււշարձան նահատակ մտաւորականութեան, Ե., 1985:

5. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

6. Յարման Արսեն, Հայե-

րը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ ԽԱԳԻԿ

Ծնվել է Կարինում:

Բժշկական կրթություն է ունեցել և մասնագիտացել ակնաբուժության մեջ:

Ակնաբույժ է աշխատել: Եղել է ՀՅԴ անդամ:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ գորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ-ակնաբույժ ծառայել՝ սպայի աստիճանով: Նահատակվել է 1915թ., Մեծ Եղեռնի ժամանակ:

Նրա մասին.

Յոււշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ալեքոմատլաս, Բ. հատոր, Գոյամատ, 1914-1925, Լո



ՓԱՓԱՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ

Ծնվել է 1893թ., Մարմարա ծովի ասիական ափի Բանդրմա քաղաքում:

Գրվել է Գրիգոր Տուտի կամ Գրիգոր Տուտի Փափագյան: Ավարտել է Կ. Պոլսի Կադրգյուղ թաղամասի Մխիթարյան վարժարանը:

1917թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը:

1917թ. զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժշկի հանգամանքով մասնակցել Առաջին համաշխարհային պատերազմին:

Գերի է ընկել անգլիական բանակին և Եգիպտոս տարվել: Պատերազմի ավարտից հետո ազատվել է գերությունից և վերադարձել ծննդավայրը, որը գրավել էր Հուսաստանը:

Քեմալական արշավանքի սկզբին, շատերի հետ նա էլ ապաստան է գտել Հուսաստանում: Հաստատվել է Թրակիայի Ալեքսանդրուպոլիս (Դեղե աղաջ) քաղաքում, ուր երկար տարիներ մասնակցել է հայ համայնքի ազգային, կրթական, հասարակական և կուսակցական (ՀՅԴ) կյանքին:

Եղել է սիրված և հարգված անձնավորություն: 1945թ. ընտանիքով գաղթել է Փարիզ, որտեղ սակայն, իբրև բժիշկ աշխատելու

իրավունք չի ունեցել:

1960-ական թվականների սկզբներին տեղափոխվել է Ալժիր:

Ալժիր մայրաքաղաքի քաղաքապետական բժիշկ է աշխատել:

Մահացել է 1965թ. դեկտեմբերի 20-ին, Ալժիրում՝ 72 տարեկանում:

Նրա մասին.

1. Մեզպուրեան Արթուր, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառոտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

2. Գեորգեան Կարո, Ամէնուն տատեհոռո. ժԳ. տարի, 19



ՓԱՓԱՉՅԱՆ ԽԱԳԻԿ

Ծնվել է 1875թ., Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառի Տիվրիկ գավառակի կենտրոն Տիվրիկ ավանում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, միջնակարգը՝ ամերիկացի միսիոներների Բրուսայի նահանգի Նիկոմիդիայի գա-

վառակի Պարտիզակ ավանի Բյուրանիայի բարձրագույն վարժարանում:

1897/99թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը, ապա պարտադիր ծառայության ուղարկվել Եդեսիա և Հալեպ քաղաքները:

1908թ. մեկնել է Փարիզ և Սան Լուիզի ու Նեկերի հիվանդանոցներում մասնակցել անվանի մաշկային բժիշկ պրոֆ. Գաուլերի դասընթացներին:

Եղել է Թուրքիայի առաջին մաշկային բժիշկ մասնագետը:

Վերադառնալով Կ. Պոլիս, Բահչե կափու թաղամասում սեփական դարմանատուն է բացել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և Մոդայի ու Դավուդփաշայի զինվորական հիվանդանոցների զինվորական բժիշկ ծառայել:

Զինվորական հիվանդանոցում մի հրեա զինվորականի բուժելու ժամանակ նրանից վարակվել է բժավոր ժանտախտով (բժավոր տիֆ):

Մահացել է 1916թ. մարտի 28/29-ին, ժանտախտից (տիֆից), Կ. Պոլսի Բալըքլի հունական հիվանդանոցում 41 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

3. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՓԱՓԱՅՑԱՆ Ն.

Դեղագործական կրթություն է ունեցել:

Կոնիա նահանգի կենտրոն Կոնիա քաղաքում դեղագործ է աշխատել:

Մահացել է Առաջին համաշխարհային պատերազմի (1914-1918) ժամանակ, Սուլթանիեում:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՓԱՓԱՅՑԱՆ Ն.

Դեղագործական կրթություն է ունեցել:

Սեբաստիայի նահանգի

Շապին-Կարահիսար գավառի կենտրոն Շապին-Կարահիսար քաղաքում դեղագործ է աշխատել:

Մահացել է 1915թ., Շապին-Կարահիսարում:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՓԱՓԱՅՑԱՆ ՆՈՒՊԱՐ

Ծնվել է Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառի Ակն գավառակի կենտրոն Ակն քաղաքում:

Բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել:

1915թ. ամռանը ձերբակալվել է և տարվել Արաբկիր, ապա՝ Գյումուշ-Մադեն, որտեղ էլ սպանվել է:

Նրա մասին.

Թէոդիկ, Գողգոթայ հայ հոգեւորականութեան, Նիւ Եորք, 1985:

ՓԱՓԱՅՑԱՆ ՎԱԶԳԵՆ

Բարձրագույն բժշկական կրթություն է ունեցել:

Բժիշկ է աշխատել: 1915թ. զոհվել է Մեծ Եղեռնի ընթացքում:

Հավանաբար եղել է երիտասարդ և ամուրի:

Այս բժշկի անունը հիշատակում է ֆրանսահայ կինոռեժիսոր Անրի Վերնոյի (բուն անունով՝ Աշոտ Մալաքյան) «Մայրիկ» գեղարվեստական կինոֆիլմի հերոսուհիներից մեկը, որը ծանոթ է եղել բժշկի հետ:

Ֆիլմը պատմում է Մեծ Եղեռնից վերապրած ու Փարիզում բնակություն հաստատած մի հայ ընտանիքի մասին:

Հնարավոր է, որ բժիշկ Վազգեն Փափագյանը իրական անձ լինի, քանի որ ֆիլմի սցենարը գրվել է փաստագրական արժեք ունեցող հուշագրության հիմքի վրա: Բացառված չէ նաև, որ երևակայական ու հորինված կերպար է:

Նրա մասին.

Անրի Վերնոյ (սցենարի հեղինակ և ռեժիսոր), ֆրանսիական գեղարվեստական ֆիլմ «Մայրիկ»:



**ՓԱՓՈՒՆՅԱՆ
(ՓԱՓՈՒՆԵՍՅԱՆ) ԵՂԵՇԵ**

Ծնվել է 1875/77թ., Կարին նահանգի կենտրոն Կարին քաղաքում:

Ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանի դեղագործական բաժինը:

1902թ. Կարինում սեփական դեղատուն է բացել և դեղագործ աշխատել:

Պատրաստել է «փոկոփափան» (Փափանյանի փոշի) հազի դեղը:

Իտալիայի Պալերմո քաղաքի համալսարանի բժշկական ֆակուլտետից ոսկե մեդալ և պատվո նշան է ստացել:

Մելիտինեում սեփական դեղատուն է ունեցել և դեղագործ աշխատել:

1915թ., Մելիտինեում թուրք խաժամուժը նրան կացնահար է արել՝ 39 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուս, 1965:

3. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

4. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործութեան պատմութիւնից, Երևան, 1990:

5. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահութեան ծառայութեան մեջ և պատմութիւնը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերէն), Ստամբուլ, 2001:



**ՓԵՇԻՄԱՆԻՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՓԱՇԱ ՍԱՀԱԿԻ**

Բժիշկ, հասարակական և քաղաքական գործիչ, հրապարակախոս, փաշա:

Գրվել է նաև Փեշտեմալճյան:

Ծնվել է 1837թ., Կոստանդնուպոլսի Խասաջուղ (Խասքեոյ) թաղամասում:

Հայրը՝ Սահակ աղա Փեշտիմալճյանը, պոլսահայութեանը հայտնի էր իր ուսումնասեր և ազգօգուտ գործերով:

Նախնական կրթութիւնը ստացել է Խասաջուղի սբ. Ներսէսյան վարժարանում:

1851-54թթ. ուսանել է Փարիզի Մուրատյան վարժարանում, որի տեսուչն էր Գաբրիել վրդ. Այվազովսկին:

1854-58թթ. ուսանել է Փարիզի սբ. Լուդովիկոսի / Լուի լը Գրան լիցեյում և գիտութիւնների «բաշըլիէի» («պսակավոր») աստիճան ստացել:

1860/61-67թթ. սովորել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետում:

1867թ. հուլիսի 17-ին ներկայացնելով «Մանկանց առողջութիւնը» թեմայով ավարտաճառը, բժշկութեան դոկտորի վկայագիր է ստացել:

1861թ. Փարիզում ծանոթացել է Միքայել Նալբանդյանի հետ և նրա ընկերն ու համախոհը դարձել:

1869թ. վերադարձել է Կ. Պոլիս և, բժշկութեամբ աշխատելով՝ շատ շուտով մեծ համբավ է ձեռք բերել:

1869թ. փետրվարի 19-ին Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական ընկերութեան անդամ է ընդունվել, 1877-78թթ. եղել ընկերութեան ատենապետը:

1872թ. Կ. Պոլսի Ազգային կենտրոնական վարչութեան Զաղաքական ժողովի անդամ է ընտրվել և երկար տարիներ այդ պաշտոնում

մնացել:

1877թ. ապրիլի 14-ին մի քանի համախոհ հայ բժիշկների՝ Ստեփան Արսլանյանի, Նուրիճյանի, Սերվիչենի և Սևյանի հետ հիմնել է Օսմանյան կայսրութեան «Կարմիր մահիկի» բարեսիրական կազմակերպութիւնը, ինչը հանդիսանում է նրա կարևոր գործերից մեկը: Նրա առաջարկով է ընդունվել «Մահիկի» խորհրդանշանը:

Եղել է Ֆրանսիայի առողջաբանական ընկերութեան անդամ:

1880-82թթ. կարևոր պաշտոններ է վարել Կ. Պոլսի սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցում, մեծ եռանդով մասնակցել հիվանդանոցի բարելավման ծրագրերի իրականացմանը:

1880-ական թվականներին եղել է Կ. Պոլսի «Միացյալ ընկերութիւնը հայոց» բարեգործական կազմակերպութեան գործադիր մարմնի նախագահը:

1884թ. սուլթան Աբդուլ Համիդ II-ը նրան կայսերական պալատի խորհրդատու բժիշկ է նշանակել:

1892թ. սուլթանը նրան փաշայութեան (միրիմիրան) տիտղոս է շնորհել:

Ուսանողական տարիներից աշխատակցել է արևմտյան և արևելյան պարբերականներին, թուրքահայ ու ռուսահայ թերթերին, մաս-

նավորաբար՝ Ստեփան Ոսկանյանի «Արեւելք» բժշկական թերթին:

«Մասիս» և «Փարոս Հայաստանի» պարբերականներում Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի տնտեսական զարգացման, մասնավորաբար՝ երկրագործության առաջընթացի ծրագրեր է հրատարակել:

Բազմաթիվ բժշկագիտական հոդվածների և 2 ստվարածավալ գրքերի հեղինակ է:

Թողել է Հայկական հարցին, «Սովելոց կեդրոնական հանձնաժողովի» գործունեությանը, 1880-ական թվականներին Արևմտյան Հայաստանում բացված դպրոցների պատմությանը նվիրված անտիպ աշխատություններ:

Եղել է Կ. Պոլսի հայ և օտար հասարակության ու բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում սիրված ու հարգված անձնավորություն, հանրային ու ազգային գործիչ:

Մասնավոր գուրգուրանք է ունեցել իր ծննդավայր Խասազուղի ու Նրա սբ. Ներսեսյան վարժարանի հանդեպ:

Մահացել է 1894թ. դեկտեմբերի 3-ին, Կ. Պոլսում՝ խորհրդավոր պայմաններում՝ 57 տարեկանում:

Թաղվել է Կ. Պոլսի Շիշլիի

ազգային գերեզմանոցում: Ենթադրվում է, որ դարձել է սուլթան Աբդուլ Համիդ II-ի բազում հայ զոհերից մեկը:

Հետաքրքիր է այն փաստը, որ բժիշկ Տիգրան Փեշտիմալճյանի հողաթումբը գտնվում է աներոջ՝ բժիշկ Սերվիչենի (Սերովբե Վիչենյան, 1815-1897) և քենեկալի՝ բժիշկ Միքայել Էֆենդի Խորասանճյանի դամբարանների կողքին, վրան գրված՝ «Տոքտ. Տիգրան փաշա»: Վերջիններս մահացել են Տիգրանից ավելի ուշ, և նրանց համար դժվար չէր իրենց բժիշկ-փաշա փեսայի և քենեկալի համար մի պատվավոր շիրմաքար դնելը: Դավկայում է այն մասին, որ նրանք պարզապես խուսափել են Կարմիր սուլթանին անհաճո արարք կատարելուց, ինչը կարող էր վնասել նաև իրենց, մինչդեռ նրանք չէին վախենա, եթե բժիշկը հանկարծամահ եղած լիներ ինչ-որ բնական պատճառից:

Աշխատությունները.

1. These de doctorat (դոկտորական ատենախոսությունը), 1867:

2. Առողջապահական մաքրության դաստիարակությունը, թարգմանություն ֆրանսերենից, 1880:

3. Առողջապահություն եւ տածումն առաջին եւ երկրորդ մանկութեան, հ. 1-3, 1880-86:

4. Պատմութիւն մարդկային պատուաստման, Կ. Պոլիս, 1883, 1884, 1889: **Նրա մասին.**

1. Ազգային հիւանդանոցի մէջ պաշտօնավարած բժիշկները, Ընդարձակ տարեգիրք Ազգային հիւանդանոցի, Իսթանպուլ, 1939:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

3. Նալբանդյան Ս., Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, Ե., 1997:

4. Վարդանյան Ս., Հայաստանի բժշկության պատմություն, Ե., 2000:

5. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

6. Փամուլքյան Գևորգ, Հայերը իրենց կենսագրականներով (թուրքերեն), Ստամբուլ, 2003:

7. Պատմութիւն սուրբ Փրկիչ հայոց հիւանդանոցի, Բ. հատոր, 1993-2000 շրջան, աշխատասիրեց՝ Վարուժան Զեօսեան, 2001-2005 շրջան, աշխատասիրեց՝ Նաիրա Սիլվա, Իսթանպուլ, 2007:

8. Ով ով է: Հայեր: Կենսագրական հանրագիտարան, հ. 2, Ե., 2007:

ՓԻԼՊՈՍՅԱՆ ՋԻՎԱՆ

Ծնվել է հավանաբար 1885թ., Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի կենտրոն Կեսարիա քաղաքում: 1910թ. ավարտել է Դամասկոսի դեղագործական դպրոցը:

1910-14թթ. Ակսարայում սեփական դեղատուն է ունեցել և դեղագործ աշխատել:

1915թ. սպանվել կամ մահացել է Դեյր-Էլ-Չորում մոտ 30 տարեկանում:

Նրա մասին.

1. Ալաօյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. հատոր, Գահիրէ, 1937:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՓԻՐԱՆՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՀԱԿՈԲ

Ծնվել է 1885թ. Սեբաստիայի նահանգի Կյուրին գյուղաքաղաքում, հայ ավետարանական ընտանիքում:

Ավարտել է Այնթապ քոլեջը և ստացել “պսակավոր արվեստից” վկայական:

1917թ. ավարտել է Բեյրութի ամերիկյան համալսարանի բժշկական բաժինը:

Առաջին համաշխարհային պատերազմի (1914-1918)

ընթացքում զորակոչվել է օսմանյան բանակ և ծառայել որպես զինվորական բժիշկ:

1918թ. սպանվել է Պաղեստինում ծառայելու ընթացքում:

Նրա մասին.

Քեստենեան Հրաչ, Պեյրուրթի Ամերիկեան Համալսարանէն Շրջանաւարտ եւ Մեծ Եղեռնին Նահատակուած Հայ Բժիշկներ, “Ազդակ”, 01-11-2012

ՓՈԹՈՐԳՅԱՆ (ՓՈԹՈՐԿՅԱՆ) ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԹԻ

Ծնվել է հավանաբար 1883թ., Սեբաստիայի նահանգի կենտրոն Սեբաստիա քաղաքում:

1908թ. ավարտել է Բեյրուրթի Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Կայադիբի կայարանի բժ- ժիշկ է աշխատել:

1915թ. դեկտեմբերի 20-ին սպանվել է կամ մահացել ժանտախտից՝ 32 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Գուժկան Սեբաստիոյ (Կարապետ Գաբիկեան), Եղեռնապատում Փոքուն Հայոց եւ Նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն,

1924:

3. Խաչատրյան Լ. և Բաբլումյան Ա., Ցուցակ հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի նահանգ, Ե., 2004:

ՋԱԼԱՆԹԱՐՅԱՆ ԶՐԻՍՏԱՓՈՐ

Բժշկական կրթություն է ունեցել:

Շուշիում բժիշկ է աշխատել:

1917թ. գումար է հանգանակել և Շուշի-Գանձակ լեռնային ճանապարհը նորոգել: Չոհվել է 1919-20թթ. ընթացքում Շուշիում տեղի ունեցած հայ-թուրքական արյունալի բախումների ժամանակ:

Նրա մասին.

Իշխանյան Եղիշե, Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Երևան, 1999:

ՋԱՍԲՈՒՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

Ծնվել է 1880թ.:

Ա վ ա թ տ ե լ է Կոստանդնուպոլսի Օսմանյան դեղագործական վարժարանը:

1914թ. Թուրքիայի Գեմիկ քաղաքում սեփական դեղատուն է ունեցել:

1916թ. սպանվել է կամ մահացել Բրուսա քաղաքում՝ 36 տարեկանում:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՋԱՐԱԿՈՓՅԱՆ ՄԿՐՏԻՉ

Ծնվել է Կոստանդնուպոլսի Կադրայոլ թաղամասում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

1910թ. Կադրայոլում «Քուշտիլի» անունով սեփական դեղատուն է ունեցել:

1916թ. ապրիլի 19-ին մահացել է ժանտախտից:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՋԵԹԵՆՃՅԱՆ ՄԻՐՉԱ (ԷՄԻՐՉԵ) ԹՈՐՈՍԻ

Ծնվել է մոտ. 1885թ.:

1912թ. ավարտել է Կոստանդնուպոլսի Օսմանյան կայսերական բժշկա-

կան վարժարանը:

Եդեսիա քաղաքում բժիշկ է աշխատել:

Եղել է ՀՅԴ գործիչ:

1915թ. ապրիլին բանտարկվել է Կ. Պոլսի կենտրոնական բանտում, ապա արտրվել Չանդըրը:

Անունը փորագրվել է Չանդըրը բանտում հավաքված համրիչի 99 հատիկներից մեկի վրա:

Չանդըրը արքայազարից դիմել է փախուստի:

Գասթեմունիում ձերբակալվել է, բայց շնորհիվ տեղի ոստիկան զինվորների հրամանատարի բարյացկամության, ազատվել է Դեր Չոր արքայազարից:

Չանդըրը կանչվել է զինվորական ծառայության որպես հարյուրապետ զինվորական բժիշկ:

Այնուհետև Անկարա, ապա Կոնիա է գնացել:

1920թ. Եդեսիայում (Ուրֆա) եղել է թուրքական բանակի դեմ հայոց ինքնապաշտպանական հերոսամարտի ղեկավարներից:

Վերապրել է:

Նրա մասին.

1. Պալաքեան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Վիեննա, 1922:

2. Սիմոն Հովիւեան, “Ապրիլեան Նահատակներուն Շաւիղով, Մեծ Եղեռնի 60ամեակի Սեմին”, Պեյրուրթ, 1975, 349 էջ

3. Պալաքյան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Երևան, 1991:

4. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

5. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողը և վկայք խաչի, Երևան, 2002:

6. Ավագեան Կարինե, «Չանդրորդի 1915 թ. ապրիլի 11, Յիշատակ»... Թանգարանային ցուցանմոյշը, «Հանդես Ամսօրեայ», 2008, հ. 1-12

7. Իսկահատեան Հ., Վկայարան հայկական ցեղասպանության, Գիրք Գ, Պեյրուր, 2011, 395 էջ

ՔԵՆԴՐՅԱՆ ՀԱԿՈՐ

Ծնվել է 1880թ., Խարբերդի նահանգի կենտրոն Խարբերդ քաղաքում:

Դեղագործական կրթություն է ունեցել և դեղագործ աշխատել:

Զբաղվել է նաև ուսուցչությամբ:

1914թ. Առաջին աշխարհամարտի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական դեղագործ ծառայել:

Սպանվել է 1915թ. օգոստոսին, Խարբերդում/Մեզիրեի բանտում՝ 35 տա-

րեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պեյրուր, 1965:

3. Թեոդիկ, Յուշարծան նահատակ մտաւորակաւութեան, Բ. տպագրութիւն, Երևան, ապրիլ 24, 1985:

4. Հայրապետյան Վ., Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

5. Խաչատրյան Լ., Բաբլումյան Ա., Յուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի նահանգ, Երևան, 2004:

ՔԵՇԻՇՅԱՆ ԽԱՉԵՐ

Ծնվել է 1857թ., Հալեպի նահանգի Մարաշի գավառի կենտրոն Մարաշ քաղաքում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում:

Չափահաս դառնալով՝ մեկնել է Սեբաստիա և բժիշկ Այթունյանի մոտ դեղագործությունն ու գործնական բժշկություն սովորել:

1880թ. իր ուշիմության և ամբարած մասնագիտական հմտությունների շնորհիվ Կ. Պոլսում բժշկական վկայա-

կան է ստացել:

Երկար տարիներ Մարաշում դեղագործ-բժիշկ է աշխատել:

Ժողովրդի մեջ ճանաչված է եղել «Հեքիմ Խաչեր» անունով: Մեծ հարգանք է վայելել Մարաշի թուրք և հայ բնակչության շրջանում:

Ըստ մի տվյալի՝ 1914թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1915թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Մարաշում եղել է կառավարական առողջապահական պաշտոնյա բժիշկ:

1920թ. հունվարի 26-ին, Մարաշի աղետի ժամանակ, թուրքերը սրախողխող են արել Խաչեր Քեշիշյանին՝ 63 տարեկանում, նրա տանը հավաքված 70 հայ դրացիների հետ միասին:

Որդիներից Վարդանը (1883-1920) եղել է դեղագործ, Հմայակը (1887-1915)՝ բժիշկ:

Նրա մասին.

1. Գալուստեան Գրիգոր Հ., Մարաշ, Նիւ Եորք, 1934:

2. Մեզպուրեան Արթո, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

3. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատ-

գամները), Պոսթոն, 1957:

4. Գալուստեան Գրիգոր Հ., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զեյթուն, Նիւ Եորք, 1988:

5. «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, Ե. գիրք, Հալեպ, 1996:

6. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՔԵՇԻՇՅԱՆ ԽՈՍՐՈՎ ՀԱՄԱՐՁՈՒՄԻ

Դեղագործ, գրող, հասարակական և քաղաքական գործիչ:

Ծնվել է 1879/80թ., Խարբերդի նահանգի Մելիտինեի գավառի կենտրոն Մելիտինե քաղաքում:

Բժիշկ Միքայել Քեշիշյանի եղբայրն է:

Կրթությունն ստացել է ամերիկացի միսիոներների Խարբերդի Եփրատ քոլեջում:

1900-02թթ. ուսանել է Բեյրութի Ամերիկյան համալսարանում և դեղագործի կոչում ստացել:

Վերադառնալով Մելիտինե, եղբոր՝ Միքայելի նյութական աջակցությամբ բացել է սեփական դեղատուն և դեղագործ աշխատել:

Դ ա վ ա ն ա ն ք ո վ`
ավետարա-նական:

Եղել է ՀՅԴ գործիչ, գրող:
1915թ. թուրքերը իմա-
նալով բժիշկ եղբոր՝ Միքա-
յելի, օսմանյան բանակից
փախուստի ու զորավար
Անդրանիկի բանակին միա-
նալու մասին, անմիջապես
ձերբակալել են Խոսրովին:
Թշնամու ձեռքով չսպան-
վելու համար, Խոսրովը Մե-
լիտինեի բանտում թույն է
խմել: Սակայն թուրք դահիճ-
ները նրան շտապ դեղաթափ
են արել, և ի պատիժ այդ
հանդգնության, դաժանա-
բար կացնահար արել 1915թ.
հունիսի 15-ին՝ 36 տարեկա-
նում:

Այդ մասին Արշակ Ալպո-
յաճյանը գրում է. «... 1915թ.
Մելիտինեի մեջ ալ առաջին
անգամ ձերբակալուեցան
մտաւորական առաջնորդ-
ներ, որոնց հետ էր Խոսրով
Բեշիշեանը, որ դժոխային
տանջանքներէ յետոյ կացի-
նահար սպաննուած է թուրք
ճիւղներու կողմէ» (Արշակ
Ալպոյաճեան, Պատմութիւն
Արաբկիրի հայոց, Պէյրուք,
1915):

Նրա մասին.

1. Ալպոյաճեան Արշակ,
Պատմութիւն Արաբկիրի հա-
յոց, Պէյրուք, 1915:

2. Հայ բժշկութեան տուած
զոհերը, ցուցակագրուած
վաւերական փաստերով, Կ.
Պոլիս, 1919:

3. Յուշամատեան Մեծ
Եղեռնի (1915-1965), պատ-
րաստեց Գերսամ Ահարոնե-
ան, Պէյրուք, 1965:

4. Թեոդիկ, Յուշարձան
Նահատակ մտաւորակա-
նութեան, Բ. տպագրութիւն,
Երեւան, ապրիլ 24, 1985:

5. Թեոդիկ, Գողգոթայ հայ
հոգեւորականութեան, Նիւ
Եորք, 1985:

6. Հայրապետյան Վանիկ,
Էջեր Հայաստանի դեղագոր-
ծութեան պատմութեանից,
Երևան, 1990:

7. Յարման Արսեն, Հայե-
րը օսմանյան առողջապա-
հութեան ծառայութեան մեջ
և պատմութեան սուրբ Փրկիչ
հայոց հիվանդանոցի (թուր-
քերէն), Ստամբուլ, 2001:

8. Խաչատրյան Լ., Բաբ-
լումյան Ա., Ցուցակ Հայոց
ցեղասպանութեան զոհերի
(1915-1923թթ.), հ. 2, Խար-
բերդի Նահանգ, Երևան,
2004:

9. Զեստենեան Հրաչ, Պէյ-
րուքի Ամերիկեան Համալ-
սարանէն Շրջանաւարտ
Եւ Մեծ Եղեռնին Նահատա-
կուած Հայ Բժիշկներ, “Ազ-
դակ”, 01-11-2012



ՔԵՇԻՇԵԱՆ ՀՄԱՅԱԿ
ԽԱՉԵՐԻ

Ծնվել է 1887թ., Օսմա-
նյան կայսրութեան Հալեպի
Նահանգի Մարաշի գավառի
կենտրոն Մարաշ քաղաքում:

Դեղագործ-բժիշկ Խաչեր
Բեշիշյանի կրտսեր որդին է:

Նախնական կրթությունն
ստացել է ծննդավայրի
թաղային վարժարանում,
միջնակարգը՝ ամերիկա-
ցի միսիոներների Մարաշի
«Ակադեմի» բարձրագույն
վարժարանում:

1909թ. ավարտել է ամերի-
կացի միսիոներների Այնթա-
պի Կենտրոնական Թուրքիա-
յի քոլեջը:

1909թ. մեկնել է Կ. Պոլիս՝
բարձրագույն կրթություն
ստանալու:

1915թ. ավարտել է Կ. Պոլ-
սի Օսմանյան համալսարանի
բժշկական բաժինը:

1915թ., Առաջին համաշ-
խարհային պատերազմի
ժամանակ զորակոչվել է օս-
մանյան բանակ և ուղարկվել
4-րդ զորաբանակում ծառա-
յելու զինվորական բժիշկ՝
հարյուրապետի աստիճա-
նով:

1915թ. Կարսի շրջանի
Քելիկ գյուղի մոտերքը, վե-
րևից եկած հրամանի համա-
ձայն, սպանվել է իթթիհա-
դական ազգայնամուլ իր իսկ
հրամանատարի հրամանով
կամ նրա իսկ արձակած
գնդակից՝ 28 տարեկանում:

Այդ ժամանակ թուրք
սպաները ևս 18 հայ զինվո-
րական բժիշկներ են գնդա-
կահարել:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տո-
ւած զոհերը, ցուցակագրու-
ած վաւերական փաստե-
րով, Կ. Պոլիս, 1919:

2. Գալուստեան Գրիգոր
Հ., Մարաշ, Նիւ Եորք, 1934:

3. Մեզպուրեան Արթօ,
Հայ եւ ծագումով հայ բժիշկ-
ներ: Այբուբենական համա-
ռօտ անուանացանկ (1688-
1940), Իսթանպուլ, 1940:

4. Կարոյեան Գասպար,
Մեծ Եղեռնի Նահատակ հայ
բժիշկները (անոնց պատ-
գամները), Պոսթոն, 1957:

5. Յուշամատեան Մեծ
Եղեռնի (1915-1965), պատ-
րաստեց Գերսամ Ահարոնե-
ան, Պէյրուք, 1965:

6. Թեոդիկ, Յուշարձան
Նահատակ մտաւորակա-
նութեան, Բ. տպագրութիւն,
Երեւան, ապրիլ 24, 1985:

7. Գալուստեան Գրիգոր
Հ., Մարաշ կամ Գերմանիկ
եւ հերոս Չէյթուն, Նիւ Եորք,
1988:

8. Յարման Արսեն, Հայե-

րը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՔԵՇԻՇՅԱՆ ՄԻՍԱԲ

Ծնվել է 1881թ., Կեսարիայում:

1903թ. ավարտել է Բեյրութի մանրիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Հալեպում, ապա՝ մեկարայում դեղագործ է աշխատել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական ծառայությունն անցկացրել Կ. Պոլսի Զարթալ թաղամասում:

1915թ. սպանվել է կամ մահացել՝ 34 տարեկանում:

Նրա մասին.

Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՔԵՇԻՇՅԱՆ ՄԻՋԱԹԵԼ ՀԱՍՐԱՐՁՈՒՄԻ

Ծնվել է Խարբերդի նահանգի Մելիտինեի գավառի կենտրոն Մելիտինե քաղա-

քում:

Դեղագործ Խոսրով Բեշիշյանի եղբայրն է:

Դավանանքով՝ ավետարանական:

Նախնական կրթությունն ստացել է ամերիկացի միսիոներների Խարբերդի Եփրատ քոլեջում:

Բժշկական կրթություն է ունեցել և բժիշկ աշխատել:

Մելիտինեում եղբորը՝ Խոսրով Բեշիշյանին նյութական աջակցություն է ցուցաբերել բացելու սեփական դեղատուն:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուն պես, օսմանյան իշխանությունները Միքայելին ուղարկել են ռուսական ռազմաճակատ որպես բժիշկ՝ հարյուրապետի աստիճանով: Այստեղ նա արագորեն կազմակերպել է 200 մահճակալով զինվորական հիվանդանոց, որտեղ բժշկական օգնություն է ցուցաբերել օսմանյան բազմազգ բանակի վիրավոր ու հիվանդ զինվորներին, առանձնակի ուշադրություն դարձրել հայ զինվորների առողջության վերականգնմանը, ինչը անկատ չի մնացել թուրքական զինվորական հրամանատարության ուշադրությունից: Նրան շուտով ձերբակալում են ու բանտարկում: Սակայն մի քանի ամիս անց, զգալով ռազմաբժշկական գործի

հմուտ մասնագետի կարիքը, թուրքերը բժշկին ազատում են կալանքից ու կրկին ծառայության նշանակում բանակում: Միքայելը հաջողում է փախչել Կովկասյան ռազմաճակատի թուրքական զինվորական հիվանդանոցից և գեներալ մեդրանիկ Օզանյանի զորամասին միանալ:

1915թ. թուրքերը այդ մասին իմանալով, անմիջապես ձերբակալել են եղբորը՝ դեղագործ Խոսրովին և 1915թ. հունիսի 15-ին, Մելիտինեի բանտում կացնահարելով դաժանաբար սպանել:

Նրա մասին.

1. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Արաբկիրի հայոց, Պէյրուք, 1915:

2. Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

3. Յուշամատեան Մեծ եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

4. Թէոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

5. Թէոդիկ, Գողգոթայ հայ հոգեւորականութեան, Նիւ եորք, 1985:

6. Հայրապետյան Վանիկ, Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990:

7. Խաչատրյան Լ., Բաբլումյան Ա., Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 2, Խարբերդի նահանգ, Երևան, 2004:



ՔԵՇԻՇՅԱՆ ՎԱՐՄԱՆ ԽԱԳԵՐԻ

Ծնվել է 1883թ., Օսմանյան կայսրության Հալեպի նահանգի Մարաշի գավառի կենտրոն Մարաշ քաղաքում:

Դեղագործ-բժիշկ Խաչեր Բեշիշյանի ավագ որդին է:

Սովորել է ամերիկացի միսիոներների Մարաշի «Ակադեմի» բարձրագույն վարժարանում, այնուհետև՝ ամերիկացի միսիոներների Տարսուսի Սեյնթ Պոլ քոլեջում, որը թերավարտ է թողել:

1906թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական համալսարանի դեղագործական բաժինը

և դեղագործի վկայական ստացել:

1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և ուղարկվել 2եյթուն՝ զինվորական դեղագործ ծառայելու:

2եյթունում 8 ամիս ծառայելուց հետո տարագրվել է Կոնիա, որտեղից էլ ընտանիքով՝ Մեսքենե: Այստեղից փախչել է Հալեպ, ուր կրկին մտել է օսմանյան բանակ և զինվորական դեղագործ ծառայել Լաբլուսի (Պաղեստին) ռազմաճակատում:

1918թ., զինադադարից հետո վերադարձել է Մարաշ:

1920թ. հունվարի 26-ին, Մարաշի հայերի կոտորածի ժամանակ թուրքերը նրան սրահողխող են արել՝ 37 տարեկանում:

Նրա մասին.

1. Գալուստեան Գրիգոր Հ., Մարաշ, Նիւ Եորք, 1934:

2. Գալուստեան Գրիգոր Հ., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս 2եյթուն, Նիւ Եորք, 1988:

3. «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, Ե. գիրք, Հալեպ, 1996:

ՔԵՆՍԵՅԱՆ ԿԻՐԱԿՈՍ

Դեղագործական կրթու-

թյուն է ունեցել:

1915թ. դրությամբ Եդեսիայում դեղագործ է աշխատել:

1915թ. նահատակվել է Եդեսիայում:

Նրա մասին.

Սահակեան Արամ, Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, Պէյրուք, 1955:

ՔԵՉՅԱՆ ՄԿՐՏԻՉ

Ծնվել հավանաբար 1880թ., Անկարայի նահանգի Յոզղաթի գավառի կենտրոն Յոզղաթ քաղաքում:

1905թ. ավարտել է Բեյրութի Սեն Ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Բժիշկ է աշխատել:

Ուրիշ տեղեկություն չկա նրա մասին: Հավանաբար՝ անհետ կորել է:

Նրա մասին.

1. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940

2. Շահբազյան Հասմիկ և Միրզոյան Անահիտ (կազմողներ), Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 3, Անկարայի նահանգ, Երևան, 2006:

ՔԻՊՐԻԹՃՅԱՆ Հ.

Ա տ ա մ ն ա բ ու ժ ա կ ան կրթություն է ունեցել:

Ատամնաբույժ է աշխատել:

1897թ.-ից եղել է ՀՅԴ գործիչ: Պարսկահայքի Սալմաստ քաղաքում եղել է մարտական շարքերի կազմակերպիչ:

1908թ. եղել է Կ. Պոլսում:

1915թ. ապրիլի 24-ին Կ. Պոլսում ձերբակալվել է ի թիվս հարյուրավոր հայ մտավորականների: Ծնորհիվ իր պարսկահայատակ լինելուն՝ հրաշքով ազատվել է ու վերապրել:

Մահացել է 1927թ. փետրվարի 13-ին, Ֆրանսիայի Մարսել քաղաքում:

Նրա մասին.



ՔՅԱԹԻՊՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳԱՐ (ՄԱՐԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ)

Բժիշկ, հասարակական և քաղաքական գործիչ, հրա-

պարակախոս:

Ծնվել է 1821թ., Ադրիանապոլսում՝ Ակն քաղաքից գաղթած հայի ընտանիքում:

Անվանի երգիծաբան Հակոբ Պարոնյանի հորեղբորորդին է:

Նախնական կրթությունն ստացել է Ադրիանապոլսի ազգային վարժարանում, միջնակարգը՝ Կ. Պոլսի համալսարանի դպրոցներից մեկում:

1855-61թթ. ուսանել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետում և դա ավարտել 1861թ. հունվարի 18-ին:

Ուսումնառության տարիներին ծանոթացել է Միքայել Նալբանդյանի հետ (որը նրան անվանում էր բժիշկ Հովհաննես Զյաթիպ) և խանդավառվել նրա հեղափոխական գաղափարներով ու ծրագրերով:

Ընդունել է Ֆրանսիայի հպատակություն:

1859թ. Փարիզում մասնակցել է Ստեփան Ոսկանյանի «Արեւմուտք» պարբերականի հիմնադրմանը:

1861թ. վերադարձել է Կ. Պոլիս, ապա՝ Ադրիանապոլիս և բժշկությամբ զբաղվել:

1862թ. տեղափոխվել է Կ. Պոլիս, բնակություն հաստատել Ֆընդըլլի թաղամասում և բժիշկ աշխատել:

1862թ. 2եյթունի ապստամբության օրերին եղել է

4. Պոլսում հիմնադրված և «Մեղու» հանդեսի հրատարակիչ-խմբագիր Հարություն Սվաճյանի գլխավորած գաղտնի «հեղափոխական մարմնի» ղեկավար անդամներից մեկը:

1862թ. մարտի 14-ին Կ. Պոլսից Միքայել Լալբանդյանին և Սերովբե Թագվորյանին ուղարկած նամակում (որն ընկել է ցարական ոստիկանության ձեռքը) Հ. Քյաթիայանը հիշատակվել է որպես կապող օղակ արևմտահայ դեմոկրատների և համաքրոպական ազատագրական շարժման առաջնորդների միջև:

Հետագայում գրավոր կապ է պահպանել Մ. Լալբանդյանի հետ, մինչև նրա ձերբակալվելը: Կապեր է ունեցել արևմտահայ դեմոկրատների, Լոնդոնի ռուս վտարանդիներ Ալեքսանդր Հերցենի, Նիկոլայ Օգարյովի, իտալական ազգային-ազատագրական շարժման առաջնորդ Ջուզեպպե Մաձձինիի հետ:

1867թ. ընտրվել է Ազգային կենտրոնական վարչության Զաղաքական ժողովի անդամ:

1867թ. նոյեմբերի 8-ին ընտրվել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական ընկերության անդամ և եռանդով մասնակցել ընկերության միջոցառումներին:

1872թ.-ից աշխատել է Կ. Պոլսի Կուլտուրի բաղամասի Ֆրանսիական հիվանդանոցում, որպես բժիշկ, վիրաբույժ:

Կ. Պոլսում առաջինն է օգտագործել ստերիլիզացման մեթոդը և դրանով գրավել մասնագետների ուշադրությունը:

1874-78թթ. եղել է սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցի հոգաբարձության և Կ. Պոլսի Հայոց Բարեգործական ընկերության ղեկավարության անդամ:

Եղել է Կ. Պոլսի հայ համայնքում սիրված, հարգված և լայն ժողովրդականություն վայելած հասարակական գործիչ:

Իր տունը բուժարանի է վերածել և աղքատ հիվանդների ընդունել: Վերջիններիս բուժելիս ոչ միայն բուժավճար չի վերցրել այլև, երբեմն դեղի փող է տվել:

Ճանաչված է եղել նաև սուլթանի պալատում ու օտար երկրների դեսպանատներում:

Նրա առաջավոր հայացքները և ժողովրդասեր գործունեությունը թշնամական մթնոլորտ են ստեղծել նրա շուրջը, հատկապես պալատական շրջանակում:

1882թ. հոկտեմբերի 20-ին սուլթան Աբդուլհամիդ II-ի պալատական բժիշկը Հ. Քյաթիայանին հրավիրել է սուլ-

թանի հարեմի կանանցից մեկի ծննդաբերությունը վարելու: Բարեհաջող ծննդաբերությունից՝ մոր և մանկան կյանքը փրկելուց հետո սուլթանը պալատի բժշկապետի պաշտոնն է առաջարկել նրան: Շնորհակալություն հայտնելով, բժիշկը մերժել է առաջարկը, ասելով, որ ինքը «աղքատների բժիշկ է և կփափագի միշտ այդպես մնալ»:

Այդ մերժումով, փաստորեն, նա վիրավորել է սուլթանին: Նույն օրը հրավիրվել է մի թուրք փաշայի տուն՝ հիվանդի նայելու, որտեղից չի վերադարձել: 1882թ. հոկտեմբերի 21 / նոյեմբերի 5-ին, անհայտ, չպարզված և խորհրդավոր հանգամանքներում, նրա՝ վնասվածքներ ստացած և խեղդամահ արված դիակը գտել են Կ. Պոլսի Կադրգյուղ թաղամասի ծովափին: Դուրսորդ Մյուլլուքի բժշկական քննությունը ցույց է տվել, որ սպանվել է ոճրագործի ձեռքով, այլ ոչ թե ինքնասպան եղել:

Ենթադրվել է, որ սպանվել է սուլթան Աբդուլ Համիդ II-ի ցուցումով կամ պալատի ներքին խարդավանքների հետևանքով:

Սպանության պահին եղել է 61 տարեկան և ամուրի:

1882թ. հոկտեմբերի 29-ին Բժշկական միությունը մեծ շուքով կատարել է հուղար-

կավորությունը: Թաղվել է Կ. Պոլսի Շիշլիի ազգային գերեզմանոցում:

Նրա դագաղի մոտ դամբանական են կարդացել բժիշկ Զիրիաքոն, Ռեթեսու Պերպերյանը, իսկ նրա մոտերիմ Գրիգոր Օտյանը հրապարակել է «Ողբ ի վերայ բարեկամիս» մահախոսականը:

Նրա մասին.

1. Մազմանեան Գ., Դուրսորդ Զեաթիպեան, «Անահիտ», Փարիզ, հունվար-ապրիլ:

2. Չարդարեան Վ., Յիշատակարան (1512-1933), հ. 3, Գահիրե, 1933:

3. Չարդարեան Վ., Յիշատակարան (1512-1933), հ. 4, Գահիրե, 1939 (կենսագրականը, մահվան վարկածը):

4. Մեզպուրեան Ա., Հայ եւ ծագումով հայ բժիշկներ, Իսթանպուլ, 1950:

5. Ստեփանյան Գ., Հակոբ Պարոնյան, Ե., 1964:

6. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 12, Երևան, 1986:

7. Լալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, Ե., 1997:

8. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

9. Փաշայան Ա., Տիտղոս-

սակիր հայեր XV-XIX դարեր, Ե., 2001:

10. Փամուլքյան Գևորգ, Հայերը իրենց կենսագրականներով (թուրքերեն), Ստամբուլ, 2003:

11. Ով ով է: Հայեր: Կենսագրական հանրագիտարան, հ. 2, Ե., 2007:

**ՔՅՈՒԹԵՐՅԱՆ
(ՔՅՈՒԼԹԵՐՅԱՆ) ԳԵՎՈՐԳ**

Ծնվել է հավանաբար 1882թ., Բրուսայի նահանգի Նիկոմիդիայի գավառակի Պարտիզակ ավանում:

1907թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան դեղագործական վարժարանը:

Փարիզում տարրաբանական (քիմիական) կրթություն է ստացել:

«Մանգումեի Էֆքյար» թերթում հոդվածներ է գրել: Նիկոմիդիայում սեփական դեղատուն է ունեցել և դեղագործ աշխատել:

Մահացել է 1915թ., Մեսքենի քսոտրավայրում, ծայրահեղ թշվառության մեջ՝ սովից ու հիվանդություններից՝ մոտ 33 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկության տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապա-

հուրյան ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001

**ՔՅՈՒԹԵՆԱՆ ՄԻՄՈՆ
ՍԵՐՈՐԻ**

Ծնվել է 1885 թ., Հալեպի նահանգի Մարաշի գավառի կենտրոն Մարաշ քաղաքում վարպետ դերձակ Սերոբ Զյուլփեյյանի ընտանիքում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, այնուհետև սովորել ամերիկացի միսիոներների Այնթապի Կենտրոնական Թուրքիայի քոլեջում:

1906թ. ավարտել է ամերիկացի միսիոներների Տարսուսի Սեյնթ Պոլ քոլեջը:

1910թ. ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը և բժշկի վկայական ստացել:

1910-15թթ. Մարաշում բժիշկ է աշխատել:

1915թ. ամռանը, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, ի թիվս բազմաթիվ հայ բժիշկների, զորակոչվել է օսմանյան բանակ և զինվորական բժիշկ ծառայել՝ սպայի աստիճանով:

1915 թ. հազարավոր հայ ընտանիքների թվում, նրա ընտանիքը քսոտրվել է Դեյր Էլ Զորի անապատը:

Բժիշկը, լինելով թուրքական բանակի սպա, մեծ դժվարությամբ կարողացել է ընտանիքը փրկել ողջակիզվելուց:

Ծառայության բերումով ուղարկվել է Բաղդադի ռազմաճակատ և իր բախտակից հայ բժիշկների նման գնդակահարվել թուրքերի կողմից:

1918թ. ընտանիքը վերադարձել է հայրենի Ղահրամանմարաշ և իրենց տունը օտել ավերված:

Դրանից հետո ընտանիքը որոշել է տեղափոխվել ԱՄՆ:

Ամուսնացած է եղել ազգությամբ հույն Մարիի հետ:

Որդին՝ Նեսիբ Սիմոնի Զյուլփեյյանը (1886, Մարաշ - ?, ԱՄՆ) եղել է բժիշկ և բնակվել ԱՄՆ-ում:

Մյուս որդին՝ Վահե Սիմոնի Զյուլփեյյանը (1912, Մարաշ - 1988, Վաշինգտոն), եղել է ամերիկյան ռազմական կոնստրուկտոր և ղեկավարել է ինքնաթիռների ու բալիստիկ հրթիռների ստեղծումը:

Նրա մասին.

1. Գալուստեան Գրիգոր Հ., Մարաշ, Նիւ Եորք, 1934:

2. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթոն, 1957:

3. Գալուստեան Գրիգոր Հ., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զեյթուն, Նիւ Եորք, 1988:



ՔՅՈՒՆՈՐԻ Ա. Հ.

Ազգությամբ հայ է: Ծնվել է Անկարայի նահանգի Յոզղաթի գավառի կենտրոն Յոզղաթ քաղաքում:

Սովորել է Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի Թալաս ավանի բարձրագույն վարժարանում, սակայն կրթությունն անավարտ է մնացել:

Ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանի ատամնաբուժական բաժինը:

1902թ.-ից ի վեր Ադանայում ատամնաբույժ է աշխատել:

1909թ. Ադանայի կոտորածից հրաշքով փրկվելուց

հետո ձերբակալվել է և դատապարտվել 15 տարի բանտարկության, սակայն կարողացել է փախչել և ԱՄՆ մեկնել:

1909թ. բնակություն է հաստատել ԱՄՆ-ի Նյու Ջերսիի Նահանգի Դելաուեր քաղաքում:

1917թ.-ից աշխատել է Նյու Ջերսիի Նահանգի Կամդեն քաղաքում (Camden, Haddon ave., 1211), ուր բնակություն է հանձնել և նահանգային վկայագիր ստացել:

1924թ. դրությամբ բնակվել է ԱՄՆ-ում և ատամնաբույժ աշխատել:

Նրա մասին.

«Հայաստանի կոչնակ», Նիւ Եորք, 19-01-1924:

ՕՂՆԻԿՑԱՆ

Ծնվել է Սեբաստիա Նահանգի կենտրոն Սեբաստիա քաղաքում:

Բժշկական կրթություն է ունեցել և Սեբաստիայում բժիշկ աշխատել:

Սեբաստիայի հայ բնակչության տեղահանության նախօրեին բնակչությանը հորդորել է իսլամությունն ընդունել և կոտորածից փրկվել, ինչը, սակայն, մերժվել է:

Տեղահանության և գաղթի ժամանակ սնունդ է հասցրել, խնամք ու բժշկա-

կան օգնություն ցուցաբերել գաղթական հայրենակիցներին:

Հետագա ճակատագիրն անհայտ է:

Նրա մասին.

1. Գուժկան Սեբաստիոյ (Կարապետ Գաբիկեան), Եղեռնապատում Փոքրուն Հայոց եւ Նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն, 1924:

2. Տեղեկությունը հայտնել է Երևանաբնակ զարմիկը՝ Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի դասախոս, դոցենտ Հակոբ Օհնիկյանը, արձանագրվել է 03-05-2007-ին:

ՕՆԲԱՇՇՑԱՆ ՄԻՄՈՆ ՀԱԿՈՐ

Ծնվել է հավանաբար 1870թ., Անկարայի Նահանգի Կեսարիայի գավառի Էվերեկի գավառակի Ֆենեսե գյուղում:

1894թ. ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան դեղագործական վարժարանը:

1894-1915թթ. Մարմարա ծովի ասիական ափի Բանդրմա քաղաքում դեղագործ է աշխատել:

1915թ. աքսորվել է Բանդրմայից:

Մահացել է 1915թ., Հալեպից հյուսիս գտնվող Բաբ բնակավայրում մոտ 45 տարեկանում:

Նրա մասին.

1. Հայ բժշկութեան տուած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

ՅԵՐՀԱՏՅԱՆ ՄՈՎՍԵՍ

Ծնվել է հավանաբար 1885թ., Սեբաստիայի Նահանգի Եվդոկիայի գավառի կենտրոն Եվդոկիա քաղաքում:

1910թ. ավարտել է Բեյրութի Սեն ժոզեֆ Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Եվդոկիայում բժիշկ է աշխատել:

1914թ., Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է օսմանյան բանակ և պահեստների զինվորական բժիշկ, այնուհետև 10-րդ զորաբաժնի 32-րդ դաշտային շարժուն հիվանդանոցի զինվորական բժիշկ ծառայել:

1915թ. ապրիլի 7 (20)-ին Նույն հիվանդանոցում մահացել է ժանտախտից՝ մոտ 30 տարեկանում:

Այլ տվյալով՝ սպանվել է: **Նրա մասին.**

1. Հայ բժշկութեան տո-

ւած զոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

2. Մեզպուրեան Արթո, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

3. Այսօյաճեան Ա., Պատմութիւն Եւդոկիոյ հայոց, Գահիրէ, 1952:

4. Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմություն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի (թուրքերեն), Ստամբուլ, 2001:

5. Խաչատրյան Լ., Բաբլումյան Ա., Ցուցակ հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), գիրք 1, Սեբաստիայի Նահանգ, Երևան, 2004:

ՅԵՐՄԱՆՅԱՆ ՇԱՀԻՆ ԿԱՐԱՊԵՏԻ

Ծնվել է 1884թ., Ադանայի Նահանգի Կոզանի գավառի Սիս քաղաքում Կարապետ Էֆենդի Ֆերմանյանի ընտանիքում:

Ատամնաբուժությունը սովորել է մի Էվերեկցի ատամնաբույժի մոտ:

1912թ. ամուսնացել է և 1913թ. ունեցել որդի Բյուզանդին:

1915թ. ընդհանուր տեղահանության ժամանակ աքսորվել է Հալեպ: Հետագա-

յում որոշ ժամանակ մնացել է Գասթրոնոմ, ապա՝ Համա-յում: Ողջ է մնացել իր մասնագիտության շնորհիվ:

1918թ., Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո վերադարձել է Սիս:

Սիսի տեղահանությունից հետո գաղթել է Ադանա, այստեղից անցել է Բեյրութ, հետո՝ Բեյրութից 20 կմ հյուսիս գտնվող Ջունի ծովափնյա ավանը, ապա՝ Լիբանանի Բեքաայի հովտի Թալաբա-յա գյուղը:

Մահացել է 1937թ.՝ 53 տարեկանում: Թաղվել է Լիբանանի Բեքաայի նահանգի կենտրոն Չահլե քաղաքում:

1948թ. դրությամբ որդին՝ Բյուզանդ Ֆերմանյանը անվանի ատամնաբույժ էր:

Նրա մասին.

Քելեշեան Միսաք, Սիս-Մատեան, Պեյրութ, 1949:

ՀԻՄՆԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայերեն

1. Ալեքսանդրյան Արտաշես, Կարս. 1920-21, Երևան, 1986, 124 էջ:

2. Ալեքսանդրյան Արտաշես, Մղձավանք, Երևան, 2001, 516 էջ:

3. Ալպոյաճեան Արշակ, Պատմութիւն Եւդոկիոյ հայոց, Գահիրէ, 1952, 1751+106 էջ:

4. Ալպոյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Ա. հատոր, Գահիրէ, 1937, 1215 էջ:

5. Ալպոյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ. հատոր, Գահիրէ, 1937, 2479 էջ:

6. Աղայան Ծատուր, Հայերը Թուրքիայում, Երևան, 1969, 85 էջ:

7. Աճառյան Հրաչյա, Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1999, 24 էջ:

8. Ավագյան Կարինե, Եղեռնահուշ մասունք կամ խոստովանողք և վկայք խաչի, խմբագիր՝ Լևոն Անանյան, Երևան, «Լուսակն», 2002, 121 էջ:

9. Աւետեան Մ. Տեղակալ, Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) յուշամատենան եւ Չօր. Անդրանիկ, Փարիզ, 1954, 525 էջ:

10. Ատիլ Գ. և ուրիշներ, Ազգային գերեզմանատուն հայոց. Շիշլի, Կ. Պոլիս, 1922:

11. Բախտիկեան Սարգիս (խմբագիր), Ոսկեգետակ, տարեգիրք, Ա. տարի, Պեյրութ, 1945, 219 էջ:

12. Բախտիկեան Սարգիս (խմբագիր), Ոսկեգետակ, տարեգիրք, Գ. տարի, Պեյրութ, 1948, 448 էջ:

13. Գաբամաճեան Ս., Հայաստանի կաղանդէքը: Մեծ Եղեռնի զոհերը իրենց

պատկերներով, Կ. Պոլիս, 1919:

14. Գալաճյան Հ., Ողիսևս արքայական, Հուշեր, Երևան, 2004, 604 էջ:

15. Գալուստեան Գրիգոր Հ., Մարաշ, Նիւ Եորք, 1934:

16. Գալուստեան Գրիգոր Հ., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Չէթուն, Նիւ Եորք, 1988, 999 էջ:

17. Գալֆայեան Կարապետ աւագ քահանայ (Հովիւ Եղեմի հայոց), Գիրք ելից հայոց, Պեյրութ, 1955, 652 էջ:

18. «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, Ե. գիրք, Հալեպ, 1996, 652 էջ:

19. Գուժկան Սեբաստիոյ (Կարապետ Գաբիկեան), Եղեռնապատում Փոքուն Հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն, 1924, 604 էջ:

20. Չարդարեան Վահան, Յիշատակարան (1512-1933), հ. 3, Գահիրէ, 1933:

21. Չարդարեան Վահան, Յիշատակարան (1512-1933), հ. 4, Գահիրէ, 1939:

22. Չէթլեան Սոնա, Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մեջ, Անթիլիաս, 1968, 174 էջ:

23. Չօրապ Գրիգոր, Երկեր, հ. Ա.-2., Երեւան, 2001-2004:

24. Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1905:

25. Ընդարձակ օրացոյց

Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1931, 141 էջ:

26. Թեոդիկ, Գողգոթայ հայ հոգեւորականութեան, Նիւ Եորք, 1985, 136 էջ:

27. Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ. տպագրութիւն, Երեւան, ապրիլ 24, 1985:

28. Թեոդիկ, Ամենուն Տարեցոյցը, Կ. Պոլիս - Փարիզ, 1907:

29. Թերզեան Յակոբ Յ., Կիլիկիոյ աղէտը, Կ. Պոլիս, 1912:

30. Թորգոմեան Վահրամ, Արդի հնդկահայ բժիշկները, Վիեննա, 1896:

31. Ժամկոչեան Բենիամին, Հայնի, Պեյրութ, 1952:

32. Լալայան Ալեքսանդր, Հայաստանում Ի. Պավլո-վի ուսմունքի տարածման պատմությունից, Երևան, 1954, 32 էջ:

33. Կարոյեան Գասպար, Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկները (անոնց պատգամները), Պոսթըն, 1957, 557 էջ:

34. Կռայեան Մեսրոպ, Բալու, Անթիլիաս, 1965, 767 էջ:

35. Համբարձումեան Վահան, Գիւղաշխարհ, Փարիզ, 1927:

36. Համբարձումյան Վահան, Գյուղաշխարհ, Երևան, 2000:

37. Հայ անվանի բժիշկ-

ներ, գիրք Ա, գլխավոր խմբագիր՝ Ա. Շիրինյան, Երևան, 2002, 404 էջ:

38. Հայ բժշկութեան տուած գոհերը, ցուցակագրուած վաւերական փաստերով, Կ. Պոլիս, 1919:

39. Հայկական հարց, հանրագիտարան, Երևան, 1996, 528 էջ:

40. Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի ֆոնդեր (ՀՅԹԻՖ):

41. Հայրապետյան Վահիկ, Էջեր Հայաստանի դեղագործութեան պատմութիւնից, Երևան, 1990, 221 էջ:

42. Հայրապետյան Վահիկ, Լահատակված հայ բուժաշխատողներ, «Երկոյան Երևան», Երևան, 03/05-05-1990:

43. Հին եւ նոր Կեսարիա: Յուշամատեան, Փարիզ, 1989:

44. Հիւսէյնիկ (խմբագիր՝ Կ. Ահարոնեան), Պոսթըն, 1965, 256 էջ:

45. Հովասափյան Հովսեփ և համահեղ., Ակնարկներ հայ բժշկութեան պատմութիւնից, Երևան, 2004:

46. Հովհաննիսյան Լաուրա, Բժշկական գործը, բժշկական հիմնարկները և բժշկական կադրերը Հայաստանում՝ Հայկական մարզի կազմակերպման օրից (1828թ.) մինչև առաջին իմպերիալիստական պատե-

րագմը (1914թ.), թեկնածուական ատենախոսութիւն, Երևան, 1950, 222 էջ:

47. Ղազարեան Հ., Պատմագիրք Չմշկածագի, Պէյրուք, 1971, 650 էջ:

48. Ղազարեան Վահան, Բժշկական եւ առողջապահական տարեցոյց, Կ. Պոլիս, 1914:

49. Ղասաբյան Չոհրաբ, Լիկոմեդիայի և Արևելյան Թրակիայի հայաթափումը (1921-1922), Երևան, 1998:

50. Ճեպեճեան Աւետիս, Օսմանեան կայսերական բանակի սպայ՝ բժիշկ Աւետիս Ճեպեճեանին օրագիրը, 1914-1918, Պէյրուք, 1986:

51. Ճիզմեճեան Մանուկ, Խարբերդ եւ իր զաւակները, Ֆրեզնօ, 1955:

52. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառօտ անուանացանկ (1688-1940), Իսթանպուլ, 1940:

53. Մեզպուրեան Արթօ, Հայ եւ ծագումով հայ բժիշկներ (1688-1940), Բ. հրատարակութիւն, Իսթանպուլ, 1950:

54. Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկների և ջարդարար թուրք երդմնադրույթ արվեստակիցների մասին (ֆրանսերեն), Կ. Պոլիս, 1919: Հրատարակել է Կ. Պոլսի հայ բժշկական միութիւնը, որի նախագահն էր բժիշկ և բանասեր Վահրամ

Թորգոմյանը:

55. Մինասյան Հարուք, 16-19-րդ դարի լեհահայ բժիշկներ, Երևան, 2001, 62 էջ:

56. Մինասյան Հարուք, 100 հայ հոգեբույժներ: Կենսագրական բառարան, գիրք Ա, Երևան, 2002, 224 էջ:

57. Մինասյան Հարուք, 100 հայ հոգեբույժներ: Կենսագրական բառարան, գիրք Բ, Երևան, 2004, 256 էջ:

58. Մինասյան Հարուք, 100 հայ հոգեբույժներ: Կենսագրական բառարան, գիրք Գ, Երևան, 2005, 256 էջ:

59. Մինասյան Հարուք, 100 հայ հոգեբույժներ: Կենսագրական բառարան, գիրք Դ, Երևան, 2009, 240 էջ:

60. Մինասյան Հարուք, 100 հայ հոգեբույժներ: Կենսագրական բառարան, գիրք Ե, Երևան, 2010, 304 էջ:

61. Մինասյան Հարուք, 111... բռնադատված հայ բժիշկներ, 1920-1954թթ.: Կենսագրական բառարան, գիրք Ա, Երևան, 2006, 248 էջ:

62. Մինասեան Պետրոս (պատասխանատու խմբագիր), Պատմագիրք Կիւրիինի, Պէյրուք, 1974:

63. Մկունդ Տիգրան, Ամի-

տայի Արծազանգներ, Ուիհօքըն, Լիւ Ճերգի, 1950, 584 էջ:

64. Մկունդ Տիգրան, Ամիտայի Արծազանգներով վերակոչումն եւ Բ. հատոր, Ուիհօքըն, Լիւ Ճերգի, 1953, 416 էջ:

65. Յովակիմեան (Արշակունի) Յովակիմ, Պատմութիւն Հայկական Պոնտոսի, Պէյրուք, 1967:

66. Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Այբուբեն, Ա. հատոր, Դիւցազնամարտ, 1890-1914, Լոս Անճելլոս, 1992:

67. Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Այբուբեն, Բ. հատոր, Գոյամարտ, 1914-1925, Լոս Անճելլոս, 2001:

68. Յուշամատեան 160-ամեայ սուրբ Փրկիչ հայոց հիւանդանոցի, աշխատասիրեց Վ. Զեօսեան, Իսթանպուլ, 1975:

69. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), պատրաստեց Գերսամ Ահարոնեան, Պէյրուք, 1965:

70. Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան, 1890-1950, Բոստոն, 1950, 636 էջ:

71. Շամտանճեան Միքայել, Հայ մտքին հարկը Եղեռնին, Անթիլիաս, 1965:

72. Շիկահեր Վարդ, Կիսարեան պատմութիւն թրքահայ բժշկութեան, 1923-1975, Իսթանպուլ, 1975, 121

էջ:

73. Ով ով է: Հայեր: Կենսագրական հանրագիտարան, Երևան, հ. 1, 2005, հ. 2, 2007:

74. Չալոմյան Նուբար, Հիպոկրատի ապօրինի գավակները, «Գարուն», Երևան, 1989, թ. 2:

75. Չարրզ Դազար, Յուշամատեան Բարձր Հայքի. Կարինապատում, Պէյրուք, 1957, 792 էջ:

76. Պալաքեան Գրիգորիս ծ վրդ., Հայ գողգոթան, Վիեննա, 1922, 429 էջ:

77. Պալաքյան Գրիգորիս ծ. վրդ., Հայ գողգոթան, Երևան, 1991, 392 էջ:

78. Պայրամեան Ալիշան Ա., Կիլիգա. Հայկական Քիլիս, Երեւան, 2001, 268 էջ:

79. Պապոյան Շողակաթ, Հարությունյան Ա., Ավագյան Ա., Հայաստանում առողջապահության զարգացման պատմությունից, Երևան, 1981, 28 էջ:

80. Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան, 1887-1963, Բ. հատոր (խմբագիր՝ Արսէն Կիտուր), Պէյրուք, 1962, 636 էջ:

81. Պատրիկ Առաքել, Պատմագիրք-յուշամատեան Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան, հ. Ա., Պէյրուք, 1974:

82. Պոտուրեան Սկրտիչ, Հայ հանրագիտակ, Պուքրէշ, 1938:

83. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1-7, Թեհրան, 1982:

84. Սահակեան Արամ, Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, Պէյրուք, 1955, 1500 էջ:

85. Սահակյան Լիլիկ, Ոճրագործները չխնայեցին նույնիսկ մարդու կյանքը փրկողներին, «Առողջապահություն», Երևան, 1965, թ. 4:

86. Սամուէլեան Վահէ, Հայ անցեալը՝ լուսանկարներով, Երեւան, 2007:

87. Սարաքեան Խաչիկ, Հայոց դերը Թուրքիոյ մէջ, Երեւան, 2000, 48 էջ:

88. Սարաքեան Գեորգ, Պատմութիւն Անթեպի Հայոց, հ. Բ., Լոս Անճելըս, 1953:

89. Սաքայան Դորա, Չմյուռնիա 1922, Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը, Երևան, 2005, 218 էջ:

90. [Սերոբեան] Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի ջարդը եւ պատասխանատուները, Պոսթոն, 1910:

91. Սիմոնյան Հրաչիկ, Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909թ. ապրիլ), Երևան, 2009, 436 էջ:

92. Սիրվարդ (Եղիա Գրիգորյան), Մեծն Մուրատ (Համբարձում Պոյաճյան), Կյանքն ու գործունեությունը, Երևան, 1991:

93. Սվազյան Վերժինե,

Հայոց ցեղասպանություն: Ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2000:

94. Ստեփանյան Գառնիկ, Կենսագրական բառարան, հ. Ա-Գ, Երևան, 1973-1990:

95. Ստեփանյան Հասմիկ, Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Երևան, 2011, 744 էջ

96. Սուքիասյան Սիլվա, Հիպոկրատի «երդվալ» գավակները, «Ավանգարդ», Երևան, 04-03-1990:

97. Սուքիասյան Սիլվա, Հիպոկրատի «երդվալ» գավակները, «Նարեկ», Երևան, 1995, թ. 4:

98. Վարդանյան Ստեյլա, Հայաստանի բժշկության պատմություն, Երևան, 2000, 440 էջ:

99. Տատրյան Վահագն, Թուրք բժիշկների դերը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ օսմանյան հայերի ցեղասպանության մեջ (անգլ.), «Հոլոքոստ Էնդ ջենոսայդ սթադիզ», ԱՄՆ, 1986:

100. Տէր Յովհաննէսեան Գրիգոր, Պատմագիրք Սիվրի-Հիսարի հայոց, Պէյրուք, 1965, 688 էջ:

101. Տուրցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), հ. 1, Սեբաստիայի նահանգ, կազմողներ՝ Լուսինե Խաչատրյան,

Արփինե Բաբլումյան, Երևան, 2004, հ. 2, Խարբերդի նահանգ, կազմողներ՝ Լուսինե Խաչատրյան, Արփինե Բաբլումյան, Երևան, 2004, հ. 3, Անկարայի նահանգ, կազմողներ՝ Հասմիկ Շահբազյան, Անահիտ Միրզոյան, Երևան, 2006:

102. Փարսադանյան Ռաֆայել, Հայ բժշկության պատմությունից, Երևան, 1958:

103. Փարսադանյան Ռաֆայել, Հայաստանի առողջապահության պատմություն (1828-1965թթ.), Երևան, 1973, 482 էջ:

104. Փափագեան Վահան, Իմ յուշերը, Բ. հատոր, Պէյրուք, 1952, 610 էջ:

105. Փոլատեան Ս., Պատմութիւն հայոց Արաբկիրի, Նիւ Եորք, 1969:

106. Զէլէշեան Միսաք, Սիւ-Մատեան, Պէյրուք, 1949:

107. Պարսամեան Սկրտիչ, Ակն եւ ակնցիք, Փարիզ, 1952, 814+231 էջ:

Ռուսերեն

109. Аааа́йí ííðàéð è äð., Í÷áðèè ìì èñòíðèè ñóáááííé ìáèèöèíú â Àðíáíèè, Áðáááí, 1970, ñ. 185.

110. Áðóòòíýí Áðèäíð, Äèíáèíèíàèý è àèóðáðñòáí â Àðíáíèè â äðááíèè è ñðááíèè äáèà, Áðáááí, 1974.

111. *Àðóðíýí Ēââíí, íâéíðíðúâ òðââííðúâ èç èñòíðèè àèèèáíú ìèðàíèý è âíâíñííáæáí-èý á äðâáíáé è ñðââíáâáéíáíé* *Àðíáíèè, Áðââáí, 1971, ñ. 88.*

112. *Èàèàýí Áèâéñàíáð, ðóññéí-àðíýíñèèâ ìâèèòèíèèâ ñâýçè (XIX ââé è ìà÷àèí XX ââéà),* *Àèññ. Áíè. Ēí. 1-2, Áðââáí, 1965.*

113. *Ìèíàñýí Ðàèñà, Íðàçáèèèè ìâèèàððèè á* *Àðíáíèè, Áðââáí, 1990, ñ. 195.*

114. *Ìèðàèýí Ìèðà, Ēç èñòíðèèè áâðíàðíèíèèè è áâíáðíèíèèè á* *Àðíáíèè, Áðââáí, 1988, ñ. 222.*

115. *Íâáíèñýí Ēââíí, Ēñòíðèè ìâèèòèíèè á* *Àðíáíèè ñ ãðâáíáéèèè ãðâáí áí ìàèèè áíáé, ò. 1-5, Áðââáí, 1946-1947.*

116. *Ìàðñàâáíýí Ðàðââè, Ēñòíðèè çðââáííððáíáíèý* *Àðíáíèè (1828-1965ââ.),* *Àèññ. Áíèè. Áðââáí, 1973, ñ. 482.*

Թուրքերեն

117. *Ատաշ Ադնան (Adnan Atas, թուրք հեղինակ), 20-րդ դարուն ևահատակ տղած բժիշկները (թուրքերեն), 1997, ըստ Սարգիս Ե. Գարայեանի «Նոր գրքերու աշխարհէն» յօդուածի, «Նոր Այնթապ», Պէյրուք, 2009, թ. 104:*

118. *Yarman Arsen, Osmanli Saglik Hizmetlerinde Ermeniler ve Surp Prgic Ermeni*

Hastanesi Tarihi, Istanbul, 2001, s. 865 (Յարման Արսեն, Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և պատմությունը սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի, Ստամբուլ, 2001, 865 էջ).

119. *Carik Y. G., Turk Devleti Hizmetinde Ermeniler, 1453-1953 (թուրքերեն), Istanbul, 1953, s. 302 (Չարրք Ե. Գ., «Հայեր թուրքական պետության ծառայության մեջ», Ստամբուլ, 1953, 302 էջ).*

120. *Փամուքյան Գևորգ, Հայերը իրենց կենսագրականներով (թուրքերեն), Ստամբուլ, 2003 (գտնել գրքի թուրքերեն անունը և դնել սկզբում):*

121. *Tuglaci Pars, Tarih Boyunca Bati Ermenileri, cilt 1-3, Istanbul, 2004 (Թուղլաջի Բարս [Թուղլաջյան Բարսեղ], «Արևմտահայերը պատմության ընթացքում», հ. 1-3, Ստամբուլ, 2004):*

Ֆրանսերեն

122. *Vardanian Stella, Histoire de la Medicine en Armenie, Paris, 1999.*

123. *Ohanessian Levon, Histoire de la Medicine en Armenie des Origins au Debut du XIX Siecle, Erevan, 1962.*

Լրացուցիչ

Bayard Dodge, «The Amer-

ican University of Beirut».

Avedis Sanjian, «Armenian Communities in Syria Under Ottoman Dominione».

A.U.B. Directory of Alumni 1870-1952.

25-*Ամեակ Հայ ուսանողական միութեան Պէյրուքի ամերիկեան համալսարանի: Vahakn Dadrian, «The Role of Turkish Physician in the World War I Genocide of Ottoman Armenians» (յօդուած):*

Stephan Penrose, «That they May Have Life: The Story of the American University of Beirut 1866-1941».

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

**Հավելված 1.
Հայկ Յագմաջյան**

Հայկ Հովհաննեսի Յագմաջյանը ծնվել է 1898թ. հունվարի 30-ին, Կոստանդնուպոլսում: Տարրական կրթությունն ստացել է Վառնայում, միջնակարգը՝ Կ. Պոլսում: Բժշկական բարձրագույն կրթությունն ստացել է Կ. Պոլսի (1918-22) և Փարիզի (1923-25) համալսարաններում: Մասնագիտացել է հոգեբուժության մեջ: 1927թ. Փարիզի համալսարանում արժանացել է բժշկության դոկտորի կոչման: Փարիզում զբաղվել է բժշկական, գիտական, հասարակական և ազգային գործունեությամբ, եղել Փարիզի Հայ բժշկական միության եռանդուն անդամներից: 1936թ. ուղեկցելով Կոմիտասի աճյունը, հայրենադարձվել է Խորհրդային Հայաստան: 1936-75թթ. Երևանի հանրապետական հոգեբուժական կլինիկական դիսպանսերում հոգեբույժ է աշխատել: Համատեղությամբ աշխատել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի հոգեբուժության ամբիոնում, որպես ասիստենտ, ինչպես նաև Երևանի պետական համալսարանում, որպես իրավաբանական ֆակուլ-

տետի դատական հոգեբուժության դասախոս: 1944-46թթ. եղել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի բժշկության և կենսաբանության պատմության սեկտորի գիտաշխատող և քարտուղարը: Եղել է խորթափանց գիտնական, փորձառու կլինիցիստ, հմուտ մանկավարժ, ազնվագույն անձնավորություն: 1954թ. պաշտպանել է գիտական թեզ՝ «Հոգեբուժական հայացքները Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև 11-րդ դ.» թեմայով և արժանացել բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին: Կլինիկական հոգեբուժության և հոգեբուժության պատմության վերաբերյալ ավելի քան 40 տպագրված և անտիպ հոդվածների հեղինակ է: Լինելով բազմակողմանի գարգացած անձնավորություն, եղել է նաև արվեստի մեծ սիրահար: Պաշտել է Կոմիտասին, Մեծարենցին, անչափ սիրել ֆրանսիական մշակույթը: Ունի ֆրանսերեն և հայերեն գրած անտիպ բանաստեղծությունների տետրակ և «Օրագիր»: Հայկական ՍՍՀ վաստակավոր բժշկի կոչման է արժանացել (1966), մեդալներով ու պատվոգրերով պարգևատրվել: Մահացել է 1975թ. փետրվարի 12-ին, Երևանում:

Ստորև ներկայացնում ենք Հայկ Յագմաջյանի հուշերն ու խոհերը 1915թ. Կ. Պոլսում տեղի ունեցած իրադարձությունների մասին:

ՀՈՒՐԵՐ 1915 ԹՎԱԿԱ-ԼԻՑ

1915թ. մարտի 29-ին Պոլսում մեր ապրած Կաղզյուղ թաղամասում, իշխանության ներկայացուցիչները մեր տուն խուզարկության եկան: Անակնկալ դեպքից վախեցած, ես դարձից գնացի ժամանակից շուտ:

Երեկոյան երբ տուն վերադարձա, հորս տարել էին, իրենց հետ վերցնելով նամակներից և դարձրակալ ձեռագիր տետրակներից կազմած մի կապոց: Մի սևազրուկունից, որը հավանաբար մոռացել էին մեզ մոտ, իմացա, որ «կարգադրության համաձայն կատարել էին խուզարկություն և հավաքված նյութերը ուղարկում են...»:

Կասկածանքների մեջ, կատարվածի մասին պատմելու և որևէ ծանոթից լուսաբանություն ստանալու հույսով, դուրս եկա տնից:

Տուն վերադարձիս մեր դռանը երկու ոստիկան ինձ էին սպասում:

Ոստիկանական այն փոքր սենյակում ուր առաջարկել էին մնալ, ամենատարբեր

մտածմունքներ չարչարում էին ինձ: Վերջապես, որոշեցի կարդալու որևէ բան խնդրել կողքի սենյակում գտնվող ոստիկանապետից: Նրա տված գրքույկը, թուրքական կառավարության լույս ընծայած չեմ հիշում ինչ «գուլնի» փաստաթղթերի մի հավաքածու էր, լուսանկար պատկերներով, որը խոսում էր հայերի ապստամբական, ազատագրական շարժումների, այս ուղղությամբ նախապատրաստությունների մասին, ցույց էր տալիս մի քանի նկուղային հարկերում հայտնաբերված զենքի պահեստներ...: Սկսել էի արդեն որոշ կապ տեսնել իմ ոստիկանատանը գտնվելու և կարդացածս պաշտոնական ամբաստանագրի հետապնդած նպատակների միջև:

Հայրս համեստ, կիսագրագետ, հայրենասեր, անկուսակցական, արհեստավոր մարդ էր: Ես սովորում էի միջնակարգում: Կուսակցական ազգականներ ունեինք: Մորաքույրս՝ Աղավնի Լուսինյանը (Մայր Արաքսի) մի ժամանակ պատկանել էր հնչակյան կուսակցությանը և այդ ճանապարհում 1901թ. Թիֆլիսում, եղբայրասպան դաշույնի զոհ էր տվել իր 21 տարեկան տղային՝ Լևոնին: Իր աղջիկը՝ Հրանուշը, ամուսնացել էր Բարսեղ Շահբազի հետ, որն

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին Փարիզից ընտանիքով վերադարձել էր Պոլիս:

1908 թվականից, սուլթանի միապետական դաժան ռեժիմի տապալումից հետո, արևմտահայության համար բացվել էր ազգային-մշակութային զարթոնքին նպաստող մի շրջան: Մամուլով և կենցաղում ընտրական և քաղաքական պայքար էին մղում մեր կուսակցությունները... Իթախադի հետ համերաշխ գործակցության մեջ էր գտնվում Դաշնակցությունը: Թուրքական «Մեջիտում» հայ երեսփոխաններ ունեինք և կառավարության մեջ՝ նախարարներ...

Մեր բանաստեղծները բոցավառ ու արյունոտ գրչով նկարագրում էին ջարդերը, երգում էին հեթանոս սիրո և մարմնի գեղեցկությունները, աշխուժանում էր հայ գեղջուկ կյանքը, տարածվում էին մեսրոպյան լեզվի մեծասքանչ հնչյունները, լսվում էր արշալուսի հետ բացվող գութանի կենսահույզ երգը...

Ուշ գիշերին ոստիկանապետի տված գրքույկը թերթելիս իմ մտերիմների կյանքի, ինչպես որոշ իրադարձությունների վերաբերյալ մտովին սույն վերաքաղն անելիս, նախագգում էի նաև ինչ-որ անսովոր,

հեղձուցիչ մի բան...

Մարտի 30-ի առավոտյան ինձ փոխադրեցին Պոլսի եվրոպական ափ, «Քաղաքական բաժին», որտեղ մի խցում երկար սպասելուց հետո, գիշերով ինձ առաջնորդեցին բաժնի տնօրեն Ռեշադ բեյի մոտ: Նա առանձնապես հետաքրքրվում էր, թե ընկերներ ունե՞մ, նամակագրություն ունե՞մ, ովքե՞ր են, հաճա՞խ են գրում, ինչի՞ մասին են գրում:

Այդ ժամանակներին ես նամակագրություն ունեի իմ դպրոցական ընկեր Գրիգոր Համբարձումյանի հետ, որը դպրոցը թողնելով աշխատելու էր գնացել Իզմիր (Նիկոմիդիա): Ինձ պարզ եղավ, որ հարցը այս դասընկերոջս է վերաբերում: Պատասխանեցի, որ հաճախ չի գրում, դպրոցական ընկերների, քննությունների մասին է հարցնում, իր աշխատանքի մասին է գրում..., իսկ այն հարցումին, թե վաղո՞ւց է նրանից նամակ չեմ ստանում, պատասխանեցի. «Վաղուց է, երկու ամիս կլինի»:

Դրանից հետո քարտուղարը - ում սեղանի առաջ էի նստել -, ինձ ցույց տվեց Գրիգոր Համբարձումյանի նամակը, որի մի շարք տողերը կարմիրով ընդգծված էին: Դա պետք է գրված լիներ 1915թ. հունվարին: Այս նամակում գրաքննությանը

կասկածելի էր թվացել այն, թե ինչո՞ւ Համբարձումյանը ինձ «գաղափարակից» է անվանում, ինչո՞ւմն է մեր գաղափարակցությունը, ի՞նչ է նշանակում այն տարազը, որը լուծելու համար պետք է դիմել մեր ուսուցիչ Իդարեճյանին:

Այս վերջինը հանրահաշվի մի խնդիր էր պարզապես, գաղտնագրության հետ որևէ կապ չուներ: Այսպես էլ բացատրեցի: Առաջին հարցումի միտքը որքան թափանցիկ, այնքան դժվար էր պատասխանը, մանավանդ այն բանից հետո, երբ Համբարձումյանի ցանկությունների մասին նախօրոք ինձ տված հարցումին պատասխանել էի, որ նա ճարտարապետ է ուզում դառնալ, իսկ ես բժշկությանը հետևելու դիտավորություն ունեմ: Հետևաբար, մեր գաղափարակցությունը փորձեցի բացատրել մեր աշխատանքի ասպարեզում՝ օգտակար քաղաքացիներ դառնալու հարցում մեր համանման ձգտումներով...

Ռեշադ բեյը այս բացատրության նշանակությունը յուրովի ըմբռնելով, սկսեց կշտամբել: Նա ի մասնավորի ասում էր, որ դպրոցում մեզ հայկական ոգով են դաստիարակում, չեն սովորեցնում ինչ հարկավոր է..., և ընդհանրացնելով իր խոսքը, նա

հայ երիտասարդությանը մեղադրում էր կուսակցական լինելու, ազատության ձգտելու, հայրենիքին դավաճանելու մեջ:

Անդրադառնալով բուն խնդրին, վերջապես նա եզրակացրեց, որ Համբարձումյանը ինձ վատ խորհուրդներ է տալիս, որ նա կպատժվի... (Գրիգոր Համբարձումյանը արքայից վերադարձավ Պոլիս: Լսեցի, որ հետագայում Հունաստան է գնացել):

Քաղաքական բաժնից առաջնորդվեցի կալանավորների ընդունարան և կիսամթում նստեցի գլուխս թևերիս վրա՝ մի աթոռի հետևարանին:

Մարտի 31-ի առավոտյան հարևան սենյակի կիսաբաց դռնից տեսա հորս տազնապալից դեմքը: Այս նույն օրը մեր դասընկեր Էդուարդ Խուդավերդյանին (ուր անունը Համբարձումյանը հիշել էր իր նամակում) հարցաքննության կանչելու կապակցությամբ, երկրորդ անգամ եղա Քաղաքական բաժնում:

Ապրիլի 1-ին, կիրակի վաղ առավոտյան, երկու դպրոցականներս ազատ արձակվեցինք: Հորս նախորդ օրն էին բաց թողել: Նրա հարցաքննությունը ևս նույն ոգով է տարվել: Նա անմիջապես գնացել էր իր

աղջկա և փեսայի հետ ապրող մորաքրոջս՝ Աղավնի Լուսինյանի մոտ, պատահածի մասին հայտնել, նրանց հաղորդակից դարձրել իր կասկածանքներին:

Մեզ հետ տեղի ունեցած դեպքից 13 օր հետո եղավ Պոլսում հայ մտավորականների և քաղաքական գործիչների աքսորը, որը հայերին և ամբողջ բնակչությանը հանկարծակի բերեց: Թե ի՞նչ էր կատարվում հայկական նահանգներում և Փոքր Ասիայի մյուս հայաբնակ շրջաններում շատերին հայտնի չէր:

Պոլսում հունիս ամսին քսան հնչակյանների կախաղան էին բարձրացրել:

Սուլյն հուլի 29-ին գրի առնելիս հանդես եմ գալիս միայն վկայի դերում: Արևմտահայության բնաջնջման հետ կապված այլ խնդիրներ շոշափելու նպատակ չեմ ունեցել, ոչ էլ քննելու այն հարցը, թե ինչո՞ւ Պոլսի և Իզմիրի հայությունը զանգվածային ջարդերից գերծ մնաց այն ժամանակ:

Ինչ վերաբերում է Գրիգոր Համբարձումյանի նամակի առիթով գրաքննության և քաղաքական բաժնի խժբժանքներին ու մեղադրանքներին, դրանք լրիվ կերպով չհիմնավորված դուրս եկան: Դարձրականներ երբևէ ընդգրկված չեն եղել կուսակցության մեջ,

իսկ երիտասարդության միայն փոքր տոկոսն է կուսակցությունների պատկանելի: Թուրք ղեկավարների կատաղության հիմնական պատճառը հայկական զարթոնքի ոգին էր, մեր Հայրենիքի ազատագրության ուղղությամբ թափված ջանքերը:

Պետք է ընդունել, որ հայ ազգաբնակչության մեծամասնությունը գտնվում էր քաղաքականապես ընդհանուր առմամբ անգրագետ, հակընդդեմ հոսանքներում տարուբեր, որևէ լուրջ վտանգ դիմագրավելու անպատրաստ վիճակում:

Ստորև թույլ եմ տալիս ինձ մի քանի խորհրդածություն և հարցեր, որոնք թեև բխում են գլխավորապես վերոհիշյալ դեպքի տվյալներից, բայց սերտորեն առնչվում և մաս են կազմում մեծ ողբերգությանը:

Արդ ինչի՞ մասին կարող էր խոսել «Ապրիլի նախօրյակին» տեղի ունեցած փոքր պատահարը, դա ի՞նչ նշանակություն կարող էր ունենալ իր ժամանակին, և այսօր, 55 տարի անց, հետադարձորեն դիտելով դա, ի՞նչ կարելի է ասել:

Այսօր հարկ եմ համարում նշել.

ա) Թուրքերը օգտվելով Առաջին աշխարհամարտի ստեղծած հարմար առիթից,

ինչպես ապացուցված է արդեն, որոշել էին կիրառել հայերին բնաջնջելու իրենց ծրագիրը:

բ) Հայերի դավաճանության, խռովարարության և այլ դիտավորությունների մասին թուրքերի հրատարակած գրքուկը իրենց անխոստովանելի նպատակների և ստոր գործերի արդարացման համար նախօրոք սարքած մի «փաստաթուղթ» էր:

գ) Պոլսահայության և հայկական նահանգների, հայաբնակ շրջանների և քաղաքների միջև հաստատված գրաքննությունը, որը թերևս քիչ հայերի էր ծանոթ, նպատակ է ունեցել լրտեսելու հայերի դիտավորությունները, հսկելու հայերի հավանական գործողությունները, առնվազն 1915թ. հունվար ամսից, եթե ոչ շատ ավելի առաջ:

դ) Մարտի 29-ին, մեր տանը կատարված խուզարկությունը, քաղաքական բաժնի տնօրենի արտահայտություններն ու մեղադրանքները բավարար նախազգուշացումներ չէին արդյոք, և թե հայ գործիչները դրանցից չէին կարող օգտվել... Թերևս արդեն շատ ուշ էր որևէ միջոցառումի դիմելու համար... Նրանց մտում էր ենթարկվել ճակատագրին, նույնիսկ անտեղյակ ձևանալ վերահաս

վտանգին, հեռու մնալ խուճապից...

Կարծում եմ՝ շատերի համար մինչև օրս չլուսաբանված նման հարցումներին և ենթադրություններին պետք է պատասխանեն հայ քաղաքական կուսակցությունների գործունեությանը քաջատեղյակ մասնագետները, կամ, ավելի լավ, հենց իրենք՝ կուսակցությունները: Յուրաքանչյուր հայի պահանջն է այս:

Մենք հավիտյան կհիշենք մեր զոհերին և այն հայրենի հողը, որը ներկվեց հարյուր հազարների արյունով, մի հող, որ նրանց անթաղ աճյուններն է կրում:

Մեր նահատակների անմահ հիշատակով իմաստնացած, գոտեպնդված մեր այսօրվա նորանոր հաղթանակներով, վճռականորեն կանգնած կմնանք Եղեռնից վերապրող ու աշխարհով մեկ սփռված հայ գաղթականությանը վերածնված Սովետական Հայաստան վերադարձնելու, մեր ազգահավաքն ու ազգապահպանումը հետևողականորեն իրականացնելու նվիրական գործի դիրքերում՝ ի հարգանս մեր անթիվ նահատակների և ի փառս մեր մեծ Հայրենիքի:

Հայկ Յազմաջյան
Երևան, 1970թ.
Տպագրության պատրաստ

Հավելված 2.

Բուլղարահայ բժիշկ, մանկավարժ, գրող, թարգմանիչ, հասարակական գործիչ Վահան Գուլումճյանի կարդացած զեկուցումը Բուլղարիայի Սլիվեն քաղաքի բժշկական միության նիստում, 1920թ. ապրիլի 3-ին:

ԹՈՒՐԶ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՈՃ-ՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՑ ԵՂԵՈՆԻ ԺԱՄԱՆԱԿ

Հարգելի՛ գործընկերներ, 1914-1918 թվականների համաեվրոպական պատերազմի ժամանակ ականատես էինք մի մարդկային ցեղի չտեսնված կոտորածի: Մեզ՝ վերապրողներս, դժվար է ցույց տալ նման դաժան մեկ այլ ժամանակաշրջան: Դարերի ընթացքում սերունդների ստեղծածը, կերտածը քանդվում և ավերակների էր վերածվում:

Այսուհանդերձ, եթե մի հայացք գցենք տվյալ ժամանակաշրջանի Թուրքիայի վրա, կտեսնենք, որ այնտեղ արտոնյալ և թուլյատրեւի ընդհարումներից զատ, եթե այդպես կարելի է ասել պատերազմների մասին, մի աննկարագրելի սպանդանոց էր. խոշտանգվում ու ոչնչացվում էր մի խաղաղ բնակչություն՝ հայ բնակչությունը, վերացվում էր մի ժո-

ղովուրդ, ո՛չ թե պետության պաշտպանության համար, այլ մի հետամնաց ցեղի մեջ արմատացած, կարծրացած ատելության, մի բարբարոսական բնագոյի պատճառով:

Որտեղի՞ց է սկիզբ առել թուրքերի այդ ատելությունը հայերի նկատմամբ: Թուրքերը Հայաստանը նվաճեցին 1535թ.: Հաղթողները չար արհամարհանք ունեին նվաճված քրիստոնյաների նկատմամբ: Սկիզբ էր առել հայերի համատարած բռնազաղթը՝ «ցավատանջ մահից փրկվելու համար»: Այդ բռնազաղթն սկսվեց Հայաստանը նվաճելուց անմիջապես հետո, անընդհատ ընդլայնվելով մեծածավալ ուժգնությամբ: Հայերն ապաստան էին գտնում Եգիպտոսում, Հունգարիայում, Իտալիայում և մի շարք այլ երկրներում: Այնտեղ նրանք կարողացան պահպանել իրենց կյանքը, ազգությունը և կրոնը: Սակայն, Հայաստանում՝ ժողովրդի հայրենիքում, 30 միլիոն ազգաբնակչությունից բազում դարերի ընթացքում բռնազաղթից և նվազումից հետո մի հոծ զանգված մնաց տեղում, քանզի հնարավոր չէր ամբողջ ազգը բռնազաղթի ենթարկել և վտարանդի դարձնել: Մեծամասնությունը հավատարիմ մնաց

մայրենի հողին, մինչև այժմ հեծելով ստրկական ծանր լծի տակ, զոհաբերվելով, ապրելով շարունակվող կործանումի պայմաններում: Անօրեն Թուրքիայում հայն ապրում էր որպես իրավազուրկ ստրուկ: Նա անհավատ էր (գյավուր), գումարած նաև այն, որ ապրում էր Փոքր Ասիայի հեռու-հեռավոր խորքում:

Հայ տարագիր զանգվածը մի անգամ չէ, որ սարսափեցրել է թուրքերին, գոնե նրանց ավելի քաղաքականացվածներին: Սուլթան Մեհմեդ II-ը, որպեսզի կասեցնի տարագրությունը և պահպանի աշխատավոր ձեռքերը, միաժամանակ բավարարած լինի հայերի ցանկությունները, նրանց տվեց որոշ կրոնական արտոնություններ՝ Հովակիմ Ա.ը նշանակվեց Կոստանդնուպոլսի պատրիարք, իսկ ավելի մեծ քաղաքներում, ինչպիսիք էին Ադրիանապոլիսը, Չմյունիան, Վանը, Մուշը և այլք, հիմնվեցին հայկական թեմեր: Հոգևոր իշխանությունը միջնորդ էր դառնում պետության և ժողովրդի միջև՝ ստանձնելով վերջինիս պաշտպանողի պարտականությունը: Սա փոքր-ինչ մեղմեց, բարելավեց ժողովրդի վիճակը...: Թեև ավելի ուշ թուրքական կայսրության մեջ քաղաքական ասպարե-

զում կարևոր դիրք գրավող հայերի ենք հանդիպում, այնուամենայնիվ, հայերը մնում էին նույն իրավագուրկ կացության մեջ: Գավառներից շարունակ և անընդհատ գանգատներ էին գալիս պատրիարքարան՝ հայ բնակչության նկատմամբ թուրքերի և քրդերի վայրագությունների, կողոպուտի, սպանությունների և այլնի մասին: Պատրիարքարանը եռանդուն կերպով կատարում էր իր գործը, սակայն ապարդյուն: Հայ ժողովրդի գլխին դժբախտությունները կուտակվում էին մեկը մյուսի հետևից: 1878թ. Սան-Ստեֆանոյի և ավելի ուշ՝ Բեռլինի վեհաժողովներում հայ պատվիրակները ներկայացրին ժողովրդի ծանր վիճակը և հայցեցին Եվրոպայի պաշտպանությունը: Դրա արդյունքը Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածն էր, որը Հայաստանի համար նախատեսում էր մի շարք բարեփոխումներ ու բարելավումներ: Այդ հոդվածը մինչև օրս մնաց որպես մեռած տառ:

Թուրքական կառավարությունը կարծում էր, որ ազատության բոլոր զգացումները հանգել են հայության մեջ: Հետևաբար, հայերի անդրադառնալն այդ հարցին զայրացրեց նրան: Բարելավումների փոխարեն նա նորից նախաձեռնեց բռնու-

թյան քաղաքականությունը: Մյուս կողմից՝ Բուլղարիայի ազատագրումն արթնացրեց Հայաստանի ոգին: Մտերմիկ կապերը Հայաստանի և Բուլղարիայի միջև շատ վաղուց էին հաստատվել: Փոքր Ասիայում բուլղար քսորյալներն էին այդ երկու ժողովուրդներին կապող օղակը: Փոքր Ասիայի հայերն իրենց կարողության սահմաններում օգնում էին բուլղար դժբախտ քսորյալներին, որոնք հետագայում վերադարձան հայ ժողովրդի մասին լավ հուշերով: Ինչո՞ւ մենք էլ Բուլղարիայի նման չազատագրվենք,- բացականչում էր հայը: Բուլղարիան Հայաստանի համար օրինակ հանդիսացավ: Բուլղարական օրինակով հեղափոխական կազմակերպություններ և մարտական խմբեր հիմնվեցին, որոնք պատժում էին հանցագործներին և պաշտպանում դժբախտներին: Հատկապես ուժեղացան Հայ դատի օգտին հեղափոխական կոմիտեները, որոնք գործում էին Թուրքիայից դուրս:

Թուրքական զայրույթն անսովոր չափերի էր հասել: Սուլթան Աբդուլ Համիդը, որին Գլադստոնը և Կլեմանտոն «Կարմիր սուլթան» էին անվանել, կարծես դրան էր սպասում: 1894 թվականին Սասունում, Վանում, համա-

րյա ամբողջ Հայաստանում համատարած կոտորածներ տեղի ունեցան: Անխնա ջարդի ենթարկվեցին տղամարդիկ և կանայք, ծերեր ու երեխաներ: Թուրքիան Եվրոպական երկրների առաջ արդարանում էր նրանով, որ «այդ բոլորն ապստամբներ են»: Աբդուլ Համիդը հրճվում էր, որ այդ ձևով վերջ էր տալիս մեր ժողովրդին: Եվրոպական ուժերն իրենց հակասական դիրքորոշումներով փաստորեն նպաստում և օգնում էին նրան: Դրա հավաստումն է այն, ինչ կատարվեց հենց մայրաքաղաք Կոստանդնուպոլսում 1896 թվականին, երբ 10.000 հայ կոտորվեց Եվրոպայի ներկայացուցիչների անտարբեր աչքերի առաջ, որոնք որևէ հակադեցուցություն ցույց չտվեցին:

Հայ ժողովուրդը պետք է ընտրեր՝ կա՞մ ստիպված ենթարկվել ծանր լծին, մնալ Աստուծո կամքին, կա՞մ հանդուգն ու ավելի եռանդով գործել իր ազատության համար: Բոլոր առողջ ուժերը, առավել կրթվածները գնացին այդ երկրորդ ճանապարհով: Ամբողջ եռանդով գործի անցան հեղափոխական կազմակերպությունները, ամրապնդեցին հայ ժողովրդի ուժասպառ ոգին: Մամուլի միջոցով քարոզչություն կազմակերպվեց,

ընդհանուր գործի համար՝ մարտական խմբեր: Հեղափոխական կազմակերպությունները գլխավորեցին Վազգենի, Պետոյի, Գնունու, Մուրատի, Անդրանիկի և մյուսների նման հեղափոխականները, որոնք Բոսնի, Հ. Դիմիտրի և մյուսների նման գործում էին Հայաստանով մեկ, պատժում արդուլիամիդյան չարագործներին և օգնում ժողովրդին:

1908 թվականին Հյուրիյեթը մեծ հույսեր և ուրախություններ չնչեց հայերին: Փախստականներն իրենց ընտանիքներով վերադարձան: Իրենք՝ հայերը, միացան երիտթուրքերին և օգնում էին նրանց գաղափարների իրականացմանը: Հայերը կարծում էին, որ այդ ազատությունից բոլորից շատ օգտվելու էր հայ ժողովուրդը, քանի որ նա թուրքերի հետ համեմատած ավելի բարձր էր կանգնած իր բանականությամբ ու մշակույթով: Ինքը՝ թուրք բնակչությունը, ասում էր, որ դա ազատություն է անհավատների, այլ ոչ՝ թուրքերի համար: Պարզ է, որ զրկվելու էին ուրիշի՝ ռայայի թիկունքի վրա ապրելու իրավունքից: Սակայն շուտով դիմակն ընկավ. մեկ տարի անց՝ 1909 թվականին, Ադանայում և շրջակայքում տեղի ունեցավ 30.000 հայերի

չտեսնված կոտորածը: Դա իրականացրեց տեղի թուրք բնակչությունը՝ զինվորական իշխանությունների օգնությամբ: Վերադարձան աբդուլհամիդյան օրերը: Առաջացավ ընդհանուր ճանաչում ստացած հանրածանոթ մի արտահայտություն՝ «հայկական ջարդեր»:

1912թ., երբ Բուլղարիան պատերազմ հայտարարեց Թուրքիային, հայերի սրտերն անսահման ուրախությամբ լցվեցին: Սպասվում էր Թուրքիայի կործանումը: Բուլղարիայի քաղաքացի, կանոնավոր բանակի շարքերում եղող հայերից զատ, ունեինք նաև առանձին հայկական գումարտակ, մարտական խումբ, մեր փառապանծ ազգային հերոս Անդրանիկի առաջնորդությամբ: Ուրախությամբ գնում էինք նենգ թշնամու դեմ՝ մեր հարգատ հայրենակիցների 500 տարվա տառապանքների վրեժը լուծելու համար: Ամենուրեք, որտեղով առաջանում ու անցնում էր բուլղարական բանակը, հայ բնակչությունը նրան որպես ազատարարի էր դիմավորում: 1913թ., բանակի տխուր նահանջի ժամանակ, հայ բնակչությունը շատ ծանր վճարեց Բուլղարիայի հանդեպ իր համակրանքի համար՝ համարյա ամենուրեք նորանոր ջարդերի են-

թարկվելով:

Պարոնա՛յք, սակայն մեր մինչև 1915 թվականի տառապանքները շատ դժգույն են հետագա ժամանակաշրջանի տառապանքների համեմատությամբ, որոնք այսօրվա իմ գրույցի հիմնական նպատակն են հանդիսանում: Նոր վարչակարգը կոտորածների նոր ձևեր բերեց իր հետ: Դրանց մասին է իմ խոսքը:

Համաշխարհային ընդհարման ժամանակ Թուրքիան միացավ Առանցքին: Հայերի համակրանքը, ճիշտ է, դաշնակիցների կողմն էր, սակայն նրանք դա ոչնչով չարտահայտեցին, գիտակցելով թե իրենց ինչ է սպասվում: Նրանք հաշտ էին: Չնայած դրան, ինչ-որ մի ռազմական ծրագրի թելադրանքով, բոլոր հայերին մի վայրից մյուսը տեղահան անելու՝ քսորելու հրաման արձակվեց: Նպատակը պարզ էր՝ օգտվելով առիթից, վերջնականապես վերացնել հայ ժողովրդին, նաև՝ նրա հետ կապված Հայկական հարցը: Թալեաթը և Էնվերը ասել էին, որ այդ ժողովրդից առանձին մուրացկաններ են մնալու:

Ինչպե՞ս կատարվեցին այդ վերաբնակեցումն ու քսորը: Ստեղծվել էր նախարարության նման մի հանձնախումբ՝ «Թեշքի-

լաթ-ի մախսուսե», որին էլ հանձնարարվել էր ծրագրի իրականացումը: Աքսորից մի քանի օր առաջ նրանք, իրենց յուրահատուկ ջիզվիտությամբ, բնակչությանը վստահեցնում էին կյանքի և ունեցվածքի պահովության մասին: Հայերը նրանց չէին հավատում, սակայն ի՞նչ կարող էին անել: Սահմանները փակել էին, ճանապարհորդելն արգելված էր: Եվ ահա՛, գիշերով, տների դռների առաջ հայտնվում էին ոստիկաններ ու զինվորներ՝ բնակչությանը կարգադրելով հեռանալ: Նրանց խուզարկելուց հետո վերցնում էին ամեն ինչ և տանում նրանց դեպի Սիրիայի և Միջագետքի անապատները, որտեղ նրանց չնչին մասն էր հասնում: Չիմայեցին ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին, ո՛չ հիվանդներին, ո՛չ ծերերին, ո՛չ հոյի կանանց, ո՛չ ծննդաբերողներին: Մի երկու օրով քսորը հետաձգելու նրանց խնդրանքին պատասխանում էին հրացանների կոթերով ու խարազաններով: Նրանք թուրքեր էին, նրանք գուր չունեին: Այդ տեսիլքի սարսափը մեր արյունն է սառեցնում: Ցավոք սրտի՛ դա այդպես է, բոլորովին ճիշտ, և ես չեմ չափազանցեցնում:

Դեյր-Էլ-Չոր կոչված վայրը 300.000 քսորյալներից այսօր վերադարձել են 1.500-ը՝

տանջված կանանց և որբերի ուրվականներ: Օսմանիեի ճանապարհին յաթաղաններով 60000 հայեր անխնա կոտորվեցին ամենազազանային ձևով: Բոզանթիի և Տավրոսի ճանապարհին չարագործների աչքերի առաջ նորածին երեխաները բորենիների և վայրենացած շների զոհը դարձան: Հալեպ և Շամ (Դամասկոս) տարված մի քանի տասնյակ հազար մարդ համաճարակային հիվանդություններից մահացան: Սովից տանջված ծնողներն հաճախ վաճառում էին իրենց երեխաներին: Թուրքերը 1-2 դուրուշով 10-12 տարեկան աղջիկներ էին գնում: 100.000 հայեր Համա գնալու ժամանակ, տանջալից մահից փրկվելու համար, իրենց Աստծուց հրաժարվեցին: 30-40 հազար որբուկներ լաց ու կոծ էին անում թուրքական կանանոցներում:

Ծանր, տանջալի հայկական Գողգոթա:

Մեր ժողովրդական բոլոր բանաստեղծները, գործիչներն ու նշանավոր դեմքերը չլսված տանջանքներով անխնա սպանվեցին: Դեռ այն ժամանակ Գերմանիայի ռախստագում պաշտոնապես խոսվում էր, որ զոհված հայերի թիվը 800000-ի է հասել: Այսօր մասնագիտացված հանձնախմբերը հաս-

տատում են, որ այդ թիվը 1.200.000 է:

Սարսափների և տանջանքների հայկական Գողգոթա:

Բնական է՝ գալիս է մեծ հարցականը. ովքե՞ր էին այդ ամենի հանցագործները:

Մեզ՝ բժիշկներին, հետաքրքրում է այն իրողությունը, որ սնահավատ մուլեռանդների կողքին մենք հանդիպում ենք գիտության մարդկանց՝ բժիշկների, պրոֆեսորների, վիրաբույժների, դեղագործների և այլն: Վերը նշված «Թեջիլաթ-ի մախսուսե» հանձնախմբի կազմում գտնվում էին երկու ազդեցիկ բժիշկներ, թուրքական «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի անդամներ: Նրանցից մեկը դատական բժշկության և բժշկական բարոյագիտության պրոֆեսոր է Կոստանդնուպոլսի բժշկական ֆակուլտետում: Պրոֆեսորներ Նազհիմը և Բեհաեդդին Շաքիրը հայտնի էին որպես պանիսլամիզմի հերոսներ:

Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի նախկին ներկայացուցիչ պարոն Հենրի Մորգենթաուն, որ պատերազմի ամբողջ ընթացքում եղել է Թուրքիայում (այս հաստատումը ճիշտ չէ. Մորգենթաուն Թուրքիայում մնացել է մինչև 1917թ., երբ ԱՄՆ-ն

պատերազմ հայտարարեց Առանցքի երկրներին, այդ թվում՝ Թուրքիային - խմբ.), մի ամբողջ հատորում անժխտելի փաստերով նկարագրել է թուրք դեկավորների ոճրագործությունները հայ ժողովրդի նկատմամբ:

Հայ բժիշկների միությունը (Կոստանդնուպոլսի - Հ. Մ.), օգտվելով այդ գրքի տվյալներից և, միաժամանակ, հավաքելով ականատեսների ու տուժած գործընկերների տվյալները, աշխարհի առաջ հանդես եկավ առանձին գրքուկով, վեր հանելով հանցագործ բժիշկների, պրոֆեսորների, վիրաբույժների անմարդկային արարքները, ամոթալի՝ գիտության մարդու համար, որը կոչված է կրելու ազգային ու համամարդկային ամենաբարձր, ամենավսեմ հատկանիշները:

Այդ փաստարկված գրքից մի հատված եմ մեքբերելու. «Այն ատեն այդ պարոնների մոտ հայերին ոչնչացնելու գաղափարը ծագեց, այնպես, ինչպես փողոցային շների ոչնչացումը Կոստանդնուպոլսում 10 տարի առաջ՝ նրանց Մարմարա ծովի Օքսիդա կղզի տանելով: Հայերը ավելի վատ պայմանների ենթարկվեցին: Այդ դժբախտներն ուղարկվել էին Արաբիայի շոգ անապատները, որտեղ սովից ու ծարավից

մահացան հարյուր հազարներով:

Սարսափը սահմաններն անցավ: Որքա՞ն կանայք ու երեխաներ մահացան հիվանդություններից, սննդի և բուժօգնության բացակայությունից: Որտե՞ղ էին այդ ժամանակ թուրք բժիշկները՝ մարդկային տառապանքներն ամոքողները: Ի՞նչ էին անում Կարմիր մահիկը, բարեգործական միությունները, Թուրք բժիշկների միությունը, առողջապահության տնօրինությունները: Այդ մարդիկ, բացի այն, որ բան չարեցին մարդկային տառապանքների թեթևացման համար, կատարեցին ավելին՝ Է՛լ ավելի անտանելի, Է՛լ ավելի ողբալի դարձնելով այդ տառապանքները: Սպանում էին նույնիսկ այն հայ բժիշկներին, որոնք տառապողներին և մահացողներին օգնել էին ցանկանում»:

Այնուհետև ասվում է.

«Թուրք բժիշկները բազմաթիվ հիվանդանոցներում ու գնդերում արհամարհում էին հիվանդներին, ապտակելով, խարազանելով, ճիպոտահարելով, նույնիսկ քրաքի տալով: Վատ բուժման հետևանքով հազարավոր հիվանդներ մահացան: Բազմաթիվ հիվանդներ մահանում էին հիվանդանոց գնալու ճանապարհին, կամ այնտեղից դուրս գալուց հե-

տո, քանզի հիվանդ լինելով հանդերձ, դուրս էին գրվում որպես բուժվածներ»:

«Բարեգործներին» օգնության հասավ բժավոր տիֆը, որը պարարտ հող էր գտնում թշվառության միջավայրում: Բանակում դա համաճարակի վերածվեց: Թուրք մանրեաբան բժիշկների մոտ միտք ծագեց փորձեր կատարել ինչպես հիվանդների, այնպես էլ առողջ մարդկանց վրա: Առողջապահության տնօրինությունը թույլատրեց փորձեր կատարել մահվան դատապարտվածների վրա: Քանի որ բոլոր հայերը մահվան դատապարտված էին համարվում, հետևաբար նախքան սպանելը, նրանց կարելի էր օգտագործել գիտական նպատակների համար: Նրանք (թուրք բժիշկներն ու գիտնականները - Հ. Մ.) լաբորատորիաներում ճագարներին ու ծովախոզուկներին փոխարինեցին առողջ երիտասարդ հայերով, որոնց ամեն օր ներարկման էին ուղարկում: Թերթերում գրում էին բժավոր տիֆը բուժելու հրաշալի, նորահայտ պատվաստի մասին: Սակայն հայ երիտասարդներին ոչնչացնելուց հետո դադարեցին նորահայտ պատվաստի մասին խոսել:

1915-1916թթ. այդ փորձարկումները Երզնկայում կատարվում էին ախտաբա-

նական անատոմիայի պրոֆեսոր Համդի բեյի և 3-րդ բանակի բանակային բժիշկ Թևֆիք Սելիմի հրամանով: Ապացուցման համար մեջբերում եմ մի հատված թուրք վիրաբույժ Հայդար Ձեմալի՝ ներքին գործերի նախարարին ուղղված բաց նամակից, որը զինադադարից հետո հրատարակվել է «Թյուրքջե Ստամբուլ» թերթի 1918թ. դեկտեմբերի 23-ի թիվ 45-ում:

«Ձերդ գերազանցություն պարոն նախարար՛ր,

Այժմ, երբ հայկական արևմտյան հարցն է քննարկվելու, գալիս եմ այդ միտումը հաստատելու, որպեսզի առանձնահատուկ ձևով մեղադրվեն նահանգապետներն ու պարետները: Դաժանությունները հայերի նկատմամբ անխոհեմ քաղաքականության վատ արդյունքն էին... Իմ կողմից պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանը հաղորդել կատարված «գիտական դաժանությունների» մասին:

Թախանձագին խնդրում եմ քննչական հանձնախումբը թող հարկավորը կատարի պատասխանատու անձանց նկատմամբ:

1915թ., դեկտեմբեր ամսին, Երզնկայում, 3-րդ բանակի բանակային բժիշկ Թևֆիք Սելիմի հրամանով, տիֆով հիվանդներից

վերցրած արյունը, առանց վարակազերծման, որպես պատվաստ գործածում էին արքայական անմեղ հայերին ներարկելու համար: Այդ փորձարկումները լաբորատորիաներում որոշ կենդանիների վրա էին կատարում: Հետևաբար, բազմաթիվ մարդիկ հիվանդացան և մահացան: Նախքան ներարկումը նրանց խաբում էին՝ ասելով, որ սրսկումները կատարում են բժավոր տիֆից պաշտպանելու համար:

Դրանք ի կատար ածող Օսմանյան կայսերական բժշկական վարժարանի աստաբանական անատոմիայի պրոֆեսոր Համիդ Սուլադը, երբ այդ փորձարկումների արդյունքները հրատարակում էր «Gazette Medicale Militaire de Constantinople»-ում, հայտարարեց, որ դրանք կատարվել են մահվան դատապարտվածների վրա, երբ Ձեր ծառան վկա է և կարող է հաստատել, որ պրոֆեսորի մահաբեր փորձերի ենթարկված մարդիկ, բացի հայ լիներուց, ուրիշ մեղք չունեին: Այդ արարքները կարող են հաստատել Երզնկայի կենտրոնական հիվանդանոցի վարիչ դոկտոր Ռեֆեթ բեյը, նրա հետ աշխատած երկու հայ բժիշկներ, ինչպես նաև Երզնկայի Կարմիր մահիկի վարիչ դոկտոր Սելահեդդին բեյը:

Եվ այսպես, Ձեր համեստ ծառան Ձեզ հաղորդում է, որ քաղաքական ոճրագործությունների կողքին, գոյություն ունեն նաև գիտական ոճրագործություններ ու նրանց մասին պատրաստ եմ տալ բոլոր լուսաբանումները»:

Գրքուկի մեջ մի էջի վրա նշված են մինչև այժմ հայտնի ոճրագործ թուրք բժիշկների անունները, սակայն, անշուշտ, դա դեռ լրացվելու է բազմաթիվ անուններով: Այդ ցուցակից մեջբերում եմ որոշ բժիշկների անունները.

1. Նազիմ. «Միասնություն և առաջադիմություն»-ի ու «Թեշքիլաթ-ի մախսուսեի» անդամ: Նախապատրաստել և ստեղծել է արքայի ծրագիրը: Այժմ փախուստի մեջ է:

2. Բեհաեդդին Շաքիր. դատական բժշկության և բժշկական բարոյագիտության պրոֆեսոր Կոստանդնուպոլսում: 1915թ., պատերազմը հայտարարվելուց հետո, մի կողմ է նետում իր պրոֆեսորական վերնագետը և որպես սովորական ավազակ, շրջում Հայաստանում և չտեսնված բռնությունների ու կոտորածների հրամաններ տալիս: Այժմ փախուստի մեջ է:

3. Նահանգապետ Ռաշիդ. 100 000 հայերի, ասորիների ու քաղղեացիների

կոտորելու հրաման է տվել Տիգրանակերտում: Մի անգամ ձեռքբերակալվել է, սակայն խուսափել է պատժից:

4. Բեշիք Թաադիմ Սուլադ. Մյուսխենի ֆակուլտետի դիպլոմային շրջանավարտ: Պատուլոգիայի պրոֆեսոր Կոստանդնուպոլսում: Պատվաստի ներարկման հայտնի մասնագետ: Սրսկումներ էր կատարում հայերի վրա: Արտաքսվել է: Այժմ Նորից պրոֆեսորական ամբիոն է զբաղեցնում:

5. Թևֆիք Սելիմ. հիվանդանոցային բժշկության պրոֆեսոր: Բանակային բժիշկ 3-րդ բանակում: Մահաբեր պատվաստի ներարկման հրամաններ է տվել: Այժմ Գյումուշ Սուլյում է (Կոստանդնուպոլիս):

6. Մեհմեդ Ռեֆի. ներքին հիվանդությունների պրոֆեսոր: Սեբաստիայում և Երզնկայում բազմաթիվ հայ բժիշկների սպառնալիքներով ստիպել է թուրքանալ:

7. Ալի Սաիբ. հիվանդանոցի տնօրեն Տրապիզոնում: Նույն քաղաքում հայկական կոտորածների գործում մասնակցություն է ունեցել: Բոլոր տղամարդկանց, կանանց և ծերերին ծովահեղձ անելուց հետո, մնացած որբերին թունավորել է: Դրա համար նրան կոչել են «երեխաներ թունավորող»: Սպանել է իր գործընկեր Լևոն Ասլանյա-

նին՝ նրա կնոջը տիրանալու համար: Երբ վերջինս մերժել է, նրան ևս սպանել է:

8. Շևքեթ. Երզնկայի զինվորական հիվանդանոցի բժիշկ: Իր ութ գործընկերների սպանության հրաման է տվել: Վերջիններս հրաշքով փրկվել են:

9. Սանի Յավեր. Երզնկայի «Ազգիզե» զինվորական հիվանդանոցի վարիչ: Նրա հրամանով հիվանդանոցի առաջ սպանվել է հայ բժիշկ Մինաս Յարմակյանը:

10. Ֆերիդուն. ատամնաբույժ: Սպանել է քնած Լևոն Երկանյանին:

11. Ասաֆ. քաղաքային բժիշկ Մուշուհ: Սպանել է գործընկեր Ներսեսին: Այժմ փախուստի մեջ է:

12. Ֆայիք. հազարավոր հայեր է մորթել և կախաղան հանել: Այժմ բանտում է:

13. Կարաջա. հայկական եկեղեցական գույքի և հարստությունների կողոպտիչ:

14. Ֆայիք. Սիլվանի (Դիարբեքիր) զինվորական հիվանդանոցի վարիչ: Դոն ժուան է, վարակված է վեներական հիվանդությամբ: Վարակի զարգացման շրջանում հիվանդանոցի 12 հայ աղջիկ ծառայողների բռնաբարում և վարակում է: Բեհաէդդինի հետ միասին զանազան փաշաներին և բեյերին հայ աղջիկներ էր ու-

ղարկում որպես նվեր:

Վերը նշված դեմքերի գործունեության մասին տվյալները բավական են, որպեսզի պատկերացնենք, թե պատերազմի ժամանակ ինչպիսի՞ն էր թուրք բժիշկների գործունեությունը: Դա պարզ բնութագիրն է մի խավի, որն իր կրթությամբ, հասարակական և մարդկային առաքելությամբ ամենագեղեցիկ գաղափարների, մարդկայնության և բարոյականության առաջին շարքերում պիտի լիներ: Դա բնութագիրն է այն ազգի, որին պատկանում են: Մարդկային խղճի դատաստանի առաջ մի դատապարտյալ կա. դա թուրք ժողովուրդն է:

Այդպիսի գավակներ ծնող, այդպիսի որակով մի ժողովուրդ բարեկիրթ ժողովուրդների շարքերում տեղ չունի: Նա կառավարելու և իշխելու իրավունք չունի»:

Այս զեկուցման առիթը հանդիսացող հայ բժիշկների գրքույկը, որպեսզի պատկերը ամբողջական և համոզիչ լինի, կից ունի ցուցակն այն հայ բժիշկների, որոնք մորթվել, տուժել և տանջանքների են ենթարկվել: Այդ ողբալի ցուցակը շատ է երկար: Այնտեղ հանդիպում ենք հետևյալ բժիշկների անուններին. դոկտոր Տաղավարյան, Փաշայան, Չիլինկիրյան և ուրիշներ. բոլորը հայտնի են ո՛չ

միայն որպես բժիշկներ, այլև՝ գրողներ, ֆրանսերեն և հայերեն լեզուներով գիտական ստեղծագործությունների հեղինակներ: Նրանցից ոմանք քաղաքական գործիչներ էին, օրինակ՝ Տաղավարյանը թուրքական պառլամենտի անդամ էր: Բոլորն էլ ամենաանմարդկային ձևով կոտորվել են, մեկը՝ կախաղանի վրա՝ առանց դատավարության, մյուսը՝ ողջակիզված, երրորդը՝ ստորությամբ սպանված թուրք գործընկերների կողմից: Տանջվածների, զոհերի ցուցակը, ինչպես ասացինք, լի է մանրամասնություններով: Ցուցակներում նշված են նրանց անունները, ծննդավայրը, կրթությունը և այլն: Ավելորդ եմ համարում բուլղար բժշկական դասի առաջ տալ մանրամասնությունները: Բավարարվենք նրանց մասին միայն հետևյալ վիճակագրական տվյալներով.

1. Մորթված բժիշկներ՝ 67, բժավոր տիֆից և այլ հիվանդություններից մահացածներ՝ 52, ընդամենը՝ 119:

2. Մորթված դեղագործներ՝ 54, բժավոր տիֆից և այլ հիվանդություններից մահացածներ՝ 19, ընդամենը՝ 73:

3. Մորթված ատամնաբույժներ՝ 10, բժավոր տիֆից և այլ հիվանդություն-

ներից մահացածներ՝ 4, ընդամենը՝ 14:

4. Բժիշկ ուսանողներ՝ սպանված և մահացած՝ 15: Ընդամենը՝ 221:

Բանակում ծառայող կենդանի մնացած հայրենակից բժիշկները, որոնք զերծ են մնացել ու չեն բաժանել այդ տխուր ճակատագիրը, զրկվել են արձակուրդից, պատերազմի տարիներին որպես բժիշկներ չեն օգտվել առավելություններից, իսկ պատերազմի ավարտին ու զինադադարից հետո երբ իրենց տներն են վերադարձել, ավերված օջախներում չեն գտել իրենց բարեկամներից որևէ մեկին՝ հայրեր, մայրեր, կանայք ու երեխաներ, որոնք կա՛մ անձանոթ վայրեր էին արքայազն, կա՛մ հանգել էին աներևույթում, անխաչ գերեզմաններում՝ կոտորված ու բռնաբարված:

«Ահա՛ պարզևատրումը հայ բժիշկների»,- ասված է գրքույկի եզրակացության մեջ: Այո՛, պարզևատրում այն բանի համար, որ 1838թ. հայ բժիշկ էմմանուել Շահյանը գաղափար տվեց սուլթան Մահմուդին՝ Կոստանդնուպոլսում բժշկական ֆակուլտետ հիմնել: Եվ քանի՛քանի՛ հայ բժիշկներ էին աշխատում այդ ֆակուլտետում՝ երկրի համար բժշկական ասպարեզի մասնագետներ նախապատրաստելով: Այդ

գիտական գործիչների մեջ հայտնի էին պրոֆեսորներ Սինապյանը, Տավուտյանը, Ասլանյանը, Կիրճիքյանը, Չոհրապը, Ռուսինյանը, Նուրիճանը և այլն, և այլն:

Իշխանությունների և բժիշկների մասին վերլուծություններից հետո հարկ եմ համարում նշել, որ թուրքական բարեգործական միություններն ու Կարմիր մահիկը որևէ օգնություն չցուցաբերեցին և հայ տառապալների ցավերը ամոքելու իրենց սուրբ պարտականությունն եղող գործում բան չնախաձեռնեցին, այլ ընդհակառակը, գործուն մասնակցություն ունեցան այդ ոճրագործություններին՝ մորթելով, կոտորելով, չարչարելով, անպատվելով բռնաբարված, անպաշտպան հայերին, նրա մտավորականությանը:

Թուրք բժիշկ Հայդար Ջեմալի - որի բաց նամակից մեջբերում կատարեցի զեկուցման մեջ -, խոսքն ի գորու չէ սրբելու թուրք բժիշկների՝ իրենց ազգի ճակատին դրոշմած ամոթը:

Ամոթի և ոճրի կնիքը մշտապես դրոշմված է մնալու:

Սլիվեն, 3 ապրիլի 1920թ.:
Վահան Գույումճյան
(արտատպված է «Թուրք բժիշկների ոճրագործու-

թյունները
Մեծ Եղեռնի ժամանակ»
[Երևան, 2001] գրքից)

Հավելված 3.

ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐԸ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԸ ԵՂԵՌ- ՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Թուրքիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլսում ապրում էր հայ մտավորականության մի մեծ ջոկատ, որոնց թվում էին 300 բժիշկներ և ատամնաբույժներ:

Բազմաթիվ բժիշկներ, դեղագործներ էին աշխատում Արևմտյան Հայաստանի նահանգներում, Օսմանյան կայսրության մյուս մարզերում: Հայ բժիշկները և դեղագործները ջանք չէին խնայում օգնելու ո՛չ միայն հայ բնակչությանը, այլև՝ քրդերին, ասորիներին, արաբներին և օսմանյան բռնակալության տակ գտնվող մյուս ժողովուրդներին: Օսմանյան բանակի հիմնական բժշկական կադրերը հայ բժիշկներն ու դե-

ղագործներն էին:

1915թ. ապրիլի 24-25-ի գիշերը Կ. Պոլսում ձերբակալեցին 235 անվանի հայ մտավորականների: Շուտով ձերբակալվածների թիվը հասավ 800-ի, որոնք խումբ-խումբ ուղարկվեցին Անատոլիայի խորքերը և գազանաբար սպանվեցին արսորի ճանապարհին: Նրանց թվում էին բժիշկ և բանաստեղծ Ռուբեն Չիլինկիրյանը (Սևակ՝ 30 տարեկան), բժիշկ, բանաստեղծ, հրապարակախոս Նազարեթ Տաղավարյանը, հանրային գործիչներ, բժիշկներ և դեղագործներ, բժշկական ընկերության նախագահ Խաչատուր Թորգոմյանը, Խաչիկ Պարտիզպանյանը, դեղագործ Ասատուր Արսենյանը և այլք:

Կատաղած «պանթուրքիզմի» հետադիմական գաղափարախոսությամբ՝ ոստիկանների հետ ձեռք-ձեռքի տված գործում էին նաև թուրք մտավորականները, մասնավորապես բժիշկները, որոնց ոճիրները ոգեշնչում էր Իթթիհադի ղեկավարներից մեկը՝ դոկտոր Բեհա-Էդդին Շաքիրը: Նրա կազմած ցուցակներով 1915թ. ապրիլին ձերբակալվեցին 58 ականավոր հայ բժիշկներ, որոնցից Մաքսուդ Աբիկյանը սպանվեց Սեբաստիայում, Նշան Աճեմյանը՝ Երզնկայում, Միքայել Ղա-

րագոյանը՝ Տիգրանակերտի մոտերքում, Սուրեն Նշանյանը կախաղան հանվեց Կեսարիայում, Միսակ Փանոսյանը սպանվեց Եվդոկիայում և այլն:

Կ. Պոլսի «Հայ բժիշկներու միությունը» 1919թ. տեղի ունեցած իր 4-րդ նիստում որոշեց հարգել իր նահատակ անդամների հիշատակը, հավաքել և հրապարակել այն բոլոր փաստաթղթերն ու տեղեկությունները, որոնք վերաբերում էին տանջամահ եղած հայ բժիշկների և դեղագործների սպանության մանրամասնություններին:

Դրանք հիմնականում ջարդերից փրկված հայ և հույն բժիշկների, սպաների, ինչպես նաև անհայտ այլ մարդկանց տված տեղեկություններն էին:

«Հայ բժիշկներու միության» այս նիստի արձանագրության մեջ մասնավորապես նշվում էր, որ Թուրքիայում գտնվող եվրոպական երկրների շատ քաղաքացիներ «թիկունք» չեղան բազմաչարչար հայությանը, դեռ ավելին՝ «Շատ ցավալի է, որ կարգ մը գերման բժիշկներ այ, գերման բարձրաստիճան սպաներու օրինակին հետեւելով, իրենց մասնակցութիւնը բերած են այս անպատուաբեր գործին»:

Թուրքիայում կազ-

մակերպված հայկական ջարդերին զոհ դարձած բազմաթիվ դեղագործներից մեկն էր Խոսրով Զեշիշյանը, որը ծնվել է 1880թ. Մելիտինեում, նախնական կրթությունն ստացել է Խարբերդի ավետարանական ուսումնական հաստատությունում (Եփրատ կոլեջում - Հ. Մ.):

1900թ. Զեշիշյանը մեկնել է Բեյրութ, ավարտել տեղի Ամերիկյան համալսարանը և ստացել պրովիզորի կոչում: Վերադառնալով Մելիտինե, այնտեղ կազմակերպել է դեղատուն, որի համար նրան նյութական օգնություն էր ցույց տվել եղբայրը՝ բժիշկ Միքայել Զեշիշյանը: Թուրքական իշխանությունները 1914թ. սրան հարյուրապետի աստիճանով ուղարկում են ռուսական ճակատ, որտեղ և նա կազմակերպում է 200 մահճակալանոց զինվորական հիվանդանոց: Հայ բժիշկը թուրք վիրավորների հետ մեկտեղ բժշկական օգնություն էր ցույց տալիս նաև հայ վիրավոր զինվորներին: Նրա ազդու միջամտությամբ մահից ազատվում են մի շարք հայ երիտասարդներ: Բժշկի ազդու հայափրկիչ գործունեությունը հայտնի է դառնում զինվորական իշխանություններին: Նրան մի քանի ամսով մեկուսացնում են, բայց նրա կարիքը շատ զգալով, ազատում են և

Նորից ծառայության նշանակում բանակում: Կովկասյան ռազմաճակատի թուրքական բժշկական հիվանդանոցից նրան հաջողվում է փախչել և միանալ հայ ժողովրդի ազգային հերոս Անդրանիկի զորամասին: Թուրքերը իմանալով այդ ամենի մասին, ձերբակալում են եղբորը՝ Խոսրովին: Այդ մասին հիշատակում է Արշակ Ալպոյաճյանը: Նա գրում է. «... 1915թ. Մելիտինեի մեջ ալ առաջին անգամ ձերբակալուեցան մտաւորական առաջնորդներ, որոնց հետ էր Խոսրով Զեշիշյանը, որ դժոխքային տանջանքներ է յետոյ կացինահար սպանուած է թուրք ճիւղներու կողմէ»:

Թուրք ջարդարարները հաշվեհարդար տեսան նաև նրա ընտանիքի բոլոր անդամների հետ՝ կոտորելով նրանց:

Ամբողջ Թուրքիայով մեկ հռչակված էր պոլսաբնակ բժիշկ Թորոս Պեննեի անունը: Նրան քաջ գիտեր նաև արաբական աշխարհը: Պեննեն հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի անձնվեր մարտիկներից էր: Նա երկար ժամանակ փակված էր Կ. Պոլսի բանտի խցերից մեկում, նրան խոշտանգում էին, ստիպում, որ մատնի ազատագրական պայքարի

ընկերներին, ընդունի մահմեդականությունը: Բայց հայորդի բժիշկը չկորցրեց իր հոգու արիությունը, նա հայրենասեր մարդ էր և մինչև իր կյանքի վերջն էլ հավատարիմ մնաց բժշկի վեհ կոչմանը: 1915թ. հունիսի 15-ին, Կ. Պոլսի Սուլթան Բայազիդի հրապարակում 20 (ճիշտը՝ 19, ընդհանուր թիվը՝ 20 - Հ. Մ.) այլ մտավորականների հետ միասին թուրք դահիճները կախաղան հանեցին նաև Խարբերդի բժշկապետ դոկտոր Պեննեին՝ Պետրոս Թորոսյանին, որ մյուս հայրենասերների հետ գլուխը բարձր պահած հերոսաբար ընդունեց մահը. «... Այնտեղ ուր կախաղաններն են ճոճվում, ազատությունն է ման գալիս»:

Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական համալսարանն էր ավարտել խարբերդցի Լևոն Ասլանյանը, որ Տրապիզոնում աշխատում էր որպես թաղային բժիշկ: Նա քաղաքի հայ, հույն և թուրք ընտանիքներում հոգատար և հմուտ բժշկողի մեծ համբավ էր ձեռք բերել: 1915թ. մայիսին նա իր ընտանիքի մյուս անդամների, այդ թվում նաև 28 տարեկան եղբոր՝ բժիշկ Արտավազ Ասլանյանի հետ տեղահան արվեց և այնուհետև թուրք ոստիկան Ալի Սալիբի հրամանով հռչոտ-

վեց: Բժիշկ Սարգիս Ադոյանը ծնվել է Ադանայում, ավարտել Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը: Լինելով բարձր կարգի մանկաբույժ, իր աշխատանքային 35 տարիների ընթացքում բուժել էր հարյուրավոր թուրք երեխաների, բայց չնայած այդ ամենին, 60-ամյա բժիշկը դաժանորեն սպանվեց Հալեպի մոտերքում:

Թուրք ստահակները չէին խղճում ու ափսոսում նաև այն բժիշկներին, որոնք գիշեր ու ցերեկ մաքառում էին թուրք հիվանդ և վիրավոր զինվորների կյանքի փրկության համար: Այդ զոհերից էր Վան գավառի Սարայի զինվորական հիվանդանոցի բժիշկ Միքայել Ղարազյոզյանը: Նա ծնվել էր Կ. Պոլսում, ավարտել տեղի բժշկական վարժարանը և զորակոչվել բանակ, որպես զինվորական բժիշկ, սակայն պարտականությունները կատարելու պահին, դեռ 25 տարին չբոլորած, դաժանորեն սպանվեց իր իսկ բուժած թուրք զինվորականի ձեռքով:

Մեզիրեի զինվորական հիվանդանոցի բժշկական ծառայության գնդապետ, Տիգրանակերտից Արթին Հելվաճյանի ծառայությունը անգնահատելի էր, նրա հմուտ ձեռքերով վիրահատվել են հարյուրավոր թուրք և

այլազգի հիվանդներ ու վիրավորներ: Սակայն թուրք շարժարարները չափսոսեցին իրենց փրկարար բժշկի կյանքը, և Արթին Հելվաճյանը չարանենգորեն սպանվեց իր աշխատանքի վայրում:

Թուրքական բանակի 153-րդ զորագնդի 3-րդ գումարտակի բժիշկն էր մարգվանցի 40 տարեկան Վահան Ղազարյանը, որը փայլուն գնահատականներով ավարտել էր Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը: Իր պարտականությունների կատարման պահին սպանվեց հենց իր թուրք օգնականի ձեռքով:

Բժիշկ Ներսես Շահբադյանը ծնվել է Վանում, ավարտել է Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանը, աշխատում էր Մուշի գինվորական հիվանդանոցում, միաժամանակ 1915թ. քաղաքի թաղապետ էր: Նա ևս սպանվեց իր աշխատանքային ընկեր` թուրք բժիշկ Ասաֆի կողմից, 33 տարեկանում:

Խոստումնալից բժիշկ էր տիգրանակերտցի Նշան Պազգալյանը, որն աշխատում էր Խնուսի գինվորական հիվանդանոցում: Նա թուրք վիրավոր գինվորներին օգնություն ցույց տալու հետ միաժամանակ հոգատար վերաբերմունք է ցույց տալիս հայ վիրավորներին և

հիվանդներին, որը, սակայն, դուր չի գալիս թուրք բժշկապետին: Վերջինս առանց խղճի խայթ զգալու հաշվեհարդար տեսավ իր պաշտոնակցի հետ:

1915թ. կեսերին Խարբերդի բանտը լցրել էին խաղաղ ազգաբնակչությամբ և սպառնում էին նրանց ողջ-ողջ այրել: Գերվաճների մեջ էր տեղի հիվանդանոցի բժիշկ Էդուարդ Թաշճյանը, որը փախուստ էր կազմակերպել, սակայն դառնում է բանտապան զինվորների գնդակի զոհը:

Կ. Պոլսի Օսմանյան կայսերական բժշկական վարժարանն էր ավարտել Պերճ Մինասյանը, աշխատում էր Բաղեշի 5-րդ բժշկարանում: Հայերի տեղահանության ժամանակ նրան որպես բժիշկ, տեղահանված բնակչության մեջ գտնվող հիվանդներին բժշկական օգնություն ցույց տալու նպատակով ուղարկում են Երզնկա: Ճանապարհին բուժարանի թուրք բժիշկների թելադրանքով, դեռ 28 տարին չբոլորած բժշկին սպանում են:

Փարիզի բժշկական համալսարանի շրջանավարտ Սարգիս Սերթյանը ծնվել էր Կարինում և բժշկական կրթություն ստանալուց հետո Երզնկայում ակնաբույժ էր աշխատում: Տեղի ոստի-

կանները ձերբակալում են արդեն մեծ համբավ ձեռք բերած նշանավոր ակնաբույժին և սրախողխող անում 1915թ. հուլիսի 5-ին:

Ռուբեն Սևակը (1885-1915) 1905-1912թթ. սովորում և ավարտում է Լոզանի համալսարանի բժշկական ֆակուլտետը, որն այդ տարիներին բժշկագիտության խոշորագույն կենտրոններից մեկն էր Եվրոպայում: Նա շատ մեծ ջանասիրությամբ նվիրվածություն է ցուցաբերում բժշկական մասնագիտությանը: Նա մտադիր էր Կոստանդնուպոլսում բժշկական գործունեությանը զուգահեռ հիմնադրել բժշկագիտական գիտահանրամատչելի մի պարբերական: Նրա «Բժշկին գիրքեն փրցուած էջեր»-ի պատմվածքներն ու ակնարկներն այդ ծրագրի որոշակի մարմնացումն են: Նրա հիմնական նպատակն է եղել գեղարվեստական խոսքի միջոցով ազգաբնակչության մեջ բժշկական անհրաժեշտ գիտելիքներ տարածել: Ամսահ են նրա գեղարվեստական բարձր մակարդակով, հոգեբանական խորը ընդհանրացումներով և պոռթկացող հումորով հագեցած արձակ էջերը: Ռ. Սևակը մինչև վերջ հավատարիմ մնաց մտավորականի, բժշկի մարդասիրական կոչմա-

նը, նահատակումից առաջ բուժեց թուրք գյուղապետի աղջկան, իմանալով, որ նրա հայրը պիտի դառնար իր կանխամտածված սպանության մասնակիցներից մեկը:

Նշան Տեր-Վահրամյանը ծնվել էր Խարբերդում և ավարտել Բեյրութի Ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետը: Բժշկապետի իր պարտականությունները կատարելուց բացի նաև աշխույժ կերպով մասնակցում էր հասարակական-քաղաքական կյանքին: Թուրք ոստիկաններն սկզբում բանտ նետեցին երիտասարդ բժշկին, այնուհետև հայ գործիչների հետ միասին ողջ-ողջ այրեցին:

Պողոս Փալաբոյրլյանը ծնվել է մեծացել է Կ. Պոլսում, ավարտել տեղի բժշկական վարժարանը: Մի քանի տարի նա աշխատել էր Վանում, այնուհետև կանչվել է բանակ և դարձել օսմանյան հեծելազորի բժիշկներից մեկը: Գազազած թուրք հրամանատարը իմանալով, որ թուրք վիրավորների հետ միասին նա բժշկական օգնություն է ցույց տալիս նաև հայ վիրավորներին` 1915թ. Բաղեշի և Մուշի շրջակայքում գնդակահարում է նրան:

Ազգիքի գինվորական հիվանդանոցի բժիշկն էր Եվդոկիացի Մինաս Յարմանյանը: Լինելով շնորհալի

երիտասարդ, նա վայելում էր հիվանդների և գինվորների համակրանքը, որը դուր չէր գալիս հիվանդանոցի բժշկապետ թուրք հարյուրապետին: Բուժվող հիվանդի հետ հիվանդանոցի այգում գրուցելիս, դարանակալած թուրք հիվանդապահներն սպանում են հայ բժշկին:

Ինչպես հայտնի է, Թուրքիայում բժիշկ և դեղագործ մասնագետների մեծ մասը հայեր էին:

Հայ երիտասարդները սովորելով եվրոպական երկրների տարբեր բժշկական ուսումնական հաստատություններում, վերադառնում էին հայրենիք, կազմակերպում բժշկանոցներ և դեղատներ:

1915թ. սկզբներին Թուրքիայում հաշվում էին հարյուրից ավելի բարձրագույն կրթությամբ դեղագործներ, որոնց մեծ մասը զոհ գնաց թուրքական յաթաղանին:

Ամբողջ Թուրքիայում հայտնի էր ճանաչված փաստաբան, որակյալ դեղագործ հաճընցի Հակոբ Թերգյանը, որը բժիշկ Ստեփան Միսքեյանի լավ բարեկամն էր: Նա ավարտել էր Պոլսի բժշկական վարժարանը, և ունենալով սեփական դեղատուն, միաժամանակ կատարում էր փաստաբանի աշխատանքը:

1915թ. ապրիլի 24-ին հայ

մտավորականներից շատերի հետ ձերբակալվեցին նաև 35-ամյա դեղագործ Թերգյանը ու բժիշկ Միսքեյանը: Գաղթի ճանապարհին Չանդըրըի մոտ հարյուրավոր հայերի հետ միասին սրախողխող արին նաև նրանց:

Բեյրութի Ֆրանսիական համալսարանի բժշկական ֆակուլտետն էին ավարտել եղբայրներ Տիգրան և Արմենակ Սերայտարեանները: Արմենակն ստացել էր բժշկի կոչում, իսկ Տիգրանը՝ դեղագործի: Նրանք վերադառնալով Սեբաստիա, աշխատում են իրենց սիրած մասնագիտությամբ: Երբ թուրքերը կազմակերպում են հայ ընտանիքների գաղթը, բոլորի հետ գաղթեցնում են նաև երկու եղբայրներին և նրանց սպանում Եվդոկիայի ճանապարհին, ընտանիքի անդամների հետ միասին:

Նույն ճակատագրին արժանացան նաև դեղագործ Վահան և բժիշկ Բաղդասար Վարդանյան եղբայրները: Երկուսն էլ ավարտել էին Բեյրութի Ֆրանսիական համալսարանը, աշխատում էին հայրենի Սեբաստիայում: 1915թ. գաղթի ճանապարհին թուրք ոստիկանները նրանց և ընտանիքի մյուս անդամներին սրախողխող արեցին:

Պոլսի բժշկական վարժարանի դեղագործական բա-

ժինն էր ավարտել կարիսցի եղիշե Փափանեսյանը, որը Մեյխոնեում սեփական դեղատուն ուներ: 38 տարին չլրացած, Փափանեսյանը կացնահար եղավ թուրք խաժամուժի կողմից:

Մեյխոնեում էին ապրում և գործում հայ դեղագործներ Խոսրով Զեշիշյանը, Խաչիկ Փաստրմաճյանը, Գարեգին Կեհնյանը, Հովհաննես Գույումճյանը, Տեր-Ստեփանյանը, Բրուտյանը, որոնք զոհ դարձան թուրք յաթաղանին:

Կիրասնցի զույգ եղբայրներ Արամայիս և Եղիշ Պարոն-Վարդյաններն ավարտել էին Բեյրութի Ֆրանսիական համալսարանի դեղագործական բաժինը, ունեին սեփական դեղատուն, աշխատում էին միասին: 1915թ. թուրքերը թալանի են ենթարկում դեղատունը, իսկ եղբայրներին սրախողխող անում: Հայ դեղագործների մի զգալի մասը ծառայում էր թուրքական բանակում, որոնց ևս թուրքերը չարանենգորեն սպանեցին: Նրանց թվում էին Բարունակ Աճեմյանը, Սիմոն Գոյունյանը, Էդուարդ Թաշճյանը, Արթին Լուսֆյան, Լորայր Խաչատուրյանը, Գևորգ Գյուրճյանը, Եղիազար Մեսիայանը, Վահան Շիտանյանը, Էտուար Պեյազյանը, Խաչիկ Սերայտարյանը, Վրթանես Սյուրմեյանը,

Բյուզանդ Տեր-Պապիկյանը, Հակոբ Զենդիրյանը և այլք:

1917թ. թուրքական բանակը դեպի Կովկաս շարժվելու ժամանակ բանակի գլխավոր բժիշկ Զեմալն ու դեղագործ Մեհմեդ Ալին չարանենգորեն սպանեցին 11-րդ զորագնդի ատամնաբույժ սամսոնցի Բենիամինին:

Թուրքական զորքերի մեջ շատ տարածված էին վարակիչ հիվանդությունները՝ տիֆը, խոլերան, վեներական հիվանդությունները և այլն:

Այդ հիվանդությունների դեմ պայքարելու համար թուրքական կառավարությունը ուղարկում էր հայ բուժաշխատողներին՝ բժիշկներին, դեղագործներին, ատամնաբույժներին, բուժքույրերին և մինչև անգամ բժշկական հաստատություններում սովորող հայ ուսանողներին: Հայ բժիշկներու միությունն իր նիստերից մեկում նշում է. «Այս առիթով պետք է ըսել, թե թուրք առողջապահական վարչութիւնը մասնաւոր դիտումով ջանացած է վտանգաւոր կացութեան մէջ դնել հայ բժիշկները, որոնք պատերազմական գերիներէն շատ անելի վատթար դիրք ունեցած են թրքական բանակին մէջ: Հիւանդութիւններէն ազատուողները դեռ լիւ չապաքինուած, շատ

անգամ՝ նոյնիսկ առանց հանգիստի կամ օդափոխութեան, կը ստիպէին աշխատիլ, այնպէս, որ վիճակագրութեամբ հաստատուած է, թէ հայ բժշկութիւնը իր թուին համեմատութեամբ աւելի շատ զոհ տուած է տարափոխիկ հիւանդութիւններէն»:

Միայն բժավոր տիֆից թուրքական բանակում գործող հայ բժիշկներից մահացան 41-ը, իսկ դեղագործներից՝ 15-ը:

1915-1918թթ. ընթացքում երիտթուրքական կառավարության ձեռնարկած հայաջինջ գործողությունների հետևանքով մոտ երկու միլիոն հայեր քստրվեցին, որոնցից մեկուկես միլիոնից ավելի սպանվեց կամ զոհ գնաց սովին և համաճարակին Միջագետքի անապատներում, բռնի թուրքացման ենթարկվեցին ավելի քան երկու հարյուր հազար հայեր, առավելապես կանայք և երեխաներ: Երիտթուրքերը գազանային եղանակով «լուծեցին» Հայկական հարցը: Մեծ Եղեռնից հետո Թալեաթ փաշան հայտարարեց՝ «Չկա այլևս Հայկական հարց, քանի որ չկան նաև հայեր»:

Առաջին համաշխարհային պատերազմում երկրագնդի տարբեր մասերում իրագործված ոճիրներից որևէ մեկը չի կարող համեմատվել այս ողբերգու-

թյան հետ, ինչպես զոհերի քանակությամբ, այնպես էլ նրանց հանդեպ գործադրված միջոցներով: Հայերի այս սպանդ-ցեղասպանությունը պատմության մեջ հիշատակված բոլոր ջարդերից ամենասոսկային էր:

Այդ ծրագրի իրագործմանը լծվեցին նաև թուրքական բժշկական ծառայությունը և թուրք բժիշկները. «Այս վերջիններս շատ վայրերում մեջ եղած են առաջին ղեկավարները եւ կազմակերպիչները ջարդերում, տեղահանութեան եւ անձամբ նախագծած անթիւ ու անլուր վայրագութիւններ: Շատերը անձամբ իսկ գործած են ոճիրներ՝ իրենց հայ պաշտօնակիցներու վրայ, անոնց գոյքերը իւրացնելու եւ նոյնիսկ ընտանեկան պատիւը բռնաբարելով»:

Թուրք բժիշկները հալածեցին և սպանեցին իրենց պաշտոնակիցներից շատ շատերին, որոնցից այնքան բան էին սովորել: Նրանք «բժշկութիւնը իրենց ձեռքին մեջ բարբարոսութեան եւ սպանդի գործիք մը ըրին մարդկային մարմինը աւելի դաժանութեամբ չարչարելու եւ գործածեցին զայն իբրեւ փչացած միջոց մը մարդկային ցեղին»:

Թուրք բժիշկների և դեղագործների՝ հայ բնակչության զանգվածային

ջարդերին եռանդով մասնակցությունը թուրք մտավորականության ճնշող մեծամասնության հայաջինջ դիրքորոշման լավագույն ասպացույցն է. «Հայ բժիշկը յաճախ զոհ գացած է, իր պաշտօնի կիրառման ատեն, ոչ թէ թշնամիէն եկած գնդակէն, այլ՝ իրեն հետ աշխատակից գտնուող թուրք դաւաճան արհեստակցին, կամ թուրք կառավարութեան կողմէն այս նպատակի համար մասնաւորաբար կազմակերպուած հերոսներու եաթաղանին: Կարելի է նոյն բանը թուրք բժիշկներու մասին ալ ըսել»: Պոլսի Օսմանյան (Կայսերական - Հ. Մ.) բժշկական համալսարանի դոկտոր, Իթթիհադի ղեկավարներից սադիստ Բեհա-Էդդին Շաքիրը ավագակի կեցվածքով քարոզում էր մնատոլիայի և Հայաստանի հայերի կոտորածը: Ինչպես հայտնի է, աշխարհի որևէ մեկ բժշկական կազմակերպություն և որևէ մեկ բժիշկ իրավունք չունի գիտական փորձեր կատարելու մարդկանց վրա, մինչև անգամ մահվան դատապարտվածների վրա: Սակայն թուրք բժիշկները հաշվի չէին առնում միջազգային այդ մարդասիրական օրենքը: Այդ մասին շատ լավ գիտեր ինքը՝ դոկտոր Շաքիրը:

1915թ. թուրքական բա-

նակում տիֆ հիվանդությունը մեծ չափերի հասավ, որի պատճառով չափազանց մեծացավ շիճուկի նկատմամբ եղած պահանջարկը: Շաքիրը այն առաջին բժիշկն էր, որ շիճուկի առաջին նմուշները փորձարկեց հայերի վրա: Դեռ ավելին, Թուրքական բժշկական խորհրդում ինքը առաջարկեց փորձերը կատարել հայ զինվորների և տարագիրների վրա: Առաջին փորձերը կատարվեցին 1915թ. ձմռանը, 3-րդ զորաբանակի բժշկապետ Թևֆիք Սելիմի ենթակայության տակ գտնվող Երզնկայի քաղաքային հիվանդանոցի բժիշկ Համիդ բեյի և մյուս թուրք բուժաշխատողների կողմից: Այդ «գիտական» փորձի հետևանքով շատ հայ երեխաներ և զինվորներ զոհվեցին: Նման չարագործությունների էին դիմում թուրք բժշկապետներ Թևֆիք Սելիմը, Մեհմեդ Ռեֆիկ, թուրքական զինվորական առողջապահության կազմակերպիչ Սուլեյման Նուուման փաշան:

Տրապիզոնի առողջապահական տեսուչ Ալի Սաիբի հանձնարարությամբ, որբացած և հիվանդ երեխաներին ներարկել են ինչ-որ թունավոր դեղորայք և ոչնչացրել: 1915թ. Երզնկայի Ազիզիեի հիվանդանոցում պաշտոնավարող հազարա-

պետ Շւքրեթը մտադրվել էր իրագործել Նույն հիվանդանոցում աշխատող ութ հայ բժիշկների սպանությունը, սակայն զինվորական հիվանդանոցի ղեկավարները նրանց աշխատանքի տեղավորեցին զինվորական այն հիվանդանոցներում, որտեղ տիֆով վարակված բազմաթիվ թուրք զինվորներ կային: Բոլոր ութ հայ բժիշկները շուտով վարակվեցին տիֆով և մահացան:

Թուրք բժիշկների կատարած ոճրագործությունների մասին մամուլում երբեմն հանդես էին գալիս թուրք առաջադեմ բժիշկների առանձին ներկայացուցիչներ: Այսպես, «Թուրք ջե Ստամբուլ» օրաթերթի 1918թ. դեկտեմբերի 24-ի համարում բժիշկ Սելահեդդինը գրում էր. «1915 թուականին, հազար ու մեկ դժուարութիւններով Երզնկա ապաստանող հայերէն մաս մը փառաւ ռիֆայր զատուելու պէս սելքիեաթէն (գաղթականների կարավան - Հ. Մ.) առնելով Երզնկայի կեդրոնական հիւանդանոց կը դրկուլին եւ հոն մանրեաբանութեան մէջ միայն հնդկախոզի եւ ճագարի պէս կենդանիներուն վրայ փորձելիք գործողութեանց ենթակայ կ'ըլլան: Այսպիսով շատ մը հայեր մեռնելով հանդերձ, խնդիրն ալ բոլորովին ան-

լուծելի մնացած է... Որեւէ օգուտ չունեցող մէթոսի մը՝ միայն հայերու հանդէպ կիրարկուիլը ինչ կը նշանակէ»:

Նույն թվի դեկտեմբերի 23-ին վիրաբույժ Հայդար Ջեմալը գրում է Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ փաշային. «1915-ի դեկտեմբերին Երզնկայի մէջ 2-րդ բանակի բժշկապետի՝ Թելֆիք Սելիմի հրամանով, տիֆով վարակուած հիւանդներէն առնուած արիւնը առանց inactive (սրսկում) ընելու եւ բժշկականօրէն միայն փորձի կենդանիներուն վրայ ներելի եղող գիտական փորձերը՝ գաղթեցնելու սահմանուած անմեղ հայերուն կը ներարկուին եւ այս պատճառով շատ մը խեղճ հայեր հիւանդանալով կը մեռնին»: Ներարկումները կատարած ատեն՝ զոհերը խաբած են, հավատացնելով, որ հիվանդությունից զերծ մնալու համար էին արվում դրանք:

Այս փորձը կատարել է Օսմանյան կայսերական բժշկական վարժարանի ուսուցիչ Համիդ Սուլադը, որ «Չինվորական բժշկական թերթին» հայտարարել է, թե «իր փորձերը կատարած է «սպանուելու դատապարտուածներու վրայ, իսկ իրականութեան մէջ, փորձերուն ենթակաները հայ ըլլալէն

զատ ուրիշ յանցանք չեն ունեցած...»:

Ոչ լրիվ տվյալներով՝ 1915-1918թթ. Թուրքիայում սպանվել են 60 հայ բժիշկ, 30 դեղագործ, 8 ատամնաբույժ: Բացի ուղղակի սպանվածներից, թուրքերը տիֆի շիճուկով սրսկել և սպանել են 43 բժշկի, 14 դեղագործի և բժշկական հաստատությունների 13 ուսանողների: Թուրքական յաթաղանի զոհ դարձան ավելի քան 168 բուժաշխատողներ:

Վանիկ Հայրապետյան
«Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից»
գրքից, Երևան, 1990

Հավելված 4.

ՀԻՊՈԿՐՄՏԻ ԱՊՕՐԻՆԻ ԶՎԱԿՆԵՐԸ

1986թ. ամերիկյան «Հոլոքոսթ Էնդ ջենոսայդ սթադիզ» պարբերականում լույս է տեսել պրոֆեսոր Վահագն Ն. Տատրյանի «Թուրք բժիշկների դերը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ օսմանյան հայերի ցեղասպանության մեջ» ուշագրավ հոդվածը: Պարբերականը նպատակ ունի հրապարակել գիտական նյութեր ցեղասպանությունների մասին ընդհանրապես և իր առաջնահերթ խնդիրն

է համարում պայքար մղել ցեղասպանության դրսևորումների դեմ:

Վ. Տատրյանի հոդվածը շարադրված է եվրոպական փաստաթղթերի՝ մասնավորապես 1918-1921թթ. բրիտանական հետախուզական տեղեկագրությունների, գերմանացի ականատեսների վկայությունների, ինչպես նաև Երուսաղեմի հայոց պատրիարքարանում պահվող նյութերի հիման վրա:

Շրջանառության մեջ դրված փաստական բազմաբնույթ նյութերը հնարավորություն են ընձեռել հեղինակին ապացուցելու, որ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ թուրք բարբարոսների ձեռքով կազմակերպված հայկական կոտորածների գործադրման մեջ զգալի դեր է խաղացել թուրքական բժշկական անձնակազմը, որն անմիջականորեն իր մասնակցությունն է ունեցել վայրագությունների իրականացման երկար շղթայի հյուսման մեջ: Թուրք բժիշկները, օգտվելով ազատ գործելու լայն հնարավորություններից, հայ զանգվածների տեղահանումների, սպանությունների ու ոճիրների ընթացքում աշխույժ գործունեություն են ծավալել բժշկական ահավոր փորձեր կատարելու նպատակով:

Հեղինակը հավաքել ու ընթերցողին է ներկայացրել թուրք ոճրագործ բժիշկների ցանկը, տվել նրանց գործունեության համառոտ պատկերը՝ կանգ առնելով մասնավորապես երկու հայտնի, բժիշկ քաղաքագետների՝ Նազիմի ու Բեհաեդդին Շաքիրի վրա, որոնք համարվել են իշխող իթթիհադական կուսակցության կենտրոնական կոմիտեի գերագույն վարչության ակնառու դեմքեր: Նրանք մասնակից են եղել սուլթան Աբդուլ Համիդի վարչակարգի տապալման նախապայմանների ստեղծմանը, 1908թ. աջակցել են երիտթուրքերի հեղափոխությանը և նրանց հաղթանակից հետո դարձել կուսակցության ղեկավար կազմի մշտական անդամներ: 1912-1918թթ. բարձր դիրքերի են հասել՝ բժշկական տիտղոսավոր պաշտոններ զբաղեցնելով:

1919-1920թթ. թուրքական Չինվորական ատյանի դատավարությանն ենթարկվել են, որ երկու բժիշկները մեծ դեր են խաղացել Հատուկ կազմակերպության ջոկատների ստեղծման և ղեկավարման գործում: Փաստորեն, այդ մարմինը հանդիսացել է հայերի բնաջնջման գլխավոր ու մահացու գործիքը:

Վերոհիշյալ կազմակեր-

պության մեջ ներգրավված են եղել մարդասպաններ ու պրոֆեսիոնալ ոճրագործներ, որոնք թուրքական արդարադատության և ներքին գործերի նախարարությունների հատուկ թուլյութությանմբ, կայսրության բազմաթիվ բանտերից ազատ են արձակվել ու ընդգրկվել հիսունից մինչև երկու հարյուր հոգուց բաղկացած ջարդար ջոկատների մեջ՝ «չեթե» անվան տակ: Այդ ջոկատները ղեկավարել են օսմանյան գինվորական ակադեմիայի շրջանավարտ սպաների հատուկ խմբերը:

Պրոֆ. Տատրյանը իր հոդվածում նշում է, որ թուրք երկու բժիշկների գործունեության ու նրանց խաղացած դերի մանրամասնությունները տրված են Չինվորական ատյանի ամբաստանագրերի ու դատավճիռների մեջ: Այսպես, 1919թ. ապրիլին դատարանում ընթերցված ամբաստանագիրը դոկտոր Նազիմին ներկայացնում է որպես Հատուկ կազմակերպության ջարդար ջոկատների գլխավոր կազմակերպիչ: Թեև այդ ջոկատներից շատերը որպես հրոսակներ գործածվել են Ռուսաստանի դեմ կովկասյան սահմանային շրջաններում, այնուամենայնիվ, դատարանն իր ամբաստանագրում պնդում էր, որ «այդ

ոճրագործներն ու անիրավները» ստեղծված են եղել հիմնականում «ջարդելու ու բնաջնջելու տեղահանվածների քարավանները»: Դոկտոր Նազիմին առնչվող ամբաստանագիրը նրան բացահայտորեն ներկայացնում է որպես ցեղասպանության վերջնական որոշումը իրականացնողներից մեկը: Վկայակոչվում է նրա արտահայտությունը, թե հակահայ միջոցառումները «որոշված էին կենտրոնական կոմիտեի հետ երկարատև ու ամբողջական խորհրդակցությունից հետո» և, որ այդ միջոցառումների նպատակը եղել է «Արևելյան հարցի» լուծումը:

Դատական նիստերի ընթացքում իթթիհադական մի շարք բարձրաստիճան ղեկավարների խոստովանությունները վերաբերել են ավագանիների հավաքագրումը կազմակերպելու գործում դոկտոր Նազիմի խաղացած անժխտելի դերին:

Հողվածում հետաքրքիր փաստեր են բերվում դոկտոր Բեհաեդդին Շաքիրի ոճրային գործողությունների մասին: Լինելով Հատուկ կազմակերպության պարագլուխներից մեկը, նա զբաղեցրել է արևելյան սահանգներում գործող ջարդար ջոկատների գլխավոր հրամանատարի պաշտոնը:

Նրա դեմ ամենաձանրակշիռ վկայությունը տվել է 3-րդ զորաբանակի հրամանատար Վեհիբ փաշան, որը հետևյալ կերպ է եզրափակել իր վկայությունը.

«Հայերի կոտորածն ու բնաջնջումը և նրանց ունեցվածքների կողոպտումը արդյունք էին Իթթիհադ վեթերաքքիի որոշման: Բեհաեդդին Շաքիրն այն մարդկանցից մեկն էր, որը հայթայթեց մարդ մորթող մսագործներին 3-րդ զորաբանակի գոտում, ղեկավարեց ու օգտագործեց նրանց: Կառավարության առաջնորդները ենթարկվում էին Բեհաեդդին Շաքիրի հրամաններին ու ցուցումներին: 3-րդ զորաբանակի գործողության գոտում տեղի ունեցած մարդկային բոլոր ողբերգությունները, բոլոր սադրանքներն ու անբարոյական արարքները նրա մեքենայությունների արդյունք էին՝ այդ թվում կախաղանից ազատ արձակված մարդկանց, արյունոտ ձեռքերով ու արնակալած աչքերով ժանդարմների հավաքագրումը»:

Այդ վկայությունը հաստատել են նաև որոշ թուրք պատմաբաններ:

Պրոֆ. Վ. Տատրյանն իր հոդվածում բերում է գերմանական և անգլիական տեղեկագրեր, որոնք իրենց հեր-

թին հիմնավորում են հայերի զանգվածային բնաջնջման գործում վերը հիշատակված երկու բժիշկների ունեցած դերը: Այսպես, Շտանգե ազգանունով գերմանացի մի գնդապետ, վկայելով հայերի դեմ Շաքիրի ձեռնարկած արշավի մասին, հաստատել է կոտորածների պարտականությունները ավագակախմբերի վրա դրված լինելու փաստը: Շտանգեն դատապարտել է այդ արյունարբու ավագակներին՝ հայերին մորթոտելու համար և նրանց տականք անվանել:

1919թ. կեսերին Թուրքիայի Չինվորական ատյանը, մեղավոր ճանաչելով Նազիմին, հեռակա կարգով նրան դատապարտում է մահվան: 1920թ. Բեհաեդդին Շաքիրը, որպես գլխավոր մեղսակից, արժանանում է նույն դատավճռին: Դատավճռից երկու տարի անց, 1922թ. Շաքիրն սպանվում է Բեռլինում հայ վրիժառուի ձեռքով: Նրա գործընկեր Նազիմը, որը նույնպես ապաստան էր գտել Գերմանիայում, Թուրքիայի կառավարությունից ապահովություն ստանալուց հետո, վերադառնում է հայրենիք և, շատ չանցած, փորձում տապալել Մուստաֆա Զեմալի վարչակարգը: 1926թ. Անկարայում նա կախաղան է բարձրացվում:

Վ. Տատրյանն իր հողվա-

ծում ցույց է տալիս նաև, որ հայ ազգաբնակչության կոտորածները կազմակերպելու մեջ, բացի վերոհիշյալ երկու բժիշկներից, անմասն չեն մնացել Իթթիհադի հովանավորությունը վայելող թուրքական բժշկական անձնակազմի բազմաթիվ թուրք բժիշկներ ևս, որոնցից ամենահայտնին եղել է օսմանյան ռազմական ուժերի գլխավոր բժիշկ, բրիգադի գեներալ Սուլեյման Նուուման փաշան: Նրա անվան հետ է կապվում Կարինի, Սեբաստիայի և Երզնկայի բնակչությանը թունավորումների ճանապարհով ոչնչացնելու գործողությունների իրականացումը: Վերոհիշյալ բժիշկ-քաղաքագետը, միաժամանակ լինելով բանակի բժշկական անձնակազմի պետ, դատապարտվել է հայ բժիշկների և բանակի հայ բժշկական անձնակազմի անդամների սպանությունը լիազորելու անմարդկային արարքի համար:

Հոդվածում բերվում են փաստեր թուրք բժիշկներից մեկի՝ գնդապետի աստիճան ունեցող Ֆազլի Բերկիսի մասին, որը Բեհաեդդին Շաքիրի հետ համագործակցաբար կազմակերպել է Սեբաստիայի և Կարինի զանգվածային կոտորածները: Նա իր մասնակցությունն է ունեցել հայ մեծանուն գրողներ Դանիել

Վարուժանի և Ռուբեն Սևակի սպանությունը կազմակերպելու մեջ:

Հազարավոր հայերի սպանության, կանանց ու երեխաների առևանգման վայրագ գործողությունների հեղինակներ են դարձել թուրք բժիշկներ Մեհմեդ Հասանը (Էզաջի՝ «դեղագործ») և Ահմեդ Միտհադը: Նրանք կազմակերպել են կայսրության տարբեր նահանգներից տեղահանված հայ զանգվածների կոտորածը: 1919թ. անգլիացիները ձերբակալում են նրանց ու Մալթա արքայություն:

Տատրյանն առանձնացնում է հատկապես մի այնպիսի հրեշ, ինչպիսի եղել է Մեհմեդ Ռեշիդը, որը 1915թ. զբաղեցրել է Դիարբեքի կառավարչի պաշտոնը: Կրելով իր վրա «Դահիժ» մականունը, դոկտոր Ռեշիդը անձամբ կազմակերպել է հարյուր քսան հազար հայերի տեղահանումը Դիարբեքից: Թուրքական ադբյուրներում առկա է հայերի կոտորածները կազմակերպելու մասին նրա հետևյալ պատճառաբանությունը, որը Վ. Տատրյանը մեջբերել է իր ուսումնասիրության մեջ: «Չնայած, որ մասնագիտությամբ բժիշկ եմ, սակայն չեմ կարող ուրանալ իմ ազգությունը: Ես աշխարհ եմ եկել

որպես թուրք: Իմ ազգային ինքնությունն ամեն ինչից առաջնային է... Հայ դավաճանները ապաստան էին գտել հայրենիքի ծոցում: Նրանք վտանգավոր մանրեներ էին: Մի՞թե բժշկի պարտականությունը չէ այս մանրեներին ոչնչացնելը: Կա՛մ հայերը պիտի վերացնեին թուրքին և տիրանային այս երկրին, կա՛մ էլ նրանք պիտի ոչնչացվեին թուրքի կողմից: Ես չեի կարող վարանել և կատարեցի իմ ընտրությունը: Թուրք լինելս գերակայեց իմ բժշկական կոչման վրա: Իհարկե, խիղճս տանջում է, բայց և ես չեի կարող տեսնել իմ երկրի կործանումը: Փակեցի աչքերս և գործի անցա առանց վերապահության: Իսկ ինչ վերաբերում է պատմության առջև պատասխանատվություն ունենալուն, ապա իմ հոգը չէ, թե այլ ազգերի պատմաբաններն ինչ կգրեն իմ մասին»:

Շատ ուշագրավ են հողվածագրի փաստերը Օսմանյան կայսրության բժշկական գիտության զարգացմանը խթանող ազգությամբ ոչ թուրք բժիշկների ջանքերի մասին: Վ. Տատրյանը նշում է, որ Թուրքիայի բժշկական ուսումնական հաստատությունների դասախոսների իննսուն տոկոսը եղել են հայերը, հրեաները, հույներն ու օտար այլ

մասնագետները: Այդ տոկոսի մեջ քիչ թիվ չեն կազմել հայազգի բժիշկները՝ վիրաբույժներ, դեղագործներ և հիվանդապահ քույրեր, որոնք պատերազմի ժամանակ մասնագիտական ծառայության մեջ են եղել ռազմաճակատներում:

Հետաքրքիր է, որ Առաջին աշխարհամարտի և հայկական կոտորածների ժամանակաշրջանում բժիշկների սուր կարիքը հարկադրել է թուրքական իշխանություններին ժամանակավորապես խնայել նրանց, չնայած, ինչպես նշված է հոդվածում, շատ հայ բժիշկներ, զգալով իրենց վերահաս կորստի վտանգը՝ փախուստի են դիմել ու գերի հանձնվել կա՛մ ռուսներին, կա՛մ անգլիացիներին:

Կարինի, Բաղեշի և Խարբերդի նահանգներում թուրք բժիշկներն անասելի ոճիրներ են գործել հայ բժշկական անձնակազմի նկատմամբ, շատերին մահապատժի են ենթարկել, մի մասն էլ մահացել է՝ հիվանդանոցներում խնամելով թուրքական բանակի՝ բժավոր տիֆով վարակված զինվորներին:

Թուրք բժիշկների գործած ոճիրները չէին կարող գաղտնի պահվել: Կոտորածներից հետո, որոշ թուրք բժիշկներ ականատեսի իրավունքով և խղճի թելադրանքով փորձել

են մերկացնել իրենց գործընկերների անմարդկային գործողությունները հայ ժողովրդի նկատմամբ:

Այսպես, 1918թ. թուրք հայտնի վիրաբույժներից մեկը՝ Հայդար Ջեմալը, բաց նամակ է հղել Թուրքիայի ներքին գործերի նախարարին: Նամակում նա մերկացրել է կոտորածների ժամանակ բժիշկների կատարած ոճրագործությունները: Նամակը անկեղծ խոստովանություն է և իր նախադեպը չունեցող փաստաթուղթ. «Հայկական հարցի քննարկման ժամանակ մեղադրանքը միշտ ընկնում է կառավարողների և զինվորական հրամանատարների վրա:

... Եթե հայերի բնաջնջման հրամանները, ինչպես հաստատվում է, արձակվում էին Իթբիհադի կենտրոնական շտաբից, ապա դրանից բխող ոճիրների պատասխանատվության հարցը առավել ևս լուրջ է դառնում: Կցանկանայի ձեր ուշադրությունը հրավիրել այն բարբարոսությունների վրա, որոնք գործադրվեցին հայերի վրա գիտական որոշ մեթոդների ճանապարհով: Խղճի դեմ է թույլ տալ, որ այս հարցը մատնվի վաղեմության և մոռացության տրվի: Հետևաբար, ցանկանում եմ, որ բոլոր այն իրողությունները, որոնց ականատես եմ

եղել անձամբ, թողնել քննող հանձնաժողովի անդամների խղճին ու ազնվությանը: Նրանց մնում է որոշել հանցագործությունների հեղինակների դեմ որդեգրվելիք միջոցառումները»:

Դոկտոր Հայդար Ջեմալի նամակը ուղղակիորեն դիմակազերծում է թուրք բժիշկներին, դատապարտում նրանց վայրագ գիտական փորձերը: Այնտեղ նշվում է, որ «1916թ. սկզբին, 3-րդ զորաբանակի առողջապահության գլխավոր պաշտոնատարի հրահանգով, երբ բժավոր տիֆի տարածումը լուրջ խնդիր էր դարձել, Երզնկայում տեղահանման ենթարկվող անմեղ հայերին ներարկել են բժավոր տիֆից տառապող հիվանդների արյուն՝ առանց դա վարակազերծելու: Միմիայն կենդանիների վրա կատարելու պատշաճ այս փորձը մահվան պատճառ դարձավ մեծ թվով անմեղ հայերի, որոնք հավատացած էին, թե ներարկումը բուժման նպատակների համար է»:

Ըստ դոկտոր Հայդար Ջեմալի վկայության՝ թուրք պրոֆեսորներից Համիդ Սուլադն անձամբ ղեկավարել է այդ փորձերը, և դրանց արդյունքները «Չինվորական բժշկական հանդեսում» հրատարակելու ժամանակ

հայտարարել է, որ այդ փորձերին ենթարկվել են «մահվան դատապարտվածները», առանց պարզելու նրանց հայկական ծագումը:

Իր բողոքն ուղղելով ներքին գործերի նախարարին և պահանջելով պատասխանատվության ենթարկել հանցագործ բժիշկներին, նամակագիրը եզրափակում է. «Հայերի դեմ գործադրված այս վայրագությունները միաժամանակ թե՛ վարչական էին և թե՛ գիտական: Դրանք խայտառակ սպի են բժշկական բնագավառի համար: Այս խնդրի շուրջ մանրամասնություններ հաղորդելու ես պատրաստ եմ»:

Կոտորածի շրջանում թուրք հայտնի բժիշկները տեղյակ և կամ անձամբ ականատես լինելով կատարված բոլոր գիտափորձերին, փաստորեն հարկադրվել են լուռ մնալու: Այդպես էր պահանջում վարչակարգը: Վերոհիշյալ դոկտոր Սելահեդդինը, որպես ականատես, խոստովանել է, որ հայերի վրա կատարված բժավոր տիֆի շիճուկի փորձերը հեղինակագրվել ու արատավորել են թուրքական բժշկագիտությունը և, որ դրանք ո՛չ միայն չսատարեցին ուրիշների առողջության վերականգնմանը, այլև գիտական առումով դրական որևէ արդյունք չեն տվել:

Հողվածում հետաքրքիր փաստեր են բերվում Սեբաստիայի նահանգում հայկական քարավանները թուրք բժիշկների անմիջական մասնակցությամբ կոտորելու մասին: Հատկապես կարելի է նշել այդ նահանգի մեջ մտնող Մարզվանի գավառի կայմակամ, մասնագիտությամբ բժիշկ Ֆահիկին: Գտնվելով գլխավոր մեդիսակիցների ցուցակում, վերջինս պատերազմից հետո ձերբակալվում է:

Վ. Տատրյանը գտնում է, որ հայոց ջարդերը փորձադաշտ են հանդիսացել հետազայում նացիստական Գերմանիայի՝ հրեաների բնաջնջումը կազմակերպելու միջոցների ու նրանց նպատակների իրականացման համար: Այլ խոսքով, փաստական առկա նյութը բերում է այն համոզման, որ նացիստ բժիշկներն ունեցել են իրենց նախակարապետները Օսմանյան կայսրությունում:

Հողվածում օգտագործված փաստական նյութը հեղինակին հանգեցրել է նաև այն համոզման, որ թուրքիայում զինվորական դասից հետո բժիշկները ներկայացրել են այն խավը, որն ամենից մոտ է կանգնած եղել իթթիհադական կուսակցությանը և

նրա առջև դրված նպատակների: Եվ պատահական չէր, որ հիշյալ կուսակցությանը հավատարիմ ու նվիրված բժիշկները թողեցին իրենց ասպարեզը և դարձան նահանգային կոմիսարներ ու կառավարիչներ՝ հսկելով զանգվածային կոտորածների ողջ ընթացքը:

Վ. Տատրյանի հողվածի գիտական նշանակությունը նաև այն է, որ վեր հանելով Մեծ Եղեռնին թուրք բժիշկների մասնակցության հարցը, նա նորանոր ծալքեր է բացահայտում դարի առաջին ցեղասպանության ուսումնասիրման բնագավառում:

Նուբար Զալյումյան
պատմական գիտությունների թեկնածու
«Գարուն», Երևան, 1989, թ. 2

Հավելված 5.

ՀԻՊՈԿՐԱՏԻ «ԵՐԴՎՅԱԼ» ԶՄԱՎԱԿՆԵՐԸ

Հայ բժիշկները դարերի վեր ծառայել են ո՛չ միայն սեփական ազգին, այլև իրենց կարողությունն են տրամադրել առհասարակ բոլոր ժողովուրդներին: Նրանք ներդրել են իրենց հանճարն ու տաղանդը նույնիսկ վայրագ թշնամու ցավն ու տառապանքն ամոքելու և կյանքը փրկելու մարդասիրական գործին: Հայ բժիշկը, սկսած Ֆաթիհ Սուլթան Մեհմեդի օրերից - որի ժամանակ սկսվել էր բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացու գործունեությունը -, մինչև երիտթուրքերի կառավարության շրջանը, միշտ էլ հավատարմորեն, մարդկայնորեն կատարել է իր պարտականությունը թուրքիայում: Զափազանց մեծ է եղել ինչպես հայ բժիշկների, այնպես էլ բժիշկ դասախոսների մատուցած ծառայությունը Օսմանյան կայսրության բժշկագիտության վերելքին: Առաջին համաշխարհային պատերազմը բռնկվելու պահից հայ բժիշկները, հավատարիմ իրենց տված երդմանը, ծառայեցին զինվորական հիվանդանոցներում, գործող

զորամասերում: Նրանցից շատերն ընկան պատերազմի դաշտում, մի մասը թուրք զինվորներին բուժելիս վարակվեց ժամանակի չբուժվող տիֆ հիվանդությամբ, իսկ մնացածը նահատակվեց ամենաեղբրական պայմաններում:

1919թ. Պոլսի Հայ բժիշկներու միությունը, որի նախագահն էր բազմավաստակ բժիշկ, բանասեր Վահան Հ. Թորգոմյանը, լույս ընծայեց ֆրանսերեն մի գրքույկ՝ «Մեծ Եղեռնի նահատակ հայ բժիշկների և ջարդարար թուրք երդմատարու արվեստակիցների մասին», որտեղ նշվում էր, թե «Կայսերական բժշկական վարժարանի առաջին դասախոսներն էին հայ և հույն բժիշկները, որոնք կրթություն էին ստացել եվրոպական բժշկական համալսարաններում»: Համաձայն Հայ բժիշկներու միության պատրաստած վիճակագրության՝ սպանված են. բժիշկներ՝ 64, թուրքական բանակում և հիվանդանոցում տիֆով վարակված ու մեռած՝ 52, ատամնաբույժներ՝ սպանված կամ տիֆով վարակված՝ 14, բժիշկ ուսանողներ՝ 15, դեղագործներ՝ նահատակված կամ տիֆով վարակված՝ 78: Ընդամենը՝ 218»:

Թուրք բժիշկներից շատերը մասնակից եղան և իրենց

ձեռքերը լվացին հայ արվեստակիցների արյունով: Հայկական գլխավոր ջարդերի կազմակերպիչներն էին Իթթիհադի ջարդարարական ծրագիրն իրագործող հետևյալ երդմնադրուժ բժիշկները՝ Նազիմը, Բեհաեդդին Շաքիրը, Ռեշիդ բեյը, Համիդ Սուլադը, Թևֆիք Սելիմը, Մեհմեդ Ռեֆիկ, Սուլեյման Նուրման փաշան:

Սակայն վերոհիշյալ տեղեկագիրն ամբողջական չէր. դա նահատակ հայ բժիշկների թվացանկն էր պարզապես: 1940թ. Թուրքիայում Ա. Ն. Մեզպուրյանը հրատարակեց «Հայ եւ ծագումով հայ բժիշկներ: Այբուբենական համառոտ անուանացանկ (1688-1940)» գիրքը, որի 1950թ. երկրորդ հրատարակությունը լուրջ, երկար տարիների քրտնաջան աշխատանքի արդյունք էր, միակը իր տեսակի մեջ, որը լրացնում էր պակասը հայ բժշկության պատմության մեջ: 1957թ. Բոստոնում բժիշկ Գասպար Մկրտիչ Կարոյանը հրապարակում է «Մեծ եղեռնի նահատակ հայ բժիշկները» գիրքը, որտեղ տրված են ո՛չ միայն բժիշկների անվանացանկը, այլև նրանց կենսագրությունը, գործունեությունը, ճակատագիրը և եղերական մահը: Հայկական տեղահանությունների, Պոլսի հայ մտա-

վորականության ջարդերը կազմակերպող հատուկ հանձնախմբի (Թեշքիլաթ-ի մախսուսա) մասնակիցներից մեկն էր բժիշկ Նազիմը, որը վայրագորեն իրագործում էր ականավոր հայ բժիշկների ոչնչացումը, որովհետև հայ բժիշկներն առավել մեծ համբավ էին վայելում, քան թուրք բժիշկները՝ իրենց բարձր գիտական պատրաստվածությամբ, բարեխղճությամբ ու մարդասիրությամբ, որն անշուշտ շարժում էր նրանց նախանձն ու չարությունը հայ բժիշկների նկատմամբ: Ջարդարար, գազանասիրտ թուրք բժիշկը ձերբակալել, բանտարկել ու աքսորել է տվել տաղանդավոր բժիշկներից շատերին, որոնցից էր Օսմանյան կայսրության խորհրդարանի անդամ, բազմավաստակ բանասեր, երկրագործ Նազարեթ Տաղավարյանը, Ազգային կենտրոնական վարչության Քաղաքական ժողովի անդամ, գրող, գրականագետ, հասարակական գործիչ, բժիշկ Կարապետ Փաշայան խանը, բանաստեղծ, բժիշկ Ռուբեն Սևակը:

Բեհաեդդին Շաքիրը Իթթիհադի կենտրոնական վարչության ղեկավարներից էր և «Թեշքիլաթ-ի մախսուսա»-ի անդամ, որը ծրագրել ու իրագործել է հայ ցեղի

բնաջնջումը Անատոլիայում և Հայկական բարձրավանդակում: Նա, մոռանալով իր բժշկական երդումը, 1915թ. դարձել էր ամբողջ հայ ազգի, մասնավորապես, հայ բժիշկների ամենամեծ ջարդարարը:

Երբ ռուսական բանակը մոտենում է Կարին քաղաքին, նա հրամայում է ողջ բնակչությանը տեղահանել ու քշել դեպի Երզնկա: Եփրատի ափին դարանակալ քրդերը թուրք զինվորականների հետ կողոպտում, առևանգում են անպաշտպան ժողովրդին և հանձնում գետի հոսանքին: Ռուսական բանակը հայաշատ Կարինը գրավելով՝ այնտեղ գտնում է 16 հայ ծերունիների և մի քանի պառավ կանանց:

Դիարբեքիի նահանգապետ բժիշկ Ռեշիդ բեյը 1915թ. ապրիլի 19-ին հրամայում է ձերբակալել Դիարբեքիի ազգային վարչական մարմինների անդամներին, առևտրականներին, հայ բժիշկներին, եկեղեցականներին, ուսուցիչներին, մի խոսքով՝ տեղի հայության ընտրանիին, թվով 635 մարդ: Արյունարբու թուրք և քուրդ զինվորականները նրանց տանում և գազանաբար սպանում են Բեզվանի ձորում:

Պոլսի «Ռեսիմլի թարիխ» («Գունավոր պատմություն»

- Հ. Մ.) հանդեսը 1953թ. հուլիսի 5-ին հրատարակել է մի հարցազրույց՝ կապված բժիշկ Ռեշիդ բեյի հետ. «Դուք բժիշկ էիք եւ իբրեւ բժիշկ ձեր պարտականությունն էր մարդ փրկել: Ինչպե՞ս եղաւ, որ այսքան անմեղներու գունդ առ գունդ ձերբակալելով, մահուան գիրկը նետուելուն պատճառ եղաք»: «Բժիշկ ըլլալս չէր կրնար մոռցնել տալ ազգութիւնս: Ռեշիդ բժիշկ մըն է, բայց իբրեւ թուրք մը աշխարհ եկած է: Թրքութիւնս յաղթանակեց բժշկութեանս դէմ՝ համոզուած, որ յօգուտ ազգիս կը շարժիմ»:

Դարեր ի վեր բժշկական գիտաժողովներում դրված է այն հարցը, որ մարդկանց վրա գիտափորձեր կատարելը արգելվում է: Սակայն դա չէր վերաբերում թուրք, Մյունխենի բժշկական համալսարանում կրթություն ստացած, Օսմանյան կայսերական բժշկական վարժարանի պրոֆեսոր Համիդ Սուլադին, նույն վարժարանի պրոֆեսոր Թևֆիք Սելիմին: Նրանք հազարավոր հայ զինվորների ներարկում էին գիտական հաստատում չգտած, տիֆի դեմ պատրաստված շիճուկը, որով հազարավոր հայերի մահվան դատապարտեցին: Երզնկայում ապաստանած հազարավոր հայերի հետ

վարվում էին փորձակենդանիների պես: Նրանց բռնությանը նետում էին երզնկայի հիվանդանոցը և գիտական փորձերի ենթարկում: Այդ մասին վկայություն է տվել վիրաբույժ Հայդար Ձեմալը 1918թ. դեկտեմբերի 23-ին, բաց նամակ ուղարկելով ներքին գործոց նախարարությանը: Վերջինս որպես բժիշկ աշխատել է նույն հիվանդանոցում և մասնակցել այդ գիտափորձերին:

Կայսերական վարժարանի պրոֆեսոր Սուլեյման Նուուման փաշան - որը Իթթի-հադի կարկառուն դեմքերից էր, Էնվեր փաշայի անբաժան մտերիմն ու թուրքական բանակի առողջապահական քննիչը -, հարյուրավոր հայերի ողբերգական նահատակման պատճառն է հանդիսացել: Նա հովանավորել է ջարդարար թուրք բժիշկների, որոնցից շատերն աստիճանի բարձրացում են ստացել ի գնահատությունն իրենց գործած վայրագությունների: Հայ բժիշկների արյունով են իրենց ձեռքերը ներկել թուրք բժիշկներ՝ Տրապիզոնի առողջապահության տնօրեն Ալի Սայիբը, Երզնկայի գինվորական հիվանդանոցի բժիշկ Շևքերը, Ֆերիդունը, Համդի Սուլեյմանը, Ֆայիբը, Չիան, Հասան Ֆուադը և ուրիշներ:

Հայը դարեր շարունակ

ապրել է իր պատմական հողի վրա, որին այսօր մի բռնապետ քարոտ է բաժին ընկել:

Այսօր էլ շարունակվում է թուրքական կառավարության նենգ մտադրությունը հայ ժողովրդի նկատմամբ: Շարունակվում են հայ մտավորականների նկատմամբ հալածանքը, բանտարկությունը, խոշտանգումները: Թուրքիան այսօր էլ վարում է մշակութային եղեռն՝ բոլոր հայկական կոթողները, տեղանունները փոխելով կա՛մ թուրքականով, կա՛մ ոչնչացնելով, ուզում է հավատալ, թե կջնջի Հայկական հարցը, որն այնքան հուզում է աշխարհի առաջադեմ մարդկությանը:

Սիլվա Սուքիասյան
նադիոլրագրող

Հավելված 6.

ԹՈՒՐԶ ԲԺՇԿՆԵՐԸ՝ ՑԵ- ՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Հայոց ցեղասպանության գործում իր ուրույն ծառայությունն ու բաժինն ունի թուրքական բժշկությունը: Փաստորեն այս բնագավառում ևս նրանք եղան «քաղաքակրթության պատմության մեջ» առաջինը, որպես գիտափորձի առարկա գործածելով կենդանի մարդկանց: Իհարկե, փորձաէակները հայերն էին... Հայտնի է, որ թուրքական ֆաշիզմի փորձը հետագայում գործածեցին տարբեր երկրների մարդատյաց իշխանություններ՝ այս անգամ այլ ազգերի ներկայացուցիչների նկատմամբ: Ստորև ներկայացնում ենք ասվածը հաստատող երեք փաստաթուղթ:

Չօրաբանակի բժշկապետ Թեւֆիկ Սելիմի իրաւասութեան շրջանակին մէջ գտնուող Երզնկա քաղաքին մէջ Օսմանեան Բժշկ. Վարժարանի ախտաբանական անաթոմիայի ուսուցիչ Համտի պէյի եւ օգնականներուն կողմէ գիտական մէկէ աւելի

խորհրդաժողովներու մէջ խնդիր եղած է մարդոց վրայ գիտական փորձեր կատարելու հարցը: Եզրակացութիւնը այն եղած է, որ նոյնիսկ մահուան դատապարտուածները պէտք չէ փորձի առարկայ ընել: Կարգ մը թուրք բժիշկներ նկատի չեն առած սակայն խիղճի օրէնքներն ու բժշկական բարոյագիտութիւնը, ապացուցելով այսպէս, թէ իրենց մտայնութիւնն ու հոգեկան դաստիարակութիւնն ալ ոչինչով կը տարբերի կարգ մը թուրք պաշտօնական մարդոց մակարդակէն:

Այս առթիւ մէջ կը բերենք թուրք բժիշկներու վկայութիւնները՝ որոնք մամուլի մէջ արտայայտուած են:

Ա. Ներքին գործոց նախարարութեան.

Վսեմաշուք տէ՛ր, Երբ հայոց խնդիրը կը քննուի, կը տեսնեմ, որ ամբողջ պատասխանատուութիւնը միշտ կուսակալներուն եւ իրամանատարներուն կը վերագրուի: Հայոց վրայ ի գործ դրուած խժոժութիւնները կրնան կարճատես քաղաքական ըմբռնումներու գէշ հետեւանքներն ըլլալ:

... Նուաստիս Ձեգի հաղորդելիքը հայոց վրայ գիտականօրէն ի գործ դրուած

վայրագութիւններն են:

... Պատասխանատուներուն հանդէպ պետք եղածը տնօրինելը «խժոժութեանց քննիչ Յանձնաժողով»ին պատուոյն եւ խղճին կը յանձնեմ: 1915ի Դեկտեմբերին Երզնկայի մէջ 3-րդ զօրաբանակի բժշկապետին՝ Թելֆիկ Սելիմի հրամանով, վարակուած հիւանդներէն առնուած արիւնը, առանց վարակազերծ ընելու, եւ բժշկակաւորէն միայն փորձի կենդանիներուն վրայ ներելի եղող գիտական փորձերը՝ գաղթեցնելու սահմանուած անմեղ հայերուն կը ներարկուին եւ այս պատճառով շատ մը խեղճ հայեր հիւանդանալով կը մեռնին: Ներարկումները կատարուած ատեն՝ զոհերը խաբած են, հաւատելով, որ հիւանդութենէ զերծ կացուցանելու համար է: Այս փորձը կատարողը՝ Օսմ. Բժշկ. Վարժարանի ախտաբանական անաթոմիայի ուսուցիչը Համտի Սուլատ՝ «Չինուորական Բժշկ. Թերթ»ին մէջ իր փորձերը հրապարակած պահուն՝ «փորձերը սպաննուելու դատապարտուածներու վրայ կատարուած են» կ'ըսէր, իսկ նուաստս՝ յիշեալ ուսուցչին սպաննիչ փորձերուն ենթականերուն հայ ըլլալէն զատ ուրիշ յանցանք չունենալուն վկան եմ: Այս խնդրին մօտէն տեղեակ են՝ այն ժամանակ

Երզնկայի կեդրոնական հիւանդանոցին բժշկապետը՝ տր. Ռեֆեթ պէյ եւ իրեն մօտ աշխատող 2 հայ բժիշկներ, նոյնպէս Երզնկայի Կարմիր Մահիկի բժշկապետը՝ տր. Սելահետտին պէյ: Ահաւասիկ նուաստս, ո՛չ միայն քաղաքական, այլև՝ գիտականօրէն հայերուն վրայ ոճիրներ կատարուած ըլլալը յայտնելով, այս մասին պետք եղած բացատրութիւնները տալու պատրաստ եմ:

ՀԱՅՏԱՐ ԾԵՄԱԼ «ԹԻՒՐՔԸ ԵՍՅԱՄԱՅՈՒԼ», 23 Դեկտեմբեր 1918

Բ. «ԹԻՒՐՔԸ ԵՍՅԱՄԱՅՈՒԼ» ԵՐԵՎԱՆԻ ՕՐԱԹԵՐՔԻՆ,

Երեկ օրերաթեր Հայտար ձեմալ պէյի կողմէ Ներքին Գործոց Նախարարութեան ուղղուած բացաղերսագրին մէջ իբրեւ վկայ ցոյց տրուած ըլլալու տեսայ: Երզնկայի կեդրոնական հիւանդանոցին մէջ կատարուած այդ դէպքերուն դժբախտաբար բռնորովին տեղեակ ըլլալով, խնդիրը անելի լուսաբանելը խիղճի պարտք կը համարեմ: ... Արդարեւ, մարդկութեան եւ բժշկութեան համար ամօթալի եղող այս դէպքերուն եթէ բուն պատասխանատուները մէկ առ մէկ երեւան հանուին, արատաւորուած թուրք բժշկութիւնը մեծ բեռն մը ազատուած կ'ըլլայ:

1915ին հազարումէկ դժուարութիւններով Երզնկա ապաստանող հայերէն մաս մը ախոռէն ոչխար զատուելու պէս սեւքիեաթէն (գաղթականների կարավան - Հ. Մ.) առնուելով Երզնկայի կեդրոնական հիւանդանոցը կը դրկուին եւ հոն մանրէաբանութեան մէջ միայն հնդկախոզի եւ ճագարի պէս կենդանիներուն վրայ փորձուելիք գործողութեանց ենթակայ կ'ըլլան: Այսպէսով շատ մը հայեր մեռնելով հանդերձ ... խնդիրն

ալ բռնորովին անլուծելի մնացած է... Որեւէ օգուտ չունեցող մեթոտի մը՝ միայն հայերու հանդէպ կիրարկուիլը ի՞նչ կը նշանակէ: Անոնց կեանքին՝ կենդանիի մը կեանքին չափ իսկ կարելորութիւն չի տրուող խեղճ հայերը այս առիթով ալ զոհուած են: Կը կարծեմ, թէ թիֆլիսի բռնուած հայերէն առնուած արիւնը «կլջմկջբ» ընելէ վերջ, յիշեալ ուսուցիչը որպէս «թսբչբմկե» Կարնոյ կուսակալ Թահսին պէյին ներարկած է:

Տօքթ. ՍԵԼԱՀԷՏՏԻՆ
«ԹԻՒՐՔԸ ԵՍՅԱՄԱՅՈՒԼ»,
24 Դեկտեմբեր 1918

Գ. «ԻՐՔԻԿԱՏ ԵՎ ԹԵՐԱՔՔԻ»Ի ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՕՐՈՎ՝ խիղճ, բարոյական, պատիւ, վերջապէս բոլոր սրբութիւններու ի՞նչ աստիճան արժէք ունենալը երբ նկատի առնուի, ընդհ. պատերազմի տարիներուն հայերուն վրայ ի գործ դրուած ոճրագործութիւններուն եւ անգթութիւններուն ինչքան վատ մտածումներու տակ տեղի ունեցած ըլլալը կը հասկցուի: Միայն այն պարագան, որ այդ ատեններուն ո՛չ մէկ անհատի կատարած վայրագութիւններուն հաշիւը կը հարցուէր, կարծել տուած էր, թէ

ամեն մարդու ըրածը յաւէտ անպատիժ պիտի մնար:

Ահա՛ այս մտայնութեամբ էր, որ Երզնկայի մէջ հայերու վրայ բժաւոր ժանտատենդի մասին փորձեր կատարուեցան: Մեր ըսածը հաստատելու համար ունինք բաւականաչափ փաստեր: Չարմանալին այն է, որ հակառակ մասնաւոր աղաչանքներու վրայ՝ նման հրատարակութեանց վերջ տալ փափաքելուս խնդիրին անտեղեակ բժիշկներու՝ լոյ ինքնզինքնին ցուցադրելու նպատակով տուած հերքումները զիս վերստին գրելու կը ստիպեն: Պետք է գիտնալ, որ ամբոխավարութեամբ ու վայնասունով գործ տեսնել՝ միայն ցուցամոլներու գործ է: Պատկանեալ իշխանութիւնը եթէ այս խնդիրը ձեռք առնէ՝ ճշմարտութիւնը երեւան պիտի ելլէ:

Ինչպէս հայերու տարագրութեան, ջարդին եւ կողոպուտին պատճառ եղողները, նոյնպէս ալ այս գործին մասնակցողները պատասխանատու են: Մեր բժիշկները պէտք չէ խռովին, ընողները մէջտեղն են: Եթէ ոճրագործները պաշտպանել հարկ է, փափաքնիս «Իթօհիատ եւ Թերաքքի»ին կառավարութեան անգամ մըն այլ գործի գլուխ անցնելու ժամանակին կրնանք

վերապահել: Ճշմարտութիւնը ո՛չ թէ օրաթերթերու սիւնակներուն մէջ, այլ՝ դատարանի առջեւ երեւան պիտի ելլէ:

Տօքթ. ՍԵԼԱՀԷՏՏԻՆ
«Ալեմտար», Սթամպուլ,
թիւ 25/1335
Հավելված 7.

ԻՎ ԹԵՆՆՈՆ
«ԹՈՒՐԶԻՎՅԻ ՊԱՏԱ-
ԲԱՆՆԵՐՆ ԱՅՍՕՐ ԵՎՍ ԱՆ-
ԿԵՂՑ ՉԵՆ»

Հոկտեմբերի վերջերին Վենետիկում անցկացված գիտաժողովից հետո Փարիզի «Աշխարհ» թերթում հրատարակվեց հայտնի վիրաբույժ և ցեղասպանագետ Իվ Թեննոնի հարցազրույցը, որը ներկայացնում ենք թարգմանաբար:

- Ինչպէ՞ս պատահեց, որ վիրաբույժ Իվ Թեննոնը դարձավ հեղինակավոր պատմաբան-ցեղասպանագետ:

- Այդ երկարատև գործընթացը շարունակվում է արդեն 40 տարի: Որպես վիրաբույժ ես մտահոգված էի երկրորդ աշխարհամարտի տարիներին նացիստ բժիշկների կատարած նողկալի գիտափորձերից: Ես բացահայտեցի, որ դրանք ամբողջովին կապված են ցեղասպանության՝ հրեա-

ների ողջակիզման երևույթի հետ: Սկսեցի զբաղվել այդ հարցի հետազոտմամբ: Իմ բարեկամ դոկտոր Սոկրատ Հելմանի հետ 10 տարի աշխատելուց հետո ընդլայնեցի թեման և անցա Հայկական հարցին: Ասում եմ Հայկական հարց, քանզի այն ժամանակ վստահ չէի, թե խոսքը ցեղասպանության մասին է: Ես չէի նախատեսել, որ բախվելու եմ ժխտողականության երևույթին, որը հետզհետե ընդլայնվում է և այսօր երբեմն հանգեցնում միանգամայն անհեթեթ իրավիճակների: Հայոց ցեղասպանության խնդրի մէջ խորանալով՝ ես այլևս անկարող էի դա շրջանցել: Հետագայում փորձեցի ցեղասպանության բնորոշման հարցը տեղադրել 20-րդ դարի նախճիրների ամբողջության մէջ: Ակնհայտ է, որ հիշյալ երկու դեպքերը (հրեաներ և հայեր), ինչպէս նաև Ռուսադայում թուրքիների նկատմամբ իրականացված գործողությունները, միանգամայն անվիճելիորեն բնութագրվում են որպես ցեղասպանություն: Ինչ վերաբերում է Կամբոջայում կարմիր կիսմերների գործած ոճիրներին և Ուկրաինայի 1932-33թթ. սովին, դրանք դեռ պետք է քննության առնվեն: Կարծում եմ, որ բարդ ոլորտներում պետք է արտա-

հայտվեն տարիների փորձ ունեցող հմուտ մասնագետները: Ահա թե ինչո՞ւ առայժմ լոյ կսահմանափակվեմ վերոհիշյալ երեք ցեղասպանությունների համեմատական վերլուծությամբ, որոնց խորացված ուսումնասիրությունը թույլ կտա ավելի լավ ճանաչել ցեղասպանություն երևույթն առհասարակ:

- Արդ, վիրաբույժ լինելը չի՞ տրամադրում նման հետազոտության:

- Բնա՛վ: Ի դեպ, ընկերներիս խորհուրդներին հետևելով, ես, վիրաբույժ լինելուց բացի, դարձա նաև պատմության դոկտոր և սկսեցի հետազոտություններ անցկացնել ո՛չ թե սնափառությունից դրդված, այլ՝ հեղինակավոր մասնագետ դառնալու նպատակով:

- Պատմեցե՛ք, խնդրեմ, հոկտեմբերի վերջերին Վենետիկում Հայոց ցեղասպանության հարցերին նվիրված գիտաժողովի անցկացման մասին: Որո՞նք էին նախաձեռնողները:

- Դա տեղի ունեցավ հոկտեմբերի 28-ից 30-ին: Նախաձեռնողներն էին Մխիթարյան միաբանության նախկին անդամ հայր Չեքիյանը և «Չինի» հիմնադրամը՝ հանձին պրոֆեսոր Ռիգոյի: Մասնակիցների թիվը 2 տասնյակ էր: Գիտաժողովն անցկացվում էր Սան Ջոննո

Մաջորե կղզում: Նպատակը հայ-թուրքական հարաբերությունների պատմության արծարծումն էր: Մասնակիցներ կային Հայաստանից, ԱՄՆ-ից (Ռուբեն Ադայան), Կանադայից (պրոֆեսոր Ֆրենկ Զոլտ), Ֆրանսիայից (Ռեմոն Գևորգյանը և ես): Կային նաև իտալացիներ: Գիտաժողովը բնականոն կընթանար, եթե չլինեին մի քանի թուրք ճոռոմախոսներ ու սադրիչներ: Անշուշտ խոսքը պոն Զարաքոլուի կամ Թաներ Աքչամի մասին չէ, որոնք միանգամայն անկախ պատմաբաններ են, այլ՝ Ստամբուլից և Անկարայից եկած պատմաբանների: Այսպես, պրոֆեսոր Բերքթայը հրահրիչ էլույթ ունեցավ՝ ասելով, թե Հայոց ցեղասպանության սկզբունքը քննարկման թեմա չէ: Նրա խոսքերով՝ Թուրքիան պատրաստ չէ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը, և այնտեղ ցեղասպանության մասին խոսում են միայն առաջադեմ մարդիկ: Նա ասաց, որ հարկավոր է նախ եվրամիության անդամ դարձնել Թուրքիային և հետո միայն նման հարցեր արծարծել: Ծուղակն ակնհայտ էր: Հայտնի է, որ Թուրքիայի սահմանադրության 305-րդ հոդվածի համաձայն, Հայոց ցեղասպանության մասին խոսողը ենթակա է 10

տարվա բանտարկության: Իմ էլույթում ես խոսեցի պետական ժխտողականության մասին՝ Հայոց ցեղասպանությունը համեմատելով հրեաների ողջակիզման և Ռուանդայում թուխսիների ցեղասպանության հետ: Բերքթայը կասկարմիր էր կտրել: Նա մեզ ցույց տվեց ակնհայտորեն կրճատված մի քանի փաստաթուղթ, ասելով, թե ինքը ցեղասպանության փաստը չի ժխտում: Մինչդեռ հայտնի է, որ Թուրքիայում դասավանդելիս արգելվում է խոսել ցեղասպանության մասին: Գերմանացի պրոֆեսոր Գոլցն իր էլույթում պաշտպանեց հոգևոր հովիվ Լեփսիուսի դիրքորոշումը: Անկարայից եկած պրոֆեսորներից մեկին ասացի, որ ինքը չի ըմբռնում ցեղասպանության էությունը: Տվյալ հարցի շուրջ որևէ փոխզիջում անհնար է՝ ցեղասպանությունը ճանաչում են կամ ժխտում: Ես պրոֆեսոր Բերքթային հորդորեցի իր տերերին հայտնել, որ ժխտումը լավագույն միջոցը չէ:

Գիտաժողովի ընթացքում պարզ դարձավ, որ Թուրքիայում առկա է երկու դիրքորոշում. երկուսն էլ կառավարության դիրքորոշումներն են: Մեկն ավելի կոշտ է և արգելում է ցեղասպանության որևէ ճանաչում, մյուսն առե-

րևույթ հաշտության ձեռք է մեկնում, բայց թույլ է տալիս ժամանակ շահել մինչև դեկտեմբերի 17-ը, երբ եվրամիությունը պետք է հրապարակի իր որոշումը Թուրքիայի անդամակցության բանակցություններ սկսելու վերաբերյալ: Այս ամենը մտահոգիչ է, քանզի առկա է խաղարկման տպավորություն: Ծուղակները շատ են:

Այս ամենով հանդերձ, գիտաժողովն անցավ բարձր մակարդակով: Էլույթները մոտ ժամանակներս կհրապարակվեն:

- Գիտաժողովը փաստորեն քաղաքական բնույթ չստացավ:

- Ո՛չ: Մեր աշխատանքը մտավոր բնույթի էր: Այդուհանդերձ, առկա է երկակի եզրակացություն: Նախ, հենց արծարծում ենք Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը՝ անմիջապես հայտնվում ենք քաղաքականության մեջ և բախվում անզիջում ու նենգ ժխտողականության: Երկրորդ՝ Թուրքիայում ապրող, այսինքն՝ իշխանություններից կախման մեջ գտնվող մտավորականների և մյուս ցեղասպանագետների երկխոսությունն այժմ անհնար է դարձել: Ավա՛ղ, անհնար է չկասկածել, թե Թուրքիայի մտավորականները կարող են անկեղծ լինել:

„Ազգ” օրաթերթ, Երևան, 01-12-2004 թ.

Հավելված 8.

**ԹՈՒՐԻԱՅՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿ-
ՎԱԾ
ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԺՇԿԱ - ԱՌՈՂՏԱԴԱՀԱԿԱՆ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ**

1. ԱՍՏԴԻԿ ԱՐԵՎԵԼՅԱՆ
Հրատարակիչը՝ Կոստանդնուպոլսի Մեսրոպյան ընկերություն
Բնույթը՝ հայ իրականության մեջ առաջին ամսաթերթն է, որն իր էջերում պարբերաբար անդրադարձել է բժշկա-առողջապահա-

կան թեմաներին: Հանդիսացել է բարոյախոսական, բանասիրական, տնտեսագիտական, բնագիտական առողջապահական ամսաթերթ

Լեզուն՝ հայերեն
Պարբերականությունը՝ ամիսը 1 անգամ

Հրատարակվել է Կոստանդնուպոլսում (Թուրքիա), 1855-56թթ.:

Դադարել է հրատարակվել Մեսրոպյան ընկերության լուծարման պատճառով:

Հրատարակված համարների թիվը՝ 12

Խմբագիրը՝ Գաբրիելյան Հովհաննես Մ.

Աշխատասիրությունը՝ Մեսրոպյան ընկերության

Բովանդակությունը՝ տպագրել է ինքնուրույն և թարգմանական նյութեր, բարոյախոսական գրույցներ, բանաստեղծություններ, պատմվածքներ, առողջապահական, դպրոցական-մանկավարժական հոդվածներ, աշխարհագրությանը և բնական գիտություններին վերաբերող օգտակար ու հետաքրքրաշարժ տեղեկություններ:

Էջերի թիվը՝ 16-20, չափը՝ 18x27 սմ

Բաժանորդագինը՝ 30 դուրուշ

Տպարանը՝ Հովհաննես Մյուհենտիսյանի

2. ԿԻԼԿԻՎ

Բնույթը՝ ազգային, առողջական, բարոյական, ուսումնական օրագիր

Լեզուն՝ հայերեն
Հրատարակվել է Կոստանդնուպոլսում (Թուրքիա), 1861-75թթ. և 1909թ.

Պարբերականությունը՝ ամիսը 1-2-4 անգամ

1864թ-ից շաբաթաթերթ է՝ «Կիլիկիա: Հանդես բժշկական ուսումնական և ազգային», էջերը՝ 4, չափը՝ 28x49 սմ

1867թ-ից՝ Նոր շրջան. «Կիլիկիա: Հանդես միասյա առողջական և ուսումնական», էջերը՝ 48,

1909թ-ին լույս է տեսել 3 համար

1910-19թթ. լույս է տեսել միջանկյալ «Փունջ» անունով, տնօրենը՝ հրապարակախոս Ալաճաճյան Համբարձում Ս. (կարճ ժամանակ խմբագիր է եղել նաև հրապարակախոս Մուրադյան Աբրահամը)

Խմբագիրը՝ բժիշկ Յուրյունյան Մանուել Բարունակ

Բովանդակությունը՝ տպագրել է բժշկական և առողջապահական բնույթի հոդվածներ, կենցաղային օգտակար խորհուրդներ, ընդհանուր տեղեկություններ տնտեսագիտության, պատմության, բնագիտության վերաբերյալ, բանաստեղծություններ, գրախո-

սականներ:

Էջերի թիվը՝ 16-32-24-4-48, չափը՝ 26x15, 28x22, 35x28 սմ, Տպարանը՝ Հովհաննես Մյուհենտիսյանի, ապա՝ Թ. Տիվիթյանի

3. ՓՈՒԼՁ

Բնույթը՝ քաղաքական, ազգային, առողջապահական, գրական

Լեզուն՝ հայերեն

Պարբերականությունը՝ ամիսը 4 անգամ շաբաթաթերթ, ապա՝ եռօրյա, ամենօրյա, վերջում՝ շաբաթաթերթ

Հրատարակվել է Կոստանդնուպոլսում (Թուրքիա) 1866-1908թթ.

Տնօրենը և տերը՝ (խմբագիրը) հրապարակախոս Ալաճաճյան Համբարձում Ս., ապա՝ Ալաճաճյան Սիմոն(իկ) Համբարձումի, ապա՝ պատասխանատու տնօրենը՝ հրապարակախոս, թարգմանիչ Զեովեքյան Սիմոն (1906-07թթ.)

Բովանդակությունը՝ ունեցել է պահպանողական ուղղվածություն: Ազգի հարատևման հիմքը համարել է լեզուն, կրոնը, պատմությունը: «Ազգային», «Քաղաքական», «Ներքին», «Խառն լուրեր» բաժիններում ներկայացրել է Կոստանդնուպոլսի և արևմտահայ գավառների կյանքը, տեղական թուրքական իշխանությունների և քրդական վերնախավի դաժանությունները հայերի նկատմամբ: Լուսաբանել է կրոնական-երեսփոխանական ժողովների ընթացքը, պատրիարքարանի գործունեությունը: 1880-ական թ.թ. սկզբին, համիդյան գրաքննության խստացման պայմաններում հասարակական հարցերը թերթում իրենց տեղը գիջել են կրոնական, կենցաղային, առողջապահական, բարոյախոսական հոդվածներին ու թարգմանական նյութերին:

Էջերի թիվը՝ 4-16, չափը՝ 25,5x18, 52x36, 23x15 սմ
Տպարանը՝ Երվանդ Մինասյանի, Կարապետ Պիպերյանի, Մ. Սարդյան և ընկ., Չարեհ Պերպերյանի և այլոց:

4. ԼՈՒՅՍ

Բնույթը՝ ազգային հանդես:

Լեզուն՝ հայերեն:

Հրատարակվել է Կոստանդնուպոլսի քաղաքում (Թուրքիա), 1874-85թթ.:

Արտոնատերը՝ Դիմաքսյան Հմայակ Ե.:

Խմբագիրը՝ Գափամաճյան Մ., ապա՝ Պողաճյան (Պայա-

ճյան) Բյուզանդ:

Բովանդակությունը՝ գրական երկեր, բանաստեղծություններ, հրապարակախոսություն, բժշկական և առողջապահական հոդվածներ:

Էջերի թիվը՝ 4, չափը՝ 47x32 սմ:
Բաժանորդագինը՝ 2 արծ. մեծիտ:
Տպարանը՝ Տնտեսյանի:

5. ԾԱՂԻԿ

Հիմնադիրը և հրատարակիչը՝ Հաճընի Վարդանյան վարժարանի շրջանավարտները և երիտասարդ մտավորականները:

Բնույթը՝ ձեռագիր շաբաթաթերթ:
Լեզուն՝ հայերեն և հայատառ թուրքերեն:
Հրատարակվել է Հաճըն քաղաքում (Արևմտյան Հայաստան, Թուրքիա), 1880-ական թթ.:

Պարբերականությունը՝ շաբաթը 1 անգամ:
Հրատարակված համարների թիվը՝ մոտավորապես 40 (հրատարակվել է 10 ամիս):

Խմբագիրը՝ Սեքսենյան Մարտիրոս:
Բովանդակությունը՝ գրական, գիտական, առողջապահական հոդվածներ:

6. ՄԱՏԵԼԱԴԱՐԱՆ ԺՈՂՈՎՐԾԱՆ

Բնույթը՝ առողջապահական ամսագիր
Լեզուն՝ հայերեն
Պարբերականությունը՝ ամիսը 1 անգամ
Հրատարակվել է Կոստանդնուպոլսում (Թուրքիա), 1882-85թթ.

Խմբագիրը՝ բժիշկ Յուլյուսյան Մանվել Բարունակ
Բովանդակությունը՝ ...
Էջերի թիվը՝ 32, չափը՝ 15x11 սմ
Տպարանը՝ Է եղիա Տնտեսյանի

7. ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՒՑՑ ՍՈՒՐԲ ՓՐԿԳՑԱՆ ԱԶԳԱՑԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ՀԱՅՈՑ

Հիմնադիրը՝ Սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի տեսչություն

Բնույթը՝ օրացույց
Հրատարակվել է Կոստանդնուպոլսում (Թուրքիա), 1884-97թթ. 1900-10թթ.

Խմբագիրները տարբեր տարիների՝ բանասեր Հրանդ Ասատուր, բժիշկ Տաղավարյան Նազարեթ, մանկավարժ, հրապարակախոս Խաչկունց Դավիթ, հրապարակախոս Արփիարյան Տիգրան, բանասեր, պատմաբան Ալպոյաճյան Արշակ

Բովանդակությունը՝ տոմար, զանազան (այդ թվում առողջապահական) գիտելիքներ, վիճակագրական տեղեկություններ

Էջերի թիվը՝ 172-567, չափը՝ 18x12, 23x15 սմ
Գինը՝ 3 դահեկան
Տպարանը՝ Գ. Պաղտատյանի (Արամյան), Հ. Մատթեոսյանի, սեփական

8. ԹԱՆԳԱՐԱՆ ԺՈՂՈՎՐԾԱՆ

Բնույթը՝ բժշկական, առողջապահական ամսագիր
Լեզուն՝ հայերեն
Պարբերականությունը՝ ամիսը 1 անգամ
Հրատարակվել է Կոստանդնուպոլիս քաղաքում (Թուրքիա), 1884-86թթ.

Խմբագիր-տնօրենը՝ բժիշկ Յուլյուսյան Մանուել Բարունակ

Բովանդակությունը՝ ...
Էջերի թիվը՝ 32, չափը՝ 15x10 սմ
Տպարանը՝ Աշճյանի

9. ԳԱՆՁ ԱՐՇԵՍՏԻՑ

Բնույթը՝ բժշկական, արհեստագործական, երկրագործական շաբաթաթերթ
Լեզուն՝ հայերեն
Պարբերականությունը՝ ամիսը 4 անգամ
Հրատարակվել է Կոստանդնուպոլիս քաղաքում (Թուրքիա), 1885թ.

Տեր-տնօրեն-խմբագիրը՝ բժիշկ Ճեռահյան Կ.
Բովանդակությունը՝ ...
Էջերի թիվը՝ 8-16, չափը՝ 15x22 սմ
Տպարանը՝ «Գանձ լրագրոյ», սեփական

10. ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐՇՈՒՄ

Հանդես ամսօրյա

Բնույթը՝ գիտական, բժշկական: Առաջին հայ գիտական հանդեսն է

Լեզուն՝ հայերեն

Հրատարակվել է Կոստանդնուպոլիս քաղաքում (Թուրքիա), 1885-87թթ.

Պարբերականությունը՝ ամիսը 1 անգամ

Տնօրեն-խմբագրապետը՝ բժիշկ Տաղավարյան Լազարեթ (նահատակվել է 1915թ. Մեծ Եղեռնի ժամանակ)

Բովանդակությունը՝ մատերիալիստական ու դարվինիստական ուղղվածության հոդվածներ բնագիտությունից, կենսաբանությունից, բժշկությունից, և այլն

Էջերի թիվը՝ 24-66, չափը՝ 15x22 սմ, 17x25 սմ

Տպարանը՝ Լշան Կ. Պերպերյանի

11. ԱՌԱՋՆՈՐԴ ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Բնույթը՝ հիգիենիկ ուղղվածության բժշկա-առողջապահական հանրամատչելի ամսական տետր

Լեզուն՝ հայերեն

Պարբերականությունը՝ ամիսը 1 անգամ

Հրատարակվել է Կոստանդնուպոլսում (Թուրքիա), 1896-98թթ.

Խմբագիրը՝ ...

Բովանդակությունը՝ ...

Էջերի թիվը՝ ..., չափը՝ ...

Տպարանը՝ ...

12. ԳՐՊԱՆԻ ՕՐԱՅՈՒԹՅՈՒՆ

Հրատարակվել է Կոստանդնուպոլիս քաղաքում (Թուրքիա), 1903-77թթ.

Ունեցել է նաև առողջապահական ուղղվածություն:

13. ԲԺԻՇԿ

Բնույթը՝ բժշկական և առողջապահական ամսաթերթ

Լեզուն՝ հայերեն

Պարբերականությունը՝ ամիսը 1, 1914թ. հունվարից՝ ամիսը 2 անգամ

Հրատարակվել է Տրապիզոն՝ 1911թ. և Կոստանդնուպոլիս՝ 1912-14թթ. քաղաքներում (Թուրքիա):

Տերը և տնօրենը՝ բժիշկ Ղազարյան Վահան (նահատակվել է 1915թ. Մեծ Եղեռնի ժամանակ)

Բովանդակությունը՝ տպագրել է բժշկական գրույցներ, լուրեր ազգային հիվանդանոցների առօրյայից Առաջարկել է հայկական վարժարաններում սահմանել բժշկական վերահսկողություն: Պաշտպանել է հայ բժիշկների շահերը, բողոքել Թուրքիայում տիրող ազգային խտրականության դեմ

Էջերի թիվը՝ 16-24, չափը՝ 20x25 սմ

Տպարանը՝ Սեռարի եղբայրների, Օննիկ Արզումանյանի (Օ. Արզումանի), «Արաքս», «Շանթ»

1914թ. տպագրել է «Բժշկական տարեցույցի» առաջին և միակ համարը

14. ՀՈՒՅՍ

Հիմնադիրը՝ Թուրքիայի հակաալկոհոլային ընկերություն Բնույթը՝ առողջապահական, գիտական, հակաալկոհոլային պարբերաթերթ

Լեզուն՝ հայերեն

Հրատարակվել է Կոստանդնուպոլիս քաղաքում (Թուրքիա), 1913-14թթ.

Պարբերականությունը՝ ամիսը 1 անգամ

Հրատարակված համարների թիվը՝ 12

Պատասխանատու տնօրենը՝ բժիշկ Պողոսյան Հ.

Արտոնատերը՝ բժիշկ Հենդյան Վ. Մ.

Բովանդակությունը՝ ...

Էջերի թիվը՝ 16, չափը՝ 28x20 սմ

Տպարանը՝ Ժ. Ասատուրյան և որդիք:

15. ԲԺՇԿԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՒԹՅՈՒՆ

Բնույթը՝ բժշկական, առողջապահական գիտահանրամատչելի տարեգիրք

Լեզուն՝ հայերեն

Պարբերականությունը՝ տարին 1 համար

Հրատարակվել է Կոստանդնուպոլիս քաղաքում (Թուրքիա), 1914թ.

Տպագրված համարների թիվը՝ 1

Խմբագիր-տնօրենը՝ բժիշկ Ղազարյան Վահան (նահատակվել է 1915թ. Մեծ Եղեռնի ժամանակ)

Բովանդակությունը՝ տպագրել է իր ժամանակի հայտնի բժիշկների կենսագրականները, նրանց բժշկա-առողջապահ

հական գիտահանրամատչելի հողվածները, լուրեր, նորություններ, իմաստախոսություններ, հումոր, գովազդ և այլն
Հեղինակները՝ ժամանակի հայտնի հայ բժիշկները
Էջերի թիվը՝ 436, չափը՝ 14x19,5 սմ
Տպարանը՝ «Արաքս»

16. ՀԱՅ ԲԺԻՇԿ

Հաջորդ անունը՝ ՀԱՅ ԲՈՒԺԱԿ
Բնույթը՝ բժշկական և առողջապահական պատկերազարդ ամսաթերթ
Լեզուն՝ հայերեն
Հրատարակվել է Կոստանդնուպոլիս քաղաքում (Թուրքիա), 1919թ. ապրիլից

Պարբերականությունը՝ ամիսը 1 անգամ
Տպագրված համարների թիվը՝ 10
Արտոնատեր-խմբագրապետը՝ բժիշկ Գուրապյան Հրանտ
Տնօրեն-խմբագիրը՝ բժիշկ Ալթունյան Վահան
Խմբագիրը՝ բժիշկ Գարակեոզյան Մկրտիչ
Բովանդակությունը՝ տպագրել է բժշկա-առողջապահական և սանիտարա-լուսավորչական հողվածներ, նորություններ, նյութեր նշանավոր հայ բժիշկների մասին:
Էջերի թիվը՝ 24, չափը՝ 28x20 սմ
Գինը՝ 7,5 դրուշ:
Բաժանորդագինը՝ 4. Պոլսում՝ 80 դրուշ, գավառում՝ 1 ոսկի, Ամերիկայում՝ 1,5 դոլար, այլուր՝ 10 ֆրանկ
Հասցեն՝ ք.Կ. Պոլիս, Բերա, Գապրիսթան-37:
Տպարանը՝ Կ. Քեշիշյանի

17. ԴԱՐՄԱՆ

Հաջորդ անունը՝ 1921թ. միանալով ՀԱՅ ԲՈՒԺԱԿ ամսաթերթին, հրատարակվել է ԴԱՐՄԱՆ-ՀԱՅ ԲՈՒԺԱԿ անվամբ
Հիմնադիրը՝ Կոստանդնուպոլիսի Հայ բժշկական միություն
Բնույթը՝ բժշկա-առողջապահական և գիտական պատկերազարդ ամսաթերթ

Լեզուն՝ հայերեն, ունեցել է ֆրանսերեն բաժին
Հրատարակվել է Կոստանդնուպոլիս քաղաքում (Թուրքիա), 1920-22թթ.

Պարբերականությունը՝ ամիսը 1 անգամ
Հրատարակված համարների թիվը՝ 24
Արտոնատերը և պատասխանատու տնօրենը՝ բժիշկ Փափազյան Օննիկ

Բովանդակությունը՝ լայն տեղ է հատկացրել ընտանեկան, դպրոցական, պատանիների և երիտասարդների առողջության հարցերին: Տպագրել է հանրամատչելի նյութեր վարակիչ հիվանդությունների համաճարակների և դրանց կանխարգելիչ միջոցների մասին: Լուսաբանել է Կարմիր խաչի ընկերության Կոստանդնուպոլիսի և գավառի մասնաճյուղերի, ինչպես նաև բժիշկների, դեղագործների, ատամնաբույժների միությունների գործունեությունը: Գրախոսել ու ժողովրդականացրել է առողջապահական բնույթի գրքեր: Չետեղել է հայ և համաշխարհային բժշկագիտության պատմության վերաբերյալ նյութեր
Էջերի թիվը՝ 22-32, չափը՝ 20x28 սմ
Բաժանորդագինը՝ 150 դահեկան
Տպարանը՝ Պեճիտյան եղբայրների, Ֆ. Ճարյանի

18. ՀԱՅ ԲՈՒԺԱԿ

Լախորդ անունը՝ ՀԱՅ ԲԺԻՇԿ պատկերազարդ ամսաթերթ

Հաջորդ անունը՝ 1921թ. միանալով ԴԱՐՄԱՆ ամսագրին հրատարակվել է ԴԱՐՄԱՆ-ՀԱՅ ԲՈՒԺԱԿ անվամբ
Բնույթը՝ բժշկական և առողջապահական ամսաթերթ
Լեզուն՝ հայերեն
Հրատարակվել է Կոստանդնուպոլիս (Թուրքիա)՝ 1920-23թթ., եւ Ալեքսանդրիա (Եգիպտոս)՝ 1924-25թթ. քաղաքներում:

Պարբերականությունը՝ ամիսը 1 անգամ
Տպագրված համարների թիվը՝ 12
Հիմնադիրը՝ բժիշկ Ալթունյան Վահան
Տնօրեն-խմբագիրը՝ բժիշկ Գարակեոզյան Մկրտիչ, 1924թ-ից՝ Թաշճյան Հ.

Բովանդակությունը՝ նպատակն էր մատչելի դարձնել բժշկա-առողջապահական գիտելիքները, ընթերցողներին հաղորդել բժշկագիտական նորություններ, հայացնել գիտական լեզուն: Տպագրել է հողվածներ սոցիալական և դպրոցական առողջապահության, կանխարգելիչ բժշկության, վարակիչ հիվանդությունների մասին, Ինչպես նաև՝ հուշագրություններ նշանավոր հայ բժիշկների կյանքի և գործունեության մասին: Օժանդակել է հայկական բժշկական կազմակերպությունների գործունեությանը, հրատարակել է նաև գիտահանրամատչելի գրականություն և Հեղինակները՝ բժիշկներ, դեղագործներ

Էջերի թիվը՝ 16-32, չափը՝ 29x19 սմ
Բաժանորդագինը՝ 100 դրուշ
Տպարանը՝ Կ. Քեչիշյանի

19. ԴԱՐՄԱՆ - ՀԱՅ ԲՈՒԺՄԿ

Նախորդ անունները՝ ԴԱՐՄԱՆ և ՀԱՅ ԲՈՒԺՄԿ
Հիմնադիրը՝ Հայ բժշկական, դեղագործական, ատամնա-
բուժական միությունների օրգան

Բնույթը՝ բժշկական, առողջապահական, գիտական
պատկերազարդ ամսաթերթ

Լեզուն՝ հայերեն
Հրատարակվել է Կոստանդնուպոլիս քաղաքում
(Թուրքիա), 1921-22թթ.

Պարբերականությունը՝ ամիսը 1 անգամ
Հրատարակված համարների թիվը՝ 10
Տնօրենը՝ բժիշկ Փափազյան Օննիկ
Խմբագիրը՝ ...
Բովանդակությունը՝ ...
Էջերի թիվը՝ ..., չափը՝ ...
Տպարանը՝ ...

20. ԱՏԱՄՆԱԲՈՒԹԺ

Բնույթը՝ ատամնաբուժական ամսագիր
Լեզուն՝ հայերեն

Հրատարակվել է Կոստանդնուպոլիս քաղաքում
(Թուրքիա), 1922թ.

Պարբերականությունը՝ ամիսը 1 անգամ
Տպագրված համարների թիվը՝ 2
Խմբագիրը՝ ...

Բովանակությունը՝ ատամնաբուժության տեսական ու
գործնական խնդիրներին վերաբերող, ինչպես նաև հանրա-
մատչելի բժշկա-առողջապահական հոդվածներ

Էջերի թիվը՝ ..., չափը՝ ...

21. ՏԱՐԵՑՈՒՅՑ ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՅԻ ՀԱՅՈՑ

Հաջորդ անունը՝ ԸՆԴԱՐՁԱԿ ՏԱՐԵՑՈՒՅՑ ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՅԻ ՀԱՅՈՑ

Հիմնադիրը՝ Սուրբ Փրկիչ ազգային հիվանդանոց
Բնույթը՝ բժշկական տարեցույց
Լեզուն՝ հայերեն

Պարբերականությունը՝ տարին 1 անգամ
Հրատարակվել է Կոստանդնուպոլիս քաղաքում
(Թուրքիա), 1924թ.

Խմբագիրը՝ Գուլստանյան Միհրան
Բովանդակությունը՝ ...

Էջերի թիվը՝ 220-464, չափը՝ 15x23 սմ
Տպարանը՝ Ե. Մ. Սեթյանի

22. ԸՆԴԱՐՁԱԿ ՏԱՐԵՑՈՒՅՑ ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՅԻ ՀԱՅՈՑ

Նախորդ անունը՝ ՏԱՐԵՑՈՒՅՑ ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ ԱԶԳԱՅԻՆ
ՀԻՎԱՆԴԱՆՈՅԻ ՀԱՅՈՑ

Հաջորդ անունը՝ ԸՆԴԱՐՁԱԿ ՏԱՐԵԳԻՐՔ ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՅԻ ՀԱՅՈՑ

Հիմնադիրը՝ Սուրբ Փրկիչ ազգային հիվանդանոց
Բնույթը՝ բժշկական տարեգիրք
Լեզուն՝ հայերեն

Հրատարակվել է Կոստանդնուպոլիս քաղաքում (Թուր-
քիա), 1925-39թթ.

Պարբերականությունը՝ տարին 1 անգամ
Խմբագիրը՝ բանասեր, բանաստեղծ Ազատյան Թորոս
Բովանդակությունը՝ ...

Էջերի թիվը՝ 220-464, չափը՝ 15x23 սմ
Տպարանը՝ Վ. Տեր-Ներսիսյանի և որդիք

23. «ԺԱՄԱՆԱԿ»-Ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՒՅՑԸ

Բնույթը՝ երգիծական, առողջապահական և այլ օգտակար
ու պիտանի գիտելիքներ: Պատկերազարդ տարեգիրք

Հրատարակվել է Կոստանդնուպոլիս քաղաքում (Թուր-
քիա), 1927թ.

Հրատարակված համարների թիվը՝ 2 (Ա, Բ)
Խմբագրությունը՝ «Ժամանակ» թերթի
Էջերի թիվը՝ 144-206, չափը՝ 19x12 սմ

24. ԵՐԶԱՆԻԿ

Նախորդ անունները՝ ԵՐԶԱՆԿԻՆ ՏԱՐԵՑՈՒՅՑԸ, «ԵՐԶԱՆԻԿ
ՉԱՏԻԿ, ԵՐԶԱՆԻԿ ՏԱՐԻ, ԵՐԶԱՆԻԿ ՏԱՐԻՆԵՐ

1941-43թ.թ. տարեգիրքը ունեցել է Բ հատրոներ՝ «Հատոր
մտքի վայելքի» ենթավերնագրով

1953թ-ին լույս է տեսել բացառիկ համարը
Բնույթը՝ գրական, գեղարվեստական, բանասիրական,
գիտական, առողջապահական, տնտեսական, երգիծական
տարեգիրք

Լեզուն՝ հայերեն
Հրատարակվել է Կոստանդնուպոլիս քաղաքում (Թուրքիա), 1928-67թթ. Պարբերականությունը՝ տարին 1 անգամ
Էջերի թիվը՝ 122-296, չափը՝ 16x12,5, 21x14, 28,5x20 սմ
Տնօրեն-խմբագիրը՝ գրող, հրապարակախոս Թևյան Բագրատ
Հրատարակությունը՝ «Անուշ-Ապուր-Պատկերի»

25. ՆՈՐ ԴԱՐՄԱՆ

Բնույթը՝ բժշկա-առողջապահական կիսամյա թերթ
Լեզուն՝ հայերեն
Հրատարակվել է Կոստանդնուպոլիս քաղաքում (Թուրքիա), 1935թ. Պարբերականությունը՝ ամիսը 2 անգամ
Հրատարակված համարների թիվը՝ 4
Արտոնատերը և խմբագրապետը՝ Խանճյան Արմենակ
Հրատարակիչը՝ Տեր-Սահակյան Տ.
Բովանդակությունը՝ ...
Էջերի թիվը՝ 16, չափը՝ 27x20,5 սմ

26. ԸՆԴԱՐՁԱԿ ՏԱՐԵԳԻՔ ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ

Հաջորդ անունը՝ «ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ» ԱՄՍԱԹԵՐԹ ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ ՀԱՅՈՑ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ
Հրատարակիչը՝ Սուրբ Փրկիչ Ազգային Հիվանդանոցի տեսչություն
Բնույթը՝ բժշկական տարեգիրք
Լեզուն՝ հայերեն
Հրատարակվել է Կոստանդնուպոլիս քաղաքում (Թուրքիա), 1943-49թթ. Պարբերականությունը՝ տարին 1 անգամ
Խմբագիրները տարբեր տարիների՝ հրապարակախոս Գալիակճյան Արտաշես, Քեչիշյան Հովսեփ, բժիշկ Մանուկյան Բաղդասար, Տեր-Մարգարյան Արփիար
Բովանդակությունը՝ ...
Էջերի թիվը՝ 400-460, չափը՝ 18x12 սմ, վերջին տարիներին՝ պատկերազարդ
Տպարանը՝ Հ. Մատթեոսյանի

27. ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ: ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԱՍԿԱԹԵՐԹ ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ ՀԱՅՈՑ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ

Նախորդ անունը՝ ԸՆԴԱՐՁԱԿ ՏԱՐԵՑՈՒՅՑ ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ
Բնույթը՝ գրական, գեղարվեստական, գիտական, բժշկական տեղեկատու ամսաթերթ
Լեզուն՝ հայերեն
Պարբերականությունը՝ ամիսը 1 անգամ
Հրատարակվում է Ստամբուլ քաղաքում (Թուրքիա), 1949թ-ից.
Անդրանիկ համարը լույս է տեսել 1949թ. սեպտեմբերի 1-ին
Հրատարակված համարների թիվը՝ ունենք 1998թ. ապրիլի թ. 582, ինչպես նաև 2013 թ. համարը:
Արտոնատերը տարբեր տարիների՝ Հանուն սուրբ Փրկիչ հայոց հիվանդանոցի հոգաբարձության՝ բժիշկ Դարվեր Ռ. Չաքար, Գովան Էդ., բժշկագիտության դոցենտ Ալիքսանյան Վահե
Վարիչ-խմբագիրները տարբեր տարիների՝ Տեր-Մարգարյան Արփիար, Հաճյան Մկրտիչ, Սինանյան Հերմինե
Խմբագիրը՝ Մուրադյան Կարպիս Ե.
Պատասխանատու տնօրենը՝ Հակոբյան Մաքրուհի Պ.
Էջադրությունը՝ Չոլաք Սրբուհի
Բովանդակությունը՝ նյութեր ազգային հիվանդանոցի առօրյայի, պոլսահայ համայնքի կյանքում նրա կատարած մարդասիրական դերի, առողջ ապրելու կանոնների վերաբերյալ: Տպագրում է գրական երկեր, հայագիտական, հանրագիտական բնույթի հոդվածներ:
Էջերի թիվը՝ 32-96, չափը՝ 28x20 սմ, գունավոր
Հասցեն՝ Sakirbasi Sok. No 32 - 34780, Kazlıcesme - ISTANBUL
Հեռախոսը՝ 510 80 52 - 9 գիծ, 582 50 50 - 5 գիծ, Ֆաքսը՝ 558-15848

Minasyan H.

Armenian doctors repressed and massacred in Ottoman Empire, Republic of Turkey and nearby territories. A brief biographical dictionary/ H.Minasyan. - Yerevan, Lusabats, 2014, 523 pages.

There are alphabetically represented the brief biographies of Armenian doctors and health workers repressed and massacred in Ottoman Empire, Republic of Turkey and nearby territories on the basis of ethnicity mainly in 19-20 centuries.

The book which is dedicated to the life and activity of the health workers includes a large number of documentary materials on Turkish policy of extermination of Armenians implemented in Turkey for centuries.

The book is also supposed to be a biographical directory of around 500 Armenian doctors and health workers ever lived and worked in Turkey.

There are represented some thematic memories of Armenian and foreign public figures on the Armenian Genocide In the appendix.

**Հարություն Մինասյան
Օսմանյան Կայսրությունում, Թուրքիայի
Հանրապետությունում և հարակից տարածքներում
բռնաճշումների և ցեղասպանության ենթարկված
հայ բժիշկներ
Համառոտ կենսագրական բառարան**

Àðóðáí ìèíàñýí
Àðìýíá -âðà+è ïäååððèðñý ðàìðàññèýì è ääíðèèò á ìñàíñéíé
Èíáðèè, Ðáñííóáéèèè Òóððèý è
ïðèèààâðøèð ðàéííáð.
Êðàðéèé áèíáðàðè+áñèèé ñèíáàðü.
(íà àðìýííéíî ýçúéâ)
Àðááàí, “Ëóñàáàò”, 2014

Harutyun Minasyan
Armenian Workers of Medical Fields to Genocide and
Persecutions in the Ottoman Empire,
Turkey and adjacent territories.
Brief Bibliographical Dictionary.
(In Armenian)
Yerevan, “Lusabac”, 2014

**Միրելի ընթերցող,
սույն գիրքն ստեղծելու ընթացքում օգտվել ենք ամենա-
տարբեր գրավոր և բանավոր աղբյուրներից, ուստի հնա-
րավոր է, որ գրքում սպորադ լինեն պատմական դեպքերի,
դեմքերի, տարեթվերի, անձնանունների ու տեղանունների
որոշ անճշտություններ, որոնց համար հայցում ենք ձեր նե-
րողամտությունը:**

**Երախտապարտ կլինենք ուղղումների, ավելացումների և
դիտողությունների մասին հեղինակին հայտնելու համար:**

Հեռախոս՝ 093-30-92-37

Էլեկտրոնային փոստը՝ harmin@mail.ru

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

Համառոտ կենսագրականները..... 3

Հավելված - 1

**Հայկ Յագմաջյան, Հուլի 1915 թվականից
446**

Հավելված - 2

**Վահան Գույումճյան, Թուրք բժիշկների ոճրագործություն-
ները**

**Մեծ Եղեռնի ժամանակ.....
453**

Հավելված - 3

**Վանիկ Հայրապետյան, Արևմտահայ բժիշկները և
դեղագործները Եղեռնի տարիներին
467**

Հավելված - 4

**Նուբար Զալումյան, Հիպոկրատի ապօրինի զավակները
..... 479**

Հավելված - 5

**Միլվա Սուքիասյան, Հիպոկրատի «երդկյալ» զավակնե-
րը..... 488**

Հավելված - 6

**Թուրք բժիշկները՝ ցեղասպանության մասնակից-
ներ..... 493**

Հավելված - 7
Իվ Թեռնոն, «Թուրքիայի պատմաբաններն այսօր
ևս անկեղծ չեն».....497

Հավելված - 8
Թուրքիայում հրատարակված հայկական
բժշկա-առողջապահական պարբերականները ...
.....501

Ամփոփում անգլերեն.....
516

Հրատարակչության տնօրեն`	Վ. ԱՍԼԱՆՅԱՆ
Խմբագիր`	Գ. ՅԱՉԻՉՅԱՆ
Թարգմանիչ`	Տ. ԼՈՔՄԱԳՅՈՂՅԱՆ
Լուսանկարների մշակումը`	Վ. ԶՈՉԱԲԻ
Կազմի ձևավորումը`	Ա. ԶՈՉԱՐՅԱՆԻ
Համակարգչային տեխնիկական	
սպասարկումը`	Ս. ՄԻՆԱՍՅԱՆԻ

Տպագրությունը` օֆսեր: Չափսը` 60X84 1/16: Թուղթը`
օֆսեր:
Ծավալը` 31 տպ. մամուլ: Տպաքանակը` 400 օրինակ:
Տպագրված է Լուսաբաց հրատարակչատան տպարանում



ՀՀ, Երևան, Պուշկինի 46
Հեռ. + 374 (10) 53 96 47, + 374 (55) 78 47 87
E-mail: lusabats@netsys.am
lusabats@mail.ru
www.lusabats.am